

NEDL TRANSFER




HN 3BH8 -

KC 12936 (4-6)



HARVARD
COLLEGE
LIBRARY




ՋԵՑԱՐԱՆ ՄԱՆԿԱՆՑ



Դ

Մ Ա Գ Դ Ա Ղ Ի Ն Է





Մ Ա Գ Դ Ա Ղ Ի Ն Է

Վ Ի Պ Ա Ս Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Պ . Յ Ո Ւ Լ Ի Ո Ս Ի Ս Ա Ն Տ Ո Յ

ԱՆԴԱՄ ԳԱՂՎՈՅ ՃԵՄԱՐԱՆԻՆ



Վ Ե Ն Ե Տ Ի Կ

Ի Տ Պ Ա Ր Ա Ն Ի Ս Ր Բ Ո Յ Ն Ղ Ա Ջ Ա Ր Ո Ւ

1860

~~OL 41692.24~~

✓
OL 41680.6 (4-6)

✓
UC 12936 (4-6)



Ծ Ա Ն Ո Ւ Յ Ո Ւ Մ Ն


Պ. Յուլիոս Սանտոյ, Մագդաղէնէի հեղինակը, այսօրուան օրս՝ Գաղղիոյ երեւելագոյն վիպասաններէն մէկն է. և այնչափ մեծամեծ կատարելութիւններ կը բովանդակեն իր փոքրիկ երկասիրութիւնները, որ պարզ անոնց համար Գաղղիոյ Ճեմարանին անգամ ընտրուեցաւ 1888 տարւոյն: Իրմէ առաջ ոչ ոք իբրև վիպասան կրցեր էր աթոռունենալ այն իմաստուն կաճառին մէջ. անանկ որ Պ. Վիգէ, Ճեմարանին այն ատենուան տեսուչը, ուրախակցութեան և գովեստի ճառ մը խօսելու ատենը Պ. Սանտոյի վրայ՝ անոր հանգիստական ընդունելութեան օրը, այսպէս դարձաւ ըսաւ նոր ընտիր ճեմականին. Քեզմով, Պարոն, վիպասանութիւնն այսօր Գաղղիական Ճեմարանը մրանալու պատիւն ունեցաւ:

Իր վիպասանութիւնները ժամանակիս ուրիշ շատ վիպասանութիւններուն պէս երիտասարդ հասակի մէջ չեն մեռնիր. ընդ հակառակն շատ անգամ կը հրատարակուին և սիրով կը կարդացուին ամէն վիճակի անձիւնքներէ: Ո՞վ կրնայ ան.

տարբեր աչքով կարգաւ Սոփեւիւ Գիկինը, Մարիանէ, Տօփթօք Հէրպոյ, Վալէանն և Ռիլար, Ֆերնանդ, Կաթարինէ, Վալֆրեօզ, Որս Վիպասանուհեան, Գը լա Սեյլիէր օրիորդը, Ժառանգութեան Վը, Պարլէր և Ֆաֆաղմնէր, Պ. Բուարիէի քեան, Փորձատար, Բէնարվանի Տոնը, Մոնսպրէ Դըլէսին ու Օլիվիէր վիպասանութիւնները: Իսկ Մոֆորալինէն քան զասոնք ալ աւելի ազուտր է, և Գաղղիոյ Ճեմարանէն պսակուելու արժանաւորութիւնն ունեցած է 1847ին:

Պ. Սանտոյ սրտի հետ կը խօսի, և իր ազնուական գրչովը կը լաւցընէ մարդուս բարոյականը՝ ազգու և անոյշ կերպով մը նկարագրելով առաքինութիւնը. և այնչափ աւելի օգտակար են իր գըրուածները, որչափ որ յայտնի կ'իմացուի թէ կեզծեալ չեն իր խօսքերը, հասկա իր ներքին ըզգացմանցը նկարագիրը կամ թէ ըսենք հայլին են: Այս չքնաղ յատկութեանց հետ խուռն մատենագրական բարեմասնութիւններ ալ ունի. ո և իցէ չնչին սեպուած դէպքերն ալ վեհութեան գրոշմաւած են, և կենդանութիւն մը կը ցոլայ ծայրէ 'ի ծայր. շնորհալից, փափուկ և միանգամայն վաւուռուն է գրութեան ոճը. համառօտ ըսենք՝ իր երկասիրութիւնները գարնան անամպ արշալուսոյ մը կրնան նմանցուիլ, որ զեզուն է զովութեամբ, պայծառութեամբ, ու անանկ մէկ գեղեցկութեամբ մը, որ կը զգայ մարդ՝ բայց չկրնար բացատրել:

Այսպիսի հեղինակի մը տաղանդին ճաշակը մեր
ազգայնոց տալ ուզելով, 1889 տարւոյն ԲաւճաՎի-
դին էջերուն մէջ հրատարակեցինք Մագրադինէի
աշխարհաբար Թարգմանութիւնը . և նոյնը հիմա
յանձն առինք առանձին ալ 'ի լոյս հանելու՝ զե-
ջանելով ոմանց ազնիւ փափաքանացը , և այս առ-
թիւ մեզի պարտք սեպեցինք նորէն աչքէ անցընե-
լով կարևոր սրբագրութիւններն ընելու : Բնա-
գրին ոգին ու գրաւորական արդիւնքն ինչպէս որ
պէտք է դուրս ցատքեցրնելու համար՝ լաւագոյն
կ'ըլլար գրաբար Թարգմանել . բայց դեռ շատե-
րուն հասկընալի չըլլալով գրոց լեզուն , աւելի ըն-
տրեցինք ամենուն ծանօթացրնելու թէ ինչպէս
աշխատութիւնը ծնող է բարեաց և ինչպէս կրից
պիղծ շնչովն ապականած մարդկանց ալ կրնայ վե-
րանորոգութեան վայելութիւնը շնորհել :



Մ Ա Գ Դ Ա Ղ Ի Ն Է



Ա.

Ինչպէս այն ամէն գեղերը՝ որոնց մէջ էն արքաւանահան ճամբայ կ'անցնէ, ասանկ ալ Նէօվի-լէ-Պուա անախործ գեղ մըն է, ձմեռը աղտեղի, ամառը փոշելից, և բանաստեղծական ու խորհրդաւոր կերպարանքէ մը զուրկ: Ան աստիճանի ալ յարգունի, որ ինչուան այս սրարդ պատմութեան նախընթաց օրը՝ տեղացիք ամենևին չէին յիշէր որ հասարակաց կառք մը իրենց գեղին մէջ կանկ առած ըլլայ երբէք: Չիավարներուն ու կառաց առաջնորդներուն ասանկ արհամարհանք մը ցուցնելը Նէօվի-լէ-Պուայի վրայ՝ կ'իմացընէ թէ գինւոյ կողմանէ շատ խեղճ է:

Աշնան ժամանակ, կիրակի օր մը, պատարագի ու երեկոյեան ժամերգութեան

ատեններուն մէջ տեղը , տեղացիք խմբովին ժողովուած գեղին մուտքը՝ արևուն հրատապ ուղղահայեաց ճառագայթներուն տակ կը սպասէին լուրջ գէտքով Բարիզէն Ղիմոժ գացող ճեպընթաց կառաց անցներուն . աս էր իրենց միակ զուարճութիւնը ասոնի օրեր , որ թէ և կարճ , այլ շատ ախորժեղի էր , ինչպէս այն ամէն ուրախութիւն որ տևողական չէ : Երբոր հեռուանց անոր գալուն ճայնը կը լսէին , ճամբուն երկու կողմը հանդիսիւ կը շարուէին . յետոյ երբ անուահոլով մեքենայն ձիերուն երազընթացքովը օդուն մէջի երկու կարգ քիթերուն , պաղ աչքերուն ու բաց բերաններուն մէջէն թռչելով՝ ճամբան զարտուղածին պէս կ'աներևութանար աչքէ փոշոյ ամպի մէջ ծածկուած , այս բարի մարդիկները գոհ սրտով իրենց տուները կը դառնային :

Արդ մեր ըսած կիրակի օրն ալ անանկ կ'երևար որ ուրիշ կիրակիներուն պէս պիտի անցնէր . բայց երկինք վճռած էր որ այդ օրը Նէօվի-լէ-Պուա գեղը այնպիսի հրաշք մը տեսնայ , որուն ալ յոյս չունէր՝ յիսուն տարուան սնոտի ակնկալութեամբը սաստիկ վհատած ըլլալով : Ճեպընթաց կառքը փոխանակ նետի մը պէս թռչելու ինչպէս որ սովորութիւնն էր , ճամբուն վրայ կեցաւ ընդ մէջ մարդկանց երկու խումբերուն : Այսպիսի անակնունելի տեսարան մը ու բաղդին այսպիսի անկարծե-

չի շնորհքը տեսնալով, Նէօփի-լէ-Պուայի բացոր բնակիչքը գամուած մնացին նոյն տեղւոյն վրայ, առանց դիտնալու և առանց մտածելու թէ ինչէն այս մեծ պատիւը կ'ըլլուէր իրենց : Նոյն իսկ շուներն ալ որ սովոր էին կառքին ետևէն հաջելով վաղելու, իրենց տէրերուն պէս ապշած անշարժ ու լուռ կը կենային : Այն միջոցին առաջնորդը կառքէն վար իջաւ, բացաւ ճեպընթացին բոլորչի մասին գուռը, և Նէօփի-լէ-Պուայի անտունն որ տուաւ, դեռ ոտհասակ օրիորդ մը վար իջաւ, որ թևին տակը ծրար մը միայն ունէր : Սև հագուած էր, և տատնըհինգ տարեկանէ աւելի չէր կրեար . ճակատին գեղնութիւնը, արտանոգը մաշած աչքերը, և տխուր ու վշտագին դէմքը՝ սքոյ զգեստներէն աւելի կը յայտնէին իր վիճակը : Առաջնորդը շուտով մը իր նստելու տեղն ելլելով, օրիորդը հաղիւ կրցաւ գլխով բարև մը տալ ու աննել իր ճանապարհորդ ընկերներուն : Աղջիկը, որ իր հասակէն աւելի ծանրաբարոյ էր, երբոր մինակ մնաց այս կրահէզ ճամբուն վրայ և տեսաւ ամենուն աչքը իրեն վրայ ուղղուած ապուշ և կասկածոտ հետաքրքրութեամբ մը, մանաւանդ որ ամենեկին ճանչուոր մը չունէր այն գեղին մէջ, զնաց նստաւ քարերու գէղի մը վրայ, և սրտին տազնապէն ձեռուրներովն երեսը գոցած սկսաւ լալ : Գեղացիք նոյնպէս առջի կերպովը կը

նայէին իրեն , առանց խօսք մը արտաբերելու և առանց տեղերնէն շարժելու : Բարերազգիարար այս գեղացուց խմբին մէջ քանի մը կանայք կային , և անոնց մէջ ալ մայր մը՝ որ գրկին մէջ նորածին տղայ մը կ'որորէր : Մօտեցաւ ապիկայ տառապեալ օրիորդին , և քանի մը վայրկեան կարեկցութեամբ մը աշուղները փրանսեւեռելով ասարկուսած կեցաւ . որովհետեւ թէպէտ ամենայն կերպով կ'երևար վրան երեսէ ձգուած ըլլալն ու գրեթէ աղքատութիւն ալ , բայց այնպիսի վեհութիւն մը կը փայլէր անոր անձին վրայ՝ որ մեծարանաց արժանի կ'ընէր զինքը :

— « Խեղճ օրիորդ , շսաւ վերջապէս կիւնը , որովհետեւ այս հասակին մինակուկ ճանապարհորդութեան ելած կը տեսնեմ գրեզ , ըսել է որ անշուշտ մայրդ վախճաներ է :

— Այո , մայրս կորսնցուցի , լգատաս . խանեց օրիորդք քաղցր ձայնիւ , քիչ մը օտարականի հնչմամբ արտաբերելով խօսքերը : Եղուկ ինձի . ամէն բան հորսնցուցի , ամէն բան , ինչուան այն կտոր մը հողն ալ ուր ծներ եմ և ուր կը հանգչին այն ոսկերքն որ ինձի սիրելի են : Ա՛լ ոչ ինչ ունիմ երկրիս վրայ , աեւցողց ըսելով՝ արամութեամբ գլուխը շարժելով :

— Արեցեալ օրիորդ , Աստուած գթացքու վշտացդ վրայ : Խօսակցութեան կերպէդ կ'իմանամ որ մեր երկրէն չես . շատ հեռուներէն արդեօք կու գաս :

— Ո՛ր, այո, հեռուէն, շատ հեռուէն .
քանի՛ անգամ յուսահատեցայ որ ալ հաս-
նելիք չունիմ :

— Ո՛ւր կ'երթաս :

— Ուր որ մայրս մեռնելէն առաջ յան-
ձնեց որ երթամ : Երբոր ճամբայ ելայ,
գիտէի թէ Նէովիլէ-Պուա հասնելու որ
ըլլամ, գիւրաւ վաղորավէրի ճամբան կը
գտնեմ :

— Վաղորավէր կ'երթաս :

— Այո :

— Դղեակը :

— Հրամներես :

— Ճամբադ երկնցուցեր ես . կառաց
առաջնորդը պէտք էր զքեզ մերձաւոր քա-
ղաքը ձգած ըլլար : Ինչ և իցէ փոյթ չէ,
իրեք փարսախս միայն ճամբայ ընելիք ու-
նիս, և թէ որ անտառներէն երթաս՝ ամ-
բողջ ժամ մը կը վաստըկիս : Թէ որ կ'ու-
զեմ, քեռորդիս Բիէնոյ տանի զքեզ հոն .
բայց կարգէ դուրս տաք է, և անտարա-
կոյս եմ, ծիրուն աղջիկս, որ բոլոր այսօրս
ինչուան հիմա բտն մը դբած չես բերանդ .
Եկուր մեր տնակը . մեր կովերուն կաթին
համը կ'ուռնես, և իրիկուան զովութեանը
կը սպասես ճամբայ ելլելու համար :

— Ետտ շնորհակալ եմ սրտիդ ազնը-
ւութեանը . բայց բանի մը պէտք չունիմ :
Կ'ուզեմ հիմա մէկէն ճամբայ ելլել, և թէ
որ Պ . Բիէնոյ ուզենայ հաճոյք մը ընել-
ինձի :

— Բիէռոյ , Հոս եկուր », պոռաց կինը : Այնպիսի հրամայական ձայն մըն էր սիկայ , որ կրկնել հարկ չէր : մէկէն բազմութեան մէջէն կրակուրոց երիտասարդ մը դուրս ցատքեց , և խեղճ կերպով մը առաջ կու գար ոչ ինչ ընդհատ այն շունէն՝ որ գիտէ թէ տիրոջը զինքը կ'անջնջ ծեծելու համար է միայն : Բիէռոյ առաւօտուրնէ սկսեալ ուրախութեամբ կը սպասէր երեկոյեան ժամերգութեան լմըննալու ժամանակին՝ որ եկեղեցւոյն հրապարակին վրայ ուրիշներուն հետ մէկտեղ խաղայ . անոր համար շատ չախորժեցաւ իր մօրաքրոջն ըրած առաջարկութիւնը : Բայց մօրաքոյրն անանկ կերպով մը կըրկնեց նոյն պատուէրը , որ երիտասարդը խոհեմութիւն սեպեց հնազանդիւր : Կիսն առաւ օտարական օրիորդէն պզտի ծրարն ու Բիէռոյի տուաւ որ թեին տակն առնէ . ետքը մշտելով մը զանիկայ՝ ըսաւ . « Անտառներէն գնա , և մասնաւորապէս նայէ որ շատ շուտ չքալցընես այս մատաղ օրիորդը , որ ոչ քու ոտուրներդ և ոչ քու սրունքներդ ունի » : Բիէռոյ տհաճ կերպարանքով մը ճամբայ ելաւ . մինչդեռ Նէօլի-լէ-Պուայի բոլոր բնակիչքը , որոնց ապշութիւնն սկսեր էր անցնիլ , կերպ կերպ մեկնութիւններ կու տային այս նըշանաւոր օրուան մէջ հանդիպած գործողութիւններուն :

Կարծեմ թէ այս գեղին Նէօլի-լէ-Պուայ

(անտառք) անունը հակառակ իմաստով գրուած է վրան . որովհետև կնճնիներու , կազմակերպներու կամ բարտիներու փունջ մըն . այ . չափի հիւսիսային հովէն կամ ցո . բեկուան . տարութենէն պատասպարուելու համար : Իր շրջակայքը մերկ են և տափա . րակ ծովուն ափանցը պէս , և մերձակայ տեղուանքը՝ ինչուան կէս փարսախի եր . կայնութեամբ շառաւիղ ձգելով , մէկ կաղ . նիւ ծառի մը շուքը չես վայլեր :

Սակայն քանի որ օրիորդն ու իր առաջ . նորգը փոշելից ճամբէն կը հեռանային և գէգի ներս խորը կը մտնային , բնութեան տեսարանը անզգալի եղանակաւ մը աւելի գուարթ և : աւելի կենդանի կերպարանք մը կ'առնուր : Երկու ժամ քալելէ ետքը , տեսան հորիզոնին վրայ Վալդրավէրի ան . տառներուն շարժիլը : Բիէռոյ իր մօրա . քթովն . ըսածին մտիկ շրինելով՝ շուտ շուտ կը քալէր , առանց փոյթ ընելու աղջկան վրայ . յուսալով որ խաղի ժամանակին կրնայ գառնալ հասնիլ , ոտուրները կը թռչէին : Թէպէտ Մագդաղինէի քալուած . քը արագ էր , երբեմն երբեմն խեղճը կ'ա . զաչէր . Բիէռոյի որ գթայ լրան . բայց ա . նրզգամը չլսելու կը զարնէր և առանց կա . բեկցութեան կը շարունակէր իր ճամբան : Կուրհանդակի ընթացքով երթալով ալ հանգերձ , տխուր աչքով մը կը նայէր ծա . սոց ստուերներուն , զոյսնք արեգակը յանչափս կ'երկնցընէր մարգագետնոց խո .

տերուն վրայ . սիրտը դառնութեամբ լը-
ցուած՝ կը տեսնար որ եթէ ինչուան Վալ-
դրավէր երթալու ըլլար, իր կիրակի օրուան
ընելու զուարճութիւնն յօդս պիտի ցըն-
դէր : Անտառին ծայրն որ հասան , սատա-
նայական մտածութիւն մը այս երիտա-
սարդ հովուին միտքն ինկաւ : Եւ թեկն տա-
կը բռնած ծրարը վար առնելով ու խոտին
վրայ դնելով ,

— « Ահաւասիկ եկանք , ըսաւ աղջրկան
կտրուկ կերպով մը . սա ծառազարդ ճամ-
բան բռնէ գնա և շիտակ դղեակը կը հաս-
նիս . քառորդէ մը դուռը երեսիդ առջև
կ'ելլէ » :

Աս ըսաւ ու կը պատրաստուէր երթալու .
բայց դիմացէն ձև մը տեսնելով՝ կեցաւ :
Օրիորդը գօտւոյն տակէն հանեց փոքրիկ
քսակ մը , որ շատ ծանր չէր երևար , և
արծաթէ պզտի դրամ մը տուաւ Բիէնոյի
ազնուական կերպով մը , շնորհակալ ըլլա-
լով քաշած աշխատութեանը վրայ : Այս-
պիսի առատածեռնութիւն մը տեսնելով
Բիէնոյ՝ որուն յոյս չունէր , շփոթեցաւ
այլայլեցաւ : Տարակուսած մնաց քիչ մը
ատեն . և թերևս իր խղճմտանաց ձայնին
մտիկ կ'ընէր , բայց մէյ մ'ալ տեսաւ հե-
ռուէն դաշտին մէջ Նէօվի-լէ-Պուայի զան-
գակատունը , որ կը նմանէր ծովափանց
վրայ ինկած նաւու կայմի մը : Եւ սրտին
մէջ եղած բորբոքը առարկաները մօտեցը-
նելով իրեն , կարծեց որ կը տեսնայ , մա-

նաւանդ թէ ըսենք տեսաւ երեզեցւոցն
հրազարակին վրայ վեց ջուխտ գառար,
կասունք որ իր սիրած խազերը կը խա-
ղային : Ս, Լ չկրցաւ ինքզինքը բռնել , ա-
ռաւ ստակը գրպանք գրաւ , և անանկ ա-
րագարայլ փախաւ , որ կարծես թէ սա-
տանան ետեւէն ինկեր կը հալածէր :

Ծածագարդ ճախաւն տակն որ մտաւ օ-
րիորդը , այնպիսի հանգստութիւն մը ըզ-
գաց ներքը՝ ինչ որ կը դգայ մէկը տաք ջրոյ
բազնիքէ մը ելլելով՝ պառ ջրոյ մէջ մտած
տաննը : Իր առաջին գործողութիւնն եղաւ
փառք առլ Աստուծոյ որ իրեն օգնական
և պաշտպան եղեր էր այն երկայն ճամբոր-
դութեան մէջ՝ զոր հիմա լմնցուցեր էր ,
և խնդրել իրմէ՝ որ հիւրասիրութիւն գըտ-
նայ այն գուռը , զոր կ'երթար զարնելու :
Եւ որովհետեւ միտքը անանկ դրած էր որ
դղեակն ամենամօտ էր , կաղնիի ծառի մը
տակ նստեցաւ և անտառին դեղեցկու-
թիւններովն գրազեցաւ մէկէն միտքը . ո-
րովհետեւ , ո՛ն երողամիտ և աղնիւ բնու-
թիւն , գու ամէն հասակի բարեկամն ես .
դու կը մխիթարես ծերերը . նոյն իսկ տը-
զայք ալ , եբքոր դու ծիծաղ երեսով կը
նայիս իրենց , կը մոռնան որ մայրերնին
կորսնցուցեր են : Իր չորս կողմն եղած ա-
ռարկաներուն վրայ կը նկատէր չափա-
կցութիւն , կենդանութիւն և անուշահոտ
բուրմունք : Տեսնելով արևուն առ ՚ի շեղ
ճառագայթներն որ տերևներուն մէջէն

անցնելով հու գային իր ոտիցն առջև կը շիջանէին ; յիշեց որ իրիկունը կը մնան նար : Ոտքի վրայ ելաւ և ձեռքով ծառայ զարդ ճամբուն մէջ առաջ կրթալ , զայրիկն նէ վայրկեան յուսալով որ դղեկին ճահատն ու աշտարակիկներն երեւան իր աչքին Բայց փոխանալ այն ճամբուն ծայրը դղեայ կը գտնալով ինչպէս որ ըսեր էր Բիէնոյ , ուրիշ խտորնակ ծառադարդ ճամբայ մը դիմացն ելաւ : Ուշադրութեամբ ճտիկ քըրաւ որ մերձաւոր բնակութեան մը աղա զակ կը լսէ արդեօք . սակայն ուրիշ ձայն չլսեց՝ բայց եթէ այն շնջիւնն որ երեկոյեան ժամանակ կը լսուի անտաւանըրու խորերը : Բարձր տեղ մը ելաւ նայելու , և ուրիշ բան չտեսաւ իր շորս կողմը՝ բայց եթէ կանաչութեան ընդարձակ ովկիանոս մը : Դեռ խել մը ատեն ալ քալեց՝ ինքզինքը Աստուծոյ ցանձներով , բայց վերջապէս սաստիկ յողներով կրքորուզեց ետ դառնալ չկրցաւ գտնալ այն ճամբաներն ուսկից անցեր էր : Թէպէտ արեւ հորիզոնէն դեռ չէր քաշուած , անտաւըր ստուերաւ և մթութեամբ կը լեցուէր : Թռչունները գաղտնի էին երգերէ , գիշերային թիթեռնիկները իրենց բաժակային թևերովն օդը կը հնչեցընէին , և ծովարածուեաց անախորժ ձայները կը սկսէին ահանջի գալ : Ամէն ժամերէ աւելի այս ժամուն է որ վհատութիւնը , ախրութիւնն և միայնութիւնը սաստիկ ծանրութեամբ կը

նստին, քշուտաներու հոգւոյն վրայ ու կը
ճմլեն գայն : Մէկ կողմանէ յուսահատած,
միւս կողմանէ վրան կարողութիւն մնա-
ցած չտղալով, խեղճ աղջիկը ինկաւ տա-
րածուեցաւ խոտին վրայ և արցունքները
նորէն սկսան վազել : Եր. յարգէ գլխար-
կին սև փարսէնները քակած ըլլալով,
լացած արտենք անհանդարտ զեփիւան իր
խորտակաչ մազերուն հետ կը խաղար, զո-
րոհք յոսկի կը ներկէր վերջին ճառա՞
գայի մը :

Քանի մը վայրկեան ասանկ յուսահա-
տութեան մէջ ընկղմած կենալէն ետքը,
յանկարծակի աղուոյ ձի մը տեսաւ որ քա-
նի մը քայք հետու անշարժ կեցեր էր, և
որուն գալու ճայնը չէր լսած : ձիուն վրայ
հեծեր էր երբտառարգ մը, և անանկ զար-
մանքով կը նայէր աղջկան վրայ, որ կի-
մացուէր թէ ոչոսկիսի գիպուած իջէր հան-
դիպած սքիջ անգամ : մանաւանդ, այն
ժամուն և այնպիսի տեղ : Արիորքը ոտքի
վրայ ելաւ, և օտարականին գէմքին վրայ
բարեարտութիւն նկարուած տեղնեցով :

— « Գարուն, քսաւ անոք, Աստուած է
որ զքեզ ինձի օգնութեան կը խրիէ : Թէ
որ դու տեղացի ես, յայտնի կը տեսնաս
որ ես օտարական մըն եմ. երկու ժամէ
աւելի է որ այս անատին մէջ մուրական
կը քափառիմ, ոչ կրնամ ասկէց գուրս ել-
լալ և ոչ ալ գիտեմ թէ ո՞ր կ'երթամ.
կ'աղաչեմ սորվեցընէիր ինձի երթալու
ճամբաս :

— Շատ սիրով, պատասխանեց Երիտա-
սարդն անոյշ ձայնով մը . բայց մեր կ'ու-
զես երթալ :

— Ի՞նչ պզգրավէր :

— Գղեակը :

— Այո, Վալդրավէրի գղեակը :

— Ես ալ հոն կ'երթամ . և թէ որ կ'ու-
զես՝ ես կ'ընկերեմ քեզի ինչուան հոն :

Եւ առանց պատասխանի սպասելու՝
ձիէն վար ցատրեց : Այս երիտասարդին
վրայ կենաց զարնան բոլոր պայծառու-
թիւնը կը նշուէր, փափուկ շէնք մըն էր,
վայելուչ, և քաղցրահայեաց՝ միանգա-
մայն խրոխտ աչքեր ունէր . բայց ամէն
բանէ աւելի՝ անբացատրելի շնորհք մը կար
գրան : Մազերը սև սաթի պէս փայլուն
էին, և ծածկելաց վրայ առանց ձեռաց ա-
րուեստի կը խոպոպէին : Սկազոյն լոգիկ
մը կը ծածկէր իր երկայն ու ճկուն հաս-
կը . սպիտակ ըայն տափաստ մը ինչուան
կօշիկները կը հասնէր, որոնց քարշապար-
քը պողպատով գինուած էին : Այսպէս
պարզութիւն և միանգամայն գեղեցկու-
թիւն խառն էին իրեն վրայ :

— « Ասիկայ քովեղ է, աղնիւ օրիորդ .
հարցուց երիտասարդը՝ ձեռքի խարտա-
նին ծայրովը ցուցնելով գետինը դրուած
խեղճ ծրարը :

— Այո, պարոն, իմ բոլոր ունեցածս
անիկայ է », պատասխանեց աղջիկը տը-
խուր ժպիտով մը :

... Երկնասարդն առաւ ծրարը և ամուր մը հաստատանց՝ ձիուն թամբին վրայ . ետքը սկսան դէպ ՚ի դղեակն առաջ երթալ, ետևենէն ալ գեղեցիկ ու հլու կենդանին, որ աշնանային թարմ խոտերուն համը կը նայէր :

— « Ուրեմն, ըսաւ երիտասարդը, երբոր քեզի հտնգիպեցայ՝ կորաուեր մոլորեր էիր, ու չէիր գիտէր ինչ ընելիքդ : Շատ ուրախ եմ որ դիպուածով այս կողմէն եկայ . ապա թէ ոչ՝ հաւատնական է որ այս գիշեր՝ ատենդաց լուսոյն տակ պիտի պառկէիր՝ անտառներու մամուռին վրայ :

— Արդէն այքս առեր էի » :

Եւ հոն պատմեց օրիորդը թէ ինչպէս խաբեր էր գիներ Բիէռոյ :

— « Բիէռոյ ըսածդ անզգամին՝ մեծն է, և երկու ականջն ալ կտրուելու արժանաւոր : Բայց դու՝ վարդրավեր կ'երթաս՝ անանկ չէ՞ անտառապետոյս ուրեմն ասպետը : կամ գոնէ դղեկին մէջ մէկը կը ճանչնաս :

— Ոչ գոք կը ճանչնամ :

— Իրաւե՛կ ըսես :

— Այո, ճշմարիտ կ'ըսեմ որ մարդ չեմ ճանչնայ : բայց դու, պարոն, կը ճանչնաս արգետք ասպետը :

— Ի՞նչ ըսել է . հին բարեկամ ենք իրարու :

— Կ'ըսեն թէ աղէկ մարդ մըն է, վեհանձն ու գթած :

— Ո՛հ, շատ գթած է, պատասխանեց

երիտասարդը՝ կարծելով թէ ազջիկն իր
թշուառութեանը օգնութիւն խնդրերու հա-
մար կ'երթար . բայց ետքը աչքովը շու-
տով մը չափելով զօրիորդը , հանեց մտքէն
այս կարծիքը , և յայտնի իմացաւ որ սո-
վորական ողորմութիւն խնդրողներէն մէկ
կը չէր :

— « Ազնիւ օրիորդ , յաւել ըսեցաւ ծան-
րութեամբ , այսչափ ըսեմ քեզի որ ասպե-
տին սրտին պէս ազնիւ սիրտ բոլոր աշ-
խարհիս մէջ չկրնար գտնուիլ :

— Ես գիտէի թէ անանկ է , ամենեին
տարակոյս չունէի . բայց այս վայրկենիս՝
չատ քաղցր է ինձի նոյն բանը նորէն լսե-
լը : Իսկ պզտի Մաւրիտիոսն ալ կը ճանչ-
նաս անշուշտ :

— Ո՞վ է այս պզտի Մաւրիտիոսը :

— Ասպետին տղան :

— Հա , իմացայ իմացայ , ազաղակեց
երիտասարդը ծիծաղելով : Այո , կը ճանչ-
նամ պզտի Մաւրիտիոսը :

— Ի՞նչ կ'ըսես , յոյս կու տայ արդեօք
որ օր մը իր հօրը պէս աղէկ ու վեհանձն
մարդ ըլլայ :

— Անոր տարակոյս կայ . բոլոր այս կող-
մի մարդիկները աղէկ տղու մը տեղ գրած
են զինքը : Ես չեմ կրնար իրեն վրայ գէշ
խօսիլ :

— Սիրտս կը վկայէ որ եղբօր պէս պի-
տի սիրեմ զինքը :

— Ես ալ կրնամ ապահովցընել զբեզ

որ նաեւ իրեն մեծ ախորժ պիտի պատճառէ
զքեզ տեսնելը ։ ։

Այսպէս փօսելու ատենը՝ բացառւայրէ
մը անցան, և սրարտիզի մը պատին ետեւ՝
որուն վանգահապատ գուռը անտառին
վրայ կը նայէր, երեցաւ ազուոր գզեակ
մը՝ որուն բոլոր պատուհանները արեւմտից
ճառագայթներէն կ'այրէին ։



Մոյն իրիկունը , նոյն ժամուն , տը վալ դրավէր ծեր ասպետը գաւթին մէջ նստած էր , և հետն ընկերութիւն կ'ընէր Ֆրէզնը պառաւ մարգիզուհին , որուն մերձաւոր դղեակը հովտին խորը կ'երևար վիեն գետին ափանցը վրայ բարձրացող կաղամալսեաց դեռ կանաչ տերեւներուն մէջէն : Այս երկուքը ախորժանօք կը խօսակցէին իրարու հետ անցեալ ժամանակներու վերայ . որովհետև իրենց տարիքին՝ կեանքն ուրիշ բանով լուսաւորուած չէ , բայց եթէ այն տժգոյն և քաղցր ցոլացմամբ՝ որ յիշատակ կը կոչուի :

Մարգիզուհւոյն և ասպետին իրարու հետ ունեցած մտերմութիւնը շատոնցուան էր : Թագաւորութեան գէմ ելած առաջին ազմուկներուն ժիջոցը , Ֆրէզնը մարգիզը պատշաճ սեպեց իր կնոջն հետ մէկտեղ երթալու քանի մը ամիս ճամբորդութիւն մը ընելու Հռենոսի ափանց վրայ , բողոք

մը համարելով իր այս ճանապարհորդու-
թիւնը Գաղղիոյ մէջ հանդիպած գործոց
դէմ, և վաւերական վկայութիւն մը մե-
ծարանաց և սիրոյ առ աթոռն Սրբոյն Լու-
ղովիկոսի . և Վալդրավէր ասպետն ալ
ուզեց ընկերակից ըլլալ անոնց : Յայտնի
է ամենուն թէ ինչ վերջ ունեցան նոյն ա-
տենները այս քանի մը ամսուան ճամբոր-
դութիւնները , և թէ ինչպէս մեծաւ մա-
սամբ զբօսանքէ երկար և դառն պքսորան
քի մը փոխուեցան : Մեր իրեք ճանապար-
հորդները անանկ հաստատ մտքերնին զը-
րած էին շուտով գառնալու , որ հազիւ տա-
րուան մը ծախքի համար հարկաւոր եղած
դրամն առած էին հետներնին : Նրբոր անի-
կայ լմնցաւ , երբոր իրենց աղամանդնե-
րը ծախեցին և զարգերն ստակ ըրին , ան-
ժանօթ երեսօք Նիւրեմպէրկ գացին , և
աղքատաբար զետեղուեցան հոն , և ա-
պրուստնին հոգալու վիճակի մէջ ինկան :
Տը Զրէզնը և տը Վալդրավէր պարոննե-
րը վշտացեր և վհատեր էին այս դէպքէն :
Սակայն , ինչպէս որ միշտ կը հանգիպի ,
կինն օրինակ տուաւ անոնց համակամու-
թեան , քաջասրտութեան և անվեհեր գոր-
ծունէութեան : Նրբոր երկու բարեկամ-
ներն անձկութեամբ կը հարցընէին իրեն
թէ ինչ ճամբնայ պէտք էր բռնել , « Աշխա-
տի՛ք , աշխատի՛ք » պատասխանեց կինն
տնխառով կերպարանքով : Կապարանկարի ¹

1 Գղ. Pastel.

և կհտուածանկարի մէջ նարտար ըլլալով
ինքը, սկսաւ դաս տալ և դէմքեր նկարել.
և իր թշուառութեամբն ու իր նարտարաւ
թեամբը՝ քիչ ատենուան մէջ քաղմաթիւ
և ընտիր աշակերտներ ունեցաւ: Երկու
ազնուականներն, որ սկզբան մարդիկու
հւոյն աշխատիլը տեսնելով բարձրաձայն
կը դանգատէին թէ իրենց ազնուականաւ
թեանը չէր վայլէր անոր ըրածը, վերջա
պէս տեսան որ առանց բան մը ընելու բա
ւական աղէկ կ'ապրէին, և թէ առիկայ
մարդիկուհւոյն արդիւնքն էր: Մարդիկը
չարունակեց նոյն պարսպորդ կեանքը.
բայց տը վաղորավէր խորհեցաւ որ փուճ
բան էր իր աստիճանին պատիւը մտածե
լով ասանկ թե թեի անցուցած կենալը.
միայն բանը իր կարողութեանը յարմար
գործողութիւն մը, և իր անգործ ձեռքե
րուն յարմար արուեստ մը գտնալն էր:
Մտքէն անցաւ որ գազզիսքէն լեզուի վար
ժապետութիւն ընէ. բայց տեսնելով որ
սորվեցընեւէն առաջ պէտք էր որ ինքը
սորվէր, հանեց մտքէն իր այս դեղեցիկ
առաջադրութիւնը: Ամէն կողմանէ ինք
դինքը չափելէն չափչըփելէն ետքը, խո
նարհաբար խոստովանեցաւ իր անձին որ
ուրիշ բանի կարող չէր, բայց եթէ երթա
լու կեանքը զոհելու Գոնտէի բանակին
մէջ: Երբոր իր այս դիտաւորութիւնն ի
գործ դնելու պատրաստութեան վրայ էր՝
թէպէտ ոչ ախորժանօք, որ մը ախուր

սրտում փողոցներուն մէջ քալելու ատե-
նը՝ մեքենաբար կանկ առաւ տղայոց խա-
ղալիկներու խանութի մը առջև, ուր բաց
'ի աւրիջ փայտաչէն խաղալիկներէ, խոշ
մը վարագետ շինուած շունչաններ կային,
որոնք՝ Նիւթեմաէրկի պարծանքն են և
քաղքին՝ տղայոց զուարճութիւնը: Չէր
կրնար կարծուիլ թէ այս տեսարանը կա-
րենայ պանդխտեալ և հասակն առած ազ-
նուականի մը, որ բոլորովին ինկած էր
առջի վիճակէն, երևակայութիւնը վառել
և ըզեղին գործունեայ բորբոք մը տալ:
Եւ օակայն ար Վալդրամէր ասպետը քա-
նի մը վայրկեան լուծեամբ ուշի ուշով
նայելէն ետքը, այնպիսի զգացմունք մը
զգաց իր վրան՝ ինչ որ անտարակոյտ զգա-
ցած են իրենց վրայ՝ Քրիստափոր Գոլոմ-
պոս երբոր տեսաւ ովկիանոսի մէջէն նոր
աշխարհին ափանց վեր բարձրանալը, և
Գալիլէոս՝ երբոր ծանեալ թէ մեր երկրա-
գունտը՝ զոր ազիտութիւնը միջոցին մէջ
գամուած և անշարժ կը սեպէր վեց հազար
տարիէ 'ի վեր, կը շարժի և արևուն վրայ
կը պտըտի:

Տը Վալդրամէր ասպետը 1760 տարուոյն
ծնած էր: Արդ այն ժամանակի նորու-
թիւնն էր Գաղղիոյ մէջ որ բարձր աստի-
ճանի մարդկանց տղայոց դաստիարակու-
թեանը հարկաւոր կը սեպուէր ո և իցէ ա-
րուեստի մը տեղեկութիւնը: Եւ այս քա-
նիս վեհագոյն օրինակ մըն ալ տրուած էր:

1780ին Գաղղիոց թագաւորն , որ իր պետութեան մէջ ամենէն արդարաւիրով մարդն էր , միանգամայն ամենէն վարպետ դարբինն էր : Աղնուական բարն մը կը համարուէր իշխանաւորաց համար՝ մեքենական արուեստ մը գիտնայք , ինչպէս որ մեծատոհմ տիկնանց համար ալ իրենց որդիքն անձամբ սնուցանելը :

Այս ամէն խաղալիկները տեսնալով որ Ալլըրավէր , որոնք գիպուածով կամ մանաւանդ թէ գաղտնի կոչման մը բնածին զգացմամբը իրեն աչքին հանդիպած էին , յիշեց որ ուտենօք սորված էր երենոսի և փղոսկրի վրայ աշխատիլ : Իրեք ամիս չանցաւ ասոր վրայ՝ անանկ ազէկ կը բանէր փայտի վրայ , որ իրեն հաւասարը չէր գտնուէր . մասնաւորապէս շատ ակորճելի կ'անցնէին իր շանչանները . հապա ինչ ըսելու է իր շինած կաղնաբեկ գործեաց վրայ , որոնք իրենց փափուկ և վայելուչ յօրինուածովն մէյմէկ փոքրիկ հրաշալիք էին . իսկ փղոսկրէ շինածները չքնաղ զարդերու պէս կը պահէին ամէնքը քովերնին : Ասանկով թէ ասպետն և թէ մարդիգուհին անուն հանեցին իրենց ճարտարութեամբն ոյն գերմանական հին քաղաքին մէջ :

Բոլոր օրը աշխատութեամբ անցրնելէն ետքը , իրիկուան մէկտեղ կու գային , և իրենց ձեռակերտներն իրարու ցուցընելով զուարթութեամբ ու ծիծաղով կ'անցընէին

ժամանակնին : և չէին անդրադառնար որ իրենց զուարթութեանը պատճառն աշխատութիւնն էր , աշխատութիւնը՝ որ արդէն իրենց բարբը լուսագունի կը փոխէր և աւելի երջանիկ կ'ընէր զիրենք՝ քան ինչ որ եղած էին իրենց ամենէն աւելի բարեբաւտութեան միջոցը : Իսկ մարգիգին գալով , ինքը անանկ կը սեպէր՝ որ քրտամբ երեսաց իր հացն ուտելը ռամկին ընելու բանն էր , և թէ ազնուական մը որ իր յարգը զի տէ՛ աւելի պէտք է յանձն առնէ մեռնիչ հոսմացեցի սինկլիտոսաց իրենց կարողեան գահերուն : Վրայ նաթած մեռնելուն պէս , քան թէ ինքզինքը նուաստացընէ ու աշխատելով հացը դտնայ աղքատաց պէս : Անոր համար մաքէն նեղացած էր իր կնոջը , տիրաբար կ'արհամարհէր զասպետն և համարձակ կ'ըսէր երեսին : Անկէց աւելի կը զայրանար՝ որ կը տեսնէր թէ երկուքն ալ բարբ օրը դբաղած և զուարթութեամբ կ'անցընէին . ուր ընդ հակառակն ինքը մեռնելու ատտիճանի կը տազնապէր այն տիրական ու խորին ճանճրութենէն , որ անգործութեան հետեանքն է : Սակայն իր յարգը զիտնալովն ալ հանդերձ՝ աղէկ օխորժակով մը կը սրբէր կերակուրները , և անանկ մանկական ու փուճ պահանջ մտնքներ կ'ընէր՝ իբրև թէ իր Վիենի ափսոնց վրայ կանգնուած դռնկին մէջ ըլլար : Մասնաւորապէս սեղանի վրայ շատ կը շարժէր իր բարկութիւնը : — « է՛ , մար-

գիւղ, կ'ըսէր երբեմն ասպետը, բաշխուցիկը մեզի անկեղծութեամբ թէ առանց մարդի-
զուհւոյն կապարանկարներուն հիմա ինչ
վիճակի մէջ կ'ըլլայիր: — Եւ առանց մեր
բարեկամին կազնաբեկ գործնադրոյ, կ'ա-
ւելցընէր մարդիզուհին խնտալով: Տը
Յրէզնը զայրացած ուտերը վեր կը թօթվէր,
իր կնկանն համար թողութիւն կը ինքզինք
իր ազգատոհմին նախնեաց հողիներէն, և
կը գանգատէր որ սեղանին գրայ Պորտոյի
գինի բնաւ չէր գտնուէր:

Ժամանակ անցնելէ վերջը՝ աը Յրէզնը
մարդիզուհին և աը Վալդրաճէր ասպետն
երբոր իրենց տան ներքին վիճակը բաւա-
կանապէս կարգաւորեցին, սկսան բանա-
ստեղծական զգացման մը գործադրու-
թիւնն ընել, որ առանց իրենց գիտնալուն
անզգայի կերպով ծներ ու զարգացեր էր
իրենց սրտին մէջ: Ինչպէս Յակոբայ սան-
դուին երկրէս ինչուան երկինք կը բարձրա-
նար, այսպէս իրենք ալ արուեստից վարդ
աստիճաններէն ելեր բարձրացեր էին ին-
չուան արուեստի գեղեցկութիւնը: Մար-
դիզուհին սկսաւ հին երեւոյթի նկարչաց
պատկերներուն պզտի օրինակներ շինել:
և այնչափ յաջողեցաւ, որ իր Հոլպայնի ու
Ալպրեհզ Տիւրէրի նկարներուն վրայէն
շինած կիտուածանկարները՝ գնողներուն
բազմութեանը քիչ կու գային: Ասպետն
ալ ամենայն խնամքով փայտի քանդակա-
գործութեան ետեւէ եղաւ. և այս մասին

զէջ աջն կողմերուն ամենէն քաջ արուեստագործաներուն կարգն սնցաւ : ինչուան այգօթուսն օրս Նիւրեմպէրկի մայր եկեղեցւոյն մէջ կը տեսնուի իր շինած ամալիտ, նա քաղաքագործուն յօրինուածքը կատարեալ է : Թէպէտ և անոնցմէ ոմանց վրայ յաւանդուած թերութիւն կը նշմարուի . բայց զմատուր կտորը որ կը ներկայացընէ արքայն Յովհաննու Մկրտչի անապատին մէջ ըրած քարոզութիւնը , անանկ գեղեցիկ է՝ որ բոլոր Գերմանիոյ մէջ անոր հաստատութիւն կը գտնուի , և կրնայ բազմատախ վենետկոյ Սուրբ Գեորգ Մեծն եկեղեցւոյն մէջ եղած նշանաւոր փայտաքանդակներուն հետ : ...

Ո և իցէ ստորին արուեստն ալ , բաց ՚ի այն վայելչութիւն որ կու տայ , այս յարգն ալ ունի . որ ազնուականութիւն կը պարգևէ սրտի , վեհութիւն կը շնորհէ ոգւոյ , և մարմնութեանց՝ ընդարձակութիւն և զբարթութիւն : Այս արդիւնքն ունեցաւ արուեստը նաև մարգիթուհւոյն և ասպետին ժրայ . երկուքն ալ կամաց կամաց բարոյվին մէկտի ձգեցին այն անարդ դադարները՝ որոնց սահմանին մէջ փակուած էին իրենց սերնդեամբն և իրենց դատախարակութեամբը : Հանչցան որ մեծութիւնը աշխատութեան և իմացականութեան վրայ կայացած է . և թիթեռնիկներու նման որ իրենց պատեանը կը թռչուն կը փախչին , այսպէս իրենք ալ իրենց ան

ձուկ ու սահմանաւոր ցեղին մէջէն ելլելով աննիւթաբար՝ մտան յաղթանակաւ մարդկային ընդհանուր և մեծ ցեղին մէջ : Այս դէպքերուն միջոցը , մարդիդին վրայ ձանձրութիւնն ինչուան ոսկրները թափանցելով խեղճը օր օրուան վրայ կը հալէր կը մաշէր անկարելի փափաքներով և ընդունայն յիշատակաց ցաւերով : Վերջապէս մահն հասաւ , մարդիդն հոգին Աստուծոյ ձեռքն աւանդեց . իր կինն ու բարեկամը լացին իր մահուան վրայ :

Քանի մը ամիս ետքը , 1802ին , առաջին հիւպատոսին հրաւիրանօքը՝ նորէն անցան Հռենոսը և ուրախ սրտիւ դարձան իրենց հայրենիքը , որ իրենց պէս վերանորոգեր էր : Շատոնցուրձէ՛ ՚ի վեր՝ երկուքն ալ սկսած էին Քաղղիոյ նոր ստացած փառքերն ախորժիղ ու հաւնիլ . և երբ այս դիւցազնական հողուն վրայ ոտք կոխեցին , սրտերնին ելաւ և քաղցր արցունքներ կաթեցին աչուրներնէն : Իրենց կալուածներուն մեծագոյն մասը ազգին ձեռքը մնացած ըլլալով , դիւրաւ կրցան ձեռք ձգել զանոնք . անանկ որ աքսորանքի մէջ անցուցած տարիներն իրենց աչքին առջև ուրիշ բան մը չէին երևար՝ բայց եթէ երկայն երազ մը . միայն թէ , Եպիմեւնիդեայ հանդիպածին հակառակ , ծեր պառկեր էին ու երիտասարդ արթնցեր էին : Ասպետն իր դղեկին մէջ հաստատուելէն ետքը , կանչեց Քերմանիայէն իր

քոյր գեղեցիկ և համեաւ օրիորդ մը՝ որ
իր հոն քնակած առենը հանոցացիք էր ի-
րեն, ամուսնացաւ հետը . բայց շատ չան-
ցաւ, մեռաւ կինը և մանչ զաւակ մը թո-
ղուց իր էրկանը : Այս աղուն վրայ մեծա-
պէս խնամք տարին իր հայրն և մարդի-
զուհին, որոնք նոյն կեանքը շարունակե-
ցին իրենց միայնութեանը մէջ, բարեգոր-
ծութիւններ ընելով, և աշխարհիս աղմուկ-
ներէն և փառասիրութենէ հեռու անցը-
նելով իրենց ժամանակը : Աշխատելու սո-
վորութեանը ինչպէս որ գծուարին է վար-
ժիլը, այսպէս վարժելէն ետքն ալ անհնա-
րին է ձգելը . մարդիզուհին առջինին
պէս նորէն կը նկարէր, և ասպետն ալ
ամէն առաւօտ արշալուսոյն ելլելով՝ տան-
ձենույ, ընկուզենույ և կաղնիի փայտե-
րու վրայ կը խաղար իր քերչաւը . միտքը
դրած էր իր բնակարանին մէջ գտնուած
քոլոր որգնակեր փայտաքանդակներն իր
ձեռքովը վայելչապէս նորոգելու . եր-
բեմն ալ իր առջի ժամանակներուն յիշա-
տակը կենդանացընել ուզելով, քանի մը
կաղնաքեկ գործիներ կը շինէր, զորոնք
իր երկիրներուն վարձակալաց աղջիկնե-
րուն ընծայ կ'ընէր : Իսկ օրուան մնացած
մասը կը սահէր ընթերցմամբ, չրջագայու-
թեամբ, և այնպիսի մտերմութեան մը
վայելքովը՝ որ ամենևին չէր նուազած ու
պակասած, և Մաւրիտիոսին դաստիարա-

կութեանը հոգ տանելով . և յայտնի է որ
երբ օրերը աշխատութեանը և բնութանու
թեան սխալքը կ'անցնին , շատ դարձ կ'ե
րեան :



Ուստի իրիկուն մ'ալ որ այս երկու ձե-
րունի ընկերակիցները իրարու քով նըս-
տած իրենց հին օրերուն վրայ կը խօսա-
կցէին, զորոնք մէկտեղ սահեցուցեր էին,
յանկարծ տեսան որ պարտիզին ծառա-
զարդ մէկ ճամբէն դուրս ելան այն երկու
պատանիները՝ զորոնք մենք վանգակա-
պատ դրանն առջև Քոզուլիք : Գեռահա-
տակ օրիորդը գաւթին տատիճաններէն կա-
մաց կամաց վեր ելաւ, ձանր և սիրտը ե-
լած կերպով մը : Մարդիզու հին և ասպետը
ոտքի վրայ ելան զինքն ընդունելու հատկա-
րէնք ան ատեն ծոցէն նամակ մը հանեց,
զոր նախ շրթանցը մօտեցուց պազաւ, ետ-
քը վաղբաւէրի ձեռքը տուաւ, որ հե-
տաքրքիր բարեպատու թեամբ մը կը նայէր
այս օրիորդին վրայ, զոր առաջին անգամ
կը տեսնար : Ծեր տապեար կնիքը քակեց
ու կարգաց նահակը : Ազջիկը ոտքի վրայ
կեցած՝ նիհար թեւերը կուրծքին վրայ դրեր

և աշուրները գետին սևեռեր էր . հանդարտ էր իր տխրութեանը մէջ, և խեղճութիւնը չէր վերուցած վրայէն իր վեհութիւնը : Տը Զրէզնը մարգիզուհին հետաքննութեամբ մը կը կշռէր զինքն աչքերովը . իսկ երիտասարդը քանի մը քայլ հեռու կեցած՝ ականատես էր այս անձայն տեսարանին :

Մոնագոյ , 13 յուլիս 18 . . :

« Այս աշխարհէս ելլելու մօտեցած , և դիմացս յաւիտենականութիւնը տեսած միջոցս՝ որ քիչ ատենէն պիտի սկսի ինծի համար , աշուրներս դէպ ՚ի Գաղղիա կը դարձրնեմ քանի որ չեն փակուած . առ քեզ կ'աղաղակեմ , ո՛վ եղբայր իմ , և աղաչաւոր բազուկներս առ քեզ կը բարձրացրնեմ , յանուն այն կնոջ՝ որ իմ մօրաքոյրս էր և քու ընտրած ամուսինդ : Աւաղ , ինչեր քաշեց , ինչ դառն պատահարներ , այս տունն՝ որ դուն այնպիսի բարեբաստութեան մէջ տեսար երբեմն : Ո՛ր են հիմա այս ընտանեաց ուրախութիւնն , որուն համը դու ալ առիր : Գերեզմանը բոլոր իմ մերձաւորներս յափշտակեց ինծմէ : Էրիկս չկրցաւ իր ձախորդութեան վրայ ապրիլ , և ես թշուառս ալ ահաւատիկ ես իսկ կը մեռնիմ : Ար մեռնիմ ես , և մայր եմ . կրկին մահ է ասիկայ , ո՛վ Տէր : Այս տողերը կարդացած ժամանակդ , որ մի

միակ գունձն է, և մի միակ ժառանգու-
թիւն՝ զոր կրցայ ձգել աղջկանս, ինքը աչ-
խարհիս վրայ ուրիշ մէկը չունի՝ բաց ՚ի
քեզմէ . այս արցունքներովս թրջած թուղ-
թը ձեռքդ բռնած միջոցը, իմ զաւակս քու
դիմացդ պիտի ըլլայ, միայնակ, հեռու
տեղէնեկած, խոնջ ՚ի ցաւոց և յաշխատու-
թենէ, առանց ուրիշ ապաստանի՝ բաց ՚ի
քու յարկէդ, առանց ուրիշ ապաւինի՝ բաց
՚ի քու սրտէդ : Ա՛հ, այն քաղցր կտափն
համար ըլլայ՝ որ քեզի սիրելի եղաւ և զոր
անշուշտ մահը չքակեց, այն Գերմանիոյ
համար ըլլայ՝ որ քեզի հիւրասիրութիւն ը-
րաւ և երկար ժամանակ հայրենիք եղաւ
քեզի, իմ գերդաստանիս համար ըլլայ՝
որ քու գերդաստանդ եղաւ, այն նազելի
անձին համար ըլլայ՝ զոր շատ շուտ կողոպ-
տեց քեզմէ մահը և որ կ'երդմնեցուցանէ
զքեզ իմ բերնէս, ո՛հ, մի մերժեք իմ սի-
բուն անօգնական աղջիկս : Ընդունէ,
տարցնոր քու գրկիդ մէջ աղաւնի մը որ իր
բոյնէն ինկեր է : Եւ դու, զոր թէպէտ
չեմ ճանչնար, բայց աղջրկանս հաւատար
կը սիրելի և սրտով կը հոգայի, մզ իմ մօր
քրոջս որդին, թէ որ մայրդ իր հօգւայն
նձան հոգի մը տուած է նէ քեզի, դու
անշուշտ իմ ամենասիրելի Մազդադիներէիս
եղբայր պիտի սեպես ինքզինքդ : Պաշա-
պանէ՛ զինքը, հսկէ՛ իր վրայ՝ երբոր հայրդ
վերանայ քեզմէ, և մի մոռնար երբէք,
երիտասարդ բարեկամս, որ Աստուծոյ մե-

դի խորկած որբ աղջիկը՝ պահապան հրեշտակ կ'ըլլայ երբեմն այն տանն, որ գինքն ընդունեցաւ ։

— « Իհուր, աղջիկս, եկուր գիրկս, ազադակեց ասպետն երբոր կարգալը ըմբոց . բարի եկար, զաւակս, քու ծերունի ազգականիդ տունը քուկդ է ։ Թէ որ սուգի մէջ չըլլայիր, ես այսօրուան օրս շատ երջանիկ օր պիտի սեպէի, և քու գալուստդ տօնի օր մը պիտի ըլլար ամենուս ալ ։ Մարգիզուհի, քենւոյս թոռն է առ, յաւել ըսելու՝ ձեռքերովս օրիորդին գլուխը սխմելով . Մաւրիտիոս, մօրաքեռ թոռդ է ասիկայ, պզտի քոյր մըն է քեզի՝ որ մօրդ երկրէն կու գայ ։

Արբ աղջիկը ծերունւոյն գրկէն մարգիզուհւոյն գիրկն անցաւ ։ Տը Տրէգնը աիկինն իր միածին ծաղկահասակ աղջրկանէն գրկուեր էր Մագդաղինէի չափ տարիք ունեցած միջոցը . և ամենայն թըշուառք որ այս ահաւոր ճակորդութիւնն ունեցած են, մասնաւորապէս մարք, բունն հակամիտութենէ մը մզուելով յայտնի և նշանաւոր նմանութիւններ կը գտնան (թէպէտ և իրօք չգտնուին ալ նէ) այն զաւակն որ մահն առեր է իրենցմէ և այն աղոց մէջ որ պատահմամբ իրենց դիմացը կ'երջան . սիրոյ և ցաւոց խաբէութիւնն է ասիկայ, որ այն կենդանի մաստղ դէմքերուն աննիւթարար մեռելու սի-

բիւլեաց կերպարանքը կու տայ : Այսպէս մարգիզուհին ալ բնականաբար այս զգացման հետևելով իր ազըրկան պատկերը անպէց այս սպիտակադէմ օրիորդը : Իրեն համար նոյն աչքերն էին ու նոյն նայուածքը, նոյն տխուր ու ծանր վայելչութիւնը, որ սեփական է այն արարածներուն՝ որոնք ժամանակէ առաջ վշտաց փորձ կ'ըլլան կամ ժամանակէ առաջ կը գատապարտուին մեռնելու : Այսպիսի ներքին պատրաստութեամբ մը բորբոքելով ալ Յրէզնը մարգիզուհին, որ աշխոյժ ու կրակուբոց կին մըն էր, և այնպիսի վեհանձն բնութիւն մը ունէր՝ զոր չէին կրցած խանգարել տարիներու բաղմութիւնը, օտարական օրիորդին վրայ վառ եռանդեամբ մը խանգաղատեցաւ : Գրկին մէջ սխմեց զանիկայ, և քաղցր անուաններ տալով կրկին և կրկին կը դգուէր և անգագասք կը համբուրէր : Անկէջ վերջը կարգը երիտասարդին եկաւ . — « Ուրեմն գուն էիր, ով իմ ազգակուսնս, ըսաւ տղջիկն անոր՝ արտառուաթար պատերք ծիծաղի շարժելով, դժէ էիր պզտի Մաւրիտիասը : Ես միտքս գրած էի որ գու գրեթէ ինծի չափ տղայ մըն ես » : Մաւրիտիոս ելած սրտով գրկուեցաւ հետք . ինչուան նոյն օրը հագիւթերուս կասկած մը մտքէն անցած ըլլար թէ կրնայ ըլլալ որ մարտեա թոս մը ունենայ : Այս միջոցին ասպետը տաղին կ'երթար անդին կը վազէր հրամաններ

հու տար , և իր հին ծառաներուն իւրա-
քանչիւրին ալ ղեզմամբ սրտի կ'ըսէր .
« Ասկէ ետքը զաւտկ մըն ալ աւելի ու-
նինք » : — Իրաւցընէ՛ թէ որ աոյն իրիկու-
նը կրցաւ մեր դիւցազնուհւոյն մայրը տես-
նել երկնքէն իր աղջրկածն եղած ընդու-
նելու թիւնը , անշուշտ շատ գոհ եղած պի-
տի ըլլայ :

Մտզգազինէին հոն զետեղուիդ՝ դղե-
կին ընթացքն ամենևին չիօխեց : Բարե-
պաշտ աղջիկ մըն էր , պարզ , համեստ ,
հանդարտ ու խորհող . տան մէջ քիչ տեղ
կը բռնէր , բնաւ ազադակ չէր հանէր , և
օրուան մեծ մասը լուռ կը կենար ու գլու-
խը ծռած կ'աշխատէր ասեղով : Քիչ օ-
րուան մէջ իր քաղցրութեամբն ու ազ-
նութեամբը ամենուն սիրելի եղաւ . և
մանաւանդ մարգիզուհւոյն ու ասպետին ,
որ անշէջ գորովով կը գուրգուրային վրան ,
և աղջիկն իր կեանքը փոփոխակի երկու
բնակարաններուն մէջ կ'անցընէր , որոնք
իրարու դրացի էին , և որոնք նշգրե խօ-
սելով մէկ տուն մը կը ձեւացընէին : Այն-
պիսի ընտիր դաստիարակութիւն առած
էր , որ ալ կրնար ինքիրեն շարունակել
զայն , և թէ որ հարկ ըլլար՝ լմնցընել ալ
առանց մէկու մը օգնականութեանը : Մա-
քուր կը խօսէր գաղղիարէն լեզուն . ինչ-
պէս՝ բոլոր գերմանացի կանայքը , և գաղ-
ղիացի կանանցմէ շատը , հիմամբ գիտէր
զերած շտութիւն , և որ թշուառաբար դը-

Ժուարագիւտն է՝ չէր զեղծանէր անով :
Ասպետն ու մարգիզուհին շատ կ'ախոր-
ժէին երգել աալու անոր իր երկրին գիրո-
շնան երգերը . բայց այս եղանակներն՝ որ
իրենց երկուքին հանոյական կու գային ի-
րենց աքսորանաց և ազքատութեան օ-
րերն յիշեցընելով, ընդ հակառակն ազջը-
կանը կը յիշեցընէին ահամայ իր մայրն և
իր հայրենիքը , սրտնք անդարձ կորուսա-
ներ եղած էին իրեն համար , և շատ ան-
գամ խեղճ օրիորդը արտասուօք և հե-
ծութեամբ կ'ընդհատէր իր երգերը : Իսկ
Մաւրիտիոսի գալով, շաբաթ մը կամ եր-
կու շաբաթ պարտք սեպեց իր մօրաքեռ
Թոռն զրազեցընել ու երկրին վրայօք գո-
վեսաներ խօսիչ անոր . անկէ ետքը գրե-
թէ մոռցաւ իսկ որ Մագգադինէ գղեակն
էր : Քսան տարուան էր և այն հասակին
բուռն ու անխորհուրդ աշխուժութիւնը
լիովի ունէր իր վրայ . խեղքը ժխտքը ու-
րիշ բանի աուած էր : Շատ մեծ պղասու-
թեան մէջ մեծցեր էր , և հայրն ու մարգի-
զուհին երկուքն ալ աւերեր էին գինքը՝ շատ
երես տալով իրեն : Քիչ մը յունարէն ու
քիչ մ' ալ լատիներէն սորվեր էր վարժա-
պետէ մը . 'ի նմին ժամանակի վաղորա-
վէր ասպետն ալ , որ փայտի քանդակա-
գործութեան սիրովը բորբոքած էր , նոյն
արուեստին վարժեցուցեր էր գինքն ալ :
Քարի ծերուկը պարծանքէն և ուրախու-
թենէն արցունք կը թափէր , երբոր կը

ձուկ ու սահմանաւոր ցեղին մէջէն ելլելով աննիւթաբար՝ մտան յաղթանակաւ մարդկային ընդհանուր և մեծ ցեղին մէջ։ Այս դէպքերուն միջոցը, մարդիդին վրայ ձանձրութիւնն ինչուան ոսկրները թափանցելով խեղճը օր օրուան վրայ կը հալէր կը մաշէր անկարելի փափաքներով և ընդունայն յիշատակաց ցաւերով։ Վերջապէս մահն հասաւ, մարդիդն հոգին Աստուծոյ ձեռքն աւանդեց. իր կինն ու բարեկամը լացին իր մահուան վրայ։

Քանի մը ամիս ետքը, 1802ին, առաջին հիւպատոսին հրաւիրանօքը՝ նորէն անցան Հռենոսը և ուրախ սրտիւ դարձան իրենց հայրենիքը, որ իրենց պէս վերանորոգեր էր։ Շատոնցուքնէ՛ ի վեր՝ երկուքն ալ սկսած էին Քաղղիոյ նոր ստացած փառքերն ախորժիլ ու համիլ. և երբ այս դիւցազնական հողուն վրայ ոտք կոխեցին, սրտերնին ելաւ և քաղցր արյունքներ կաթեցին աչուրներնէն։ Իրենց կալուածներուն մեծագոյն մասը ազգին ձեռքը մնացած ըլլալով, դիւրաւ կրցան ձեռք ձգել զանոնք. անանկ որ ոքսորանքի մէջ անցուցած տարիներն իրենց աչքին առջև ուրիշ բան մը չէին երևար՝ բայց եթէ երկայն երազ մը. միայն թէ, Եպիսկոնիդեայ հանդիպածին հակառակ, ծեր պառկեր էին ու երիտասարդ արթնցեր էին։ Ասպետն իր դղեկին մէջ հաստատուելէն ետքը, կանչեց Քերմանիայէն իր

քովը գեղեցիկ և համեստ արհորգ մը՝ որ
իր հոն քնակած աստներ հանոյացեր էր ի-
րեն, ամուսնացաւ հետը . բայց շատ չան-
ցաւ, մեռաւ կինը և մանչ զաւակ մը թո-
ղուց իր էրկանը : Այս տղուն վրայ մեծա-
պէս խնամք տարին իր հայրն և մարդի-
զուհին, որոնք նոյն կեանքը շարունակե-
ցին իրենց միայնութեանը մէջ, բարեգոր-
ծութիւններ ընելով, և աշխարհիս աղմուկ-
ներէն և փառասիրութենէ հեռու անցը-
նելով իրենց ժամանակը : Աշխատելու սո-
վորութեանը ինչպէս որ դժուարին է վար-
ժիլը, այսպէս վարժելէն ետքն ալ անհնա-
րին է ձգելը . մարդիզուհին առջինին
պէս նորէն կը նկարէր, և ասպետն ալ
ամէն առաւօտ արշալուսոյն ելլելով՝ տան-
ձենույ, ընկուզենույ և կաղնիի փայտե-
րու վրայ կը խաղար իր քերչաւը . միտքը
դրած էր իր բնակարանին մէջ գտնուած
բոլոր որգնակեր փայտաքանդակներն իր
ձեռքովը վայելչապէս նորոգելու . եր-
բեմն ալ իր առջի ժամանակներուն յիշա-
տակը կենդանացընել ուզելով, քանի մը
կաղնաբեկ գործիներ կը շինէր, զորոնք
իր երկիրներուն վարձակալաց աղջիկնե-
րուն ընծայ կ'ընէր : Իսկ օրուան մնացած
մասը կը սահէր ընթերցմամբ, չրջագայու-
թեամբ, և այնպիսի մտերմութեան մը
վայելքովը՝ որ ամենևին չէր նուազած ու
պակասած, և Մաւրիտիոսին դաստիարա-

կութեանը հոգ տանելով . և յայտնի է որ
երբ օրերը աշխատութեամբ և բնատանու-
թեան սիրամբ կ'անցնին , շատ կարճ կ'ե-
րեան :



Ուստի իրիկուն մ'ալ որ այս երկու ձե-
րունի ընկերակիցները իրարու քով նըս-
տած իրենց հին օրերուն վրայ կը խօսա-
կցէին, զորոնք մէկտեղ սահնցուցեր էին,
յանկարծ տեսան որ պարտիզին ծառա-
գարդ մէկ ճամբէն դուրս ելան այն երկու
պատանիները՝ զորոնք մենք վանդակա-
պատ դրանն առջև թաղուցինք : Գեռահա-
սակ օրիորդը գաւթին տատիճաններէն կա-
մաց կամաց վեր ելաւ, ձանր և սիրտը ե-
լած կերպով մը : Մարդիզուհին և ասպետը
ոտքի վրայ ելան զինքն ընդունելու հասնար-
ինքը ան օտեն ծոցէն նամակ մը հանեց,
զոր նախ շրթանցը մօտեցուց պազաւ, ետ-
քը վայդրավէրի ձեռքը տուաւ, որ հե-
տաքրքիր բարեարտութեամբ մը կը նայէր
այս օրիորդին վրայ, զոր առաջին անգամ
կը տեսնար : Ենր ասպետը կնիքը քահեց
ու կարգաց նամակը : Ազնիկը ոտքի վրայ
կեցած՝ նիհար թեւերը կուրծքին վրայ դրեր

և աչուրները գետին սևեռեր էր . հանդարտ էր իր տխրութեանը մէջ, և խեղճութիւնը չէր վերուցած վրայէն իր վեհութիւնը : Տը Ծրէզնը մարգիզուհին հետաքննութեամբ մը կը կշռէր զինքն աչքերովը . իսկ երիտասարդը քանի մը քայլ հեռու կեցած՝ ակնատես էր այս անձայն տեսարանին :

Մոնագոյ , 13 յուլիս 18 . . :

« Այս աշխարհէս ելլելու մօտեցած , և գիմացս յաւիտենականութիւնը տեսած միջոցս՝ որ քիչ ատենէն պիտի սկսի ինձի համար , աչուրներս դէպ ՚ի Գաղղիա կը դարձրնեմ քանի որ չեն փախուած . առ քեզ կ'աղաղակեմ , ո՛վ եղբայր իմ , և աղաչաւոր բազուկներս առ քեզ կը բարձրացրնեմ , յանուն այն կնոջ որ իմ մօրաքոյրս էր և քու ընտրած ամուսինդ : Աւազ , ինչեր քաշեց , ինչ դառն պատահարներ , այս տունն՝ որ դուն այնպիսի բարեբաստութեան մէջ տեսար երբեմն : Ո՛ր են հիմա այս ընտանեաց ուրախութիւնն , որուն համը դու ալ առիր : Գերեզմանը բողբոխի մերձաւորներս յափշտակեց ինձմէ : Էրիկս չկրցաւ իր ձախորդութեան վրայ ապրիլ , և ես թշուառս ալ՝ ահաւաստի ես իսկ կը մեռնիմ : Ար մեռնիմ ես , և մայր եմ . կրկին մահ է ասիկայ , ո՛վ Տեր : Այս տողերը կարդացած ժամանակդ , որ մի

միակ գաւնձն է և մի միակ ժառանգութիւն՝ զոր կրցայ ձգել աղջկանս , ինքը աչխարհիս վրայ ուրիշ մէկը չունի՝ բաց ՚ի քեզմէ . այս արցունքներովս թրջած թուղթը ձեռքդ բռնած միջոցը , իմ զաւակս քու գիմացդ պիտի լլլայ , միայնակ , հեռու տեղէ եկած , խոնջ ՚ի ցաւոց և յաշխատութենէ , առանց ուրիշ ապաստանի՝ բաց ՚ի քու յարկէդ , առանց ուրիշ ապաւինի՝ բաց ՚ի քու սրտէդ : Ո՛հ , այն քաղցր կտակին համար ըլլայ՝ որ քեզի սիրելի եղաւ և զոր անշուշտ մահը չքակեց , այն Գերմանիոյ համար ըլլայ՝ որ քեզի հիւրասիրութիւն ըրաւ և երկար ժամանակ հայրենիք եղաւ քեզի , իմ գերդաստանիս համար ըլլայ՝ որ քու գերդաստանդ եղաւ , այն նազելի անձին համար ըլլայ՝ զոր շատ շուտ կողոպտեց քեզմէ մահը և որ կ'երդմնեցուցանէ զքեզ իմ բերնէս , ո՛հ , մի մերժեք իմ սիրուն անօգնական աղջիկս : Ընդունէ , տարցնո՛ւր քու գրկիդ մէջ աղաւնի մը ար իր բոյնէն ինկեր է : Եւ գո՛ւ , զոր թէպէտ չեմ ճանչնար , բայց աղջրկանս հաւատարկը սիրէի և սրտով կը հօգայի , մի իմ մօր քրոջս որդին , թէ որ մայրդ իր հօգաոյն նման հոգի մը տուած է նէ քեզի , դու անշուշտ իմ ամենասիրելի Մագդաղիմէիս եղբայր պիտի սեպես ինքզինքդ : Պաշտպանէ՛ զինքը , հսկէ՛ իր վրայ՝ երբուր հայրդ վերանայ քեզմէ , և մի մոռնար երբէք , երիտասարդ բարեկամս , որ Աստուծոյ մէ

զի խորկած որք աղջիկը՝ պահանջան հրեշտակ կ'ըլլայ երբեմն այն տանն , որ գիծքն ընդունեցաւ » :

— « Իհուր , աղջիկս , եկուր գիրկս , աղաղակեց ասպետն երբոր կարգալը լմնցուց . բարի եկար , զաւակս , քու ձերանի ազգահանիդ տունը քուկդ է : Թէ որ սուգի մէջ չըլլայիր , ես այսօրուան օրս շատ երջանիկ օր պիտի սեպէի , և քու գաղաւստդ տօնի օր մը պիտի ըլլար ամենուս ալ : Մարգիգուհի , քենւոյս Թուն է աս , յաւել ըսելու՝ ձեռքերովն օրիորդին գլուխը սխմելով . Մաւրիտիոս , մօրաքեռ Թոռք է ասիկայ , պզտի քոյր մըն է քեզի՝ որ մօրդ երկրէն կու գայ » :

Արք աղջիկը ձերունւոյն գրկէն մարգիգուհւոյն գիրկն անցաւ : Տը Տրէզնը ակինն իր միածին ծաղկահասակ աղջրկանէն գրկուեր էր Մագդաղինէի չափ տարիք ունեցած միջոցը . և ամենայն թշուառք որ այս ահաւոր ճախորդութիւնն ունեցած են , մասնաւորապէս մարք , բունն հակամիտութենէ մը մզուելով՝ յայտնի և նշանաւոր նմանութիւններ կը գտնան (Թէպէտ և իրօք չգտնուին ալ նէ) այն զաւակին որ մահն առեր է իրենցմէ : և այն տղոց մէջ որ պատահմամբ իրենց գիմացը կ'երջան . սիրոյ և ցաւոց խաբէութիւնն է ասիկայ , որ այն կենդանի մատաղ դէմքերուն աննիւթաբար մեռելու սի-

ընդհանգ կերպարանքը կու տայ : Այսպէս մարգիզուհին ալ բնականաբար այս զգացման հետեւելով իր ազըրկան պատկերը ածպեց այս սպիտակադէմ օրիորդը : Իրեն համար նոյն աչքերն էին ու նոյն նայուածքը , նոյն տխուր ու ծանր վայելչութիւնը , ոգ սեփական է այն արարածներուն՝ որոնք ժամանակէ առաջ վշտաց փորձ կ'ըլլան կամ ժամանակէ առաջ կը գատապարտուին մեռնելու : Այսպիսի ներքին պատրաստութեամբ մը բորբոքելով տը Զրէգնը մարգիզուհին , որ աշխոյժ ու կրակուրոց կին մըն էր , և այնպիսի վեհանձն բնութիւն մը ունէր՝ զոր չէին կրցած խանգարել տարիներու բազմութիւնը , օտարական օրիորդին վրայ վառ եռանդեամբ մը խանգաղատեցաւ : Գրկին մէջ սխմեց զանկայ , և քաղցր անուններ տալով կրկին և կրկին կը գգուէր և անգագաք կը համբուէր : Անկէջ վերջը կարգը երիտասարդին եկաւ . — « Արեմն գուն էիր , ով իմ ազգակուս , ըսաւ տղջիկն անոր՝ արտասուութեամբ պտերք ծիծաղի շարժելով , դժժ էիր ոչգտի Մարտիտիսը : Ես միտքս գրած էի որ գու գրեթէ ինծի չափ տղայ մըն ես » : Մարտիտիտս ելած սրտով գրկուեցաւ հետք . ինչուան նոյն օրը հագիւթերէս կասկած մը մարէն անցած ըլլար թէ կրնայ ըլլալ որ մարտեա թոս մը ունենայ : Այս միջոցին ասպետը տաղին կ'երթար անդին կը վազէր հրամաններ

կու տար , և իր հին ծառաներուն իւրա-
քանչիւրին ալ ղեզմամբ սրտի կ'ըսէր .
« Ասկէ ետքը զաւակ մըն ալ աւելի ու-
նինք » : — Իրաւցընէ՛ թէ որ սոյն իրիկու-
նը կրցաւ մեր դիւցազնուհւոյն մայրը տես-
նել երկնքէն իր աղջրկանն եղած ընդու-
նելութիւնը , անշուշտ շատ գոհ եղած պի-
տի ըլլայ :

Մտգագոյնէին հոն զետեղուիլը՝ դղե-
կին ընթացքն ամենևին չիօխեց : Բարե-
պաշտ աղջիկ մըն էր , պարզ , համեստ ,
հանդարտ ու խորհող . տան մէջ քիչ տեղ
կը բռնէր , բնաւ ազադակ չէր հանէր , և
օրուան մեծ մասը լուռ կը կենար ու գլու-
խը ծռած կ'աշխատէր ասեղով : Քիչ օ-
րուան մէջ իր քաղցրութեամբն ու ազ-
նուութեամբը ամենուն սիրելի եղաւ . և
մանաւանդ մարգիզուհւոյն ու ասպետին ,
որ անշէջ գորովով կը գուրգուրային վրան ,
և աղջիկն իր կեանքը փոփոխակի երկու
բնակարաններուն մէջ կ'անցընէր , որոնք
իրարու դրացի էին , և որոնք ճշգիւ խօ-
սելով մէկ տուն մը կը ձեացընէին : Այն-
պիսի ընտիր դաստիարակութիւն առած
էր , որ ալ կրնար ինքիրեն շարունակել
զայն , և թէ որ հարկ ըլլար՝ լմնցընել ալ
առանց մէկու մը օգնականութեանը : Մա-
քուր կը խօսէր գաղղիարէն լեզուն . ինչ-
պէս բոլոր գերմանացի կանայքը , և գաղ-
ղիացի կանանցմէ շատը , հիմամբ գիտէր
զերածշտութիւն , և որ թշուառաբար դը-

Ժուարագիւտն է՝ չէր զեղծանէր անով :
Ասպետն ու մարգիզուհին շատ կ'ախոր-
ժէին երգել աալու անոր իր երկրին դիր-
շեան երգերը . բայց այս եղանակներն՝ որ
իրենց երկուքին հանոյական կու գային ի-
րենց արտորանաց և ազբաաութեան օ-
րերն յիշեցընելով, ընդ հակառակն ազջը-
կանը կը յիշեցընէին ակամայ իր մայրն և
իր հայրենիքը , որոնք անդարձ կորուսա-
ներ եղած էին իրեն համար , և շատ ան-
գամ խեղճ օրհորդը արտասառօք և հե-
ծութեամբք կ'ընդհատէր իր երգերը : Իսկ
Մաւրիտիոսի գալով , շարաթ մը կամ եր-
կու շարաթ պարտք սեպեց իր մօրաքեո-
թոն զբաղեցընել ու երկրին վրայօք գո-
վեսաններ խօսիչ անոր . անկէ ետքը գրե-
թէ մոռցաւ իսկ որ Մագգադինէ դղեակն
էր : Քսան տարուան էր և այն հասակին
բուռն ու անխորհուրդ աշուժութիւնը
լիովի օւնէր իր վրայ . խեղքը միտքը ու-
րիշ բանի առած էր : Շատ մեծ արգասու-
թեան մէջ մեծցեր էր , և հայրն ու մարգի-
զուհին երկուքն ալ աւեր էին դինքը՝ շատ
երես տալով իրեն : Քիչ մը յունարէն ու
քիչ մ' ալ լատիներէն նորովեր էր վարժա-
պետէ մը . 'ի նմին ժամանակի վ'արգրա-
վէր ասպետն ալ , որ փայտի քանդակա-
գործութեան սիրովը բորբոքած էր , նոյն
արուեստին վարժեցուցեր էր դինքն ալ :
Քարի ծերուկը պարծանքէն և ուրախու-
թենէն արցունք կը թափէր , երբոր կը

տեսնէր որդին իր քովը ար կը խաղար կը յղէր քերչաւ և յայտ կու տար անցնելու իր հայրը : Մաւրիափոս ալ կարծես թէ կ'ախորժէր այս անգնասս գրողանքը . մէկ մ'ալ յանկարծակի օր մը գժբազդարատը հարցուց ինքն իր անձին՝ թէ, ասպետէն , մարդիգտակիէն և փայտի քանդակագործութենէն 'ի դաս՝ աշխարհիս մէջ ուրիշ բան մը չկոր արդեօք : Այս անմիտ հարց մանր՝ զոր ինքն իրեն հարցուց խառվելալ , անհանդարտ և սանձը կտորելու մտք երիտասարդութիւնը , շուտով պատասխանն առաւ . նոյն ինքն երիտասարդութիւնը իր թուժքերը պատուելովը պատասխանն տրուաւ :

Կան փայտիկ և բանաստեղծական բնութիւններ , որոնց առաւօտը թեթև մտախղով մը ծածկուած կ'ըլլայ . ընդ հակառակն կան սերիչ բնութիւններ ալ աւերի վատվածն և աւելի աղքու , որոնց արշալոյսը ցորեկուան բոլոր ճառագայթներովը հրդեհած կը ծագէ : Առջիններուն վրայ , նոր արթնցած գրայարաններուն և երևակայութեան պատճառած խառվութիւնը՝ առանց աղաղակի երևան կ'երթէ և մտաբրտման տխրութեան կը փոխուի . խի վերջիններուն վրայ , բանաբար խառվայոյզ աղալլութիւններու կը փոխարկի : Մաւրիտիոս այս երկու բնութիւններէն ալ միանգամայն մասն ունէր . մերթ ընդ մերթ տխուր կը տեսնուէր , ինքիբէն դուրս ե-

լրտձ ու մտածութեանց մէջ ընկզմած, մէկ մ'ալ յանկարծակի այնպիսի անվախճան իղձերով կը բորբոքէր՝ որունց և ոչ կարեղի է ճիշդ բացատրելը, տունը չէր կրնար կենալ, բոքնկած ու չափազանց եռանդուն և բարկասիրտ կերպ մը կ'առնէր, և չէր գիտէր թէ ինչպէս նետէ վրայէն այն վայրենի բուռն զօրութիւնը որ կը մաչէր զինքը. բայց միանգամայն կը սիրէր անկեղծ գորովով իր ծերունի հայրը, շնորհալից և քաղաքավար կերպով կը վարուէր սառաւ մարդիզուհւոյն հետ, ամենուն հետ աղէկ էր, ամենէն սիրուած. միայն թէ սաստիկ կը ձանձրանար փայտի քանդակագործութենէն, հօրենական տան մէջ միակերպ բնակեցէն, այն անհասանում պատմութիւններէն՝ որ գրեթէ քսան տարուրնէ 'ի վեր կը լսէր, և կը հարցընէր ինքն իր անձին նեղարտութեամբ՝ թէ արդեօք բոլոր իր կեանքը տօսալսի և կառնիի փայտի վրայ խաղալով, և իրիկունները կրակին դիմաց օտուրները կրակարանին երկաթներուն վրայ դրած՝ փախստականաց պանդխտութեան ժամանակին անվերջանալի դէպքերը մտիկ ընելով պիտի անցընէր : Անոր համար ինքզինքը բոլորովին որսորդութեան տուած էր, բոլոր ջրջակայ տեղուանքը կը պտըտէր և ձիեր կը ճաթեցընէր :

Այս յիմարութեանց ամենէն սաստիկ միջոցին եկաւ Մազդաղիինէ : Կրնայ մա

կաբերուիլ թէ արդեօք ինչ աստիճանի ազգեցութիւն կրցաւ ընել այսպիսի ատեն մը երիտասարդի մը վիճակին վրայ՝ տասնըշորս տասնըհինգ տարեկան դեռահասակ աղջրկան մը գալուստը, որ վախկոտ, ըզգուշաւոր, լուռ էր և շատ գեղեցկութիւն ու շնորհք մ'ալ չունէր: Արիտասարդին անանկ հոգը չեղաւ անոր գալուստը, որ իբրև թէ աղջիկը Մոնագոյէն ելած եկած չըլլար իրենց քովը: Առաւօտը տնէն դուրս կ'ելլէր, և գիշերը կոխած ատեն ներս կը մտնէր. իսկ շատ անգամ ալ ամբողջ շաբաթ մը դուրսը կ'անցընէր, կամ մերձաւոր քաղաքը, կամ մերձակայից գղեակներուն մէկուն մէջ: Թէ որ առաւօտը Մագդաղինէն պատուհանը տեսնար, բոլոր բոլոր բարև մը կու տար ու կ'անցնէր կ'երթար: Աերակրոյ ժամանակ՝ առանց երեսը նայելու ասդիէն անդիէն քանի մը աննշան խօսքեր կ'ըսէր անոր: Արբոր անիկայ դիրտլեան երգերը կ'երգէր, գորոնք յօժարութեամբ առիթ առնելով ասպետն ու մարգիզուհին՝ Նիւրեմպերկի վրայ կը խօսէին, և կը յիշէին՝ մէկը իր կաղնաբեկ գործիները, միւսն իր կիտուածանկարները, Մաւրիտիոս՝ սրուն ականջները անոնցմով լեցուած էին, գաղտուկ մը կը փախչէր միշտ սեղանէն երգը սկսածին պէս: Ի վերայ այսր ամենայնի՝ իրիկուն մ'որ օրիորդին քովը նստած էր, յանկարծ աչքը զարկաւ անոր մաղերուն գե-

դեցկութիւնը . և ընտանեբար ձեռքովը վեր առնելով այն դեղին ու բարակ մազերը , որ պզտիկ գերմանուհւոյն գլխուն թեթեւ բեռն էին , բարձրածայն գոլեց զանոնք : Օրիորդը այն աստիճանի չէր սպասէր այսպիսի նշանի մը իր ազգականէն , որ ամօթէն կարմրեցաւ շփոթեցաւ և դողալ սկսաւ : Ետքը երբոր կ'ուզէր ժպտելով մը իր շնորհակալութիւնն յայտնել , Մաւրիտիոս վախճալով թէ յանկարծ սովորական երգերէն մէկը կը սկսի՝ արդէն փախեր էր : Ուրիշ անգամ մ'ալ Մաւրիտիոս որսէ որ դարձաւ , աղուոր փաստիան մը ընծայեց անոր , զոր ողջ խայլացուցեր էր իր շուներուն մէկուն բերնէն . — « Ի՞նչ , իմ վրաս ալ կը մտածեն եղեր երբեմն , ով ազգականս » , հարցուց օրիորդը սիրտն ելած : Հարցմունքը զսած Մաւրիտիոս արդէն հեռացեր էր հոնտեղէն . իր այս բռնած կերպը ոչ եթէ անկից առաջ կու գար՝ որ չէր ախորժէր որք աղջրկան իր հօրենական տունը բնակիլը : Ոչ երբէք . ինչպէս որ իր հասակին տարութիւնը կար վրան , ասանկ նոյն հասակին ամէն ազնուական և վեհանձն բծածին ըզգացումներն ալ ունէր : Ոչ երբէք կրնար իր մտքէն անցնիլ թէ հաւանական էր որ Մազգաղիճէ օր մը ասպետին կտակին մէջ մասն ունենար : Տեղն է հոս որ զուլցենք 'ի պարծանս երիտասարդութեան՝ թէ շատ քիչ կը գտնուի քսան տարուան

արտեր որ այսպիսի ամօթալի հաշիւներ ընեն : Մաւրիտիոս պատրաստ էր բաժանելու զամենայն ինչ իր մօրաբեռ թողանն հետ՝ իբրև թէ իր քոյրն ըլլար . և իբնոր վրայ շատ գուժ ու փոյթ չունենալուն պատճառը պարզ այն էր՝ որ Մագդալինէ տաանըհիւղ կամ քսան ամիս առաջ աշխարհ չէր եկած :

Մարգիղուհին և ասպեար մէկէն ՚ի սկզբան տեսան ու զգացին այն անակնկալ փոփոխութիւնն որ Մաւրիտիոսի սովորութեանցը վրայ եղաւ , իրենք որ ինչուան այն ատեն պարզասէր և ընդել բնաւորութեան տէր ճանչցած էին զինքը . այս բանիս վրայ երկուքն ալ կը վշտանային՝ առանց աղէկ մը ըմբռնելու իրին էութիւնը : Իրենց երիտասարդութիւնն այնպիսի ժամանակի մը մէջ հանդիպած էր՝ որ երիտասարդք յանխորհուրդս շնչին ու ընդունայն առերևոյթ իրաց և զբաղանայ ցնդելով , և ոչ իսկ կրնային մակաբերել այն գաղտնի անձկութիւնը և այն խորին ճանճրութիւնն որ ժամանակաւ ընդհանուր ազգին սերնդեան մը պատիժն ու չարչարանքը պիտի ըլլային : Մաւրիտիոս թէպէտ դաշտորէից խորը թաղուած միայնութեան մը մէջ մեծցեր էր , առանց իր գիտնալուն նոր գաղափարաց ազդեցութիւնն առեր էր իր վրան : Գաղափարները կենդանի զօրութիւններ են և մեր շնչած օդուն հետ խառնուած են . քամին

կը քայցընէ զանոնք և հորիզոնին ամէն
կէտերուն վրայ կը ցանէ . և ինչ ջանք ալ
որ ընէ մէկը այս անտեսանելի յորձանք-
ներէն խալըսելու համար , որչափ ալ հե-
ռու կենայ նէ , ճար չկայ , անոնք կը թա-
փանցեն իր մէջը և իրենցմով կը լեցընեն
զինքը . մարդ միշտ իր դարուն զաւակն է :
Ասպետին և մարգիզուհւոյն զարմանքը
այնչափ չէր շարժէր այն արտաքոյ կարգի
գործունէութիւնը , որ արեան տաքութե-
նէն և երիտապարգութեան թափէն առաջ
կու գար , որչափ այն խորին մազձոտու-
թիւնն որուն մէջ կ'իյնար երիտասարդը
անմիջապէս իր տաք և բորբոքեալ իզձե-
րէն ետքը : Իրաւցընէ , ինչպէ՞ս կրնային
ըմբռնել այնպիսի ժամանակի մը հիւան-
գութիւնը , յորում զուարթութիւնը քսան
տարեկան կուրծքերէն պստորուած էր , և
ճերմակ մազերով պսակուած գլուխներու
քով կը գտնուէր : Եւ սակայն մտքերնին
յոգնեցընելով այս նիւթիս վրայ և մէկ-
տեղ խորհելով , հասկըցան որ Մաւթի-
ախոսի ինչուան այն առեն անցուցած
կեանքը՝ միտկերպ կեանք մըն էր և առանց
զուարճութեան , և թէ թէպէտ փոպոփ
քանդակագործութիւնը շատ սիրելի զբաղ-
մունք մըն է , բայց պէտք չէր զարմա-
նալ որ երիտասարդ սիրտ մը չկրնար
ինքզինքը բոլորովին անոր առաջ : Այս էր
մարգիզուհւոյն կարծիքը . ասպետն ալ
վերջուպէս հաւանեցաւ ասոր : Բայց ինչ

ճար ընէին . սկզբան ըսին թէ կարգեն երիտասարդը . բայց աս դեղը չափազանց զօրաւոր սեպուեցաւ . թող որ մարգիզուհին աղէկ անդրադարձութիւն մը ըրաւ թէ ալ քսան տարուան կարգուելու սովորութեան ժամանակն անցած էր , և թէ ուրիշ ատենուան 'ի գործ դրուածին հակառակ' ամուսնութիւնն աւելի վախճան մը եղած էր քան թէ սկիզբն : Համառօտ ըսենք , յետ հասուն խորհրդածութեանց որոշուեցաւ որ երկու իրեք տարի մը աշխարհ պտըտելու խրկեն զՄաւրիտիոս , նախ 'ի Բարիզ , ետքը իրեն ընտրութեանը թողուլ Գերմանիա կամ Իտալիա երթալը , որպէս զի կատարելագործէ իր դաստիարակութիւնը մարդկանց և իրաց խորունկ ծանօթութիւն մը ստանալով . այսպիսի տարտամ խորհուրդ մը հաստատուեցաւ :

Քիչ մը ժամանակ անցնելէն վերջը , աշնան իրիկուն մը՝ ճիշդ տարի մը ետքը Մագդաղիմէի գալէն , ասպետը , իր որդին և մարգիզուհին վաղգրավէրի դղեկին մէջ միասեղ ժողվուեցան : Այն ձին որ պիտի տանէր զՄաւրիտիոս մերձաւոր քաղաքն ուսկից կ'անցնէր թղթատարի կառքը , ամենայն կերպով պատրաստ էր ուկը սպասէր գաւթին առջև : Վերջին բարև տալու ժամանակն եկեր էր . բաժանման վայրկեանը միշտ տխուր ու հանդիսական տեսարան մըն է , նոյն իսկ ցաւալի բաժանմունք ալ չըլլայ նէ : Ասպետը սաս-

տիկ զգածուած կ'երևար . մարգիզուհին
չէր կրնար ծածկել սրտին յոյզքը . նոյն
իսկ Մաւրիտիոսի ալ սիրտն ելած էր , և
երբոր իր ծեր հայրը թեւերը դէպ 'ի իրեն
տարածեց , արտասուօք լցեալ վազեց ին-
կաւ անոր գիրկը՝ իբրև թէ վերջին ան-
գամն էր որ կը գրկուէր հետը : Տը Ջրէզնը
տիկիենն ալ առատազեղ զգացմամբ սիւմեց
զինքն իր բազկաց մէջ : Հուսկ ուրեմն տան
հնագոյն ծառաներն որ իր ծնանիլը տե-
սած էին , իրենց որդւոյն սէս գրկեցին
զինքը :

Ճամանակը քիչ էր , անոր համար հարկ
եղաւ որ Մաւրիտիոս բաժնուի : Յետին
վայրկենին երբոր ուղբը ասպանդակին՝
վրայ պիտի դնէր՝ Մագգադինէն միտքն ե-
կաւ : Աչքովը փնտռեց զանիկայ . և զար-
մանալով որ չէր տեսնուէր՝ երբոր կ'ուզէր
կանչել տալ , ըսին իրեն թէ օրիորդը քա-
նի մը ժամէ 'ի վեր դղեկէն դուրս ելեր էր
և դեռ չէր դարձած : Ան ատեն քանի մը
սիրալիր խօսքեր ապրտայրեց որ ըսեն իր
կողմանէ մօրաքեռ թոռանը , և սկսաւ
կամաց կամաց քալցընել ձին , և ստէպ
ստէպ կը դառնար վերջին անգամ մ՝ ալ
բարեւելու սրտի թարգման ձեռով մը այն
ազնիւ անձինքներն որոնք աչուընին իր
վրայ սեւեռած էին : Երբոր վանգակապատ
դուռն հասաւ ու անկէց անցնելու վրայ
էր , տարակուսած կեցաւ մէյ մը , ինչպէս

1 Տ՝. Էօլեիկ :

արձուոյ ձադ մը իր բոցին եղերացը վուս
կը կենայ օգուն մէջ յարձակելէն առաջ :
Միտը եկան այն երջանիկ օրերն որ ան-
ցուցեր էր այս գեղեցիկ բնակարանին
մէջ, բնգ հովանեաւ խնամոց մարգիզու-
հւայն և իր հօրը գորովայից սիրոյն : Այս-
ծեց թէ կը տեսնայ շարժուն տերեւեղուն
մէջէն իր պատանեկութեան շնորհացի ու-
րուականը, որ ախրութեամբ կը նայէր ի-
րեն և կը ջանար հոն բռնելու գինը : Այս-
ծեց թէ կը լսէր ախորժական ձայներ որ
կ'ըսէին իրեն . Ապերախտ դու, ո՛ր կ'եր-
թաս : Միտը կտոր կտոր եզաւ և աչքերը
արտասուօք թրջեցան . բայց իր վիճակն
որոշուած էր : Նետուեցաւ անտառին
մէջ զոր պիտի անցնէր քաղաքն հասնելու
համար :

Քիչ մը ատեն վազընեւէն ետքը ձին,
տեսաւ Մադդազինէն նստած և մտածու-
թեանց մէջ թափառած նոյն տեղը՝ ուր ուր
հանդիպեր էր անոր տարի մը առաջ, նոյն
օրը, նոյն ժամուն : Ինչպէս որ անցեալ
տարին, այսպէս հիմա ալ չէր լսած որը
ազջիկը ձիուն մամուռին վրայ քալելուն
ձայնը . աչքերը վեր վերուց, տեսաւ որ
երիտասարդն իրեն կը նայէր : Նոյն ու-
րուագիծը և նոյն պատկերն էր . ամենևին
բան մը չէր փոխուած, միայն՝ այն օրիորդն
որ առջի տարին վտիտ, հիւանդոտ էր,
զուրկ ՚ի գեղեցկութենէ և գրեթէ նաև ՚ի
շնորհաց, հիմա ծաղկի կոկոնի մը կը նմա-

նէր , որ թէպէտ բոլորովին չէր բացուած , սակայն ճղքեր էր իր պատեանը : Մաւրիտիոս ձիէն վար իջաւ , փութաց գրկուեցաւ մօրաքեռ թոռանն հետ և հրաժարական ողջոյնը տուաւ անոր . յետոյ դարձեալ հեծաւ ձիուն վրայ և շարունակեց իր ճամբան , առանց գիտնալու դժբաղդաբար որ երջանկութիւնը ձգած անանկ կ'երթար :

Երբոր աներևութացաւ աչքէ ծառազարդ ճամբուն զարտուղելուն պէս , Մազգազինէ դէպ 'ի դղեակն սկսաւ դառնալ : Երբոր տուն մտաւ , առպետը իր անապատացեալ խոռցին մէկ անկիւնը նստեր էր . օրիորդը գնաց տրտմազին կրթընեցաւ թևովն այն թիկնաթոռին կռնակին վրայ , ուր բազմեր էր ծերունին վիբաւորեալ սրտիւ , և քանի մը վայրկեան լռութեամբ դիտեց զանիկայ : Յետոյ — « Հայր իմ , ըսաւ գեղին գլուխը դէպ 'ի անոր ծոեւով , հայր իմ , գեռ աղջիկ մը ունիս » : Ասպետը ժպտեցաւ և թեթև մը իր սրտին վրայ սխմեց գինքը :

Մարիտիոսի հեռանալէն վերջը, Մագդաղինէ Վարդրավէրի դղեկին ուրախութեան առիթ եղաւ . իր շնորհալից հենցազավարութեամբը կենդանութիւն տուաւ այն յարկին, ուսկից երիտասարդը գացեր էր : Դեռահասակ Անտիգոնեայ մը նման՝ եռանդեամբ ու մեծարանքով կը խնամէր իր ծերունի ազգականը . թէպէտ տխուր էր դեռ սիրտը և իր հասակէն վեր հակամէտ էր միտքը լուռ մտածութեան, սակայն զանիկայ ուրախացընելու համար՝ ինքն իր բնութենէն դուրս ելաւ, և իր սովորական ծանրութիւնը ծիծաղերես զըւարթութեան մը փոխեց : Երբոր զուարճութեան կ'ելլէր ասպետը՝ միշտ հեռան էր, երբոր գործանոցին մէջ կ'աշխատէր՝ քովը կանցընէր իր ժամանակը, լրագիրները բարձր ձայնով կը կարդար անոր, անդադար կրկնել կու տար անոր վտարանդութեան ժամանակի պատմութիւնները, և

մեծ ախորժով կը գովէր այն ամէն փայտաքանդակները՝ որոնցմով անխոնջ արուեստաւորը գոյեկին ամէն անկիւնները կը լեցընէր : Միանգամայն՝ սիրելի էր , և իրաւցընէ սիրելի , մարգիղուհւոյն՝ որ նրկարչութիւն կը սորվեցընէր իրեն , և իր Աստուծմէ ընդունած ամէն հաճոյական ձիրքերը կատարելագործել տալու կը ջանար : Ասանկով այս աղջիկը երկու ծերունեաց հետ կեանքն անցընելով , թէ իր մշտաւորական տաղանդն և թէ ցանկալի առաքինութիւններ անցան վրան : Մագդաղինէ՝ իր գալէն իրեք տարի վերջը , ընտիր ու գեղեցիկ արարած մը դարձեր էր : Տան խնամակալութեան հոգն իր վրան էր , և առանին բարեկարգութեան վրայ ինքը կը հսկէր , և իմաստութեամբ ու խոհեմութեամբ կը շարժէր այս գործոց մէջ . և վեհութիւն մը , բանաստեղծական շնորհք մը ու մտածութեան կերպ մը կը փայլէին իր վրայ , զորոնք ժառանգած էր մօրմէն , ՚ի Քերմանիոյ և յԱստուծոյ : Մէկ խօսքով երիտասարդութեան և առողջութեան դարնան մէջ էր իր հասակը , այն եղանակին մէջ որ անձայն իր շրջակայ արարածոց շարժումն , երջանկութիւն և կեանք կու տայ :

Դիւրաւ կրնայ մարդ մտածել թէ այսպիսի յատկութեամբ Մագդաղինէ ինչ յարգ ունէր մարգիղուհւոյն և ասպետին աչացն առջև : Իրենց ծերութեան զուար-

ձաթիւնն էր, և քաղցր նուազայք մը՝ որ
իրենց կենաց վերջին օրերը կը լուսաւո-
րէր: Այս երեք հոգիք տղայիսի մտերմու-
թեամբ մը յիրար խառնած՝ ծանր ու խա-
ղաղ ընթացքով մը կը սահեցընէին իրենց
ժամանակին ալիքները, և ամենէին չէր
կործուէր որ այն թափանցիկ ալեաց պայ-
ծառ յստակութիւնը պիտի ազդուորէր: Աս-
կայն եկաւ ժամանակ որ այս վճիտ ջրե-
բուն յատակն օգտաւ շերենալ:

Մաւրիտիոսի գրած առջի նամակները
զեղուն էին բանաստեղծութեամբ և ա-
խորժական վայելչութեամբ, և կը նմա-
նէին մարգագետնի մէջէն ժողովուած
թարժ ու անուշահոտ ծաղկանց փունջե-
րու: Աօանկ կը գրէ մարդ այդ հատակին,
որ խիստ շուտով կը փախչի: Այն գունաս-
ժամն հասած ատեննիդ՝ երբոր կենաց
սանդուխէն կը սկսիք վար իջնալ, գտնի
էք երբեմն արդեօք հին դարանի մը մէջէն
ձեր երիտասարդութեան ժամանակի գը-
րած նամակներէն մէկ քանին. չէք դար-
մացած զանոնք կարդալով, և արցունքներ
թափելով չէք նորոգած մտքերնուդ մէջ-
ձեր զեզեցիկ տարիներուն յիշատակը:
Եւ յետոյ ձեր սրտին ներկայ փրճակը ցա-
ւով մտածելով չէք հարցուցած դուք ձեզի
թէ արդեօք այդ աղբիւրէն, որ հիմա ցամ-
քելու մօտ է, քղխեր են ատենօք խանդի,
հաւատոց, շնորհաց և առաքինութեան,
սրտի անկեղծութեան և սիրոյ այսչափ

գանձերը : Ահաւասփկ այսպիսի նամակներ կը գրէր Մաւրիտիոս քսան տարուան :

Այս պատճառաւ սուրհանդակի օրերը հանգիստի օրեր էին Վաղարշապէրի դռնկին համար : Մագդաղինէ գեղին թղթաբերին հետո՞ւանց զալը տեսնելուն ոչէ՛ս՝ դիմացը կը վազէր , և նամակին առած ցատքը առնելով տուն կը գառնար : Սուրբագար ինքը կը հարդար բարձր ձայնիւ իր ազգականին թուղթերը . երբոր իր անունը յիշատակուած կը գտնար տնոնց մէջ , որ միշտ չէր հանդիպէր , թեթե կտրմիտութեամբ մը կը շատագու՞նէր իր աշապատգրեայ դէմքը . թէ որ յիշատակուած չըլլար , որ սակաւ կը հանգիպէր , ոչ կը զարմանար անոր վրայ , և ոչ ալ կը տխրէր . միտոյն թէ ինչուան իրիկունս սովորականէն աւելի ծանր և աւելի լուռ կը կենար : Այս նամակները մտիկ ընելու առեն՝ բարի ասպետին բողոք ջիգերը կը տնկուէին , և իր նուանդուն սիրոյն կրակովը բորբոքած՝ ազնուական ոգւոյ մը և վառ խեղքի մը զարգանալը կը դիտէր ՚ի նոսա : Ուրիշ կողմանէ ալ իր մէջ քանի Բարթոլոմէոսի մանկանց ձեր բարեկամները անգագար իրեն ուրախակցութիւններ կը գրէին որդւոյն համար , մեծամեծ գովեստներ խօսելով և հիանալի դիպուածներ պատմելով վրան : Մեծ էր սան խնտումը . և Մաւրիտիոսի դարձին անձկանօք կը սպասէին :

Բայց տարի մը անցաւ չանցաւ՝ մեր և .

րիտասարդը սկսաւ քիչ անգամ նամակ գրել, անոնք ալ համառօտ, և զուրկ ՚ի փափկութենէ և ՚ի սիրալիր բանից: Մտածութեան տարտամութիւն մը կը նշմարուէր անոնց մէջ, բացատրութեանց բռնազրօսութիւն մը, և յայտնի կ'իմացուէր որ զգայարանաց և հոգւոյ սաստիկ խռովութիւն մը պատեր է զՄաւրիտիոս: Գլեկին գաղթականները այս բանիս վրայ սկըսան վշտանալ ներքուստ: Ետքը այն ատիճանի աւելցաւ վիշտերնին, որ իրարու ալ կը հաղորդէին իրենց սրտին տաղնապը: Քաղցր յանդիմանութիւններ գրուեցան Մաւրիտիոսի. բայց անիկայ փախուստ կու տար անոնց պատասխանելու: Բարիզ կենալու սահմանուած միջոցը շատոնց ըմբոսներ էր. և սակայն Մաւրիտիոսի վրայ ամենևին կամք չէր երևար ճամբայ ելլալու դէպ'ի Գերմանիա կամ Իտալիա: Սապետը կը բռնադատէր զինքը որ որոշմանն հպատակի, իսկ անիկայ պատասխան չէր տար. բայց երբոր հայրը անդադար կը կրկնէր իրեն նոյն բանը, վերջապէս պատասխանեց յանգուզն խօսքերով նամակ մը գրելով, որուն մէջ կը հասկըցուէր որ հպատակութեան սանձերը խզել կ'ուզէր: Գեռ այն ատենն ալ ծեր բարեկամները կը գրէին նամակ Վալդրավէր ասպետին, բայց գանդատ ընելով որ Մաւրիտիոս առջինին պէս չէր: Հուսկ ուրեմն սկսան երբեմն երբեմն փոխանակա-

գիրներ գալ ասպետին վրայ, որ թնդա-
նօթի հարուածներու պէս կ'իջնային տնե-
ցոց սիրտը, և տխուր սարսափ մը առաւ-
գիրներ: Այս բաներս շաբթուան մը մէջ
չեղան, և ոչ խակ ամսուան մը մէջ. և սա-
կացն իրեք տարի չքած այս աստիճանին
հասաւ երիտասարդը:

Այսչափս ալ բաւական չէ. թէպէտ
Մաւրիտիոսի բերած սուտ պատճառանք-
ներն որով կ'ուզէր պարտըկել իր անկար-
գութիւնները՝ քիչ մը կը խաբէին վաղաքա-
վէր ատպետը, բայց չար մարդիկ, որ Գաղ-
ղիոյ գաւառաց մէջ այնչափ առատ են,
չէին դանդաղէր պղտորելու ձերունայն
միտքը: Որովհետեւ խիստ ազնիւ անձ մըն
էր տը վաղաքավէր, զեհանձն, ամենուն
հետ ընտանի, սիրելի և ազնուական սիրտ
ունէր, և արդար բնաւորութիւն, անոր
համար բնականապէս շատ թշնամի գունէր
այն կողմերը. իր գեղացիները զինքը կը
սիրէին, բայց մօտի քաղաքին մէջ խել
մը գինուորական մարդիկ և փաստաբանք,
որոնք գինետանց վարդն, ազատամտու-
թեան պարագլուխներն և ընկերութեան
որդն էին, զաստիկ զայրացած էին՝ աս-
պետին նորէն իր կալուածները դառնա-
լուն և հոն նորէն սիրելի եղած ըլլալուն
վրայ: Արդ այդ քաղաքին մէջ ամէնքը եր-
կաֆն ատենէ՛ ՚ի վեր գիտէին Մաւրիտիոսի
ինչ կեանք անցընելն՝ ՚ի Բարիզ. որովհե-
տեւ հայրենական գաւառ ըսածդ անանկ

ընտրութեամբ մայր մըն է : որ իր հետեւորներ
որդաց վրայ անհողութեամբ շաքարի բն
անոնց հենաց ընթացքը հետաքրքրելի : չմի
և հախանձու աչքով մը կը դիտէ սկզբնապէս
հանրապէս խօսելով, երբոր հուղեալ յաւ
տահանցընելու սարսափ ձգելու յենկարգ
կանց սիրտը, որ ճննդեանդ կտան հա
տակիր աճմանը տեսող եղած յեն : Եր
գար ճաճքով և անխառով յաճողութեան
պատուոյ կտակ հարստութեան համարն
մէջ առաջ դնա : Ընդ հակառակն թէ որ
կուղես պաղըշտրկցընել անոնց սիրտը,
ճամբադ խոտորէ, անանկ որ առաքինի
քաղաքակիցներդ կարենան կործանմանդ
վրայ լալ : Երբոր մեր քաղաքակիցները
կու լան վրանիս, ըսել է որ ծագը ընելու
աղէկ ատործ ունին :

Ասով է որ Մաւրիտիոս քիչ ատենուան
մէջ այս քաղաքին մէջ հասարակաց գայ
թակղութեան և ներքին գոհութեան մեծ
առիթ մը եղաւ : Խել մը սիրալիր ազգա
րարութեանց, և կեղծաւորական ցաւա
կցութեանց նախակներ գրուեցան ասպե
տին : Իսկ մտացած պաշտօնն ալ անանուն
թղթերը կատարեցին :

Մարդիզուհին արցունքները կը բռնէր,
իսկ ասպետը որ օրուան վրայ գգալի կը
տկարանար : Ամենայն երջանկութիւն ան
հետացեր էր երկայն ատենէ ի վեր այս ծե
րունի բարեկամներուն տուներէն : Մագ
դաղինէ մէջ մը մէկին՝ մէջ մը մէկալին

հերթեացի մեկիմարիչ, հրեշտակի մը, պէս .
կըզգայնապարնէր զՄալթոսիտու, և հիշուէր
Թէ՛ անորոպէս տղիքն, թիչ քտեծեն տղտի
գրեմեաթույ զապարտի ինքն ալ ըստմին շէր
հաւատարմի շատ անգամ, կ'առաջնանար
արքանն յիջրեհելու համար : Յայտնի տեւ
նուեցաւ յոր մարնիւ տապետը վերջին տա-
տիեանի յիջտացած էր, որովհետեւ սկսաւ
փայտի բանդակագործութեան քիչ ետեւէ
ըլլալ, և ետքը ինչուան բողորովին թո-
ղուց : Այնպէս վերջը ամենեին մէկ բա-
նէ մը համ շէր առնէր : Մաղդաղինէ միայն
կրնար թեթեւ զուարթութիւն մը տալ իր
ճակտին և շրթանցը վրայ տխրական ժպիտ
մը ծնանել տալ : Այլ աղբավէր կ'ըսէր եր-
բեմն անոր . « Պէտք է որ, խեղճ ազջիկս,
մեռնելէս առաջ քու բաղդդ ապահովցը-
նեմ . որովհետեւ Մալթոսիտոսի բանած
ճամբուն նայելով՝ ամենեին յոյս չկայ որ
իմ մահտընէս վերջը զքեզ հոգայ : —
Թող տուր, հայր իմ, կը պատասխանէր
Մաղդաղինէ, թող տուր, մի մտածեր ա-
սոր վրայ : Ես ուրիշ բան չեմ ուզեր՝ բայց
եթէ զքեզ սիրել, ես բանի մը կարօտ չեմ
ըլլար քու մահտընէդ վերջը : Փառք Աս-
տուծոյ՝ կտորըծութիւն և կամք ունիմ, և
ինչ որ դու և մարգիգուհին ըրիր 'ի Գեր-
մանիա, նոյնը ես 'ի Գաղղիա կ'ընեմ, սի-
րելի հայրս . կ'աշխատիմ, կ'աշխատիմ » :
Թերունին կը ժպտէր ու թեթեւ մը դուխը
կը շարժէր : Օր մը դեռահասակ օրիորդը

մտածեց ծածուկ նամակ մը գրեցու իր
ազգայնականին . ո՛հ , ինչպէ՛ս արտաքին գրա-
րուած նամակ էր . բայց Մարտիրոս չարտոն
տատխանեց : Իսկ տասնամեակ չկարգիցի
հազիւ թէ թող կաւ ասար իր վերջին տակը .
նակնեցին որ արդուն վրայ իր արժեքայինն
Սակայն տեսնալով որ օր քան օրեւոր ժողովու-
կիցնայ և վախճանն ալ կը մտածեայ , միտա-
քը գրաւ վերջին անգամ մ' ալ սիրոյ և
յուսահատութեան ուժ գին ձայն մը հանու-
ցընել այն թշուառ երիտասարդին ակազա-
ջին :

Պատասխանն ուշացաւ . իրեք ամիս
անցնելէն ետքը , վերջապէս եկաւ : Մաւ-
րիաիօս գրեթէ տարիէ մը ՚ի վեր Քարիզէ
հեռացած ըլլալով՝ ո՞ գիտէ գէպ ՚ի ուր և
որուն հետ , ՚ի դարձին կարդացեր էր իր
հօրը վերջին խրատները : Աստուածային
չնորհքով մը՝ երիտասարդին վրայ նորէն
լաւագոյն զգացմունքներ կու գային , ինչ-
պէս որ կը վկայէր իր նամակը . որուն մէջ
կերեար թէ ինչ կործանման վիճակի մէջ
էր հոգին , և միանգամայն իր բրած յետին
ջանքն որ նորէն ուղղուի : Իր ծերունի
հօրն ստքը կը պլլուէր , համբուրիւ և ար-
տասուօք կը թրջէր մարգիզուհւոյն ձեռքը .
իր յորդեռանդն զղման խօսքերուն մէջ
Մագդաղինէի անունն ալ կը խառնէր :
Կը խոստանար որ քանի մը շաբաթուան
մէջ ամէն շար կապանքներէ ինքզինքը լու-
ծած՝ համբայ կ'ելլար . մշտնջենաւոր հրա-

ժպրատչեմէ ողորն մը կու տար զինքը մտ-
 ւորցընալ աշխարհիս . կըսէր թէ ալէկոծու-
 թեան անորմարայլ քաշած ըլլալով, ալ կ'ու-
 զէր զբառնակարգիս մտնալ ու մէյ մ' ալ
 չեղաւ անկէ : Քերեմն նորէն պիտի տես-
 նանք զքեզ , փառեցընէր , սիլ յարկ հայ-
 ընեալովն . նորէն պիտի դառնամ 'ի քեզ ,
 սիլ մանկութեանս սիրելի բոյն : Ո՛վ պա-
 տանեցի թեանս տենչաղի ընկերները , ու-
 բեմն քիչ քանենք պիտի գրկուիմ ձեզի
 հետ : նոյնպէս քեզի հետ ալ , ո՛վ մօրա-
 քեռ թուս , որ ո՛ր գիտէ որչափ մեծցեր
 ու զեղեցիկացեր էս : Այսպիսի վառ-
 վառն գաղափարներով երեւեալայութիւնը
 բորբոքելով այդ վայրկեանին իր պատանե-
 կութեան շնորհալի ու առոյգ վիճակը դար-
 ձեր էր Մարտիրոս : Գծքազբաբար՝ երբ
 այդ ճամապը տկեանն հասաւ , քսակը զորս
 ճանկն քիչ քանակեալ փոխեր էր յաշիւար :
 Հէտիկանդիստակոյն է Մագդաղինի աշ-
 քին առջեւ , որոնք իր մէյմէկ ձեռքէն քրո-
 նակէր :

Յառաջիկա որոթեան սրը , երբոր հո-
 ղով տակ ծագկեցին այն սրածչելի անձին
 մարմնը : որ պատահմամբ ազնուական
 ծնակ էր , և որ աշխատութիւնն ու աղ-
 քածութիւնը մարդ ըրած էին , մարգիզու-
 հին առաւ հետը տարաւ զՄագդաղինէ , որ
 այս երկրորդ անգամ որբացեր էր :

— Ե Սիբիկս , ըսաւ իրեն , դեռ քու բ-
 նեղից չըննցաւ : դեռ պիտի օգնես ինձի

մահուանս ժամանակն ու աշուրներս գոցես » :

Իրարու գիրկը պլլուեցան , և այնպէս երկար ժամանակ գիրկընդխառն հեցան :

— « Ա՛հ , աղաղակեց մարգիզուհին , որովհետեւ դու իմ աղջրկանս յարութիւն առնել տուիր , ինձի ալ կ'իյնայ որ քեզի մայրութիւն ընեմ » :

Այն օրուրնէ սկսեալ՝ Մագդաղինէ Տրէզնը դղեակը բնակեցաւ : Ասպետը մահուրնէն շաբաթ մը առաջ ինքնագիր առանձին կտակ մը յանձներ էր մարգիզուհւոյն ձեռքը , որով իր քենւոյն թոռանը կը թողուր իր Գուտրէի ագարակը , որ 80-100 հազար Փրանգի չափ կ'աժէր : Այս համառօտ կտակը սիրալիր ու սրտաշարժ խօսքերով գրուած էր , և կտակագրին փափուկ սրտին դերագանց լաւութիւնը կը յայտնէր : Տը Տրէզնը տիկինը՝ անշուշտ Մագդաղինէն ապահովցընելու դիտմամբ իր ապագայ վիճակին վրայ , ձեռքը տուաւ ասպետին սիրոյն այս անջնջելի գրաւականը : Օրիորդը նախ երախտագիտութեամբ ու պատկառանօք համբուրեց զայն և սրտին վրայ դրաւ . յետոյ պատուեց , և կտորները խնամով ծոցը դրաւ :

— « Ա՛հ , ի՞նչ ըրիր , աղջիկս , աղաղակեց մարգիզուհին՝ արտաքուստ խռովեալ ձեացընելով ինքզինքը , բայց ներքուստ հիանալով :

— Գո՛ւ ինձի կը հարցընես զայդ , ո՛ր աղ-

նույնպէս խաթուն, պատասխանեց Մագ-
դաղինէ ժպտելով: Ես Մաւրիտիոսի ան-
ցուցած կենաց վրայ ստոյգ տեղեկութիւն
մը չունիմ. սպասած միայն գիտեմ որ հար-
կա՞ իր քայքայ օրենական ընչիցը կը կարօ-
տի՞ր և չե՞մ կրնար ընդունիլ այնպիսի բա-
րեկարգութիւն մը, որ իր ստացուածոց մէկ
մասէն կը զրկէ զինքը: Ապահով եղիր,
տեղեկեալ գրկին, որ ըրածս աղէկ գործք
է. և թէ որ գուռ իմ տեղս ըլլայիր, նոյն
բանը կ'ընէիր:

— Բայց, խեղճ աղջիկս, դու բան մը
չունիս. և աս ալ կ'ըսեմ քեզի՝ որ յոյսդ
Մաւրիտիոսի գթալուն վրայ չդնես: Երբ
որ ես ալ երթամ, և գիտես որ ալ երկայն
ժամանակ չեմ կրնար կենալ երկրիս վրայ,
սիրելի աղջիկս, ինչ պիտոր ընես դուն:

— Ինչ որ կ'ընէ մէկն որ արիասիրտ է
և կամքով գինեալ: Քեզմէ առած դասե-
րովս այնչափ հարուստ չեմ որչափ որ
էիր դու Նիւրեմպերկ հասած ժամանակդ:
Կը յուսամ թէ Աստուած, որ ան ատեն քե-
զի օգնութեան հասաւ, զիս երեսէ չձգեր,
և ես ալ բոյն մը կը գտնամ ինչպէս որ
դու գտար:

— Ո՛վ ազնիւ օրիորդ, քսաւ մարգի-
ղուհին իր սալիտակ ու վտիտ ձեռքերուն
մեջ պանելով Մագդաղինէի գլուխը և ճա-
կատն ու մազերը համբուրելով:

Օր օրուան վրայ կը սպասէին Մաւրի-
տիոսի, որուն սրտին վրայ կայծակի պէս

Ի՞նչ էր հօրը մահուան քայժը : Զարակեցաւ
ամիսներ անցան, Մաւրիտիոս չեղացաւ :
Քիչ առնէն լսեցին որ գործակալութեան
Թուրք խորհրդ էր մէկու մը, որ տակէն էր
կարգի գնելու գուրա ելած խաղաղական
Թիւնները : Մաւրիտիոս մեկէն հօրը սուս
հաւրէն բիշ ետքը, պաղ բայց քաջաբան
վարական նամակ մը գրեց էր իր մօրաքրոս
Թոռանը, որուն մէջ իր հօրը գաղտնի
գութենէն մեծ մաս մը կը հանէր իրեն,
այն Գուտրէի ազարակը, ուսկից քրոս ազ
ջիկը վեհանձնութեամբ հրատարակէր, ա
նանկ որ Մաւրիտիոս առանց դիտարկու
այն բանը կ'ընծայէր Մաքքադիէի, զարն
որ տեղիայ իրեն կու տար : Սրիտրզը պա
տասխանեց որ առ Ծրէզը տիկնոջ քով կը
բնակէր և ամենևին բանի մը կարօտ չէր, ե
րիտաւարողը վրայ չառաւ : Բայց ո՞ր գրեց
էր արդեօք իր բարի առաջադրութիւնն
ընթացքը : Թերևս արտին վշտէն ու պատկառան
քէն գնա չէր համարձակէր տեղնալու այն
գերեզմանը, զորն որ կրնար իրաւամբ իր
յանցանացը պտուղը սեպել :
Նրբ Ծրէզը գղեկին մէջ այս վերջին
յուսով կը մխիթարուէին մարդիկու հին և
օրիորդը և կը գովէին զինքը այս ամօրոյ
զգացմանն համար, անկէց քանի մը քաջ
հետու Մաւրիտիոսի ստացուածները ե
տեէ ետև անչարժ գրուի կը գրուէին :
Հագիւ տարի մը անցաւ ասպետին մա
հուան վրայ, ձայն մը տարածուեցաւ այն

կազմակերպելու որ վաղորդակերի կազմուածն ու
 գործակերպութեան պիտի հանուէին : Մար-
 տիրոսն է Մարգարինէ շատաւորին աւ-
 բանիս և նորայարտութիւն սեպեցին , ինչ-
 պիտի որ ինչուան այն ատեն սեպեր էին
 Մուրթիոտի շրայաք շրջակայից մէջ ձայն-
 ձրնորսի վտարերք : Սակայն օր մը որ ան-
 առաջին մէջ մէկտեղ կը պարտէին Մարի-
 աթաթի վրայ խօսելով , զօր պախտրակե-
 լով աջ կանդերձ կը սիրէին , պարտիզին
 վանդակաւորստ դրան ծակերէն անսան որ
 խել մը ծնուածներ ու գեղապիներ գաւթին
 աստիճաններուն վրայ աստիւ անդին ժող-
 վուած՝ ասք ասք կը խօսէին իրացոս հետ
 և ստորախով պաշարուած կ'երեւային :
 Ահա մը ներքին ազգմամբ , կէս մ' ալ հե-
 տաբերութեամբ՝ առաջ գացին ներս մը
 առան , ինչպէս ուրիշ անգամներ ալ ստէպ
 կ'երթային :

— Եւ , խափուն , սիւ , ազնիւ օրիորդ ,
 ազազակեցին ամէնքը միացերան՝ երբոք
 անոնք մօտենալը անսան , սիւ , այս ինչ
 մեծ թշուառութիւն է օր ամենաւս գլուխն
 եկիք : Ապա մակ մը իջաւ վրանիս , ու զմեզ
 մտիտի վրայ պիտի նստեցընէ :

— Ինչ կայ , զաւակներս , ինչ եղաւ ,
 ինչ ունիք , հարցուց տը Զրէզնը տիկինը :

— Տես տես , մարդիկուհի . ո՛հ , ինչ
 կ'ըսէ արեւոք երկնքէն մեր ազնիւ տէրն
 ապեւտը :

Աս ըսելով կը ցուցընէին մատով դղե-

կին դրան և ճակտին վրայ կպուցած վաճառման ծանուցումները աէքուսիաներէն թով :

Մազդազինէ գլուխը ծռեց, և աստանց հեծեծածաց երկու արցունք երէկաներէն ի վար վազեցին . ինչուան այն ատեն թողորովին չէր ըմբռնած Մաւրիտիոսի միայն պատմուած անկարգութեանց ինչ լուրը , անոր համար ալ միշտ ՚ի ներքոնստ՝ ան պարտ սեպած էր զանիկաց . բայց այս անգամուն իր ազնուական բնածին զգացումը վերջին աստիճանի զգուելով իմացաւ որ երիտասարդն ՚ի կորուստ հասեր էր : Իսկ մարդիգուհւոյն գալով , զայրացած սրտին արիւնը բոլոր գլուխը զարկաւ , այն սրտին՝ զոր հասակը չէր ստեղծուցած , և միշտ երիտասարդ էր և ետանդուն :

— « Ձէ , զաւակներս , չէ՛ , ազազակեց հաստատութեամբ , քանի որ ես կ'ապրիմ այս կ'աշխատան և այս գիշերը չար մարդկանց ընկերութեանն աւար պիտի չըլլան . թող պիտի չաամ որ անմիտ և անզգամ մարդիկ այս մեծ ուրախութիւնն ունենան : Բառի ապահով եղէք . գուր՝ վարձակալքդ՝ ինչպէս որ մինչև հիմա , այսպէս տակէ ետքն ալ ձեր տնակներուն մէջ կը մնաք՝ որոնց մէջ ծնած էք , գուր՝ ծառայքդ ալ աս տանս մէջ , ուր մեծցած էք : Ձեր կեանքը ամենեին պիտի չիոխուի . ձեզի երաշխաւոր ըլլայ խոստմունքս , և գացէք շուտով մխիթարեցէք ձեր կանայքն ու որդիքը » :

Յեռայ առանց ժամանակ անցնելու
կանխել մտաւ իր նօտօրն ; և անոր ձեռ-
քովը դնել տուաւ Վալդրավէրի կալուա-
ծիւնսահայն անկէ ետքն ալ շարունակեց
Մազդաղիէի հետ Յրէզնը գղեկին մէջ
ապրիլ յոր մեռած էր իր աղջիկը , և ուր
կնքն ալ գնացէր մեռնիլ :

Մէլ ալ ասիկայ պատուական մարդի-
զուհայն վերջին գործողութիւնն եղաւ . ո-
րովհետեւ զգալի կը տեսնուէր որ իր հին
բարեկամը անդիլի աշխարհ կը հրաւիրէր
գինքր :

— « Եստ ապտակցուցի խեղճը , կըսէր
Մազդաղիէի . պէտք է որ երթամ դրս-
նամ գինքր . բայց բանը ան է որ քնչ պա-
տասխան տամ իրեն՝ երբոր որդւոյն վը-
րայօք հարցընելու ըլլայ ինծի » :

Մահուան նախընթաց օրը՝ երկայն ա-
տեն թմրութիւն մը եկաւ վրան . երբոր
արթնցաւ , դարձաւ Մազդաղիէի , որ
քովը նստած էր , և ըսաւ : « Արտաքոյ
կարգի երազ մը տեսայ հիմա , պատմեմ
քեզի որ զարմանաս : Կը տեսնայի զՄա-
րիտիոս խոր անդունդի մը մէջ . գարշելի
վեռուններ քովը կը սողային ու կը շէկին ,
և ողորմելին յուսահատաբար կը յոգնէր
կը ջանար վեր ելլալու որ լոյս տեսնայ :
Կ'ուզէի ես օգնութեան հասնիլ , բայց ոտ-
քերս գետնին վրայ անշարժ կեցեր էին ,
և ձեռքերս որ դէպ 'ի իրեն երկնցուցի՝ ան-
կարող էին . մէյ մ' ալ յանկարծակի ըզ-

քեզ տեսայ՝ որ հեռուէն կու գայիր Հին-
դարաւ և զուարթ կերպարունքով : Ան
դունդին քովն որ հասար , քակեցիր վզեք
այն ճերմակ կտաւն որ կանչէիք . վրայ
կը ծածանէր , ծիծաղելով նեաեցիր Մաւ-
րիտիոսի , որ բռնեց զայն , և առանց
նեղութեան վեր առիր զինքը . Մաւրի-
տիոս լուսաւոր էր և բոլորովին փո-
խուած : Ահա այս է երազս . ինչ կ'ըսես ,
աղջիկս » :

Տխուր ժպիտ մը ծնաւ Մագգաղինէի
չրթանցը վրայ . սկսաւ ինքիրեն մտածել ,
և պատասխան չտուաւ : Մարգիզուհին
երկրորդ օրը մեռաւ , կամ լաւ ևս ասել
ճրագի մը պէս մարեցաւ գերմանացի օ-
րիորդին աչացն առջև :

— « Պզտի աղջիկս , ըսեր էր Մագ-
գաղինէի մեռնելէն քանի մը ժամ ա-
ռաջ , կտակիս մէջ չեմ մոռցած զքեզ :
Որովհետեւ կիտուածանկարը կ'ախորժիս ,
ունեցած գոյներս և վրձիններս քեզի
թողուցի . նայէ որ անոնցմով էրիկ մը
գտնաս » :

Իրաւցընէ՛ կտակն որ բացուեցաւ ,
Մագգաղինէ տեսաւ որ մարգիզուհին ճշ-
մարիտ ըսեր էր . միայն թէ՛ այս պզտիկ
ժառանգութեան վրայ վալցրավէրի կա-
լուածն ու դղեակն ալ աւելցուցեր էր , ա-
ռանց ամենեւին զրկելու ուրիշ աղուոր մա-
սերէ իր բուն ժառանգները , որ արդէն
կարօտ չէին :

Աստուծոյ այս գեռահասակ զրիորդը
իրիւնքէն մտաւ այն տունը, ուր հինգ
սուրբ տղանք աշնանային իրիկուն մը պզտի
ժամը մը կ'ընէին տակն առած մտեր էր:

Եւ յիշեալ զայն
քանտաւ մ
Եւ յիշեալ զայն
ժամը մը կ'ընէին
տակն առած մտեր էր:



Եւ յիշեալ զայն
քանտաւ մ
Եւ յիշեալ զայն
ժամը մը կ'ընէին
տակն առած մտեր էր:

Եւ յիշեալ զայն
քանտաւ մ
Եւ յիշեալ զայն
ժամը մը կ'ընէին
տակն առած մտեր էր:

Ե

Մագդաղինէի նոր վիճակը չհագարտա
 ցուց զինքը, թէպէտ դղեկին ծառաները,
 որոնք իր պատանեկութեանը տեսող ե-
 դած էին և կը սիրէին զինքը, իբրև իրենց
 տէրն ընդունեցան և պատուեցին զինքը :
 Առջինին պէտ չափաւորութեամբ և արանց
 սնտոպարժութեան Կ'անցընէր հոն իր կեան-
 քը, և իր միակ գրադանքն՝ այն էր՝ որ իր
 խնամոցը յանձնուած անձանց երջանկու-
 թիւնը հոգայ : իր իշխանութիւնն՝ բոլոր
 անթիւ բարեբարութիւններովը միայն Կ'ի-
 մացուէր . անպա թէ ոչ կարեղի շէր գործա-
 կել իր հարստութիւնը, և կրնար դիտայն
 դեռահասակ որբ օրիորդը սեպուիլ, զոր
 գթած Ալադրաովէր ասպետն հիւրընկա-
 լեց : Իմացուց իր մարդիկներուն թէ կ'ու-
 զէր որ տունն իր առջի ընթացքովը երթայ
 և թէ ազնիւ ասպետին սովորութիւնները
 շարունակուին պահուելու, իբրև թէ մե-
 ոած չըլլար անիկայ և քիչ ատենէն առ ն

պիտի գար : Իր բնակութիւնն ալ այն փոքրիկ սենեկին մէջ հաստատեց , ուր առաջ նստեր էր : Երբոր կու գային մեծ բանի մը համար հրաման առնելու իրմէ , միշտ կը հարցընէր կ'իմանար իր մարդիկներէն թէ արդեօք այսպիսի դիպուածի մը մէջ ինչպէս կը շարժէր ասպետը : Թէ որ առիթ մը ունենար խրատ տալու , կամ յանդիմանելու (որ խիստ քիչ կը հանգիպէր) , միշտ իր խօսակցութիւնը այսպիսի ոճով մը կը բանար . — Կարծեմ , սիրելիքս , որ ձեր պատուական տէրն ասպետը այս հանգամանաց մէջ անանկ կը խօսէր կամ կը գործէր , ինչպէս որ հիմա ես պիտի ընեմ : Ստէպ կը կրկնէր ըսելու թէ մեր սիրած անձանց յիշատակը լաւագոյն կերպով պատուելու համար՝ զգուշանալու է այն ամէն բաներէ որ կրնար իրենց տըհաճեցի ըլլալ , և թէ որ անոնք ողջ եղած ըլլային՝ գործելէն առաջ անոնց կարծիքը հարցընելու էր : Վերջապէս , Մարիտիսի վրայ միշտ մեծարանօք կը խօսէր , իբրև թէ անիկայ մատաղ հասակի թագաւոր մը ըլլար և ինքը անոր տղայութեանը միջոց թագաւորութիւնը կառավարէր :

Իր բարեբաստութեան ձայնը այն կողմերը տարածուելով , խել մը՝ անձինք ամուսնաբանուողեցին իրեն հետ . բայց Մագդաղինէ՛ ամենուն ալ ժխտողական պատանխան տուաւ : Եոյն՝ պատասխանը տուած էր միշտ երբոր ատենօք ասպետը

կամ մարդիգուհին երբեմն երբեմն կը յորս
դորէին զինքը կարգուելու : Կրօնական
միտքը դրած էր որ չկարգուի : Մտազոյն
զինէ շարունակեց իր առաքնման ժամանակ
կեանքը , իր պզտիկ տէրութիւնն ստանալով ,
բարեգործութիւն ընելով և իր արտօմ
արուեստներուն պարապելով : Մտազոյն
գրատան մէջէն քանթ մը հին ընտիր գրք
քեր առաւ կարգաց , որ իր խելքին հար
կաւոր եղած զարգացումը տալին : Բանալը
մէկ տարուան էր , և իր դուարթ ծանրա
բարոյ բնութեամբը և հանդարտ դիմաց
գեղեցիութեամբը՝ ճոխ էր թէ վայելչու
թեամբ և իմացականութեամբ , և թէ ու
ղիղ գատմամբ ու բանաստեղծութեամբ ,
նման ծաղկանց որ երկրին հիւթը իրենց
ցօղունին արմատներէն կը քաշեն կը ծը
ծեն , մի և նոյն ժամանակին որ իրենց ա
նուշահոտ բաժակը կը խմէ երկնից ցօղը :
Միանգամայն աստուածապաշտ ալ էր , և
ոչ երբէք զանց կ'առնէր կիրակի օրերը :
Նէօվի-լէ-Պուա երթալու պատարագ տես
նելու համար : Սիրով կ'երթար այն խեղճ
գեղն՝ ուր ատենօք անօգնական վիճակի
մէջ հասեր էր , և ուր հիմա աղքատներ
և որբեր կ'օրհնէին զինքը : Եկեղեցիէն որ
կ'ելէր , քիչ անգամ կ'ըլլար որ այն աղ
նիւ կնոջ տնակը չմտնար , որն սր ուզեր
էր իր կովերուն կաթին համն առնել տալ
Մագդաղինէի : Բայց ինչ որ ալ ըլլաւ ,
չկրցաւ Բիէռոն տեսնալ . անզգամը երբոր

հեռուէն Մագդաղինէի դալը կը տեսներ ,
չորս ստորով կը փախչէր , ո՞ գիտէ խղճմը
տանըը գարնելէն արդեօք բրածին վրայ ,
չէ նէ վախնալէն որ չըլլայ թէ Մագդաղի-
նէ տուած արծաթէ գրամը ետ ուզէ :

Երբոր մահուան յիշատակները ցրուե-
ցան Մագդաղինէի մտքէն , և ժամանա-
կաւ քաղցրացան իր սրտին մեռեալ սիրե-
լեաց անուները , կրնար այս օրիորդը եր-
ջանիկ սեպուիլ , թէ որ միտքը անդադար
գրաւեալ չըլլար մտածութեամբ մը , որ կը
դառնացընէր իր երջանկութիւնը : Ի՞նչ
կ'ընէ Մաւրիտիոս , ի՞նչ ճամբայ կը բռնէ .
այս էր իր մտածութիւնը : Մաւրիտիոս՝
հօրը մեռնելէն վերջը կենդանութեան ու-
րիչ նշան մը չէր տուած , բայց եթէ իր ան-
կարգութիւններովն որ օր օրուան վրայ
կ'աւելնային : Մագդաղինէ Վալդրամիւրի
կալուածը ժառանգելէն առաջ՝ այնպիսի
սրտի փափկութեամբ մը , զոր ազնուա-
կան սրտերը դիւրաւ կ'ըմբռնեն , նամակ
մը գրեր էր Մաւրիտիոսի՝ ինքզինքը ար-
դարացընելու համար այս ժառանգու-
թեան նկատմամբ : Այս նամակին , զոր
անշուշտ հիացմամբ կարդացած պիտի ըլ-
լայ Մաւրիտիոս՝ թէ որ առաքինութեան
զգացմունքը բոլորովին մեռած չէր նէ
սրտին մէջ , պատասխան չէր տրուած :
Հանդերձ այսու ամենայնիւ , յետ որոյ
որ Մագդաղինէ այսչափ պատճառ ունէր
մերժելու զանիկայ իր սրտէն , յետ որոյ

որ Մաւրիտիոս այնչափ բան ըրեր էր իրեն
և յետ որոյ որ այնչափ կը խառտէր, անոր
վրայ, Մազդազինէ չէր մտնար քեզ զա-
նիկայ և իր սիրտը կը տաղնապէս, անոր
ոգորմելի փնտրելն վրայ: Աստուած, որ
կը տեսնայ աղամանդին, ձեռնարկն, հա-
ղուն մէջ և մարդդտին ծնանդն ըզկտա-
նութ անդունդին մէջ: Աստուած միայն
կրնայ գիտցած ըլլալ օրիորդին սրտին
յուզմունքը: Մազդազինէ երկար ժամա-
նակ Մաւրիտիոսի վրայ լուծած չափէ
դուրս անկարգութիւններուն չէր հաւտա-
ցած: երկար ժամանակ պաշտպաներ էր
զանիկայ ամենուն խօսքին դէմ, ինչուան
նաև անոր ներողամտ հօրն և ազնիւ մար-
դիզուհւոյն ալ դէմ: Վերջապէս՝ կրքոր
ասպետին կենաց կարծրնալը և հօրենա-
կան կալուածին հրապարակաւ ամուրդի
հանուելը տեսնալէն ետքը՝ հարկաւորուեր
էր ճամարութիւնը ճանչնալու, նորէն
Մաւրիտիոս կենդանի էր իր մտաց մէջ:
Մանաւանդ որ բնակած դղեկին մէջ ամէն
կողմ անոր հետքերը կը տեսնար, սեղա-
նատան փայտաբանդակները բոլոր Մա-
ւրիտիոս շինած էր, անոր բնակած սենեակ-
ներուն մէջ ամենեւին փոփոխութիւն մը
եղած չէր, և Մազդազինէ շատ անգամ
անոնց մէջ տխրութեան ժամեր կ'անցը-
նէր: Գղեկին գաւթէն որ կ'անցնէր, որ-
սի շուները կը վազէին ձեռքերը կը լքէին.
Վիեն գետին ափանց վրայ որ ժուռ կու

գար , ցանկերուն վրայէն կը տեսնար Մաւրիտիոսի հեծած ձիերը , որոնք պարարտ մարգագետնոց մէջ կ'արծէին : Քայց այսչափս բաւական չէ . դղեկին մէջ ազնիւ ու լաւաբարոյ աղջիկ մը կար , որ հոն տեղ ծնած էր՝ գրեթէ մէկտեղ Մաւրիտիոսի հետ , և ինչուան այս ատենս ոչ երբէք հեռացեր էր տունէն : Ասպետն՝ որ գութ ունէր վրան , անոր դաստիարակութիւնը հոգաց , բայց անանկ բարձր աստիճանի էր անոր տրուած կրթութիւնը , որ բարեբաղդաբար աղջիկը քիչ օգտուեցաւ անկէ , և անանկ մնաց՝ ինչպէս որ բնութիւնն ըստեղծեր էր զինքը , այսինքն գործունեայ , աշխոյժ , համարձակ , միանգամայն մաքուր , շնորհալից և առողջութեամբ կայտառ : Պակտութիւն մը ունէր նէ՛ միայն այս էր որ ուրախութեան ատեն երբեմն շատ ազազակ կը հանէր : Մաւրիտիոսի հետ մէկտեղ մեծցած ըլլալով , եղբայրական գութ ունէր վրան . անոր համար Մաւրիտիոսի ամէն ըրածները աղէկի կը մեկնէր , և իր անմեղութեամբը կը զարմանար թէ ինչպէս ուրիշները կը զարմանան անոնց վրայ : Հաւասար սիրով կը սիրէր նաև զՄագդաղինէ . երբոր առջի անգամն որ լսեր էր թէ գերմանացի որբ գեռահասակ օրիորդ մը , Մաւրիտիոսի մօրաքեռ թոռը , եկեր էր դղեակը , վաղելով գացեր գրկուեր էր հեաը , և արցունքներովը թրջեր էր զանիկայ : Զուարճալին

ան ատեն էր՝ երբ որ ծառայք վատ կայարայ
ծին մարդիկները ասար դիմաց գիւնին, եւ
րիւսասարգ ասպետին բռնած, զիչ ընկողն
քին վրայ խօսիլ. այնպէս կը տուցին զոր տի
կայճակի պէս ազարակներ. կիջեցան էր, աւ
նոնց երեւներուն : և անտանկ մտնոր կր
ձեռքը, որ ամէնքն ալ կը գլուխընկին
այս վտանգին մէջ իյնարու : Մարդակից
չատ կ'ախարժէր Արտուայի հետ խօսակցիլ .
այս էր ազըրկան անունը : Օր չէր անցնէր
որ զանիկայ կանչել չտար : պատու հանին
մէջ նստած՝ ձեռքերնին հար, կը սկսէին
խօսիլ և միշտ խօսակցութեան ծայրը Մաւ
րիա ի սի վրայ կը գտունար : Արտուա ձրի
տասարդին կենաց առաջին տարիները կը
ստարագրէր. բայց խօսքը համայ կանաց
անգրգռի կերպով ներկային վրայ կաւարար .
Արտուա կը պաշտպանէր զան : և կը մնար
գարեւնար որ քիչ ատենէն արիւթ վար
նայ գայ : խօսք Մարդակից գլուխընկ
չարժէր : Արտուայի մտապէս այն էր՝ որ
Գուարէի ազարակը չէր ծախսուած : որտե
րսել էր թէ Մարիա ի տա հրահանգի վեր
ջին ուղղոյնը չէր տուած այն կողմերուն :

Այս վերջին յոյան ալ անհետացաւ .
քիչ ատենէն լսեցին որ այն ազարակը
ծախսելու հանուեր էր. և ինչպէս աստ
բարար թշուառութիւնը թշուառութեանց
եակէն կը քալեն, նոյն օրը անհարձի
դիպուած մը հանդիպեցաւ, որ մեր շա
կաւաթիւ գողթականները իտակեց տ

սարսափեցուց : Օրէնագէտ մը եկաւ իմացուց Մագդաղինէի թէ Տրէզնը տիկնոջ եղբորորդին , որ շատ տարիներէ 'ի վեր մեռած կը կարծուէր , ելեր եկեր էր իր հայրենիքը , և իր հօրաքեռ կտակին վրայ դատաստան բանալ կ'ուզէր , որով այս օրէն 'ի վեր թշնամութիւնները պիտի սկըսէին իրարու մէջ :

Քիչ մը ժամանակ անցնելէն վերջը , Մագդաղինէ իրիկուն մը պարտիզին ծառադարձ ճամբաներուն մէջ մինակուկ կը ստըտէր . ծանր էին իր քայլերը , իսկ ինքը տխուր ու մտածութեանց մէջ ընկղմած : Թէպէտ անկարելի էր գուշակել թէ այս դատաստանին ծայրը ուր պիտի երթար , թէպէտ չէր ախորժէր ինքը այս տեսակ գործոց պատճառած հողերն ու նեղութիւնները , սակայն իր ստացուածոցը վրայ չէր իր մտմտութիւնը ու այլայլութիւնը : Սկզբան մտածեր էր որ շիտակ դղեակը ձգէ երթայ . բայց վերջը իր բարերարաց յիշատակն անմուսաց պահելու և իրենց կամքը կատարած ըլլալու դիտմամբ՝ յանձն առաւ իր իրաւունքը պաշտպանելու : Այս պէս իր պարտքն 'ի գործ դնելէն ետքը՝ փոյթը չէր ինչ որ ալ ըլլար նէ . թող որ կը մտածէր թէ ինչ բանի կու գար իրեն այս տունը՝ երբոր ալ Մաւրիտիոս ամենեւին հոն գալու միտք չունէր , որովհետեւ միշտ իր ազգականին ստացուածքը կը սեպէր Մագդաղինէ այս կալուածը . գրեթէ իրեք

տարիի չափ իր կենաց յոյսն և իր հոգեւոյն
 ուրախութիւնն այն եղամ էր թէ քրտեհ
 պիտի դայ, որ անսասի արգիւն իր ձեռքով
 հարեմական կարուածը նորէն ապիպիւ՝ ատ
 անկէ յա՛ն ընտարսաս . . .

Իսկ Մարտիրոս այս վայրկեկիս ինչ
 կ'ընէր : Մագազինէ ծառագարդ նստեալ
 մը ծայրը՝ յանկարծակի իր դիմացը տեսաւ
 զանիկայ : Երազ չէր, ստապիս : Մաքրի
 տիոս էր . բայց անանկ աճ գոյն առ արեւնկ
 փոխուած, որ կարծեա թէ իր տարուակունն
 էր : Աւազ իրաւցընէ Մարտիրոսը չէր
 հարգու անոր օւրուստիտնը : Մագազինէ
 շփոթած՝ մեղմեցաւ իրեն խանդաղատաւ
 նայողութեալ . բայց անոր պաղտա տխուր
 տրտած վերայր տեսնալով . կտ քաշուե
 ցաւ : Մարտիրոս ըսաւ թէ իրիկունը քիչ
 մը ցրտեկե է) և կ'ուզեմ գրեանկն երթալ .
 'կործանե դէպ' ի տունը : Մարտիրոսի
 քարտաւորը համարձակ էր . և ասանց այն
 լացումնան գտե թին աստիճաններէն վեր
 եղաւ : Բայց երբոր խուցմի մտան և Մագ
 դազինէ իրեն ըսաւ՝ թէ « Ահա հարգաւ հա
 մեռաւ » , ձեկուրները գողացին, և ան ձե
 ուորմներովն երեսը գոցեց : Փեռայ երբոր
 Որսողան տեսաւ, « Հո՞ն ևս ուրեմն աղար
 դաղակեց . և քանի մը սովորապառն քարաւ
 քավարութեան խօսքեր բսեղնե կարգ իր
 մօրաբեռ թողանք, սրտակեց թէ վիտրը
 դրած ըլլալով երկայն ու մշտնջենուար
 նամբորդութիւն մը սկսեղու քիչ ասաննէն,

ուզեցր շրջեալին անգամ մ' ալ իր հօրը
տուներ յնկնալ և հրաժեշտի բարեւը տալ
կրօտենալք արածներուն : Ժամ մը վերջը
իր խոնարհ քաշուեցաւ , որովհետեւ արիւրոք
բռնադատեց զինքը որ իրենց քով կենայ :

Տագաւթի վերջուտը երիտասարդ , ով թը-
շտեմա երիտասարդ , աղաղակեց հեծե-
ծանօք Մազդազինէ աղբիւրի պէս ար-
ցունք թափելով :

Իսկ Արսոյա քար կտրեր էր :

Մաւրիտիոս վաղորովէր դալու ատենը
միտքը դրեր էր որ քանի մը ժամ միայն
կենայ հօն . կ'ուզէր մէկէն հոնկէց Բարիզ
դառնալ , որպէս զի գործողութիւնները
կարգի դնէ և որոշած երկայն ճամբոր-
դութեան պատրաստութիւնները տեսնէ :
Սակայն իր մօտաքեռ թոռը շատ վրայ որ
տուաւ , յանձն առաւ քանի մը օր մէկտեղ
անցընելու : Այս միջոցիս մէջ Մազդազի-
նէ կրցաւ դիտել երիտասարդին վրայ ե-
ղած արտաքոյ կարգի փոփոխութիւննե-
րը , որոնք ոչ այնչափ իր դէմքը՝ որչափ
սիրտն ու հոգին ապականեր էին . վայրե-
նի , մաղձոտ ու երգիծաբան կերպ մը ա-
ռեր էր Մաւրիտիոս , և հաղիւ թէ երբէք
գորովոյ և լաւութեան զգացմունք մը վը-
րան կը տեսնուէր : Սակայն ջանաց որ
կերպով մը իր մօտաքեռ թոռան գործոցը
յաջող երթալուն վրայ փոյթ ցուցընէ . ի-
րիկուն մը՝ խղճմտանքը հանդարտեցընե-
լու համար՝ դատաստանին վերաբերեալ

գրուածքները թղթատեց, ու առանց բան մը հասկընալու՝ ըստ թէ բանը աղէկ էր, ըրի մէջ էր, և թէ յայտնապէս դատին քառուկը Մազգաղինէի կողմնէն էր:

— « Այս գառութեանը քեզի կը վերաբերի, ով իմ ազգահանս, ըստ օրհորդը ծիծաղելով:

— Ինձի՞:

— Չես գիտեր որ հօրդ մահաւունէն վերջը այս կալուածին տէրը փոխաւած չէ:

— Ափսոս որ այս ըրած վեհանձն տաւ առձեռնութիւնդ. փուռ տեղն է, ըստ Մաւրիտիոս անտաղտեր կերտով մը: Հարկ է իմացընեմ քեզի որ եթէ Գաղղիայ բոլոր գղեակներն ալ իմս ըլլային՝ ոչ երբէք ա նով երջանիկ կ'ըլլայի ես:

— Ուրեմն թշուառ ես, Մաւրիտիոս, հարցուց օրհորդն անանկ անոյշ ու ախար ձայնով մը՝ որ կրնար քարէ սիրտ մըն ալ կահըղջընել:

— Ե՛ս թշուառ. ամենէն երջանիկ մարդն եմ ես »:

Երկրորդ օրը Մազգաղինէ իմացաւ որ Մաւրիտիոս գացեր էր տունէն առանց իրեն բարե մը տալու: Երբոր Ռարիզ հասաւ Մաւրիտիոս, այսպիսի անբաղաճ վար կերպով քաժնուելուն վրայ նամակով մը ներուձն խնդրեց Մազգաղինէէն: Երկու ամիս վերջը, նորէն մէյ մ' ալ գրեց. կ'ըսէր թէ հարկաւոր պատրաստութիւնները տեսեր էր, և թէ տասներհինգ օրէն

Տասնհայ պիտի ելլար : Այս երկու նամակներուն մէջ ալ իր հոգւոյն գէշ պիտակը չսլոյնապէս կ'երևար . մանաւորապէս երկրորդը անգամիկ յուսահատութեամբ մը կ'ազնայրայ չոյտերով թաթխուած էր : Առջի նամակն որ առաւ Մազդազինէ , մինչև ՚ի մահ տխրեցաւ . իսկ երկրորդին՝ զարհուրեցաւ սոսկաց :

Այս նպարագաններս հանդիպած միջոցը , դատաստանը տուաջ կ'երթար . բոլոր Մազդազինէի հետ ամուսնանալ ուզողները կ'աբախանային որ գերմանացի օրիորդին բաները գէշի կ'երթային . միայն Մազդազինէի հոգը չէր :

Մաւրիտիոս ինչպէս որ իմացուցեր էր Մազդազինէի՝ մեծ ճամբորդութիւն մը սկսելու վրայ էր . իրաւցընէ շատ մեծ , ուրովհետեւ ով որ ալ այս ճամբորդութիւնն ըրած է՝ ինչուան հիմա դարձած չէ , և ուրովհետեւ ճամբայ ելլալու միջոց ամենէն աւելի աներկիւղներն ալ արիւն քրտնած են ու բոլոր մարմիննին դողացած է սարսափէն : Իր ամէն պատրաստութիւնները տեսած էր . ալ ուրիշ բան չունէր ընելու՝ բայց եթէ վերջին բարեւ մը տալ այս աշխարհիս ու ուրիշ աշխարհ մը անցնիլ , զոր անմտաբար կը յուսար լաւագոյն գտնալու : Մաւրիտիոս իբրև անզգալի զառ ի վայրէ մը վար իջնալով հասեր էր այս աստիճանին : Մարդկային կենցաղավարութեան այս ընթացքը անանկ ծանօթ ու սովորական է ամենուն , և այնչափ նկարագրուած է աւելի ճարտասան գրիչներէ , որ բաւական է հոս գլխաւոր կէտերը միայն ստորագրել :

Նայէ սա երիտասարդին . հազիւ թէ քսան տարեկան կայ . ահաւաակ կը սկըսի իր կեանքը , որովհետեւ ինչուան հիմա իրեն համար կեանքը իր բնակութեան միայնարանին մէջ երազած գեղեցիկ աշխարհն էր : իր տղայութեան տարիները հայրենական յարկին տակ սահած են խորին ու հեռաւոր ձորի մը մէջ . բնութիւնն իր գրգիին մէջ գինքն որորեր է . Աստուած իր չորս կողմն աղնուական ու բարի օրինակ տուող անձինք շարեր է : Ահա կը քալէ առաջ կու դայ՝ երիտասարդութեան ամէն սքանչելի ձիրքերովը զարգարուած . ճակատն վրայ շնորհք մը կը փայլի . սիրան անմեղութեան խաբեբայ յոյսերով լցուած է . բիւրեղեայ ջրին մէջ բացուած ծաղկի մը պէս իր նայուածքին մէջէն հոգւոյն դեղեցկութիւնը կը տեսնուի : Բարեմտութեամբ կը հաւտայ կեղծաւորեալ խօսքերու ու հաւատարմութեան խոստամունքներու , և նորեկ ըլլալով անխորհրդաբար ինքզինքը խանդաղատանաց ձեռքը կը մատնէ . և քիչ ատենուան մէջ կը տեսնաս որ ազականեալ ու մոլար սրտի մը աւարեղեր է :

Այս կերպով սկսաւ Մաւրիտիոս իր աշխարհի ու կենաց ընթացքը , որով կեղեի մը պէս ինկաւ վրայէն իր բնիկ աղնուութիւնը . և ինչպէս որ տկար ու բուռն ոգւոց յատուկ է միշտ չափազանցն երթալը , այսպէս Մաւրիտիոսի բունած ճամբուն

ծայրն ալ բոլոր մարդկութիւնն անարդե-
լու հասաւ : Կան ազնուական սրտեր որ
նոյն իսկ իրենց վէրքերէն վազած արեանը
մէջ կը զտուին կը մաքրուին . բայց կան
նաև ուրիշներ ալ որ անոնցմով կը դառ-
նանան ու բոլորովին կ'ապականին : Մաւ-
րիտիոս ալ անկէց վերջը այն տեսակ ծուռ
փիլիսոփայութեան տուաւ բոլորովին ինք-
զինքը , որ բարձրագոյն զգացմունքները
ծաղր ընելու , և մտացածին ցնորք համա-
րելու վրայ կայացած է այն ամէն բան՝ որ
նիւթական վայելքներու կարգը չէ . ա-
նարգ փիլիսոփայութիւն մը , որ ատենազօ-
գաղղիական կատակերգութեանց մէջ ծա-
ռաներու բերանը միայն կը դրուէր , և այս-
օրուան օրս կը գտնուին մարդիկ որ բա-
նավարութեան համաձայն կը սեպեն զայն ,
և ընտիր ախորժակի կանոն . որով վար կը
զարնեն այն ամենայն բան՝ որ կը բարձրա-
ցնէ զմարդկային բնութիւնը : Մարի-
տիոս քիչ ժամանակի մէջ այս ամէն բան
արհամարհող սկեպտականութեան հետե-
ւող եղաւ : Մէյ մ' որ մարդ ոտքը աս զառ-
'ի վայրին վրայ դնէ , շուտով վար կը սա-
հի . սկզբան այսպիսին միտքը կը դնէ որ
ըրածը զուարճութեան համար է , և ստու-
գիւ երկար ժամանակ պարզ զուարճու-
թիւն է բանը . և կը համոզէ ինքզինքը որ
երբոր հարկ ըլլայ՝ կը ծնանին յինքեան այն
ամէն զգացմունքներն՝ որոնց վրայ հիմա
կը խնտայ , և իրենց բոլոր ուժովը կը գոր-

ծեն : Ասանկ մտածութեամբ սիրտը հանգարտ բռնելով, չանդրադառնար որ արտաքուստ և եթ անհաւատութիւն և կրօնքի տրհամարհութիւն ցուցընելն ալ իր բարոյականը կ'աւրէ . մէյ մ' ալ օր կու գայ որ կը տեսնէ թէ այն զգացմունքները զորոնք իբրև պահեստի գունդ մը կը սեպէր, ալ չուզելով ծաղր ըլլալ՝ առանց ձայնի ծածուկ մը փախեր գացեր են : Այսպէս սկզբան ներքուստ աւելի լաւ էր քան ինչ որ գրսուանց կ'ուզէր երևցընել, ետքը արտաքուստ երևցուցածը իրօք բնական կ'ըլլայ իրեն :

Մաւրիտիոս երբեմն երբեմն դեռ մտքով Վալդրավէրի վրայ կը դառնար . բայց սաստիկ կապերով կապուած ու սխալուած էր . անգամ մը որ ոտքդ կենաց փուշերուն մէջ գրիր, դիւրին չէ անկէց ելլալը : Իր հօրը նամակները կամաց կամաց զինքը կը զայրացընէին . ազնիւ մարգիդուհոյն իրեն գրած քաղցր և մայրենի խրատներուն վրայ կը ծիծաղէր, երբեմն ալ վիրաւորուած առիւծի մը պէս վեր վեր կը ցատքէր : Այն ատենուան երիտասարդներուն մէջ այս նորութիւնը կար՝ որ բանի տեղ չէին դնէր իրենց ծնողքը, զորոնք ատենօք նոյն իսկ Սպարտացիներն ալ կը յարգէին : Պղբապոնեանց վերականգնումը վերջանալու վրայ էր այն ատենները . և հասեր էր այն տագնապողական ժամը մարգկային ընկերութեան համար, որ կը

կարծուէր թէ աշխարհիս կարգը պիտոր
փոխէ : և չեմ գիտեր թէ որիչ քանակներով
մը եղզմ է արգելոց որ այն առեւտուած չայր
կարգ կանսն արհամարհուով ու ամէն ձե
ծարանք ոտք տակ առնուած լլլայ : Մաւ
րիտիոս առանց դիտարու պն արարած
բողական սղւով տողորուներ էր որ օգտէ
մէջ կը քալէր : և որուն բնականաբար կը
մղէին պիւր իր արեան տարութիւնն ա
իր բնաւորութեան թափը : Այստա , սը
չափ փոխուեր էր այն երիտասարդէն ,
դորն որ առաջ այնչափ վայելչութեամբ և
անմեղութեամբ պճնեաղ տեսանք և սիրու
լիր : շնորհալից : ու ամենուէն հեա բարե
բարոյ : Այս տեսակ բանաստեղծական և
դիւրարեկ կաղմուածքով բնութիւնները
կը նմանին ապակոյ , որ քանի որ ողջ է
կրնաս շօշափել իր փափուկ մարմինը ,
բայց երբոր կոտորուի ձեռքը կը կարէ :
Մաւրիտիոս ուրիշ բան չէր ընէր՝ բայց
եթէ դատարկ աօդին անդին պարտիլ ճա
րիղու մէջ , իր եկամուտները ժամանակէն
առաջ ուտել , և միտքը ցրուած բռնել որ
չիմանայ թէ ինչ գահավիժի տաճը հասեր
էր : Մեծ սրտով մարդիկ երբոր սաստիկ
կը վիրաւորուին , առանձնութեան մէջ կը
քաշուին կ'ընկղմին , որպէս զի կամ հոն
'ի լուութեան իրենք զիրենք բժշկեն , և
կամ հոն մեռնին . իսկ Մաւրիտիոս ընդ
հակառակն հողւով մարմնով ինքզինքը
ոնարգ դբազանաց փոթորկին մէջ ծեռեր

էր : և դատարհութիւնն ու ձանձրութիւնը : որ կրից ալէկոծութիւններուն կը յաջարկեն , որ օրուան վրայ առաջ կը մը դէին գինը : Ի՞նչ անյարմար գեղ է հոգւոյն վէրքերուն՝ գետին ցեխովն լաննք լուարը : Ողբալու արժանի է այն երիտասարդն՝ որ իր ցաւերուն վրայ չմտածեց , աչք մանաւանդ կ'արհամարհէ . այսպիսին կը ցուցնէ որ երջանիկ ըլլալու արժանի չէր : Մաւրիտիոս իր գեղեցիկութեամբը , առատաձեռնութեամբն ու շոյլութեամբը՝ քիչ ատենուան մէջ անուն մը հանեց այս երկըզու աշխարհիս մէջ : Ամէնքը սկսան իր մենամարտութեանց ու իր ճիւղուն , իր պարտքերուն և իր անվայել զուարճութիւններուն վրայ խօսիլ : Օր օրուան վրայ աւելի կործանելով , օր մը անառակութիւնը դիմացն ելաւ . Մաւրիտիոս հրէշին երեսը նայեցաւ առանց գոյնը նետելու , ու իր երիտասարդութեան միացորդը անոր ճիրաններուն առջևը նետեց որ ծախէ սպառէ :

Այսպիսի անկարգութեանց մէջ ինկած էր երբոր իր հօրը վերջին նամակը ձեռքն հասաւ : Շատ սրտաշարժ ու գեղեցիկ նամակ էր ասիկայ , ոչ սնտոի բարկութեամբ և ոչ տղայական ճոռումաբանութեամբ զրբուած : Մաւրիտիոս կարգալու ատենը խղճմտանքը զարկաւ , և բոլոր իր ազնուական բնածին զգացմունքները արթնցան . այն վեհ ու սիրելի ձայնը լսելով՝ սկսաւ

հեծեծալ, աչուքներէն արցունք կը թափէր, վերջապէս՝ սիրոյ ձայն մը լսուեցաւ այն սրտէն, որ երկար ատենէ՛ ի վեր լռու և անբարբառ էր : Երթալու վրայ էր, ճամբայ կ'երթար՝ այն աղէտալի կտակերէն ուզանաւ, երբոր ընց օր հայրը մեռեր է : Երիտասարդ եղած ատեննիս կենաց երկայն տարիներու դեռ յոյս ունենալով շատ անգամ կը մոռնանք մեր հեռաւորութեան միջոցը որ մեր հօրը օրերն համբաւնքով են . ամսէ ամիս կը թողունք սիրոյ նշան և արգիւնք ցուցընելը, և գրեթէ միշտ գերեզմանի մը վրայ կը մատուցանենք արտասուաց հետ անագան կարեկցութեան մը նուէրը :

Մարտիրոսի գլուխը կայծակ իջաւ . սաստիկ ցաւէն ջերմ ու մոխրագնութիւն եկաւ վրան : Իր բարեկամները, կամ լուս ևս ասել՝ իր չարեաց գործակիցները դիմքը մխիթարելու պատճառանքով իր գլխուն բարձինքովը ժողովեցան, և անանկ ըրին՝ որ այն հարուածն որ կ'երեւար թէ չար կապանքները բոլորովին պիտի խզէր փրցընէր՝ առջինէն աւելի ամբացուց զանոնք : Վաղդրավէր երթար ինչ պիտի ընէր : Յետ ընդունայն ջանից որ դապէ և նուաճէ այն տղմուտ ալիքն որ հետն առած կը տանէր զինքը, աւելի դիւրին ճամբայ երեցաւ Մարտիրոսի որ ինքզինքը անոր ձեռքը թողու : Որովհետեւ ջրոյն ընթացքին հետ քաշելը շատ գիւրին է, բայց

անոր դէժ երթալը դժուարին . որովհետև այն անդունդն ուր կը տանի անիկայ՝ այն պիտի արտաքոյ կարգի խարէական երեւոյթներով կը քաշէ իրեն զմարդ , զորոնք չեն՝ ճանչնար վնիտ և հանգարտ ջրերու վրայ միայն նաւարկութիւն ըրած անձինք : Մակայն օր որուան վրայ իր վինակը յայտնի կ'ըլլար իր աչքին սպառնալից կերպարանքով մը . ամէն տեսակ շփոթութիւն դինքը առեր էր , որովհետև զգացմանց խռովութիւնը շիտակ ամէն անկարգութեանց կը տանի : Իր պարտքերուն վիշապը հանդարտեցընելու և իր ոտքին տակ բացուած անդունդը գացելու համար , քրոնադատուեցաւ Մարիտիոս յանձն առնել որ աճուրդի հանուին այն դղեակն ուր ինքը ծներ էր և իր հարց կալուածք : Համառօտ բտելով , անզգալի կերպով այն աստիճանի հասաւ՝ որ գնաց խառնուեցաւ այն խառնազնացներու խումբին հետ , որ Բարիդ կը գտնուի , և որոնք առանց ստացուածքի , առանց աստիճանի ու առանց վիճակի մը տէր-ըլլալու՝ շատ ստրկով խաղ կը խաղան , ուղածնին կ'ընեն , և իրենց անզիտելի հարստութեամբը կը կործանեն այն արգար մարդիկը , զորոնք կ'արհամարհեն և որոնք բարեբաղդաբար բարիք կը փոխարինեն իրենց :

Ինչ որ ալ ընէ մարդ խալըսելու համար , անհրաժեշտ կու գայ ժամ մը , յորում ճակատագիրը իբրև անողոքելի պար-

տասեր մը կու գայ գուռերնիս կը գարնէ՛
իւր ասննիքին թուղթը ձեռքը բռնած : Ան
ան ասնն փախուստ տալ չքալար : Կարկե
կանայ կամ տկամայ նոյն միջոցին անոր
հաշիւները արել : Կ'ըսուի ե կը կրկնուի
աշխարհիս մէջ թէ մարդոս բաղդին խաղա
լիին է : Բայց մեզի համար մարդկային կէ
նաց տրամաբանութեան պէս պարտա
ռեալ ու խիստ տրամաբանութիւն չկոց :
ամէն բան իրարու հետ կը կապակցին : Կ'
նմա . ով որ նախնադոյնը կրնայ որտեղ : Ե
համբերութեամբ հեռութեանն սպասէ :
յայտնապէս կը տեսնայ որ խիստ ճշգրիտ
հաւաքարանութիւն մըն է անիկայ : Ասանկ
Մաւրիտիոսի ալ ինչ որ պիտոք հանդիպէր
նէ հանդիպեցաւ . այն չար ժամը իր տնել
փողոցի մը մէջ փակուած ուսենը վրայ հա
սաւ , օւսկից գուրս ելլելու որքիչ ճամբոյ
չկար՝ բայց եթէ անձնատղանութիւնը կամ
վատահամբալութիւնը :

Մաւրիտիոսի հոգին խառորէր էր ու գիտ
ճամբէն , բայց անանկ ծնած չէր . իր աշ
մենէն սառտիկ անառակութեանց միջոցն
ալ տեսնուած էր վրան իր ծագմանը կեղծը
և բնածին մեծութեան մը դրոշմը՝ թէ պէտ
արտաքոյ կարգի տարուած . խորին գիշե
րուան մը մէջ մոլորած ժամանակը՝ փա
ռաւոր փայլակներով լուսաւորեր էր զան :
Իր առջևի եղած երկու ճամբաներուն ըն
տրութեանը մէջ չտարակուսեցաւ . շատն
ցողոցն է՝ ի վեր արդէն իր բարոյական անձ

նանսպանութիւնն ըրտած էր, ուրիշ բան չէր
մտնար՝ բայց եթէ թողուիլ. և այն մեղա-
մաղճոտ տաղտուկն որ կը մաշեցընէր զին-
քը, և այն ճանճրութիւնն սրով ամէն
բանէ աւելի ինքն իրմէ ճանճրացեր էր,
զինքը պիտի մղէին շուտ կամ ուշ դէպ'ի
այս անարգ վախճանը, որ կարգէ դուրս
բան մը չէր այն ժամանակին՝ յորում քիչ
չէին գտնուէր քսան տարուան կեանքեր-
նէն յուսահատած տղաք:

Երբոր այս դիտաւորութիւնը հաստատ
միտքը դրաւ, չուզենալով այս կեանքէս
հրաժարիլ իբրև զինուորներուն ձեռքէն
խալըսիլ ուղող պարտապան մը, իր Գու-
տրէի ազարակը ծախել տուաւ, որուն ին-
չուան այն ատեն ձեռք չէր դպցուցած՝
պարզ Մազդազինէի համար. վասն զի,
թէպէտ իր մօրաքեռ թոռան գաղափարը
հաղիւ թէ իր սրտին մէջ տպաւորուած էր,
սակայն վախնալով որ կրնար անիկայ դի-
պուածով աղքատութեան մէջ իյնալ՝ պա-
հեր էր զայն: Երբոր այս բանիս վրայ իր
վախը փարատեցաւ՝ գիտնալով որ օրինա-
ւոր կերպով Մազդազինէի ստացուածք ե-
ղեր էր Վալդերավէրի կալուածը, ունեցած
նոր պարտքերը գոցելու համար՝ ծախեց
այն միակ ու յետին մնացորդն իր հայրե-
նական ժառանգութեանը. ետքը այն սի-
րոյ բնածին զգացմամբ՝ որ ոչ երբէք կը
մարի մեր սրտին մէջ, ուզեց մեռնելէն ա-
ռաջ տեսնել մէյ մը այն հողը, ուր ծներ
էր:

իր ծննդեան տեղւոյն տեսարանը , զոր
թերևս միջոց մը սեպեր էր իր երբնաստար
դութիւնը նորէն կենդանացընելու համար
յինքեան , ուրիշ բանի չծառայեց . բայց եւ
թէ իր էութեան խեղճութիւնը քորչորովին
դուրս ցատքեցընելու իր աչքին . Հաղիս
հազ ճանչցաւ այն ճամբաներն , որոնց մէ-
ջէն այնչափ անգամ տնցեր էր մարտիգու
հւոյն և ասպետին հետ . առանց զգաց
ման նայեցաւ այն գեղեցիկ բնութեան ,
զոր այնչափ սիրեր էր , և որն որ իրեն
պէս առոյգ ու գեղեցիկ տեսեր էր աստե-
նօք զՄարիտիոս : Երբոր եկաւ նստաւ
այն տանը սեմոց վրայ՝ ուր իր հայրը մե-
ռեր էր , արցունք մըն ալ չկաթեցաւ իր
չոր արտեանունքներէն . արդար պատիժ
այն ակրուած հոգւոց , որ յետ ուղբ տակ
առնելու ամենայն սրբազան և մեծարեցի
զգացմունքները , որ մը մտքերնին կը փչէ
որ դան զուտ գորովոց աղբիւրէն ծարա-
նին անցընեն . սակայն խնախառն աւազ
միայն կը գտնան :

Մագդաղինէի պէս բարեբարոց ու ազ-
նիւ օրիորդի մը հետ տեսութիւնն ու խօ-
սակցութիւնն ալ օգուտ մը ու տպաւորու-
թիւն մը չըրաւ իր վրայ : Եւ հրածեչտի
ողջոյն տալու սովորութենէն ճանճրացած
ըլլալով , առաւօտ մը կանուխ ելաւ դնաց
առանց մարդու բան մը ըսելու : Երբոր
Բարիզ դարձաւ , անապարեց գործողու-
թիւնները կարգի դնելու . արդէն հոնտե :

պէն երթալէն առաջ տան կարգաւորու-
թիւնները ընդնցուցեր էր, ծառաները ար-
ձըկեր և հապերն ու ձիերն և անոնց ըս-
տանները ծախեր էր : Գուտրէի ազարա-
կին քնովը իր վերջին պարտքերը վճարեց,
և հանար օհուտի մը շափ ալ քովը մնաց,
որ շան ալ էր իր ճանապարհորդութիւնը
ընդհանրելու համար : Ա՛լ սակէն հոգէ ազատ՝
առաւմձնացաւ իր տանը մէջ, ուզելով
միայնութեան մէջ անցընել այն քանի մը
օրն որ դեռ աշխարհիս մէջ պիտի անցը-
նէր : Ամենևին մէկ բանի մը չէր հաւատար,
և որչափ որ մարդկանց վրայ շէր մտածէր՝
նոյնչափ ալ անհոգ էր Աստուծոյ վրայ
խորհելու : Մագդաղինէի գաղափարն ալ
և ոչ ազօտ կերպով մը ծագեց մտքին մէջ
իր կենաց վերջին իրիկունը . և ոչ անգամ
մը մտածեց մաղձատութեամբ անոր վրայ,
և իր անձնամիտութեան վատ խորհրդովը
գրաւենալ՝ չյիշեց որ դատաստան մը իր մօ-
րաքեռ թոռանը կը սպառնար ունեցած
բոլոր հարստութիւնը ձեռքէն առնելու և
առքատ թողլու զինքը :

Ժամանակը կը մօտենար . ինքը անչարժ
ուրուռ կեցած անխոով կը սպասէր այն
վայրիենին՝ առանց իր մտաց հաստատու-
թիւն փոխուելու կամ դեզուելու : Յայտնի
կերևար որ անյեղի կերպով որոշեր էր
քիչ ատենէն՝ իր կեանքը վերցընելու աշ-
խարհէս . գրեթէ Մագդաղինէի յետին
հրածեշտի նամակը . ասորճանակները լե-

էր : Երբոր բացաւ զայն առանց մեծ պատկառանքի մը ու առանց սիրտը շատ շարժելու , թէպէտ խել մը տարիներէ 'ի վեր այս տեսակ զգացմունքներէ օտար էր՝ սակայն երբոր երջանկութեան օրերու անուշահոտութիւն մը ծաւալեցաւ անոր մէջէն իբրև գարնանային բոյր մը , այլայլութիւն եկաւ վրան : Նամակաները մէկիկ մէկիկ կրակը կը ձգէր , մէկ քանին աչքէ անցընելով . պատահմամբ այն նամակը ձեռքն եկաւ՝ զոր իր մօրաքեռ թոռն ատենօք գըրեր էր իրենն ասպետէն ու մարգիզուհիէն ծածուկ , և որուն ինքը պատասխան չէր տուած : Այս առաջին անգամ ամբողջ կարգաց զայն , տեղ տեղ ժպտելով այն բնական շնորհալի զուրցուածքին վրայ , որ կը հանդիպէր մէջը : Երբոր կրակը մաշեց ամէն բան , Մաւրիտիոս պարապ գզրոցին մէջէն միտալ մը հանեց , որուն դաշեղու ատենը իբրև իժէ մը քստմնեցաւ . ճանչցաւ վրան նկարուած դէմքը , որ իր առաջին և միակ սիրած օրիորդը կը ներկայացընէր , և մէկէն ջղային դող մը եկաւ վրան , ճակտին վրայ մրրիկներ փրթան , և ահաւոր փայլակներ շողացին աչուրներէն , որոնց կապիճները քիչ մը առաջ անլոյս էին : Խել մը վայրկեան դժնեայ նաւուածքով զննելէն վերջը զանիկայ , ատելութենէ և բարկութենէ շարժած՝ գետինը նետեց նուրբ ու դիւրաբեկ փղոսկրն , որ մէկէն 'ի մէկ խորտակեցաւ : Յոգնութե-

նէն հանդէպաւ բազմոցի մը վրայ , ձեռքերովը տժգոյն դէմքը ծածկած : Ժամու մը չափ ասանկ կեցաւ : Երբոր գլուխը վեր վերուց , Մագդաղինէն իր քովը տեսաւ , որ ոտքի վրայ կեցած տխուր ու անոյշ ժպիտով մը իրեն կը նայէր : Սկզբան կարծեց որ իր զգայարանաց գրգռումնքէն առաջ եկած ցնորք մըն էր . վայրկենի մը չափ միջոյ՝ միտքը դրաւ որ մահուան հրեշտակն եկեր էր քովը դիւրացընելու համար իր վախճանը . բայց ալ ասանկ բանաստեղծական պատկերներով պարարելու մարդ չէր Մաւրիտիոս :

— « Ի՞նչ , դ՞ուն ես , Մագդաղինէ . ի՞նչ կ'ուզես ինձմէ . ի՞նչ միտքդ փշեց կամ ի՞նչ ունիս որ ելար եկար : Ո՞ւր իցէ կերպով ալ ըլլայ , հոս քու կենալու տեղդ չէ :

— Այո , ազգականս , ես եմ , պատասխանեց օրիորդն՝ առանց շփոթելու ու առանց զարմանալու այս խօսքերէն , որ Մաւրիտիոս կրակի պէս ետեւէ ետեւ կը տրուէ ու զայրագին ձայնով մը զուրցեց : Ես եմ , կամ մանաւանդ՝ մենք ենք , աւելցուց ըսելու , որովհետեւ Որսուլա ալ նախասենեակդ է : Չկրցայ համոզել բարեբարոյ օրիորդն որ ինձմէ զատուի . թերեւ տհաճելի չըլլար քեզի իր ազնիւ կերպարանքն երբեմն երբեմն տեսնելը :

— Ի՞նչ կայ որ յանկարծ բոյներնիդ թողուցիք , հարցուց երիտասարդը վայրագ կերպով մը . ի՞նչ բանի համար եկար այս

անդգամ քաղաքը . դուք չէք գիտեր որ հաստեղի ծծուած օդը ժահուհտու ու թուլ նաւոր է . չէք գիտեր որ հօս մարդ անալու կութենէ , տխրութենէ ու ճանճրոյթէ կը մեանի : Ռրապա և դու , երկուքնիդ ուլ թարիդ եկեր էք . խեղճ աղջիկներ , շուտով ճամբայ ելէք , վ ալդրավէր դարձէք , ձեր անտառներուն հովանեաց ասկ պաւ տըսպարուեցէք :

— Եսա դիւրաւ կը խօսիս վ ալդրավէրի վրայ , կրկնեց քաղցրութեամբ Մազ դազինէ . ես ալ քեզի կ'ըսեմ որ դու չես գիտեր թէ այն դատաստանն որ անանկ ապահովութեամբ պիտի վաստըիէի , վերջապէս կորսնցուցի . չես գիտեր որ վ ալդրավէր ալ իմս չէ , և թէ ճիշդ նոյն վիճակին մէջն եմ՝ ինչ որ էի այն իրիկունն որ հանդիպեցար ինձի այն անտառներուն խորերը , որոնց շուքը վայելելու խորհուրդ կու տաս ինձի :

— Գատաստանդ կորսնցուցիր . վ ալդրավէր ալ քուկդ չէ , աղաղակեց Մաւրիտիոս դարհուրած :

— Ո՛հ , այո , աղգականս : Բայց ասիկայ պատճառ մը չէ որ մարդ նախատէ մարդկային արդարութիւնը . ա՛հ , երկինք ինձի վկայ է որ հարստութիւն կորսնցընելուս վրայ ամենևին չեմ ցաւիր . միայն այս մտածութիւնը ցաւ կու տայ ինձի՝ որ մեր ամենասիրելի մարդիզուհւոյն վերջին կամքը չպահեցին : Այս ալ պէտք է ըսեմ քե-

զի՛ թէ՛ յայն ունէ՛ի որ այն աղուոր կա :
լուսածն ու որդեակն որ ինձի ինկած է ինձ՝ որ
մեք կանք ընդի, կամ որդիքն երուդ նորէն
կընդարձակու՛մ :

— **Քրդիքներս** բանի մը կարտտ պիտի
չըլլան , եւ ինչ ալ չեմ մտնար այս բանիս
մէջ : **Կրքնեց** **Մարտիրոս** աւելի կարուկ
ճայնով մը : **Ինչու** համար չընդունեցար
Գուարէի ագարակն որ քեզի կու տայի .
Ինչու **Քող տախր** որ ծախեմ զանիկայ .
Ինչու չընիր ինձի այն ատեն՝ որ կրնայ ըլ-
լալ որմը բացը մնար : **Ահա տախի** եկաւ
այն օրն . **հիմա** ինչ պիտի ընես նայինք :

— **Մի սրգողիր**, ազգականս . կը տեսնես
որ քու սրտիդ աղնուութեանը վրայ չեմ
տարակուսած , որովհետեւ հիմա անոր ե-
կեր եմ գիմելու : **Կ'երգնում** քեզի որ ե-
ռչ վայրկեան մը երկը այեցայ . ըսի ես ին-
ձի . **Սակեց** վերջը ազգականս միայն ու-
նիմ ինձի նեցուկ՝ որուն կրնամ ապաւի-
նիլ . գիտէ ինքը որ ինչպէս սիրեր եմ իր
ձերունի հայրը , եւ թէ գէշ աղջիկ մը չեմ ,
եւ թերեւս իր կարեկցութեանն արժանաւոր
եմ : **Իր մեծանձնութիւնը** կը ճանչնամ .
Կ'երթամ իր պաշտպանութեանը տակ
կ'ամբանամ . անտարակոյս եմ որ չմեր-
ժեր դիմ : **Աս ըսի** , ու կապոցս պատրաստ
տեցի , ինչպէս ատենօք **Մոնագոյէ** ելած
ժամանակս . յետոյ ծունկ չորեցայ այն սե-
մոց վրայ , որ այնպիսի հիւրասիրութիւն
ըրեր էր ինձի , երկայն ու տխուր վերջին

բարև մը տուի այն տանն՝ ուր որ հասակս
աճեր էր , այն քաղցր տեղերուն՝ զտրոնք
մէջ մ' ալ պիտի չտեսնէի . վերջը ճամբաց
ելայ , և ահաւասիկ հոս եմ : Մաւրիափառ ,
ազէկ չըրի . չէ նէ արդեօք կ'ըսեն թէ ու
րիշ կերպով պէտք էի շարժիլ » :

Մաւրիափոս պառասխան չառաւ . բազմ
մոցին վրայ նստած Մագդաղինէի դիմաց
տիտար ապշութեամբ մը անոր երեսը կը
նայէր , ան մարդուն նման որ չգիտեր
թէ արթուն է չէ նէ քնոյ մէջ : Սուր թա
փանցողութիւն մը պէտք չէր իր ճակտին
վրայէն գուշակելու համար թէ ինչ վիճա
կի մէջ էր հոգին . բայց Մագդաղինէ չան
դրադարձաւ , և զուարթ վեհութեամբ մը
յաւել ըսելու .

— « Մի վախնար , ազգականս , որ քու
ապրելու կերպիդ մեծ արգելք մը պիտի ըլ
լամ ես . ամենևին չեմ ուզեր քու սովորու
թիւններուդ ու քու ազատութեանդ խա
փան մը դնել : Ես պարզ ու չափաւոր ա
խորժի տէր եմ . իմ աղքատութիւնս ոչ եր
բէք կրնայ քու քսակիդ մեծ վնաս մը բե
րել : Միայն կ'աղաչեմ որ գոնէ քիչ մը ա
տենուան համար ետ կենաս այն երկայն
ճամբորդութենէն որ միտքդ դրեր էիր .
կարծեմ թէ չես ուզենար միայնակ և ան
պաշտպան թողուլ զիս այս մեծ քաղաքին
մէջ , որուն դու իսկ անզգամ անուներ տը
ւիր : Դու հոս պիտի կենաս , պիտի չեր
թաս հոստեղէն . քու ազնուական հայրդ

ու սիրելի մարգիզուհին իմ բերնովս կ'ա-
զաչեն քեզի . նոյնպէս իմ սրբակեաց
փայտ ալ, որ մեռնելէն առաջ զիս իր մօր-
քրոջը տղուն յանձնեց : Յիչէ այն նամակն
որ մեռնելու ատենը միակ ժառանգութիւն
ձգեց ինձի : Թէ որ մոռցեր ես զայն , Մաւ-
րիտիոս , ահաւասիկ առ կարդա :

Իրաւցրնէ՛ Մաւրիտիոս ոչ երբէք կար-
գացեր էր այս նամակը : Որք աղջիկը՝ ո-
րովհետև մօրմէն ասիկայ միայն մնացեր
էր իրեն , իր վալդրավէր հասնելուն եր-
կորդ օրը՝ ազաչեր էր ծերունի ասպետն
որ իրեն դարձրնէ զայն , և աղնիւ աս-
պետն ալ կատարեր էր իր այս գովելի փա-
փաքը : Զարմանք չէր որ այդ երիտասար-
դը մտքի զբաղմունքներէ խռոված միջոցը՝
փոթ ըրած չըլլայ ստուգելու Մագդաղի-
նէի նոյն անձն ըլլալը , և ոչ տեսնալու
թէ իր Մոնազոյի մօրքրոջն աղջիկը ինչպէս
գրեր էր գաղղիարէն լեզուով : Բնականա-
պէս , առ բանիս վրայ ամենևին հոգ չէր ը-
րած նոյն ատենը : Հայրն ըսեր էր իրեն .
Ահաւասիկ աս է մօրաքեռք թոռը . Մաւ-
րիտիոս առանց ուրիշ բան հարցրնելու՝
սիրոյ ողջոյնը տուեր էր անոր : Աւելի նե-
ղը՝ մտնալով քան թէ հետաքրքրութենէ
գրդռուած՝ նիւթաբար առաւ նամակն որ
կուտար իրեն օրիորդը , և անտարբեր ու
անզգայ աչքով մը կարդաց զայն :

Որչափ որ կրնար կարծուիլ ու ինչպէս
որ ալ մտածէր ինքն իր վրայ , Մաւրիտիո-

ախ սիրտը բողբոջի՞ն տեղացած չէր: Բիրն
 մահերեւութի՞ն տակ՝ քանի մը ջղեր կային
 սրտնք կատարեալ անդամազոյծ չէին, և
 որոնք կրնային դեռ շարժիլ զօրութիւնը
 մասն մը ներգործութեամբ: Եւ մեռնալու
 բապէս կէս մը անկորուստ պահած էր այն
 կենդանի կարողութիւնն՝ որ մարդուս աս-
 ասեա՞ծային բարկութենէ և զթութենէ ըն-
 գունած կարողութեանց մէջ ամենէն աւել-
 լի յարգին և ամենէն աւելի մահառիթմ
 է, այն՝ որ կը դարձնուի մեզ յառաջ քան
 զայս, և որ ամենէն նտքը կը մեռնի, այն
 որ շնորհք է և միանգամայն անէծք, թոյն
 և խանթէփար¹, դժոխային տանջանք,
 երկնային զարմանալիք, գերմարդկային
 զօրութիւն մը տուեալ մեր ուրախու-
 թեանցն ու ցաւոցն համար. միով բա-
 նիլ, երեւակայութիւնը:

Այս նամակն կարդալու ատենը, որուն
 արտասուքներէ և համբոյրներէ մաշած
 գրերը՝ նախ իր հայրն աչքէ անցուցեր էր,
 Մաւրիտիոս կամաց կամաց յիշեց այն աչ-
 նանային իրիկուան ամէն ստորագաները,
 յորում Մազդազինէ առաջին անգամ ե-
 րեցեր էր իրեն: Նորէն մտքովը տեսաւ
 հովանաւոր անտառն, արեւմտից ճառա-
 գայթններէն ողողեալ բացավայրը, սար-
 տիզին վանդակապատ դուռը, և զաւթին

1 ՏՎ. կէրէր օրո՞ւ. վերջերս համար օգտակար խոս-
 քէն է:

վրայ՝ որուն տասնամեակէն զերմանացի
արիւղը կամաց կամաց վեր կ'ելլար՝ առ-
պետիկ զւսարգիլուհւոյն ոտք ելլելը գա-
նիկաց ճիգուներու համար : Այս պատկեր-
ներքնակառք շարժեցին . կենդանի ջրաց
նորը վերակ մը ժայռին կողերը ծակելով
սկսաւ վազել . բաց նամակին վերջին առ-
զերումն որ իրեն օւղղուած էին, երբոր կար-
դաց այնքաւերը . « Եւ դու , զոր թէպէտ
չեմք ճանչնար , բայց թողջրկանս հաւատար
կը սիրէի և սրտով կը հոգայի , սվ իմ մօր-
քրոջս որդին , թէ որ մայրդ իր հոգւոյն
նման հողի մը տուած է նէ քեզի , գու-
անչուչտ իմ ամենասիրելի Մազգաղինէիս
եղբայր պիտի սեպես ինքզինքդ » , ժայռը
ճղբուեցաւ , և աղբիւրն՝ որ երկայն ասեւ ,
նէ 'ի վեր գերի էր՝ առատ և երազանեալ
պիտեմերով դուրս ցայտեց : Երբոր Մաւրի-
տիոս բազմեցին բարձերուն վրայ զլստիւր
ժողջուցած հեծաւթիւններ կ'առնէր . կոռ-
տար , Մազգաղինէ լուռ և անթի վրայ կը
նայէր իրեն , Բեկրն իրարու անցացած
կուրծքին վրայ , Թիտը օւ ծանր փերտու-
րանքով մը , իրիկ երիտասարդ մայր մը իր
հիւանդ զուկին օթօրոցին քով :

— « Մաւրիտիոս , բարեկամ իմ , եղ-
բայր իմ , ինչ օւնիս » , հարցուց վերջա-
պէս ողջբական ձայնիւ մը :

Մաւրիտիոս քովը նստեցուց զինքը , և
այն դեռ վառ զգացման բորբոքմանը մի-
ջոց՝ տեղն 'ի տեղ պատմեց իր կենացը վը-

բայց ան ամէն բան՝ որ կրնար պատմել
առանց սաստիկ զարհուրեցնելու... որ
կուսական հոգին, որ իրեն բերնին կը
նայէր: Պատմեց իր խարէական յայտարար
պարապ ելլելը, այն մուլութիւններն, որոնք
մէջ գահավիժեր էին զինքը ցաւն ու հաւն-
ծրութիւնը, իր անկարգութիւնները, իր
կատարեալ կործանումը, կեանքէ բոլորա-
վին տաղտկանալը, ինքզինքը պիտորէտ
վերցրնելու հաստապ գիտաւորութիւնը,
վերջապէս, ամէն բան ըսաւ: Դիւրաւ կը
նայ մարդ մտածել թէ ինչպիսի պատմու-
թիւն էր ասիկայ. բայց մարդկային տկա-
րութիւնը այնչափ յաղթուած է հպարտու-
թենէ, որ Մաւրիտիոս ինքզինքը կենաց
պարագաներու զոհ մը նկարագրեց. միան-
գամայն յիշատակեց իր համոզուիլն այն
դրութեան, որ զօրաւոր հոգւոց մի միայն
բռնելու ընթացքը զանառակութիւնը կը
սեպէ: Զերկինս և զերկիր ամբաստանեց,
և համառօտ պսել՝ բոլոր մարդկային ընկե-
րութեան մէջ իր անձին վրայ միայն յան-
ցանք չդրաւ:

Մագազինէ տխուր ու մտածող կեր-
պով մը և մելամաղձիկ կարեկցութեամբ
մը մտիկ կ'ընէր: Երբոր Մաւրիտիոս խօս-
քը լմնցուց, ինքը երկար ատեն լուռ կե-
ցաւ, և կերպարանքէն յայտնի կ'ըլլար որ
միտքն իրեն ամփոփած էր:

— « Արտաքոյ կարգի պատմութիւն մըն
է լսածս, յանկարծ ըսաւ Մաւրիտիոսի:

բաւական գուարթութեամբ մը՝ դէպ ՚ի նա
վերցրնելով իր աղուոր աչուրներն, որոնց
մեքիւր կտայոյտը չէր պղտորած այսպիսի
ունկնդութենէ մը . դժբաղդարար պէտք
է Դոստոյովանիմ քեզի, ով ազգականս ; որ
անոր մեծ մատը չըմբռնեցի . այսպիսի բա-
նեք շատ վեր են խեղճ աղջկան մը մըտ-
քէն , որ գաւառի մը գիւղական բնակու-
թենէն կու գայ , ուր արդար և քիչով գոհ
եղող անձանց մէջ մեծցած է : Հոն այսպիսի
կարգէ դոկրս զգացմունքներու չեն վարժե-
ցուցած զիս , և ճանչնալով հանդերձ կե-
նաց անհաստատութիւնը՝ ինչուան հիմա
ես միտքս դրած էի որ կեանքը Աստուծոյ
բնտիք պարգև մըն է մեզի : Քու պատմա-
ծիդ մէջ ամենէն աւելի պարզ այն ըմբռնե-
ցի , որ բոլոր ժառանգութիւնդ մտերեւ ես ,
և նոյն վիճակի մէջ կը գտնուիս՝ ինչ որ
ես : Աւտի յուսահատելու պատճառ չկայ :
Միայն թէ՛ ինչ մտքդ դրեք ես ընելու .
օտրաններու դքեզ . ալ ասկէց վերջը չես
կրնար . ես պարզ հարօտութեանդ համար
հոս չեկայ , մանաւանդ թէ աւելի քիւ սի-
բոյդ զրայ վստահանալով քան թէ ու-
կէնդ՝ ճամբայ ելայ : Թէպէտ ինձի պէս
իմկան՝ ու աղքատ ես , և սակայն իմ օրի-
նաւոր նեցուկս , իմ բնական ապուէնս
գու ես : Բու քու անձիդ դատաւոր եղիր .
իմ մամս ու քու մայրդ իրարու քոյր էին :
Երկուքն ալ հիմա երկնքէն կը տեսնեն ըզ-
մեզ ու կը լսեն խօսածնիս : Երբոր ձեր

բնակարանը մտայ, հայրդ ընդունեցաւ զիս իր գրկացը մէջ, և իրեն սիրեցի աղջիկն եղայ. ես քու տեղդ ընցաւցի իրեն սրտին մէջ մեզմէ հեռանալէդ վերջը. քեզ իր ծերութեանը վերջին ուրախութիւնն մտնողայ. ես օգնեցի իրեն մեռնելու միջոցը, և իմ ձեռքովս աչուրները գոցեցի. Իհարկայն այս երկրորդ անգամ որք մնացի, միայնակ, անինչ, առանց ուրիշ պաշտօնի նի բաց ՚ի քեզմէ, և անանկ աշխարհի մը մէջ որ լի է ժայռերով, և զոր շեմ հասնչ նար: Մաւրիտիոս, պատասխանէ ինձի. «ապիէց վերջը պարզ քեզի համար կրնաս ազրիլ»:

Մաւրիտիոսի սրտին վրայ հայձակի ագէս իջնալով այս պարտքերուն ծանրութիւնը, սոսկալով ապրելու բռնատրատուելուն վերայ՝ որչափ որ ատենօք իր երջանկութեան օրերուն կրնար ստեղծ մեռնելու հարկին վրայ, և կենաց հետ կատարած համարել լով զինքը՝ իրրև գերի մը որ երբ ցոյս ունի իր ջգթաներուն քիչ ատենէ քակուելուն կը տեսնայ որ առջինէն ազելի չ'առնուցընեն զանոնք, իր ներսի ցոսկահագորակութիւնը գուրս պոռթբաց. Ինչ կրնար ջնել իր մօրաքեռ թոռանը, ինքն որ իր տնձին բան չէր կրնար ընել. ինչ օգնութիւն կըրնար մատուցանել, ինքն որ իր նահանգս գրին բեռանը տակ կը ճմլէր:

— « Գնա՛, հեռացիր հոստեղէն, ձգէ՛ զիս, աղաղակեց կիրք կլած. թշուառու

Բնական սրայ գիւտ, վշտացս խնայէ : Եւ
 վեզերքք կեցած քեզի օգնութեան մի կան
 չնր անգ ժողովոյն՝ որ խզուելու վրայ է :
 Եւնցուի մի սուգեա քեզի այն եղէզն՝ որ բա
 մին երես կը ձեռնաբ :

Ո՞վ բարեկամ, սպասախօսնեց Մազ
 դարիւնէ իրարու կրթընինք, և այն արեւն
 Բչնամի քովին երու կը յաղթենք, իրարու
 օգնութեան ձեռք երկընցընենք, և մեկ
 տեղ կը խաղապինք այն ալիքէն՝ որ զմեզ
 կլեր կը սարաւնայ . մէկտեղ ջանք ընելով
 կը հասնինք ծովեզերքը, որ ալ չեմ գրտ
 նտար ես՝ թեպէտ որ անանկ կը կարծես :
 Քնդ տեսնամ, Մաւրիտիոս, կտրիճ եզիր .
 փոխանակ լայու ու ինքզինքդ թողելու,
 ելիք հանգնէ . գիտնաւ որ մահն անու
 զոն մին է . սարէ մերջայէս՝ մարդ ի
 դիր : Այերանցն և եթ՝ բեղնաւոր է . միայն
 գիտնալու է ճանչնալ զայն ու սիրել : Ազ
 քապ ենք . բայց ինչ բանի համար տղերք
 է մեզի Սաստուած բանականութիւն . ոյժ
 և ստուգըմբան : Մենք ալ անանկ ընենք
 ինչպէս որ կրնեն այնչափ մեզի նման
 մարդիկ, ինչպէս որ ատենից բրին մարդի
 դունին և պաղետը . իբրև որդիք Սաստ
 ւոյ աշխատինք :

Այս ատրասնույն հեռացոյց նկարը ա
 խորակելի մը չանցաւ Մաւրիտիոսի, որ ար
 համար հութեամբ և բարկութեամբ մը
 ինչ և ինչ, եւ ալ խաղաղիկներ շինեմ,
 հարցուց ուսերը վեր վեր թօթմելով :

— Ինչո՞ւ չէ՞ հայրդ, որ քեզի պէտքուստ
անհուսահան էր, որչափ շինած է՝ անտոնց
մէ » :

— Մաւրիափոս ոտքի վրայ ելաւ և ներկու
անգամ խուցին մէջ վեր զոտքս պարտանչեմ
ետքը՝ եկաւ Մագդաղինէի գիւմարց կայանէ
ցաւ :

— « Մաւրիափոս, բարի դիտաւորաւ
թեան մը կը սպասեմ քեզմէ, աղաղակնոց
ընտիր օրհորդը » :

— Աղէկ աղէկ, որպէս զի քան ըլլաս
ուզածդ՝ կ'ընեմ քեզի համար, զորն որ աչ
պահովապէս ինծի համար չէի ընէր. է՞ս
պիիմ » :

— Ենտրեպիւղ եմ, սիւ աղքատիկանա, բ
սաւ Մագդաղինէ սիրտը ելած. ահ, աղ
նիւ ես, և ես գիտէի որ չես մերժեալ դիտ
Առաւօտ ու իրիկուն պիտի աղաչեմ Աս
տուծոյ որ իր սրկնութեանց ցօղը դիտող
վրայ հաթեցընէ :

— Աստուած չատբան ունի ընկրուր և
իրաւցընէ այսպիսի պզտիկ բանի մը հա
մար չարժեք իրեն նեղութիւն տալը և երա
պիիմ ես. բայց այս սրտմանով որ երբ
քու վիճակդ ապահովցընելու ըլլանք, ետ
ալ ազատ ըլլամ և իմ վիճակին տէր » :

— Բնական է, պատասխան տուաւ ա
րիորդը. ես արդէն կարգաւորութիւններ
մտքիս մէջ պատրաստած եմ, որունց վրայ
եղբայրաբար կը խօսինք. և առաջուցմէ
ապահով եմ որ պիտի հաւանիս անոնց » :

Աստուծոց և քու սգնականութեամբդ՝ երկրաւորքի ինձի բաւական է վայելուց մեծակի մը հասնելու համար :

ուրդ վերջն աւարի . երկու աւարի կ'ուզիս , առջեւս ահարցոց երիտասարդը՝ առանց ծածկելու քրտապանները :

— Ի՞նչ , շատ բան մըն է որ ուզածս . ապահովեցիր որ ամէն ջանք կ'ընեմ կարճեցնելու բառ կարելուցն այս փորձի ժամանակը , ըսաւ Մագդաղինէ տխրութեամբ :

Մաւրիտիոս խօսակցութիւնը լննեցուց՝ գիշտազնութեամբ մը գիշտութեան նշան տարով :

Այս միջոցիս Արսուլա ալ չկարենալով համբերել թաթառի մը պէս խաւցին մէջ վառեց ու իր երիտազարդ տեղոյն տիրուքը վերջ պիտեցաւ . որ նեղացած հետացաւ : Իրմէ այսպիսի տխուր զեղմունքն ալ խորձեցաւ վիճակի մէջ շտաբով և դնաց պատուհանի մը առջև անշարժ կեցած ու ձեռք ձեռքի վրայ դրած . սկսաւ փափոխակի այն երկու օրիորդներուն զայրազին աչքով նայիլ , մտածելով որ իրեն ծանրութեան ձեղան ուն վրէժխնդրութեան ախարժ կը գրաւարատէն :

Սակայն խիկուան մութը կը կոխէր . երկրորդ օրուան ձգեցին ընելու կարգաւորութեանց հոգը , և Մաւրիտիոս տարաւ զՄագդաղինէ ինչուան այն փորրիկ պանգոկին դուռն՝ ուր իջեր էին երկու ճանապարհորդ օրիորդները : Ճամբան Ար-

սոլա գեղացւոյ հարցմուկներ կ'ընէր իրեն և ծիծաղական բաներու վրայ կը սքանչանար . խեղճը փողոցներուն լուսաւորութիւնը հասարակաց ուրախութեան անտարակուսելի նշան մը սեպելով , և տօնացոյցին սուրբերէն զատ հանդիսի ուրիշ առիթ չկարենալով ըմբռնել՝ միամտաբար հարցուց որ արդեօք սուրբ Պապուէյնի պատուոյն համար էր որ քաղաքը լուսաւորեր էին : Թէ որ ուրիշ պարագայի մէջ եղած ըլլար Մաւրիտիոս , շատ պիտի զուարճանար այսպիսի հարցմուկներէ . բայց աս վայրկենիս վերջին աստիճանի բարկացուցին անոնք զինքը : Գետեզերքէն ետ դարձաւ Մաւրիտիոս , և երբեմն երբեմն անյագ աչքով մը կը նայէր գետին սև ու խորին ջրոյն վրայ , որ կարծես թէ կը հրաւիրէր զինքը : Երբօր իր խուցը մը տաւ , շիտակ գնաց ատրճանակներուն տուփը բացաւ . քանի մը վայրկեան բորբոքեալ ու տխուր նայուածքով մը զննեց զանոնք , և յետոյ

— « Քնացէք , ըսաւ՝ խուփը՝ կամաց կամաց գոցելով . քնացէք , ով հաւատարիմ բարեկամներս , մինչև այն ազատութեան օրն՝ որ զձեզ արթնցընելու պիտի գամ » :

Երկրորդ օրը Մաւրիտիոս անկողնէն որ ելաւ՝ քանի մը ժամ անհանդիստ քուն ըլլալէն վերջը, կ'ամբշնար իր ցուցուցած տկարութեանը վրայ, կը կատողէր Մաղդաղինէի դէմ և իր անձին ալ կը զայրանար: Ինչ փոյթն էր իրեն իր մօրաքեռ թոռան խեղճութիւնը, և ինչ պարտաւորութիւն կրնար ունենալ այդ օրիորդին. ինչ իրաւունքով եկեր էր անիկայ իրեն ապաւինելու. անոր դատաստան կորսնցընելն իր յանցանքովն եղեր էր: Ինչո՞ւ համար այն միջոցին որ մահուան գիրկը նետուելու վրայ էր՝ պիտի բռնադատուէր ինքը ապրելու և խնամակալի պաշտօն կատարելու, միայն այն պատճառին համար՝ որ իր մօրաքրոջն աղջիկը, զոր ամենևին չէր ճանչցած, անդիի աշխարհ երթալու միջոց խելքը փչեր է Գաղղիա խաւրելու իր դեռահասակ աղջիկը. միայն այն պատճառին համար՝ որ գերմանուէի օրիորդ մը,

Ը

որուն գոյութեանը վրայ հազիւ կ'անհաս
մը կրնար ունենալ և որուն վրայք հոգը
չէր եղած, աշնանային իրիկուն մը եկէր
Վալդրուսի գուռը զարկեր էր: Ո՛վ առ-
ւեր էր ազգականաց՝ իրենց մօրաբեր թոռ-
ներուն կենացն առաջնորդելու պաշտո-
նը. ապա թէ ոչ՝ ինչ տարբերութիւն կ'ը-
լար քրոջմէ մը: Ուրիշ կողմանէ՝ Մազգա-
ղինէ ալ գեռահասակ չէր. քսանուերկու
քսանուիրեք տարուան կար. և այս հասա-
կին՝ որը աղջիկներն ալ օգնութեան կարօտ
չեն: Մազգաղինէ առանց ազգասուռմի
ըլլալովը կը զեղծանէր այս բանիս մէջ:
Եւ թողուք աօրկայ, ինքը ինչ կրնար ը-
նել անօր համար, պարզապէս խօսելով.
հարստութիւն չէր մնացած քովը. ստա-
ցուածք մը չունէր, և ոչ իսկ իր բնակա-
րանին կահկարասիքը, որ սոսն վարձուց
տեղ պիտի տրուէին: Ինքը իրեն կամքովը
միայն դրեր էր ինքզինքն սպաննելու, և
այն վիճակի հասած էր, որ ուրիշ ու և իցէ
որօշմունք մը մեծ տաղանապէ՛ մէջ պիտի
խոթէր գինքը: Աշխատիլ. ըսելը գիւրծն,
բայց երբոր մէյ մը բարուց ապականու-
թիւնն ու անգործութիւնը կ'արմատանան
մարդու վրայ, հեշտ բան չէ կարգի կա-
նոնի ու արխատութեան վարձեցընել
ինքզինքը: Վերջապէս՝ Մաքրիստոս անա-
չառ անկողնասիրութեամբ մը իր հոգառն
չափը կը մտածէր. գիտէր թէ Սիկապոնի
ժողկալութիւնն ու Յովնեփայ համես-

տութիւնը շունէր . և թէպէտ իր մօրաքեն
թողը ոչ գեղեցիկ և ոչ ցանկալի կ'երևար
երեն , սակայն ինքզինքը կը ճանշնար :
Չափեր էր իր սրտին խորերը , և կը տես-
նար . այն տիղմն որ ութ տարուան անցու-
ցած կեանքը թողուցեր էր հոն . կը գու-
շտակէր ար առաջին տնակնունելի հարուա-
ծին քոյւր այս տիղմը , որ այսօրուան օրս
անշարժ էր , կրնար յուզիլ ու սրտին ե-
րեան երբէ :

Երբոր այսպիսի խորհրդածութեանց
մէջ կը թափառէր , և առջի իրիկուան
տուած խոստովութիւնները չպահելու կը
պատրաստուէր , իր մօրաքեն թողը Որտո-
լայի հետ՝ ժպտելով խուցը մտաւ : Մագ-
դաղինէի հազուատը շատ պարզ ըլլալով ,
Մաւրիտիոսի աչքին՝ որ երկայն ատենէ 'ի
վեր՝ փառաւոր հազուատներով դարձա-
րուած կանայք տեսնելու վարժած էր՝ հա-
սարակ աստիճանի կնկան մը պէս երեցաւ :
Գծուարին բան է որ համեստութենէ համ-
չառնողը՝ միանգամայն կորսնցուցած չը-
լայ ճշմարիտ գեղեցկութեան բնածին ըզ-
գացմունքն ալ , որովհետև այս երկու ըզ-
գացմունքները ներքին զօդովմը կապուած
են իրարու հետ : Իսկ Որտոլա , որ իր ա-
մենէն հարուստ դարձերը վրան առեր էր ,
իր երկրին օրիորդներուն զգեստն հա-
գուած էր , արծրթէ գինդերով , կարճ վը-
տաւակով , տձև գլխարկով , զոր աւելի
ազեղցուցեր էր Մաւրիտիոսի հաճոյական

երևնալու գիտաւորութեամբ : իր ազգե-
րաց ուժովը , մարմնոյն գիրովթեամբն ու
ակտաներուն ճերմկութեամբն ու կարու
մրադեզ չրթունքներովը՝ փարսալիս մը հե-
ռաւէն կ'իմացընէր Վիմօժի երկիրէն զգլխաւ
Մագդաղինէ ներս մտածին պէտք , իբրև
թէ իր ազգականին շուարու մը գիտցած ըր-
լար՝ քովը նստեցուց զինքը , և առանց ժա-
մանակ թողլու որ առջի իրիկուսան որոշուած
բաներուն վրայ խօսք բանայ՝ սկսաւ խնա-
ցընել իր միտքը թէ ինչ կերպով կ'ուզէր
որ իրենց կենացը կարգ գնեն : Կ'ըսէր թէ
առաջին գործքերնին այն պիտի ըլլար՝ որ
առանձին թազի մը և մի և նոյն ատան մէջ
երկու պզտիկ բնակութիւն գտնեն , մէկը՝
Մաւրիտիոսի , մէկայն՝ իբրև և : Արտալայի
համար , ուր ազքատաբար և աստատուին՝
ինչպէս որ ասկէ ետքը իրենց խեղճ վիճակ
կին կը փայլէր : Մագդաղինէ իր նաւաբե-
կութենէն քանի մը ազամանդ փառլացու-
ցած էր , որոնք ազնիւ մարդիկ զօճհայն
տուածներն էին , և զորոնք առանց խնդր-
մանքի հետը բերած էր : Անոնցմէ հաս-
նած գիններնին պիտի բաւէր իրենց գիտե-
ղութեան և միանգամայն իրենց առաջին
պիտոյքներուն ծախքին : Բաւական էր օր
հաստատուն ձեռք մը կառավարէր զինքը
և հաւատարիմ սիրտ մը պաշտպանէր :
Մագդաղինէ պիտի կարենար իր կեանքն
սպահովցընել և իր քմացն յարմար բոցն
մը շինել : Կարծ էր ասղնեգործութեան

մէջը և անհամարապէս սոցեոզ ու մեծաբը
տառք քաներու մէջ, որ հրաշարի փառիցաւ
թիւն ա հարաարեւութիւն մը ունէին չոր
բանաւածքները: Փայտի վրայ թռչուններ
ու ծաղիկներ կը նկարէր, որոնց երբոր
վեպնին արուեստ ըլլար՝ արեւադարձին
տակը՝ անոք աշխարհաց ծաղիկներուն և
թռչուններուն կենդանութիւնը կ'առնէին:
Կրնար զբաշխակի աւերդի դաս առլ: Վեր
ջապէս, Յրէզնը տիկինէն հարաարեւապէս
ստրվելի էր կիտուածանկարը. և չեմ գի
տեր թէ արդեօք մարդիզուհւոյն վրայ ու
նեցած մեծարանքին համար, չէ նէ մի
միայն շահառէտ միջոց ասիկայ ըլլալուն
համար էր: որ իր յոյսը այս արուեստին
վրայ դրել էր: Քչաւոր տաղանդ չէր պակ
տէր իրեն: և ամէն բանէ աւելի այն ան
վնկեր հարընութիւնն աւնկեր՝ որ արդելը
ներքէ կ'արժանաւորէ: այն ինքնածին աղ
գաթաթիւնն՝ որ ատանց բանութեան ա
ռաջ կ'աւելայ: այն քանչելի զուարթու
թիւնն՝ որ կ'երգէ և կը ծիծաղի կամբին
տղիւստած: արտերը: Քչաւոր գրեթէ որո
շուածի տղիւ էր՝ որ Մագդաղինէ կիտուա
ծանկարի վրայ փորձ ընէ. տղու մը պէս
կ'աչրախանար ինքը որ Քարիզ այն կեր
պով պիտի ապրէր՝ ինչ կերպով որ ցանկա
լի ճարտգիզուհին՝ ատենօք ապրեր էր ի
Նիւրեմբերկ: Յիշելու է որ ասիկայ եղած
էր միշտ իր փափաքը. կրնանք ինչուան
հաստատել՝ որ գրեթէ իր հարստութեան

կորսանանք վրայ չէր ցաւէր այս կորսանա-
նէ : Իսկ Մաւրիտիոսի թող կուտայք որ
ազատ ըլլայ ուղածին պէս գործներու եւ իր
ներքին ազդեցութեանցն հարաւորներու .
ուրիշ բան չէր ուղէր անկէ՝ բայց երբ իր
առաջին քայլերուն , որ աշխարհիս և փոքր
ձեռու ասպարիզին մէջ պիտի դնէր , նե-
ցուի ըլլայ և ուղղէ : Երկու տարիէ վերջը
ինչպէս որ խօսք գրեւ էին , Մաւրիտիոս
գարծեալ իր անկախութիւնը պիտի ստա-
նար ու իր վիճակին նորէն տէր պիտի ըլ-
լար : Միայն թէ ինչուան այն միջոցը՝
Մագդաղինէ իրաւունք պիտի ունենար ի-
րեն յենլու՝ իրրե թէ իր եղբայրն եղած ըլ-
լար , և թէ մարդկանց շարախօսութենէն
խալըսելու ու թէ Մաւրիտիոսի խնամա-
կալութիւնն աւելի մեծարելի և ազդոյ ընե-
լու համար՝ Մաւրիտիոս ուրիշներու դիմաց
պիտի ձեւացընէր թէ անոր եղբայրն էր , և
կը յուսացուէր որ աստուածային բարիու-
թիւնը չէր շարժէր այսպիսի սուտի մը վը-
րայ : Այս ամէն բաներս այնպիսի վառ-
վառն սղուով ու մոզական քաղցրութեամբ
ըսաւ Մագդաղինէ , որ Մաւրիտիոս ա-
ռարկութիւն մը չկրցաւ ընել , և այնպիսի
չնորհալից ու զուարթ զուրցուածքով , որ
Մաւրիտիոսի գէմքին վրայ երբեմն երբեմն
ժպիտ մը կը ծնանէր : Եւ սակայն երբոր
օրիորդը խօսքը ըմբնցուց , Մաւրիտիոս
զուխը այնպիսի կերպով մը շարժեց , որ
կիմացընէր շատ համոզուած չըլլալն ու

չախարհից բաց Մազգագինէ մէկէն ուղ-
տի վրայ երաւ . և առանց տարակուսելոյ
մը անոր մեղքք բռնելով

• Եղի Ռեազիականս , ըսաւ , այսօրու ընէ
իկ զնոյն պիտի քիտի մեր եղբայրութիւնը :
Ինչքէն ալ որ հայրդ իրեն աղջիկը կը կան-
չէ՞ր գիտն : և իր ասնեսասիրելի աղջիկն էի :
Անգամը ձգ . ունինք այսօր , չփախցրնենք
մեզքէ . ու կրթանք շափաւոր տան մը մէջ
մեզի . յարմար երկու բնակարան փրն-
որուենք : Իսկ ընտրէ որ թաղն որ կ'ուզես .
միայն թէ շուտ ըրէ դուրս ելիր այս բնա-
կարանէն , որուն նոխութիւնք քու աղ-
քատութեանդ նախատինք կ'ընէ : Արչափ
կրնաս նէ շուտ ելիր , և ջանա , աւելցուց
Մազգագինէ զուարթագին , հոս ձգելու
այդ տխուր և անանորժ կերպն՝ որ քու
հատակիդ տրուած չէ , և որ շատ գէշ կ'ե-
րկայ զրադ՝ գիտնաս :

• Եւ ասանկ և անանկ , երիտասարդ
սեբր , ըսաւ բարի Արսոյան . խնամալու ,
խանդալու , զուարեանալու է : Ինչ քաւ-
մբիմի տարուան չկաս . հագիւ թէ սուրբ
Նիքիտի տօնին՝ օրը այդ տարիքը կ'առնես .
քնն յազուար հասակ : Տեսնաս թէ ինչ ազէկ
փեանք պիտի անցրնենք իրեքնիս մէկտեղ ,
և քնն : Ինչանք պիտի տանիմ երկուքնուդ
վրայ : Մի հագար , ամէն բան կորսնցու-
ցած չես , որովհետեւ առողջութիւնն ու ե-
րիտասարդութիւնը կը մնայ քեզի , և ես՝
քու աննգակից քոյրդ , որ ինչպէս 'ի Ապ-

դրավէր՝ այնպէս հիմա ալ տե՛ս ցորեկէն պարսիմատներ ու շրարշներ պիտի շինեմք քեզի համար, որ այնչափ կը պիտի լինուին :

Մտադարձինէ այս միջոցին ասուելի հետոք կը տանէր զՄարիտիոս, որ մահապատրաստ մը պէտ կը թողուր որ մահուան տեղը տան նին դիմար : Գռնէն դուրս ելլալու ատենը, Մարիտիոս դարձաւ տեսաւ Ռոմայուն տրեռեկէն կու դար :

— « Ի՞նչ, դու ալ մեզի հետ գտրու կ'ելլաս, հարցուց դժկամակած՝ վերէն վար մէյ մը կըռելով գանիկայ : »

— Ո՛հ, աս է աղաւորը, մէկտեղ չելլամ կըսես, աղաղակեց ազնիւ օրիորդը անմեղ զարմացմամբ մը : Ով երիտասարդ տէր իմ, կարծես որ ազգասներուն ցոսցընելու համար հազերեմ ասի զգեաւաներս :

— Բայց, ողորմելի ազջիկ, ըսաւ իրեն Մարիտիոս հազիւ բարկութիւնը բռնելով, չես իրաւեր, չես ուզեր հասկընալ արբորդ անցնելու փողոցներն ալ : Անջ ցրտ ցանք մը պիտի սեպուիս :

— Այս կը հաւտամ, երիտասարդ տէրս, պատասխանեց Ռոմուս պարծենալով մը : Բայց ես կ'ուզեմ ցուցնել Բարիոցոց թե՛ վարդրավէրի օրիորդներն ինչ կ'արեկնուին : Զիս տեսնողները պիտի ըսեն . Սհա՛տ Մարիտիոսի աննդակից թոյրը . և կարծեմ թէ ասիկայ քեզի պատիւ մըն է : »

Մարիտիոս յանձն առած ըլլալով մինչև

ի գիրաց խմելու բաժակը , տխուր յուսա-
հանալիքներով և նշան ցուցուց պատաս-
խանուց՝ ասել : Քանի մը վայրկեան վերջը՝
խղճելով միմեանդ պաշտարներուն մէջէն կեր-
թոյրիս : Մտադրագինէ ազգականին թէն
անցածս և Ռոստըս ետեւէն՝ զուարթ երե-
տով եւ՝ ձեռքերը ազդերաց վրայ կախած՝
ժողովրդեան պիտներուն մէջէն ճգրելով
կանցնէր , բոլոր առաջաստները բացած
և բոլոր գրոշտիներովը զարգարուած նա-
ուս մը պէս : Նոյն օրը այն հանդիսաւոր
օրերէն մէկն էր , որ Բարիզ իր ոսկեզօծ
վանդակները կը բանայ ու իր գեղեցկա-
գոյն թաշունները կ'արձրկէ , այն զուարթ
արեւերէն մէկը՝ որ քաղքին փառաւոր
փողոցներուն մէջ հագրուած սրգուած երի-
տասարդներու և զուարթ կանանց բազ-
մութիւն մը կ'երևցնեն : Մաւրիախոս շու-
տով կը ջանար փախչելու այն տեղերէն ,
որոնք ատենօք այնչափ անզամ տեսելի
էին իր սիրականներուն և իր ձիերուն զեղ-
խութիւնը . թէպէտ շատ մեծ ցաւ կը պատ-
ճատէր ամիսայ Ռոստըսի , որուն ամէն
մէկը քայլը յանգիստանակ մըն էր , այնչափ
տանջատուութիւն կ'ընէր ժողովրդեան վրայ :
Յիրաւի հան կենալու բան չէր . թողունք իր
հագրուատը , որ անցնողներուն հետաքրք-
րութիւնը կը շարժէր , Ռոստըս կարծելով
թէ ինչպէս ՚ի Նէովի-լէ-Պուա՝ ասանկ ՚ի
Բարիզ ալ ամէնքը կը ճանչնան իր երիտա-
սարդ տէրը , երբեմն երբեմն բարձր ձայ-

նով անմասկան հարցմունքներ կ'ընէր անոր, որպէս զի յայտնապէս տեսնուի որ ինքն ալ անոր ընկերութենէն է : Իսկ ուր որ բաղմութիւնը շատ խիտ կ'ըլլար, Մարիտիոսի զգեստին ծայրէն կը բռնէր՝ որպէս զի աչքէ չկորսնցընէ զան ու չմոլորի : Մարիտիոս երբեմն կէս մը կը դառնար իրեն և կայծակնացայտ աչքով մը կը նայէր, որուն խեղճ աղջիկը անմեղ ծիծաղով մը կամ գեղացւոյ քաղաքավարութեամբ մը կը պատասխանէր : Թշուառ Մարիտիոսը պատժոյ մէջ էր. սկզբան մտածեր էր որ կառքով մը երթան՝ որպէս զի ամօթ չքաշէ . բայց իր մօրաքեռ թոռն անգրաւ դարձընել տուեր էր իրեն որ ալ այսպիսի ճոխութիւն մը իրենց պաշտութեանը չէր վայլէր : Երկինքը պարզ էր, փողոցներուն յասակները չոր : և բնական խեղճն ալ կը ցուցընէր որ կառքով բնակարան փնտռելու չերթըցուիր : Մարգարէի մէջի գալով, լճի մը եզերքը կեցած օրհորդ կովուհւոյ մը պէս՝ արագաքայլ առաջ կ'երթար՝ առանց շփոթելու կամ դարձանալու չորս կողմն եզած աղաղակին ու շարժման վրայ, և առանց անգրադառնալու : Այն կիննի կատաղութեան վրայ՝ զոր իր ընկերը չէր ջանար ծածկելու, մաքոնք դրատեան ըլլալով իրենց բռնելու կենաց ընթացքին վրայօք, և նոր կարգուած հարսի մը ուրախութիւն ցուցընելով, որ կը վազէ առտնին տնտեսութիւնը ձեռք գտնելու :

Ասանկով գետին ձախակողմեան անփունքն անցան : Լուվրի մօտ՝ գետին եզերքէն երթալու ատեն , Մաւրիտիոսի մտքէն անցած դիպուածն հանդիպեցաւ : Ճամբայ որ բացին բաց կառքի մը , զոր կայծակի պէս կը տանէին երկու Մեքլէմպուրկի ձիեր , անոր մէջի նստած ուրախ ընկերութիւնը ճանչցաւ զՄաւրիտիոս : Ասոնք ամենէն փափուկ ծաղիկներն էին այն մարդկանց դասին , որոնց մէջ ապրեր էր երիտասարդը : Մանր կերպով մը չորս կամ հինգ թեթեամիտ զլուխներ խորին՝ բայց կեղծաւորեալ մեծարանքով մը ծնւցան իրեն . և երբոր կառքն անցաւ՝ սիկաւրի և րաչուչիի սուր հոտ մը թողլով , խեղճ երիտասարդը , որ դեռ անչարժ կեցեր էր նոյն տեղը , երկար ծիծաղներու ձայն առաւ : Այս վայրկենիս՝ սաստիկ փորձութիւն զգաց Արստլան ու Մազդազինէն Սեյն գետին մէջ նետելու :

Թէ որ տունէն դուրս ելած ատենը հաստատապէս միտքն ալ դրած ըլլար առջի իրիկուան տուած խոստամունքները պահելու , այս բրած շրջադայութիւնն երկու դնաակի ծանրութիւն տանող սլատժաւորի պէտ՝ քաւակաւ էր ցուցընելու իրեն յայտնապէս որ խոստացած անձին նուիրումը՝ իր հարողութենէն վեր էր : Այս տեսակ կեանքով երկու տարի ապրիլը , երկու տարի թեռնիչ ըսել էր : Վակայն Մաւրիտիոս կը գգար միանգամայն որ մարդ չէր ըլլար՝

Թէ որ չհսկէր այս երկու խեղճ արարածներուն վրայ, որ Բարրիզու մէջ մեղաբան էին, բաց իրմէն ուրիշ առաջնորդ և ներջուկ չունենալով: Թեքուտ անարէնութիւն մը դործելէ ետ չէր կենար: քայք. վատութիւն մը ընելէ կը զարհուրէր: Յրինակի համար, ժամէ մը 'ի վեր. ներսէն գրգիռ մը կը զգար Որսորայի վիզէն բռնել ու խորհրդել. սակայն անգթութեամբ երեսէ վտղու երկու օրիորդներ՝ որ իրեն պաշտպանութեանը տակ ամբանալու եկեք. էին, ան չէր կրնար ընել:

Ուտի թէպէտ Թագոյն և բարկութենէն կը դողար Մաւրիաիոս, առաջ կը տանէր ճամբան այն վահանանովն՝ որ յանձնեք էր իրեն Մազգաղինէ: Որովհետեւ օրիորդը կ'ուզէր Բարրիզու առանձին՝ միանգամայն չափաւոր աստիճանի մէկ կողմը քաղաքի, Մաւրիաիոս մտածեք էր որ լիբրոսնապարի մօտ տեղուանքն իր մօրաքեռ թոռան փափաքը կրնային չեցընել: Ուրիշ կողմանէ ալ՝ ենթադրելով թէ յանձն առնէք քանի մը ամիս Մազգաղինէի հետ անցընել, գոնէ այս թաղիս մէջ՝ որ գիտութեան և ուսումնական պարապմանց ապաստանն էր՝ գրեթէ ապահով կրնար ըլլար որ ճանչուորի մը դէմքի պիտի չհանդիպէք երբեք: Բետ զուր տեղը մերձաւոր փողոցներուն մէջ փնտռելու բնակարան մը, որ գեաահասակ գերմանուհւոյն բանաստեղծական բնածին զգացմանցն ու պարկեշտ փառա-

սիրութեանը յարմար երևնար, Գիտարանին չըջանալայրը շտիպւոր կերակուր մը կերան, որ ամենեւին չփարատեց Մաւրիտիւսի գառնութիւնը, որովհետև հինգ յարկով տուներ շատ ելած իջած ըլլալով նոյն տըր արջապօ ժուժկալութեան չէր կարողանալու : Այս ալ աւելցրնենք քանի որ անձնասպանութիւնն որոշելէն ետքն ալ, անապատականի մը սովորութեամբը չէր վարուած Մաւրիտիոս : Մասնաւորապէս սպասուող ճոխութիւն կը պահանջէր, և թէպէտ ամէն բանէ տաղտկացած էր, սակայն չէր համազուէր որ կենցաղասէր շնորհալի մարդու մը, թէ և մտքը դրած ըլլայ հրազէնքով մը երկրորդ օրն իր կեանքը վերցրնելու, նոյն պատանաբաղով երկու տարբեր կերակուրներու դոչիլ վայել : Շրթանց ծայրովը խմեց, ափաներուն ծայրովը կերաւ : Արսուլա ճիշտանլով, կրկնց իր առջև դրուածները . Մաւրիտիոսն է ըսաւ որ բոլոր կենացը մէջ ապանկ ախորժեւի կերակուր մը չէր կերած : Երբոր անկից ելած կը գառնային, դեռ ևս աչքով ասդին անդին փնտռելով թէ արդեօք պատշաճ տուն մը կը գտնան, միաձայն հաւանութեամբ փողոց մը մտան, որուն անմարդի տեղը մէկէն ի մէկ Մաւրիտիոսէի հաճոյացեր էր . առանձին փողոց մը, որուն մէկ ծայրը Անկարոյ գիւտոտրաց պողոտարը կը հանէր, իսկ մէկալ ծայրը՝ Պագ փողոցը, որուն ուղին անուանի ըրաւ

Շղատի տիկինը : Բնակչաց անձանն ու ճարտարութեան յառաջագիմութեանը նպաստով , հինգ հարիւր տարի շերթար՝ բազմաշխարհիս մէջ ապաւէն մը պիտի չմնայ պռանձնական մտածութեան կեանք սիրողներու : այսպէս այսօրուան որս տեղ փողոցը կրկին կարգ մը ունի առաւել կամ նուազ նոր , տղեզ և անարտէսա տուններու : Այն փառնը գեղ մը կրնար սեպուիլ կամ դոնէ կանաչագեղ արուարձան մը տերեւներու մէջ պահուրժած պղտի քաղաքի մը : Գարնան , հոն մտած ատենդ՝ եղբեմանիններու հօտը կամ ծաղկազարդ թմբիններու՝ բուրմունքը կը ծծէիր : Պատերը ցանկի տեղ կը ծառայէին , և անոնց մէ վեր բարձրացած ակասիաները , սուտ երենոսի ծառերն , ու Հրեաստանի ծառերը կը շարժէին իրենց անուշահոտ սղկոյզները : Պարտէզներու խորերը , ուր սոխակն ամառուան գիշերները կերգէր , վանդակապատ դռներու ետե կը տեսնայիր աշուր անմուռնչ պալատներ և գեղեցիկ տղայք որ կանաչին վրայ կը վաղվրդէին : Միով բանիւ , Բաբելոնի փողոցն էր ասիկայ , որուն աս անունը թէ՛ իր պարտէզներուն , և թէ՛ ատենօք Շամիրամի հին քաղքին եպիսկոպոսին հոն բնակած ըլլալուն պատճառաւր տրուած էր : Արսոյա Վալդրավէր կարծեց ինքզինքը , և հարցոց թէ

! 86. Օհլամուր աղան :

մը կողմէն կը վազէր Վիենն դետը : Մագդաղինէ աղաղակեց թէ իրեն համար երջանկութիւն էր այս դեղին մէջ բնակիլն , որ Բարիդու մէջ զարտուղութիւն մըն էր : Մաւրիտիոսի ամէն բան անտարբեր էր : Օրիորդին փափարը կատարուեցաւ : այն սակաւաթիւ տուներուն մէկուն մէջ որ անդին անդին կ'ընդհատէին գիւղական տեսարանը՝ երկու պզտի բնակարան դրտաւ , իրարու մերձաւոր՝ միանգամայն իրարմէ զատուած . մէկը՝ Մաւրիտիոսի համար , երկու սենեկով . միւսը՝ իրեն և Ուտլայի համար , իրեք խուցով . ամէնն ալ բարձր դիրքով և տանիքի տակ , ըսյց հովանաւոր ծառերու վրայ նայող էին : Իմ կարծիքս այն է , Մագդաղինէինն ալ նոյն էր , որ լաւագոյն է մարդ իր պարտուհանին առջև կանաչութեան շիւղ մը ունենայ բան թէ Վուգրի սիւնազարդ տեսքը :

Մասնակ լմընցաւ այն օրն , որ կրնար նախկին ճաշակ մը տալ Մաւրիտիոսի այն գրաւարձութիւններուն , որ իրեն համար պատրաստուած էին : Երկրորդ օրն ու հետեւեալ օրերը աւելի տաժանելի և աւելի այնատաղի եղան : Բաւական չէ թուփն ընտրելը բոյն դնելու համար , պէտք է նաև խոտերու մազեր , փետուր և մամուռ բերել : Մաւրիտիոս բռնադատուեցաւ Մագդաղինէն խանութներ տանելու , ամէն բան տեսնալու քննելու , դիներու վրայ վէճեր կռիւներ լսելու , ինչքն որ բն-

կորսանանք վրայ չէր ցաւէր այս կողմաւ
նէ : Իսկ Մաւրիտիոսի թող կուտայ որ
ազատ ըլլայ ուղածին պէս գործներս եւ իր
ներքին ազգեցութեանցն հարստակերու .
ուրիշ բան չէր ուզէր անկէ՝ բայց երբ իր
առաջին քայլերուն , որ աշխարհիս և վերջ
ձեռու անպարիզին մէջ պիտի գնէր , նեւ
ցուկ ըլլայ և ուղղէ : Երկու տարիէ վերջը
ինչպէս որ խօսք գրեր էին , Մաւրիտիոս
գարձեալ իր անկախութիւնը պիտի օտա-
նար ու իր վիճակին նորէն տէր պիտի ըլ-
լար : Միայն թէ ինչուան այն միջոցը՝
Մագգաղինէ իրաւունք պիտի ունենար ի-
րեն յենլու՝ իբրև թէ իր եղբայրն եղած ըլ-
լար , և թէ մարդկանց շարախօսութենէն
խալըսելու ու թէ Մաւրիտիոսի խնամա-
կալութիւնն աւելի մեծարելի և ազգոյ ընե-
լու համար՝ Մաւրիտիոս ուրիշներու դիմաց
պիտի ձեացընէր թէ անոր եղբայրն էր , և
կը յուսացուէր որ աստուածային բարկու-
թիւնը չէր շարժէր այսպիսի սուտի մը վը-
րայ : Այս ամէն բաներս այնպիսի վաւ-
վառն սղաով ու մոզական քաղցրութեամբ
ըսաւ Մագգաղինէ , որ Մաւրիտիոս ա-
ռարկութիւն մը չկրցաւ ընել , և այնպիսի
չնորհալից ու զուարթ զուրցուածքով , որ
Մաւրիտիոսի գէմքին վրայ երբեմն երբեմն
ժպիտ մը կը ծնանէր : Եւ սակայն երբոր
օրիորդը խօսքը ըմբոցուց , Մաւրիտիոս
գլուխը այնպիսի կերպով մը շարժեց , որ
կիմացընէր շատ համոզուած չըլլալն ու

չախարժիւրք բայց Մազզաղինէ մէկէն ուր
քի վրայ տեսաւ և առանց տարակուսելոյ
վր անոր մեղքք բռնելով

... արժի Բոգ ազգականս , ըսաւ , այսօրուրնէ
ի վերջ ախտի քիտի մեր եղբայրութիւնը :
Երջիջեալք ար հայրդ իրեն աղջկը կը կան-
չէք զիւր , և իր ամենասիրելի աղջկն էի :
Այժմեղ Լոգ անինք այսօր , չփակցընենք
մեզքէ ու Կրթանք չափաւոր թան մը մէջ
մեզի յարմար երկու բնակարան փըն-
արունկը : Իր ընտրէ որ թաղն որ կ'ուզես .
միայն թէ շուտ քրէ դուրս ելիր այս բնա-
կարանէն , որուն նոխութիւնը քու աղ-
քատութեանդ նախատինք կ'ընէ : Արչափ
կրնաս նէ շուտ ելիր , և ջանա , աւելցուց
Մազզաղինէ զուստթաղին , հոս ձգելու
այդ ախտը և անախորժ կեցողն՝ որ քու
հատակիդ տրուած չէ , և որ շատ դէշ կ'ե-
րևայ վրայդ գիտնաս :

... Հաւ անանկ է անանկ , երբտասարդ
տէրս , ըսաւ բարի Արսողան . խնամարտ ,
խաղաղութեամբ արեւանայու է : Ինդ քսա-
մբինը տարուան չկաս . հազիւ թէ սուրբ
Կիսկիլի տունին՝ օրը այդ տարիքը կ'առնես .
ինչ անգամը հասակ : Տեսնաս թէ ինչ ազէկ
փեանք պիտի անցընենք իրեքնիս մէկատեղ ,
և ինչ խնամք պիտի տանիմ երկուքնուդ
վրայ : Մի հազար , ամէն բան կորսնցու-
ցած չեա , որովհետեւ առողջութիւնն ու ե-
րիտասարդութիւնը կը մնայ քեզի , և ես՝
քու անեղակից քոյրդ , որ ինչպէս 'ի վալ-

դրավէր՝ այսպէս հիմա ալ տե՛ս ցորենեկ պարսիմատներու շրթաբշներ պիտի չիմեմք եղի համար, որ այնչափ կը պիտի լիցնայ ։

Մտազաւարիսէ այս միջոցին ստուգի հետը կը տանէր զՄարիտիոս, որ մահապատրաստ մը պէս կը թողուր որ մահուան տեղը տան նին գինը ։ Գռնէն դուրս ելլալու նստենք, Մարիտիոս դարձաւ տեսաւ Ռոմոլոն արեւակէն կու գար ։

— « Ի՞նչ, դու ալ մեզի հետ գտորս կ'ելլաս, հարցուց դժկամակած՝ վերէն վար մէյ մը կըսելով զանիկայ ։

— Ո՛հ, աս է աղաւորը, մէկտեղ չելլամ կ'ըսես, աղաղակեց ազնիւ օրիորդը անմեղ զարմացմամբ մը ։ Ով երիտասարդ տէր իմ, կարծես որ աղաւաններուն ցուցընելու համար հազերեմ Թոմի զգեստներու ։

— Բայց, ողորմելի ազգիկ, յաւա իրեն Մարիտիոս հազիւ բարկութիւնը բռնելով, ջնս դիտեր, ջնս ուզեր հատկոնաւոր բողոք անցնելու փողոցներուս մէջ, ջրաս ցանք մը պիտի սեպուիս ։

— Այո կը հաւտամ, երիտասարդ տէրս պատասխանեց Ռոմոլոս պարծենալով մը ։ Բայց ես կ'ուզեմ ցուցընել Բարիզոնոյ թէ՛ վաղորավերի օրիորդներն ինչ կ'արժեն ։ Ձիս տեսնողները պիտի ըսեն ։ Ահա Պալմա Մարիտիոսի աննդակից քայրը ։ Եւ կարծեմ թէ ասիկայ քեզի պատիւ մըն է ։

Մարիտիոս յանձն առած ըլլալով մինչև

ի գիրքը խոսելու բաժակը , տխուր յուսա-
հանառակ թեան մը նշան ցուցուց պատաս-
խանուոյ՝ անոց : Քանի մը վայրկեան վերջը՝
խորտակեալ պատմութեան մէջէն կ'եր-
թային : Մտազգացինէ ազգականին թեւ
անցած : և Ռոստը ետեւէն՝ զուարթ երե-
տով եւ ձեռքերը ազդերաց վրայ կախած՝
ժողովրդեան պիքներուն մէջէն ճգնելով
կանցնէր , բոլոր առաջատաները բացած
և բոլոր դրօշակներովը զարդարուած նա-
ւուս մը պէս : Նոյն օրը այն հանդիսաւոր
օրերէն մէկն էր , որ Բարիզ իր ոսկեզօծ
վանդակները կը բանաց ու իր գեղեցկա-
գոյն թաշունները կ'արձրկէ , այն զուարթ
արեւներէն մէկը՝ որ քաղքին փառաւոր
փողոցներուն մէջ հազուած սրգուած երի-
տատարդներու և զուարթ կանանց բազ-
մութիւն մը կ'երևցնեն : Մաւրիախոս շու-
տով կը ջանար փախչելու այն տեղերէն ,
որոնք ստենօք այնչափ անզամ տեսեր
էին իր սիրականներուն և իր ճիերուն զեղ-
խութիւնը . թէպէտ շատ մեծ ցաւ կը պատ-
ճառէր ասիկայ Ռոստայի , որուն ամէն
մէկ յարցը յանդիմանակ մըն էր , այնչափ
տալաւորութիւն կ'ընէր ժողովրդեան վրայ :
Յիրաւի հոն կենալու բան չէր . թողունք իր
հազոտատը , որ անցնողներուն հետաքրք-
րութիւնը կը շարժէր , Ռոստը կարծելով
թէ ինչպէս 'ի Նէովի-լէ-Պուա' ասանկ 'ի
Բարիզ ալ ամէնքը կը ճանչնան իր երիտա-
սարդ տէրը , երբեմն երբեմն բարձր ձայ-

նով անմահական հարցմունքներ կ'ընէրա-
նոր, որպէս զի յայտնապէս տեսնուի որ
ինքն ալ անոր ընկերութենէն է : Իսկ ոտ
որ բազմութիւնը շատ խիտ կ'ըլլար, Մաւ-
րիտիոսի զգեստին ծայրէն կը բռնէր՝ որ-
պէս զի աչքէ չկորսո՞ցընէ զան ու չմտա՞րի :
Մաւրիտիոս երբեմն կէս մը կը դառնար
իրեն և կայծակնացայտ աչքով մը կը նայ-
էր, որուն խեղճ աղջիկը անմեղ ծիծաղով
մը կամ գեղացւոյ քաղաքավարութեամբ
մը կը պատասխանէր : Թշուառ Մաւրի-
տիոսը պատժոյ մէջ էր . սկզբան մտածե-
ր որ կառքով մը երթան՝ որպէս զի ամօթ
չբաշէ . բայց իր մօրաքեռ թոռն անդրա-
դարձընել տուեր էր իրեն որ ալ այսպիսի
ճոխութիւն մը իրենց աղքատութեանը
չէր վայէր : Երկինքը պարզ էր, փողոց-
ներուն յատակները չոր, և բնական խելքն
ալ կը ցուցընէր որ կառքով բնակարան
փնտուելու չերթըցուիր : Մագդաղինէի
գալով, լճի մը եզերքը կեցած օրիորդ հո-
վուուհւոյ մը պէս՝ արագաքայլ առաջ կ'եր-
թար՝ առանց շփոթելու կամ զարմանալու
չորս կողմն եզած աղաղակին ու շարժման
վրայ, և առանց անդրադառնալու այն
կինճի կատաղութեան վրայ՝ զոր իր ընկե-
րը չէր ջանար ծածկելու, մտքովն զբաղած
ըլլալով իրենց բռնելու կենաց ընթացքին
վրայօք, և նոր կարգուած հարսի մը ու-
րախութիւն ցուցընելով, որ կը վազէ
առտնին տնտեսութիւնը ձեռք բռնելու :

Ստանկով գետին ձախակողմեան ամփունքն անցան : Լուվրի մօտ՝ գետինն եղերբէն երթալու ատեն , Մաւրիտիոսի մտքէն անցած դիպուածն հանդիպեցաւ : Ճամբայ որ բացին բաց կառքի մը , զոր կայծակի պէս կը տանէին երկու Մեքլէմպուրկի ձիեր , անոր մէջի նստած ուրախ ընկերութիւնը ճանչցաւ զՄաւրիտիոս : Ստանք ամենէն փափուկ ծաղիկներն էին այն մարդկանց դասին , որոնց մէջ ապրեր էր երիւստարդը : Մանր կերպով մը չորս կամ հինգ թեթեամիտ գլուխներ խորին՝ բայց կեղծաւորեալ մեծօրանքով մը ծռեցան իրեն : Եւ երբոր կառքն անցաւ՝ սիկարի և քաշուշի տուր հոտ մը թողլով , խեղճ երիտասարդը , որ դեռ անչարժ կեցեր էր նոյն տեղը , երկար ծիծաղներու ձայն առաւ : Այս վայրկենիս՝ սաստիկ փորձութիւն զգաց Արստլան ու Մագդաղինէն Սեյն գետին մէջ նետելու :

Թէ տր տունէն դուրս ելած ատենը հաստատագէտ միտքն ալ դրած ըլլար առջի իրկուտան տուած խոստումներն երբ պահելու , այս ըրած շրջագայութիւնն երկու գետակի փանրութիւն տանող պատժաւորի պէս բաւարան էր ցուցընելու իրեն յայտնապէս որ խոստացած անձին նուիրումը՝ իր փարոտութենէն վեր էր : Այս տեսակ կեանքով երկու տարի ապրիլը , երկու տարի ժեռանիլ ըսել էր : Սակայն Մաւրիտիոս կը զգար միանգամայն որ մարդ չէր ըլլար՝

Թէ որ չհսկէր այս երկու խեղճ արարածներուն վրայ, որ Բարիզու մէջ մտաբան էին, բաց իրմէն ուրիշ առաջնորդ և նկարող չունենալով: Թեղևտ անտէնտֆիւն մը գործելէ ետ չէր կենար: Բայց վարդաթիւն մը ընելէ կը զարհուրէր: Յրինակի համար, ժամէ մը ՚ի վերջ ներաէն զրգթո մը կը զգար Ռասորայի վիզէն բռնել ու իրող դել. տակայն անգթութեամբ երեսէ, թողու երկու օրիորդներ՝ որ իրեն պաշտպանութեանը տակ ամբանալու եկեր էին, ան չէր կրնար ընել:

Ուտի թէպէտ տժգոյն և բարկութենէն կը դողար Մաւրիաիտս, առաջ կը տանէր ճամբան այն վախճանովն: որ յանձնէր էր իրեն Մազդազինէ: Ռոտհեան օրիորդը կ'ուզէր Բարիզու առանձին՝ միանգամայն չափաւոր աստիճանի մէկ կողմը քաղաքի, Մաւրիաիտս մտածեր էր որ լիբրտանալու բն ժոտ տեղուանքն իր մտաբանութեան փառաբար կրնային շեցընել: Ուրիշ կողմէն է ալ ենթադրելով թէ յանձն տանէր քանի մը ամիս Մազդազինէի հետ անցընել, գոնէ այս թաղիս մէջ՝ որ գիտութեան և ուսումնական պարապմանց ասպարառն էր՝ գրեթէ ապահով կրնար ըլլալ որ ճանչուորի մը դէմքի պիտի չհանդիպէր երբէք: Բետ զուր տեղը մերձաւոր փողոցներուն մէջ փնտռելու բնակարան մը, որ գեաահասակ գերմանուհւոյն բանաստեղծական բնածին զգացմանցն ու պարկեշտ փառա-

սիրութեանը յարմար երևնար, Գիտարանին չբռնալու շտապը չտախարհէր կերակուր մը կերան, որ անենեկին չփարատեց Մաւրիտիւսի գառնութիւնը, որովհետեւ հինգ յարկով տուներ շատ ելած իջած ըլլալով նոյն օրը այդչափ ժուժկալութեան չէր պատրաստուած: Այս ալ աւելցընենք ըտեպէս որ անձնասպանութիւնն որոշելէն ետքն ալ, անապատականի մը սովորութեանքը չէր վարուած Մաւրիտիոս: Մասնաւորապէս սպասուց ճոխութիւն կը պահանջէր, և թէպէտ ամէն բանէ տաղտկացած էր, սակայն չէր համազուէր որ կենցաղասէր շնորհալի մարդու մը, թէ և միտքը դրած ըլլայ հրազէնքով մը երկրորդ օրն իր կեանքը վերցընելու, նոյն պատանաբաղով երկու տարբեր կերակուրներու դաշիւ վայել: Շրթանց ծայրովը խմեց, ահաաներուն ծայրովը կերաւ: Արտուած ինչ իտանլով, կընց իր առջև դրուածները. Մադդադինէ ըսաւ որ բոլոր կենացը մէջ առանկ ախորժեղի կերակուր մը չէր կերած: Երբոր անկից ելած կը գառնային, դեռ ևս աչքով տողին անդին փնտուելով թէ արդեօք պատշաճ տուն մը կը գտնան, միաձայն հաւանութեամբ փողոց մը մտան, որուն անմարդի տեղը մէկէն ՚ի մէկ Մագդադինէի հաճոյացեր էր. առանձին փողոց մը, որուն մէկ ծայրը Անկարդ զինուորաց պողոտայը կը հանէր, իսկ մէկալ ծայրը՝ Պագ փողոցը, որուն ուղին անուանի ըրաւ

Շղատէլ տիկինը : Բնակչաց անմանն ու ճարտարութեան յառաջագիմութեանը նպաստով : Հինգ հարիւր տարի չերթար՝ բոլոր աշխարհիս մէջ ապաւէն մը պիտի չմիայ առանձնական մտածութեան կեանք ախրողներու : այսպէս այսօրուան որս տեղ փողոցը կրկին կարգ մը ունի առաւել կամ նուազ նոր , տղեղ և անարուեստ տուներու : Այն փոխը գեղ մը կրնար տեսալի կամ գոնէ կանաչագեղ արուարձան մը տերեւներու մէջ պահուրթած պզտի քաղաքի մը : Գարնան , հոն մտած առինդ՝ եղբեմանիններու հօտը կամ ծաղկազարդ թմբիններու՝ բուրմունքը կը ծծէիր : Պատերը ցանկի տեղ կը ծառայէին , և անոնց մէ վեր բարձրացած սկասիաները , սուտ երենոսի ծառերն , ու Հրեաստանի ծառերը կը շարժէին իրենց անուշահոտ սղկոյզները : Պարտէզներու խորերը , ուր սոխակն ամառուան դիչերները կ'երգէր , վանդակապատ դռներու ետե կը տեսնայիր աղօտր անմուռնչ պալատներ և գեղեցիկ տղայք որ կանաչին վրայ կը վաղվրդէին : Միով բանիւ , Բարեկոնի փողոցն էր ասիկայ , որուն աս անունը թէ իր պարտէզներուն , և թէ ատենօք Շամիրամի հին քաղքին եպիսկոպոսին հոն բնակած ըլլալուն պատճառաւ տրուած էր : Արստլա վալդրամէր կարծեց ինքզինքը , և հարցուց թէ

! 8x. Օհլա՛մար աղան :

որ կողմէն կը վազէր Վիեն գետը : Մագդաղինէ աղաղակեց թէ իրեն համար երջանկութիւն էր այս գեղին մէջ բնակիլն , որ Բարիդու մէջ զարտուղութիւն մըն էր : Մաւրիտիոսի ամէն բան անտարբեր էր : Օրիորդին փախարը կատարուեցաւ : այն սակաւութիւ տուներուն մէկուն մէջ որ ատդին անդին կ'ընդհատէին զիւզական տեսարանը՝ երկու պզտի բնակարան դրտաւ , իրարու մերձաւոր՝ միանգամայն իրարմէ զատուած . մէկը՝ Մաւրիտիոսի համար , երկու սենեկով . միւսը՝ իրեն և Որտալայի համար , իրեք խուցով . ամէնն ալ բարձր դիրքով և տանիքի տակ , բայց հովանաւոր ծառերու վրայ նայող էին : Իմ կարծիքս այն է , Մագդաղինէինն ալ նոյն էր , որ շաւաղոյն է մարդ իր պարտեհանին առջև հանաչութեան շիւղ մը ունենայ քան թէ Վուզրի սիւնազարդ տեսքը :

Սյանկ լմնցաւ այն օրն , որ կրնար նախկին ճաշակ մը տալ Մաւրիտիոսի այն գուտարեթիւններուն , որ իրեն համար պատարաստուած էին : Երկրորդ օրն ու հետեւեալ օրերը ասելի տաժանելի և ասելի այնատաղի եղան : Բաւական չէ թուփն բնորոշը բոյն դնելու համար , պէտք է նաև խոտերու մազեր , փետուր և մամաւ բերել : Մաւրիտիոս բռնադատուեցաւ Մագդաղինէն խանութներ տաճելու , ամէն բան տեսնալու քննելու , դիներու վրայ վէճեր կռիւներ լսելու , ինքն ոք բո-

լոր կենացը մէջ ամենևին բան զնած չէր ,
և իրեն պատիւ կը սեպէր ամէն բանի տւ
րիչներէ աւելի սատկ վճարելու . և Արտա
լա ալ միշտ անբաժան էր իրմէ : Թէպէտ
ինչպէս որ պէտք է իրաց յարգը կը հանչե
նար Մագդաղինէ , թէպէտ ի բնութենէ
որչափ շնորհօք՝ նոյնչափ ալ խելքով պրե
նեալ էր , բայց զնելու միջոց շատ խատու
թեամբ չէր երթար . տղայական օւրախու
թիւն մը կ'երևար վրան , որ հաշուի այն
չափ չնայիր . սակայն Արտալա , որ կար
ծէր թէ խանութպանները կ'ուզէին խա
բել զինքը իբրև միամիտ Լիմածցի մը , ա
մէն բանի վրայ անվերջանալի դժուարու
թիւններ կը հանէր , և այնպիսի դաժան
կծծութեամբ իր տերանց շահը կը նայէր ,
որ հագիւ հրեայ մը կ'ընէ : Մայիէրի ազա
խիներուն պէս կողորդը զօրաւոր ըլլալով ,
խանութի մանչերու հետ կը սիճէր , ժու
րացկան և գող կը կանչէր անխտրաբար ,
անանկ որ քանի մը տեղ քաղաքավարա
կան կերպով մը զուրցուեցաւ իրեն որդրու
նէն դուրս ելլէ : Մաւրիաիոս կոտորու
թեանէն չէր գիտէր ինչ ընելիքը , կը զայրա
նար ամենայն սաստկութեամբ , բայց Ար
տալայի փոյթը չէր ըլլար : Սափայն երբոր
սպառնացաւ իր երկիրը նորէն դարձնել
լու զինքը , Արտալա բաւական ակամա ըն
զուն բռնել :

Վերջապէս , շարութեան մը մէջ մեր ի
րեք ընկերները իրենց պատի կապուածք

մտան Ե՛րջուոր տաւաւօտ մը՝ երկու նիկար
ձիւնդով կարգ մը մեծ դղրդ մամբ այն փա-
ռատոք պաղատին դրանն առջև կեցաւ, ուր
կը բնակէր գեռ Մաւրիտիոս : Որսոլա և
Մազդեացիինէ կարգէն վար իջան :

Մաւրիտիոս, Մաւրիտիոս, երթանք,
եղբայր քո՛ւ, աղջականին սենեակը մտնա-
լով տղազական օրիորդք, որ աւելի վառ-
վառեն և աւելի թեթևաշարժ էր քան բա-
ցաժայրի մը խոտին վրայ խաղացող այծն,
ման ուր մը՝ օրը բողբոջին լուսացաւ :
Ուրիշ բան չմնար քեզի ընելու՝ բայց եթէ
հրաժարական ողջոյն մը տալ այժ կահկա-
րասեաց, գորգերուն, օթոցներուն և ու-
կեղծ ձեղուններուն : Իբաւ երթալու տե-
ղերնիս տսոնց հաւատարր պիտի չդտնես .
բայց աղքատութիւնն ալ իր նոխութիւնն
ունի, և երջանիկ մարդիկ հարկ չէ որ ա-
սանկ չքեղ բնակարան ունենան :

Կա թե՛ղճ դառնուկ, ըսաւ անպատմելի
փասկիութեամբ մը Որսոլա, որ իր տիրո-
ջը հետ ապրելու ուրախութենէն ինքի-
մէն ստարտելի էր : Երթանք գինքը սիրե-
լատաւ դրուելու, և անտարակոյս ինքզինքը
դեռ վաղբարձէր պիտի կտրծէ : Եւ ի՛նչ
զբաւորնութիւն պիտի ըլլայ մեզի՝ բողբո-
ջանքը աղէկ մը աշխատելէն վերջը, կի-
րակի և սոն օրերը իրեքնիս մէկտեղ հա-
սարակաց պարտէզներն երթալ պարտի :
Ո՛հ, պարոն Մաւրիտիոս, շատ երջանիկ
եմ ես, ուրախութենէս կը խղճուիմ,
պէտք է որ դուրս թափեմ զայն :

Ուրեմն վերջապէս այն ժամը զարկեր էր, զոր Մաւրիտիոս կարծէր թէ ամենևին պիտի չհասնի : Ինքը յոյս ունէր որ անկարծելի խափանմունքներ, անյադժեշտ արգելքներ դուրս կ'ելլեն, և ընդ հակառակն կարծես թէ դիւթութեամբ ամէն բան յաջող զացած էր : Եւ այն իսկ վերջին իրիկունը միտքը դրած էր որ անշուշտ արտաքոյ կարգի գիպուած մը կը հանդիպի, որ զինքը այս ծանր կապանքէն կ'ազատէ, և սակայն իրական հարկը հասեր էր երկը թէ ձեռքով և առանց ճամբան խոտորելու : Ա՛լ ժամանակը չէր ետ քաշուելու : Այն սեմէն դուրս ելլալու ատենը՝ ուսկից մէյ մ' ալ ներս պիտի չմտնէր, այն առարկաներէն բաժնուելու միջոցը՝ որոնց մէջ սահեր էր իր խռովայոյզ երիտասարդութիւնը, Մաւրիտիոս սրտէն տխուր ողբեր ու բանաստեղծական հրաժեշտի ողջոյններ արձըկելու մարդ չէր : Ուրիշ կողմանէ, թէպէտ այն տեղերն՝ ուր կրօձ է մարդ՝ չկրնար առանց խանդաղատանաց թողուլ, սակայն այն տեղերն՝ ուր գէշ կեանք անցուցած է՝ հայրենիք չեն կրնար ըլլալ, և միշտ առանց գորովոյ և առանց ցաւելու կը թողու զանոնք : Այն ամէն բաներն՝ որոնց վրայ իշխանութիւն ունէր՝ Ռասոլայիս տուաւ որ կառքին մէջ դնէ. և տխուր ու չար աչքերով չորս դին մէյ մը նայելէն ետքը, թևին տակն առաւ ատրուհանակներուն տուփն, որ իրեն բոլոր

հարստութիւնն ու վերջին յայն էին, ու
թողիով մք բնակարանէն գուրս ելաւ :
Աւս վայրկենիս՝ Մագգադինէի ճակագին
վրայ պլն երկնացին ուրախութեանը ճա-
ռագայթ մը կը ցոլար, որ անտարակոյս կը
լուսաւորէ հրեշտակաց գէմքը, երբոր ՚ի
ճայն երգոց մտըրեալ հոգի մը կը տանին
ան Աստուած :



Երկու խեղճ բնակարաններ էին անոնք՝ ուր Մագդաղինէ և Մաւրիտիոս պիտի սկըսէին ապրիլ իրարու մօտ . բայց բանաստեղծ մը սիրած կ'ըլլար զանոնք , թէ որ բանաստեղծները դեռ ևս վերնայարկաց մէջ բնակելու ըլլային : Թէպէտ չափէ դուրս պարզութեամբ կը փայլէին , սակայն ամէն բանի մանր մասանցը վրայ կ'երևար ընտիր ախորժակի մը և քիածին վայելչութեան մը կնիքը : Գերմանուհի Բրիորդին սենեակը պատած էր մարգարտագոյն թղթով մը , որուն վրայ ասդիս անդին ցրուած էին մեխակի , վարդի ու յակնթի պզտի փունջեր , և որ վրանի ձեւով կը միանար ձեղունին վրայ : Կահկարասիքն ընկուզէ էին , աթոռները՝ հրսած կնիւնէ : Սնկողինը նուրբ էր , նեղ , նման դպրոցի ներքին աշակերտաց անկողիններուն , և զոր կը ծածկէր լայն վարա-

գոյր մը՝ պատերուն թղթին յարմար գու-
նով պարսիկ կտաւէ : Պատուհանին մօտ
կը տեսնէիր սառլ մը , որուն վրայ կը հանգ-
չէին վրձիններ , գունոց տփիկներ ու յաթ-
ճապակէ պնակներ , որոնք սիրելի մարգի-
զուհւոյնն էին : Կրակարանին մարմարիո-
նը ուրիշ զարդ չունէր՝ բայց եթէ երկու
հողէ լայն բերնով անօթներ . իսկ ներսի
կողմը նոյեմբերի կը սպասէր՝ դալար մա-
մուտն ձեւացուցած թանձր բարձէն խալը-
սելու համար : Անկողնոյն գլխուն կողմը՝
յենարանի մը վրայ կը հանգչէր կանթեղ
մը , որ կրնար սահել իր պղնձէ բնոյն վը-
րայ : Իրօւ գորգեր չկային , սակայն կըր-
նայիր հայրի պէս յատակին : տախտակա-
մածին մէջ նայիլ , այնչափ պայծառ ու
փայլուն էր : Հայլիին շրջանակին երկու
կողմերը՝ մի գիէն Զրէզնը տիկնոջ խել
մը կիտուածանկարներ կախուած էին ,
միւս կողմն ալ քանի մը շարժուն դարան-
ներ , որոնց մէջ Ալգրավէրէն բերուած
գրքեր , չորցած ծաղկոյններ , տունկեր և
հանքեր կային : Պատուհանն , ինչպէս ը-
սինք , պարտիզի մը վրայ կը նայէր , որուն
ծայրն եղած պալատը կարծես թէ մաղձոտ
մտածմանց մէջ կը թափառէր : Մաւրիտիո-
սի խուցն ալ շուրջ շուրջանակի նոյն ոճով
շտկուած էր . միայն ասով կը տարբերէր՝
որ աշխատութեան նշան մը չէր տեսնուէր
մէջը . և փուճ տեղը կը փնտռէր մէկը՝
թէ որ ուզենար այնպիսի առարկայ մը

զանալ հոն , որ յոյս մը տանք վերայիշեալ բանին կամ գոնէ նոյն տեսակ հին յիշատակ մը միտքը բերէր : Պատեցող մերկ էին , անհոգինն ալ առանց վարագործի :
— « Ո՛հ , աս տասնկ աղուոր չէ : Ըսաւ Մագդաղինէ Մաւրիտիոսի . բայց ետեպէք ծեմ թէ աշխարհիս մէջ ու ե իցէ խեղճ բը : Եակարանն ալ մարդ կրնայ ինքիրեն զարգարել՝ թերևս օթոցագործներէն՝ ալ աղէկ : Մեր մտածութիւններն ու երեակայեալ յոյսերը , մեր ուրախութիւններն եւ մեր ցաւերը՝ այնպիսի ճոխ կահկարասիք եւ զարդարանք են , որ հարուստներէն շատը չեն ճանչնար , ե լաւագոյն են քան զթաւիչն ու մետաքսը ; քան զվարդենւոյ զայտն ու ծիրանեպիայտը : Այն չորս պատերն՝ որ զմեզ կը տեսնեն զբաղեալ ՚ի սիրել , աշխատիլ , մտածութեամբ պարարիլ ե յուսալ , միշտ պալատի մը պատեր են » :

Այս խօսքերս Մաւրիտիոսի սիրտը շատ չլարժեցին , որ երբ մինակ մնաց , սկըսաւ խուցին մէջ ասդիս անդին պտըտիլ վանդակի մէջ նոր փակուած առիւծի մը պէս : Վերջապէս բարկութիւնը ղեղաւ , սկսաւ ինքզինքը քամըթել , ճակտին զարնել , ե յետոյ կատաղութեան աղաղակներով անկողնին վրայ գլորեցաւ : Կը յանդիմանէր ինքզինքը թէ ինչու վատութեամբ եւ անհաւատալի թուլութեամբ մը զիջաւ ու թողուց որ բաներն այս աստիճանի

հատեն անմիա կը կոչէր ինքզինքը , և իր մօրաբէս թոռան անունը հայհոյութեամբ քերական կ'առնէր : Սյա միջոցիս Մազգաղինէ իր գոյները , վրձիններն ու փղապակի թիթեղները կարգի կը դնէր , և անանկ ուրախութիւն մը կը ցուցընէր դէմքին վրայ : որ , կարծես թէ բոլոր կենացը մէջ , այս վիճակն ունեցեր էր . աւելի գոհ էր իր ազրատութեանը՝ քան թէ իր հարստութեանը վրայ : երբոր մարգիզուհայն մահուընէն ետքը իբրև տէր մտեր էր 'ի Ալա դրավէր : Որսոյս ալ աշխատելու հետ էր մէկ կողմանէ կը շփէր կը մաքրէր , և մէկալ կողմանէ ալ բարձրաձայն իր երկրին երգերէն մէկը երգելով կը զօւարճանար : Ժամէ մը ետքը Մաւրիափոս անէն դուրս ելաւ , Որսոյսի ձայնէն սաստիկ կիտը ել բարավ : Ինչուան իրիկուն քաղցին մէջ թափառեցաւ , առանց դիտնալու և առանց փոյթ ընելու թէ ուր կ'երթայ : Ժամը տասնըմէկին միջոցները՝ գիտութեամբ այն տեղայն մտներն : հառաւ , ուսկից որ ճամբայ ելեր էր : Փայլակներ կը տակէին ամպերուն երեսը , կայծակները կ'որոտային , անձրևի խոլոր , հատեր կը սկսէին վառ թափիլ : Մաւրիափոս , որ ալ օւրիչ ապաւէն չունէր՝ քայց կ'իւր Բարեկոնի փողոցին վերնաշաղկը , փութաց հոն քաշուելու : Որսոյս որ կը սպասէր անոր դարձին , վաղեց սանդուխին առջև գնաց՝ իր երիտասարդ տիրոջը քաշելուն ձայնը լսելով . քայց երբ

որ տեսաւ անոր դէմքին ստորոտնուքիւնը ,
 ստակացաւ մնաց : Երթօւնքները փառա-
 տական էին , աչուրները խորցած ու ջեր-
 մաբեր լուսով մը կը փայլէին : Իտեղէ առ
 ջիկը վախճալով Մաւրիտիոսի գոյ՝ ու գնց
 զանիկայ Մազդադինէի խոտը տունից , սոր
 սովորաբար շատ ուշ կը պարգէր : Բայց
 Մաւրիտիոս հրեց անցաւ ու իր աննիւսին
 առանձնացաւ : Բաց պատուհանին առջե-
 նստեցաւ ; ու ինչուան առաւօտ փոփկ կ'ը-
 նէր հովուն մունչելը պարտիդին մէջ , և կը
 դիտէր երկինքն , որ իր հոգւոյն շափ մտք
 ու մրրկալից չէր : Երբոր անկողին մտաւ՝
 ջերմը բռներ էր՝ գինքը , և երբոր եկան
 գինքը տեսնելու՝ ցնորած էր :

Իր կեանքը վտանգի մէջ կ'երևար : Իտեղն
 երիաստորը չէր հրցած պլապիսի նոր գի-
 ճակի մը բուռն հարուածին դիմանալը , սոր
 հետաւոր կը կարծէր : Ինչպէս Տօն Ժուան՝
 մարմարիանին ձեռքը բռնելու աստին , այս
 պէս Մաւրիտիոս ալ կայծակնով հարեղեր
 էր : Մտկայն քաջ բոշկաց խնամքը , կրի
 տասարդութեան ոյժն որ զեռ մեռեալ
 չէր՝ ի նմա , և մանաւանդ Մազդադինէի
 և Որսոլայի անխոնջ և փոյթեաանքն խը-
 նամբը , զամաց կամաց կենդանացուցին
 գինքը : Իրարու հետ կը մրցէին իրեն

1 Մուկերի ինչոյ՝ Ա. Բ. բաւան կատակերգութեանը
 մէջ, Տօն Ժուան անունով անգլամ ու անհաւատ մարդը՝
 խօսող արևանի մը ձեռք տալու աստին , կայծակը կ'ընայ
 դիտուն , ու երկիրը պատուելով կը կուէ զանիկայ :

կհանձնէր: խաղը անելու համար, և կարծեմ
մայր մը եղբւո՛ճ չէ որ այնչափ գռութ ... սէք
եւ պո՛հ ևս կար ըլլած: բայց իր հիւանդ որ
գոցն, որչափ այս երկու ազնիւ օրիորդ
նկարը ցոտցո՛ւցին Մարիամի սախ: Հիւանդ
գութիւնը շատ անգամ հիւս չէ. ունի ի-
րեն, աղէ կրթիւնները. թէ որ ուրիշ օգուտ
մ'աչ չունենար՝ բայց եթէ լաւ ևս յայտնե-
լու մեղքի այն անձանց սէրը, որոնք մեզի
ախորժելի են. և գործնք ինքը մեր անկող-
նին քով կը ժողվէ, պէտք չէր շատ գեշ
խօսիլ զիրան: Անկէց զսա՛ այս սրանչեքի
յասակութիւնն ունի, որ կը ջնջէ շար կիր-
քերը, խիտա սրտերը կը կակաւարնէ, և
ծունկովը՝ ուսնուց բարակ ճիւղի մը պէս
կը ճկէ ամենէն աւելի անստատ բնուարու-
թիւնները: Այսպէս այն կատարի Մար-
րիսիտար, որ առողջ եղած միջոցը այնչափ
տիճանի զայրացած էր ապրելու բնասար-
տաւելուն վրայ, սանձուած կենդանուց
մը պէս թող առաւ որ խնամեն, պիտը,
կրթեն և երբեմն քաղցր նայուածքով մը
չնորհակալ կ'ըլլար Մագդաղինէի և Ռոտ-
լայի, որ քովը նստած էին. և քանի՛ մը
անգամ ալ իր ձօնաբեռ թոռանը ձեռքը
տիճանց ի նշան երախտագիտութեան: Օր
մը պիտուն վրայ կախուած ատենելով հօրը
դէմքը, զոր նկարած էր մարգիզուհին՝ ա-
պետին մահուրնէն տարի մը առաջ, ձեռքն
առաւ զայն և երկայն բարակ վրան նայե-
լով այնպիսի ցաւի ու ապաշաւանայ սրը

տաշարժ խօսքեր կ'ուզողէր անոր, որ հա-
ռաչանքները ձայնը կը կտրէին: Մագդա-
ղինէ և Որսուլա ալ կու լային. բայց քաղցր
սպրցունքներ էին անոնք: Ուրիշ օր մըն ալ
կրակարանին վրայ ագածու փայտէ տուփ
մը տեսաւ, որ ինչուան ան օրը դիտած չէր:
Ապաքինութեան վիճակը, ինչպէս որ յայտ-
նի է, շատ զարմանալի նմանութիւն ու-
նի մանկութեան: Մանկութեան պէս այս
վիճակին վրայ ալ նոյն է անդամոց տկա-
րութիւնը, բնական կերպով զարմանալու
բերումը, և հետաքրքրութիւնն որ ոչինչ
բանով մը կ'արթննայ կամ կը խափանուի.
Կենաց սկսումն է, վերջապէս՝ երկրորդ
մանկութիւն մըն է: Մաւրիտիոս բերել
տուաւ այս տուփը, բացաւ խուփը, և տե-
սաւ կանաչ թաւիչէ խորշերու մէջ չա-
փակցութեամբ դրուած այն գործիքները՝
գործնք աստենք կը գործածէր իր հօրն
հետ մէկտեղ՝ ընկուղենւոյ, տանձենւոյ և
կաղնւոյ փայտերը փորելու միջոց:

— Ափսոս, ըսաւ Մագդաղինէ, աս
միայն կրցայ խալըսցընել հօրենական ժա-
ռանգութենէդ: Մտածեցի որ քեզի տհա-
ճելի չկրնար անցնիլ ասոնց քովք գտնուե-
լը, և թէ թերևս շնորհակալ ալ կ'ըլլաս
ինձի՝ օտարաց ձեռքը չթողլուս համար:

— Այո, մօրաքեռ թոռս, ըսաւ Մա-
րիտիոս. յետոյ՝ Այո, բոյր իմ, աւելցուց,
(այս առաջին անգամն էր որ աս անունը
կու տար անոր), շատ աղէկ ըրեր ես:

Այս տուփն որ բացի, երիտասարդու-
թեանս տարիներուն պատկերը գիմացս
երաւ :

— Զարմանքս կու գայ, վրայ բերաւ Ար-
սուլա, երբոր կը մտածեմ որ առոնցմով
ասպետն իր ապրուստը ճարեր է անհա-
ւատից մէջ. ասպետն որ ազնուական,
մեծ մարդ և ազնուապետական էր կար-
ծեօք, իր ճերմակ ձեռքերովն անանկ վար-
պետութեամբ տղոց խաղալիկներ կը շի-
նէր, իբրև թէ բոլոր կենացը մէջ միայն
անոր զբաղած ըլլար, և ամենեին չէր ա-
մբշնար ուսմիկ մարդու մը պէս աշխատե-
լու : Իրաւցընէ իրեն համար կրնամ ըսել
թէ գոռոզ չէր. և սակայն ՚ի բնէ գոռոզ
մարդ էր :

— Այո, ըսաւ Մագդաղինէ, շատ մե-
ծասիրտ էր :

— Հապա մարգիզուէին, աղաղակեց Ար-
սուլա, որ խօսելու ասպարիզին մէջ ետ
քաշուիլ չէր գիտէր. անտարակոյս անոնց,
մէ մէկն եղած է, որ արքայութեան գրան
գիմաց երկար ատեն չեն սպասեր : Այն-
պիսի մեծ ցեղէ տիկին մը, որ արքունեաց
մէջ ալ մտած էր, գարեջուր խմողներու և
շուգրուդ¹ կերողներու կենդանագիրները
կը շինէր, մինչդեռ շատ գիւրաւ կրնար
լաւագոյն և ճոխագոյն կերպով ապրիլ :
Ո՛հ, նշանաւոր կին էր :

¹ Եռօրեայ ըսուած մեծազուխ կաղամբով շինուած
առողջարար կերակուր մըն է :

— Այո, զուրցեց Մազդազդինէ, գեղեցիկ հոգի մը ունէր :

— Քու հոգւոյդ պէս, կտրին օրիտադ, կրկնեց Որսուլա՝ մեծարանքով մը Մազդազդինէի մատուրներուն վրայ իր շրթանցն համբոյրը դրոշմելով :

Նման այն մարդկանց՝ որ սիրով առակ մը մտիկ կ'ընեն առանց փոյթ ընելու անոր բարոյականին վրայ, Մաւրիտիոս մը տիկ կ'ընէր բոլոր այս խօսակցութիւնը, և ամենեին մտքէն չէր անցընէր մտածելութէ արդեօք անոր տակ իրեն համար խրատ մը ծածկուած կ'ար : Ապարիսուսութեան մէջ ամենէն աղէկ բանը՝ անցելոյն մոռացութիւնն ու ապառնւոյն վրայ ամենեին հոգ չընենէն է : Դեռ շատ տկար ըլլալով՝ կարողութիւն չենք ունենար ներկայ վայրկենէն անդին անցնելու, և մեր խօսակցութեանը մեզի տուած զգացմանը մէջ բոլորովին կ'ընկղմինք : Այսչափ միայն գիտենք որ կ'ապրինք : Դժբաղդաբար այսպիսի քաղցր վիճակ մը երկայն չաւեր . կամաց կամաց՝ քանի որ առողջութիւնը կը հաստատուի, կենաց բեռն ալ զգալի կ'ըլլայ :

Թէպէտ վտանգէ ազատած և գրեթէ բոլորովին վրայ դրած էր Մաւրիտիոս, բայց վերջի աստիճանի տկար էր, և գեռ անընդհատ խնամքի կարօտ ըլլալուն, միանգամայն զինքը զուարթացընելու ու դբաղեալ բռնելու վախճանաւ ալ, Մազդազդինէ և Որսուլա օրուան մեծ մասն իրեն բռ-

վրէ կ'անցընելին : Մաւրիտիոսի խնդիրքովը՝ օրհորդն իր ազգականին խուցը փոշխազքերէր իր արուեստանոցը . բոլոր օրը կ'աշխատէր հօն , շատ անգամ ալ գիշերը կը հսկէր : Ինքը կը նկարէր , կամ կ'աստղնեգործէր , իսկ Որսոլա կը լուէր կամ տղապիտակ կը հիւսէր : Սկզբան Մաւրիտիոսի շատ ախորժելի երևցեր էր այս բնականեկան տեսարանը . բայց քանի որ մարմնայն առողջութիւնը կը զօրանար , սրտին ու հոգւոյն հիւանդութիւններն ալ նորէն կը սիրէին վրան , և կոմսոց կամոսց կը սկսէր սրտէն նեղանալ այս երկու օրհորդաց ցուցուցած խնամքներուն վրայ , որոնք ոչ երբէք քովէն կը զատուէին : Ունեցած պարտաւորութեանցն գիտակցութիւնը՝ առանց իր գիտնալուն կը նմէր զինքը մրրկալից մթնոլորտի մը պէս . թեթև երկխօյի գրացմամբ մը կը լսէր իր մակատազրին խաւ ձայնը , նման ջրոց ժանկընթացութեան հեռաւոր աղաղակին :

Իրիկուն մը որ խորունկ քծոյ մէջ կ'երևար , Մագդազինէ և Որսոլա ստոլի մը երկու կողմը նստած՝ ցած ձայնով կը խօսակցէին , կանթեղին լուսովն աշխատելով :

— « Ի՛նչ անմեղ հրեշտակ , կ'ըսէր Որսոլա . ամենեին չեմ ցաւիր իրեն համար ըրած ծախքերնուս վրայ . հարկ ըլլար նէ՛ զլիտարկս ու վառակս ալ գրաւ կը դնէի : Իսորք ստակնիս իրեն հիւանդութեանը

համար գնաց , և երկու տկուտ չունինք
տան մէջ :

— Փոյթդ չըլլայ , ազնիւ Արարատ . ես
կը յուսամ որ վաղը լմընցընեմ . սա թէյի
տփոյն նկարը , որ ինձի գէշ շերեւոր .
նայէ սա աղուոր ծաղիկներն ու սիրուն
թռչունները : Բաներնիս գէշ կ'երթայ թէ
որ չկարենամ դնել զայն այն մեծ մթերա-
նոցին մէջ , ուր ուրիշ երկու ձեռագործներս
գնուեցան : Ասկէց զատ՝ երկու պայուսակ
ալ պատրաստած եմ , որ ըստ բաւականին
ընտիր են . քեզի հետ մէկտեղ կ'երթանք
ծախելու զանոնք : Կ'ըսեն թէ այսպիսի
սնտախքը աղէկ գնով կը ծախուին 'ի Բա-
րիզ : Իսկ թէ որ այս ամէնք յաջող շեր-
թան , դեռ քանի մը մատնի , քանի մըն ալ
գոհարներ ունիմ . զանոնք ալ ազամանդ-
ներուս քով կը խրկենք :

— Իմ գինդերուս ու ոսկիէ խաչիս հետ
մէկտեղ , ըսաւ Արարայ . առիկայ բնական
բան է . բայց , սիրելի օրիորդ , զու գիշեր-
ները կը նստիս կ'աչխատիտ , չըլլայ որ ա-
ղուոր կապոյտ աչքերդ կորանցընես , և ա-
ռողջութիւնդ , որ ալ աւելի յարգի է :

— Մի վախնար , պատասխանեց Մար-
դաղինէ ժպտելով , ես դրսուանց երեցա-
ծէս աւելի ուժով եմ : Թող որ աչխատու-
թիւնն առողջութիւն կու տայ . մարդիկու-
հին ստէպ կը զուրցէր ինձի թէ ամէն տե-
ղէ աւելի 'ի Նիւրեմպէրի առողջ էր : Գի-
շեր ցորեկ կ'աչխատէր ինքը հոն . և ես

կը վիճայեմ որ մեռնելէն քանի մը ժամ
առաջ՝ դեռ իր աչքերը շատ գեղեցիկ
էին : Եւ այս աչ մտածէ , ազնիւ Ռստլա ,
որ մեր սիրելի հիւանդին համար պէտք է
որ ջանքս և գործունէութիւնս կրկնա-
պատկեմ : Իր ապագինութիւնը թերևս եր-
կայն երթայ . թէ որ մենք այն ամէն խը-
նածքը չցուցընենք իր վրայ՝ որչափ որ իր
վիճակը կը պահանջէ , ինչպէս պէտք է
յանդիմանենք մենք զմեզ , ինչպէս խիղ-
ճերնիս պէտք է զարնէ , և ինչ կ'ըսէ Մա-
րիտիոս , որ մեզի համար միայն յանձն ա-
ռաւ ասորիլ :

— Այո , զուրցեց Ռստլա՝ մեծարան-
քով աչքը դէպ 'ի այն անկողինը դարձը-
նելով , ուր կը հանդէս իր երիտասարդ
տէրը . իրօք մեծ բարութիւն ու մարդա-
վարութիւն էր ըրածը . չենք կրնար գան-
գատիլ վրան : Այն վայրկեանին որ ատրճա-
նակը պիտի պարպէր գլխուն , միայն մեր
տիրոջն համար ետ քաշեց զայն : Եւ ինչպի-
սի՞ ուրախութեամբ կը պտըտէր հետերնիս
փողոցներուն մէջ : Թող որ մէյ մը որ ա-
ռողջանարու ըլլայ , շատ պիտոր հանդար-
տի : Զուարթութեամբ պիտոր աշխատի իր
մտաբերութեանն ու իր սննդակից քրոջն
համար . որովհետև հրեշտակ մըն է , ազ-
նիւ հրեշտակ մը , ինչպէս որ միշտ ըսեր
եմ քեզի » :

Ասանկ ցած ձայնով խօսեցան իրարու
հետ , մինչև որ Ռստլա բռնադատեց ըզ-

Մազդազինէ որ խուցը քաշուի քիչ մը հանգչելու համար : Երթալու աստեանին երկուքն ալ Մաւրիտիոսի անկողնոյն վրայ ծուած , քանի մը վայրկեան դիպեցին շուք թեամբ անոր ւժգոյն կերպոյրանքը : Երբ րուն վրայ հիւանդութիւնը դարձեալ արդ պաւորեր էր իր բնածին մեծութիւնն ու վեհութիւնը :

Մաւրիտիոս չէր քնանար , և բոլոր իր սակցութիւնը լսեր էր : Երկրորդ առաւօտը ոտքի վրայ էր . որչափ որ առաջ ապրտամ , բարկացկոտ և զայրագին բնաւորութեամբ տեսանք զինքը , հիմա ընդ հակառակն հանդարտ և հաստատամիտ կ'երևար , և միտքը դրած էր աշխատութեան ձեռք զարնելու : Սակայն կը խարուի մէկը թէ որ անոր կամացն այս որոշումը երախտագիտութեան և գորովոյ պատգամներն երէ առաջ եկած սեպելու ըլլայ նէ : Առողջութեան հետ Մաւրիտիոս իր առջի խստասրտութիւնը նորէն ստացած էր : Այն երկու վեհանձն օրիորդաց անձին նուիրումը՝ որով իր հիւանդութեանն համար իրենց բոլոր ունեցածը գործածելու էին , գոխոսնակ տիրտը շարժելու՝ կը զայրացընէր մանաւանդ . բայց Աստուած անոր համար թոյլ տուած է հպարտութիւնը մեր սրտին խորը , որ հարկաւոր եղած ատեն առաքինութեան տեղ ծառայէ : Ահաւասիկ այս առթիւ ալ հպարտութիւնն ըրաւ այն հրաշքը , զոր ըստ ինքեան առա-

քինութիւնը միայն պիտի կարենար ընել :
Սուտի պատրաստ էր ինքը աշխատու-
թեանն, իբրև տաանց եռանդեան, բայց
գոնէ աստանց տարակուսելու : Միայն կը
մտածէր թէ ինչ քանի ձեռք զարնէ . աշ-
խատիլ կը որ քառ մըն է՝ մտքուս բերնէն
չուտով կը սահի . բայց քան մը պէտք է
գիտնալ աշխատելու համար : Տղայաց խա-
ղալիկներու եւ կաղնաբեկ գործիներ շինել .
— աստիկայ Նիւրեմպէրի քանի կու գար ,
որ այսպիսի իրաց հայրենիքն է : Փայտի
քանդակագործութեան ետեւէ ըլլալ . —
ասոր համար ալ հազարումէկ դժուարու-
թիւններ կար : Գոյլերուն համար աշխա-
տութեան ճամբաները միշտ խափանուած
են արգելքներով : Ուրիշ կողմանէ ալ շա-
տոնցուչնէ ի վեր թողացած ըլլալով այս
արուեստը , մտացեր էր զայն : Իսկ մտա-
ւորական աշխատութեան պարապիլը , իր
քանը չէր . ոչ թէ յարմարութիւն չունէր
այն տեսակ անվարական գրականութեան ,
որուն այսօրուան օրս այնչափ անձինք
ձեռք կը զարնեն յաջողութեամբ . բայց
գծքապարար նոյն միջոցին գեղեցիկ դը-
պրութիւնք դեռ քիչ մը անմատչելի էին , և
արուեստից դժուարագոյնք դեռ ամենէն
գիւրիւնք չէր եղած : Թէ որ քանի մը տարի
ուշ եղած ըլլար այս դիպուածս , Մաւրի-
տիոս ետ քաշուած չէր ըլլար այս արուես-
տէն , և մենք հիմա մեծ մատենագիր մ'ալ
աւելի օւնեցած կ'ըլլայինք : Ճիշդ ժամանա-

կին հասնիր՝ կենաց մեծագոյն գաղանփերէն մէկն է :

Մաւրիտիոս չկարենալով ինքիրեն ընտրութիւն ընել, խորհուրդ հարցուց իր մօրաքեռ թոռանը : Օրիորդը քաղցրութեամբ պատասխանեց .

— « Ինչո՞ւ կ'աճադարես . հիմկու հիմա շատ ստիպողական հարկ մը չկայ : Գուդես շատ տկար ես ու հիւանդոտ . նախ մէյ մը ոյժդ տեղը գայ, մէկալ բաները վերջը կու գան : Բաւական է որ ես պաշտպանութեանդ տակն ըլլամ, ասիկայ ինծի հերթ է, ուրիշ բան չեմ ուզեր : Ամենէին հոգ մի ընե՛ր . ես ոյժ և յօժարութիւն ունիմ . ես քեզի համար սիրով կ'աշխատիմ, մինչև որ օր մ'ալ գու կարենաս աշխատիլ ինծի համար երջանկութեամբ : Ըսէ ինծի, եղբայր իմ, չես ուզեր որ ասանկ ջնենք » :

Տարակոյս չկայ որ այսպիսի խօսքեր Մաւրիտիոսի գոռոզութիւնը զայրացուցին : Հիմա տեսնանք թէ ինչ կերպով գիպուածը, կամ լաւ ևս ասել՝ Մտգդադինէի ձեռքով գործող Նախախնամութիւնը մղեց երիտասարդն այն միակ նամբուն մէջ, ուր կրնար քալել :

Նոյն տանը մէկ թևին մէջ, Մաւրիտիոսի և Մագդաղինէի բնակած վերնայարկերուն դիմացը, չափաւոր բնակարան մը կար իրեք սենեկով, ուր կը բնակէր երիտասարդ արուեստաւորներու ընտանիք մը: Էրիկը Պետրոս Մարսոյ կը կոչուէր և երէնագործ էր արուեստիւ. կտրիճ ու գեղեցիկ երիտասարդ մը, որ հագիւ քսանը հինգ տարուան կար, միշտ զուարթ, անկեղծ ու պարզասիրտ. մոխրագոյն կտակէ բաճկոնակ մը կը հագնէր, և կաշիէ գօտւով մը պնդած էր զայն առոյգ մարմնոյն վրայ: Ասիկայ ոտանաւոր չէր շինէր, և իր քնարը՝ քերիչն ու քանդակագործ գրիչն էին: Ամէն օր արչալուսոյն կ'ելլար անկողնէն, ուրախութեամբ առաւօտուընէ ինչուան իրիկուն կ'աշխատէր, և կ'երևար թէ համոզուած էր որ աշխատութիւնը ժողովրդեան ճշմարիտ բանաստեղծութիւնն է, և արուեստաւորաց վիճակը լաւցընե-

լու համար ընտրելագոյն դրութիւնք : Իս-
խելացի ու ազնիւ կիներ քովընտաւած՝ ածե-
ղով կ'աշխատէր , և աչքը երկու ապարով
տղօցը վրան էր , որոնք հօրերնուն քով
կը խաղային : Մարտոյ երբեմնէր Երբեմն աշ-
խատութեան սեղանատախտակէն կը հե-
ռանար կու գար ընկերոջը քովը , կամ
տղաքները կը գրկէր . յետոյ նորէն գործը
կը սկսէր առաւելագոյն եռանգեամբ : Եր-
բեմն երիտասարդ կիներ Պէրանժէի երգ-
մը կ'երգէր , այն անմահ երգերէն մէկը՝
որոնք միտքարուծիւն եղան հայրենեաց .
Էրիկն ալ առանց աշխատութիւնն ընդհա-
տեղա՝ զօրաւոր և պարծենկոտ ձայնով մը
տան վերջին տողերը կը կրկնէր : Երբոր ի-
րիկունը կը մօտենար , կիներ իրենց չափա-
ւոր կեդրակուրը կը պատրաստէր : Եւս
անգամ երկուցն բարակ կը նստէին սեղա-
նին վրայ , որուն զարգն էին արդոյ անմեզ
չատախօսութիւնները , և ընտանեկան խօ-
սակցութեանց զբաղեալ՝ գիչերը , առաջ
կ'երթար :

Մաւրիտիոս պատուհանին վրայ թևե-
րովը կրթընած , ստէպ վեր ի վերոյ աչքով
մը այս ընտանեաց ներքին աշխատաւեր
և գովելի կենաց տեսարանը կը զննէր .
բայց ոչ եթէ հետաքրքրութեան համար ,
կամ որպէս զի օգտակար գաս մը առնէ
իրեն . հապա միայն պարապ ըլլալուն հա-
մար կը նայէր : Իսկ Մագդաղինէ կ'ախար-
ժէր անոնց օրական ընթացքը դիտել , և

խորհրդական գեղեցկութիւն մը կը նշմարէր ՚ի նման իր ու այն երկու երիտասարդներուն մէջ՝ կամաց կամաց դրացւոյ բարեփառութիւն հաստատուեր էր . գերմանուհի օրիորդը կը գգուէր տղաքները երբոր սանդխոց պրուֆը կը տեսնար զանոնք . Մարտիտիտսի հիւանդութեան միջոցն ալ Պետրոս Մարտոյ քանի մը անգամ եկեր էր հարցընելու հիւանդին վիճակը : Առաւօտ մը Մագդաղինէ տեսնելով որ երիտասարդ երեսնագործը կը քերէր ու կը քանդակէր կաղնւոյ փայտ մը , ինչպէս ատենօք Մարտիտոս կ'ընէր ազնիւ ասպետին հետ , սիրտն ելաւ այս յիշատակաւ ու ակաւ զննել : Մարտոյ բաց պատուհանին մտնելու սեղանապատակին վրայ ծռած էր և կ'երեւար որ դիմացը դժուարութիւն մը եղած էր , որուն ՚ի գուր կը ջանար շաղթելու : Մէջ մ'ալ յանկարծ այնպիսի բուռն ձեռով մը որ իր անկարողութիւնն զգալէն առաջ կու գայ , մէկգի նետեց գործին երը , ու ձեռքովը ճակատը զարկաւ յուսա հաստութեանէն . յետոյ թևերն իրարու անցոցած՝ ուրի վրայ անշարժ կեցաւ , որտարիկ վհատութիւն մը ցուցընելով դէմքին վրայ : Երիտասարդ ամուսինը քովը մտնեցաւ ու կ'ուզէր գգուանօք և անոյշ խօսքերով խրատոյս տալ . Մարտոյ այս առաջին անգամ ետե հրեց զանիկայ , և կատարութեան արցունքներ դէմքէն վար սահեցան : Արնը սկսաւ լալ . սա տեսնե-

լով տղաքն ալ անդիէն կրցածնուն չափ սկսան պոռալ : Մազգաղինէ այս աղէտաւ լի տեսարանը տեսնելով, գաւթը շարժեցաւ . խուցէն դուրս ելաւ, և թանկ վայրկենէն այն ընտանեաց, մէջնէն ուրոնց հաճոյական էին իր այցելութիւնները : Երբոր պատճառն հարցոց, այսպիսի տրտմութեան ,

— « Աւաղ, ըսաւ կինը, երկիւ այսօր իսկ բռնադատեալ է լմրնցընեաւ յանձնաւորարութիւն մը, որուն յաջողութենէն կտակ ձախորդութենէն կախուած է մեր ապագայն : Չեմ գիտեր թէ արդեօր իր վրայ չափազանց համարմունք ունենալէն յանձնառեր է այս գործս, չէ նէ իր առաջանքը հիմա չօգնէր իրեն . բայց բանը այս է՝ որ խեղճը չկրնար աղէկ յաջողցընել դայն : Էրկիւ զիս ու մեր սիրելի աղաքը մտածելով կը ցաւի . ես ալ իրեն տրտառաքը տեսնալով կու լամ :

— Սիրուն օրիորդ, ըսաւ գործաւորը, ինքզինքս խաբեցի կարծելով . թէ ես ալ արուեստագէտ մըն եմ . ընդ հակառակն, ուղորմելի մարդ մըն եմ, և ձեռքեւտարիչ բան չգար՝ բայց եթէ տախտակ քերելու աթոռի ոտքեր շինել :

— Մի ըսեր ասանկ, պատասխանեց քաղցրութեամբ Մազգաղինէ . մարգարտաազանդն ալ իր ժամանակն ունի բողոքին պէս : Միջակ կարգի մարդիկն են միայն որ միշտ պատրաստ են ձեռք զարնելու և

տանն եկին շէն աստուկուտիր : Տեանանք ,
պատճառս ինչ է ընելիքդ » :

Փոքրակէ քանդակ մըն էր ասիկայ որ
հընչուտեալեւս ժը պիտի ներկայացընէր ,
և Ռաբիդու եկեղեցեաց մէկուն համար
տարնդրուած էր իբօք դէմքը շէր յաջողած .
Մաքրարդինէ թէպէտ բնութեամբ ներո-
ղամիտ էր , սակայն համոզուեցաւ որ եթէ
այս երիտանասորդ ընտանեաց ազատական ի-
րացընէ այս գործոյն յարդէն պիտի կա-
խուէր , իրաւունք ունէին յուսահատելու :
Մէջ մ' ալ այն միջոցին տեսաւ Մաքրիտիոս
սը պատուհանին առջեւ . և նշան մը ընե-
լով անոր , Մաքրիտիոս քովերնին եկաւ
տաանց շատ փութալու :

— « Արդեօք կերպով մը օգնութեան
չընք կրնար հասնիլ այս բարի ընտանեաց ,
եղբայր իմ , ըսաւ Մաքրարդինէ , և այս
տարնապէն խալացընել զիրենք » :

Մաքրիտիոս այսպիսի հարկի մը մէջ իյ-
նալով , մտածեցաւ փայտէ քանդակին և
արհամարհողական կերպով ժը քանի մը
վայրկեան զննեց զայն ուշադրութեամբ :
Հըմարիտոն ըսելով շատ անկատար քան-
դակ էր , և աւելի ստուերազիծ ըսելու ար-
ժանաւոր : Երենազործը , իր կրննու Մաք-
րարդինէ չորս կողմը ժողվուած՝ անձիու-
թեամբ կը սպասէին տեսնել թէ ինչ պիտի
ընէ : Մաքրիտիոս խօսք մը չըսաւ . բայց
յանկարծակի իրեն քաջութիւնը ցուցընե-
լու դիտմամբ , և ոչ թէ բարեսրտութենէ

չարժամ՝ վրայի զգեստն հանեց, Կարթու-
րայէ շապկին թևերը վեր հարձուց, և գոր-
ծիներէն մէկը ձեռքն առնելով՝ սկսեց նա-
րագ արագ քալեցընել զայն հաղնուցիօք-
տին վրայ, որ Մարտոյի ձեռացը շէրփալ-
տափէր: Մագդաղինէ սրտէն հարտօտա-
նար որ կը յաղթանակէ: Արտօտաւարը
ընտանիքը լուսեամբ և սաքի վրայ ան-
չարժ կեցած՝ երիտասարդին ձեռքին վը-
րայէն աչքերնին չէին վերցընէր: Իսկ
սեղանատախտակին քովն ալ տղաքները
իրենց խարտեալ գլուխներովն ու քե-
րօրէի դէմքերովը մէյմէկ ամուռի վրայ ե-
լեր էին հետաքրքրաբար, և գեղեցիկ ու
ընտան միութիւն մը կը կազմէին այն
դէմքին հետ, որ կը սկսէր կենդանութիւն
առնուլ ստեղծագործ գրիչը նարտարու-
թեամբ բանեցընելովը:

Ինչպիսի մրրիկներէ ալ անցած ըլլայ
մարդկային սիրտը, որչափ որ աչ խան-
գարուած ըլլայ, թէ որ Կահարայի անա-
պատին ալ նմանի, չոր և ցամաք ապուղ
ալ միայն ունենայ, դեռ անանկ տնայտա-
ու վառ ծագիկ մը կը տեսնուի ի նմա, որ
կարծես թէ առջի օրը բացուեր է թէպէտ
իր քովի բոլոր ծագիկները թոռմած ու մե-
ռած են, բայց իր բաժակէն թերթ մըն ալ
պակսած չէ կը խնայ զոտարթութեամբ
իր ցողունին վրայ, զոր քովինեղը շեն
կրցած արմատաքի խլել: Մարդուս սրտին
այս անմահ ծագիկն ունի տնուն մը անա-

պարծութիւն կը կոչուի : Այսպէս Մաւրի-
տիոս , որ գրեթէ մեռեալ էր այն ամէն
բաներուն : որ կեանք կու տան , ներքին
գաղտնի հանութեամբ մը կ'ուրտաւանար
այն սրբաւորութեանը վրայ՝ որ ինքը քովի
եղտոյններուն վրայ կ'ընէր : Անձնասիրու-
թեան գրգռումը իբրև մոգական հնարիւր
իր ձեռքերն սասցան այն գրչի ճարտա-
րութիւնն ու ճշգրութիւնը , որ առեւտր ա-
պեալին պարծանքն էին : Յաղթող հրեշտա-
կասկար կաղնւոյն ձեռքէն խալըսած՝ իր
թեթև թևերը կը շարժէր : Քանի մը ժա-
մուսան մէջ , այն դէմքն՝ որ առաջ հազիւ
սկսողով կրնար ըսուիլ , անանկ մաքուր ու
անանկ ողորկ եղաւ , իբրև թէ մարմարի-
նի վրայ փորուած ըլլար :

— « Ահա այս էր ընելիքը , ըսաւ Մաւ-
րիտիոս՝ գործիները անդին նետելով ու
շապկին թևերը վար թընցընելով շատ
դժուարին բան մը չէր » :

Ինչպէս ընտանեաց ուրախութիւնն երեւ-
ակայելու է . տղաքները ծափ կը զար-
նէին , կնիկն ու էրիկը զարմանքով և ե-
րախտագիտութեամբ լցեալ , ուրախակից
կ'ըլլային Մաւրիտիոսի՝ ըրած գործոյն հա-
մար , և կ'օրհնէին իր բարեգործութիւնը :
Մագդաղինէ լոկի և կէս մը ժպտելով կը
նայէր Մաւրիտիոսի վրայ ու կը կարծէր
թէ քաղցր ուրախութեամբ մը գինովցեր
էր անիկայ , իսկ Մաւրիտիոս ընդ հակա-
ռակն աշխատութիւնը լմնացուցածին պէս՝

ինքզինքը ներքուստ պախարակեր էր թէ ինչ անմասկան ու փուճ զուարճութիւն ուզեր էր ընել . և որովհետև ամէն բանէ աւելի գորովոյ տեսարաններն անախորժ էին իրեն, ուզելով շուտով լմընցընելներկայ տեսարանն ալ հագուստը մէկէն հագաւ :

— « Ա՛հ, պարոն, դու իմ կեանքս խալըսեցիր, աղաղակեց գործաւորը զեղուն սրտով :

— Ես անանկ կը համարիմ, պապասխանեց Մաւրիտիոս զաղ կերպով մը, որ խօսքի համար և չափազանցութեամբ կ'ըսես այս բանը . ապա թէ ոչ շատ դէշ ծառայութիւն մը ըրած կ'ըլլայի քեզի, և չէր արժէր շնորհակալ ըլլալ ինձի » :

Այս ըսաւ և ուժով մը մէկզի հրելով այն նագելի մանուկներն՝ որ կը գգուէին զինքը, անանկ դուրս ելաւ՝ ինչպէս որ ներս մտեր էր, և իր խուցն առանձնացաւ : Ինչէն արդեօք առաջ կու գար այս վայրենութիւնը . — մարդուս սիրտն անգունդ մըն է անարգ վատութեանց : Առանց գիտնալու՝ Մաւրիտիոս անոր համար կատաղած էր, որովհետև ալ անկէց վերջը պատճառանք մը չէր կրնար բերել չաշխատելու համար : Արուեստաւորները սարսափեցան անոր այս կերպով երթալը տեսնելով, և շատ կը ցաւէին որ չկրցան իրենց երախտագիտութիւնն յայտնել : Իսկ Մագդաղինէ, որուն սրտին ծանր հա-

րուած արուեստ էին շատ խաւքերը , պլուին
անդին դարձուց որ աչքերը արտէ : Մակայն
մտածեց աւ ըսաւ ինքիւրեն՝ թէ ապառնւոյ
մը թերեւս բողբոջ պիտի ըլլար սոյն օրը :

Եւ իրաւցընէ , ինչպէս որ յուսացեալ էր ,
Մագդաղինէ գիտեց որ ան օրուրնէ սկը-
սեալ՝ Մարտիրոս ստէպ կը տեսնուէր
Պետրոս Մարտոյի հետ : Մագդաղինէի
պառն շուտ կը կենար Մարտիրոս . բայց
օրիորդն անոր ձանր կերպն աւ զրապեալ
միտքը տեսնելով , յայտնի կ'իմանար որ
արտաքոյ կարգի փոփոխութիւն մը կը
պատրաստուէր ըլլալու անոր վիճակին
վրայ :

Առաւօտ մը որ Արսուլա իր երիտասարդ
տիրոջը սենեակը պիտի մտնար , յանկարծ
դուռը կէս բաց թողուցած ու հեւքը բռն-
նուած ետ փախաւ : Ինչ տեսած էր ար-
գեօք . ինչ արտաքոյ կարգի բան կը հան-
դիպէր Մարտիրոսի վերնայարկին մէջ :
Արսուլա Մագդաղինէի քով վազեց , ու
զրկուելով հետը՝ կը համբուրէր զանիկայ
ու արցունքները անոր վրայ կը թափէին :

— « Եկուր եկուր , սիրելի օրիորդ » ,
ըսաւ , և առանց ուրիշ բառ մը զուրցե-
լու՝ Մագդաղինէի ձեռքէն բռնեց և զայլի
պէս քալելով երիտասարդին խուցին առ-
ջևը բերաւ :

— « Առանց աղաղակ հանելու՝ մէյ մը
ներս նայէ » , աւելցուց :

Օրիորդը շունչը բռնելով կիսաբաց դուռ-

նէն ներս նայեցաւ . և երբոր աղէկ մը տեսաւ , արտասուալից աչքերով Որսուլայի գիրկն ինկաւ , և այս երկու ազնիւ արարածներն երկայն ատեն գրկախառն մնացին :

Արդեօք ինչ էր Մագդաղինէի տեսածն ալ : Իրեն համար ասկէց աւելի աղուոր տեսարան չէր կրնար ըլլալ . հասարակ բաճկոնակ մը հագած՝ սեղանատախտակի մը վրայ ծոեր կ'աշխատէր Մաւրիտիոս :

ԺԱ.

Փայտի քանդակագործութիւնը պատիւ ունէր այն ժամանակները . այս արուեստն՝ որ երկայն ատենէ 'ի վեր երեսէ ձգուած էր ու գրեթէ կորսուած , նորութեան ու զելովը գարձեալ սկսեր էր ծաղկիլ : Բիւշն ամէնքն որ մենք այն միջոցին միջին դարուն մէջ փոխադրուած էինք . գրականութիւնը գոթական կերպարանք կ'առնէր՝ երիտասարդութեան կենդանութիւնն ստանալու համար . և բանաստեղծութեան մէջ տիրող ախորժակը՝ գրաւեր էր նաև ուրուագրութեան բոլոր արուեստները : Նկարչութիւնը , արձանագործութիւնն ու ճարտարապետութիւնը՝ միջին դարով միայն կը գեղեցկանային : Բնական հետեութեամբ մը՝ կահկարասիքն ալ նոյն ախորժակին հետեւեր էին : Սկսան գաւառներու մէջ գտնուած դղեակները մերկացընել՝ Բարիզու նորութեանն համաձայնելու համար . յետոյ երբոր կաշիէ

անտուկները , զարդեղինաց ու սեղանի ա-
նօթոց դարանները , և քանդակուած ու
ազգատոհմի կնքով դրոշմուած բազմոցնե-
րը վերցուեցան , երբոր ճշմարիտ միջին
դարը անհետացաւ , ան ատեն հարկ եղաւ
նոր միջին դար մը ստեղծել : Ճարտար
ձեռք ունեցող մարդիկ ուզածնուն պէս
կերպարանք տալով ընկուղենւոյն , կաղ-
նւոյն և տանձենւոյն՝ ճանչցողներն ալ
խաբեցին , և այս հնարագիւտ խաբէու-
թեամբ քանի մը արուեստաւորներ հա-
րըստացան : Պետրոս Մարտոյի միջնորդու-
թեամբը՝ Մաւրիտիոս մէկէն աղէկ յանձն-
արարութիւններ ունեցաւ . և քանի մը
ամսուան մէջ առանց հարստութեան կրու-
ցաւ հարկաւոր եղած ապրուստը ճարել
իրեն և երկու օրիորդացն համար՝ որ իր
պահպանութեանն յանձնուած էին : Աղ-
քատ էր , բայց աշխատասէր ազքաս՝ որ
ինքզինքը կը հոգայ , և իրիկուան առանց
խղճմտանքի կը պառկի՝ ու առանց երկրորդ-
օրուան վրայ մտածելու . աղքատութիւն ,
որ հարիւր անգամ ընտրելի էր քան զայն
անբնական ու անհանդիստ զեղխութիւնն՝
որով ապրեր էր Մաւրիտիոս : Բայց իրաւ
ալ է որ այս երիտասարդը իր նոր վիճա-
կին աղէկութիւնները չէր ըմբռնէր ու չէր
սիրէր զայն : Ա՛րնդունէր իր ճակատագի-
րը , բայց ատելով զայն . կ'աշխատէր ,
բայց անիծելով աշխատանքը : Քանի քանի
անգամ այս առաջին ամիսներուն մէջ իր

քաջարկութիւնը պակասեցաւ ու կամօր
դեղնակեցաւ : Քանի քանի անգամ առանց
պատճառի յանկարծ զսցբանալով, նոյն
իակիր մօրաքեր թոռանն առջև, գործի-
նէքը դիտին պարկաւ ու ոտքին տակ խոր
տակեց ակասած գործը, կարծես թէ չէր գի-
տէր որ զակին հետ խոռոնուած ազնուա-
կան շնորհքն անօր յարգը կը կրկնատրա-
կէ, և թէ դեղնակեցայն անձին նուիրման
հետ պէտք է միանայ անոյշ ժպիտ մը :
Այդ վայրկեաններուն ահաւոր էր Մաւ-
րիտիոս : Մազգաղինէ տխրութեամբ կրե-
ւոր կը նայէր . յետոյ երբօր թշուառ երի-
տասարդն ուժէ ինկած ու տղքի վրայ չկա-
րենալով կեննալ՝ անկողնին վրայ կը ասրա-
ծուէր, օրիորդը կը մտանաւ անոր և ճակ-
տին բրտիկը կը սրբէր . բայց քիչ ան-
գամ կ'ըլլար որ Մաւրիտիոս կոպիտ խօս-
քով մը չհեռացընէր քովէն զանկայ :
Հրաքառութիւնն էր միայն որ կը գրգռէր
և կը խրախուսէր գինքն այս մրցանաց՝ ո-
րուն ձեռք զարկեր էր . ամէն բանէ աւե-
րի կը փափագէր իր մօրաքեր թոռանը կա-
բտ չըլլայ : Այն մտածութիւնը միայն՝ թէ
Մազգաղինէ իր ազատմանը ներք ծախեր
էր աւ հալխատէր իրեն հումար, բնու մըն
էր իր սրտին վրայ : Միանգամայն սրտէն
աս ալ կ'ըսէր՝ թէ երբօր Մազգաղինէի
վիճակն ապահովցընելու քլլայ, ալ սրարտը
մը չէր ունենար անոր և կրնար ուզածին
պէս իր կենացը վերջ տալ : Անձնասպա-

նութիւնը կը հսկէր իր գլխուն բարձին քով՝ ոչ իբրև ահարկու ուրուական մը , այլ իբրև ազատիչ հրեշտակ :

Մական կայ ուրախութիւն մը , որ անձանօթ է անոնց՝ որոնք իրենց կենացը մէջ ծնանելու աշխատութիւնը միայն կրած են , և զոր սաստիկ զգաց Մաւրիտիոս , որովհետև չկրնալով առաջուց գուշակել զայն՝ չէր պատրաստուած անտարբեր կենալու : Խօսքս այն ուրախութեան վրայ է , կ'ուզես տղայական ըսէ , բայց շատ հաճոյական ուրախութիւն , զոր կը զգայ մարդ երբոր առաջին անգամ իր աշխատութեամբը վաստակած ստակը ձեռքը կու գայ : Չէ , տղայական չէ այս ուրախութիւնը , որովհետև ուրիշ բան չէ՝ բայց եթէ մեր անձնական կարողութեան ճանաչմունքը : Մեր աշխատանքովն ստացած հարստութիւննիս՝ ամենէն աւելի օրինաւոր հարստութիւնը չէ , և որուն վրայ արդարապէս կրնանք պարծիլ : Ժառանգ մը որ իր ոսկիները կը համրէ՝ Աստուծոյ աչքին առջև այնչափ հարուստ չէ , որչափ այն գործաւորն որ իր վարձքը կ'ընդունի : Այս անդրադարձութիւնները չէր ընէր Մաւրիտիոս . բայց երբոր տեսաւ իր սեղանատախտակին վրայ այն քանի մը սկուտն՝ որ Պետրոս Մարտոյ բերեր էր իրեն , մէկիկ մէկիկ ձեռքն առաւ և մանկական հետաքրքրութեամբ մը զննեց ուշադրութեամբ զանոնք : Կարծես թէ սգուհ մըն

էր , կամ՝ ողորմելի մարգուն մէկը՝ որուն ձեռքն առաջին անգամ ստակ կ'իյնայ : Յանկարծ իր պատանեկութեան երջանիկ օրերուն խանդը վրան գալով , զուարթ դէմքով խուցէն դուրս ելաւ որ պարծանքով Մազդազինէի տանի այս երախայրիքը . կը խնտար , քսան տարուան դարձեր էր : Ափսո՛ս . դեռ գերմանացի օրիորդին դրանն առջև չհասած՝ սկսաւ արհամարհել ունեցած հաճութիւնը , ու անմտութիւն սեպել այն զգացմունքն որ զինքը կը մղէր դէպ 'ի իր մօրաքեռ թողը : Վայրկեան մը չտուած՝ այս գեղեցիկ յափշտակմունքը մարեցաւ , ինչպէս բռնկած խոզաններու կրակ մը սաստիկ անձրևի մը տակ : Պաղ կերպով մը սկուտները Որսոլայի գոգնոցին մէջ նետեց , որ նախասենեակն էր , և առանց խօսք մը զուրցելու ետ դարձաւ :

Աստուած այնպիսի ներքին սփոփանք մը կու տայ մեծ պարտք մը կատարողներու , որչափ ալ ծանր ու աշխատալի պարտք ըլլայ , որ սովորաբար ամենէն աւելի ապականեալ հոգիներն ալ կը զգան : Բաց ասկէ , թէ որ ամենէն աւելի հասարակ արուեստն ալ երբեմն երբեմն գեղեցիկ ժամեր ունի , կարգաւորեալ արուեստի մը պարապմունքն ալ պէտք է ունենայ իր զուարճալի վայրկեանները : Մաւրիտիոս իր սանձը խածնելով ալ հանդերձ՝ ներքուստ ախորժ մը կը զգար ինքզինքը ու-

րիչներուն օգտակար ու հարկաւոր տես-
նալով: Այս նիւթիս մէջ անհնարն ալ
աստիճանաւոր անձանց կը նմանինք: Եր-
բոր մարդիկ անոնց չորս կողմը կ'առնեն ու
թախանձանքներով կը ձանձրացրնեն, թէ-
պէտ արտաքուստ ներանալ կը ձեռքընեն,
բայց ներքուստ կ'ախորժին ու կը ծածկեն
իրենց ունայնասիրութեանն յողթանակը:
Բերիչ կողմանէ ալ, Մաւրիտիոս երբեմն
իր քանդակագործ գրչին ստեղծած դէմ-
քերուն շատ հաւնելով՝ կը զուարթանար:
Պատանեկութեանը անմեղ պատկերներն
իր սեղանատախտակին քով ժողովուած՝
միտքը կը դբաղեցընէին: Ինքզինքը՝ վաղ-
դրավէրի արուեստանոցին մէջ կը կարծէր,
և հայրն ալ քովը. ազնիւ ասպետը կը ծի-
ծաղէր ու կը խրատուէր զինքը: Մէկ
իօսքով, 'ի բաց առեալ յանկարծական
կատաղութեան միջոցներն որ նշանակեցի,
և որոնք երթալով կը քիչնային, քանի մը
ամսէ վերջը՝ երբոր իրիկունը կը մտենար,
Մաւրիտիոս կը դարձանար ժամանակին
չուտով անցնելուն, և վայլած խաղաղու-
թեանը վրայ: Աշխատութիւնն իր վարձքն
ալ մէկտեղ ունի. կ'առանձնացընէ զմեզ
մեր անձէն ու աշխարհէս. թէ որ իր ար-
դիւնքը այն զուարթութիւնն ալ ըլլար
միայն՝ որով կը լեցուի մարդ բոլոր օրը ա-
ղէկ անցընելուն համար, պէտք էր օրհնել
զայն ու սիրել:

Դժբազդարար այս փրկաւէտ ազգեցու-

Թիւնները ժամանակ չէին գտնար Մաւրի-
տիոսի արտին մէջ պաղպաղակներու , որով-
հետեւ իրիկունը հասածին պէս՝ տնէն դուրս
կը ժատնէր այն բարոյական զգաւուն՝ որ
առանց գիտնալուն օրուան մէջ քաղեր
էր : Բսա իր կարծեացն՝ իր աստիճանին
չգոցելով միակերպ ու քաղաքացւոյ մը
կեանք անցընելու , սրաքապէս զուրցեր
էր որ իր քնացն համեմատ կ'ուզէր ապրիլ :
Խաբրը մէջերնիս մնայ , Մաւրիտիոս Արտ-
ուրայի խոհակերութիւնը չէր ախորժէր .
Մաղդաղինէի հետ ալ գիմացէ գիմաց կե-
րակուր ուտելը չէր սիրէր : Վերջապէս ,
ինչպէս ամէն տկար արարածները , Մաւ-
րիտիոս միտքը դրած էր ցաւքընել յայա-
նապէս որ ինքն իր կամքէն միայն կը կա-
խուէր : Առաւօտը թեթեւ նախաճաշիկ մը
կ'ընէր իր խուցին մէջ . իսկ իրիկունն՝ եր-
բոր չըջակայից ժամացոյցները ժամը վկայ
կը գարնէին , կը հանէր վրայէն բաճկո-
նակը , կը հագուէր ու գուրս կ'երթար՝ շատ
անգամ առանց բարձր օրուանը մէջ իր մօ-
րաքնա թողը տեսած ըլլալու . որովհետեւ
ալ ամենեին ինքզինքը պարսական չէր
հաճարէր անոր՝ քանի որ ինքն իր ապրուս-
տը կը ճարէր : Խաղաղ ու հանդարտ գրե-
խով դուրս կ'ելլէր և արիւնը զովացած
աշխատութեամբ , լուծեամբ և ստան-
ձնութեամբ : Սկզբան ուրախութիւնը գրե-
թէ ինքիրմէն դուրս կը հանէր զինքը՝ իր
վերնայտրիէն՝ գուրս տեսնելով ինքզին-

քը , բազմութեան մէջ խառնուած , և փողոցներուն յատակին վրայ ազատ : Եւ սակայն ո՛ւր երթար . որովհետեւ իր անցեալ կեանքը բոլորովին թողուցեր էր : Բարեկամ մը չէր մնացած . բայց լաւագոյն ևս ասել՝ աշխարհիս մէջ ուր թարշամեր էր իր երիտասարդութիւնը , ընկերներ կ'ունենայ մարդ , բայց ոչ երբէք բարեկամներ : Պատահմունքն էր իր քայլերուն առաջնորդողը . ցաւալի հակամիտութեամբ մը գրեթէ միշտ կը մղուէր դէպ 'ի այն կողմերն՝ ուր ատենօք ընկղմեր էր իր հոգին :

Նման այն նաւաբեկ մարդուն որ ափանց վրայ կը թափառի ու նախանձու աչօք կը նայի այն ալիքներուն վրայ ծածանող նաւերուն՝ որ իր հարստութիւնը կը լընցին , տժգոյն ու տխուր դէմքով պատերուն քովէն քալելով այն մշտնջենաւոր հանդիսին մէջէն կ'անցնէր , որ իր պոհերուն վրայ չսգար ամենեւին , և որուն մէջէն ամենէն աւելի երիտասարդ , գեղեցիկ և շնորհալից անձինքներն ալ կը պակսին առանց իմացուելու ու առանց ցաւ պատճառելու , և ոչ իսկ ասուպի մը լուսաւոր հետքը թողլով : Չար կիրքերն որ քիչ մը ատենէ 'ի վեր կը ննջէին Մալրիտիոսի սրտին մէջ , կ'արթննային ու կը մռնչէին : Լուսով բռնկած պոպոզներուն վրայ կեցած , այն հրաշալի տեսարանին մէջ որ Բարիգու սրարձանքն է և աշխարհիս զար-

մանալիքներէն մէկը , այն կողմնակի ծառուղեաց մէջ որոնք իր դատարկ պտրտիլը տեսած էին ճոխութեամբ զարդարուած , Մաւրիտիոս Բարնյոնի փողոցը կը մտածէր , իր վերնայարկը , իր սեղանատախտակը . և կատաղութեան արցունքներ կը վազէին երեսէն : Զայրագին ու գողգողալով՝ ուղորմելին ետ կը դառնար բիւրաւոր նետերով վիրաւորուած վայրենի գազանի մը պէս : Երբոր տուն կը մտնար , իր խուցն առանձնանալէն առաջ քիչ անգամ կ'ըլլար որ Մագդաղինէի բնակութիւնը չմտնար , որն որ՝ ինչպէս ըսինք՝ Որսոլայի հետ երկայն բարակ կը նստէր գիշերը : Պէտք չէ կարծել թէ Մաւրիտիոս այսբանս 'ի գորովոյ շարժեալ կ'ընէր կամ պարզ քաղաքավարութեան մը համար . թշուառ երիտասարդը կ'ուզէր ասով իր բարկութիւնն յագեցընել ու այն երկու անմեղ օրիորդներէն իր կրած վշտացը վրէժն առնել : Անձնասիրաց յասկութիւնն է որ երբ իրենք կը կրեն՝ կ'ուզեն որ իրենց քովն եղող ամէնքն ալ կրեն :

Մաւրիտիոս անհրաժեշտ Մագդաղինէն ու Որսոլան կանթեղին առջև նստած ու աշխատութեան զբաղած կը գտնար , և անանկ զուարթ՝ իբրև թէ դեռ Վիեն գետին ափանցը վրայ ըլլային Վալդրամէրի սրահին մէջ : Գլխարկը գլուխը ու լօգիկն ինչուան վեր կոճկած՝ անքաղաքավար կերպով մը ներս կը մտնար , պղտոր դէմքով :

և դատան ու արհամարհոտ նայուածքով մը : Երկուքն ալ ոտքի վրայ կ'ելլային դինքն ընդունելու համար , Մագդաղինէ ժպտելով մը , իսկ Որսուլա գգուելով զինքը . ոչ երբէք ծանր խօսք մը , ոչ երբէք անխոհեմ հարցմունք մը իրենց բերնէն կ'ելլէր . ընդ հակառակն ամենայն սէր ու խանդաղատանք կը ցուցընէին վրան , ինքրև թէ իրենց ցանկալի եզրայքը կամ ախորժեղի բարեկամն ըլլար : Մաւրիտիոս կոպտութեամբ մը հրելով Որսուլան և հըպարտ աչքով մը նայելով գերմանացի օրիորդին նկարներուն վրայ , կ'երթար խուցին ծայրը կը նստէր . և երբոր երկու ազնիւ օրիորդներն իրենց աշխատութեանը նորէն ձեռք կը զարնէին , վայրագ ու երգիծաբան նայուածքով մը կը զննէր զանոնք : Այն երկու գէմբերուն պայծառութիւնը , այն փոքրիկ գերդաստանին խաղաղութիւնը , այն աղքատին յարկին տակ երևցած բարեկարգութիւնը , և այն ներդաշնակ վայելչութիւնն որ այն չափաւոր կահկարասեաց ամենէն պզտիկ մասերուն վրայ ալ կը նշմարուէր , այս ամէնը փոխանակ հանդարտեցընելու զինքը՝ աւելի կը զայրացընէին : Ոչինչ բանի մը համար դառն խօսքերով իր մաղձը անոնց վրայ կը թափէր . ինքն որ սովորաբար սակաւախօս էր , այն միջոցին անգութ , ուրիշի դպչող ու անհաշտ զուարթութիւն մը կը ստանար . ինքն որ սովորաբար տխուր ու

լուսէր, երբոր իր մօտաքեռ թուան սիրտը վիրաւորելու ժամանակը կու գայ՝ հանճարեղ, հնարագիւտ ու ճարտասան կ'ըլլար: Իր խօսքերովը կ'իմացընէր որ ամէն բանէ աւելի սաստիկ ձանձրացեր էր Մագդաղինէէն ու Արսուլայէն: Մագդաղինէ անոր ամէն զուրցածներուն քաղցր պատճառաբանութեամբ ու անստիտխելի աղնուութեամբ մը պատասխան կու տար. բայց Արսուլա գիտէր որ խեղճ օրիորդը արցունք կը թափէր ազգականին երթալէն վերջը:

Օր մը ձեռքը աշխատութիւն չունենալով Մաւրիտիոս, առաւօտանց տնէն դուրս ելեր էր ու ինչուան իրիկուն ասդիս անդին թափառեր՝ այն հրակէզ արեուն տակ, որ կը բորբոքէ ճահիճներու տիղմն ու անարգ կրից ցեխը: Հին Իտալական թատրոնին մօտերը՝ կերակուր կերաւ պանդուկի մը մէջ, որուն համբաւն այնչափ լաւ ելած չէր: Մութ խուցի մը ծայրը նստած ու կանթեղի մը լուսովը լուսաւորուած, քիչ կերաւ ու ետեւէ ետեւ կլլեց ու պարպեց աղոտով խառնուած գինւոյ շիշ մը, ան գինիէն՝ զորն որ ներս մտցընելու համար ոչ երբէք տուրք վճարուած է մաքսատանց: Շատ տարբերութիւն կար աս կերակուրին ու ան ճաշերուն մէջ, որ ատենօք կ'ուտէր Մաւրիտիոս զուարթ ընկերներով Բարիզոս Մրձանցիկ սրահներուն մէջ, որուն դրանն առջև կը սպասէր իր կառքն,

և գաւթին քովը՝ իր սենեկապան ծառան : Արմուկները սեղանին ծածկոցին կրթըն-
ցուցած , և ձեռքերը ճակտին դրած , եր-
կար ատեն գրգռիչ մտածութեանց ան-
դունդի մը մէջ ընկղմած մնաց , զորոնք
աւելի կը սաստկացընէին գինովութեան
գողորշիները : Գլուխն ու ղգայարանքները
գինիին ուժէն բռնկած , ճամբու գլուխ-
ներու վրայ անցուց իրիկուան մնացած
ժամանակը՝ անցնողները զննելու զբաղե-
լով : Երբոր իր մօրաքեռ թուան խուցը
մտաւ , Մագդաղինէ միայն մնացեր էր
հոն . որովհետեւ Որսուլա առջի իրիկուընէ
'ի վեր թեթեւ տկարութիւն մը զգալով
Մագդաղինէ բռնագատեր էր պինքը որ
երթայ կանուխ պառկի : Երբոր Մաւրի-
տիոս ներս մտաւ՝ Մագդաղինէ կարգալու-
հետ էր : Գոցեց գիրքը , ստուիին վրայ դը-
րաւ , և սովորական ընդունելութիւնն ը-
րաւ ազգականին , առանց կարծես թէ ան-
զբաղառնալու անոր դէմքին այլայլութեա-
նը , աչքերուն մութ փայլունութեանն և
երեսին կարմրութեանը , որ գինւոյն ար-
դիւնքն էին : Մաւրիտիոս իր սովորական
տեղը նստաւ , և կտրուկ ու տաք ձայնով
մը անանկ չափազանց գովեստի խօսքեր
վուրցեց օրիորդին , որ անիկալ սկզբան
զարմանքով մը երեսը նայեցաւ , ետքը
բարձրաձայն ծիծաղեցաւ : Բայց այս ծի-
ծաղն ու աս վուարթութիւնն որով կատա-
կի տեղ կ'առնէր եղածը , աւելի վառեցին

զՄաւրիտիոս : Զայրագին կերպով մը սիրոյ վրայ խօսեցաւ . մթին էր իր խօսակցութիւնը, բայց երբեմն արտաքոյ կարգի խօսքեր անախորժ լուսով մը կը լուսաւորէին զայն : Իսկ Մագդաղինէ անշարժ ու պաղ կեցած, անոր խօսած միջոցն անանկ արհամարհոտ՝ միանգամայն տխուր կերպով երեսը կը նայէր, որ վերջապէս Մաւրիտիոս անոր նայուածքէն ճնշուած՝ լուռ կեցաւ, տեսնելով որ մարմարիոնի մը հետ կը խօսէր : Մագդաղինէ միշտ նոյնպէս կեցած, կը շարունակէր անոր նայելու նոյն տխուր և ծանր կերպով, որուն մէջ բարկութեան հետք չկար, հապա խառնուրդ մըն էր մայրական գթութեան և ցաւագին զարմացման : Մաւրիտիոս ալ չկրցաւ դիմանալ, ելաւ փախաւ զարհուրած :

Քանի մը ժամ այն կապարեայ քունով հանգչելէն ետքը՝ որ գինովութեան կը յաջորդէ, արթնցածին պէս Մաւրիտիոս՝ առջի իրիկուան հանդիպածին յիշատակը միտքն եկաւ ու շատ ամչցաւ : Զէ թէ խրղճմտանքը զարնելուն համար . որովհետև շատոնցունէ՛ի վեր չափազանց ներողամտութեան վարժեցուցեր էր զանիկայ . հապա կը մտածէր թէ ինչպէս անկէ ետքը Մագդաղինէի դիմացը պիտի համարձակէր ելլալու : Երբոր այս տխուր մտածութիւններով միտքը պաշարուած իրիկունը կը մօտենար, Մագդաղինէ իր խուցը մըտաւ : Մաւրիտիոս դեղընցաւ ու խռովե-

ցաւ . կ'ուղէր որ գետինը ոտքին տակ պակսի ու առաստաղը գլխուն վրայ միջի . Օրիորդը ձեռքն երկնցուցած ; սղոթիչ՝ նայուածքով ժը ու ժպտելով՝ եղբայր կոչեց զինքը . անանկ որ քիչ մը աստնն աստնն կուսեցաւ Մաւրիտիոս թէ երանց էր արգետք առջի իրիկուան տեսարանը : Գժուարին է որ 'ի բնէ ազնիւ եղող անձինք անկեղծ գորով մը չզգան այն կ'անտանց վրայ՝ որոնց նախատինք ըրած են , և որոնց ձեռքն ըլլալով ըստ ժամանակին զիրենք ամբողջը ները , ներողամտութեամբ ու բարեսիրութեամբ միայն հատուցուեցն ըրեր են իրենց : Մարդկային սիրտը միշտ երախտագէտ է այն խնամոց՝ որով մէկը կը ջանայ չվիրաւորել մեր անձնատիրութիւնը : Մաւրիտիոս թէպէտ արատարուօտ նշան մը չըտուաւ , սակայն Մագդաղինէի վեհանձնութեանը վրայ սիրտը շատ շարժեցաւ . իր ներքին ատեանը ճանչցաւ թէ հարկ չէ որ առաքինութիւնը ծաղրելի ու գաժան ըլլայ , և թէ գոնէ երբեմն կրնայ սիրելի ըլլալ :

Մագդաղինէ եկեր էր աղաչելու որ նոյն օրը իրեն հետ մէկտեղ կերակուրն ուտէ : Մաւրիտիոս գէպ 'ի երկինք մէյ մը նայեցաւ , որ առաւօտուրնէ 'ի վեր անձրեային էր . և մտածեց որ այնպիսի օդով մը երթալ անէն դուրս խեղճ կերակուր մը ուտելը՝ զուարճալի բան մը չէր . ուրիշ կողմանէ ալ ստամոքսն առջի օրուան դինովու .

թեան տուած նեղութիւնը գեռ կ'իմանար :
Ես մէկ անդ մը կարգացեր եմ որ խել մը
մարդիկ շուայտութեան յաջորդ օրը գա-
ցեր անապատական եզեր են : Ա՛րջապէս՝
Մաւրիտիոս , որ ինքզինքը յանցաւոր կը
սեպէր Մազդազինէի առջև , պտտչաճ սե-
պեց այսպիսի թևթև կերպով մը քաւել իր
յանցանքը . ուստի ինքն ալ անոր մեծ-
անձնութեանը նմանելով , Մազդազինէի
խնդիրքին զիջաւ :



ԺԲ

Սեղանը պզտի սեղանատան մը մէջ
զրուեր էր, որ ազուոր թղթով մը պա-
տած էր ամենեւին նման կաղնիի փայտէ
բանդակներուն : Կրակարանը ծածկուած
էր աստղածաղկի, տահլեայի և վարդի
փունջերով . միակ պատուհանն որ կար
հոնտեղը՝ պարտիզին ծառերուն վրայ կը
նայէր, որոնց անբունները ժանգոտեր էին
աշնան սուր ու թեթև քամիներէն : Սե-
ղանը քիչ մը նեղկեկ էր . ճոխութիւնը
կարթուսեան կրօնաւորի մըն ալ տնախորժ
չէր կրնար տեսնուիլ . բայց ձեան պէս
սպիտակ ծածկոցին վրայ՝ ամէն բան մա-
քրութեամբ կը փայլէր, ամէն բան զը-
լարթ, վայելուչ ու հաճոյական տեսք մը
ունէր : Երբոր Մաւրիտիոս գերմանացի օ-
րիորդին դիմացը նստաւ, որ անձամբ իր
աղբատին ճաշոյն կերակուրները անանկ
չնորհալից կերպով մը կը բաժնէր՝ որ շատ
հարուստներու քով ալ չգտնուիր, համո-

զուեցաւ մտքէն որ ճշմարտութիւնը խոստովանելով այս կերակուրը լաւագոյն էր քան այն ցած պանդոկն , ուր ատենէ մը 'ի վեր սովորութիւն ըրեր էր ճաշելու : Կերակուրները բազմաթիւ ու բարակ բաներ չէին . բայց որ լաւագոյնն է՝ առողջ և համեղ : Ազնուասիրտ Որսուլան ամէն ճարտարութիւնը բանեցուցեր էր աղէկ եփելու համար . և յիրաւի իր կարողութենէն ալ աւելի յաջողեր էր : Այս միջոցիս տեսնելու էր զինքը ինչպէս մաքուր , զուարթ , աշխոյժ՝ թւերը վեր առած կրակի պէս իր երիտասարդ տիրուրտոցը քով կ'երթար կուգար , կերակուրները կը բերէր , պնակները կը փոխէր , աղէկ կտորները Մաւրիտիոսի կը ցուցընէր , և ուրախութենէն ինքիրմէն դուրս կ'ելլար՝ երբոր անիկայ կերակրոյ մը կը հաւնէր : Մագդաղինէ հագիւ թէ կ'ուտէր և իր ազգականը միայն կը հոգար : Մաւրիտիոս այսչափ խնամքներ որ տեսաւ , խանդաղատեցաւ սիրտը . և շփոթած ինքն իրեն կը հարցընէր թէ ինչ ըրեր էր որ արժանի ըլլար այսպիսի սիրոյ : Պէտք է աս ալ ըսեմ որ նոյն իսկ Որսուլայի ճարտարութեանն ալ անպզայ չեղաւ , որուն վրայ ասանկ համարմունք մը չունէր ինչուան այն օրը : Բայց աղանդերի¹ միջոցը շատ յանկարծակիի եկաւ . Որսուլա քովը մօտեցաւ ձեռքը մեծ փուռնջ մը բռն-

1 ՏՔ. ՉԻՐԷԿ :

նած , և սկսաւ պղտօի բարեմաղխութեան մը արագասանել՝ զոր առաջնաց արտօնք էր . բայց օրտին այլայլութենէն ձայնը կտրուցաւ , և Մաւրիախոտի գիրկը վազեց ու աճմէն տարի բարտը հասնեա ըսելով . անոք ասնը շնորհաւորեց , և արցունքները երթ տասարդին վրայ կը վազէին : Երբոյ Մազը գաղինէի ալ կարգն եկաւ , սեղանին վրէրայէն ձեռքն երկնցուց Մաւրիախոտի և քանի մը պարզ ու սիրալիր խոսքեր զարցնեց : Այս միջոցիս սեղանին փոսքը շարունակուող ու պարսիմատներով ծածկուեր էր ինչպէս 'ի Վալդրապէր . հին գինոյ շի մը , զոր երկու օրիորդներն այս օրուանս համար ճարեր էին՝ ամիս մը սաստիկ խնայութիւն ու զոհեր ընելով , ծաղկներուն մէջէն իր կերամտով պատած երկայն վիզը վեր անկեր էր . օդը բացուեր էր . թռչունները քնանալէն առաջ՝ կ'երգէին պարտիզին մէջ . թաց տերևներուն զմայլեցուցիչ հոտերը բաց պատուհանէն ներս կու գային . վերջապէս՝ արևն երկնից երեսէն աներևութանալու մօտեցած , սեղանին վրայ զուարթ ճառագայթ մը ծագելու էր , ուսկից ասպակիները ազուոր բիւրեղի նման կը փալլելէին : Քանի որ Մաւրիախոտ իր հօրենական տունէն հեռացեր էր , այս առաջին անգամ էր որ ուրիշներն իր ասնին օրը կը շնորհաւորէին իրեն : Այս տարեգարձն որ գրեթէ տասը տարու ընէ՝ 'ի վեր մոռցուեր էր , բոլոր իր պատանակութեան

ժամանակի գեղեցկագոյն յիշատակները
ուժգին շարժմամբ մը մտրին մէջ արթն-
ցուց : Յիշեց այն ատեններն՝ որ այս օրը
հասարակաց ուրախութեան օր մըն էր՝ ի
Վարդրավէր : Ինրդինքը մարգիզուհւոյն աւ-
աստեօտին հետ տեսաւ , և բոլոր ծառա-
ները չորս կողմն առած իրենց խղճերն ու
իրենց սէրը անկեղծ խօսքերով կը բացա-
տրէին իրեն : Այս պատկերներն որ մտացն
առջևը ելան , սիրտը կտոր կտոր եղաւ ,
եղբորդական դող մը ոտքէն ինչուան մա-
զերուն արմատը քակեց , ճակատը դեղըն-
ցաւ և աչքերն արտասուօք թրջեցան :
Մագդաղինէ , որ կը դիտէր զանիկայ , ե-
լաւ վաղեց քովը՝ այս յարմար վայրիկենին
չահելու համար անոր սիրտը : Անոր ուսո-
ցը վրայ կրթընեցաւ , և Առւիթի մէջ գրտ-
նուած Պոլիմեհա անուամբ գեղեցիկ ար-
ձանին նման , կամ մանաւանդ պահապան
հրեշտակի մը պէս որ իր հսկողութեանն
յանձնառած տղուն յարութիւնը կը դնէ ,
քանի մը վայրկեան շուք ու մտախոհ կե-
ցաւ : Հուժկ յետոյ Մարիտիտս մտածե-
լով Մագդաղինէի իրեն համար բրածն ու
խր անար համար բրածն , կարծր սիրտը
կակղացաւ : Այս անգամ յանպատրաստից
փրան հատնելով այս դիպուածը , իր հարաբ-
տութիւնը փոխանակ զպրանապօլ խոնար
հեցաւ այսպիսի առաքինութեան մը առջև :
Խօսք մը չընդհատեց այդ արտաշարժ տե-
տարանը : Ետն իսկ Արտղա սլ շուք կե-

ցաւ . բայց երբոր երիտասարդն յերախտագիտութենէ շարժեալ Մագդաղինէի ձեռքը պագաւ , Որսոլա չկրցաւ ձայնը բռնել ու իր սովորական զարմացման աշղակաւը գոչեց , իբրև թէ իր սննդակից տէրը աշխարհիս ամենէն աղէկ գործն ըրած ըլլար : Բոլոր իրիկունը Մագդաղինէի խուցին մէջ անցուցին ճրագի լուսով քաղցր խօսակցութեան զբաղած : Խօսեցան Վալդրավէրի , մարգիզուհւոյն ու ասպետին վրայ . նոյնպէս այն աշնանային իրիկուան վրայ՝ որ առաջին անգամ իրարու հանդիպեր էին՝ Մաւրիտիոս ձիու վըրայ , իսկ Մագդաղինէ Բիէռոյի անզգամութեանը պատճառաւ մամռապատ գետնին վրայ լացով նստած : Երկուքն ալ յօժարութեամբ յիշատակեցին իրենց դրշեակն հասնելուն ամէն պարագաները : դեռահասակ օրիորդին երիտասարդ հեծելոյն հետ գրկուիլն առանց գիտնալու թէ իր ազգականն էր անիկայ . ձիուն իրենց ետեւէն քալելը՝ սանձը վիզն անցուած , ու թարմ խոտերն համտես ընելը . անտառին բացավայրին արևմտից ճառագայթներով լուսաւորուիլը , երիտասարդին խընտումը երբոր Մագդաղինէ պզտի Մաւրիտիոսին վրայ կը խօսէր , պարտիզին վանդակապատ դուռը , պատերուն ետեւ տեսնուած գեղեցիկ պալատին աշտարակիկները , հուսկ ուրեմն՝ երկու ծերունի ընկերակիցներուն զաւթին վրայ ոտք ելլելն օտա-

րական օրիորդն ընդունելու համար : Չէին
յագենար խօսելով ու լսելով այս յիշատակ-
ներն՝ որ իրենց յիշողութեանը մէջ կը
ճռուողէին ինչպէս թռչնարանի մը մէջ
թռչունները : Երբոր բաժնուելու ժամա-
նակը մօտեցաւ , Մաւրիտիոս բռնադա-
տուեցաւ խոստովանելու որ մարդուս
կեանքն իր աղէկ վայրկեաններն ունի , և
աղքատներն ալ իրենց հանդէսներն ունին
ինչպէս հարուստները : Իր սենեակն որ
մտաւ , առանց բարկութեան նայեցաւ իր
գործեաց վրայ , և հաճութեամբ զննեց
հօրը պատկերը . յետոյ արտաքոյ կարգի
խաղաղութեամբ մը պառկեցաւ , ըսելով
մտքէն որ իրաւցընէ լաւ օրիորդներ են իր
մօրաքեռ թոռն ու իր սննգակից քոյրը .
և անոյշ ու խորունկ քնացաւ : Արչալու-
սոյն արթըննալով Պետրոս Մարսոյի ձայ-
նէն , որ օրուան գալուստը կ'ողջունէր ու
կ'աղօթէր Աստուծոյ երգելով ու աշխատե-
լով , անկողնէն վեր ցատքեց ու հաստատ
կամքով աշխատիլ սկսաւ :

Շատ կը խաբուի մէկը թէ որ զՄարի տիրոս իր բնութենէն բոլորովին ազատած համարի, աբախանայ այդ յաղթութեանն համար, և միտքը գնէ որ արիչ քան չէր մնար ընել Մարիովտոսի՝ բայց եթէ ձեռքն երկնցքնել ու առնել իր երիտասարդութիւնն ու անոր ամէն տնկնտացած գանձերը. այսպիսի կարծիքունեցողը Աստուծոյ գիտաւարութիւնը չըմբռնէր, որ կ'առէ որ քաւութիւնն առթէ մարդուն նորոգութիւնը, և թող չտար որ մէկ օրուան մէջ մարդս այն սրբազան բլրոյն գազաթն ելլայ՝ որուն ճամբուն վրայ վար ինկեր է : Այդ զառ ՚ի վայրէն վեր ելլելը շատ դժուարին է, և Մարիտիրոսէն աւելի զօրաւորները կը ճանչնամ որ կէս ճամբուն վրայ կանկ առած են խոնջեալ, վաստակաբեկ և տփգոյն, սարսափած աչքով մը չափելով այն երկար անցքն որ դեռ կը մնար ընելու : Իրաւ է որ անոնց քով հրեշտակ

մը չկար զիրենք զօրացընելու համար , և րեսնուն քրտինքը սրբելու , և ցուցընելու համար իրենց ամենէն աւելի կարճ և հարթ ճամբան , ուսկից կործանեալ հոգիները կրնան երկնային գագաթը հասնիլ :

Աշունը լմրննալու վրայ էր . նոյեմբերը առաջ կ'երթար , եղեամէ վերարկուին տակը դողալով , անձրևէն ջուր կտրած , ոտքերը շաղախի մէջ թաթխուած , և ճակատը մառախուղով պատած : Այս եղանակին տուած խորունկ տխրութիւնն ըմբռնելու համար , պէտք է մարգ Բարիզ ըլլայ՝ մինաւոր , ազքատ , առանց ընտանեաց , և բռնադատուած ըլլայ կերակուր գտնելու համար տնէն դուրս ելլալ , ու դարձին ատենը մտքէն անցընէ որ տան մէջ ազահ կրակարանի մը առջև ծնկան վրայ նստած միայնութեան հետ ընկերութիւն պիտի ընէ : Մաւրիտիոս Արսոլայի խոհակերութեանը վրայ ունեցած կանխակալ կարծիքը մէկգի թողլով , և ձմեռուան սաստկութենէն ատիպուելով ընտանեաց կեանքն ընտրելու , վերջապէս յանձն առեր էր իր մօրաբնութո՞ւնն հետ ճաշելու անկէց ետքը : Իր տօնին իրիկուան ունեցած անխառն զգացմունքները անցած գացած ըլլալով , նեղութիւն քաշեց վարժելու այն հասարակ քաղաքացւոյ սեղանին : Սակայն երբոր հիւսիսային քամին կը փչէր և ձիւնը պատուհանաց ապակիներուն կը զարնէր , ախորժանօք մտքէն կը զուրցէր որ

երկու քայլ հեռուն իր սեղանը պատրաստ էր տաքուկ ու աղէկ գոցուած սեղանատան մը մէջ, ուր երկու ծիծաղերես օրիորդներ միշտ խնամքով կ'ընդունէին զինքը :

Թէպէտ ոչ երբէք ճոխ էր սեղանը, բաւական զուարճալի կերպով կ'անցնէր կերակրոյ ժամանակը : Մաւրիտիոս աշխատութենէ անօթենալով սաստիկ ախորժակով մը կ'ուտէր, և անոր համար աչք կը գոցէր սպասուց կարգաւորութեանը վրայ : Արսուլա գիտէր իր երիտասարդ տիրոջը սիրած կերակուրներն, և իր ուրախութիւնը զանոնք եփելն էր : Մագդաղինէ ալ իր կողմանէ կերակրոց նուազութիւնն իր շնորհալից խօսակցութեամբը կը ծածկէր : Մաւրիտիոս քիչ անգամ կը խաբուէր այսպիսի բանաստեղծական պատրանքներէ . 'ի վերայ այսր ամենայնի երբեմնու երբեմնու կը սքանչանար անոր մտաւորական ճրիցն ու շնորհալի կերպին վրայ, որոնց այնչափ երկար ատեն ամենեւին ուշադրութիւն ըրած չէր : Այսպէս՝ քանի որ սեղանի վրայ էին, զուարթութեամբ կ'անցնէր ժամանակը : Բայց գծբաղդաբար իրիկունը յուսահատեցուցիչ դանդաղութեամբ մը կ'անցնէր, ոչ Արսուլայի կամ Մագդաղինէի, հապա Մաւրիտիոսի համար, որ չէր գիտէր ինչով ժամանակը սահեցընէ : Նըշանակելու բան է որ կանայք միշտ դբաղանք ունին, իսկ ընդ հակառակն էրիկ

մարդիկ բուրդովին պարապ կը կենան երբ, որ իրենց էական աշխատանքէն կը դադրին : Մագդաղինէ և Ռրսուլա կանթեղին քովը նստած՝ ասեղով կ'աշխատէին . Մաւրիտիոս ձեռքերը գրպանները դրած՝ խուցին մէջ վեր վար կը պտըտէր ձանձրացած կերպով մը : Մէյ մը մէկին , մէյ մը մէկալին քովը կ'երթար , աշխատութիւննին կը զննէր , կը նստէր , ոտք կ'ելլար , նորէն կու գար կը նստէր : Նոյն իսկ ամենէն խելացի անձանց մէջ ալ խօսակցութեան նիւթերն անհատնում չեն . անոր համար խելքով հնարած են մարդիկ թուղթերն ու ուրիշ խաղերը՝ որպէս զի խօսակցութեան հարկ չըլլայ ընկերութեան մէջ եղած ատեննին : Այն օրուրնէն 'ի վեր՝ որ Մաւրիտիոս իր մօրաքեռ թոռանը խուցը մտեր էր նախատելու դիտմամբ , իր խօսքերն առջինին չափ կծու չէին : Ինքն իր վրայ կը հսկէր ու կը ջանար ինքզինքը բռնելու . երբեմն ալ չրթունքը շարժած միջոցը՝ կը խափանէր այն նետն որ թռչելու վրայ էր : Սակայն որչափ ալ ջանք ընէր ինք իր վրայ տիրելու ու իշխելու , ձանձրութենէն զայրացած՝ որ ան ալ յանկարծական բարկութեանց ենթակայ է , քիչ անգամ կ'ըլլար որ առանց դառն կամ խայթող խօսք մը բերնէն փախցընելու անցընէր իրիկունը : Մագդաղինէ վստահ ըլլալով չափէն դուրս չելլելու , փոխանակ ուրիշ ատենուան պէս զլուխը ծռելու՝ պատասխան

կու տար այն խօսքերուն քաղցր բայց կշռած բառերով, այն հիանալի շնորհով զոր կը խօսի բանավարութիւնն երբոր շնորհքով և ազնուութեամբ բարեխառնած ըլլայ: Երբեմն երբեմն ալ Որսուլա մէկ պղտի վարպետ խօսք մը կը գլորտըկէր, որ Մուիէրի աղախնոյն բերանն ալ կրնար վայլել: Մաւրիտիոս կը սկսէր դայրանալ. յետոյ մէկէն խոժոռադէմ նայուածքով մը լռութիւն կը պահէր. երբեմն ալ չէր կրնար ժպիտը բռնել:

Հանդերձ Մագգաղինէի հրեշտակային լաւութեամբն ու ցուցուցած սրտալիր ու խնամոտ պատուովը՝ դեռ իրիկունները շատ երկար կ'երևային Մաւրիտիոսի: Ստէպ խօսակցութիւնը կը կտրուէր ու հազիւ հազ նորէն կը սկսէր: Օրիորդը ձանձրութեան դէմն առնելու համար՝ աղաչեր էր Մաւրիտիոսի որ գիրք մը կարդայ իրեն. բայց անիկայ յանձն չէր առած այդ առաջարկութիւնը: Իր առջի պարապորդ և ցըրուած կենացը միջոց՝ շատ քիչ անգամ եղեր էր որ գիրք մը բացած ըլլար: Իր յիմարական ծախքերը ձիերու, կառքի կազմածներու և կահկարասեաց գործածեր էր. ամենևին չէր մտածած ընթերցմամբ խորհրդածութեանց դուռն բանալ: Մագգաղինէ, որուն առաջարկութիւնն առաջին անգամ մերժուեր էր, ետ չկեցաւ իր խորհրդէն. իրիկուն մը անգղիական գրականութեան ախորժելի գրուածներէն մէկը,

Ուէյքֆիլտի փոխերեցը , իր ազգականին ձեռքը տուաւ : Գիտեն ամէնքը թէ ինչպիսի փափկութեամբ և ինչպիսի սրտաշարժ պարզութեամբ Կոլտոզմիթ կը պատմէ մեզի այս գրքին մէջ ընտանեաց ամէն ուրախութիւններն և ամէն անձկութիւնները : Մաւրիտիոս , որ խորունկ տգիտութեան մէջ թաղուած էր , նեղսրտութեամբ մը չուզեց երես մըն ալ կարգալ , հարցընելով Մագդաղինէի թէ տղո՞ւ տեղ կը գնէր զինքը՝ որ պատմութիւններով կ'ուզէր զուարճացընել : Մագդաղինէ քաղցրութեամբ վըրայ տուաւ , և Մաւրիտիոս աւելի համբըրութիւնն հատած՝ քան թէ անոր կամբը կատարելու համար , որպէս զի անոր ծանձրացուցիչ խօսքերէն խալըսի՝ սկսաւ կարգալ այդ դարմանալի պատմութիւնը : Ամենայն անձանց նկարագրութեանը , զանոնք ներս բերելու կերպին և այն արուեստին մէջ որով ամենէն չնչին պարագաներն հեղինակը գործողութեանն հետ կը միացընէ , այնպիսի բնականութիւն ու սքանչելի գեղեցկութիւն մը գուրս կը ցատքէ , որ շատ դժուարին է առանց ամբողջ կարգալու ձեռքէ ձգել այդ գիրքը : Մաւրիտիոս թէպէտ ամբարտաւանութեամբ կ'արհամարհէր իր դայեկի պատմութիւն անուանածները , սակայն այդ ընտանեկան դիւցազներգութիւնը մոգեց զինքը : Արդէն իր Մագդաղինէի հետ ամէնօրեայ խօսակցութիւնն իր սիրտը կակղացուցեր

էր և պատրաստեր էր ընդունելու ու բեղնաւորելու այդ յարգի սերմունքը : Մաւրիտիոս տեսնելով թէ ամենէն անձանօթ աստիճանի մարդիկն ալ ինչպիսի ծանր փորձերու մէջ կ'իյնան , հասկըցաւ որ նըւաստագոյն վիճակի անձանց քով ալ կը գտուին բարձրագոյն առաքինութիւններն ու դիւցազնագոյն անձին նուիրմունքները : Մէկ շունչով կարդաց լմընցուց , և շնորհակալ եղաւ իր մօրաքեռ թոռանն՝ որ ասանկ զուարճութեան մը պատճառ եղեր էր իրեն : Այն օրուընէ սկսեալ՝ ալ աղաչելու հարկ չկար . Մաւրիտիոս զարմանալով ընթերցմունքէն զգացած հաճոյիցը վրայ , կը հիանար՝ առանց բերնով բան մը զուրցելու՝ Մագդաղինէի խոհուն խելքին վրայ , թող կու տար որ անիկայ առաջնորդէ իրեն և օր օրուան վրայ տարբերութիւն կը զգար իր անձին վրայ : Երբոր գիւրքը կը գոցէր , կը սկսէին իրարու հաղորդել իրենց մտածութիւններն ու իրենց զգացումները . Որսոլա ալ խօսակցութեան մէջ կը մտնար , և այսպէս առանց ժամերը համրելու իրիկունը կ'անցնէր :

Պետրոս Մարսոյ ու իր կնիկը երբեմն երբեմն կու գային Մագդաղինէի սենեակն անցընելու իրիկունը , որ ճշմարիտ բարեկամութեամբ կը սիրէր զանոնք : Մագդաղինէ միտքը հաստատ դրած էր՝ որ Մաւրիտիոսի բնութիւնը փոխելու համար Պետրոս Մարսոյ գործի եղած էր Նախա-

խնամութեան ձեռքը . չէր կրնար մոռնալ որ եթէ անիկայ չըլլար , Մաւրիտիոս դեռ երկար ատեն թերևս 'առիթ չէր ունենար աշխատութեան ձեռք զարնելու : Արուեստաւոր ընտանիքն ալ չէին մոռնար որ Մագդաղինէի միջնորդութեամբը Մաւրիտիոսէ օգնութիւն գտեր էին այնպիսի դժուարին պարագայի մը մէջ ուսկից կը կախուէր իրենց բոլոր ապագայն . այս քաղցր յիշատակը մտքերնէն չէր ելլէր և վառ երախտագիտութիւն մը կը պահէին : Թէպէտ վարժած էին Մաւրիտիոսի կերպին և վերջապէս սկսած էին սիրել զան , բայց դեռ քիչ մը կը խրատէին անկէ . սակայն Մագդաղինէի վրայ այնպիսի գորով մը կը զգային , որ լի էր մեծարանօք : Շուտով ըմբռներ էին ասոնք որ երկու երիտասարդները՝ զորոնք իրենք եղբայր և քոյր կը կարծէին՝ ուրիշ վիճակի անձինք էին . անոր համար գրացութեան պարտքն 'ի գործ դնելու և անոնց հետ վարուելու միջոց՝ յարգութիւնն ու ակնածութիւնը կը միացընէին անկեղծ բարեկամութեան մը հետ :

Երբեմն իրիկունը տղաքը պառկեցընելէն վերջը կու գային . երբեմն ալ Մագդաղինէի խնդիրքը կատարելու համար , որ կ'ախորժէր անմեղ տղաքն իր քովը տեսնալ , հետերնին մէկանդ կը բերէին զանոնք : Մաւրիտիոս սկզբան չէր ուզէր Մարսոյի ընտանեաց այցելութիւնը . խեղճ

երիտասարդին երակներուն մէջ եղած ազնուապետական արիւնէն հպարտութեան ու պարապորդութեան բնածին զգացմունքը միայն մնացեր էր վրան : Օր մը Մագդաղինէի առջև արհամարհանօք խօսեցաւ անոնց վրայ : Մագդաղինէ , որ օր օրուան վրայ իշխանութիւն կը ստանար անոր վրայ և ասանկ բանի չէր ներէր , առաջին անգամ ծուռ աչքով մը նայեցաւ Մաւրիտիոսի . — « Գիտես որ , ըսաւ , ապերախտին մէկն ես . թէ որ ազնիւ Մարտն աշխատութեան ճամբան ալ առջևդ բացած չըլլար՝ որուն մէջ առաջ կ'երթաս հիմա , պէտք էր քեզի պատիւ սեպէիր այն մարդուն բարեկամութիւնը՝ որ իր ծեր հօրն աշուրները գոցեր է մահուան ժամանակն և կը կերակրէ իր կիներն ու տղաքը » : Մաւրիտիոս , որ եթէ քանի մը օր առաջ լսած ըլլար այս արդարացի յանդիմանութիւնը՝ բարկութենէն վեր ցատքած կ'ըլլար , կարմրեցաւ ու լուռ կեցաւ :

Իրիկուն մը բոլոր ընտանիքը մէկտեղ ժողվուած էին : Թերեզա (այս էր երիտասարդ արուեստաւորին ընկերոջն անունը) մէկտեղ բերեր էր իր կարը . իրեք կանայքն ալ կանթեղին քովը շարուած՝ կ'աշխատէին ու ցած ձայնով կը խօսակցէին : Մարտոյ քիչ մը հեռուն նստած՝ կը դիտէր զանոնք բարեսէր դէմքով մը , ինչպէս որ բնական է աշխատասէր մարդու մը՝ հանգիստ առած միջոցը : Թերեզա երբեմն եր-

բեմն առանց կարը դադրեցընելու՝ ժպտելով մը աչքերը դէպ ՚ի անոր կը վերցընէր . ան ատեն երիտասարդ գործաւորին կերպարանքը քաղցրագոյն ուրախութեամբ մը կը կենդանանար : Իսկ Մաւրիտիոս արմունկով ստուլին վրայ կրթընած և մէկ ձեռքը մազերուն մէջ խոթած՝ մէկալ ձեռքովը գրքի մը թուղթերը կը դարձընէր կարգալով . այս գիրքն ինքը բերեր էր , և թէ որ Մագդաղինէ գիտնար թէ ինչ թունաւոր գրուածք էր անիկայ , շատ պիտի զարմանար Մաւրիտիոսի այսպիսի ընտրութեանը վրայ : Մտմտութիւն առաւ զՄագդաղինէ , տեսնելով որ իր ազգականն այն իրիկունը ապստամբ հրեշտակի կերպ մը առեր էր՝ որ շարութեան մէջ կը յաղթանակէ : Երիտասարդ օրիորդն իր սովորական թափանցող խելքովը մէկէն հասկըցաւ որ այս գիրքն անոր բոլոր ուշադրութիւնը գրուած է , և սիրտն անհանգիստ ըլլալով ու հետաքրքրութիւն ընելով այս բանիս վրայ , ազաչեց Մաւրիտիոսի որ բարձր ձայնով կարգայ զայն : Մաւրիտիոս ալ մէկէն կամբը կատարեց :

Այս գիրքն այն վիպասանութիւններէն մէկն էր՝ որ տասնըհինգ տարի առաջ յաճախ էին , և որոնք բարեբաղդաբար օր օրուան վրայ կը քիչնան : Ասոնց մէջ պարտուց և ընտանեաց վրայ արհամարհութեամբ և անարգանօք կը խօսուէր . ընդ հակառակն՝ մինչև երկինք կը բար-

ճրացուէր կիրքն՝ երկնային պաշտօն մը տալով անոր : Այդ վիպասանութեան , ինչպէս նոյն ատենուան տպուած ուրիշ շատ վիպասանութեանց մէջ , դիւցազնը յետ ոտքի տակ առնելու այն ամէն կարծեալ ծիծաղական նախապաշարմունքներն որոնցմով կը բաղկանայ դաստիարակութիւնը , յետ նախատելու զմարդկային ընկերութիւնն Էասայ զաստուածս նախատելուն նման , կամ մանաւանդ Սոլոնի պէս որ իր կենցաղավարութեան օրինակաւը պիտի վերականգնէր զայն , յետ ամէն կարգադրութիւնները ջնջել ջանալու յամառ կռուով մը , վերջապէս տեղի կուտար ու կը վճատէր : Մարդկանցմէ և յիւրաց յուսահատելով , և զայրանալով այն ապականեալ ընկերութեան վրայ , որ չէր ընդունէր իր ամբարտաւանութեանը տըւած օրէնքներն ու իր հանճարոյն պատգամները , զանիկայ պատժելու համար՝ անձնասպանութեան կը դիմէր իբրև 'ի վերջին և 'ի միակ ապաստան աշխարհիս վրայ մեծ սրտով և գեղեցիկ հոգւով մարդկանց : Բայց չէր ուզէր յաղթուած խոստովանիլ ինքզինքը , կը ջանար ծածկելու իր պարտութիւնն ու հոգեվարքը՝ կատաղութեան աղաղակաւ զերկինս և զերկիր քամահրելով : Բոլոր այս գեղեցիկ բաները , որոնք ամբողջ սերնդեան մը զարմանքը կը շարժէին , թեթև , անոյշ և ճամարտակող ոճով մը գրուած էին՝ նման այն

չոնչաններուն որ ազնիւ ասպետը կը շինէր 'ի Նիւրեմպէրկ : Մաւրիտիոս այս գրքին մէջ այն մտածութիւններուն հաւատարիմ պատկերը կը գտնար՝ որոնցմով երկար ատեն մաշեր էր , և որոնք՝ թէպէտ թմրած էին՝ դեռ կրնային արթըննալ թեթեւ ազգեցութեամբ մը : Ասով մութ ու գէշ կրակով մը աչքը կը սկսէր վառուիլ . ճայնն ալ կամաց կամաց ահաւոր և սպանալից ոճ մը կ'առնէր : Այնպէս ինքզինքը նոյն կը գտնար այն դիւցազին հետ՝ որուն անէծքները կը կարդար , որ կարծես թէ ինքն իր բերնէն կը խօսէր . նոյն վայրկենին չար ոգին նորէն յարձակեր էր վրան : Մագդաղինէ դողալով մտիկ կ'ընէր , Թերեզա բնական զարմանքի դրօշով մը , Որսուլա կէս մը ծաղրածու կերպով մը , Պետրոս Մարսոյ ալ բարեսիրտ նայուածքով՝ որուն մէջ քիչ մը տհաճութիւն կը ցուար : Մաւրիտիոս երբոր գիրքը լմընցուց , նետեց զայն ստոլին վրայ և իր ունկնդրաց վրայ յաղթանակի ուրախութեամբ ու հետաքրքրական աչքով մը նայեցաւ . կարծես թէ կ'ուզէր անոնց կարծիքն իմանալ :

— « Աս ի՞նչ սնոտիք , ըսաւ Որսուլա , աս ի՞նչ անմտութեան շտեմարան : Ո՞ր չար անզգամն է այդ որ կ'ուզէ աշխարհիս խնկր սորվեցընել , և ինքն իր կեանքը չկրնար կառավարել :

— Պարոն , ըսաւ Պետրոս Մարսոյ , գիտնաս որ շատ նուաստ մարդ է այնպի-

սին՝ որ ինքզինքը սպաննել միայն գիտէ : Քիչ մը բանի եկող մարդիկը միշտ գործողութիւն մը ունին ընելու . միայն նայելու է որ իրեն համեմատ գործողութիւն մը ընտրէ մարդ : Ես որ աշխատաւոր մըն եմ, աւելի վեր կը սեպեմ իմ երկու ձեռաց աշխատանքը քան այս ճանճրացուցիչ գըրքին բոլոր մեծամեծ խօսքերը » :

Թերեզա անկեղծաբար խոստովանեցաւ որ ինքը բան մը չէր հասկըցած : Մագդալինէ լուռ կը կենար և ներքուստ կ'ուրախանար Արսուլայի, Մարսոյի և Թերեզայի խօսքերուն վրայ : Մաւրիտիոս ապշած գըրին անոնց վրայ այսպիսի արտաքոյ կարգի տպաւորութիւն մը ընելուն, գըլխարկն առաւ ու դուրս ելաւ :

Սակայն այս իրիկունն անպտուղ չանցաւ Մաւրիտիոսի համար : Երբոր միայնայած ինքիրեն սկսաւ մտածել, յետ իր բարկութիւնն աղէկ մը դուրս զեղլու, յետ ինչպէս որ պէտք է ածականներ տալու Արսուլայի, Թերեզայի և Մարսոյի հասկըցողութեանը, յետ կըրցածին չափ նախատական խօսքեր զուրցելու անոնց դէմ լի արհամարհանօք՝ պզտիկ ինկած ըլլալուն համար, վերջապէս եթէ կամայ և եթէ ակամայ ճանչցաւ որ անոնց պաշտպանածն էր ուղիղ խելքի ցուցուցած կողմը : Ուրիշ անգամ ալ նորէն Մագդաղինէի քով հանդիպեցաւ Մարսոյի ու անոր կնոջը . և տեսնելով անոնց խաղաղութիւնն ու եր-

ջանկութիւնը , սկսաւ սիրել զանոնք : Նոյն իսկ տղաքներուն վրայ ալ , որ սկզբան իր անհամբերութիւնն ու բարկութիւնը շարժեր էին , անյուսալի գորով մը ծնաւ սրբտին մէջ . ծունկին վրայ առաւ զանոնք , գգուեց , և զանոնք գրկելու միջոց՝ ըմբռնեց ընտանեաց բոլոր ուրախութիւնները :

Այսպէս այս երիտասարդը այն տղմուտ գետին ընթացքին դէմ կը քալէր՝ որն որ զինքը քաշելու տարեր էր հետը : Դեռ քիչ մ'ալ ջանք պէտք էր որ ափունքն հասնէր . ոտքին տիղմերը մաքրելու հետ էր և պայծառ ու նոր աշխարհի մը մէջ կը փոխադրուէր :

Այս աշխատասէր ու քաշուած կեանքն ալ իրեն զուարճութիւններն ունէր . Մաւրիտիոս և Մագդաղինէ երբեմն թատրոն կ'երթային : Իրիկուն մը որ Օրփրա թատրոնը գացեր էին , Գոյիեյմոս թէյ տաղերգութիւնը կը հանդիսանար : Մաւրիտիոս իր անցեալ փառաւորութեան օրերուն՝ ոչ երբէք Օրփրան իրիկուն մը անցուցեր էր առանց սաստիկ ձանձրութեան : Իր խնթութեան ընկերներուն սնտախօսքերուն զբաղած՝ հազիւ թէ ըմբռներ էր երաժշտութեան գեղեցկութիւնը , որ թէպէտ տարտամ , սակայն ճոխ ծնունդ մըն է երեւակայութեան . ոչ երբէք ներդաշնակ ձայն մը զգացման ու խորհրդածութեան գաղափարական աշխարհին մէջ ընկղմեր էր զինքը : Այս ըսած վայրկենիս՝ Մագդաղի-

նէի քով նստած մինաւորիկ , որովհետեւ քովերնին եղած հետաքրքիր բազմութենէն ոչ ոք բարեկամութեան աչքով կը նայէր իր վրայ , մտիկ կ'ընէր Թոսսինեայ վերջին երգը նոր լեզուի մը պէս՝ որ առաջին անգամ կը սկսէր հասկընալ : Առջի կտորները սիրտը շատ շարժեցին , և ինքն ալ կը զարմանար որ ի՞նչպէս կը վառուէր ու սէր կը ձգէր այն գեղեցիկ քերթուածին վրայ : Առնուլտի հեծեծանքներն՝ այն միջոցին որ հօրը մահուան լուրը կը լսէ , իր հօրն յիշատակը զարթուցին մտքին մէջ , որուն և ոչ տկարացած ձեռքը մէյ մը սխմեր էր վերջին անգամ : Հելուետական գաւառներուն հասարակաց ազատութեան համար ըրած գաւադրութեան երգմունքը՝ շարժեց իր սրտին մէկ թելն որ ինչուան այն ատեն անզգայ կեցած էր , այսինքն՝ զսէր հայրենեաց և ազատութեան : Բոլոր սրբազան մտածութիւններն իրարու ձեռքէն բռնած են . երբոր անոնցմէ մէկը մեր մտքին մէջ տիրէ , խորհրդական ակնարկութեամբ մը իր ընկերներն ալ կը կանչէ , և իր նոր բնակարանը կը մտցընէ զանոնք ալ : Մաւրիտիոս սկսաւ տխուր ու անաչառ քննութեամբ մը իր անձին վրայ մտածել . ինքը իրեն հարցուց թէ ի՞նչ ըրեր էր իր հայրենեացն համար , և ի՞նչ իր ընտանեացն համար : Քանի մը խօսք խօսեցաւ իր մօրաքեռ թոռանը հետ . բայց իր ձայնին ոճէն և նայուածքին ցրուած կերպէն Մագդա-

զինէ հասկըցաւ որ միտքը բերնէն զատ տեղ էր . և չչփութելու համար զանիկայ՝ ալ շխօսեցաւ հետը :

Աստղերով կը փայլէր երկինքն երբոր տուն դարձան , և ճամբան իրենց առած զգացմունքներուն վրայ կը խօսէին : Մաւրիտիոս Մագդաղինէի խօսքերուն մտիկ դնելով՝ կը տեսնէր որ դեռ զարմանալու ուրիշ մասեր ալ կային՝ որոնց ինքը չէր անդրադարձած : Տուն որ հասան , խաղին իր վրայ ըրած խորունկ տպաւորութեամբը գրաւեալ՝ չբաժնուեցաւ մօրաքեռ թողէն իր խուցն առանձնանալու համար . բացաւ պատուհանն ու քանի մը վայրկեան երկինքը զննեց , որուն պայծառութիւնն իր սիրտն ալ պայծառացուցեր էր : Յետոյ եկաւ գերմանացի օրիորդին քովը նստաւ , որն որ այս բանաստեղծական իրիկունն ինչպէս որ պէտք է կնքելու համար՝ աղաչեց անոր որ կարգայ իրեն Շիլլէրի Գալիկմոս թէյ ողբերգութիւնը : Մաւրիտիոս ուրախութեամբ կամքը կատարեց . և հազիւ քանի մը երես կարգաց՝ ձայնը կարծես թէ մոգութեամբ փոխուելով , այնպիսի օձութիւն մը ստացաւ՝ որ Մագդաղինէ մեծ հաճութեամբ մտիկ կ'ընէր : Քանի որ ամբողջ ժողովրդեան մը այս հրաշալի ազատութեանը պատմութիւնն առաջ կը տանէր , կ'այլակերպէր Մաւրիտիոս . ճակատը անոյշ լուսով մը կը ցոլար , և աչքերն երկնային յուսով մը կը վառուէին : Հին

մարդը կը ջնջուէր , և Մագդաղինէ պար-
ծենկոտութեամբ մը կը գիտէր այն նոր
մարդն որ իր առջևը կը տեսնար : Այս ի-
րիկունը բեղնաւոր պիտի ըլլար :

Մաւրիտիոս իր պարտուց մեծութիւնը
ճանչցաւ , և միանգամայն իր կարողու-
թեանը վրայ մեծ համարմունք մը չդրաւ
մտքին մէջ . որովհետեւ Մագդաղինէ գի-
տէր զանհկայ բորբոքելու ու միանգամայն
չափի մէջ բռնելու կերպը : Ուստի իրեն
ինկած պաշտօնը մտքովը շատ չմեծցուց .
փառք Աստուծոյ բաւական մարդիկ կան
որ իրենց պարտք կը սեպեն Պետութիւնը
կառավարելու . շատ խելքով գտնուեցաւ
Մաւրիտիոս որ չուզեց անոնց թիւն աւել-
ցընել . խոհեմութեամբ իր չափին մէջ կե-
ցաւ , աղէկ ըմբռնելով որ ամենուն բանը
չէ հասարակաց գործողութիւններու մէջ
մտնալ , բայց ամենուն պարտքն է անոնց
աղէկ ընթացքին վրայ հետաքրքրել : Ան
օրուրնէ սկսեալ՝ այն եռանդուն հետաքրք-
րութիւնն ունեցաւ , և ալ իր սրտին մէջ
ընծիւղեցին պատուոյ և փառաց զգաց-
մունքները՝ զորոնք ատենօք այնչափ ծաղր
ըրեր էր :

Մագդաղինէ իր առջի յաջողութեան
ժամանակներուն՝ երաժշտութիւն սորված
էր և ճարտարութեամբ երգել գիտէր :
Մաւրիտիոս չէր մոռցած ասիկայ . և որով-
հետեւ իր աշխատութեամբը քիչ մը կենաց
դիւրութիւն ստացեր էր , որպէս զի կեր-

սլով մը շնորհակալ ըլլայ իր մօրաքեռ թո-
ռանն իրեն վրայ շուայլած խնամոցը , և
մասնաւանդ ցուցընէ իր երախտազիտու-
թիւնն՝ անոր հրեշտակային համբերու-
թեամբ իր բարկութեանն ու խստութեանը
տանելուն համար , դաշնակ¹ մը ընծայեց
անոր : Ասիկայ Մագդաղինէի համար մեծ
հանդիսի օր մը եղաւ . և այս անյուսալի
ընծայն իրենց ընտանեկան հաւաքմանը
նոր կենդանութիւն մը տուաւ : Ստէպ
Մագդաղինէ քովը կը ժողվէր զՊետրոս
Մարտոյ , անոր կիներն ու զաւակները , որ
հիացած մտիկ կ'ընէին իրեն . Մաւրիտիոս
ալ կ'ախորժէր անոր ձայնը լսելը :

Իրիկուն մը Մաւրիտիոս մինակ էր
Մագդաղինէի հետ . Մագդաղինէ դաշնա-
կին վրայ դրուած տետրակը կը խառնէր ,
որ Շուպէրդի երաժշտութեանց հաւաք-
մունք մըն էր . ասոնց մէջէն ամենէն ա-
ւելի աղուոր ու սրտաշարժներէն մէկն ըն-
տրեց , Հրաժեշտի ողջոյնը : Այս երաժշտու-
թեանց ախորժելին այն է՝ որ միջին տեղի
չունին . երբոր ինչպէս որ արժան է կ'եր-
գըցուին , կը յափշտակեն զմեզ կամ սքան-
չելի վերացեալ աշխարհի մը մէջ կը փոխա-
դրեն . իսկ երբոր առանց ոգին ըմբռնելու
պարզ տառական ճշգութեամբ եղանա-
կուին , անվերջանալի ձանձրութեան մը
մէջ կը խորասուզեն զմեզ : Ասիկայ փոր-

1 Գ.շ. Piano.

ճաքար մըն է որ քիչ անգամ կը սխալի .
Շուպէրգի երգերով սիրտ շարժելու ու
զուարճացընելու համար՝ բաւական չէ ե-
րաժշտութիւն գիտնալը . բանաստեղծա-
կան հոգի մը պէտք է : Մագդաղինէ այն
երկնային հանճարոյն ոգւոյն մէջ խորա-
մուխ թափանցած էր . և զգացածը պարզ
կերպով չրթանցը վրայ կը յայտնէր : Ձայ-
նը շատ լեցուն չէր , բայց սիրտ թափան-
ցող էր . ոչ դք կրնար չզգածուիլ անոր եր-
գերէն : Այնպիսի գորովաշարժ մելամաղ-
ձոտութեամբ մը երգեց Հրաժեշտի ողջոյնը ,
որ Մաւրիտիոսի սիրտն ելաւ :

Աչքերը վեր վերուց Մաւրիտիոս դէպ
'ի անոր , և այս առաջին անգամ իր կե-
նաց մէջ ըմբռնեց որ անիկայ գեղեցիկ
էր . ինչպէս որ առաջ ալ ըսի , ոչ թէ կա-
տարելութեան գաղափար մը կրնար ըլլալ
անոր դէմքը արձանագործի մը առջև , բայց
իր հոգւոյն ազնուութիւնն աչուրներուն
մէջ կը նշուէր , և ներդաշնակ չրթունք-
ներուն գեղեցկութիւնը նշանաւոր էր :
Ինչուան ան ատեն Մաւրիտիոս գեղեց-
կութիւնը ցանկութենէ չէր զատած . զար-
մանքն ու փափագը իրարու հետ կը խառ-
նէր . և ոչ իսկ գիտէր թէ ինչպէս կ'ըլլայ
զարմանալը : Հիմա նոր զգայութիւն մը
զգաց իր վրայ . և յափշտակուած կը նայէր
Մագդաղինէի :

ԺԴ

Ասանկով կը ստուգուէր այն երազն որ մարգիզուհին տեսեր էր մեռնելէն քանի մը ժամ առաջ. Մաւրիտիոս ինկած անդունդին մէջէն կամաց կամաց դէպ'ի վեր օդը կ'ելլէր, և Մագդաղինէ էր որ անոր ձեռքէն բռնած՝ վեր կը հանէր: Օդոյ գաւառներուն զով քամին երիտասարդին մազերուն հետ կը սկսէր խաղալ. մերձաւոր գագաթներու անուշահոտութիւնը կ'առնէր, և խառնիխուռն հնչմամբ մը կը լսէր իր պատանեկութեանը ձայներն որ իր դարձը կ'երգէին: Նորոգութեան փառաւոր նշանը կ'երևար իր երեսին վրայ. կերպարանքն որ այնչափ ատեն աւրուած ու թռումած էր ժամանակէն առաջ՝ կը ցոլար այն վեհութեան կնքովը, զոր անվրէպ կը դրոշմէ աշխատանքը քաջասիրտ ու ջանասէր մարդկանց ճակատին վրայ: Աչքերն որ անկարգութեանց սպտճառաւ մարած էին,

իրենց առջի յստակ պայծառութիւնն ըստացեր էին . չրթունքներն որ ատենօք բարկութենէ կը կծկուէին և միշտ պատրաստ էին թունաւոր նետեր արձըկելու , հիմա հանգստեան մէջ թողուած աղեղան մը պէս թուլացած՝ աղնուութեան շնորհք մը ունէին : Նոյն իսկ ձայնն ալ քաղցրացեր էր . վերջապէս , երբոր իր մօրաքեռ թոռանն հետ կը քալէր , կը տեսնէր որ իր պատանեկութեան ընթացից արագութիւնը նորէն դարձեր էր իր ոտքերուն վրայ : Երկրորդ գարուն մը կը ծաղկէր իր վրայ , որ թերևս ոչ նոյնչափ վայելչութեամբ պճնեալ էր՝ որչափ առաջին գարունն որ անցեր էր , բայց աւելի ասլահով խոստմունքներ կու տար և հիմակուց ամառուան դանձերով հարուստ էր : Բա՛բէ , խեղճ երիտասարդն առանց ջանքի չէր հասած այդ կէտը . քանի քանի անգամ ոտքերն արեան մէջ թաթխուած և երեսը քրտինքով թրջած՝ կանկ առաւ վհատած ճամբուն եղերացը վրայ . քանի քանի անգամ նպատակին մօտ հասած՝ սահեցաւ ու գլորտըկելով ինկաւ այն զառ 'ի վայրէն վար՝ որուն վրայ այնչափ ճգամբք ելեր էր : Շատ անգամ խոռվութիւն մը կամ թուլութիւն մը վրան գալով՝ այնչափ ամիսներու մրցանաց ու աշխատութեան պտուղը կորսնցուցեր էր : Շատ անգամ ալ՝ այն միջոցին որ աղէկութեան սերմը կը սկսէր բուսնիլ սրտին մէջ , յանկարծա-

կան ահաւոր մրրիկ մը հունձքի յոյսը վերուցեր տարեր էր . բայց Մագդաղինէ կը հսկէր իր վրայ : Հրեշտակային համբերութեամբ և անխոնջ խնամովք հաստատութիւն կ'ըլլար անոր , վեր կը վերցընէր ու կը խրախուսէր . նորէն կը ցանէր սերմունքն այն սրտին մէջ զոր աւրըշտըկեր էր մրրիկը : Յետոյ իր խուցին մէջ ծնկան վրայ եկած՝ ջերմեռանդութեամբ կ'աղօթէր , որովհետև բարեպաշտ օրիորդը կը մտածէր որ արարածն ոչինչ կրնայ ընել առանց Արարչին օգնականութեանը , և թէ ամենէն աւելի ազնուական ձեռնարկութիւնները պէտք է երկնից ժպիտն ու նենան իրենց հետ :

Աստուած , որ մարդուս սրտին խորը կը տեսնայ , օրհներ էր Մագդաղինէի ջանքը . եկաւ վերջապէս այն ժամն որ այս հոգեսէր օրիորդը շնորհակալութեան ձայներ կը բարձրացընէր 'ի վեր յերկինս : Այն Մաւրիտիոսն որ տեսանք առաջ ամէն բանէ տաղտկացած , երգիծաբան , ժանտ ու դժնեայ , այն Մաւրիտիոսն ալ չկար մէջտեղը . Մագդաղինէ զանիկայ նոր մարդ մը դարձուցեր էր : Թէպէտ երբեմն երբեմն հին մարդը նորէն դուրս կ'ելլար , բայց ալ տժգոյն ուրուական մը դարձած էր և Մագդաղինէ ձևով կամ նշանով մը մէկէն կը փախցընէր զան . թէպէտ շատ քիչ անգամ անցեալ ժամանակի մրրիկը նորէն կ'արթըննար ու կը թնդացընէր օ .

դը , բայց ալ անիկայ կայծակին խորին ուրուտումն էր որ երթալով կը հեռանայ երբ որ երկինքը պայծառացած է : Ա՛լ Մաւրիտիոսի տխրութիւնն ու նեղսրտութիւնը կը փարատէր իր մօրաքեռ թոռան մէկ խօսքէն . նոյն իսկ Որտլա ալ , որ այնչափ ատեն իրեն բարկութեան առիթ եղած էր , կը զուարթացընէր զինքը : Երբոր Մաւրիտիոս իր առջի տաղտկութեան կերպերը կը սկսէր նորէն երևցընել իր վրայ , կտրիճ աղջիկն իր գեղացւոյ իմաստութեամբը անոր խելքը զլուխը կը բերէր իր գաւառին յատուկ վարպետ ու զուարճալի խօսքերով . ան ատեն Մաւրիտիոս փոխանակ կիրք ելլելու՝ կը սկսէր հետը խնտալ : Այն աստիճանի հասեր էր երիտասարդը՝ որ կը վայելէր անյագաբար իր նոր վիճակին պտուղներն որ սկզբան արհամարհանօք մը մէկդի նետեր էր : Անոնց համը թթու է , բայց կերողները՝ հուսկ ուրեմն կ'ախորժին զան : Ա՛րմբունէր Մաւրիտիոս թէ պարտքի մը կատարումը՝ որչափ հասարակ աստիճանի պարտք ալ ըլլայ՝ աւելի ճշմարիտ մեծութիւն ունի , քան թէ այն ծառայի փիլիսոփայութիւնն որ կը սորվցընէ ժխտել ու արհամարհել այն ամէն բան՝ որ մարդկային բնութիւնը կը բարձրացընեն : Ա՛րմբունէր նաև թէ կեանքը քաղցր է երբ օգտակարութեամբ կ'անցնի , և թէ ինքնասէր և անկարող մարդիկն են միայն որ ինքզինքնին կը սպաննեն : Ա՛մ

պարիշտ դարու մը մէջ ծնած ըլլալով ,
զուրկ էր 'ի հաւատոց . բայց գոնէ իր պա-
հապան հրեշտակին ազդեցութեամբը կը
զարթնուին 'ի նմա յոյս և սէր : Չէր հաւ-
տար , բայց կը յուսար , և կ'ուզէր հաւ-
տալ . միանգամայն կը գիջանէր Մագդա-
ղինէի խօսքին՝ թէ ամենեւին վնաս մը չը-
բերեր մարդուս՝ կրօնից սորվեցուցած ճշ-
մարտութիւններովն աշխարհիս մէջ կեանք
անցընելը : Ա՛լ անկէ հտքը անձնասպա-
նութիւնը չէր հսկէր իր գլխուն բարձին
վրայ . այն մարդիկն որ առաւօտուընէ
մինչև իրիկուն կ'աշխատին՝ գիշերը խա-
ղաղ կը քնանան և ամենեւին մտքերնէն
չեն անցըներ գլուխնին ատրճանակ պար-
պելու : Այն ատրճանակներն որ ատենօք
իր մխիթարութիւնն էին , Մաւրիտիոս ծա-
խեր էր զանոնք ծաղիկներ ընծայ ընելու
համար մօրաքեռ թոռանն անոր տօնին օ-
րը : Իր սրտին հետ միանգամայն միտքն ալ
բարձր թռիչք մը առեր էր . կը սիրէր զգե-
ղարուեստս , և կը կարգար բանաստեղ-
ծից քերթուածները : Ինչպէս իր հայրն 'ի
Նիւրեմպէրկ , այսպէս ինքն ալ ճանչցեր
էր որ բանավարութիւնն է մարդուս ազ-
նուականութիւնը : Ուշադրութիւն կ'ընէր
գաղափարաց այն ատենուան առած ըն-
թացքին , և ներողամտութեամբ , երբեմն
ալ եռանդեամբ կը լսէր այն ամէն անհնա-
բաւոր եղեմի՝¹ բարի դիտաւորութիւննե-

1 Գղ. Utopie.

րը , որոնց վրայ առաջ կը բարկանար կամ կը քամահրէր : Ա՛տուէր անհաշտելի ատելութեամբ այն ցած , նախանձոտ ու կեղծաւոր ռամկապետութիւնն , որ ժողովրդեան բարեկամն է՝ որովհետեւ ու ե իցէ իշխանութիւն չընդունիր . կը գարչէր կը զգուէր այն շատախօս խաբեբաներէն՝ որ իրենց արուեստ ըրած են ընկերավարութիւնն ու մարդասիրութիւնը . և միանգամայն կը մեծարէր այն անշահասէր մարդիկն՝ որ անկեղծ անձին նուիրմամբ մը արուեստաւորաց և աշխատաւորաց պաշտպան կ'ելլան :

Սակայն պէտք չէ կարծել որ ալ դէշ օրեր չունէր Մաւրիտիոս : Գեռ իր յուսահատութեան ու լքման օրերն ունէր . մերթ իր յանցանաց բեռը իր բոլոր ծանրութեամբը կը ճնշէր գինքը , մերթ ալ իր թողմած պատանեկութեան ուրուականը դաժան նայուածքով մը կ'երևար իրեն և լուս սարսափով մը կը պաշարէր գինքը : Գէշ կեանք անցընողներուն պատիժն է՝ որ եթէ բարի կենցաղավարութիւն ալ ստանալու ըլլան , խել մը ատեն իրենց անցած ժամանակին պիղծ ստուերը հետերնին կը քալէ : Թըշուառ երիտասարդը զարհուրած ու խոլոր աչքով կը տեսնէր իր յիշատակաց տխուր խմբին ծանր ընթացքով իր գիմացէն անցնիլը , իր հայրն անանկ երեսէ ձգելը , իր նախնեաց կալուածոյն աճուրդով ծախուիլը , իր՝ Մագդաղինէի վիճակը բաղ-

դին ձեռքը թողուլը . ետքը կ'անցնէր իր վերջին տարիներուն պատկերը՝ զորոնք անկարգութեամբ փճացուցեր էր : Ինքն իրմէն չարաչար արհամարհուելով , և հըպարտութենէն չուզելով զղջման արցունքով իր խղճմտանաց խայթերը հանդարտեցընել , այն միջոցին վայրենի լուսթիւն մը կը պահէր . Նակեղեմոնի տղոց պէս , անանց ձայն մը հանելու՝ կը թողուր որ սիրտը մաշի : Բայց Մագդաղինէ միշտ վրան կը հասնէր , կը հսկէր մտմտութեամբ , ոչ երբէք աչքին առջևէն կը կորսնցընէր զան , կը զննէր անոր հոգւոյն ամէն շարժմունքները . և քան զՄաւրիտիոս լաւ գիտէր ինչ որ կը հանդիպէր անոր սրտին մէջ : Այս թուլութեան ու լուռ մելամաղձոտութեան օրերուն էր որ իր հնարագէտ բարեսիրութիւնն ու իր սիրտ շարժող փափուկ խնամքները կը կրկնապատկէր : Այնպիսի գաղտնիքներ ունէր՝ որոնցմով ցրուել կու տար անոր ցաւագին մտածութիւններն իր առջի անձին վրայ , անոր սրտին թելերը կը շարժէր , և խորհրդական ճամբաներ կը բանար այն ալիքներուն որ կը ճմլէին զանիկայ : Երբեմն դեռահասակ մօր մը պէս իր ազգականին քովը նըստած՝ քաղցր ու ծանր ձայնով մը հետը կը խօսակցէր . իր խօսած միջոցը՝ Մաւրիտիոս անոյշ թեթեւ հով մը կը զգար որ իր վէրքերը կը զովացընէր : Երբեմն դաշնակին առջևը կ'անցնէր : Ինչպէս Որես-

տէս իր Նլեկտրա քրոջը ձայնէն , ասանկ Մաւրիտիոս ալ Մագդագինէի երգք լսելով իր խղճմտանաց խայթերը կը հանդարտէին . կամաց կամաց քաղցրութիւն մը կը ծաւալէր ներսը . և անզգալի կերպով մը սիրտը կ'ելլար : Առած ախորժն հետզհետէ աւելնալով , այնչափ աւելի սիրտը զեղանելու կը մօտփկնար . հուսկ յետոյ առատ արցունքներ կը վազէին աչուրներէն : Արցունքը աստուածային պարզ և մըն է . երկնային ցօղն է որ մեր աղտեղութիւնները կը լուանայ : Մաւրիտիոս անով զտուած սրբուեցաւ :

Ի բաց առեալ յիշեալ օրերն որ երթալով կը քիչնային , ժամանակն սքանչելի ժամերով կ'անցնէր : Այն երկու տարին որ Մաւրիտիոս այնչափ տհաճութեամբ իբրև գրաւ շնորհած էր իր մօրաքեռ թոռանը՝ խել մը ամսէ 'ի վեր լմընցած էր . բայց իր մտքէն չէր անցնէր իր ազատութիւնը պահանջելու : Աշխատութիւնը սիրել սկսելէն ետքը , իր արուեստին վրայ սէր ձգեր էր . ոչ երբէք գործողութիւն կը պակսէր իրեն . Պետրոս Մարսոյի ձեռքովը , որ աննման ու անչահասէր բարեկամութեամբ մը կապուած էր հետը , ստէպ ստէպ յանձնարարութիւններ կու գային առանց իր ուզելուն ալ : Մաւրիտիոս գրեթէ այնչափ յաջողած էր փայտի մեծ քանդակագործութեան մէջ որչափ իր հայրն յաջողած էր տղոց խաղալիկներու և կաղ-

նարեկ գործեաց մէջ : Մագդաղինէ ալ անկէ ետքը ստիպուած չէր թէյի տուփեր կամ կրակէ պաշտպանուելու համար շինուած ձեռակերտներ նկարելու . իր մանրանկարները յարգի էին , մանաւանդ ազնուականաց ընկերութիւններու մէջ , որոնց ականջը ասանկ ձայն մը հասած էր՝ թէ ազնուական ընտանեաց որդի և աղջիկ մը , դատաստանով մը կործանած ըլլալով , ազքատօրէն կ'ապրին իրենց աշխատանքովը , Բարեչոնի փողոցին մէջ անմիջապէս տանիքի մը տակ : Այս այնպիսի պարագայ մըն էր՝ որ մեծ զբաղման և հետաքրքրութեան նիւթ կրնար ըլլալ այն ձանձրացեալ ընկերութիւններուն , որ անյազարար կը մուրան միտք ցրուելու առիթներ : Ազքատութեան նեղութիւնը քաշելէն ետքը , Մագդաղինէ և Մաւրիտիոս կենաց դիւրութիւն կը վայլէին , որ ապահովապէս այն անձանց ջանքը կը պսակէ , որոնք կամք ունին աշխատութեան , և միանգամայն կարգաւորութիւն , պարզ ախորժակ և չափաւոր փառասիրութիւն : Կրնային իրենք ելլալ իրենց վերնայարկէն և աւելի վայելուչ բնակութիւն մը գտնալ , գոնէ աւելի ցած տեղ դրուած բոյներ : Մաւրիտիոս ալ շատ մտօժեր էր այս բանիս վրայ . ոչ եթէ աւելի փառաւոր բնակարանի մը բաղձալուն , որովհետև իր պզտի բնակութիւնը կը սիրէր , և ճանչցեր էր ան խօսքերուն ճշմարտութիւնը՝ թէ այն

պատերն որ կը տեսնեն մեր աշխատիլը ,
մեր մտածութեամբք պարարիլն և յուսա-
լը , միշտ պաշատի մը պատեր են : Այն
փոքրիկ սենեակն , որուն մէջ իր վերանո-
րողութիւնը կատարուեր էր աշխատանաց
և համակամութեան ձեռքով , իրեն համար
տեսակ մը նուիրական տեղի մը դարձած
էր , ուսկից առանց ցաւելու չէր կրնար
հեռանալ . սակայն այս երիտասարդն , որ
ատենօք անանկ անքաղաքավար ու կար-
ծրասիրտ էր , եղբօր պէս խնամքով հոգ
կ'ընէր Մազդազինէի հանգստութեանը
վրայ . թշուառ կը սեպէր իր կեանքն ա-
նոր համար միայն՝ որ չէր կրնար դարձը-
նել իր մօրաքեռ թոռանն այն հարստու-
թիւնն որ կորսնցուցեր էր անիկայ : Անոր
համար խել մը անգամ առաջարկեր էր ա-
նոր՝ փոխադրուելու աւելի ընդարձակ ու
աւելի հանգիստ բնակարան մը՝ քիչ մը ա-
ւելի յաճախեալ թաղի մը մէջ : Մազդա-
զինէ պատասխաններ էր իրեն . — « Ինչո՞ւ
կենաց կերպերնիս փոխենք , երբոր այս
վիճակին մէջ երջանիկ ենք : Երջանկու-
թիւնն ալ իր սիրած տեղերն ունի . անոր
համար զգուշանալու է անոնց դպչելու :
Քիչ մը երկնքի մօտ ենք , բայց զուտ օդ
մը կը շնչենք . անբնակ թաղի մը մէջ կը
բնակինք , բայց պատուհաններնուս առջև
պարտէզ մը կը բացուի . փոխանակ կառ-
քերու աղաղակին՝ թռչնոց երգերը կ'ար-
թընցընեն զմեզ առաւօտը . խուցերնիս

պզտիկ են , բայց ճմեռը աղէկ կը տաքնան :
Մտիկ ըրէ ինձի , ազնիւ բարեկամս , մեր
վերնայարկաց մէջ մնանք , ապերախտ կ'ըլ-
լայինք՝ թէ որ զանոնք թողուինք » : Մաւ-
րիտիոս դեռ վրայ կու տար իր խղճմտան-
քին հանգստութեանն համար , սակայն 'ի
ներքուստ կը գովէր իր մօրաքեռ թոռանը
խելքը : Ուստի անկէ ետքն ալ առջինին
պէս կ'ապրէին . միայն թէ Մաւրիտիոս
ամէն ջանք կ'ընէր իր մօրաքեռ թոռա-
նը խեղճ բնակարանը գեղեցկացընելու .
Մագդաղինէի ալ ամենէն մեծ ուրախու-
թիւնն էր Մաւրիտիոսի օթեանը զարդա-
րելն այն ամէն գեղարուեստի ձեռակերտ-
ներով՝ որ անիկայ կը սիրէր : Այս երկու
երիտասարդ քարեկամներն իրարու հա-
մար կ'աշխատէին . և այսպիսի աշխա-
տանքն աւելի քաղցր է :

Առանձնութեան մէջ կ'ապրէին և բաց
'ի Մարսոյ ընտանիքէն ուրիշ քարեկամ
չունէին : Քանի մը ազնուական տիկնայք ,
որոնց դէմքերը նկարեր էր Մագդաղինէ ,
հիացած անոր շնորհալից ու վայելուչ կեր-
պին վրայ , շատ ջանք ըրեր էին իրենց քո-
վը քաշել զանիկայ . սակայն օրիորդը դէմ
կեցեր էր այդ ինքնայօժար հրաւէրքնե-
րուն , որ ճշմարիտն ըսելով հետաքըր-
քրութենէ առաջ եկած էին : Մագդաղի-
նէ հեռու կը կենար այսպիսի բաներէ .
այնպէս զուարթ էր իր սիրտը , որ ոչ եր-
բէք Որսուլա և Մաւրիտիոս գանգատ մը

կամ ցաւելու խօսք մը լսեցին իր բերնէն այն գեղեցիկ կալուածին կորստեանը վրայ՝ որ դատաստանով մը յափշտակուեր էր իր ձեռքէն : Քիչ անգամ կը խօսէր այն դժբաղդ դիպուածին վրայ . և թէ որ Մաւրիտիոսի հօրենական ժառանգութիւնը սեպած չըլլար զայն , անտարակոյս ուրախութեամբ կը խօսէր անոր վրայ : Բայց այս նիւթիս մէջ Մաւրիտիոս անոր չափ անտարբեր չէր . չէր կրնար առանց խըղճ մտանքի ու առանց դառնութեան մտածել այն դղեկին վրայ՝ ուր ծներ էր ինքը , և ուր իր հայրը մեռեր էր՝ իր անուղղայ բարուցը զոհ եղած : Ստէպ մտածմունքը վալդրավէրի վրայ կը դառնար տխրութեամբ . և իրաւցընէ ոչ ոք կրնայ պահանջել ասկէց աւելի միակամութիւն մարդուս վրայ , վասն զի շատ չափազանց ալ ախորժելի պէտք չէ սեպել վերնայարկի մը բռնակութիւնն և փայտէ քանդակագործութեան տուած հաճութիւնը : Իսկ Ռքսոլա բանի մը վրայ չէր ցաւէր , և բանի մըն ալ չէր փափագէր . իր գլխաւոր զբաղանքն էր Մաւրիտիոսը գովելը , և մասնաւորապէս հիմա առջինէն աւելի վստահութեամբ կը կրկնէր թէ անիկայ հրեշտակ մըն է , երկնքի հրեշտակ մը , Աստուծմէ խրկուած հրեշտակ մը : — « Թո՛ղ տուր դուն ալ , կը պատասխանէր երբեմն իրեն Մաւրիտիոս բարեսէր կերպով մը . գիտեմ որ հրեշտակ մը կայ հոս , բայց ոչ ես և ոչ ալ դու ես

ան ։ Ամառ ատեն բոլոր շաբաթը աղէկ աշխատելէն ետքը՝ կիրակի օրերն իրեքը մէկտեղ կ'երթային դէպ 'ի դաշտերը, երբոր Որսուլա և Մագդաղինէ Արտաքին Քարոզարեանց եկեղեցին պատարագ տեսնելէ տուն կը դառնային ։ Ասոնք էին իրենց գեղեցկագոյն հանդէաները . բոլոր օրը բլուրներու դառ 'ի վայրին վրայ և հովտաց մէջ կ'անցընէին, ինչ որ կը գտնային կ'ուտէին, և ուրախալից տուն կը դառնային ։ Ասանկով Մաւրիտիոս իր մօրաքեռ թոռանն հետ նորէն անսաւ Լիւսիէնի և Սէլի անտառները, որոնց մէջ երկու տարի առաջ իր անձնասպանութեան դիտաւորութիւնն որոճեր էր ։ Այն շագանակի ծառերուն տակ՝ զորոնք իր հոգւոյն վշտերովը սեցուցեր էր, այն ջրասէր կաղնիներով և բարտիներով շրջապատած պզտի լճին եզերացը վրայ՝ ուր մահն երևցեր էր իրեն, լսեց կենաց ձայնն որ կ'երգէր իր սրտին մէջ ։

ԺԵ

Մակայն այն միջոցներուն երիտա-
սարդն սկսաւ արտաքոյ կարգի ներքիննե-
ղութիւն մը զգալ : Ատենէ մը 'ի վեր Մագ-
դաղինէի քով գտնուած միջոցը՝ բան մը
կը զգար սրտին մէջ, որ չէր գիտէր թէ
ինչ է . անիկայ իր երեսն որ կը նայէր ,
Մաւրիտիոսի դէմքը մերթ կը դեղնէր մերթ
կը կտրմրնար . և անոր ձայնէն դողի մը
պէս թեթև շարժմունք կու գար մարմնոյն
վրայ : Իրիկուններն՝ երբոր անիկայ աս-
ղնեգործելու հետ կ'ըլլար՝ ժամերով աչքերն
անոր վրայ էր առանց խօսք մը զուրցե-
լու . աս բանս իր առջի ունեցած վայրա-
գութենէն կամ ծաղրելու յօժարութենէն
առաջ չէր գար : Երբոր Մագդաղինէի
խուցը կը մտնար , սիրտը սաստիկ վեր կը
նետէր : Թէ որ Մագդաղինէ իրեն գար ,
տղու մը պէս շփոթած ու անճրկած կեր-
պով կ'ընդունէր զանիկայ : Երբեմն ալ ա-

ուանձին եղած միջոցը կու լար՝ առանց գիտնալու թէ ինչ պատճառէ առաջ կու գար իր արցունքը : Ամէն միջոց , նաև քունի մէջ ալ , կը զգար որ իր ներսը նոր շէնք մը կը շինուի , բայց հազիւ թէ շինուելուն ձայնը կը լսէր : Ի՛նչ էր արդեօք եղածը . — Մաւրիտիոս օր մը կրցաւ կէս մը մակաբերել զայն :

Անգղիացի ազնուական մը , որ ցեղով ուղղափառ հաւատքը պահած էր , իր Ա՛էնգէշըր գաւառին մէջ ունեցած դղեակներուն մէկուն աղօթարանը կ'ուզէր զարդարել . Ունկարիոյ Ս . Եղիսաբեթ թագուհւոյն մեծ քանդակովը . ուստի Մարտոյի ձեռքով Մաւրիտիոսի յանձնեց այս աշխատութիւնը : Երիտասարդ գործաւորը մեծ ախորժով յանձն առաւ այս բանս , որովհետև իր մայրն ալ այն սրբուհւոյն սնունն ունեցեր էր , և որովհետև շատ կը մեծարէր անոր յիշատակը : Եւ սակայն թէպէտ իր հօրմէն կատարելապէս սորված էր այդ արուեստը , թէպէտ շատ ճարպիկ էր իր արուեստին գրիչը գործածելու մէջ , կաղնւոյ փայտին ձեռք դպցընելու միջոցը խորին վհատութիւն մը զգաց : Ինքն որ ինչուան այն ատեն արհամարհած էր ամէն դժուարութիւն այնպիսի համարձակութեամբ մը՝ որ կրնար ինչուան յանձնապատանութիւն ըսուիլ , հիմա կը տարակուսէր , չէր կրնար փայտը դուրել . և ինքն իր երկչոտութեանը վրայ կը զարմա-

նար , որովհետև դեռ չէր գիտէր որ ինքն իր անձին չվտաճիլը՝ նշան է ճշմարիտ հանճարոյ : Մտքէն անցուց եկեղեցիներու մէջ տեսած ամէն քանդակեալ արձաններու դէմքերն որ կը յիշէր . բայց անոնց մէկն ալ թագուհւոյ մը ու սրբուհւոյ մը զաղափարը չէր տար , մէկն ալ չունէր այն ազնուական ու համեստ կերպարանքն որ կը վայլէր այն անձին : Բանը այն էր որ քիչ ժամանակ ունէր . նախ մէյ մը վեր ՚ի վերոյ մը զգեստներն ու ձեռքերը շինեց : Մէկ կողմանէ անուն հանելու և իր մօրաքեռ թռուանը գովեստն ընդունելու փառասիրութիւնը կը խրախուսէր զինքը , մէկալ կողմանէ ալ աւելի խիստ աչքով նայել կուտար իր ձեռագործին : Ամենեին գոհ չէր ըլլար շինած ծալքերուն վրայ , ամենեին զգեստը դիւրաշարժ չէր երևար իրեն , և մարմնոյն դիրքն ալ վայելուչ չէր սեպէր : Շատ ժամանակ անցուց ձեռքերուն վրայ . ջանաց արբունական փափկութիւն մը տալ անոնց : Այս կերպով կը շինուին այն աշխատասիրութիւններն որ գլուխ գործոց կ'ըլլան . իսկ ժողովուրդն որ կը զարմանայ անոնց վրայ՝ չգիտեր թէ ինչ աշխատանքով ծնած են անոնք : Երբոր գլուխն սկսելու միջոցն եկաւ , կրկնապատիկ տարտամութիւն մը տիրեց նորէն վրան : Հանդերձ այսու ձեռք զարկաւ գործոյն , և մէկէն գրիչն սկսաւ բանիլ զաղանի մտածութեան մը ազդեցութեամբը . ճակատն

առանց շատ աշխատութեան կըրութիւն
առաւ, և աչքերն ալ իբրև դիւթութեամբ
չինուեցան, ու ականակապճաց մէջ պատրս-
պարուած՝ աղօթքի մէջ յափշտակուած
հոգւոյ մը նշանակութիւն ունէին. շըր-
թուկքները լի էին ներողամտութեամբ ու
ազնուութեամբ, ու անուշահոտ շունչ մը
չնչելու համար կը բացուէին. մազերուն
հիւսքն երկու բաժնուած էին ճակտին վրայ
ու ականջներէն վեր առնուած, և դէմքին
ամբողջութեանը շրջանակի մը տեղ կը ծա-
ռայէին: Մաւրիտիոս քանի մը վայրկեան
քանդակին դիմացը կեցած՝ լուութեամբ
զննեց. յետոյ ներքին հաճութեամբ մը՝
սկսաւ կատարելագործել այն ամէն մա-
սերն որ դեռ անկատար կ'երևային իրեն
ճշդութեան կողմանէ: Անկէ ետքը մէկդի
նետեց գործիներն ու քանի մը քայլ հե-
ռուն քաշուեցաւ՝ աւելի աղէկ դատաստան
ընելու համար իր ձեռակերտին վրայ: Այս
միջոցին Մագդաղինէ ներս մտաւ, և մէ-
կէն ճանչցաւ որ քաշուած պատկերն իր
դէմքն էր: Սկսաւ ձեռքովը ծափ զարնել
և անմեղ ուրախութիւն մը ցուցուց. ընդ
հակառակն Մաւրիտիոս շփոթեցաւ ու չէր
գիտէր ինչ ընելիքը, դեռահասակ օրիոր-
դի մը պէս կարմրելով որուն առաջին
գաղտնիքը բերնէն կ'առնեն: Խեղճն իր
մտքին մէջ պատկեր մը փնտրուելու ատեն՝
Մագդաղինէի պատկերն առջևն ելեր էր,
և առանց իր գիտնալուն կամ ուզելուն,

ու առանց իսկ մտածելուն՝ ճիշդ իր մօրա-
քեռ թոռանը կերպարանքն հաներ էր փայ-
տին վրայ : Աս դէպքը լուսաւորեց գինքը .
բայց այս պայծառ լոյսը գրեթէ մէկէն փա-
րատեցաւ : Ի՞նչ կրնար ըմբռնել Մաւրի-
տիոս սիրոյ այս պարկեշտ սկզբնաւորու-
թիւնը , ինքն որ ինչուան ան ատեն կրից
գինովութիւնն ու զեղմունքը միայն ճանչ-
ցեր էր : Սակայն այդ օրուրնէ սկսեալ՝
զգացած նեղութիւնն երթալով աւելցաւ ,
և իր ներքին հանգարտութիւնը սաստիկ
տակնուվրայ եղաւ՝ որչափ որ ինքը չէր
համարձակէր ըսելու կամ նոյն իսկ իր ան-
ձին խոստովանելու :

Այս Ս . Եղիսաբեթի քանդակը ահաւոր
մրրիկ մը պիտի բերէր իր կենաց վրայ , և
Մաւրիտիոսի մտքէն ալ չէր անցնէր որ ա-
նիկայ պիտի ըլլար իր վիճակը բոլորովին
որոշողը :

Այս քանդակը դեռ իր գործարանն էր .
որովհետեւ գրեթէ չէր ուզէր հեռացընել
զայն իր քովէն . և թէպէտ խել մը ան-
գամ հարուստ ազնուականը մարդ խրկեր
էր առնելու , Մաւրիտիոս միշտ պատ-
ճառանք մը կը գտնար ուշացընելու , ըսե-
լով թէ սա կամ միւս կտորը դեռ գրչի կա-
րօտ էր . բայց ընդ հակառակն ամենևին
չէր դաչէր իր ձեռակերտին , և Պիզմալիո-
նի պէս կը նայէր միայն անոր վրայ : Ա-
ռաւօտ մը ազնուականն անձամբ եկաւ
Մաւրիտիոսի բնակարանը : Բարձրահա-

սակ էր, նիհար, կապոյտ աչուրներով, ճերմակ մորթով, դեղին մազերով ու մօրուքով, և Մաւրիտիոսէ աւելի երիտասարդ կ'երեւար, թէպէտ քանի մը տարի անկէց մեծ էր հասակաւ : Չգեստներն ալ պարզ էին ու ընտիր ախորժակով և վայելուչ յօրինուած : Պաղ կերպով մը ներս մտաւ, ու ասդիս անդին նայելով բարեւ մը տուաւ. ետքը առանց ամենեւին տանտիրոջը դէմքը նայելու՝ շիտակ Ս. Եղիսաբեթին առջևը դնաց : Բաւական ատեն լոբի մնջիկ մարմնովը քիչ մը ծուած ու ոտքի վրայ անշարժ կեցած դիտեց զայն, մէկ ձեռքը երկաշեայ պզտիկ դիտակն ու մէկալ ձեռքը գաւազանն ու գլխարկը բռնած :

— « Չեն խաբած զիս, ըսաւ վերջապէս առանց գլուխը դարձրնելու՝ իբրև թէ ինքիրեն խօսէր. ես ալ ասանկ ըմբռնած էի սրբուհւոյն գաղափարը. իրաւցընէ կը տեսնամ որ մեծ արուեստաւորի մը գործք է ասիկայ » :

Այս ըսաւ ու լօղկին գրպանէն պզտի գրապանակ մը հանեց. որուն մէջէն խել մը թղթադրամ անտարբեր կերպով մը արուեստաւորին սեղանատախտակին վրայ դրաւ :

— « Չէ, պարոն, աս ասանկ չըլլար, ըսաւ Մաւրիտիոս. ան այս թուղթերն ու թէ որ կ'ուզես՝ մեր դաշինք դրած գինը վճարէ ինձի : Գիտնաս, պարոն, որ փուճ տեղն ըրած կ'ըլլաս առատածեռնու-

թիւնդ . որովհետեւ թէ որ ուզէիր այն գի-
նը տալ ինչ որ ես կ'արժեցընեմ , բոլոր
հարստութիւնդ չէր բաւէր անոր ։

Այս խօսքերս որ լսեց սըր Եդուարդ
(այս էր ազնուականին անունը) , առա-
ջին անգամ աչուրները մէյ մը փայտի քան-
դակագործին վրայ դարձուց : Թէպէտ
Մաւրիտիոս իր բաճկոնակն հագած էր ,
բայց ձեռքերուն ճերմըկութենէն , երեսին
մաքուր գծերէն և խորխտ ճակտէն՝ որուն
վրայ աշխատութիւնը նորէն տպաւորեր
էր իր ցեղին աւրուած դրոշմը , ազնուա-
կանը մէկէն իմացաւ որ սովորական ա-
րուեստաւոր մը չէր անիկայ : Եւ այնչափ
աւելի դիւրութեամբ հասկըցաւ զայն , որ-
չափ որ ինքն ալ ուրիշ հարուստներէն կը
զանազանուէր իր գերազանց յատկութիւն-
ներովը : Քիչ մը շփոթեցաւ ու ամօթով
մնաց , և չուզեց երթալ անկէ առանց մոռ-
ցընել տալու իր բուն անգղիական կերպով-
ներս մտնալը : Նստաւ ընտանեբար պզտի
անկողնին ծայրին վրայ , որ միանգամայն
բազմոցի տեղ կը ծառայէր , և այնպիսի
ախորժելի կերպով մը խօսակցեցաւ Մաւ-
րիտիոսի հետ՝ որ Անգղիացւոց մէջ սակա-
ւազիւտ է . ընտիր տեսութեամբք կը խօ-
սէր անոր արուեստին վրայ , որով կը
տեսնուէր որ կը սիրէր զայն ու յարգը կը
ճանչնար : Երիտասարդ գործաւորն սկըզ-
բան քաշուած , պաղ ու լուռ կեցաւ . բայց
քիչ քիչ սկսաւ ախորժիլ անոր խօսակցու-

Թեանն ու կերպին սքանչելի պարզութիւնը : Այն պզտիկ խուցին մէջ, այն պզտի գործաւորի սեղանատախտակին քով, կաղնւոյ փայտի կոճղերու ու փայտի կըտորներու մէջ որ տախտակամածին վրայ սփռած էին, իբրև ընդունելութեան սրահի մը մէջ կը խօսակցէին : Չարմանալին այն էր որ երկուքն ալ ծածուկ սնապարծութեամբ մը, մէկը կը ջանար ցուցընել թէ միշտ ձեռաց աշխատութեան կարօտ չէր եղած իր ապրուստը ճարելու համար, և թէ իրեն ալ ընտանի էին հարուստ կենաց ու իցէ ճոխութիւնքը, իսկ միւսը կը ճգնէր համոզել որ թէպէտ հարուստ էր՝ բայց կը ճանչնար աշխատութեան և խելքի արժէքը : Այսպէսով ծանր նիւթեր իրենց խօսակցութեանը նիւթ առին : Սըր Եդուարդ Մալրիտիոսի խօսքերը լսելով շատ չանցաւ հասկըցաւ որ առանց տարակուսի դիմացինն իրեն հաւասար աստիճանի անձն էր : Մալրիտիոս ալ սըր Եդուարդի խօսքերը լսելով ճանչցաւ որ միայն աղքատներուն առանձնաշնորհութիւնը չէ իմաստութիւնը, և թէ կենաց ամէն տեսակ պայմանները, ամենէն բարձր վիճակէն առնելով մինչև ամենէն ստորինը, վեհագոյն վարժապետ են այն մարդկանց՝ որ կ'ուզեն անոնցմէ օգուտ քաղել : Թուրինկիոյ սուրբ դքսուհւոյն քանդակին վրայ դառնալով, անգղիացի ազնուականը պատմեց որ իր մայրն Եղիսաբեթ քաղցր

անունն ունեցեր էր այն սակաւօրեայ կե-
նաց մէջ որ երկրիս վրայ անցուցեր էր :
Մաւրիտիոս ալ պատմեց թէ իր մայրն ալ,
որ նոյնպէս ծաղիկ հասակի մէջ մեռեր էր,
նոյն անուամբ կոչուած էր . և այս նմա-
նակցութիւնը՝ թէ և թեթև նիւթի մը վրայ
էր , աս երկուքին մէջ տեսակ մը համա-
կրութիւն պատճառեց : Համառօտ ըսենք ,
երկու ժամէ վերջը՝ երկուքն իրարմէ բաժ-
նուեցան մէկմէկու վրայ գոհ ու գրեթէ
բարեկամ եղած :

Այս մտերմութիւնն այսչափ պիտի չը-
մնար . սրբ Եգուարդ , որ հարուստ էր ա-
ռանց ամբարտաւանութեան , ծանր՝ ա-
ռանց բրտութեան , հաղորդական , սիրա-
լիր , և պէտք եղած տեղը հանճարեղ , այն
քիչ անգղիացիներէն մէկն էր՝ որ աղէկ
տատղի մը տակ ծնած են : Նախատիպ անձ
մը համարուած էր ամենէն . և իրօք անանկ
էր . միանգամայն բարձրաթոխ միտք , ար-
դար բնաւորութիւն , վեհանձն ու ասպե-
տական սիրտ և անձնանուէր բնութիւն
ունէր , և հարստութեան պարկեշտութիւ-
նը , այսինքն այն զգացմունքը՝ որով փա-
փուկ հոգւոյ տէր անձինքներն իրենց սե-
րընդեանն աստիճանն ու պատիւը կը ծած-
կեն : Աւելի երջանիկ և աւելի կտրիճ զըտ-
նուած էր քան զՄաւրիտիոս և երիտա-
սարգութեան մրրիկներուն մէջէն անցեր
էր առանց իր բնածին անարատութիւնը
պզտի կերպով մը պղտորելու : Իր խա-

բէական ցնորքներուն պարապ ելլալը՝ չէր մոլորցուցած զինքն իր ճամբէն . Մաւրիտիոսի պէս իրաւունք չէր սեպած քանի մը հասարակ խաբէութեանց համար բոլոր մարդկութիւնը նախատել . և մարդիկ ճանչնալով ալ հանդերձ՝ հարկ չէր համարած ոչ ատել զանոնք և ոչ ալ արհամարհել : Իմաստնոյ մը փորձն ունէր , բանաստեղծի մը եռանդը , և տղու մը անմեղութիւնն ու բնական պարզութիւնը : Սակաւագիւտ առանձնաշնորհութիւն մը ունեհալով 'ի բնութենէ՝ կը միացընէր իր անձին վրայ երկու յատկութիւն , որ դժբաղդաբար իրարու հետ անմիաբան կ'երևան . այսինքն անոնց չափ գիտէր՝ որոնք ալ չեն կրնար սիրել , և անոնց պէս կը սիրէր՝ որոնք դեռ չեն գիտեր : Բաց ասկէ , ուսմամբ և ճանապարհորդութեամբք զարգացուցեր էր իր խելքը . արուեստից գեղեցկութեան բնածին զգացմունքն ունենալով , կը պատուէր հանճարաւոր անձինքն ու ամենայն յարգանք կու տար : Շատ տարիէ 'ի վեր՝ ձմեռը Բարիզ կ'անցընէր քանի մը ընտրեալ արուեստագիտաց հետ կենակցելով : Շատ հակամիտութիւն չունէր աշխարհային ընկերութեանց . աւելի արուեստանոցներու մէջ կը գտնայիր զինքը՝ քան թէ խօսակցութեանց սրահներու մէջ :

Անկէ ետքը ստէպ այցելութիւն սկսաւ ընել Մաւրիտիոսի : Յորեկուրնէ վերջը կու գար՝ հետն աղէկ սիկարնէր առած որ

սովորական տեսակէն չէին, անկողնին ծայրը կը նստէր ու կը ծխէր . իսկ Մաւրիտիոս իր աշխատութեան սեղանատախտակին առջևը կեցած՝ մէկ կողմանէ կը խօսէր, մէկաւ կողմանէ ընկուզենւոյ կամ կաղնւոյ փայտ կը տաչէր : Երբեմն սրբ Եղուարդ ոտքի վրայ կ'ելլար՝ մէյ մը անոր աշխատութեանը վրայ նայելու համար . երբեմն ալ Մաւրիտիոս քիչ մը ատենուան համար աշխատանքը կը թողուր, սիկադ մը կը վառէր ու կու գար անոր քովը կը նստէր : Անանկ եղաւ որ քիչ քիչ այս երկու երիտասարդներն իրարու հետ մեծ սիրով մը կապուեցան : Մաւրիտիոս անզգալի կերպով այն վիճակին հասաւ՝ որ մտերմութեամբ իր սիրտը կէս մը կը յայտնէր անոր . թէպէտ խոհեմաբար իր առջի անցուցած կենաց անկարգութիւններուն վըրայ խօսք չէր բանար, բայց զեզուն սրտով կը խօսէր իր քրոջը վրայ, որ նոյն յարկին տակ կ'աշխատէր : Սրբ Եղուարդ, որ փափուկ և բանաստեղծական կազմուածքով սիրտ ունէր, այս եղբայրական կենաց պատմութիւնները կ'ախորժէր . և թէպէտ կը փափագէր անոր երիտասարդ քրոջն հետ ճանչուորելու, բայց քաղաքավարութեան համար դեռ չէր համարձակած աղաչելու Մաւրիտիոսի որ զինքն անոր ներկայացընէ . և զարմանալին այն է՝ որ Մաւրիտիոս թէպէտ ստուգիւ իրեն վրայ սէր ունէր, սաստիկ լուութիւն

կը պահէր այս բանիս վրայ : Բայց ամէն բան իր սահմանեալ բաղդն ունի . օր մը որ անգղիացի ազնուականը Մաւրիտիոսի քով էր , Մագդաղինէ ներս մտաւ : Մաւրիտիոս քանի մը անգամ իր նոր բարեկամին վրայ խօսեր էր Մագդաղինէի , և անիկայ ալ , որ կ'ուրախանար տեսնելով թէ ամէն գեղեցիկ զգացմունքները մէկիկ մէկիկ նորէն կը ծաղկին ան այնչափ ատենուան եղծեալ սրտին մէջ , միշտ յորդոր տուեր էր այս նորածին բարեկամութեան կայծն արծարծելու : Մագդաղինէ սըր Եդուարդին առջև այն կերպով վարուեցաւ՝ ինչ որ էր բնութեամբ . սակայն իր ազգականին հաճոյանալու դիտմամբ , միանգամայն մէկ աչքի նայուածքով մը իմացած ըլլալով որ անգղիացի երիտասարդը վստահանալու անձն էր , աւելի վայելչութիւն բանեցուց քան ինչ որ թերևս առջին տեսութենէ մը կրնար պահանջուիլ : Ժամէ մը ետքը՝ իր բնակարանն առանձնացաւ , գրաւելով սըր Եդուարդի սիրտը :

— « Իրաւունք ունէիր , պարոն , աղաղակեց եռանդեամբ ազնուականն առ Մաւրիտիոս՝ երբոր օրիորդը դուրս ելաւ , իրաւունք ունէիր քոյրդ գովելու . մանաւանդ թէ հիմա կը տեսնամ որ շատ պաշտութեամբ կը խօսէիր անոր ճրիցը վրայ . որովհետև ո՛ր կը գտնաս անանկ ազնիւ հոգի մը անանկ անոյշ երեսի մը վրայ ցո-

լացած : Հիմա կ'իմանամ որ դիւրին է քեզի գլուխ գործոց ճեռակերտներ շինել, քանի որ հանճարիդ առջև անանկ կատարեալ օրինակ ունիս : Բարեկամդ իմ, բաղդն այնչափ խիստ չէ եղեր քեզի՝ որչափ որ կը կարծէի, որովհետև ասանկ քոյր մը շնորհեր է քեզի » :

Սըր Եգուարդ կրնար ուզածին չափ ասանկ խօսիլ՝ առանց վախ ունենալու որ բարեկամն իր խօսքը կտրէ : Մաւրիտիոս իր սեղանատախտակին վրայ ծռած՝ փայտի կտորի մը վրայ կ'աշխատէր և կարծես թէ և ոչ իսկ մտիկ կ'ընէր սըր Եգուարդի խօսքերը : Նոյն օրը կերակրոյ միջոցն ու բոլոր իրիկունը՝ անգղիացի ազնուականին վրայ միայն խօսուեցաւ Մագդաղինէի սենեկին մէջ : Անոր վայելուչ ու պարզ կերպը, զգուշաւոր ու քաղաքավար լեզուն, և անոր գաղափարաց բնական ազնուականութիւնը՝ երիտասարդ օրիորդին համակրութիւնը շարժեր էին, որ խօսքով ալ կը յայտնէր զայն և ուրախակից կ'ըլլար իր ազգականին ասանկ մտերիմ մը ունենալուն վրայ : Ան կանայքն որ մէկու մը վրայ սէր ունին՝ զարմանալի բնածին ըզգացմամբ մը մէկ նայուածքով կը հասկընան ու կը չափենն թէ իրենց սիրելւոյն բարեկամներուն մտերմութիւնն ինչ աստիճանի պատուաւոր ու անկեղծ է : Այս ալ բաւական չէ . Որսոլա ալ, որ ստանդուխին վրայ հանդիպեր էր ազնուականին, չէր

կշտանար անոր աղէկ մարդու կերպարանքը գովելու և չէր հաւտար որ անիկայ անգղիացի էր : Նոյն իսկ Պետրոս Մարտոյ ալ , որ իրիկունը Մագդաղինէի քով կ'անցընէր և որ շատոնցուրնէ 'ի վեր կը ճանչնար սըր Եդուարդը՝ անոր պալատին համար խել մը երենեայ գործածներ շինած ըլլալով , քանի մը առատաձեռնութեան գործքեր պատմեց անոր վրայ , որ գերմանացի օրիորդին մտացը վրայ մեծ տաբաւորութիւն ըրին , և Որսոլա ալ զարմացման ու գորովոյ բացագանչութիւններով կը յայտնէր իր զգացմունքը : Այս միաձայն գովեստներուն Մաւրիտիոս ալ իր ձայնը կը խառնէր . սակայն ներքուստ վիշտ կը կրէր առանց պատճառը փնտրուելու կամ գիտնալու , նման տնկոց որ մրրկին մօտեցած միջոցը կը կրեն , թէպէտ դեռ երկինքը պարզ է և ամպ մը անոր մաքուր երեսը չսևցընէր :

Այն օրուրնէն սկսեալ՝ սըր Եդուարդ Մագդաղինէի հետ ալ կը տեսնուէր . սկըզբան կարճ ու ցանցառ էին իր այցելութիւնքը , բայց անզգալի կերպով երկընցան ու յաճախեցին : Միշտ օրուան մէջ կու գար . և շատ անգամ՝ նոյն իրիկունը նորէն կը դառնար : Մագդաղինէ ամենայն մարդասիրութեամբ կ'ընդունէր զանիկայ , և չէր ծածկէր անոր կենցաղավարութենէն զգացած ախորժը : Մաւրիտիոս խռոված կը դիտէր զինքը . և երբեմն նախանձոտ աչ-

քով մը կը զննէր աս երկուքը՝ առանց ան-
դրադառնալու ըրածին վրայ : Ժամանակ
ալ կ'ըլլար որ խեղճ երիտասարդը թեթև
զայրոյթ մը կը զգար իր բարեկամին դէմ,
առանց մակարեբելու պատճառը : Շատ
ատեն չանցաւ՝ իրեն անանկ սկսաւ երև-
նալ որ իր մօրաքեռ թոռն իրեն հետ քա-
չուած կերպ մը կը բանեցընէր, իսկ օտա-
րականին հետ աւելի կը բացուէր : Արդէն
գիտէր էր որ անգղիացին ալ բան մը չէր
զուրցէր ճանապարհօրդութիւն ընելու վը-
րայօք, ինչպէս որ սովորութիւն ունէր ը-
նելու ամէն տարի նոյն միջոցին : Իրիկուն
մը Մաւրիտիոս համարձակեցաւ հարցընե-
լու թէ երբ ճամբայ կ'ելլայ . ազնուականը
պատասխան տուաւ թէ միտք չունէր տե-
ղէն շարժելու, և Մաւրիտիոսի անանկ մը
երևցաւ՝ որ Մագդաղինէ ժպիտով մը շը-
նորհակալ եղաւ անոր : Անկէ ետքը կա-
մաց կամաց այն անձանօթ նեղութիւնն ու
տագնապն որ կը կրէր երիտասարդը՝ ծանր
մաղձոտութեան մը փոխուեցաւ : Մաւ-
րիտիոս սկսաւ առանձնութիւն ախորժիչ,
և աշխատանքի սէրը պաղեցաւ : Ամենէն
աւելի արտաքոյ կարգի բանն այն էր՝ որ
Մագդաղինէ, ատենօք անանկ հսկող ու
խորատես, կարծես թէ հիմա չէր ան-
դրադառնար իր ազգականին վրայ եղած
նոր փոփոխութիւններուն . անանկ մը կու-
գար մարգուս՝ որ բոլոր ուշադրութիւնը
սըր Եգուարդի վրայ դարձուցած էր :

Առաւօտ մը որ անկողնին վրայ նստած էր Մաւրիտիոս տրտում տխուր ու լքեալ, և սարսափով ինքը իրեն կը հարցընէր իր աս վիճակն հասնելուն պատճառը, ազնււականը ներս մտաւ՝ սովորականէն աւելի ծանր դէմքով: Եկաւ Մաւրիտիոսի քովը նստաւ, և առանց բերանը բանալու՝ սկըսաւ գաւազանին ծայրովն աներևոյթ բուլորակներ ձեւացընել յատակին տախտակամածին վրայ, և կերպարանքէն յայանի կ'իմացուէր որ հարկաւոր բան մը ունէր ըսելու և չէր գիտէր ինչպէս սկըսի. Մաւրիտիոս ալ անձկութեամբ մը կը զննէր զանիկայ, կարծես թէ կը մակաբերէր որ այն մորիկն որուն մերձաւորութիւնն այնչափ վնասակար եղեր էր իրեն ամսէ մը 'ի վեր, ան միջոցին գլխուն պիտի փրթէր:

— « Մաւրիտիոս, ըսաւ վերջապէս սըր Եդուարդ շփոթած կերպով մը՝ ինչպէս որ սովորական է հարուստներուն երբոր աղքատաց հետ կը խօսին, ես քու քոյրդ կը սիրէի տեսնելէս առաջ ալ: Քու խօսքերդ պատճառ եղան ինձի զանիկայ սիրելու. և երկուքնուդ վրայ տարածեցի այն գորովն ու մեծարանքը՝ որ առաջ միայն քու վրադ ունեցեր էի: Երբոր զինքն անձամբ ճանչցայ, այս զգացմունքը քիչ ատենուան մէջ սիրոյ դարձաւ: Ո՛վ ազնիւ երիտասարդներ, ես տեղեկութիւն մը չունիմ ձեր ազգատոհմին ու ձեր առջի վիճակին վրայ. բայց ես ձեր հիմակուան

կեանքը տեսայ , և աս բաւական է ինծի : Այնպիսի կերպով համբերեցիք ճախորդութեան , որ ցուցուցիք թէ արժանի էք հարստութեան . ես ալ իմ կողմանէս կարծեմ բաւական ցուցուցի որ շատ անարժան չէի ազբատութեան : Մաւրիտիոս , մենք բարեկամ ենք իրարու . կ'ուզես որ իրարու եղբայր ըլլանք » :

Մաւրիտիոս մահուան դէմքէն աւելի գունատեալ պաղ կերպով մը ձեռքը արւաւ ազնուականին , ու խռովեալ ձայնիւ մը՝ զոր ջանաց հանդարտեցընելու՝

— « Սըր Եդուարդ , ըսաւ , լսած խօսքերս իրեքնուս ալ պատիւ կ'ընեն , և գիտցիր որ շատ երախտազէտ եմ անոնց , ինչպէս որ պէտք է ըլլամ . բայց Մագդաղինէ , իմ քոյրս . . . անտարակոյս զքեզ կը սիրէ . . . բայց արդեօք իր հաւանութիւնն առա՛ծ ես . կամ գոնէ իմացա՛ծ ես իր միտքը :

— Չէ , բարեկամս , չէ , ես չեմ գիտեր թէ արդեօք սիրելի եղա՛մ եմ , պատասխանեց համեստութեամբ սըր Եդուարդ . բայց ես միտքս դրած եմ որ ճշմարիտ սէրը կը քաշէ , և ես գիտ կը համոզեմ որ թերեւս իմ սիրոյս ու խանդաղանացս յարատւութեամբը՝ վերջապէս կը ստանամ այն սրտին սէրը , զոր ինծի ընկեր որոշեր եմ :

— Բայց արդեօք Մագդաղինէ գիտէ՞ որ կը սիրես զինքը :

— Չեմ կարծեր որ իմ այցելութիւն .

ներս անախորժ երևան իրեն . սակայն ոչ բերնով և ոչ ալ աչքով երբէք իմ սիրոյս վրայ խօսեր եմ հետը : իրեն հաւանութիւնն առնելէն առաջ իմ պարտքս էր նախ քու հաւանութիւնդ առնել :

— Շատ աղէկ , ըսաւ Մաւրիտիոս՝ աս անգամ ինքը սըր Եդուարդի ձեռքը սխմելով : Ես հիմա պիտի չճանչնամ զքեզ . իմ համարմունքս և բարեկամութիւնս շատոնցուրնէ 'ի վեր ստացած ես : Եր խօսիմ Մազգաղինէի հետ , և թէ որ փափաքանացդ զիջանի , հիմակուց կրնամ խօստանալ քեզի որ ձեր երջանկութիւնը կը կատարուի :

Անգղիացին բաժնուեցաւ Մաւրիտիոսէն՝ քաղցր յուսով մը սիրտը լեցուած . ինչպէս կը սիրէր Մազգաղինէն , ինչպէս որ չէր կրցած անտարբեր աչքով տեսնել օրիորդին ան աստիճանի անմեղ պարտութիւնն ու խելքը , ան աստիճանի շնորհալից կերպն ու գեղեցկութիւնը , անտեղ Մաւրիտիոսի վրայ ալ մեծ սէր ունէր , և այդ քանաստեղծական միտք և վեհանձն ու զգայուն սիրտ ունեցող ազնուատկանին քաղցր կ'երևար այն մտածութիւնը՝ թէ կարենայ խալլեսել այն երկու երիտասարդները բազդին անգթութենէն , աշխարհիս առջև գիրտնաք առջի վիճակնին հաճելով՝ զոր կորսընցուցած էին :

Երբոր մինակ մնաց Մաւրիտիոս, ա-
նանկ խառնակ մտածութիւններու և իրա-
րու հակառակ զգացմանց անդունդի մը
մէջ ինկաւ, որ ամենէն աւելի մանրագնին
քննողն ալ, ամենէն աւելի քաջ հոգեբանն
ալ շատ դժուարաւ պիտի կարենային ո-
րոշել զանոնք իրարմէ: Ինքզինքը սաստիկ
բռնադատելով ինչուան սանդուխին ծայ-
րը սքր Եղուարդին ընկերելէն ետքը, նո-
րէն իր խուցը մտեր ու անկողնին վրայ ին-
կեր էր՝ լսած խօսքերէն ծածր վիրաւո-
րուած: Սկզբան ուժգին ցաւ մը զգաց,
որուն ինչ ըլլալը չէր գիտէր. ետքը թմրու-
թիւն մը եկաւ վրան: Իր զգայարանաց
խռովութիւնն հանդարտած ըլլալով, ան-
պէց վերջը կամաց կամաց միտքն արթնցաւ
և զուարթացաւ: Քիչ ատենէն ճակատը
քաղցր լուսով մը փայլեցաւ, որ նման էր
արշալուսոյն առաջին պայծառութեանը:
Իրաւցընէ նոր կենաց մը արշալոյսն էր

ասիկայ : Երկնային բոց մը փայլեցաւ իր
աչքերուն մէջ . ժպիտ մը , որ նման էր
քունէ արթընցող տղու մը ծիծաղելուն ,
կէս մը բացաւ իր դեռ տժգոյն ու դողգը-
ղացող շրթունքները : Երկար ատեն ինք-
իրմէն դուրս յափշտակուած մնաց՝ բոլո-
րովին լուռ : Վերջապէս՝ սիրտն ելլելով
կուրծքն ուռեցաւ . յանկարծ աչուրներէն
արցունքներ ցայտեցին , հառաչանք մը
փրթաւ սրտէն , և յարութիւն առնող Ղա-
զարու պէս՝ ձեռքերն երկինք բարձրացուց :
Իր սրտին խորերը նայելով , Մաւրիտիոս
նոր բացուած ծաղիկ մը տեսեր էր , անոր
անոյշ հոտն առեր էր , և այս ծաղիկը՝
սէրն էր : Ար սիրէր . չփորձողը չգիտեր
թէ ինչ գինովութիւն է ասիկայ :

Կարճ ատեկց աս գինովութիւնը . Մաւ-
րիտիոսի վրայ յանկարծ բարկութիւն ու
յուսահատութիւն եկաւ : Նման այն թըռ-
չնոյն՝ որ օդուն դաշտաց մէջ մահացու վէր-
քով վիրաւորուած է , նորէն ինկաւ իր վի-
ճակին գիտակցութեանը մէջ : Խեղճը ան
ատեն սկսեր էր սիրել՝ երբոր ալ ժամա-
նակը չէր . շատ ուշ հասեր էր Գրախտին
դուռը . հազիւ թէ կը սկսէր հեռուէն տես-
նել երջանկութիւնը , և ահա մշտնջենաւոր
հրաժեշտի ողջոյնը պիտի տար անոր : Իր
բուռն բնավորութիւնը վերջին անգամ մըն
ալ բռնկեցաւ : Նախանձէն բորբոքած՝
սկսաւ անէծքներ թափել սրը Եղուարդայ
վրայ , որ իր ապագայ երջանկութիւնը կը

դողնար իրմէ . իր ցաւոց սառակութեանը միջոց՝ հազիւ հազ լեզուն Մազգաղինէի վրայ թոյն չթափեց : Միտքը կը բերէր իր մօրաքեռ թոռան ան վերջին օրերուն մէջ բռնած կերտը . աչքին առջև կը տեսնար որ Մազգաղինէ կը ժպտէր անգղիացւոյն , անգղիացին ալ ոիրալիր կը նայէր անոր , և դժոխքին մէջ որչափ որ օձ կայ նէ՝ աւէնն ալ իր սիրտը կը կրծէին ու պառապատառ կ'ընէին : Չէր կրնար ինքզինքը միտքարել ըսելով թէ թերեւս սխալ բան դրեր էր միտքը . թէ որ դիտած ալ չըլլար այս երկու երիտասարդներն , թէ որ աւնոնց փոփոխակի խանդաղանացն օրէ օր առաջ երթալուն մտափր եղած ալ չըլլար անձկութեամբ , այն անձանօթ նեղութիւնն որ ինչուան ան տտեն քաշեր էր՝ անիկայ միայն բաւական էր իր հիմակաւան կարծիքն հաստատելու . ևս առաւել այն տանջանքն՝ որ առ ժամուն կը կրէր՝ բարձր ձայնով իմաց կու տար իրեն՝ թէ Մազգաղինէ կը սիրէ զսրբ Եղուարդ : Այս մտածութիւններով իր խուցին մէջ արագ արագ պտրտելու ատենը , յանկարծ կանկ առաւ , կարճրնալով իր զայրանալուն վրայ . ինքն իր սրտին մէջ մտաւ , ու գետին կ'անցնէր ամօթէն :

— « Ի՞նչ բանի վրայ կը դանդաւոր , ողորմելի գու , ինքը իրեն աղաղակեց՝ որ լուխը դէպ'ի վար ծռելով : Հազիւ հազ այն աղմին մէջէն ելած ուր թաւալեցիր քու

երիտառարդութիւնդ , կը տրանջան որ սիրուած չես , կը զայրանան որ քեզմէ աւելի ընտրելի կը սեպուի ազնուական սիրտ մը , անարատ առաքինութեամբ ու այնպիսի խղճմտանքով անձ մը՝ որ ոչ երբէք մոլորած է : Ինչ ըրեր ես նայինք որ արժանի ըլլաո ան սիրոյն , որ այսօրուան օրս քու ամենէն մեծ երջանկութիւնդ կը սեպես : Կրկու տարիէն աւելի որ աս գանձը քու ձեռքդ էր , ինչ ըրեր ես որ իրաւունք ունենաւ անոր : Բանի անդ չես սեպած զանիկայ , արհամարհեր ես , ոտքի տակ առեր ես , և հիմա քեզի ծանր կու գայ մըտածելը թէ ուրիշը պիտի վայլէ զանիկայ : Անոր ըրած անարգանքներուդ վարձքի տեղ՝ բաւական չես սեպեր որ ազնիւ օրիորդն որ Աստուած քու պահպանութեանդ յանձներ էր՝ անդունդին յատակէն զքեզ վեր առաւ , հոգւոյդ աղտեղութիւնները լուաց և օրհնեալ ճամբաներ բացաւ ոտքերուդ առջև : Այն վատ նախատինքներուն փոխարէն՝ որ ինչպէս որ պէտք է նէ առատաձեռներ ես իրեն , ըրած տմարդութիւններուդ և անվայել գործողութեանդ վարձքի տեղ՝ քեզի անանկ կ'երեսայ որ իր սէրը գրեթէ գրեթէ քիչ ալ է քեզի : Ա՛հ , լուռ եղիր , առանձնութեանդ մէջ մնա , և շնորհակալ եղիր Աստուծոյ որ սիրելու շնորհքը կը պարգևէ քեզի :

Ոչ երբէք ինչուան այն ատեն անանկ

դառնութեամբ լացեր էր Մաւրիտիոս իր առջի կենաց յանցանքներուն վրայ . ոչ երբէք իր անկարգութեանց յիշատակին անանկ լեղի ու հրատոչոր արցունքներ թափեր էր . ոչ երբէք գէշ կերպով անցուցած օրերուն վրայ զգացած խղճմտանաց խայթն անանկ սաստիկ ճմլած էր զինքը : Այս առաջին անգամ իր կործանման մեծութիւնն աղէկ կ'ըմբռնէր . այս առաջին անգամ աղէկ կը զգար իր հոգին այն երջանկութիւնն , որ իր ձեռքն ունեցեր էր և չէր կրցած բռնել : Թէ որ ես , կ'ըսէր ինքնիրեն , սըր Եդուարդայ պէս միշտ անխտոր բռնած ըլլայի պարտուց անհոփոխելի ճամբան , հիմա այս վայրկենիս իմ հարցս բնակարանին մէջ եղած կ'ըլլայի , Մագդազինէի քով որ թերևս կը սիրէր զիս , որովհետև իր սիրոյն արժանաւոր մնացած կ'ըլլայի :

Ճշմարիտ սէրը խոնարհ է , համակամ , միշտ պատրաստ զոհ ընելու : Ի՞նչ կրնար պարզուել Մաւրիտիոս իր մօրաքեռ թոռանը . ինչ որ ալ ընէր , ինչպիսի կտրըճութեամբ ու յարատևութեամբ աշխատէր նէ ալ , որչափ որ ալ իր ձեռակերտներն համբաւ ունենային՝ ենթադրելով թէ աս համբաւը պիտի դիմանար , միշտ խեղճ ու չափաւոր վիճակ մը կրնար տալ անոր : Իսկ թէ որ սըր Եդուարդի հետ կարգուելու ըլլար Մագդազինէ , նորէն կը ստանար ընկերութեան մէջ այն աստիճանն որ իրեն

սեփական էր և ուսկից ոչ երբէք պէտք էր վար իջած ըլլար : Թէ որ Մագդաղինէ սիրոյ հակամիտութիւն մը կը զգար անոր վերայ , թէպէտ թեթև ալ ըլլար , Մաւրիտիոսի կը վայլէր գէմ կենալ աս բանիս : Ընդ հակառակն՝ Մաւրիտիոսի պարտքը չէր բոլոր հոգևով վրայ տալ , և ամէն բան զոհել Մագդաղինէի երջանկութեանը : Ասոր վրայ տարակուսելու բան չկար . մէկէն որոշեց իր ընելիքը :

Տխուր ու լռիկ կեցաւ երեկոյեան խօսակցութեան միջոցը , զոր ըստ սովորութեան Մագդաղինէի հետ կ'անցընէր : Բայց զարմանալին այն է որ , ինչպէս ստէպ կը հանգիպի այս դիպուածը մտերիմներու մէջ , գերմանացի օրիորդը նոյն իրիկուն շատ զուարթ էր . Մաւրիտիոս մաղձոտութեամբ կը գիտէր զանիկայ , և յօժարամիտ համակամութիւն մը կ'երևար դէմքին վրայ : Զգոյշ կեցաւ անանկ խօսք մը զուրցել տալու անոր , անանկ նայուածք մը նայել տալու , որ կրնային փոխել տալ իր առաջադրութիւնը : Միայն , երբոր բաժնուելու ժամանակը մօտեցաւ , աղաչեց Մագդաղինէի որ դաշնակին առջևն անցնի ու Շուպէրդի Հրաժեշտի ողջոյնն երգէ , որ ուրիշ անգամ իր սիրաւը շատ շարժած էր : Մագդաղինէ ախորժով կատարեց անոր խնդիրքն , և ոչ երբէք այսչափ աղէկ երգած էր : Երբոր լմընցուց երգը , Մաւրիտիոս ոտքի վրայ ելաւ , մօրաքեռ թողանը

ձեռքերն իր ձեռքերուն մէջ առաւ, համեստութեամբ մը պահաւ անտէք, ետքը դուրս ելաւ՝ թեթեւցընելու համար իր սիրտն այն բռնէն՝ որ կը նմէր զայն :

— « Ի՞նչ ունիս, տէր իմ, ըսաւ իրեն Որսուլա՝ նախասենեկին մէջ կեցընելով զինքը . տխուր կը տեսնամ զքեզ :

— Ունի չունիմ, ազնիւ Որսուլա, պատասխանեց Մաւրիտիոս ինքզինքը բռնելով : Գիտես արդէն թէ ատենէ մը ՚ի վեր իմ տխրութիւններս առջինին պէս սաստիկ չեն : Եկուր, որպէս զի տեսնաս, պագտուինք իրարու հետ . անտարակոյս եմ որ ասիկայ զիս կը զուարթացընէ » :

Որսուլա իր սննդակից եղբորը վիզը պըլլուեցաւ, որ թւերուն մէջ առաւ զինքը : Երբոր մինակ մնաց Մաւրիտիոս, ալ չկըրցաւ բռնել զինքը . իր յուսահատութիւնը հեծեծանքներով և արցունքի վտակներով կը խօսէր . այս վերջին հարկն եղաւ զոր վճարեց մարդկային տկարութեան :

Երկրորդ օրն առաւօտը կանուխ ելաւ անկողնէն, աշխատութեան սեղանատախտակին առջևն անցաւ, և որպէս զի բոլորովին զոհէ իր յոյսերը, սրտին հեծութիւնները զսպած և զսէրն իր ծոցը վառնտած՝ հետևեալ տողերը գրեց անվրդով ձեռքով .

« Մագդաղինէ, ես իմ խոստմունքս պահեցի : Դու ինձի աղաչէր էիր որ երկու

տարի հետզ կենամ. ահաւասիկ քու շափ
դրած ժամանակդ խել մը ամսէ 'ի վեր ան-
ցած է: Ինծմէ խնդրեր էիր որ երկու տա-
րի անձին նուիրումն ու զոհ ընեմ, և իմ
տեղս գու 'ի գործ դրիք զայն: Դու ինծի
համար շատ աւելի բան ըրիր՝ քան ինչ որ
ես քեզի համար: Աշխատութեան յարգը,
և պարտուց մեծութիւնն ու սրբութիւնը
ճանչցընել տալով ինծի, գրեթէ մպորու-
թեանցս հետքն ալ ջնջեցիր վրայէս: Ինչ
ապագայ ալ որ Աստուած ինծի պատրաս-
տած ըլլայ, ցյաւիտեանս երախտագէտ
պիտի ըլլամ քեզի ու պիտի օրհնեմ զքեզ.
Քայց ալ ասկէց վերջը չեմ ուզեր ու չեմ
կրնար ընգունիլ ինծի համար բրած զոհգ՝
զոր այնչափ քաջասրտութեամբ յանձն ա-
ռիր. ապա թէ ոչ անանկ տմարդի անձնա-
սիրութիւն մը բրած կ'ըլլամ իմ կողմա-
նէս, որ ես իսկ կը դատապարտեմ: Հի-
մա զիս թողունք, քու վրագ մտածենք ու
քու երջանկութեանդ վրայ: Սըր Եգուարդ
կը նիրէ զքեզ, և կրնայ այն վիճակն հա-
նել զքեզ՝ որուն իրաւունք ունիս. և ար-
ժանի է ինքը քու սիրոյդ: Հաստատ զի-
տեմ որ ինքն անկեզձ սէր ունի իմ վրաս.
որով անտարտկոյս յանձն կ'առնէ իմ առ-
քեզ ունեցած պարտականութիւնս լեցը-
նել: Մնաս բարով ուրեմն, ես կ'երթամ:
Մի անհանգիստ ըլլար իմ վիճակիս վրայ.
ուր որ ալ ըլլամ, գիտես որ իմ ձեռուցս
աշխատութեամբք իմ պիտոյքս կրնամ չե-

ցընել : Մի վախնար որ թերևս նորէն իյնամ այն մութ գիշերուան մէջ ուսկից որ դու զիս հանեցիր . խորհրդական ասող մը միշտ պիտի առաջնորդէ ինձի այն ճամբուն մէջ զոր առջևս բացիր : Թէ որ ոյժս տկարանայ , թէ որ վհատութիւնը նորէն տիրէ վրաս , նորէն կանգնելու համար բաւական է որ սրտիս խորը նայիմ . հոն կը գտնամ քու պատկերդ : Կ'երթամ հարցս դղեակը տեսնելու . պէտք է որ այս օրինաւոր հատուցմունքն ընեմ ասպետին յիշատակին : Կ'ուզեմ մաքուր ու նորոգեալ երևալ այն տեղերուն մէջ որոնք զիս թողմած ու տպականած տեսան : Հայրս ինձմէ հեռու մեռաւ , առանց իր թուլացած ձեռքովն իմ ձեռքս սխալելու : Այս բարեպաշտական ուխտագնացութիւնը բոլորովին պիտի հանդարտեցընէ իմ խղճմբտանքիս խռովութիւնը : Անկէց վերջը անյողգողդ քայլով կ'երթամ ու կ'իցէ տեղ որ Աստուած ինձի առաջնորդէ : Նորէն կը կրկնեմ , ողջամբ մեաս , Մագդաղինէ . երջանիկ եղիր , և մինչդեռ ես պիտի օրհնեմ այն օրերուն յիշատակն որ մէկտեղ անցուցինք , երանի՛ ինձի թէ որ այն յիշատակը շատ դառն չերևայ քեզի :

Եղբայրդ , ՄԱԻՐԻՏԻՈՍ

Մալլեց նամակը , գրեց ծրարին վրայ իր մօրաքեռ թոռանն անունը , և որպէս զի

դիւրաւ գտնուի՝ կրակարանին մարմարիու-
նին վրայ դրաւ : Նոյն վայրկենին տեսաւ
Մարսոն ու անոր կնիկն , որ արդէն սկսած
էին աշխատիլ իրենց զաւկըներուն օրօրո-
ցին քով . և սիրալիր ձևով մը ողջունեց
զանոնք : Քանի մը վայրկեան գովելի նա-
խանձու աչքով մը զննելէն վերջն այն փո-
քրիկ ընտանեաց խաղաղութիւնն ու եր-
ջանկութիւնը , իր ճամբորդութեան պա-
տրաստութիւնները տեսաւ . բոլոր բոլոր
քառորդ մը տւեց անիկայ : Երբոր ամէն
գարծողութիւն լմընցաւ , բաճկոնակին վը-
րայէն կաշիէ գօտին կապեց , կռնակն ա-
ռաւ այն զինուորական պարկն՝ որուն մէջ
պարունակուած էր բոլոր իր հարստութիւ-
նը , ճանապարհորդ աշխատաւորի մը վայ-
ելուչ գաւազանն ալ ձեռքն առաւ . ետքը
գորովալից աչքով մը այն պզտի խուցին
չորս կողմը նայելէն ետքը , ուր մտեր էր
անձնասիրութեամբ կարծրացած , պարա-
պորդութեամբ թռումած , և անկարգու-
թեամբք ծերացած , ելաւ անկէց աշխա-
տութեամբ նորոգուած , սիրով երիտա-
սարդացած , և ըրած զոհիւր սրբացած :

ԺԷ

Քանի որ Բարիգու մէջ էր, տիրութեան հետ խառն ներքին զայրոյթ մը կը զգար. կը սկսէր թուլնալ այն վեհանձն առաջադրութիւնն որ 'ի գործ կը դնէր՝ հեռանալու Մագդաղինէէն: Կարծես թէ այն մայրաքաղաքին մթնոլորտան, որ ասունօք այնչափ գէշ ազդեցութիւններ ըրեր էր իր վրայ, դեռ հիմա ալ մասամբ մը կ'ազդէր 'ի Մաւրիտիոս: Բայց Բարիգէն որ դուրս ելաւ, երբոր բնութեան մէջ մըտաւ ու սիրտը բացուեցաւ դաշտորէից կենդանացօւցիչ օդը ծծելով, բարկութիւնն իջաւ, սիրտը կռկղայցաւ, և մէկ զգացմունք մը միայն սկսաւ խօսիլ սրտին մէջ, որ էր Մագդաղինէի վրայ ունեցած սէրը: Իր առջի կենաց մրրկալից օրերուն, երբոր իր մէկ փափագին առջև արգելք մը կ'ելլէր կամ սաստիկ կռուով մը հագիւհազ կը կատարուէր, այս ընդդիմութիւնը զայրոյթ կամ ատելութիւն կը բերէր իր վրայ: Չէր կրնար ըմբռնել թէ կրնայ մարդ

սիրել տուածնց վայելու իր սիրոյ առարկայն . կը խնտար՝ թէ որ մէկն ըսէր իրեն որ կարելի է սփոփել ձրի սիրով մը : Իսկ հիմա , ինքնիրեն մնացած , բաւական կ'իմանար այն զգացման մեծութիւնն որն որ ինքը ամենեին չէր ճանչցած : Կը հեռանար Մագդաղինէէն . այս բաժանմունքը արին քալցուցեր էր սրտէն , և սակայն իր ցաւոց մէջն ալ քաղցրութիւն մը կը զգար : Իր կամաւոր առանձնանալը , իր ինքիրեն յանձն առած տքսորտանքն՝ աւելի մեծ և աւելի սրտանց ուրախութիւն կու տային իրեն , քան թէ իր անցած կրից գինովութիւնը : Սիրուած չէր , բայց առջինէն աւելի սիրոյ արժանաւոր կը տեսնար ինքզինքը , և իր բարոյական արժէքին աւելնալուն գիտակցութիւնը կը մխիթարէր զինքը : Սիրուած չէր , բայց գոհ էր այն զոհին վրայ որ ըրեր էր իր սիրելոյն , և նոյն իսկ այն զոհն անանկ խնտում մը կը բերէր իր վրայ՝ որ ոչ ոք գրնար իրմէն վերցընել : Իր վալզրավէր ուխտագնացութեան երթալուն առաջնորդ՝ միայն իր հօրն յիշատակին ունեցած պարտքը լեցընելու բաղձանքը չէր . այլ կ'ուզէր նաև տեսնալ այն տեղուանքն՝ ուր առաջին տեղամ հանդիպեր էր Մագդաղինէի : Կ'ուզէր շնչել այն օգն որ շնչեր էր անիկայ , քալել այն ճամբաները՝ ուր անոր խօսիլը ըսեր էր . իբրև վերջին երախտագիտութիւն մը կը սեպէր ասիկայ :

Բարձրագլուխ կը քալէր, բոլոր կուրծքովն օդը շնչելով. բնութեան գեղեցկութեանց զգացմունքը, որ շատոնց 'ի վեր թմրած էր սրահն մէջ, վերջապէս կ'արթննար: Մայիսի վերջի օրերն էր. արևը կը ծիծաղէր երկրիս. բլրոց ելևէջքը, երկնից երեսին փոփոխութիւններն ու տեսարանաց ամէն արտաքոյ կարգի երևոյթներն անակնկալ ուրախութեան աղբիւրներ էին Մաւրիտիոսի համար: Ով որ քրքնական զարմանքն ու եռանդը տեսնէր, կը կարծէր որ առաջին անգամ՝ կը նշմարէ ստեղծագործութեան հրաշալիքները: Այս հետևակ ճամբորդութիւնը, թէ և աշխատալից, իրեն համար աւելի քաղցր էր՝ քան այն ամէն կառքով ու վագուկ ձիերով ըրած զուարճութիւնները: Իրիկունները պանդոկներ քաշուիլը, առաւօտն արշալուսոյն ճամբայ ելլալը, հասարակաց սեղանի վրայ հանդիպմունքները, ճամբուն վրայ առած ու տուած բարևները և դրան դիմաց քարէ նստարանին վրայ ըրած խօսակցութիւնները սոցոց հետ, իրեն համար բանաստեղծական գրուագներ էին որ իր ուխտագնացութեան զուարճութիւնը միշտ վառ կը պահէին, և ուրիշներն իրեն հաւասար սեպելու կրթութիւններ էին իր անձին համար:

Վերջապէս յետին բարոյական յեղափոխութիւն մըն ալ եղաւ իրեն վրայ, որ պասիւեց բոլոր մէկալ պատուական յեղափոխութիւնները:

Մագդաղինէ կրցեր էր կրօնական զգացումը զարթուցանելու Մաւրիտիոսի սրտին մէջ, բայց չէր կրցած համոզել զանիկայ որ աղօթքի դիմէ, և իր տխրութեանը միջոց աստուածային մխիթարութիւնն իրեն օգնակոն առնէ: Ինչ որ ալ զուրցեր էր օրիորդը, ոչ երբէք Մաւրիտիոս փոք կոխեր էր եկեղեցի մը: Յաւոց սլահուած է եղեր այս առանձնաշնորհութիւնն՝ որ անզգալի աստիճանաւ մը հաւատքն ու կրօնքը բորբոքել տան անոր սրտին մէջ, զորոհք ինչուան ան ատեն ծաղրած էր: Ամենայն ճշմարիտ ցաւ զմեզ առ Աստուած կը բարձրացընէ. Մաւրիտիոս փորձով տեսաւ զայն: Ճամբուն վրայ հանդիպած գեղի մը մէջ քալելու ատենը՝ եկեղեցւոյ մը առջևէն անցաւ, և ներքին անընդդիմակ դրդմամբ մը մղուելով, առանց վրան մտածելու կամ որոշելու՝ ներս մտաւ: Այս այն աղքատ եկեղեցիներէն մէկն էր՝ որ թերևս Աստուծոյ առջև նախամեծար են քան զճոխ և ոսկեզօծ եկեղեցիները. արևն անոյ ճառագայթներով կը լուսաւորէր զան գոցուած վարագոյրներուն մէջէն անցնելով. դաշտորէից ծաղիկներ ցանուած էին խորանին աստիճաններուն վրայ, և ասդիս անդին սալաքարերուն վրայ քանի մը կանայք ու քանի մը ծերունիք ծունկ չոքած էին շուքին մէջ: Մաւրիտիոս ծունկ չոքեցաւ ու աղօթեց. կ'աղաչէր ընդունիլ իր հօրմէն թողութիւն ըրած

անկարգութեանցը , և Մազգաղինէի համար երջանկութիւն կը խնդրէր Աստուծմէ :

Այսպէս մինաւորիկ տասներհինգ օր ճամբայ ընելէն ետքը , առանց ճանչցուելու վաղորավէրի մօտիկն եղած քաղքէն անցաւ : իր զգեստը բաւական էր զինքը ծածկելու . և ուրիշ կողմանէ ալ իր անվեհեր քաղուածքը , իր պայծառ ու տնմեզ նայուածքը , և իր ազնուական ու առոյգ կերպարանքին խաղաղութիւնն ու վեհութիւնը տեսնողները՝ ինչպէս կրնային սեպել զինքն այն երիտասարդն որուն իրեք տարի առաջ արօրուածի պէս հոնտեղէն անցնելը տեսեր էին :

Ո՛հ , ո՛վ կրնայ պատմել թէ ինչպէս սիրտն ելաւ յորդութեամբ՝ երբոր ժամ մը ետքը հորիզոնին վրայ տեսաւ այն ծառերն որ իր օրօրոցին վրայ հովանացած էին , երբոր անտառին մէջ ստքը դրաւ , երբոր մտաւ անոր խորհրդաւոր խորերը՝ ուր այնչափ անգամ պտըտած էր իր հօրն ու մարդիզուհւոյն հետ , ուր Մազգաղինէն առջեւն ելեր էր : Կը զգար զինքը լի սիրով և կենդանութեամբ՝ այն աղուոր տեղերուն մէջ , որոնք իրեք տարի առաջ իր յուսահատութիւնը նշմարեր էին . անով իր տռաջին շարժումն այն եղաւ՝ որ աղաղակեց առ բոլոր բնութիւնն թէ դեռ ինքը երիտասարդ էր , դեռ կրնար սիրել , և թէ կը սիրէ . իր նորոգեալ հոգին սրբազան յափշտակութեամբ մը ինքիրմէն

գուրօ ելաւ : — « Ո՛վ բնութիւն , գոչեց ,
ուրախօսցիր , դեռ ես քու որդիք եմ : Ո՛վ
թեթև գեփիւռներ , առջի ատեններուն
պէս հիմա ալ ճակատս փայփայեցէք : Ո՛վ
անտառաց մամուռներ , ո՛վ բացավայրաց
գալարիք , ճանչցէք իմ քայլերս : Ո՛վ ծառք
որ իմ հարքս տնկեր են , ուրախութեամբ
զլուխնիդ շարժեցէք իմ անցնելու միջո-
ցը » : Կամաց կամաց կը քալէր . ինչպէս
արտուտն ահօսներուն մէջ՝ անանկ գի-
մացն յիշատակներ կ'ելլային : Սա կող-
նույ ծառին շուքին տակ ասպետին հետ
նստեր էր . նա բարտի ծառին արծաթեայ
տերևոցը տակ ամբողջ օր մը ինքն իր վի-
ճակէն գուրս ելեր էր՝ լսելով յինքեան
նոր ծնանող երիտասարդութեան առաջին
մրմունջներն ու համբելով անոր առաջին
խաղերը : Մառազարդ ճամբէ մը որ գար-
ձաւ , ճանչցաւ այն տեղն ուր աշնանային
իրիկուն մը իր մօրաքեռ թոռանն հանդի-
պեր էր : Յիշեց այն բանաստեղծական ի-
րիկուան բոլոր մանրամասն պարագանե-
րը . յիշեց նաև որ տարի մը ետքը՝ իր ա-
ռաջին ճանապարհորդութեանն օրը՝ նորէն
Մագդաղինէն նոյն տեղւոյն վրայ նստած
գտեր էր :

— « Ա՛հ , եղկելի՛ գու , ըսաւ ինքիրեն
տխրութեամբ , որ սատանան էր որ քայ-
լերդ առաջ կը տանէր : Արդէն ան ատե-
նէն գեղեցիկ ու շնորհալից էր Մագդա-
ղինէ . կեցեր էր հոս՝ իբրև Աստուծոյ կող-

մանէ ազգարարութիւն մը , և իբրև պատկեր այն երջանկութեանն որ դու ետևէդ կը ձգէիր : Ինչո՞ւ ան ատեն չբռնեցիր իր ձեռքէն ու նորէն տուն ետ չդարձար :

Իրիկունը կը մօտենար . Մաւրիտիոս , որ խոտին վրայ տարածուեր էր ասանկ մտածութեանց մէջ ընկղմած , ոտքի վերայ ելաւ ու դէպ 'ի դղեակն սկսաւ քալել : Չէր գիտէր թէ ո՞վ են հիմա անոր բնակիչները և չէր ալ հետաքրքրէր տեսնելու և ճանչուորելու անոնց հետ . միայն կ'ուզէր վանդակապատ դրան ծակերէն մէյ մը պարտէզը նայիլ , կ'ուզէր վերջին հրածելտի բարև մը տալ այն Դրախտին՝ ուսկից որ մշտնջենաւորապէս արտորուած էր :

Պարտիզին պատին քովէն քալելով հասաւ դուռը , ու երկայն ատեն ճակատը վանդակին ձողերուն կրթնցուցած կեցաւ : Նիւթաբար դուռը բացաւ . և ներքին բերմամբ մը՝ ներս մտաւ : Պարտիզին մէջ մարդ չկար , և իրիկուան մթութիւնը կը սկսէր անոր վրայ իջնալ : Մաւրիտիոս ուրիշ ձայն չէր լսէր՝ բայց եթէ քամիին հրնջիւնը տերևներուն մէջ , թռչուններու ճուռողիւն մը որ իրենց բոյներուն մէջ կը կծկէին , և աւազին իր ոտքին տակ հանած աղաղակը : Անտառակներուն քովէն անցնելով գողունի քալուածքով մը առաջ կ'երթար . ծառազարդ ճամբան որ լմրնցընելով դարձաւ , ուր շէնքին ճակատն իրեն ընդ առաջ պիտի ելլար , կանկ առաւ ,

չունչը բռնեց , և երկու ձեռքով կուրծքը սխմեց , որպէս զի չըլլայ որ հեծեծայ : Ետքը մէյ մը նայեցաւ . . . Ընչ էր աչքին առջև տեսածը . երանգ էր , թէ պատկերի մը անդրադարձութիւնը , չէ նէ իր ըզեզին ցնորքն էր : Ուզեց պոռալ , բայց ձայնը չըթուեցներուն վրայ մարեցաւ : Ձեռքի գաւազանը մատուրներուն մէջէն սահեցաւ , ծնկուրները տկարացան , և որպէս զի չիյնայ՝ հարկ եղաւ որ ծառի մը կրթընի : Հոն , քսան քայլ հեռու , Մագդաղիէնէ , սըր Եդուարդ , Պետրոս Մարտոյ և իր կինը գաւիթը նստած և արևուն վերջին ճառագայթներովը լուսաւորուած՝ ընտանեբար կը խօսակցէին . իսկ այն երկու տըղաքն ալ որ Մաւրիտիոս աղէկ կը ճանչնար՝ մարգագետնին վրայ թաւալելով կը խաղային : Մագդաղիէնէ մէկէն ոտքի վերայ ելաւ , և Մաւրիտիոս տեսաւ որ անիկայ ծիծաղելով ու իբրև սովորական բանի մը պէս զուարթ ու հանգարտ կերպով դէպ 'ի իրեն կու գար :

— « Ո՛վ բարեկամ , քեզի կը սպասէինք » , ըսաւ օրիորդը : Ու իր ազգականին ձեռքէն բռնած՝ դէպ 'ի անգղիացի ազնուականը , թերեզան ու Մարսոն բերաւ , որոնք արդէն ընդ առաջ կու գային անոր : Ասոնք Մաւրիտիոսի ձեռքը սխմեցին լութեամբ . ամենեւին բառ մըն ալ արտաբերող չկար . ամենուն սիրտն ելած էր , ամենուն բերանը կղպուած :

— « Ո՛վ բարեկամք իմ, դողդոջուն ձայնով մը ըսաւ վերջապէս Մաւրիտիոս զաւթին աստիճաններուն ոտքը կեցած ու երերեալ աչքերն ասդիս անդին պտըտցընելով . ո՛վ բարեկամք իմ, ինչ է եղածը ինչուան հիմա, և հիմա ինչ կ'ըլլայ . իսսս սեցէք, պատասխան տուէք ինձի : Արդեօք ինչուան հիմա ունեցած ցաւերս ու յուսահատութիւնս երանգ էին, չէ նէ հիմա երջանկութիւն կ'երազեմ » :

Չորս կողմի անձինքը սիրալիր ժպիտով մը միայն պատասխան տուին : Մագդաղինէի ձեռք տալովը կրցաւ Մաւրիտիոս զաւթին աստիճաններէն վեր ելլալ : Բոլոր ծառաները ժողվաւած էին ստորին սրահը . Մաւրիտիոս կը ճանչնար զանոնք . անոնց ամէնն ու իր ծնունդը կամ պատիկութիւնը տեսեր էին :

— « Ահաւասիկ, սիրելիներս, ըսաւ անոնց Մագդաղինէ, ձեր երիտասարդ տէրը նորէն իրեն բնակութիւնն եկաւ » :

Սիրով ու մեծարանօք Մաւրիտիոսի չորս կողմը ժողվուեցան . իսկ Ռքստլա ալ անուպարելով կռնակը զարկած պարկին կաշիները կը քակէր : Նոյն միջոցին եկան բարձրաձայն իմաց տուին որ պատրաստ էր ասպետին համար կերակուրը : Մագդաղինէ նորէն ձեռքէն բռնեց, և սրբ Նդուարդայ ու Մարսոյ ընտանեաց հետ միատեղ՝ տարաւ զանիկայ սեղանատուը, ուր ամենևին բան մը փոխուած չէր, ու

անանկ գործաւորի զգեստով այն տեղը նստեցընել տուաւ՝ ուր ատենօք հայրը կը նստէր : Թէպէս սեղանին վրայ բոլոր այն ժառանգական նոխութիւնը կար որով մեծցեր էր Մաւրիտիոս , սակայն կարճ ու լուռ անցաւ կերակրոյ ժամանակը : Մաւրիտիոս ինչուան վերջը այն մարդուն պէս շարժեցաւ , որ չգիտնալով թէ արգեօք քունի՞ չէ նէ արթնութեան մէջ է՝ կը զգուշանայ որ չըլլայ թէ արտաքոյ կարգի ձև մը ընելով կամ անխոհեմ խօսք մը ըսելով՝ տեսած գեղեցիկ երազն աներևութանայ : Քառորդ մը որ եղաւ , Մազգագինէ ոտքի վրայ ելաւ , և կոչնականներէն հեռանալով՝ դէպ՛ի անտառը գնաց իր ազգականին հետ , որ տղու մը պէս անոր կամայք կը հպատակէր : Երբոր կանաչագեղ բլրակի մը քով հասան , օրհորդը նըստաւ և Մաւրիտիոսն ալ քովը նստեցաւ :

Նոյն օրը այն ազուր իրիկուններէն մէկն էր , որ երջանկութիւնը կրկին անգամ կը քաղցրացընեն : Երկնից մէկ մասը դեռ արեւմտից լուսաւորութեամբք ծիրանեզոյն ներկած էր , հորիզոնին մէկալ ծայրը լուսինը կը ծագէր կապուտակ ընի մը մէջ և ծանրաքայլ ընթացքով ծառոց գաղաթներուն վրայ կը բարձրանար , զորոնք իր տժգոյն ճառագայթներովը կ'արծաթազօծէր : Սոխակը տերևախիտ թանձր հովանւոյ տակ ամբացած բոլոր օրտանց կ'երգէր . գիշերային զեփուաները կ'ար-

Թըննային . անտառներուն խորերէն իբրև սահանաց հեռաւոր ձայն մը կու գար :

— « Ո՛վ բարեկամ իմ , ըսաւ վերջապէս Մագդաղինէ անոյշ ձայնով մը , ես այն օրէն ՚ի վեր որ գբեզ հոս տեսայ առաջին անգամ՝ այն օրէն կը սիրեմ գբեզ : Նոր մարդ մը դարձընելու համար գբեզ՝ պէտք էր անցընել աղքատութենէ , աշխատութենէ ու անձին ուրացութենէ : Երբոր ասոր օգտակարութիւնն ըմբռնեցի , ուզեցի ես սլ մասնակից ըլլալ այն տաժանելի կենաց՝ զոր քու առջևդ կը դնէի : Հիմա այն տաժանելի փորձերուն ժամանակն անցաւ . Մաւրիտիոս , կը ներքս ինծի այս բանին համար » :

Մաւրիտիոսի հոգին խունկի հատի մը պէս հալեցաւ ու ծովսը դէպ ՚ի Մագդաղինէ բարձրացաւ՝ իանդադանօք օծեալ : Իրարու գիրկը պլլուեցան , և աստեղազարդ երկնքին պայծառութիւնը կը լուսաւորէր այս տեսարանը :

Հմրկ է արդեօք ըսել . Մագդաղինէի աղքատութիւնն ինքնահնար գիւտ մըն էր . Մագդաղինէ չէր կորսնցուցած իր դատաստանը . խաբեր էր զՄաւրիտիոս որպէս զի անոր ալէկոծեալ հոգին խալըսցընէ : Չեմ ուզեր հոս պատմել ինչոր օրէ օր հետզհետէ Մագդաղինէի սրտին մէջ անցած էր՝ երբոր Մաւրիտիոսի վերականգնումն ոտն առ ոտն կը կատարուէր : Այս այնպիսի պատմութիւն մըն է՝ որ փափուկ հոգւոյ

տէր անձինք ինքիրեննուն կը զգան , իսկ
ուսակաց աշխատկրնալու բանը չէ : Երբ ե-
րիտասարդ ասպետն իր Բարբիդու բարե-
կամներն հօրենական տանը մէջ գտնալուն
վրայ կը զարմանար , Մագգադինէ ըսաւ
իրեն . — « Անոնք որ քու կուռոյդ ու յաղ-
թանակիդ վկայ եղան , վայելուչ էր որ տես-
նային նաև քեզի տրուելիք փոխարէնն՝ ո-
րուն ինչպէս որ պէտք է արժանի ըրիր
զքեզ : Արը Եգուարդ աղքատութեանս հա-
մար մասնաւորապէս կը սիրէր զիս . հիմա
մեր երջանկութիւնն իրեն միտթարութիւն
կ'ըլլայ » :

Ամիս մը ետքը Մաւրիտիոս ու Մագգա-
դինէ կարգուեցան իրարու հետ Նէօվի-
լէ—Պուայի մէջ , առանց մեծամեծ հանգիս-
ներու , միայն իրենց բարեկամներուն ,
վարձակալաց և ծառաներուն ներկայու-
թեամբը : Պետրոս Մարտոյ անոնց ուրա-
խութիւնները քանի մը օր տեսնալէն ու
վայելլէն ետքը , իր կնոջն ու որդւոցը հետ
Բարբիդ դարձաւ : Փուն տեղը Մագգադինէ
ջանաց զանոնք հոն բռնելու , փուն տեղը
Մաւրիտիոս բռնադատեց դղեակը կենա-
լու , ուր դիւրաւ իրենց գործունէութիւնն
ու ճարտարութիւնը ցուցընելու առիթ կ'ու-
նենային :

— « Դուք ձեր վիճակը գտաք , պատաս-
խանեց Մարտոյ խոհեմաբար . թող տուէք
որ ես ալ իմ վիճակս պահեմ : Թէպէտ
այսչափ բարեկամութիւն ունինք իրարու

հեա , կը դգամ որ ես արգելք կրնամ ըլլալ ձեր երջանկութեանը : Աչ թէ կը կասկածիմ որ հզարտութեամբ գիս կ'արհամարհէք . աշխատութիւնը մեր մէջը հաւատարութիւն մը հաստատեց , զոր ոչ ինչ կըրնայ աւրել . բայց այն ընկերութիւնն որուն մէջ պիտի սկսիք ապրիլ՝ անոր խելքը չկըրնար մտնալ այս բանս , և այն իր զարմանքը լուռ յանգիմանութիւն մը պիտի ըլլայ թէ ձեզի և թէ ինծի համար , որուն ես չեմ ուզեր առիթ տալ » : Սակաւտիւ ընտանիքը շատ սիրոյ նշաններ տեսած ճամբայ ելան :

Սմիս մը անցաւ չանցաւ՝ սրբ Եգուարդ ալ դնաց : Երթալու ատենը — « Աղէկ նայէ , բաւ Մաւրիտիոսի , քու երջանկութիւնդ . անանկ փափուկ տունկ մըն է անիկայ , որ միակերպ հոգ կ'ուզէ : Անուշահատ զեփիւտ մը անեցաւց վան . ուստի պաշտպանէ մրրիկներէն որ կրնան կտարել զանիկայ » : Ետքը Մադդադինէի գառնալով՝ ուզեց քանի մը մնաս բարովի խօսքեր ըսել . բայց այլայլութիւն եկաւ վրան , աչքերը թրջեցան , և երիտասարդ տիկնոջ ձեռքը տխրութեամբ պազնելու ատեն՝ կտիլ մը արցունք սահեցաւ անոր վրայ :

Իմ սլաշտօնս ըմբոսաւ . երջանիկ կեանքը չպատմուիր : Ալ անկէ ետքը Մաւրիտիոս ազատ էր վտանգէ , և ոչ իսկ քաջալերութեան կարօտ էր : Թէպէտ կարօտութիւն չունի աշխատելու , սակայն դատարկ

չկենար . բարերարութիւն ընելու և իր հարստութիւնն ուրիշներուն ալ սփռելու կը զբաղի : Մագդաղինէի ինչուան այն ատեն ցուցուցած անձին նուիրումը՝ տոկոսեօք հատուցումն ունեցաւ . որովհետև ոչ երբէք ամպ մը մթազնեց անոնց փոխադարձ սիրոյն պայծառութիւնը : Իսկ Որսուլայի գալով, ինչ որ ալ ըսաւ իրեն Մագդաղինէ , անիկայ միտքը հաստատ դրած է թէ իր երիտասարդ տիրուհին իրօք դատաստանը կորսնցուցեր էր , և թէ Մաւրիտիոս փայտի քանդակագործութեամբ կրցեր է իր հարց կալուածը գնել : Մաւրիտիոս վառ ու անշէջ երախտագիտութիւն մը կը սնուցանէ սրտին մէջ իր երիտասարդ ընկերոջը վրայ . և շատ անգամ ալ սրտալիր խօսքերով կ'օրհնէ զանիկայ : — « Ո՛վ բարեկամս , կը դառնայ ան ատեն կ'ըսէ անիկայ իրեն , ինձի շնորհակալ մի ըլլար . ես ուրիշ բան չըրի՝ բայց եթէ ցուցընել քեզի այն ճամբան որ սլէտք էիր բռնել : Պէտք է աշխատութիւնն օրհնես . որովհետև անով նորէն ձեռք ձգեցիր երիտասարդութիւնը , սէրն ու երջանկութիւնը » :

Վ Ե Ր Ջ

ԶԲՕՍԱՐԱՆ ՄԱՆԿԱՆՑ



b

ՉԿՆՈՐՍԻՆ ՀԻՒՂԸ



ՈՐԴԵԿՈՑՈՐ ՄԱՅՐ ՄԸ—ՄԱՆՐԱՎԱՃԱՌԻՆ ԱՂՋԻԿԸ

ԱԼՊԵԱՆՑ ԻՐՃԻԹԸ

ՉԿԵՈՐՍԻՆ ՀԻՒՂԸ



ՈՐԴԵԿՈՑՈՐ ՄԱՅՐ ՄԸ — ՄԱՆՐԱՎԱՃԱՌԻՆ ԱՂՋԻԿԸ

ԱԼՊԵԱՆՑ ԻՐՃԻԹԸ



Վ Ե Ն Ե Տ Ի Կ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅԵ ՂԱԶԱՐՈՒ

1860



Ձ Կ Ն Ո Ր Մ Ի Ն Հ Ի Ի Ղ Ը



Ա.

Պրըզանեի ծովափանցը վրայ ութսուն տարի առաջ, պզտի խրճիթի մը մէջ, տարիքը առած պրի կին մը կը բնակէր իր մէկհատիկ զաւկովը: Թէպէտ արուեստաւորէ շինուած չէր, բայց ուրիշ ամէն ձկնորսի հիւղէ աղէկ էր: Յակոբ Մարդինոյ, պրիին որդին, շիներ էր ճարտարութեամբ այն հիւղը գայլախաղէ և ծովու քարերէ, այն ծովեղերքները պատած ժայռերուն դիմացը. և շատ աշխատութեամբ բանջարեղէններու պզտի պարտէզ մըն ալ ձևացուցեր էր հիւղին չորս կողմը, որ այն անբեր աւազներուն մէջ աչքի ախորժելի կ'երևնար, նոյնպէս պզտի ախոռ մըն ալ շիներ էր մէկ կովու համար, որ ամէն օր շրջակայքը արածելու կ'երթար:

Խեղճ Յակոբը բոլոր աճառ մը այս բնա-
կարանը շտկելու շտկըռտելու աշխատե-
ցաւ , և Սուրբ Միքայելի տօնին օրը իր
ժընըվիել պառաւ մայրը և իր կինը , ո-
րուն հետ տարի մը առաջ կարգուել էր ,
որ և տուն դարձընել լաւ գիտէր , նոր շի-
նած հիւզը փոխադրեց : Յակոբ յաջողակ
և աշխատասէր էր , և շատ տեսակ բան
ձեռքէն կու գար . հունձքի և սերման ա-
տեն՝ վարձուորներուն հետ կ'աշխատէր ,
ու տարւոյն մնացած ժամանակն ալ ձկնոր-
սութեամբ կ'անցընէր : Այն եղանակնե-
րուն որ ղիկաս և թիւնիկը (ՏՃ . Իսկիւմ-
րիս) կը բազմանային այն կողմերը՝ սովո-
րութիւն ունէր ինքն ալ որսի երթալու :
Յակոբ ազնիւ որդի և բարի ամուսին էր ,
ուտտի հարկաւ աղէկ ալ հայր պիտի ըլլար .
իր կինը երկու գեղեցիկ և առողջ տղայ
ծնաւ , և այս երկուորեակներուն ծնուն-
դը՝ ազնիւ Յակոբին ուրախութիւնն աւել-
ցուց : Ենորհակալ կ'ըլլար Աստուծոյ այս-
պիսի մեծ օրհնութիւն մը իրեն պարգևե-
լուն համար , և ինքզինքը աւելի երջանիկ
կը սեպէր երկու տղաք ունենալուն համար՝
քան թէ իր ազբատին հիւզը մեծագործ
պաշտառի մը հետ փոխած ըլլար :

Սակայն ձկնորսութեան եղանակն հա-
ասաւ , և պէտք էր հիւզը թողուլ հեռաձայլ :
Բայց Յակոբ իր պզտիկութենէ վարժած
արուեստին նորէն ձեռք դարնելուն եղու-
թիւն չէր քաշէր , անոր համար ալ ամե-

նևին երթալու վրայ խօսք չէր բանար :
իր պառաւ մայրն ու կինն ալ կը զգուշա-
նային յիշեցընելու թէ բաժնուերու ժամա-
նակնին կամաց կամաց կը հասնի . այլ
միայն խոր տիրութիւն մը տիրեր էր եր-
կուքին վրայ , որ ինչուան այն օրն ուրա-
խութեան մէջ էին երկուորեակներուն
ծննդեամբը :

Բայց Յակոբ չէր կրնար ծուլութեամբ և
դատարկութեամբ իր օրերն անցընել . և
ընտանեացը բազմանալը տեսնալով պէտք
էր որ ինքն ալ կրկնապատկէր իր ջանքն ու
աշխատութիւնը անոնց պիտոյքը լեցընե-
լու համար . և օր մ' որ երկինքը պարզ և
ծովն հանդարտ էր , իմացուց իր մօրն և
կնոջը որ պիտի երթայ :

— « Կը թողուս զիս , Յակոբ , ըսաւ . ա-
նոր տիրութեամբ կնիկը : . . . »

— Ապրելու համար պէտք է աշխատինք ,
պատասխանեց անոր Յակոբ . կը տեսնաս
որ գործք մը չունիմ , և առջի արուեստս
ալ չեմ կրնար թողուլ , վախնալով որ չըլ-
լայ թէ անօթի մնանք : Բոլոր այս կողմի
ձկնորսները գացին , և թէ որ ես քիչ
մ' ալ ուշանամ՝ աղէկ միջոցը կը կորսնցը-
նեմ : . . . Մնաս բարով , քաջալերուէ ,
բան չկայ » :

Աս ըսելով պլլուեցաւ անոր , առաւ
իր պառաւ մօրը օրհնութիւնը , նայեցաւ
մէյ մը երկու զաւակացը վրայ , որոնք կը
ժպտէին , և արտօսրալից աչօք օրհնեց
զանոնք և շուտով մը ելաւ հիւղէն :

Ուռկաններն ու պաշարը նաւակին մէջ
դրին . և մէկէն տկար նաւակը կէտի մը
չափ սկսաւ երևնալ այն ընդարձակ ծո-
վուն մէջ . և քիչ մը ատենէն բոլորովին
աներևութացաւ Ժընըվիեւի աչքէն՝ որ
ծովեզերք եկած էր իր բարի և ազնիւ Յա-
կոբ տղուն վերջի մնաս բարովի :

Բ

Յակոբին գացած գիշերը շատ դժբաղդ գիշեր եղաւ : Իրիկուընէ 'ի վեր աշնանային քամին ամէն կողմէն կը գոռար և ամպերը սև սև կը դիզուէին , որոնք սաստիկ մրրիկ մը փրթելու վախ կու տային : Այնպիսի վախ ինչուան այն ատեն հանդիպած չէր Մարդինոյ ընտանեաց հիւղին : Իւրաքանչիւր որոտման՝ Ժընըվիեւի և իր հարսին անդամները դող կ'ելլային . և երբոր արագընթաց փայլակը կը փայլատակէր այն երկու անմեղ տղոց վրայ , որ կը քնանային՝ առանց ամենևին կայծակներէն արթննալու , իրենց մօրը մտքէն աս միայն կ'անցնէր թէ՛ Խեղճեր , քիչ ատենէն պիտի զրկուիք ձեր հօրմէն : Աչքին առջևը կ'երևակայէր զՅակոբ , որ պարապ տեղը խեղճ նաւակովը ահագին ալիքներուն դէմ կը կռուէր , և բացուած անդունդի մը մէջ կ'երթար կը գլորտըկէր : Թէ կնկանը և թէ Ժընըվիեւի վախն այն-

չափ սաստիկ էր , որ երկուքին չրթունքէն ալ թէ խօսքը և թէ աղօթքը կտրուեցաւ :

Երբոր առաւօտեղաւ տխուր ճշմարտութիւններ յաջորդեցին գիշերուան վախուն և սրտի տագնապներուն : Կանուխկեկ ժընըվիւե ծովեզերք գնաց , և հոն արտասուալից աչօք միրկին ձախորդ հետեանքները տեսաւ : Նաւու կտորուանք և մեռած մարմիններ աւազին վրայ ինկած էին : Այն կողմի ձկնորսներուն ընտանիքներն ալ բոլոր ծովեզերքը թափած , շատերը մեծ կակիծով կամ հայրերնին կամ եղբայրնին այն խեղճ խղզուածներուն մէջ կը գտնային : Իսկ Յակոբի մարմինը չգրտնուեցաւ ամենեւին : — « Աստուած նախախնամող , Ս՛ուրբ Աստուածածին , Ս՛ուրբ Միքայէլ , ողորմեցէք իմ խեղճ Յակոբիս » , աղաղակեց ժընըվիւե . և քիչ մը սիրտ առած անապարեց հիւզը դառնալու՝ որ իր հարսն ապահովցրնէ թէ դեռ քիչ մը յոյս կայ և իրենց թշուառութիւնը դեռ յայտնի չէ :

Անցաւ ամբողջ օրը առանց Յակոբի վրայ լուր մը առնելու . անցաւ նաև շաբաթն ու ամիսը և ամենեւին նշան մը չէր երևնար Մարդինոյին ինչ ըլլալուն : Բոլոր ձկնորսները իրենց տները դարձան , և ոչ ոք կրցաւ անոր վրայ տեղեկութիւն տալ : Սրտի տագնապը շատ անգամ դրժբաղղութենէն աւելի գէշ է : Խեղճ կինը ալ չկրցաւ համբերել իր թշուառութեանը ,

աչուրներէն քունը փախաւ , ախորժակը կտրեցաւ , և օրէ օր կը հիւժէր , և վերջապէս թոքացաւէն ու վշտերէն մաշելով աչքերը գոցեց մահուամբ : Շրջակայից բնակիչներն և մերձակայ գիւղաքաղաքէն ու մանք եկան անոր յուղարկուօրութեան հանդիսին ներկայ ըլլալու . որոնցմէ շատերը տեսնելով պառաւ ժընըվիելի տըխրութիւնն և իրեն կրած չափազանց վըշտերը , կ'ըսէին՝ թէ մեծ շնորհք կ'ըլլար այս խեղճ պզտիկ որբերուն թէ որ իրենք ալ իրենց մօրը գերեզմանին մէջ թաղուելու ըլլային :

Բայց ժընըվիել ասանկ ցած չէր մտածէր : — « Աստուած օրհնէ խեղճ տղաքս , ըսաւ : Ասոնք են իմ ազնիւ Յակոբէս բոլոր ինծի մնացած ժառանգութիւնը . ձեռքէս եկածին չափ հոգս վրաներնէն պակաս պիտի չընեմ , և թէ որ երկար ապրիմ՝ կը տեսնամ ասոնց մեծնալը և երախտագիտութիւնը իրենց պառաւ միւմերնուն » :

Վերջապէս ամէն ջանք ըրաւ ժընըվիել իր պզտիկ որբերը պահելու համար : Շատ անգամ կը տեսնէին զինքը որ երկու տըղաքը գիրկն առած , քաղաք կ'երթար՝ գոնէ հարկաւոր բաները ճարելու համար . և այն նաւաստիներն որ զինքը կը ճանչնային՝ ճերմակ հաց մը կու տային տղոցը , կամ իրեն մսի կամ պանրոյ կտոր մը : Այս օգնութիւնները , և ընդեղէններն ու կա-

Թը , զորոնք իր պարտիզէն և կոմէն կը
ճարէր , այն տարուան թշուառութեանցը
դէմ քաւական եղան :

— « Չմեռը դալէն առաջ , ըսաւ Ժընը-
վիեւ ծերունի ազնիւ նաւաստւոյ մը որ
զինքը տեսնելու եկեր էր , կը սկսին իմ
պզտի տղաքներս ինքիրեննին վազել . և
երբոր այս ծեր թւերս ան բեռէն թեթե-
ւան , ան ատեն աւելի կրնամ իրենց հա-
մար աշխատիլ » :

— « Ո՛վ Աստուած իմ, քաջ նաւավար մը ըրէ՛ գիս, որպէս գի կարենամ օր մը փնտռել իմ հայրս և մեր հիւզը դարձընել: . . . Ո՛վ Աստուած իմ, գթա՛ իմ պառաւ մամուս և մեզի պէս խեղճ որբերուն » :

Այսպէս կ'աղօթէր պզտի Միքայէլը, բարձր ժայռի մը վրայ ծունկ չոքած, ուսկից ընդարձակ հորիզոն մը կը տեսնուէր: Իր տխուր աչքերը սևեռած էին ծովուն ընդարձակ տարածութեանը վրայ, և նայելէն չէր կշտանար: Այսպէս կ'անցընէր ինքը օրուան մէկ մասը և չէր կրնար մըտքէն հանել իր հօրը յիշատակն ու զանհկայ փնտռելու փափաքը:

Ժընըվիել շատ կը նեղուէր իր սիրելի Միքայէլին ասանկ մտածութիւն ունենալուն համար: Շատ աշխատեր էր ինքը որբերը սնուցանելու, և շատ կը փափաքէր անոնց մեծնալն և իրենք իրենց գլխուն

ճարը հողալը տեսնալ, անոր համար բնականապէս խիստ կը ցաւէր տեսնելով անոնցմէ մէկը՝ որ բոլոր իր ատենը տխրութեամբ և անգործութեամբ կ'անցընէր : Իր ուրախութեանը չափ չկար երբ ոտքի ելած կը տեսնէր երկու տղաքը որ կը քալէին և իր ձեռքէն բռնած ասդիս անդին կը վազէին : Երկուքն ալ քաղցրաբարոյ, հանդարտ և աղէկ կ'երևային . և իր ուսկան շինելու ատեն երբոր Յակոբ և Միքայէլ իր քովը կը խաղային՝ երջանիկ օր կը սեպէր զայն :

Հազիւ եօթը տարեկան կային և ինքը սորվեցուցած էր անոնց ուսկան շինելու համար չուան պատրաստելը : Ժընըվիեւ պզտի պատմութիւններ կը պատմէր, զանոնք զբաղեցընելու և զուարճացընելու համար . բայց աւելի իրենց հօրն ու մօրը մահուանը և իր տխուր վիճակին վրայ կը խօսէր և թէ որչափ աշխատեր է հօրերնուն վրայ լուր մը առնելու : Այս խօսակցութիւններով զորոնք յաճախ կը կրկնէր՝ տղոցը սիրաբը լեցուեր էր, մանաւանդ Միքայելինը :

Երբոր աւելի ուժովեան երկու տղաքը, ծովեզերք կ'երթային քար ժողվելու, որոնցմով մերձակայ քաղքին բնակիչքը իրենց տուները կը շինէին : Եւ պզտի զամբիւղներով կը կրէին քարերը, և ժայռերուն ստորոտը շեղջեր կը դիզէին ու օրմնադրաց կը ծախէին . բայց երբօր ձմեռուան

երկայն և ցուրտ գիշերները հասան, սկըսան իրենք ալ ուռկան շինել ու մամերնուն օգնել: Յակոր աւելի յաջողածեան էր և գործունեայ, և ամէն շաբաթ մերձակայ վարձուորներէն ստակ կ'առնէր, ամէն իրիկուն անոնց կովերը գոմը տանելուն համար: Ամառը ժամը չորսին կ'ելլար անկողնէն, և ձմեռը հնգին, որպէս զի ամէն գործքի մէջ առաջին ըլլայ: Շատ կը սիրէր գիւղական աշխատութիւնը, և երկրագործութեան կեանքէն աւելի երջանիկ կեանք չկար իրեն համար:

Միքայէլ որչափ կը մեծնար, այնչափ աւելի փափաքը կը վառուէր ծովով ճամբայ քնելու. և յայտնի կ'երևար երկիր բանելու զբաղմունքներէն խորշիլը: Ժընըվիե Միքայելին աս յօժարութեանը վրայ տագնապած, սկսաւ կարգալ սորվեցընել անոր. Յակօբն ալ սորվիլ ուզեց, և քիչ ատենէն երկուքն ալ Աստուածաշնչէն գլուխ մը և քրիստոնէականէն ալ դաս մը դիւրաւ կը կարգային: Առաջին անգամ սուրբ խորհրդոյն հաղորդուելու ժամանակն հասած էր, և երկուքն ալ մեծ յօժարութիւն կը ցուցընէին. ի վերայ այսր ամենայնի խեղճ Միքայէլը չէր կրնար հանել սրտէն իր տխրութիւնն ու իր մտածմունքները. քիչ կը խօսէր. շատ անգամ կը հառաչէր և գիշերուան մէկ մասը անքուն կ'անցընէր: Իսկ օրուան մէջ կերակրոյ ժամանակը կը մոռնար. և երբոր ատենին զինքը չէին

տեսնէր , ապահով էին որ բարձր ժայռի մը վրայէն իր մօրը գերեզմանին քով ծունկ չդրած ծովը կը դիտէր :

Բայց Յակոբ ուժովցած կտրիճցած՝ երկրագործութեան արուեստին մէջ օր ըստ օրէ կը յառաջադիմէր . և այն վարձակալն , որուն քով որ կ'աշխատէր , խոստացաւ իրեն յաջորդ տարին վարձքը աւելցընելու : Յակոբ սաստիկ ուրախացած՝ վազեց աւետելու իր մամունն այս աղէկ լուրը . գորովանօք գրկեց զինքը մամը . նոյնպէս Միքայէլն ալ գրկելով , ըսաւ անոր .

— « Իսկ դու պիտի չաշխատիս Ժընըվիեւի համար . տես թէ ինչպէս կ'օգնէ ինձի եղբայրդ և կ'աշխատի զմեզ պահելու համար . և դու . . . »

— Ես ալ շատ կը սիրեմ զքեզ , սիրելի մամս , պատասխանեց Միքայէլ . բայց իմ հայրս . . . իմ թշուա՛ն հայրս . . . » , և տաք տաք արցունքները խեղճ տղուն աչքերէն կը վազէին :

Ժընըվիեւ ալ սկսաւ լալ միտքը գալով իր դժբաղդ զաւկին դառն յիշատակը , և նորէն պլլուեցաւ Միքայելին . բայց ազնիւ տղան

— « Ես ալ քու վշտերդ աւելցընելուս շատ տրտում եմ , ըսաւ խօսքը առաջ տանելով . և կը խոստանամ իմ ամէն ջանքս ընելու եղբօրս նմանելու-համար ու քու ծերութեան օրերդ մխիթարելու » :

Մենդեան խթման իրիկունը , որ քրիստոնէական սուրբ կրօնքին մեծ տօներէն մէկն է , և ամէն աղքատաց և խեղճութեամբ ապրողներուն սիրելի տօնը , թէպէտ լուսինը պայծառ կը փայլէր , բայց իրիկուան հետ քամին ալ սաստկացաւ արևմտեան կողմէն : Ժընըվիեւ հիւղին բաները հոգացած՝ սեմին վրայ նստած երկար ատեն իր թոռներուն դարձին կը սպասէր . և ահա Յակոբ փայտերու տրձակ մը շալկած դարձաւ , և գետին ձգելով

— « Սովորականէն աւելի ուշացայ , ըսաւ , սիրեցեալ մամս . վասն զի քիչ մը ատեն տիրոջս տնակին քով քանի մը պարօններու ձիերուն պահպանութիւն ըրի . բայց ազնիւ վարձակալն անոր փոխարէն կը խրկէ քեզի այս կտոր մը եզան միսը վաղուան կերակուրիդ համար , և այս փայտերս ալ զքեզ ցրտէն պահպանելու համար :

— Աստուած օրհնէ գրեզ և քու բարե-
սիրտ տէրդ , պատասխանեց ժընըվիեւ ,
և թէ ինքը ու թէ իր ընտանիքը ձմեռը
ցրտուն ոչ կերակրոյ և ոչ փայտի կարօ-
տութիւն քաշեն : . . . Բայց եղբայրդ տե-
սար » :

Ասխուսքիս Միքայէլ դուռը բացաւ՝ կըռ-
նակը զարկած հին կողով մը՝ մէջը քանի
մը մեծկակ մերլուստայ ըստած ձկներէն :

— « Երջանիկ եմ այսօր , մամս , ըսաւ
տղան . վասն զի շատ ձուկ բռնեցի և
երեսուն փողի քաղաքը ծախեցի : Ահա
ստակը . դիր զասոնք ալ հօղէ գանձանա-
կին մէջ մէկայնոնց քով , որպէս զի աս
ցուրտ օգերուն համար քեզի հագուստ
մը գնես :

— Ծնորհակալ եմ , Միքայէլս , պատաս-
խանեց պառաւը . ինչ ազնիւ ու բարի
սիրտ ունիք երկուքնիդ ալ : Ատեն մը կը
կարծէի որ երեսէ ձգած է զիս Աստուած ,
մէկհատիկ զաւակէս զիս զրկելով , բայց
կրկինը պարգևեց հիմա ինծի . . . Միայն
կը փափաքէի որ դու ալ , Միքայէլ , եղ-
բօրդ պէս վարձակալին քով աշխատէիր :

— Աղէկ , ըսաւ Միքայէլ , ձեռքէս եկաւ
ծը կ'ընեմ այդ արուեստը սիրելու համար ,
թէպէտ կը վախեմ թէ պիտի չկարենամ
նաւաւար ըլլալու փափաքս թողուլ : Բայց
նայէ սա գեղեցիկ ձկներուն . ասոնք ալ
մէկայնոնց հետ պիտի ծախէի քաղաքը ,
բայց որովհետև վաղը Յիսուսի ծննդեան

սուրբ օրն է՝ մտածեցի որ իմ ազնիւ մա-
մուս պզտի սեղան մը կրնան ըլլալ ասոնք :

— Աս ըրածնիդ շատ է, որդեակներս . . .
Բարերար Աստուած , ինչպէս շնորհակալ
ըլլամքեզի » : Աս ըսաւ , ու աղէկ կրակ
մը վառեց , վասն զի եղանակը շատ ցուրտ
էր :

Նոյն վայրկենին յանկարծ թնդանօթի
ձայն մը լսուեցաւ , և դողով վեր ցատքե-
ցին : Եւ ձայնը անանկ մօտէն կու դար ,
որ բոլոր հիւզին մէջի բաները շարժեցան :

— « Աստուած իրենց օգնէ , ըսաւ պա-
ռաւր : Անշուշտ խեղճ նաւ մըն է վտանգի
մէջ , սր օգնութեան կը կանչէ : Միքայէլ,
տես փափաքածդ . տես ան կեանքը զոր
այնչափ կը սիրես , հիմա ալ կրնաս ըսել
որ նաւավար ըլլալ կ'ուզեմ :

Աս խօսքերէս Միքայելին աչքերը կրա-
կտտեցան , դէմքը վառվռուն կենդանու-
թիւն մը առաւ , իրեն սովորականէն ա-
ւելի :

— « Մամս , ըսաւ , կ'ուզէի անանկ կրտ-
րիճ նաւավար եղած ըլլալ , որ հիմա այն
նաւակին մէջ մտած՝ որ դէպ 'ի նաւը կ'եր-
թայ՝ ես ալ անոնց օգնութեան երթայի :
Կարծեմ թէ թագաւորին նաւերէն մէկն
է որ ամբողջ իրիկունս վտանգի մէջ էր և
ղեկավարին ճարտարութենէն աւագի վը-
րայ նստեցաւ : Բայց քամին և ալիքները
անանկ դէմ են , որ նաւակն ինչուան նա-
ւը չկրնար երթալ : . . . Մտիկ ըրէք . . . ու-

րիչ թնդանօթ մըն ալ . . . անշուշտ նաւը
ժայռի մը կը զարնուի : Ո՛հ , ի՛նչպէս այն-
չափ կտրիճներուն՝ որ կորսուելու վրայ են՝
օգնութիւն մը չեմ կրնար ընել » :

Աս ըսելով Միքայէլ՝ վեր ցատքեց ու
հիւղին դուռը վազեց . բայց ժընըվիեւ ե-
տեէն հասաւ ու բռնեց զինքը՝

— « Ո՛վ թոռնեակ իմ սիրեցեալ , կան-
չելով , մի երթար ծով , չըլլայ թէ զքեզ ալ
որդւոյս պէս կորսնցընեմ :

— Չէ , չէ , ըսաւ Միքայէլ ու կանկ ա-
ռաւ ինքզինքը զսպելով որ չերթայ . ես
հնազանդ եմ քեզի , ես քու խօսքէդ եր-
բէք դուրս չեմ ելլար : Արդէն վարժ չեմ .
օգնութիւնս ալ բանի չգար : Եթէ զանոնք
ազատելը կարելի է նէ՝ մեր քաջ նաւա-
վարները կրնան ընել :

— Նայէ , եղբայր , ըսաւ Յակոբ , նաւը
Մորդէգէօյլ ժայռին պիտի զարնուի , թէ-
պէտ և պայծառ լուսին ալ ունին :

— Այ՛ո , պատասխանեց Միքայէլ , թէ որ
կողմերս աղէկ ճանչցող նաւուղիդ մը ու-
նենային , անշուշտ կ'ազատէին : . . . Նայէ ,
մակոյկները ծով կ'իջեցընեն : . . . Երկու
հատ են :

— Ո՛ւր է , ո՛ւր , հարցուց Յակոբ . ալիք-
ներն այնպէս կը փայլին՝ որ աչքս կ'առ-
նեն . ես մինակ մէկ մակոյկ մը կը տեսնեմ ,
որ ալիքներուն վրայ կ'ելլայ ու կ'իջնայ :

— Ես որոշ երկու հատ կը տեսնեմ , ը-
սաւ ժընըվիեւ , բայց հնար չէ որ կարե-

նան ցամաք հասնիլ : . . . Տեսէք , ահա մէկը տակը գնաց :

— Զէ , չէ , ըսաւ Յակոբ , կը յուսամ որ չընկղմիր , հապա մեծ ալիքի մը ետև ծածկուեցաւ :

— Ընկղմած է գիտցած եղիր , կրկնեց Ժընըվիեւ : . . . Աիսո՛ս . ծանօթ է ինձի աս տխուր տեսարանը : Միթէ թնդանօթին ձայնը մակոյկին ընկղմելու նշանը չէ : . . . Մտէք , տղաքս , ալ չեմ կրնար երկար աս դժբաղդ տեսարանիս առջև կեննալ . ո՛հ իմ խեղճ տղաս . . . ի՛նչ ահաւոր յիշատակ : . . .

— Ներս մտիր , մամս , ըսաւ Միքայէլ . ես հիմա ծովեզերք կը վազեմ , տեսնամ թէ արդեօք ծովն ընկղմածներէն մէկը աւազին վրայ ձգամ է , որպէս զի օգնեմ անոր » :

Նրբոր աս կ'ըսէր , մէյ մըն ալ հիւղէն քիչ մը հեռու ծովին երեսը մարդ մը տեսաւ որ ալիքներուն մէջ կը ծփար : Մէկէն երկու եղբարք հոն վազեցին ուր նաւակոծեալը ալիքներն առած կը բերէին : Բռնեցին զանիկայ և ալիքներէն դուրս քաշեցին . Ժընըվիեւ ալ եկաւ անոնց օգնելու :

— « Մեռեր է , կանչեց պառաւը սարսափով մը . . .

— Ըսել է որ , զուրցեց Միքայէլ , ալիքները խղղեր են զանիկայ ցամաք նետելու ատեն . վասն զի քիչ մը առաջ դեռ ողջ էր , և լողալով ալիքներուն դէմ կը դնէր » :

Բռնեցին երկու եղբարք այն աչկոծեալը և հիւղը բերին, և ձեռքերնէն եկած ամէն ջանքն բրին՝ զանիկայ ողջացընելու համար. պառաւը քիչ մը հին գինիէն զառուրիչ բան չունէր տալու : Մէկէն փութաց տաքցընելու հիւանդք, ինչուան որ Յակոբ շուտով մը քաղաք վազէ քիչ մը օդի գնէ և բժիշկ բերէ : Իսկ բժիշկը ծովեզերքն ինկած ուրիշ նաւակոծելոց վրայ գրազած ըլլալով, չէր կրնար զանոնք թողուլ : Յակոբ մտածեց որ աւելի լաւ կ'ընէ թէ որ շուտով մը ետ դառնայ . և երբոր հիւղը մտաւ, շատ ուրախացաւ՝ տեսնալով ազատածնին կենդանացած ու վառարանին քով տաքնալու նստած : Ժընըվիել քիչ մը օդի տուաւ անոր, որով շատ աւելի վրայ եկաւ :

Ե

Երբ ալ բոլորովին վտանգն անցաւ , հիւրերն անոր զգեստներէն հասկըցան թէ հասարակ նաւաստի պիտի չըլլայ : Ժընը-վիեւ քանի մը չոր զգեստ տուաւ անոր որ լաթերը փոխէ . որոնք թէպէտ շատ հաստ , բայց ան թրջած զգեստներէն գոնէ լաւ էին : Երբոր վառարանին առջև չորցընելու կը կախէր զանոնք , մէկուն ծոցէն գեղեցիկ ժամուցոյց մը ինկաւ . վերուց ու պատին վրայի գամէն կախեց : Քիչ մը անցաւ օտարականը չափէն աւելի յոգնած գաղբած՝ քնանալ ուզեց : Մէկէն երկու հղբարք ուրախութեամբ իրենց անկողինը պատրաստեցին անոր . և իրենք ան գիշերը գացին ախոռին մէջ հին սուկաններու և չորցուցած խոտերու վրայ պառկեցան :

Երկրորդ օրը առտու կանուխ բժիշկն եկաւ օտարականը նայելու , հեան ալ նաւաստի մը , որ մեծ մակոյկովն ազատեր էր : Հիւզը մտածնուն պէս , նաւաստին

մէկէն աչքերը վառարանին առջևի կախուած զգեստներուն դարձուց . և խռովեալ սրտով մը հարցուց թէ անոնց տէրը ո՞ղջ է :

— « Այո՛ , պատասխան տուին , ողջ է , բաւական ալ աղէկ է և հիմա կը քնանայ :

— Ուրեմն խնայեց մորիկը կտրիճ նաւապետի մը կենացը , կանչեց նաւաստին :

— Ի՞նչ , աս նաւապետ մըն է , հարցուց Միքայէլը :

— Այո՛ , պատասխանեց մէկալը , մեր քաջ Ռէմոնվիլ նաւապետն է :

Ան ատեն քովի խուցէն ձայն մը լսուեցաւ .

— « Թողմաս , դո՛ւն ես :

— Այո , նաւապետ » , պատասխան տրւաւ , մէկէն ճանչնալով իր տիրոջը ձայնը :

Կանչեց նաւապետն ղնաւաստին , և անձկութեամբ մը հարցուց թէ քանի՞ նաւաստի մեռան արդեօք :

— Տասը հոգի միայն , պատասխանեց անիկայ : մեծ մակոյկն անվտանգ զմեզ ցամաքը հանեց , և անոնցմէ մէկքանին՝ որ քու հետդ մէկալին մէջը մտեր էին , քաղքին բարի բնակիչները առին հոգացին : Մենք բոլոր գիշերը կը մտածէինք որ դու ալ մեռած պիտի ըլլաս : Մեզի համար մեծ կորուստ մը պիտի ըլլար աս , նաւապետ . վասն զի դու , կրնամ ըսել , խեղճ նաւաստեաց բարեկամն ես : Մեզի ահաւոր տեսարան մըն էր ձեր մակոյկին

ընկղմիրը տեսնալը . բայց դու ալ գիտես որ մենք որչափ զձեզ ստիպեցինք որ մեծին մէջը մտնաս , վասն զի գիտէինք որ պզտիկը չէր կրնար այն ահագին ալիքներուն գիմանալ :

— Ազնիւ թո՛վմաս , ըսաւ նաւապետը , իմ կեանքս մէկու մը համար հարկաւոր չէ . իսկ ձեզմէ շատն ընկեր ու զաւակներ ունէին : Շնորհակալ եմ Աստուծոյ որ շատերը փրկեր է . իսկ ես ասոնցմէ աւելի աղէկ ձեռք մը չէի կրնար իյնալ : Այսօր Յեսուսի Մենդեան տօնին օրն է . փառաւորութեամբ կատարէ զայն քու ընկերներովք , և ամէնքնիս մէկտեղ շնորհակալ ըլլանք Աստուծոյ՝ զմեզ մահուընէ ազատելուն համար : Ա՛ռ , թո՛վմաս , ըսաւ վեհանձն նաւապետը , բաժնէ՛ սա ոսկիներն ընկերներուդ մէջ . ես դեռ բաւական հարըստութիւն ունիմ իմ քաջ նաւաստեացս քաշած վշտերն սփոփելու :

Թո՛վմաս ուրախութեամբ լեցուած , նաւապետին բարևը տուաւ , և շուտով մը քաղաք դարձաւ , ընկերներուն աւետելու իրենց նաւապետին ազատելուն ուրախութեան լուրը :

Ռէմոնվիլ նաւապետը անանկ տկարացած էր , որ բժիշկը հրամայեց քանի մը օր անկողնէն չելլալու : Աս ատենս բարի ժընրվիեւը շատ աղէկ հոգ տարաւ անոր , ամէն ձեռքէն եկած օգնութիւնը վրայէն պակաս չէր ընէր : Իր երկու պզտիկ թո՛ւ-

ներն ալ մէկմէկէ աւելի եռանդ կը ցուցը-
նէին . մանաւանդ Միքայէլը , որ հիւանդին
անկողնոյն բարձին քովէն ամենևին չէր
զատուէր : Նաև նաւաստիները միակերպ
հիւանդը տեսնալու կու գային . միշտ կ'ա-
ղաչէին անոր որ հրաման տար զինքը քա-
ղաք տանելու .

— « Հոն աւելի շուտով կ'աղէկնաս , կ'ը-
սէին , և բժշկութիւնդ ալ դիւրաւ կ'ըլլայ :
Մեզի թող , նաւապետ , աս բանիս հո-
գը . մենք աս քու անկողնովդ զքեզ կը
տանինք , և այնպիսի զգուշութեամբ՝ որ և
ոչ կ'իմանաս ըրած ճամբադ :

— Զէ , չէ , բարեկամներս , պատաս-
խան կու տար կտրիճ Ռէմոնովիլը . ես աս
բարի ընտանեաց քով անանկ աղէկ եմ՝ որ
չկրնար ըլլալ . ես ատնց կենացս պարտը
կանութիւն ունիմ , և իրենց ներկայու-
թիւնը միայն աշխարհքիս բոլոր դեղերէն
աւելի օգտակար է ինծի : Շատ աւելի
կ'ուզեմ աս խեղճ հիւղիս մէջ կենալ , ուր
բարութիւնն ու առաքինութիւնը կը բնա-
կին , քան թէ քաղքին ամենէն հարուստ
պանդոկին մէջ » :

Միքայէլ ուրախութեամբ կը լեցուէր լը-
սելով նաւապետին աս կերպ խօսուածքը .
կ'ախորժէր անոր աս համարձակ կերպն՝ և
այն մարգկանց անոր վրայ ցուցնուցած
սէրը : Շատ անգամ ծարուած աչքերով
անոր կը նայէր , և հազարումէկ խորհուրդ-
ներ մտքէն կ'անցնէին : Յարմար ստի՞ք

կը սեպէր ասիկայ իր բաղձանքը կատարելու, որ այնչափ ատենէ 'ի վեր սրտին մէջ սնուցած էր՝ առանց կրնալու 'ի գործ դնել. կը յուսար որ նաւաստի ըլլալով կրնար իր կեանքը զհայրը գտնալու նուիրել:

Ռէմոն վիլ նաւապետն ալ տեսնալով Միքայելին իր վրայ ունեցած գուժն և սէրը, շատ կը զարմանար անոր հիւրասիրութեանն ու բարեսրտութեանը վրայ: Օր մը ըսաւ անոր.

— « Գո՛ւն ես ան կտրիճ տղան, որ զիս ալիքներուն կատաղութենէն ազատեցիր: »

— Ես Յակոբ եղբօրս օգնեցի, պատասխանեց Միքայէլ:

— Նաւապետները միշտ ասանկ բարի ձեռքեր չեն իյնար, կրկնեց նաւապետը. բայց այս ձեզի աւելի օգուա է, տղաս: »

Ղուկաս տը Ռէմոնովը նաւապետն այն պիսի մարդ չէր, որ ամբողջ շարաթներ պզտի ցաւերու համար անկողին մնար: Քիչ օրէն քալել սկսաւ, և առջի հոգն եղաւ այն մեռած նաւաստեաց համար թաղման մեծ հանդէս ընել. ինքն ալ հոն գրտնուեցաւ մնացած նաւաստեաց հետ մէկտեղ, և իր կտորըծութեանը հաւատար կրօնասիրութիւն ցուցուց:

Բարիզ երթալէն առաջ, նաւապետը վարձատրեց վեհանձնութեամբ պառաւն և անոր թոռները՝ իրեն ցուցուցած խնամքներնուն համար. վերջը քանի մը սսկի ալ Միքայելին ձեռքը դնելով, ըսաւ անոր.

— « Բարեկամս, միտք ունէի ժամացոյցս ու քովի գոհարեղէններս քեզի ու քու եղբորդ տալ, բայց կարծեմ որ ոսկին ձեզի աւելի բանի կու գայ. առ ասոնք քու դժուարագիւտ ծառայութեանդ և սիրոյդ համար, որ ինձի առատաձեռնեցիր:

— Ա՛հ , պարոն , ըսաւ Միքայէլ՝ սսկին գրասեղանին վրայ նետելով , ուրիշ օգնութիւն մը կրնայիր ընել ինձի՝ որ ժամացուցէդ , գոհարներէդ և բոլոր աշխարհքիս վրայ եղող սսկի լուսիններէն աւելի յարգի էր ինձի :

— Ի՞նչ բան է ուղածդ , տղաս , ըսաւ նաւաստեար :

— Խօսք տանել մամէս որ թողու զիս քեզի նաւաստի ըլլալու : :

Նաւաստեար քանի մը վայրկեան լուռ կենալէն վերջը սս անակնկալ խնդիրքէս , սսանկ պատասխանեց .

— « Կտրիճ տղաս , սրչափ կ'ուրախանայի ես ալ զքեզ իմ ծառայութեանս մէջ ունենալու : . . . » բայց տեսնալով Ժընըվիելի լայլ , ըսաւ անոր . — « Բարի կնիկ , գիտցիր որ ես վատ կերպով ձեր հիւրընկալութեանը չեմ ուղեր փոխարինել , և քու կամացդ հակառակ թող չեմ առներ տանիր . բայց գիտցիր՝ որ մեծ պատիւ է Գաղղիոյ թագաւորին նաւաստի ըլլալը , և թէ որ իրաւցընէ Միքայէլ սս պատուաւոր պաշտօնիս կոչմունք ունի , պէտք չէ որ դու անոր փափաքանացը դէմ կենաս :

— Ա՛հ , պարոն , պատասխանեց Ժընըվիել : Հրամանքդ գեռ մեր թշուառութիւնները բոլոր չես գիտեր : Ես Յակոբ անուանով ազնիւ որդի մը ունէի , այս երկու տղոց հայրը , որ դժբաղդաբար ծովուն ալիքներուն մէջ կորսուեցաւ : Եատ ան-

զամ անյրթշուառ կորուսար ասոնց պատմեր եմ, որպէս զի այս գէպքովս մարի Միքայելի արաէն նաւաստիութեան փափաքը, բայց ափսոս, ընդհակառակն եղած է: Խնդն տալայ, կ'ուզէ երթալ իր հայրը փնտռել, և չհաւտար որ իր հայրը, իմ որդիս մեռած է. . .

— Ո՛վ ըսաւ քեզի ատ, տաքցած խօսքը կտրեց Միքայել: . . . Մէկալ ձկնորսաց մարմիններուն հետ իրեն մարմինն ալ աւազին վրայ գտնուեցաւ, և չըկրնար ըլլալ որ մրրիկը անանկ տեղ մը ձգած ըլլայ զինքը՝ ուսկից չկրնար մեզի լուր մը տալ իր վրայօք: Ո՛վ սիրեցեալ մայր, կ'ապահովցընեմ ես զքեզ աս քանիս » . և Ժընըվիելի ծունկն ինկած, « Մի գէմ կենար, կ'ըսէր, այս յաջող գէպքիս՝ որով իմ փափաքս պիտի լեցուի »:

Ժընըվիել խորին հառաչանք մը արձակեց:

— « Լաւ, ըսաւ, որովհետեւ կը տեսնամ որ ամենեին այդ փափաքդ պիտի չըթողուս և միշտ զքեզ թշուառ պիտի սեպես քանի որ մտքիդ դրածին չհասնիս, կը հաւանիմ: Ար յուսայի որ այս վերջի նաւակոծութեամբս խրատուած մտքիդ դրածէն ետ կը կենաս, բայց որովհետեւ ատ ալ չեղաւ, ահ լաւ է որ ասանկ տղնիւ նաւապետով մը ծով ելլած՝ քան ուրիշ որ և իցէ մարդու հետ »:

Միքայել տեսնալով մամուն վերջապէս

իրեն կտոնայ զիջանիլը՝ մեծապէս ուրա-
խացաւ :

— « Քանի որ Ռէմոնվիլ նաւապետը՝ ին-
ձի առաջնորդ է , ըսաւ , և Քաղզիացւոց
Թագաւորը՝ գլուխ , ամենեւին պիտի չզրդ-
ջամ իմ նաւատտի ըլրայուս » :

Նաւապետը Միքայելին այս հաստա-
տուն որոշմանը վրայ զարմացաւ . բայց
Միքայէլ երբ երկրորդ օրը վերջի բարեւը
պիտի տար մամուն և եղբօրը՝ այն հաստա-
տութիւնը վրան չէր մնացած :

— « Այս բանիս համար շարհամօրհեր
զիս անտարակոյս նաւապետս , ըսաւ ին-
քը Թովմաս նաւաստեոյն , վասն զի ես ալ
իր լայր տեսայ խեղճ նաւակոծելոց Թաղ-
ման հանգիսին օրը :

— Ո՛հ , շատ բարեսիրտ է նաւապետ-
նիս , պատասխանեց Թովմաս . աղէկ գի-
տէ ինքը՝ թէ մայրը թողլու ատեն լացողը՝
թշնամիին դիմացը վատ չէ : . . . Ես ալ որ
ձեր նաւատտի մըն եմ , կնկանս և պզտի
տղոցս վերջին բարեւս տալու ատեն՝ շատ
անգամ լացեր եմ » :

Պզտի նաւաստին շուտով ճամբայ ելաւ իր հայրենիքէն : Ռէմոնովիլ նաւապետին նաւն որոշուեցաւ որ քաջն Սիւֆրանի նաւուց խմբին հետ մէկտեղ Հնդկաց ծովը պաշտպանելու երթայ : Միքայէլ մէկէն իր գործունէութեամբը ցուցուց իրեն աջողակութիւնն , աներկիւղութիւնն ու կրակոտութիւնը : Քիչ ժամանակուան մէջ նաւաստուոյ մը ամէն աղէկ յատկութիւնքը ստացաւ՝ բաց 'ի պակասութիւններէն . և եռանդով կը սպասէր թշնամեաց առջև իր կտործութիւնը ցուցընելու :

Նաւատորմիզը դէպ 'ի Մատրաս կ'երթար : Կադեան լերանց բարձր դօտին ըսկսաւ երևնալ , որ ընդարձակ պարսպի մը պէս սեպացեալ կ'երկըննայ դէպ 'ի Սուքէնս լերանց երկայնութեամբը : Այս լերանց շղթայն՝ իր բարձրութեամբը մտտե՞րս ըսուած քամիին ընթացքը կ'արգիլէ

1 Մտտե՞րս կ'ըսուին այն հիւսիսային արևմտեան և հիւ-

և միանգամայն երկու մէկմէկու հակա-
ռակ եղանակներ կը ձևացընէ, մէկը Մա-
լապարի կողմը, իսկ միւսը Գորոմանտէլի-
անանկ որ երբոր Մահէ ձմեռ կ'ընէ, Բոն-
տիշէրի ամառ է, թէպէտ նոյն կլիմային
տակն են: Կադեան լեռները՝ ապրիլէն
սկսեալ մինչև հոկտեմբեր Մալապարի վը-
րայ փշած քամիները կ'արգելուն: Այս
քամիները հոն կը մղեն և կը դիղեն ան-
թիւ ամպեր, զորոնք աս լեռները կ'արգե-
լուն, և որոնք չկրնալով անկէ անդին
անցնիլ՝ անանկ փոթորիկներ և անձրևներ
կը հանեն հոն, որ մեր երկիրներուն մէջ
տեսնուած քան չէ: Անանկ ահաւոր քա-
միներ կը փրթին այն ամեն, որ նաւերը
չեն համարձակիր ծովեզերք մօտենալու:
Յիսուն մըսն հեռուէն իսկ կ'իմանան նա-
ւորդք հոն տեղի գէշ օդ ըլլալը: Մի և նոյն
բանը կը հանդիպի նաև Գորոմանտէլի
կողմն ալ՝ հոկտեմբեր ամսէն ետքը մինչև
փետրուար: միայն այս տարբերութեամբ՝
որ այս կողմերը կադեան լեռները աւելի
հեռու ըլլալով, Բոնտիշէրի այնչափ եր-
կայն ու սաստիկ ձմեռ չընէր՝ ինչպէս
Մահէ:

Նաւատորմիզը շուտով մը Մատրասի
դիմացն հասաւ, ուր որ Սիւֆրան կը յու-
սար անակնկալ յարձակմամբ մը յանկար-

սիսային արևելեան քամիները, որ փոփոխակի կը փչեն և
այս լեռանց կամ մէկ կողմը կամ մէկալ կողմը անձրև կը
թափեն:

ծակիի բերել զՍնդդիացիս : բայց հակա-
ռակ հովերու պատճառաւ զանազան նա-
ւահանգիստներ քաջուած ըլլալով նամբան :
չկրցան առ իրենց մտքի դրածը կատարել,
և Սիւֆրան համբան դէպ ՚ի Բոնտիէրի
դարձուց : Աս քաղաքս, որ ան ատեն
Գաղղիացուց գլխաւոր քաղաքն էր Հրնդ,
կաստանի մէջ, երևելի է իրեն գեղեցկու-
թեամբը : Երկու մաս կը բաժնուի, ան-
ուն երմակ քաղաք : Սև քաղաքը՝ որ գեղեց-
կագոյնն է՝ լայն համբաներ ունի, հնգիկ
ծառերով զարդարած որմնք գեղեցիկ տե-
սարան մը կը ձևացընեն :

Շատ հարուստ երկիր մըն է Հնդկաստան
բերքի կողմանէ և երկրագործութիւնը
չատ ծաղկած է : Հարթ հաւասար երկիր
մըն է, լի արգաւանդ ձորերով զորոնք գի-
տեր կ'ոռոգանեն : Կանոնաւոր անձրե-
ներն և սաստիկ տաքերը այնպէս կեն-
դանութիւն և ուժ կու տան տնկոց, որ
ուրիշ երկիր մը չտեսնուիր : Մարդ ուր որ
աչքը դարձընէ՝ տեսնալով երկրին հարս-
տութիւնը և տնկոց բազմաթիւ տեսակնե-
րը՝ կը զմայլի : Տարին երկու անգամ ատաւա
հունձքով կը զարդարուի երկիրը : Փար-
նադ գաւառը, ուր որ են Մատրաս և Բոն-
տիչերի՝ այնչափ բարեբեր չէ . և թէպէտ
չաա տունկեր ունի, բայց մշակութեան
ծախքը չհաներ և աշխարհքը սովի ենթա-
կայ է :

Քիչ օր կեցան Բոնտիչերի . և հազիւ թէ

Ճամբայ ելան լընդաւհարութեան հիւան, գութիւնը մեծ ջարդ կ'ընէր նաւաստեաց մէջ: Միքայել այս գժբադրութեանս ատեն այնպէս աղէկ կը ծառայէր անոնց, խնջպէս օր աղէկ կ'ընէր նաւաստութիւնը. հոգւով և սրտով և առանց յուսահատելու կը խնամէր հիւանդները: Միւֆրան նաւասպետը ստիպուեցաւ նաւաստեաց հիւանդութենէն Պարսպոյ անունով Հոլանտացւոց քաղցի մը առջև խարխիս ձգել ատղու. հոն գուրս հանեցին հիւանդները և ցամաքը վրաններու տակ բնակեցուցին. տեղւոյն բնակիչքը անոնց եզան միս բերին. հոնտեղ պրետ ըսուած տեսակ մը խոտ կը բուսանէր զոր ձկան և երէոց որսի հետ խառնելով շուտ մը այս գէշ հիւանդութեան առջեւ առին: Ամիս մը կենալէն վերջը, հրամայեց հրամանատարն որ սխանները վերցունին. բայց Ռէմոնվիլ նաւասպետը շատ ծանր հիւանդացած ըլլալով վրան կարողութիւն չկար որ իր Սեֆեր անունով նաւուն հրամայէ. այս պատճառաւ առաջին տեղապահն իր տեղը գրին, որ այս պաշտօնին անարժան էր:

Ճամբայ ելլալէն ետքը քիչ մը անցաւ չանցաւ Անգլիացւոց հանդիպեցան. երկրորդ օրուքնէ առաւօտանց կանուխ պատերազմը սկսաւ երկու կողմի առաջապահ նաւերուն մէջ, և ժամը տասնըմէկին բնդհանուր պատերազմ: Երկու կողմէն ալ հինգ ժամու չափ ահաւոր կրակ կը թա-

ի էին , և ահա յանկարծական քամի մը մեծ խառնակութիւն ձգեց երկու կողմն ալ : Մեկեր նաւուն հրամայողը , որ տկար և ողորմեցի մարդ մըն էր , անանպով թէ մերձակայ վտանգի մէջ են՝ խելքը կորսընցուց և առանց մտածելու իրեն ապագայ նախատինքը՝ կ'ուզէր անդգիացի նաւու մը անձատուր քցող , որ զիրենք նեղը կը խոթէր : Հրաման առաւ Միքայելի և ուրիշ նաւաստաց մը որ գրգռուիլ վար առնեն : Գաղղիոյ պատուովը վառտաւած՝ յանձն չառաւ Միքայել Հնազանդի :

— « Հրամանաւար , քրտա , եւ հոս թաղաւորին նաւը պաշտպանելու՝ չէ թէ դունիկայ թշնամեաց ձեռքը մտանկաւ եկեր եմ » :

Ան ատեն հրամանատարն ուրիշ նաւաստեաց որ աւելի Հնազանդ էին հրամայեց որ վար առնեն , որոնք պարագ սեպեցին Հնազանդի : Աս ատենս Միքայել կայծակի պէս Ռէմոնովի նաւապետին խուցը թռաւ , որուն սաստիկ տկարութիւնը չէր թողուր գործքի ձեռք դարնելու , և քիչ խօսքով եղածը պատմեց անոր . ան ինքն իրեն ուժ կու տար որ ելլայ . բայց տկարութիւնը այն աստիճանի էր , որ մէկէն ինկաւ . ան ատեն ըսաւ Միքայելի որ երթայ աս լուրը տայ թնդանօթածիգ նաւաստեաց :

Պաշտօնակալները Միքայելի խօսքին չհաւտացին . բայց անոր աղաչանքներէն

աստիպուած՝ մէկերնին նաւուն յարկին
գլխայ վազեց և իրօք դրօշակը կիսով վար
առաւ տեսաւ : Տեսնե՞ն ու տեղապահ
հրատանաւորին վազելը մէկ եղաւ , և ե-
րեսը զարկաւ իր չափազանց վախկոտու-
թիւնը : Բայց երբոր ամէն ըրած ջանքը
բանի չեկաւ , իմացուց անոր որ ինչ կ'ուզէ
ընէ դրօշակը , բայց ոչ ինքը և ոչ իր ըն-
կերները յանձն կ'առնեն այն նախատինքը ,
չեն տար նաւը և պատերազմն ալ առաջ
կը տանին : Եւ մէկէն թնդանօթներուն
վազեց , և սաստիկ կրակով մը նորէն սկը-
սաւ պատերազմը : Անգղիացի նաւն այս
միջոցին իր առաջաստները թուլցուցեր էր
ու կը պատրաստուէր Սեվեր նաւուն մէջ
իրեն նաւատիններէն խաւրել , մէյ մ'ալ
ան նաւուն մէկ կողմէն բոլոր թնդանօթ-
ներն արձրեղուելով , իր առջևի կողմին
մեծ վնաս հասուցին : Գազդիացի հրամա-
նատարն ալ տեսնալով որ անկարելի բա-
նի ձեռք զարկեր է , նորէն վեր բարձրա-
ցրնել տուաւ դրօշակը : Եւ այս գեղեցիկ
նաւուն ազատելուն Միքայելին աներկիւ-
ղութիւնը միայն եղաւ պատճառ :

Միւֆրան ամենեւին աս եղածները չէր
իմացեր , ու երկրորդ օրը մինչդեռ հովա-
նւոյ տակ նստեր էր , անգղիացի պզտի
նաւ մը տեսաւ որ նաւատորմէն բաժ-
նուած ու դեսպանութեան դրօշակ բա-
ցած իրենց կը մօտենար : Խաւրուած պաշ-
տօնակալը ծովակալին առջև ելլալով սըր

Եզուարդէն նամակ մը առւաւ. անոր, որո՞վ ետ կը պահանջէր այն նաւը, որ առջի օրուան պատերազմին մէջ գրոչակը վար առնելով անձնատուր ըլլալ ուզեր էր և ետքը նորէն վեր վերցընելով՝ կրակ սկըսեր էր թափել: Այս բողոքը՝ Աիւֆրանի նոր բան մը երեցաւ. և պատասխանեց որ ինքն ամենևին նաւու մը անձնատուր ըլլալուն վրայօք բան մը չգիտեր, և թէ որ այնպիսի դիպուած մըն ալ հանդիպած ըլլար, ինքը անձամբ կ'երթար Անգղիոյ նաւատարմդին մէջէն կը յափշտակէր զանիկայ. բայց ՚ի վերայ այսր ամենայնի կը խոստանար ստուգելու: « Բայց ըսէ՛ նաև սրբ. Եզուարդին, որ եթէ պատերազմելէն պիտի չգաղտի, թող ինքն իր ձեռքովը գոց առնէ նաւը »: Բայց երբոր քիչ ատենէն բանը ստուգուեցաւ. հրամանատարը խոյտառակարար իշխանութենէն ձգեցին, պաշտօնակալները վարձատրեցին, իսկ Աիւֆրան ամենուն դիմաց գրկելով զկրտորիճ Միքայէլը՝ Սեփէր նաւուն Ազատարար անուանեց:

Շատանց ՚ի վեր, միտք ունէր Յիւ. Գրան
 Սէշան կղզւոյն մէջի. Գրիեքնայ քաղաքին
 ափերէս, որ Անգղիայցւոց անոքն էր, յիտ
 առանք ծոց մը՝ որ մերկի ստեղն աստանց վը
 ստանաքի քառասուն նոր կրնայ ստանել մէկ
 դժի վրայ :

Սէշաբհքիս գետնցկառոյն ու հարստ
 կողմերէն մէկն է Սէյլան, անանկտր ան
 զոցիք Գրախա երկրացին կ'անտանեն
 զայն : Հաւ բերք ունի և խիտա անոց պը
 ստաղներ կը հասցընէ . նարինջ, լեւնն ,
 սեխ , պղպեղ , կինամոն , և ուրիշ տեսակ
 տեսակ հոսաւէտ նիւթեր սովորական են
 հոն : Կը գանաւին նաև սակի , արծաթ և
 բիւրեղ . դարձեալ ազնիւ քարեր . ինչպէս
 յակինթ , շափիւղայ և սպաղիոն : Միայն
 աշխարհքին միջին կողմերը լեռնոտ և
 անտառային ու անառողջ է . այլ ՚ի վերայ
 այսր ամենայնի անթիւ փղաց բնակարան
 է , որոնց ժանիքը մեծ վաճառքի նիւթ է :

Քիչ ատենէն Սիւֆրան Դրինքմալին բերդերուն դիմացն հասաւ նաւասարկոյ վը , և գործքին յաջողելուն մէկ հատիկ ճարն էր՝ երագութիւնը : Վասն զի անոնց անպատրաստ եղած ժամանակը , պսոնք յանկարծ ուժով յարձակմամբ մը պէտք էր որ քաղաքը առնէին : Ուստի ոմբի նեւտուածքի երկու երրորդ մասին հեռաւորութեամբ մտեցան բերդերուն . մարտկոցները շտկեցին ու սաստկապէս սկստն կրակ թափել : Երկու օր ասանկ բռնակոծելէն ետքը , չկրցան պարիսպներուն վընասել . սակայն Սիւֆրան շուտ լմբեցընել ուզելով պաշտօնակալ մը խաւրեց քաղաքապետին որ անձնատուք ըլլան : Պաշտօնակալն անգղիացի հրամանատարին դաշնադրութեան պայմաններն աքաճ՝ չուտով գարձաւ և մէկէն ստորագրուեցաւ : Պահպարան զօրքը պատուով Մատրաս խաւրեցին : Ռէմոնովի նաւասպետն օր հիւանդութենէն վրայ գրեւ էր և Միքայէլը՝ մեծ կտրըճութիւն ցուցընելով մասնաւոր կերպով նշանաւոր եղան : Գաղղիացւոց առաջին հոգն եղաւ ան քանի մը գաղղիացի բանտարգեալներն ազատել , զորոնք Անգղիացիք թողուցեր էին բերդին մէջ : Անկարելի է խօսքով նկարագրել այն խեղճ նաւաստիներուն զգացած ուրախութիւնը . որք չէ թէ միայն այսպիսի բարիքի՝ մը չէին սպասէր՝ այլ և մտքերնին ալ գրեւ էին որ օտար երկրի մէջ հայրենիքներէն

հետու պիտի ապրին և շղթաներու մէջ մեռնին : Զնաւաստիս իրենց ազատարար կանչելով՝ կը գրկէին , և զՄիւֆրան իր կտորիճ ընկերներովը միշտ երկինք կը բարձրացընէին :

Սակայն երկար չտեւեց այն ուրախութիւնը . Սնգղիացւոց նաւատորմիդը Գրինքմալի վրայ եղած յարձակմունքն իմանալով շուտով մը հասաւ , բայց բանը բանէն անցեր էր . զարնուեցաւ Քաղղիացւոց հետ . Միւֆրան կը տարակուսէր դէմ դրնելու . բայց երբոր Պէլլոնա անուամբ ֆրեկտոյ նաւը որ թշնամիները դիտելու գացեր էր , « դարձաւ ու զրոյց բերաւ թէ Սնգղիացիք տասուերկու նաւէն աւելի չունին » , (Քաղղիացւոցը տասներհինգ էր) ,

— « Պարոններ , ըսաւ Միւֆրան իր պաշտօնանկալներուն , թէ որ թշնամին զօրաւոր ալ ըլլար , դարձեալ ես այս ծոցիս մէջ պիտի կենայի , որ մեզի ձմերելու խիստ յարմար նաւահանգիստ է , և պաշար ժողովելու տեղ : Հաւասար ուժով չէի յանդրգնէր , բայց նուազ զօրութեան գէմ տարակուսելու բան չկայ , պէտք է պատերազմինք » :

Մէկէն պատերազմի ամենայն պատրաստութիւնը տեսնուեցաւ : Հրաման եղաւ Ռէմոնվիլի որ բանտարգեալ նաւաստիներովն իր գունդը զօրացընէ , բաց ՚ի հիւանդներէն , որոնք քաղաքը պիտի մընային : և նաւապետը զՄիւֆրայէլ դրաւ ա-

նոնց հոգացազ, որուն վրայ ասենայն կերպով կը վատահէր : Ամէնքն ալ փափաքեալ լով այն իրենց նեղութեան տեղէն ազատեալու՝ տկարութիւններն աւելբերներն կը ծածկէին, որպէս զի պատերազմելու յարմար սեպտին . և մեծ ուրախութեամբ հաւահանգիստ՝ անկէ ալ նոր վառնգներտա մէջ մտան : Մէկերնին միայն անհրաժեշտ նակ համարուեցաւ զարացութեան : Ինչցաւ խեղճին համար . կ'երգաւընցընէր զՄիքայէլ որ չթողար զիւրը այն ցաւապի վիճակին մէջ, և « Մահուանս պատճառ պիտի բլլաս, կ'ըսէր, եթէ դիս ալ նոր չտանիս » : Ալ բան չմնաց որ չընէ ազնիւ Միքայելին սիրաբը շարժելու համար . անոր ոգրահան ձայնն և քառարկ ցարժին, չուան սրտին խորը թափանցեցին, զնայ մէկէն իէմոնվիլ նաւապետը գտնալու որ խեղճ գերւոյն համար եղած խիստ հրամանը մեղմացընէ :

— « Գիտես, Միքայէլ, պատասխանելոյ նաւապետը, որ պարտաւ մարդիկներով չենք կրնար նաւերնիս բեռնաւորել . մանաւանդ պատերազմական նաւ մը որ չը կրնար պատերազմի ատեն հիւանդներով լեցուիլ :

— Մէկ հատ մըն է միայն, սիրելի նաւապետս, կրկնեց Միքայէլ, և գազզիացի ծեր նաւատարի մը կրնան իր հայրենակիցները ասանկ երեսի վրայ թողուլ » :

Այս իմաստը՝ սցնախոի կրակոտ ու սըր-

սաչարժ կերպով մը կը գուրցէր, որ զօրա-
վարին սիրաբը շարժեցաւ :

— « Բեր մարդդ, ըսաւ, բաց շուտ ը-
րէ, ահա պատրաստ ելլալու նշանին կը
սպասենք » :

Միթայէլ տաանց խօսքը կրկնելու, բան-
տարգելոյն թուաւ :

— « Աւետին, աւետին, հեռուէն սկը-
տաւ կանչել, տաանց քեզի շինք երթար » :

Հիւանգը ուրախութեամբ կը ջանար ա-
զատարարին առջև երթալու, այլ այն առ-
տիճանի տկար էր՝ որ քանի մը քայլ առաւ
չտաաւ. ինքզինքը չկրնայով բռնել վար-
ինկոտ :

— « Երթանք կտրինս, կանչեց վեհանճն
Միթայէլը, գրեզ չեմ թողար, փանք
Աստուծոյ, դեռ այնչափ ուժ ունիմ որ
գրեզ ալ կրնամ վերցընել » : Այս ըսելով,
մէկէն շալկեց զնաւաստին, և այն ան-
գին բեռովը՝ ամենայն արագութեամբ Սե-
փեր նաւը դարձաւ ուր բոլոր նաւաստինե-
րէն ծտիւածայն գովութիւններ ու խեղճ
գերւոյն ընկերներէն մեծամեծ շնորհակա-
լութիւններ քնդտնեցաւ :

Արիւնահեղ եղաւ պատերազմը : այլ վերջապէս Գաղղիացիք յաղթեցին : Քշնամին Մատրաս քաշուեցաւ , պաշար պատրաստելու և եղած փրասները դարձանելու համար :

Գաղղիացի նաւատորմին մէջի ծառայութիւն չունեցող բոլոր նաւատտիք քիչ մը հանգչելու գացին : Միքայէլ այս պատերազմիս երկու վէրք առեր էր , բայց գանոնք պատածին պէս՝ մէկէն առջի հոգը եղաւ հիւանդին վազելը , զոր ոչ ոք կը հոգար : Խեղճը սաստիկ ջերմ ունէր և պատերազմէն ալ շատ նեղուեր էր :

— « Վեհանձն նաւատտի , ըսաւ հիւանդը ձեռքը Միքայելին երկընցրնելով , կը դգամ որ ալ ես պիտի մեռնիմ . բայց գանէ յետին վայրկեաններս՝ քաջ ընկերացս մէջ կ'անցրնեմ , և միտթարեց զիս Աստուած գթած սիրտ մը գանալով , որուն

կրնամ իմացընել իմ վերջի մտածութիւնս :

Մեծ տպաւորութիւն ըրին այս խօսքերս Միքայելի վրայ : Աչքերը հիւանդին վրայէն չէր կրնար դատել : Չափազանց զգացմունք մը կը խռովէր իր սիրտը , և խոր մտածութիւն մը՝ փայլակի պէս ինչուան հոգւոյն խորշերը մտնրէր :

— « Արովհետեւ Գաղղիա պիտի դառնաս , կրկնեց հիւանդը , եթէ Աստուած յաջողէ որ օր մը Պրըդաններ երթաս , խոստացիր ինձ որ Լորիէնի մօտ Քէրնատէլի մէջ խեղճ հիւղի մը այցելութեան երթաս » :

— « Ա՛հ հայր իմ , հայր իմ . . . նուազ ձայնով մը կանչեց Միքայէլ , և ծնկան վերայ ինկած՝ յորդ արտասուքներ երեսէն վար կը հոսէին . վերջը հիւանդին դառնալով ,

— « Քէրնատէլ , ըսաւ , իմ ծնած գեղս է . ծովեզերքը շինած խեղճ հիւղի մը մէջ մեծցեր եմ ես :

— « Անունդ ի՞նչ է .

— « Միքայէլ Մարդինոյ :

— « Ո՛վ Տէր , օրհնած ըլլաս : . . . Արդիս իմ աչուքներս պիտի գոցէ . . . եղբր :

Հիւանդին այլայլութեանը չափ չկար . ինքզինքը կորանցուց և Միքայելի սիրտը կտոր . կտոր կ'ըլլար վախնալով թէ չըլլայ որ նորէն կորսընցընէ հայրն՝ որ հազիւ թէ վայրկենի մը չափ գտաւ :

Երեք ժամ անկց Յակոբայ այլայլու-
թիւնը : Յակոբ Մարդինոյ (որ ժընդովեւեմ
բուն որդին էր) բացաւ աչաքները ու չորս
կողմը դարձուց , սխմեց Միքայելի ձեռքը ,
որ իրենը բուսած կեցեր էր , և առանց
խօսք մը լսելու հանդարտութեամբ նարէն
քուն եղաւ :

Երկրորդ օրը անկի լաւ էր . բաց առ-
ջի օրուան եղածները խիստ անորոշ կը
յիշէր : Միքայել գրեթէ երևնալու իսկ կը
վախէր , որ չէրայ թէ սիրտը հանկուղձ էր
ւանդութեան դայքանալուն պատճառ չը-
լայ :

— « Տղաս , բաւ վերջապէս Յակոբ ,
չեմ կարծեր որ այն անորոշ յիշատա-
կութիւններն՝ որ դիս կը խոսվեն , երբազ
ըլլան : Սիրտս կը վկայէ թէ իմ ազա-
տարարս , դիս մահուան դռնէն ազատա-
ղը՝ օտար մարդ մը չէ : . . . Բաց կրնամ
արդեօք այս բարեբաղդութեանս հաւա-
տալ :

— » Այո , հայր , հաւտա՛մ , և միշտ մեկ-
տեղ օրհնենք զԱստուած . լսեց ինքը մեր
աղաչանքին , ու պահեց գրեզ մեզի : . . .
Քաւ խեղճ վիճակդ իմանալէս վերջը , օր
մը չանցաւ որ բոլոր արտանց քեզի հա-
մար չաղօթեմ : Ետևաստի ըրալ կ'ուղէի ,
միայն որպէս զի դիւրաւ կարեհնամ գրեզ
փնտաել : Աստուած ալ վրաս ձեռք գը-
րաւ , անելցուց Միքայել՝ արտասաքնե-
րով հօրը ձեռքը թըջելով , ինքը դիս քեզի

բերաւ , և գրեզ ալ քու սիրելի հիւղդ պիտի քանդի :

— Մարդ ինչպէս է :

— Չինքք ամենեին չեմ տեսած : Իր վշտացը չկարենալով դիմանալ , մենք երեք ամսապահն եղած չեղած՝ վախճաններ է : Ժընըվիեւ մամերնիս՝ Յակոբն ու զիս մեծցուց մեծ նեղութեամբ : Մանաւանդ ես շատ տրտմեցուցեր եմ զինքը , Յակոբ եղբորս պէս վարձակալներու քով չուզենալաւ երթալ աշխատիլ . սակայն որչափ պիտի ուրախանայ երբ իր սիրելի որդին իրեն տանիմ զոր ոչ երբէք մոռցած է :

— Միքայէլ , ազնիւ Ժընըվիեւն ու հայրենիքս տեսնալու յոյսն ահա կը ծնանի սիրտս : . . . Թերեզայի մահը միայն զիս տրտմեցուց՝ որ չէ կրցած մեր բաժանման ցաւը քաշել : . . . Իսկ ես , տղաս , եթէ չօգնէր ինձի Աստուած և ես յոյսս կտրէի՝ անշուշտ ես ալ իմ Թշուառութիւններէս ընկճուած կ'ըլլայի :

Յակոբ բոլոր իր գլխէն անցածները կը պատմէր որդւոյն . բայց տղան վախնալով որ շատ կը յոգնի՝ համոզեց զինքը որ հանգչի և ուրիշ ատենուան թողուն իր Թշուառութեանց պատմութիւնը :

Բոլոր նաւուն նաւաստիները և մասնաւորապէս Ռէմոնվիլ նաւապետը , շատ ուրախացան այս բարեբաղդութեան վրայ : Միքայէլ թէ իր գլխաւորներուն և թէ իր ընկերներուն սիրելի էր . ամէն առթի մէջ

բարի , անոյշ , սիրեցի գտնուած էր , և
պատերազմի մէջ յաջող և կտրիճ : Ամէն-
քը միաբան ուրախակից կ'ըլլային իրեն և
Աստուծոյ նախախնամութեանը վրայ կը
զարմանային , որ Յակոբ Մարգինոյի փրո-
կութիւնը իր որդւոյն առաքինութեամբն
և մարդասիրութեամբը եղեր էր :



Երկրորդ օրը Միքայելի հօրը վիճակն աւելի լաւցաւ : Օգը պարզ էր , և թշնամւոյն նաւատորմիզն ալ չէր տեսնուէր : Միքայէլ քանի մը նաւաստեաց օգնութեամբն զհայրը նաւուն յարկին վրայ տարաւ : Միքայելի վէրքերը վտանգաւոր չէին , բայց իր ծառայութիւններուն արգելք ըլլալով՝ կրնար բոլոր ժամանակը հօրը քով անցընել , տեսնալ ու խօսիլ հետը անյադ ուրախութեամբ , և հոգալ զանիկայ՝ որուն յիշատակը տղայութենէն ՚ի վեր անջնջելի տպաւորած էր սրտին մէջ :

— « Տասնըութ տարի կայ , ըսաւ Յակոբ , որ հայրենիքս թողուցեր եմ , և կենացս մէջ առաջին անգամ ծով մտնալու խորշում՝ ունեցայ ան օրը : Ո՛հ թէ գիտնայիր , Միքայէլ , թէ որչափ ուրախացանք քու և եղբորդ ծննդեանը վրայ . անատեն ամէն բան երջանիկ և հանգիստ կեանք մը կ'աւետէին մեզի , ինչուան որ

դէպքերը ստիպեցին զիս հեռանալու ըն-
տանիքէն, մեծ տխրութիւն մը ձգելով ամե-
նուս օրտին մէջ: Նաւակ մտած գիշերուը-
նէս գծքաղգութիւններն սկսան: Զար-
հուրելի մրրկէ մը բռնուեցայ, օրուն նման
հենացս մէջ չէի տեսած: Այնպէս ճըն-
շուած էր սիրտս և տրտում էի, որ թուլ-
ցայ մէկէն, մանաւանդ որ ազատելու հա-
մար ալ ճար մը չունէի. ուտոթ ալեաց բը-
նութեան ձեռքը թողուցի նաւակս: Քիչ
մը ատեն առանց փորձանքի դիմացայ ա-
լիքներուն առատութեանը դէմ: Երբեմն
ինչուան իրենց գաղաթը կը հանէին զիս,
երբեմն ինչուան խոր անդունդը կը ձգէին
չորս կողմս ջրեղէն լեռներ քարձրանալով.
այն ատեն ինքզինքս Աստուծոյ յանձնեցի
և ապագայ վիճակիս կը պատրաստուէի:

» Մէյ մ'ալ յանկարծ ահագին ճայթիւն
մը լսեցի, ըսի որ ալ վերջի վայրկեանս
հասաւ, նաւակս ջրագլխելու վրայ է,
ես ալ ընկղմելու ժօտ: Բայց ժօտ տեսնա-
լով վտանգը՝ նոր ուժ մը առի: Որդե-
ներս, կինս և պառաւ մայրս կը ժողածէի.
ու դարձեալ ինքզինքս Աստուծոյ և սրբոյ
կուսին Մարիամու յանձնելով՝ ստիպա-
կի կտոր մը նաւակէս փրցուցի և զիս չուա-
նով մը ամէն ուժովս անօր կապեցի: Մէ-
կէն նաւակս հազարուակէ կտոր եղաւ.
իսկ ես այն տախտակին կապուած դար-
ձեալ առջինին պէս ահաւոր ալիքներուն
գաղաթէն ինչուան յատակը կ'իջնայի:

» Այս վտանգալի վայրկենիս՝ յուսոյ նա-
ռագացի մը զօրացուց զիս . խոստացոյ
նոցն ատենն Աստուածածնայ , որ եթէ օր
մը ողջ առողջ հայրենիքս դառնամ , 'ի պա-
տիւ իրեն պզտի մատուռ մը կը շինեմ մեր
խրճիթին դիմացը : Բայր գիշեր մորթիկը
տուեց . փայլահները դադրելէն ետքը՝ ե-
րեք ժամու չափ խոր խաւար մը յաջոր-
դեց , և չէի գիտէր թէ ծովուն ո՞ր կողմը
պիտի իյնամ :

» Հագիւ թէ օրն սկսաւ ծագել՝ ցամաք
մը տեսայ , և ալիքներն ալ մէկէն զիս ծո-
վեցերք ձգեցին : Չեմ կրնար բացատրել
սրտիս ուրախութիւնն որ զգացի տն վայր-
կենէն : Սկսվտիոյ ծովափանցը վրայ էի :
Մէկէն այն տեղի հիւրասէր բնակիչները
հոգացին զիս . քանի մը օր հանգչելու և
թնամբի պէտք ունէի , և կը մտածէի թէ
ինչ կերպով կրնամ Պրըզաններ գալ . և ա-
հա լսեցի Անգղիացւոց Քաղղիացիներուն
դէմ պատերազմ հրատարակուիլը . ան-
կարելի եղաւ դառնալս : Ամենևին բան
մը չունէի , ոչ ստակ և ոչ ալ պաշտպան .
պէտք եղաւ որ Անգղիացւոց կառավարու-
թեանն ապաւինիմ , որ քիչ մը բան ձեռք
դրաւ որ անօթութենէ չմեռնիմ : Հաղար-
ուսէկ բան կը մտածէի՝ գալիքներէն ազա-
տելու համար . բայց մէկն ալ չէի յանձն առ-
նէր անտանելի դժուարութիւններ տես-
նալով անոնց մէջ :

» Եստ ատեն չկեցայ Անգղիա : Չիս

նաւ գրին ու ըսին որ ինչ որ հրամայեն
ինծի Մատրաս , ուր որ պիտի տանէին
գիս , հնազանդիմ ու ընեմ : Պէտք եղաւ
յանձն առնել ու երթալ , առանց կարենա-
լու խեղճ կնկանս և պառաւ մօզս իմ վը-
րայօքս լուր մը տալ :

« Այս անգամ ազէկ համբարգութիւն ու-
նեցանք . և Մատրաս հասանք չհասանք ,
գիս հող կրելու աշխատացուցին . իսկ ձմե-
ռը չուան շինել տուին : Առջի բերան Ան-
գղիայէն հեռանալուս չէի ցաւած , գիտ-
նալով որ հեռու ըլլալովս վրաս շատ հսկո-
ղութիւն չեն ընէր և աւելի գիւրաւ կըր-
նայի փախչել . բայց տեսայ որ վիճակս փո-
խանակ կամաց կամաց լաւնալով՝ ընդ հա-
կառակն երթալով կը գէշնար : Չեմ ուզեր
վշտացրնել զքեզ , սիրելի Միքայէլ , մա-
նրամասն պատմելով այն թշուառութիւն
ներն ու տառապանքները զորոնք տաս-
նըութ տարի արսորանքով և գերութեամբ
քաշեցի , բայց աս միայն քեզի ըսեմ որ
իմ ամենէն մեծ քաշած նեղութիւնս էր
խեղճ պառաւ մօրմէս , երկու զաւակներ
րէս , զորոնք առանց ճանչնալու կը սի-
րէի , և խեղճ թերեզայէս գրկուիլս : . . . »

Յակոբ իր կինը նորէն յիշելով այսու-
ներն արտասուքով լեցուեցան , ու քիչ մը
ատեն լուսթենէն ետքը՝ այսպէս շարու-
նակեց .

— « Ամենևին Եւրոպայի վրայ տեղեկու-
թիւն մը չէի տանէր . միայն որ մը այս ի-

մայայ որ երկու հզօր տէրութիւնք քիչ մը
ատեն հակառակութիւնը մէկզի դրեր են,
ու Մատրաս գտնուած գերիներուն ալար-
ձակուելու հրաման եկեր է : Անգթաբար
զիս անոնց մէջ չդասեցին , պատճառ բե-
րելով որ ես տէրութեան նաւաստի չէի :
Տրամութեամբ կը նայէի իմ դժբաղդու-
թեան ընկերացս երթալուն և զիս մինակ
Անգղիացւոց ձեռքը տեսնալուս : Ռիշար
անունով գերւոյ մը յանձնեցի որ դայ ձե-
ղի իմ վիճակս պատմէ , բայց ո՞ գիտէ թէ
մեռեր է արդեօք խեղճը ճամբորդութեան
ատենը կամ թէ մոռցեր է այս ծառայու-
թիւնս ընելու ինձի , որով ամենեւին լուր
մը չէք առած վրայօքս :

» Պատերազմը նորէն շուտով մը բռնկե-
ցաւ , և թշնամւոյն նաւատորմիդը Հնդկաց
ծովը մտաւ : Աս ատենս ես Գրինքմալ
փոխադրուեցայ , զոր շատ կ'աշխատէին
ամրացընելու : Չիս ալ ստիպեցին որ ան-
տեղացի մարդկանց և պատերազմի գերի-
ներուն հետ , որ ասդիէն անգիէն բռնած
կը բերէին , աշխատիմ : Քանի՛ քանի ան-
գամ սիրտս կը բաբախէր , երբոր Գաղ-
ղիացւոց դրօշակը կը տեսնայի որ ծովուն
մէջ կը ծփար . որչափ անգամ աղօթքը ւ-
րեր եմ որ մեր զօրքերը յաղթական ելլան՝
երբոր նաւատորմիղներուն մեր ծովեզրին
առջևը պատերազմիլը կը տեսնայի : . . .

» Ախ՛Քրանին այս տեղուանքս գալը մեծ
փոփոխութեան պատճառ եղաւ , և ամէն

բան ուրիշ կերպ մը առաւ : Գրինքմալի մէջ ամէն բերնէ անոր ահաւոր անուներ կը լսուէր , և այն միայն վախ ձգեց Անգղիացւոց մէջ : Դու՛ն ալ տեսար թէ ինչպէս թուլութեամբ կը պաշտպանէին բերդը՝ երբ Սիւֆրան զայն պաշարել սկսաւ : Ետնայն միջոցին աշխատութենէն ու տրամութենէ ուժաթափ եղած՝ ծանր հիւանդ էի : Անգղիացիք վախնալով իրենց վիճակին վրայ , խտութեամբ կը վարուէին մեզի հետ . մանաւանդ երբոր զանգղիացի նաւատորմիդը նաւահանգստին բերանը տեսան , մէկէն զմեզ բանտերու մէջ փակեցին : Գրեթէ վեց օր հոնտեղս՝ կը տառապէինք և կը հեծէինք անտանելի ճեղքութեանց մէջ , ինչուան որ քաղաքն առնուեցաւ՝ որ զմեզ ուրախութեամբ լցուց և ազատութիւննիս պարգևեց :

» Այն երջանկութեան վայրկենին էր որ քիչ մնաց որ խիստ փորձ մ'ալ զլխէս անցնէր : Կը յիշեա դուն ալ , Միքայէլ , ինչ խնդն վիճակի մէջ քլլալս . կը յիշեա այն ահաւոր տրամութիւնն որ տիրեր էր վրաս , երբոր մինակ , ինչպէս որ ուրիշ անգամ փորձն առեր էի , մէկզի ձգուած դատապարտուած պիտի մնայի այն հեռու երկրին մէջ : Նոյն իսկ ահաւոր մրրկին գիշերք , որ երկար ատենն ահուելի տղեաց խաղալիկ եղայ , այն ատիճան տաղնապ չեմ քաշած : Աղաղակներս ու հեծութիւններս , Միքայէլ , սիրտդ կտրտեցին , և

յանձն առիր խնդրել նաւապետէդ թե-
թեւցընել այն հրամանը , որ ինձի համար
մահ էր : Ո՛հ թէ գիտնայիր որ ինչ եռան-
դեամբ , քու երթալէդ վերջը , Սուրբ Աս-
տուածածնայ ըրած ուխտս կը նորոգէի , որ
Ովկիանոսի ալեաց մէջն ըրեր էի իրեն .
ո՛հ թէ գիտնայիր որ ինչ ուրախութիւն ու
նեցայ՝ երբոր « Աւետիս , աւետիս » կան-
չելով ինձի կը վազէիր , ու զիս կռնակդ
չալկած ծովեզերք տարիր : . . . Ընդուներ
էր Աստուած աղօթքս , և թոյլ տուեր էր որ
երջանկութիւնս կատարեալ ըլլալու հա-
մար , Յակոբ Մարգինոյին որդին , առանց
ղհայրը նաճչնալու՝ անոր կեանքը փրկէ » :

ԺԱ.

Երկար ատեն խորճըթին մէջ Միքայելի վրայ կը ցաւէին . Յակոբ ու Ժընըվիեւ տխուր ու անբարբառ մէկմէկու կը նայէին պարապ տեսնալով սեղանին վրայ անոր տեղը : Միքայելի երթալէն վեց ամիս վերջը ծագած պատերազմը՝ անոնց անհանգրստութիւնն ու ցաւերն աւելցուց : Իսկ ինքը Միքայէլ պատերազմի բոլոր վտանգներուն մէջ մտնալու կ'երթար :

Այս կտրիճ տղան շատ անգամ կ'իմացընէր մամուն նամակով իր վիճակը , և գրեթէ բոլոր թոշակն ալ մէկտեղ անոր կը խաւրէր : Բայց վերջը բաւական ատենէ մը՝ ի վեր թուղթ գրած չըլլալով , Ուէսանի կղզիներուն մէկէն , ուր Գաղղիացուց նաւատորմիղը խարխիս ձգեր էր , նամակ մը գրեց որ ասանկ կը վերջանար .

« Կը հեռանանք Գաղղիայէն , սիրելի մամս , և չեմ գիտեր թէ մէկ մը ասկէ հե-

ուանայէս ետքը ինչպէս ու երբ պիտի կարենամ վրաս տեղեկութիւն տալ ձեզի : Յուսամ որ բաժնուելուս վրայ մխիթարուած էք . դու իսկ գիտես թէ ինչ քիչ օգնութիւն կրնայի ընել քեզի , և վստահ եմ որ Յակոբ եղբայրս ամէն պիտոյքդ կրնայ լեցընել : Նաւապետս շատ գութ ունի վրաս , կը յուսամ որ զիս ալ ապերախտ չգտնար և ես մեր սիրելի հիւղէն աւելի Սեփէր նաւուն մէջ իմ պարտքերս ճիշդ կը կատարեմ : Նորէն կը տեսնուինք , սիրելի մամս . . . կը տեսնուինք երբոր Աստուած ուզէ : Քու , ազնիւ Յազոբին և հօրս յիշատակը մտքէս չեն ելլար :

ՄԻՔԱՅԷԼ ՄԱՌԻՆՈՅ :

Այս եղաւ Ժընըվիեւի իր թոռէն առած վերջին թուղթը :

Իսկ Յակոբ օրէ օր աշխուժութիւնն ու գործունէութիւնը աւելցընելով տիրոջը վստահութիւնը կը վաստակէր : Յաջողակ էր և արթուն , և մամուն ամէն պիտոյքը առատապէս կը լեցընէր . նաև Միքայելի խաւրած ստակն ալ մէկդի դրեր էր անկարծելի դիպուածի մը համար պահելով զայն , և կամ որպէս զի 'ի դարձին' նորէն իրեն ձեռքը դնեն , ինչպէս որ Ժընըվիեւը կ'ըսէր : Միայն թէ Ժընըվիեւ կ'իմանար որ շատ կը պառուի , և թէպէտ տարիքին նայելով ուժով էր և առողջ , բայց միշտ կը

կրկնէր վախնալով որ չըլլայ թէ Միքայէլը
չտեսած՝ իր վերջին ժամը հասնի :

Յակոբը կը ջանար զինքը ապահովցընելու . և ամէն ջանքը կը թափէր անոր երջանկութեանը համար , և ինչպէս որ պէտք էր յաջողեցաւ . վասն զի որդւոյն խելացիութենէն գատ բան մը չկրնար մօր մը պառաւութիւնը երջանկացընել , և այս կողմանէ ժընքվիել փափաքելու բան չունէր : Յակոբ որչափ որ կտրիճ երիտասարդ մը դարձեր էր , այնչափ ալ զարմանալի էր իր հնազանդութիւնը . մամուռն ամէն հաճոյիցը գլուխ կը ծռէր , և այնպիսի ազնիւ վարմունք մը ունէր անոր հետ և ակնածութիւն մը , որ իրեն տարիքովն երիտասարդի մը քով դժուարաւ կը գտնուի :

Պատերազմն սկսեր էր սաստկանալ , և կ'ըսէին ալ թէ թշնամւոյն նաւատորմի դը քիչ ատենէն պիտի հասնի , ընդհանուր պատերազմ՝ ընելու համար՝ երկու ժողովուրդները բաժնող ծովերուն մէջ : Ժընքվիելի և Յակոբին բոլոր անհանգստութիւնը չգիտնալնին էր թէ արդեօք Միքայելի նաւն ալ պատերազմին մէջն էր թէ չէ : Ամէն իրիկուն մեծաւ ջերմեռանգութեամբ երկուքը մէկտեղ անոր կենաց պահպանութեանը համար կ'աղօթէին , որ սիրելի էր իրենց . և բարի ժընքվիելը չէր կրնար առանց առատ արտասուք թափելու Յակոբին նաւաստեաց համար ըրած աղօթքը լսել :

Օր մը ծովեզերքէն քիչ մը հեռուն մեծ
նաւատորմիղ մը տեսան որ կը քալէր :
Բազմաթիւ նաւաստիք և պաշտօնակալք
ցամաք ելան . բայց անոնց մէջ զՄիքայէլը
չտեսան և բան մըն ալ չկրցան իմանալ ա-
նոր վրայօք , և ասով յոյս առին որ այն
արշաւանքին մէջ պիտի չըլլայ ինքը :

ԺԲ

Մայիս ամսուն գեղեցիկ առաւօտներէն մէկն էր , ու Յակոբ իր տիրոջն անդաստաններուն մէջ կ'աշխատէր , և ահա յանկարծ ահաւոր թնդիւն մը լսեց որ որոտման ձայնէն ալ ահաւոր էր , որուն հաւասար իր կենաց մէջ չէր լսած : Մէկէն աչքերը երկինք վերուց նայեցաւ , բայց սովորականին պէս կապոյտ և պարզ էր և ամենեին մրրկի մը նշան չկար :

Քանի մը վայրկենէն նորէն սկսաւ թնդիւնը զարհուրելի կերպով . Ովկիանու ծովեզերքը , ժայռերը , երկիրն՝ որուն վրայ որ կ'աշխատէր՝ կը դողդըղային , և մերձակայ լեռանց այրերը այն ահեղ ձայներուն արձագանգը կու տային :

Յակոբ այս անգամ դէպ 'ի արեւմուտք նայեցաւ ու սև ծուխի թանձր ամպ մը տեսաւ հորիզոնին վրայ , որուն մէջէն յանկարծ յանկարծ լոյս կը փայլէր :

— « Ապահովագէտ սկսեր է պատերազմը , կանչեց , և ծովեզերքին մօտ . խեղճ հիւղերնիս հիմնայատակ պիտի կործանի գնտակներէն » :

Այս մտածմունքը ձեռուրները Թուլցուց , ձգեց բահը , և պառաւ մամբ մտածելով սկսաւ ամէն ուժովն հիւղը վազել :

Անվնաս քարաժայռերէն վար իջաւ , թէպէտ և գնտակները քովէն կ'անցնէին , և ժայռերէն մեծամեծ կտորներ կը փրցընէին : Անկողնոյն քով ծունկ չդքած և վախէն կիտամեռ գտաւ իր խեղճ մամբ : Այն վտանգէն խալըսելու համար , ուզեց զանիկայ դաշտ տանիլ , բայց Ժընըվիեւ սիրտ չըրաւ տնէն դուրս ելլալու . Յակոբ չկըրցաւ զինքը համոզել որ եթէ գնտակ մը յանկարծ հիւղին վրայ իյնալու ըլլար նէ , բաներնիք լմընցած էր :

Վերջապէս միտքը դրաւ գրկել զանիկայ և ապահով տեղ մը տանիլ :

— « Բայց ո՞վ գիտէ , ըսաւ ինքնիրեն , թերևս վտանգաւոր տեղ մը տանիմ զինքը , ուսկից այնչափ կը խորշի » : Եւ որոշեց որ ինչ որ ըլլայ անոր քովը կենայ : Ահով դողով անցուցին բոլոր օրը թնդանօթոց ձայներէն իյնալով , և վայրկենէ վայրկեան հիւղին հիմնովին կործանելուն կը սպասէին :

Իրիկուան դէմ ոմբաձգութիւնը շատ դադրեցաւ , և բազմութիւն մարդկանց որ բարձր ժայռի մը վրայէն պատերազմը կը

դիտէին , մէկ բերան կանչեցին թէ՛ Գաղ-
ղիացիք յազթեցին :

Դեռ գործողութիւնը բոլորովին չլմըն-
ցած՝ նաւակ մը դէպ ՚ի ցամաք սկսաւ մօ-
տենալ , և հիւզէն քանի մը քայլ անդին
մէջինները ցամաք ելան : Նաւաստիք վի-
րաւորուած զօրավար մը թևերնուն վրայ
առած կը բերէին , իսկ անոնց ետևէն ալ
երիտասարդ մը կու գար , ծեր նաւաստիի
մը ուսին կրթընած : Յակոբ խրճթին դու-
ռը վազեց , և ըսաւ որ անկողնին վրայ
դնեն զօրավարը : Հիւանգը կը հառաչէր
ու կը հեծէր : Անոր ձայնէն՝ նաւաստին
գողգողալով մը անոր անկողնին մօտե-
ցաւ : Ժընրվիեւ լաւ մը նաւաստուոյն նայ-
ելէն վերջը , Յակոբին . . .

— « Միքայէլն է աս , կանչեց ուրա-
խութեամբ , . . . այս մեր Միքայէլն է : . .

— Ի՛նքն է , ըսաւ Յակոբ , անոր վիզը
պլլուելով :

— Ո՛հ , խեղճ մամս , ո՛հ , սիրելի Յա-
կոբս , պատասխանեց Միքայէլ , տխուր
վայրկենի մէջ զիս կը տեսնաք . աղնիւ
նաւապետս ՚ի մահ վիրաւորուած է :

— Այս այն քաջ պարոնն է որ գբեզ ի-
րեն հետ տարաւ , ու մեզի ալ առատա-
ձեռն բարիքներ ըրաւ :

— Ափսոս , ի՛նչպէս դեղներ է , ըսաւ
Ժընրվիեւ տրտմութեամբ մը՝ Ղուկաս
Ռէմոնվիլ նաւապետին դեղընցած դէմքը
տեսնալով , Յակոբին անկողնին վրայ դը-
նելէն ետքը :

— Բայց դո՞ւն ալ Միքայէլ իրեն պէս
դեղներ ես, վախով մը ըսաւ Չընըվիւն :

— Այո՛, տկար ձայնով մը պատասխա-
նեց Միքայէլ կողը ցուցընելով ուսկից ա-
րիւնը ծանր ծանր կը վազէր, ես ալ անոր
քով պատերազմելու ատեն վիրաւորուե-
ցայ : Երբոր մեր նաւապետն ինկաւ, իր
տեղը եղբայրն անցաւ, ու երբ կրակին
սաստկութիւնը նուազեցաւ, նաւակ մը
խաւրեց ցամաք, որպէս զի հոն զվիրաւո-
րը աւելի լաւ կարենան հոգալ : Ինքը չէր
գիտէր թէ ես ալ վիրաւորուած եմ, և
հրաման տուաւ ինծի նաւապետիս հետ
ցամաք ելլալ և հոգալ զինքը : Ես քաղ-
քէն աւելի մեր հիւզն ընտրեցի բերել . ո-
րովհետեւ ուրիշ անգամ մ'ալ ազնիւ նա-
ւապետս այս անկողնին վրայ հանգուցեր
էր իր գլուխը, և ուզեցի որ օտարաց քով
չմեռնի : . . . »

Միքայէլ երբ այս բառերս կ'ըսէր՝ եր-
թալով ձայնը կը մարէր, և թէ որ Յակոբ
չբռնէր զեզրայրը՝ անշուշտ ցաւէն և յոգ-
նելէն գետին կ'իյնար :

Քանի մը վայրկենէն վերջը, հասաւ վի-
րաբայժն և իմացուց որ նաւապետին վէր-
քը մահացու էր, իսկ Միքայելինը վտան-
գաւոր :

Ղուկաս Ռէմոնվիլ նաւապետին եղ-
բայրն ալ ցամաք ելաւ և հիւզը մտաւ :
Երբ վիրաւորեալը տեսաւ զեղբայրը՝ ձեռ-
քը անոր երկնցուց .

— « Գուլիելմոս , ըսաւ , յաղթեցին
Դաղղիացիք » :

Դարձաւ Գուլիելմոս և սկսաւ լալ :

— « Ո՛հ , այո , Ղուկաս , մերն է յաղ-
թութիւնը . բայց սուղի նստաւ մեզի : . . .

— Ուրիշ քաջեր ալ մեռան , կրկնեց
նաւապետը , որոնց մահը ինձմէ աւելի
ողբոց արժանի է : . . . Ես գոնէ փափուկ
սրտով եղբայր մը ունիմ որ իմ մահս կ'ող-
բայ : . . . Ինչ և իցէ , լսէ , եղբայր , վեր-
ջին կամքս . արդէն գիտես որ կտակովս
գքեզ թողուցեր եմ ամէն բանի ժառանգ ,
բայց գրպանիս մէջ գտնուած ոսկին սիրե-
լի Միքայելիս տուր : Իսկ եթէ Աստուած
չընէ ինքն ալ մեռնի , իր բաժինը ծնողացը
տուր : Կը վախնամ որ զրկեցի զիրենք ի-
րենց ձերութեան մէկ նեցուկէն : Այս
խրճթիս բարի բնակչացմէ է որ ես ասանկ
փառքով կը մեռնիմ . երեք տարի կայ , որ
այս ծովափանցս քովերէն իմ կեանքս խա-
լըսեցին : . . . »

Աս ըսաւ Ռէմոնվիլ ու սուրն ուզեց ,
պագաւ անոր վրայի խաչը մեծարանքով ,
խոստովանեցաւ Սեվեր նաւուն խոստո-
փանահօրը , զոր կանչել տուեր էր , և իր
փառաւոր կեանքը քրիստոնեայ մահուամբ
մը պսակեց :

ԺԳ

Աշխարհքիս վրայ կատարեալ ուրախու-
թիւն ըսած բանդ չկայ . երջանիկ էր Մի-
քայէլ որ հօրը հետ հիւղը դարձեր էր ,
բայց իր այս երջանկութիւնը ունէր իրեն
հետ մէկտեղ տրտմութիւն մ' ալ , որ էր
ազնիւ նաւապետին մահն և իր ծանր վէր-
քերը : Բոլոր ընտանիքը զհիւանդները հո-
գալու հետ էին , և Յակոբ դեռ առիթ չէր
գտած ինքզինքը մօրը և որդւոյն յայտնե-
լու . արդէն Միքայելին հետ խօսք ալ դրած
էր մէկէն չ յայտնել զինքը , որպէս զի պա-
ռաւ Ժընըվիեւը շատ չայլայլի :

Երկրորդ օրը մեծ հանդէսով թաղում
ըրին նաւապետին : Իրաւամբք նաւատոր-
մդին կտրիճ հրամանատարներէն մէկը կը
սեպուէր , և նաւաստեաց ցաւէն և առատ
արտասուքներէն կ'իմացուէր թէ որչափ կը
սիրէին զինքը :

Միքայելի հիւանդութիւնն ալ օրէ օր

երթալով կը թեթևնար և շատ անհանգըստութիւն չէր տար :

Իսկ պառաւ Ժընըվիւսը կը տեսնար որ Ռէմոնվիլ նաւապետին հետ եկող նաւաստին միշտ խրճիթն էր, և Միքայելին հետ ալ մեծ ընտանութիւն կը ցուցընէր : Մարդուս, մանաւանդ մարց սրտին մէջ, անանկ բնածին ազդեցութիւն մը կայ, որ երբեմն չգիտցածը կարծես թէ կը գուշակէ : Պառաւ Ժընըվիւսը զօտարականը տեսնալէն 'ի վեր' անանկ զգացմունք մը կը զգար սրտէն անոր վրայ, որուն պատճառը ինքն ալ չէր հասկընար : Առջի երեք օրերը, իր սիրելի որդւոյն վշտացը և նաւապետին մահուանը խելքը տուած ըլլալով, ամենևին անոր ուշագրութիւն չէր ըրած : Բայց երբոր քիչ մը հանդարտեցաւ հոգերէն, նաւաստւոյն ձայնը ականջին կը զարնէր, անոր տժգոյն, վատոյժ և վշտերէն խանգարած գէմքը՝ իր սրտին վրայ մեծ տպաւորութիւն կ'ընէին :

Յամաք ելլալէն ետքը չորրորդ իրիկունը Ժընըվիւսը հիւանդին անկողնին քով նստեր էր, օտարականը և իր Յակոբ որդին ալ քիչ մը հեռուն՝ վերջի պատերազմին և ծովուն վտանգներուն վրայ կը խօսէին :

— « Բոլոր մեր թշուառութիւնն է, ըսաւ սրտաւը, որ խեղճ որդիս քտան տարի առաջ ծովուն ալիքներուն մէջ կորսուեցաւ, և թէ որ Աստուած չօգնէր՝ այս սիրելի

Միքայէլս ալ հօրը վիճակը պիտի ունենար :

— Ես կրնամ գրեզ ապահովցընել որ հայրս մեռած չէ , ըսաւ անդիէն Միքայէլ . սա նստած բարի նաւավարը կրնայ ձեզի լուրեր տալ անոր վրայօք » :

Ժընըվիել օտարականին դարձաւ , ան ալ մօրը : Այս երկու նայուածքներուն մէջ վճռական բան մը կար : . . . Գտնը էր մայրը իր այն զաւակը որուն վրայ այնչափ ատենէ 'ի վեր կու լար : . . . Այնպիսի տեսարաններ կան որ գրիչ մը չկրնար նրկարել . նոյն վայրկենին խեղճ հիւղին մէջի եղածն ալ անոնցմէ մէկն է : Այս մէկ վայրկեանը իրենց այնչափ երկայն տարիներու քաշած նեղութիւններն ու ցաւերը մոռցընել տուաւ :

Քանի մը շաբթէն վերջը , Միքայէլ Գաղղիոյ Թագաւորէն միտալ մը տուաւ պատուոյ նշան . և եկամուտ մըն ալ , որովհետեւ անկէ ետքը վէրքերուն պատճառաւ չէր կրնար տէրութեան ծառայել : Մեծասիրտ երիտասարդը աս ամէն յաջողութեանցս մէջ կ'ուրախանար որ ընտանեացը օգտակար կ'ըլլայ : Ռէմոնվիլ նաւապետին պարգևած ոսկւովը՝ Միքայէլ երկիր գնեց Յակոբ եղբօրը համար .

— « Շատ պարտրկան ենք իրեն , կ'ըսէր , որովհետեւ ինքը պահեց պառաւ մամերնիս , որ բոլոր մեր երջանկութիւնն է , մեր խեղճութեան ատենը ինքը զմեզ հոգաց . ուս-

տի իրաւամբ իրեն բռնած բարի ընթացքովն արժանի է վարձուց և հանգստեան :

Յակոբ, որ ամենուն սիրելի էր, իր գեղին ազնիւ վարձուորի մը առաքինի, բարեպաշտ և աղէկ տան խնամակալութիւն գիտցող աղջկանը հետ կարգուեցաւ, և իր կալուածին մէջ գնաց բնակեցաւ, զոր ինքը կը մշակէր: Իսկ Ժընըվիւ, իր Յակոբ որդին և Միքայէլ թողը իրենց խրճիթէն չբաժնուեցան. բայց Միքայէլ որչափ որ վէրքերը թող կու տային իրեն, թէ հօրը կ'օգնէր և թէ կ'երթար եղբօրը հետ կ'աշխատէր:

Խաղաղութիւն և երջանկութիւն տիրեց այն խրճիթին մէջ, ուր այնչափ արտասուք թափուած էր, և այն ընտանիքն՝ որ այնչափ ատեն ցրուած բաժնուեր էին, վերջապէս միացած՝ մէկգմէկ կը վայելէին, և սէրն ու միաբանութիւնը օրէ օր աճելով իրենց քաջածները կը քաղցրացընէին:

Յակոբ Մարդինոյ չմոռցաւ Աստուածածնայ տուած խոստումներն իր ալէկոծութեանն ատեն. իր խրճիթին պէս՝ մատուռն ալ իր ձեռքովը շինեց, ծովեզերքէն քարերը անձամբ ժողվելով ու բերելով: Աս հոգևոր աշխատութեանը մէջ, Միքայէլ ալ հօրը ձեռք տուաւ, և քիչ ատենէն մատուռը շինուեցաւ լմնեցաւ:

Ամէն իրիկուն, խրճիթին երեք բնակիչքը Սուրբ Աստուածածնայ մատուռը կ'երթային աղօթքնին ընելու. և աշնան գէշ

օրերուն՝ երբոր երկինքը սև ամպերով կը
մթըննար, ու քամիները ծովն ալիքներով
կը հնչեցընէին՝ իրենք Սուրբ Կուսէն նա,
ւակոծեալ նաւաստեաց համար օգնութիւն
կը խնդրէին :



ՈՐԴԵԿՈՏՈՐ ՄԱՅՐ ՄԸ



ՈՐԴԵԿՈՏՈՐ ՄԱՅՐ ՄԸ



Քանի մը տարի կայ որ Անվերսա քաղաքը կտոգիւտ վալպուրկ անունով հարուստ այրի մը կը բնակէր . և գեղեցկութիւն ու մտքի աշխոյժ ունենալով, միտքը դրած էր որ ինքը ծնած է աշխարհիս ամէն գրօսանքներն ու զուարճութիւնները վայելելու . և ինչպէս հասարակ է այս տեսակ կանանց, ծանր մտածութիւններէն ու վեհանձն սրտի յուզմունքներէն անանկ կը վախէր՝ իբրև թէ խաղաղ ու քաղցր կենաց վրդովիչ ըլլային . ասկից էր նաև որ անզգայ դարձեր էր այն ամէն բաներուն՝ որոնք իրեն կարծեալ երջանկութեանը բանի չէին դար : Թշուառներու վրայ անտարբեր աչքով մը կը նայէր . նոյն իսկ իր զաւակներուն վրայ ալ թէպէտ հրեշտակի պէս աղուոր էին , չունէր այն մայրենի գուլթն ու գորովը , որ կնկան մը սրտէն ամէն զգացմունքներէ աւելի դժուարաւ կըրնայ ջնջուիլ : Ընդ հակառակն զգեստ մը որ իր ուզածին պէս ձևուած չըլլար , կամ տան զարդերն ընտիր չըլլային , կամ ու-

րիչ կնկան մը վիզը կախուած մանեակ մը տեսնար , և ուրիշ ասոնց նման հազարու- մէկ սնոտիքներ , անանկ ազդեցութիւն կ'ընէին վրան՝ որ տեսնողը կը կարծէր թէ մեծ թշուառութեան մէջ է :

Օր մը այս խաթունը իր փառաւոր պա- լատին պզտի դահլիճներէն մէկուն մէջ , կարմիր կերպասէ բազմոցի մը վրայ կէս տարածուած , աչուրները վեր 'ի վերոյ կեր- պով մը վէպի մը էջերուն վրայ տնկած էր , որուն խրատներուն մէջ ամենեւին բարոյա- կան չկար : Կը կարդար արգեօք . թերևս . բայց զինքը տեսնողն ու չճանչցողը կը կարծէր որ անհոգութիւնն աչուրներն իտկ բանալու թող չէր տար : Բնակութեան կակարաախը՝ բնակողին հարստութիւնն ու ընդունայն ախարժները կը յայանէին . վառարանը և պատուհաններուն առջե- ներն այնպիսի գիւրարեկ զարդերով ծած- կուած էին , որոնք ամենեւին գործածու- թեամ չեն գար և տղոց խաղալիկներէն ի- րենց գնովը միայն կը զանազանին : Այս զեղխ տանօ մէջ , լոյսը արևու լուսոյն պէս մաքուր ու կենդանի չէր . հապա խիտ վարապոյրներէն անցնելով՝ վարդի գոյն կ'առնէր և ամէն բանի թոյլ ու անորոշ գոյն մը կու տար :

Սակայն այս սրահիս կենդանութիւն կու տային վեց գեղեցիկ տղաք որոնք թեթե ձայն մըն ալ հանելու վախնալով , գորգին վրայ նստած . մեծ գրգի մը պատկերները

կը դիտէին . չէին համարձակէր և ոչ խօսելու , և իրենց ուրախութիւնն ու զարմանքը նշանով և ձեւերով կ'իմացընէին : Գիտէին որ ոչինչ բանի մը համար՝ մայրերնին մէկէն ուրիշ խուց կը վռնտէր զիրենք : Այս աղուոր տղոց անդրանիկը գրեթէ տասուերկու տարեկան էր, իսկ ամենէն պզտիկը հազիւ իրեք տարեկան : Երեք եղբայր և երեք քոյր էին և իրարու վրայ ունեցած սաստիկ սէրերնին իրենց քաղցր և անոյշ խնտումէն կ'երևար , և ստէպ ձեռք ձեռքի տուած ուրախանալներնէն : Ասանկ տեսարաններ շատ անգամ պատկերի մէջ տեսեր եմ, հրեշտակի նման գեղեցիկ տղոց խումբ մը , սուրբ և անմեղ հաճոյից նշան : Այո , ճիշդ այն էր ասիկայ . — այն պարզ դէմքերը որ թշուառութիւն մը դեռ չէ այլայլած . — այն խարտեաչ մազերը որոնց հասակն ու մկրատը դեռ չեն վնասած . — այն պզտի գէր թւերը և այն փափուկ անդամները զորոնք աշխատութիւնն յոգնեցուցած չէ և ոչ զեղխութիւնն ապականած . . : Մէկ խօսքով անոնք զմարդկութիւնը կը ներկայացընէին իր մատղաշութեանը մէջ , շնորհալի և աշխոյժ , զարնան առջի տերևներուն և առջի ծաղկընբրուն նման :

Եւ ըստ ինքեան մայրերնին աւելի այս պզտի հրեշտակներուն պիտի նայէր քան թէ՛ մուրեցուցիչ մատենագրի մը գրքին : Չէ , ամենևին երեսնին չէր նայէր . չէ թէ

բոլորովին մայրենի զգացմունք չէր մնացած քովը , հապա աշխարհային զբօսանքներով ու ապականութիւններով ալ լցուած էր :

Կողովատ Ժամու մը չափ անշարժ բազմոցին վրայ նստելէն ետքը , կամացուկ մը դուռը զարնուեցաւ , ու ծառայ մը ներս մտաւ և ծռելով ըսաւ .

— « Տիկին , քանի մը օր կայ որ կնիկ մը չորս անգամ գրեզ տեսնելու կու գայ : Ես միշտ ճամբեցի զինքը . հասարակ կին մը կ'երևայ . . .

— Աղէկ ըրեր ես , Պետրոս . թող հանգիստ ձգեն զիս . այդպիսի մարդիկ չեմ ուզեր տեսնել : Բայց երբոր Պ . Եւգինէոս տը Վալանժ գայ , սիրով ներս մտցուր զինքը : Գիտես որ այդ երիտասարդն երեկուան հանդեսէն դառնալուս ատենն ընկերութիւն ըրաւ ինձի » :

Ծառան հպատակութեան նշան մը ըրաւ զլիսովն , ու ըսաւ .

— « Մոռցայ , խաթուն , ըսելու որ ըսած կնիկս նախասենեկին մէջ պատասխանիդ կը սպասէ : Անանկ կու լայ՝ որ մարդուս սիրտը կը կտրտէ , և քեզմէ շնորհք խնդրելու կերպ մը կ'երևնայ վրան » :

Վալպուրկ խաթունը ցատքեց բազմոցէն ու երկու երեք անգամ անհամբերութեամբ ոտքը գետին զարնելով , պոռաց .

— « Ամենևին հանգիստ պիտի չթողուն զիս . տեսնե՞ք ո՞վ է աս կնիկն ալ . անուռն ի՞նչ է :

— Խաթուն, խեղճ հագած է, և անունն ալ կարողինա Սէզֆէլտ զուրցնց . քու տալդ կը կոչէ ինքզինքը » :

Հազիւ խօսքը լմնցուց ծառան, վալպուրկ խաթունին երեսը կաս կարծիր կը տրեցաւ : Գոռոզութեամբ մը ձեռքը երկընցուց և ըսաւ բարկութեամբ .

— « Պետրոս, չըլլայ թէ ներս մտցընես այդ կինը . ըսէ ինձի համար որ տունը չէ . շուտ ըրէ » :

Ծառան դուրս ելաւ չելաւ, նախասենեկին մէջէն յուսահատ աղաղակներ սկըսան լսուիլ և կարծես թէ կռիւ կ'ընէին : Յանկարծ գահլըճին դուռը բացուեցաւ, և երիտասարդ կին մը վազելով վալպուրկ խաթունին ոտքն ինկաւ, որ բարկութենէն ու պլալլութենէն կրակ գարձեր էր : Վալպուրկ խաթունը հպարտութեամբ մը վեր վերուց գլուխը և արհամարհութեամբ մը նայեցաւ խեղճին վրայ, որ աղաչաւոր ձեռքերը իրեն կ'երկընցընէր . վերջը տղոցը նշան ըրաւ որ դուրս ելլեն, և չղբած կնկանը գառնալով,

— « Տեսնենք, ինչ կը նշանակեն, ըսաւ, այս ըրածներդ . ինչ պիտի ըլլան այդ կատակներդ . ըսէ, ինչ կ'ուզես ինձմէ » :

Երիտասարդ կնիկը խեղճ կերպով մը վալպուրկ խաթունին աչքերուն մէջ նայեցաւ և արտասուալից ձայնով մը ըսաւ .

— « Ո՛վ խաթուն, այդպէս մի խօսիր հետա . շատ թշուառ եմ ու մահացող վըր-

տաց մէջ ինկած : Գթա խեղճի մը որ ոտդ
ինկած օգնութիւնդ կը խնդրէ » :

Անզգայ կլոդիլտը չոքած թողուց խեղճ
կինը և քանի մը քայլ հեռացաւ . վերջը
նորէն ձեռք առաւ գիրքն ու կեղծ հան-
դարտութեամբ մը ըսաւ .

— « Ատեն չունիմ այդ ողբերը մտիկ ը-
նելու . թէ որ ինձմէ շնորհք մը կը խըն-
դրես , այդ խեղճ կերպերով մի յուսար
վախճանիդ հասնելու . բայց որովհետև
պատմութիւնդ լսելէն ազատիլը անկարելի
է , շուտ ատոր ծայրը տեսնանք » :

Յայտնի էր որ այս կծու խօսքերը սաս-
տիկ կը վիրաւորէին խեղճ կնկան սիրտը .
բայց անտարակոյս ծածուկ պատճառ մը
կը պարտաւորէր զինքը համբերելու , և
կարծես թէ վշտացեալ դէմքը այս կ'ըսէր .
Աստուած իմ , Աստուած իմ , պէտք է որ
յանձն ագնում այս նախատինքները : Ոտք
ելաւ և տաքութեամբ մը ըսաւ .

— « Խաթուն , մեծ հարկաւորութենէ մը
ստիպուած այս քայլս կ'ընեմ , վասն զի
գիտեմ որ ազգականութեամբս որով կա-
պուած ենք իրարու՝ քեզի աւելի ատելու
թեան առիթ եմ քան թէ գթութեան :
Բայց կ'աղաչեմ գթա վրանիս . փրկէ ըզ-
մեզ նախատինքէ և թշուառութենէ : Ան-
կարեկիր մի ըլլար աղաչանքներուս . . . և
ես անունդ կ'օրհնեմ հրեշտակի մը անուան
պէս » :

Վաշպուրկ խաթունը պատասխան տա-

չու տեղ՝ սեղանին վրայէն արծաթէ զանգակիկն առաւ, և երկու իրեք անգամ զարնելով,

— « Պետրոս, ըսաւ ծառային երբ ներս մտաւ, զնա ըսէ որ կառքս լծեն » :

Եւ խեղճ կնկանը դառնալով,

— « Կը տեսնես որ, ըսաւ, եթէ ատանկ շարունակես, ատեն չունիմ ինչուան վերջը քեզի ականջ կախելու: Շուտ ըրէ, կարճ խօսէ » :

Թեթև կարմրութիւն մը, ներքին բարկութեան նշան, երեցաւ խեղճ կնկան երեսներուն վրայ. բայց բարկութիւնը զսպելով, սկսաւ ըսել երագութեամբ.

— « Խաթուն... քոյրս... գիտես որ թէպէտ շատ անգամ կարօտութիւն ունեցանք, բայց բնաւ քեզմէ օգնութիւն չուզեցինք. էրիկս գործունեայ և աշխատասէր է, և քիչով գոհ կ'ըլլանք. բայց Աստուծոյ ձեռքը ծանրացեր է հիմա վրանիս: Երկու տարի կայ որ էրիկս պաշտօնէն զրկուեցաւ. և այն դժբաղդ դիպուածէն վերջը, խոստմունքներով ու յոյսերով կ'ապրինք: Վեց ամսէ 'ի վեր ուզեցինք պզտի վաճառականութեան մը ձեռք զարնել, և ասոր համար ստըկի գումար մը փոխ առինք. բայց նենգաւոր մարդ մը խաբեց զմեզ և ամէն բան կորսնցուցինք: Էրիկս փոխ առած ստակը հատուցանել չկրնալուն համար բանտի մէջ փակուած է. զաւակներէս մէկը հիւանդանոցն է, և կա-

րասիքնիս ուրբաթ օրը ծախու պիտի հանեն . վաղը չէ մէկալ օր տնէս պիտի վառնտուիմ . ոչ ստակ ունիմ , ոչ հաց : և մեծ տազնապի մէջ եմ էրկանս համար որուն պատիւը վտանգի մէջ է , զաւկիս համար որ հիւանդանոցին մէջ կը մեռնի , մէկալ զաւկիս համար որ պարապ տեղը մօրմէն հաց կ'ուզէ , և որ երկու օրէն ինձի պէս փողոցը մնացած՝ քարերը իրեն անկողին պիտի ունենայ : Ո՛հ , խաթուն , ասանկ դիպուածներու մէջ կրնամ մոռնալ որ քու և իմ զաւկրներս նոյն արիւնէն են : Դու որ մայր ես , կրնամ անմխիթար թողուլ զմայր մը , խեղճ կին մը » :

Կնկան իրենց ազգականութիւնը յիշելուն վրայ Վ ալպուրկ խաթունին սիրտը վերաւորուած , ու իրեն նախատինք սեպելով , բարկութիւնը բռնկեցաւ ու

— « Ի՛նչ ճար կրնամ ընել այդ բաներուն , պատասխանեց խոտութեամբ մը :

— Տիկին , կրկնեց խեղճ կնիկը յորդ արցունք թափելով , այս է քեզմէ խնդրած շնորհքս . մեզի եօթը հարիւր ֆրանգ փոխտուր , որով ազատեմ բանտէն էրիկս , տղաս հիւանդանոցէն հանեմ և մեր բնակութեան վարձքը հատուցանեմ . . . Մտածէ մէյ մը թէ ի՛նչ օրհնութիւններ պիտի կարդանք քեզի . . . որ զմեզ թշուառութեանց ու նախատանաց վէէն պիտի խալըսես » :

Քանի մը վայրկեան Վ ալպուրկ խաթու

նէն պատասխանի սպասելէն վերջը , աս
առաւ .

— « Ապերտիտներու փոխ տալու ստակ
չունիմ . թէ որ էրիկդ այսչափ ատեն դա-
տարկ չանցընէր կեանքը , այս վիճակին
մէջ չէիք խնար . մի յուսար որ ծուլու-
թիւնը վարձատրելու համար ստակս զո-
հեմ : Կրնաս առնել քալել . ինչպէս որ
դուք ձեզմով այն թշուառութեան մէջ ին-
կաք , նայեցէք որ ձեզմով ալ անկէ խա-
լըսիք : Ալ մի կարծեր որ խօսքերուդ ա-
կանջ պիտի կախեմ , մեծապէս կը սխա-
լիս : Զիմացար որ դուրս ելիր ըսի . ահա
դուռը » :

Այս նախատական խօսքերէն՝ արտա-
սուաց հեղեղներ կ'իջնային խեղճ կնկանը
աչքերէն . առջի բերան ցաւէն կը կարծէր
որ կը խղզուի , բայց յետոյ բարկու-
թեամբ վառուելով՝ Վալպուրկ խաթու-
նին մօտեցաւ ու գլուխը վեր առած ըսաւ .

— « Ա՛հ , տիկին , բաւական չեղաւ քեզի
թշուառ մօր մը հետ ծառաներուդ ձեռքով
ատանկ դէշ վարուիլը . հապա դու քու
բերնովդ ալ կը նախատես իր խեղճութիւ-
նը , և շան մը պէս դռնէդ դուրս կը վռն-
տես : Մոռցեր ես քուկին բուն պատմու-
թիւնդ . մոռցեր ես որ էրիկդ իմ եղբայրս
էր , և վայրած հարստութիւններուդ կէսը
ինձմէ անիրաւութեամբ յափշտակուած է :
Պիտես , ամբարտաւան կնիկ , որ դու բան
մը չունիս աշխարհիս վրայ , և ըրածդ ու-

րիչ քան չէ բայց եթէ այն հարստութեան
եկամուտներն առնել, որուն իրաւունքը
ինծի քան թէ քեզի կ'իյնայ, և զոր չես
կրնար իրաւամբք ժառանգել քանի որ ես
կամ ։

Վալպուրկ խաթունը որ բարկութենէն
բազմոցին վրայ ինկած էր, վեր ցառքեց
և ահեղ ձայնով մը պոռաց .

— « Յիմար, ինչ նախատական գրպար,
տութիւն կ'ընես վրաս ։

— Զրպարտութիւն, առաջ տարաւ կը-
նիկը խօսքը, գրպարտութիւն : Հօրեղբօրս
կտակը եղբայրս ու զիս իրեն ժառանգ չէր
ընէր . դու չէիր որ անզգամ խորհուրդնե-
րովդ գրգռեցիր եղբայրս՝ ինծի ինկած մա-
սը ձեռքէս խլելու : Այո, եղածն աս է,
և հօրեղբօրս կենաց վերջին օրերը, դու
և եղբայրս իրեն տունը գրաւեցիք . աս ալ
համարձակեցար ըսելու որ ինքը զիս չու-
զեր տեսնել, ինքն որ մեռեր է զիս իրեն
սիրելի զաւակը կանչելով : Զարիք մնաց
որ վրաս չխօսէիր, ազնիւ խաթուն . ինչ
գրպարտութիւններ չըրիր իմ վրաս որպէս
զի երկրորդ կտակ մ'ալ ձեռք ձգես բարի
հօրեղբօրմէս, և բոլորովին գրկես զիս այն
ստացուածքներէն, զորոնք վրաս ունե-
ցած սիրոյն համար ինծի ձգեր էր : Ամէն
քան աղէկ գիտեմ . վասն զի մահուան ան-
կողնոյն քով ներեցի եղբօրս և հաշտուե-
ցայ իրեն հետ : Աւելի տկար էր եղբայրս
քան թէ յանցաւոր . . . : Դու միայն, տի-

կին , դու միայն դիս նենգութեամբ կողոպտեցիր ստացուածքներէս , և մեր վրայ ունեցած խիստ ատելութիւնդ իսկ այս բանիս մեծ ապացոյց է ։

Վալպուրկ խաթունը կատաղութենէն ինքզինքը կ'ուտէր . արիւնը գլուխը ցատքեց և սպառնական յանդիմանութեամբ մը պոռաց .

— « Ի՞նչ . կողոպտեցի՞ ես զքեզ . ես զքեզ կողոպտեցի . այ անզգամ . շուտ կորսուէ՞ քովէս , չէ՞ նէ՛ ըսածիդ պէս՝ շան պէս դռնէս դուրս կը նետեմ : Եկար տունս աւերաւ զբարտութիւններովդ պղծելու : Քնա կորսուէ . ուզես չուզես այս զանգաւ կը հիմա զքեզ դուրս կը հանէ :

— Չայնդ քեզի քաշէ , տխուր հանգարաութեամբ մը կանչեց երիտասարդ կնիկը . անիրաւութեան վրայ բռնութիւնը մ'աւելցըններ . և մի կարծեր որ աղաչանքներովս քեզմէ պաղատած շնորհքս , զոր ժխտեցիր , ջանամ յանդիմանութիւններովս ձեռք ձգել . առջևս ոսկիէ կոյտեր ալ գիզես , ժողվելու համար ձեռքերս չեմ պղծեր . ստակդ ալ քեզի ըլլայ՝ ախտերդ ալ : Ես իմ նեղութեանցս մէջ գոնէ այս ուրախութիւնն ունիմ որ հարուստ խաթունէ մը աւելի արժանի եմ պատուոյ , որ ամբողջ ընտանիք մը թշուառութեանց մէջ ընկղմելը յանցանք չսեպեր » :

Վալպուրկ խաթունը անպատասխանի մնաց այս յանդիմանութիւններուն դէմ .

բայց աչուրները կը մատնէին իր ստատիկ կատաղութիւնը . և վախնալով որ չըլլայ թէ աւելի մեծ գայթակղութիւն մը պատճառէ, ձեռքը առաջ չգնաց զանգակը զարներլու, և սկսաւ նորէն մտիկ ընել կնկանը :

— « Զըլլայ թէ մոռնաս, ըսաւ Կարողինա, հօրեղբօրս կտակին խօսքերը . բոլոր այս ստակներն որ այսօր տղաքդ կը ժառանգեն, իմիններուս պիտի դառնան եթէ քու զաւկըներդ իմ զաւկըներէս առաջ զաշխարհ թողուն . և այսպէս թէ որ Աստուած ուզէ, քու կենդանութեամբդ իսկ հարստութիւններդ կրնամ ես առնել » :

Այս խօսքերէս՝ հեզնական կերպով մը ժպտեցաւ Վալպուրկ խաթունը . կարծես թէ ծանր բեռէ մը խալըսեցաւ :

— « Կնիկ, ըսաւ ուժով ձայնով մը, խելքդ թռուցեր ես . իրաւ կ'ըսեմ որ խելքդ գըլխէդ գացեր է . աս որ կը տեսնեմ, խենթ նախատինքներուդ ալ ներում կու տամ : Ի՞նչ, յիմարութեամբ միտքդ դրեր ես որ քու ողորմելի տղաքդ իմ առողջ և կայտառ զաւկըներէս աւելի պիտի ապրին : Կը խաբուիս :

— Տիկին, պատասխանեց թշուառ մայրը, ան որ սրտերուն խորը կը կարգայ՝ կը տեսնէ իմ սիրտս ալ, և գիտէ որ ես աններելի յանցանք կը սեպեմ քու սիրելի և անմեղ զաւկըներէդ մէկուն մահը փափաքիլը : Ո՛հ, չէ, այդ բազմաթիւ յաջորդներդ անփորձ պահեն երկինք : Բայց դու,

խաթուն, ինչո՞ւ անկարելի կը կարծես որ Աստուած իր ձեռքը աշխարհիս հարուստներուն և երջանիկներուն վրայ տարածէ : Ուրեմն միայն խեղճները կը շարչարէ Աստուած : Ուրեմն չես վախեր ազոցդ համար . . . գիրենք չես սիրեր ուրեմն : Ես որ խեղճ մայր մըն եմ, շատ անգամ վախով ի՞մ երկու հիւանդ և տկար խեղճ տղոցս վրայ կը նայիմ. վասն զի կը վախեմ երկնքին մեզի նոր խրկած հարուածէն, այն ահաւոր հարուածէն՝ որուն կոտորածները շատ են » :

Վալպուրկ խաթունը երիտասարդ կընկան բողոքներուն դադրելէն հանդարտած, ծաղրական կերպով մը ըսաւ .

— « Յած աստիճանի մարդիկը միշտ Աստուծոյ վրայ կը խօսին . թերևս այս իրենց գիւրին մխիթարութիւն մըն է . բայց 'ի հիմանց քննելով, բնաւ ասիկայ բաները չփոխեր : Տղաքներս խիստ ս'ղջ առողջ են . աղէկ գիտցիր :

— Խաթուն, խաթուն, կանչեց կարողինա, մի հայհոյեր զԱստուած : Քանի մը ամսէ 'ի վեր է որ քանի՛ քանի ընտանիքներու անունն անգամ ջնջեց հարուածը » :

Այս խօսքերու մարդարէական զուրցուածքը խոր տպաւորութիւն մը ըրին Վալպուրկ խաթունին վրայ . գոյնը նետնց և խանդաղատանօք մը հարցուց .

— « Ի՞նչ հարուած, ի՞նչ հարուած է այդ :

— Ո՛հ, տիկին, դու գաւակներդ ինչ-

պէս որ պէտք է չես սիրեր, թէ չէ՝ ահաւոր մազձացաւէն՝ (բօյեբա) զիրենք պահելու համար որչափ ալ հոգ ընելու ըլլայիր գոհ չէիր ըլլար » :

Գող մը մտաւ Վալպուրի խաթունին ոսկրներուն մէջ, և սարսափման նշանները կը մատնէին զինքը . բայց մէկէն ամբողջով մը իր խռովելուն վրայ զօր տկարութիւն կը կարծէր, առջի կերպն առաւ : Վերջէն դուռը ցուցընելով և զանգակը զարնելով,

— « Վերջին անգամ մ'ալ կը հարցընեմ քեզի, ըսաւ, տունէս պիտի երթաս թէ չէ : Չանձրացայ ողբերէդ . թէ որ վառնտուիլ չես ուզեր նէ, ելիր բանդ գնա, ու ալ տունս մի հանդիպիր . վասն զի քեզի համար ասկէց վերջը դուռս գոց է :

— Կ'երթամ, կ'երթամ, պատասխանեց երիտասարդ կնիկը, դէպ'ի դուռն երթալով . մնաս բարով :

Երբոր Վալպուրի խաթունը մինակ մնաց, որչափ որ ալ ջանաց՝ չկրցաւ մտքէն հանել մազձացաւին գէշ գաղափարը . երիտասարդ կնկան խօսքերը մէկիկ մէկիկ նօրէն կը հնչէին ականջին մէջ, և ծանր մտածութեանց մէջ ընկզմեցին զինքը : Երկու անգամ զարկաւ դարձեալ զանգակը, վասն զի առջի անգամուան պատասխան չտուաւ ծառան : Վերջապէս երեցաւ . բայց անանկ դէմքը փոխուած՝ երեսին դոյնը նետած էր և շարժմունքներն

ալ անանկ դողդոջուն , որ վալպուրկ խաթունը զինքը տեսնալուն պէս , կանչեց .

— « Պետրոս , ինչ է , ինչու գոյնդ նեւտեր է :

— Խաթուն , պատասխանեց Պետրոս խեղճ ձայնով մը , չեմ համարձակիր ըսելու գլուխնիս գալու թշուառութիւնը :

— Ըսէ , Պետրոս , ըսէ , քեզի հրաման , խօսքը կտրելով վրայ բերաւ վալպուրկ խաթունը :

— Տիկին , մաղձացաւը մօտ է , Պ . Դէսքնիէին տանը մէջ անոր վիկտոր տղան , որ գեռ այս առտու զիս բարևեց , մեռեր է . . . »

Աս սոսկալի լուրը բոլոր աշխարհային գաղափարները դուրս վռնտեց վալպուրկ խաթունին սրտէն , ու մայրենի սէրն արթընցած՝ անոր տեղը բռնեց . ձեռուրները մէկմէկու զարկաւ ու կանչեց .

— « Աստուած իմ , զաւկըներս : Շուտ , Պետրոս , հոս բեր զաւկըներս . կանչէ իրենց վերակեցուն և խուցիս աղախինը :

— Խաթուն , սպատասխան տուաւ ծառան Իւլի տխրութեամբ , տղաքդ պարտէզն են ու առողջ կը տեսնուին . երթա՛մ տեսնա՛մ : Բայց աղախիններդ՝ խոհակեր կնկանը լացերէն զարհուրած , տունէդ փախան . և փուճ բան է զիրենք փնտռելու երթալը » :

Դիւրին է վալպուրկ խաթունին նեղութիւնն ու բարկութիւնը ըմբռնել տեսնելու :

տաց մէջ ինկած : Գթա խեղճի մը որ ոտքդ
ինկած օգնութիւնդ կը խնդրէ » :

Անզգայ կլոգիլտը չոքած թողուց խեղճ
կինը և քանի մը քայլ հեռացաւ . վերջը
նորէն ձեռք առաւ գիրքն ու կեղծ հան-
դարտութեամբ մը ըսաւ .

— « Ատեն չունիմ այդ ողբերը մտիկ ը-
նելու . թէ որ ինձմէ շնորհք մը կը խըն-
դրես , այդ խեղճ կերպերով մի յուսար
վախճանիդ հասնելու . բայց որովհետև
պատմութիւնդ լսելէն ազատիլը անկարելի
է , շուտ ատոր ծայրը տեսնանք » :

Յայտնի էր որ այս կծու խօսքերը սաս-
տիկ կը վիրաւորէին խեղճ կնկան սիրտը .
բայց անտարակոյս ծածուկ պատճառ մը
կը պարտաւորէր զինքը համբերելու , և
կարծես թէ վշտացեալ դէմքը այս կ'ըսէր .
Աստուած իմ , Աստուած իմ , պէտք է որ
յանձն ագնում այս նախատինքները : Ոտք
եղաւ և տաքութեամբ մը ըսաւ .

— « Խաթուն , մեծ հարկաւորութենէ մը
ստիպուած այս քայլս կ'ընեմ , վասն զի
գիտեմ որ ազգականութեամբս որով կա-
պուած ենք իրարու՝ քեզի աւելի ատելու-
թեան առիթ եմ քան թէ գթութեան :
Բայց կ'աղաչեմ գթա վրանիս . փրկէ ըզ-
մեզ նախատինքէ և թշուառութենէ : Ան-
կարեկիր մի ըլլար աղաչանքներուս . . . և
ես անունդ կ'օրհնեմ հրեշտակի մը անուան
պէս » :

Վաչպուրկ խաթունը պատասխան տա-

լու տեղ՝ սեղանին վրայէն արծաթէ զանգակիկն առաւ, և երկու իրեք անգամ զարնելով,

— « Պետրոս, ըսաւ ծառային երբ ներս մտաւ, գնա ըսէ որ կառքս լծեն » :

Եւ խեղճ կնկանը դառնալով,

— « Կը տեսնես որ, ըսաւ, եթէ ատանկ շարունակես, ատեն չունիմ ինչուան վերջը քեզի ականջ կախելու : Երևտ ըրէ, կարճ խօսէ » :

Թեթև կարմրութիւն մը, ներքին բարկութեան նշան, երևցաւ խեղճ կնկան երեսներուն վրայ. բայց բարկութիւնը զսպելով, սկսաւ ըսել երագութեամբ .

— « Խաթուն... քոյրս... դիտես որ թէ՛ պէտ շատ անգամ կարօտութիւն ունեցանք, բայց բնաւ քեզմէ օգնութիւն չուզեցինք . էրիկս գործունեայ և աշխատասէր է, և քիչով գոհ կ'ըլլանք . բայց Աստուծոյ ձեռքը ծանրացեր է հիմա վրանիս : Երկու տարի կայ որ էրիկս պաշտօնէն զրկուեցաւ . և այն դժբաղդ դիպուածէն վերջը, խոստմունքներով ու յոյսերով կ'ապրինք : Ա՛եց ամսէ 'ի վեր ուզեցինք պզտի վաճառականութեան մը ձեռք զարնել, և ասոր համար սարկի գումար մը փոխ առինք . բայց նենգաւոր մարդ մը խաբեց զմեզ և ամէն բան կորսնցուցինք : Էրիկս փոխ առած ստակը հատուցանել չկրնալուն համար բանտի մէջ փակուած է . զաւակներէս մէկը հիւանդանոցն է, և կա-

բասիքնիս ուրբաթ օրը ծախու պիտի հանեն . վաղը չէ մէկալ օր տնէս պիտի վորն տուիմ . ոչ ստակ ունիմ , ոչ հաց , և մեծ տազնապի մէջ եմ էրկանս համար որուն պատիւը վտանգի մէջ է , զաւկիս համար որ հիւանդանոցին մէջ կը մեռնի , մէկալ զաւկիս համար որ պարսապ տեղը մօրմէն հաց կ'ուզէ , և որ երկու օրէն ինձի պէս փողոցը մնացած՝ քարերը իրեն անկողին պիտի ունենայ : Ո՛հ , խաթուն , ասանկ դիպուածներու մէջ կրնամ մոռնալ որ քու և իմ զաւկըներս նոյն արիւնէն են : Դու որ մայր ես , կրնամ անմխիթար թողուլ զմայր մը , խեղճ կին մը :

Կնկան իրենց ազգականութիւնը յիշելուն վրայ Վալպուրկ խաթունին սիրտը վերաւորուած , ու իրեն նախատինք սեպելով , բարկութիւնը բռնկեցաւ ու

— « Ի՛նչ ճար կրնամ ընել այդ բաներուն , պատասխանեց խտուրթամբ մը :

— Տիկին , կրկնեց խեղճ կնիկը յորդ արցունք թափելով , այս է քեզմէ խնդրած շնորհքս . մեզի եօթը հարիւր Ֆրանգ փոխտուր , որով ազատեմ բանտէն էրիկս , տղաս հիւանդանոցէն հանեմ և մեր բնակութեան վարձքը հատուցանեմ . . . Մտածէ մէյ մը թէ ինչ օրհնութիւններ պիտի կարդանք քեզի . . . որ զմեզ թշուառութեանց ու նախատանաց վէէն պիտի խալըսես » :

Քանի մը վայրկեան Վալպուրկ խաթուն

նէն պատասխանի սպասելէն վերջը , աս
առաւ .

— « Ապերախտներու փոխ տալու ստակ
չունիմ . թէ որ էրիկդ այսչափ աւան դա-
տարկ չանցընէր կեանքը , այս վիճակին
մէջ չէիք իյնար . մի յուսար որ ծուլու-
թիւնը վարձատրելու համար ստակս դո-
հեմ : Կրնաս առնել քալել . ինչպէս որ
դուք ձեզմով այն թշուառութեան մէջ ին-
կաք , նայեցէք որ ձեզմով ալ անկէ խա-
լըսիք : Ալ մի կարծեր որ խօսքերուդ ա-
կանջ պիտի կախեմ , մեծապէս կը սխա-
լիս : Չիմացար որ դուրս ելիր ըսի . ահա
դուռը » :

Այս նախատական խօսքերէն՝ արտա-
սուաց հեղեղներ կ'իջնային խեղճ կնկանը
աչքերէն . առջի բերան ցաւէն կը կարծէր
որ կը խղզուի , բայց յետոյ բարկու-
թեամբ վառուելով Վալպուրկ խաթու-
նին մօտեցաւ ու դլուխը վեր առած ըսաւ .

— « Ա՛հ , տիկին , բաւական չեղաւ քեզի
թշուառ մօր մը հետ ծառաներուդ ձեռքով
ատանկ դէչ վարուիլը . հապա դու քու
բերնովդ ալ կը նախատես իր խեղճութիւ-
նը , և շան մը պէս դռնէդ դուրս կը վառն-
տես : Մոռցեր ես քուկին բուն պատմու-
թիւնդ . մոռցեր ես որ էրիկդ իմ եղբայրս
էր , և վայլած հարստութիւններուդ կէսը
ինձմէ անիրաւութեամբ յափշտակուած է :
Գիտես , ամբարտաւան կնիկ , որ դու բան
մը չունիս աշխարհիս վրայ , և ըրածդ ու-

րիչ քան չէ բայց եթէ այն հարստութեան
եկամուտներն առնել, որուն իրաւունքը
ինծի քան թէ քեզի կ'իյնայ, և զոր չես
կրնար իրաւամբք ժառանգել քանի որ ես
կամ» :

Վալպուրկ խաթունը որ բարկութենէն
բազմոցին վրայ ինկած էր, վեր ցառքեց
և ահեղ ձայնով մը պոռաց .

— « Յիմար, ինչ նախատական գրպար-
տութիւն կ'ընես վրաս :

— Զրպարտութիւն, առաջ տարաւ կը-
նիկը խօսքը, գրպարտութիւն : Հօրեղբօրս
կտակը եղբայրս ու զիս իրեն ժառանգ չէր
ընէր . դու չէիր որ անողգամ խորհուրդնե-
րովդ գրգռեցիր եղբայրս՝ ինծի ինկած մա-
սը ձեռքէս խլելու : Այո, եղածն աս է,
և հօրեղբօրս կենաց վերջին օրերը, գու
և եղբայրս իրեն տունը գրաւեցիք . աս ալ
համարձակեցար ըսելու որ ինքը զիս չու-
զեր տեսնել, ինքն որ մեռեր է զիս իրեն
սիրելի զաւակը կանչելով : Զարիք մնաց
որ վրաս չխօսէիր, ազնիւ խաթուն . ինչ
գրպարտութիւններ չըրիր իմ՝ վրաս որպէս
զի երկրորդ կտակ մ'ալ ձեռք ձգես բարի
հօրեղբօրմէս, և բոլորովին զրկես զիս այն
ստացուածքներէն, զորոնք վրաս ունե-
ցած սիրոյն համար ինծի ձգեր էր : Ամէն
քան աղէկ գիտեմ. վասն զի մահուան ան-
կողնոյն քով ներեցի եղբօրս և հաշտուե-
ցայ իրեն հետ : Աւելի տկար էր եղբայրս
քան թէ յանցաւոր . . . : Դու միայն, տի-

կին , դու միայն զիս նենգութեամբ կողոպտեցիր ստացուածքներէս , և մեր վրայ ունեցած խիստ ատելութիւնդ իսկ այս բանիս մեծ ապացոյց է » :

Վալպուրկ խաթունը կատաղութենէն ինքզինքը կ'ուտէր . արիւնը գլուխը ցատքեց և սպառնական յանդիմանութեամբ մը պոռաց .

— « Ի՛նչ . կողոպտեցի՞ ես զքեզ . ես զքեզ կողոպտեցի . այ անզգամ . շուտ կորսուէ՛ բովէս , չէ՛ նէ՛ ըսածիդ պէս՝ շան պէս գռնէս դուրս կը նեաեմ : Եկար տունս անիրաւ գրպարտութիւններովդ պղծելու : Գնա կորսուէ . ուզես չուզես այս զանգաւ կը հիմա զքեզ դուրս կը հանէ :

— Չայնդ քեզի քաշէ , տխուր հանգարաութեամբ մը կանչեց երիտասարդ կնիկը . անիրաւութեան վրայ բռնութիւնը մ'աւելցրներ . և մի կարծեր որ աղաչանքներովս քեզմէ պաղատած շնորհքս , զոր ժխտեցիր , ջանամ յանդիմանութիւններովս ձեռք ձգել . առջևս ոսկիէ կոյտեր ալ դիզես , ժողվելու համար ձեռքերս չեմ պղծեր . ստակդ ալ քեզի ըլլայ՝ ախտերդ ալ Ես իմ նեղութեանցս մէջ գոնէ այս ուրախութիւնն ունիմ որ հարուստ խաթունէ մը աւելի արժանի եմ պատուոյ , որ ամբողջ ընտանիք մը թշուառութեանց մէջ ընկղմելը յանցանք չսեպեր » :

Վալպուրկ խաթունը անպատասխանի մնաց այս յանդիմանութիւններուն դէմ .

բայց աչուրները կը մատնէին իր սաստիկ կատաղութիւնը . և վախնալով որ չըլլայ թէ աւելի մեծ գայթակղութիւն մը պատճառէ, ձեռքը առաջ չգնաց զանգակը զարնելու, և սկսաւ նորէն մտիկ ընել կնկանը :

— « Զըլլայ թէ մոռնաս, ըսաւ կարողինա, հօրեղբօրս կտակին խօսքերը . բոլոր այս ստակներն որ այսօր տղաքդ կը ժառանգեն, իմիններուս պիտի դառնան եթէ քու զաւկրներդ իմ զաւկրներէս առաջ զաշխարհ թողուն . և այսպէս թէ որ Աստուած ուզէ, քու կենդանութեամբդ իսկ հարստութիւններդ կրնամ ես առնել » :

Այս խօսքերէս՝ հեզնական կերպով մը ժպտեցաւ Վալպուրկ խաթունը . կարծես թէ ծանր բեռէ մը խալըսեցաւ :

— « Կնիկ, ըսաւ ուժով ձայնով մը, խելքդ թռուցեր ես . իրաւ կ'ըսեմ որ խելքդ գըլխէդ գացեր է . աս որ կը տեսնեմ, խենթ նախատինքներուդ ալ ներում կու տամ : Ի՛նչ, յիմարութեամբ միտքդ դրիր ես որ քու ողորմելի տղաքդ իմ առողջ և կայտառ զաւկրներէս աւելի՞ պիտի ապրին : Կը խաբուիս :

— Տիկին, պատասխանեց թշուառ մայրը, ան որ սրտերուն խորը կը կարգայ՝ կը տեսնէ իմ սիրտս ալ, և գիտէ որ ես աններելի յանցանք կը սեպեմ քու սիրելի և անմեղ զաւկրներէդ մէկուն մահը փափաքիլը : Ո՛հ, չէ, այդ բազմաթիւ յաջորդներդ անփորձ պահեն երկինք : Բայց դու,

խաթուն, ինչո՞ւ անկարելի կը կարծես որ Աստուած իր ձեռքը աշխարհիս հարուստներուն և երջանիկներուն վրայ տարածէ : Ուրեմն միայն խեղճները կը շարչարէ Աստուած : Ուրեմն չես վախեր ազոցդ համար . . . գիրենք չես սիրեր ուրեմն : Ես որ խեղճ մայր մըն եմ, շատ անգամ վախով իմ երկու հիւանդ և տկար խեղճ տղոցս վրայ կը նայիմ. վասն զի կը վախեամ երկնքին մեզի նոր խրկած հարուածէն, այն ահաւոր հարուածէն՝ որուն կոտորածները շատ են » :

Վալպուրի խաթունը երիտասարդ կընկան բողոքներուն դադրելէն հանդարտած, ծաղրական կերպով մը ըսաւ .

— « Յած աստիճանի մարդիկը միշտ Աստուծոյ վրայ կը խօսին . թերևս այս իրենց գիւրին մխիթարութիւն մըն է . բայց 'ի հիմանց քննելով, բնաւ ասիկայ բաները չփոխիր : Տղաքներս խիստ սղջ առողջ են . աղէկ գիտցիր :

— Խաթուն, խաթուն, կանչեց կարուլինա, մի հայհոյեր զԱստուած : Քանի մը ամսէ 'ի վեր է որ քանի՛ քանի ընտանիքներու անունն անգամ ջնջեց հարուածը » :

Այս խօսքերուս մարգարէական զուրցուածքը իւր տպաւորութիւն մը ըրին Վալպուրի խաթունին վրայ . գոյնը նետնեց և խանդաղատանօք մը հարցուց .

— « Ի՞նչ հարուած, ի՞նչ հարուած է այդ :

— Ո՛հ, տիկին, դու զաւակներդ ինչ-

պէս որ պէտք է չես սիրեր, թէ չէ՝ ահաւոր մաղձացաւէն՝ (քօյերա) գիրենք պահելու համար որչափ ալ հոգ ընելու ըլլայիր գոհ չէիր ըլլար » :

Դողմը մտաւ Վալպուրկ խաթունին ոսկրներուն մէջ, և սարսափման նշանները կը մատնէին զինքը . բայց մէկէն ամբողջութիւն կը կարծէր, առջի կերպն առաւ : Վերջէն դուռը ցուցնելով և զանգակը զարնելով,

— « Վերջին անգամ մ'ալ կը հարցընեմ քեզի, բռաւ, տունէս պիտի երթաս թէ չէ : Չանձրացայ ողբերէդ . թէ որ վռնտուիլ չես ուզեր նէ, ելիր բանդ գնա, ու ալ տունս մի հանդիպիր . վասն զի քեզի համար ասկէց վերջը դուռս գոց է :

— Կ'երթամ, կ'երթամ, պատասխանեց երիտասարդ կնիկը, դէպ'ի դուռն երթալով . մնաս բարով » :

Երբոր Վալպուրկ խաթունը մինակ մնաց, որչափ որ ալ ջանաց՝ չկրցաւ մտքէն հանել մաղձացաւին գէշ գաղափարը . երիտասարդ կնկան խօսքերը մէկիկ մէկիկ նօրէն կը հնչէին ականջին մէջ, և ծանր մտածութեանց մէջ ընկղմեցին զինքը : Երկու անգամ զարկաւ դարձեալ զանգակը, վասն զի առջի անգամուան պատասխան չտուաւ ծառան : Վերջապէս երկացաւ . բայց անանկ դէմքը փոխուած՝ երեսին դայնը նետած էր և շարժմունքներն

ալ անանկ դողդոջուն , որ Վալպուրկ խաթունը գինքը տեսնալուն պէս , կանչեց .

— « Պետրոս , ինչ է , ինչու գոյնդ նեւտեր է :

— Խաթուն , պատասխանեց Պետրոս խեղճ ձայնով մը , չեմ համարձակիր ըսելու գլուխնիս գալու թշուառութիւնը :

— Ըսէ , Պետրոս , ըսէ , քեզի հրաման , խօսքը կտրելով վրայ բերաւ Վալպուրկ խաթունը :

— Տիկին , մաղձացաւը մօտ է , Պ . Դէսքնիէին տանը մէջ անոր Վիկտոր տղան , որ գեռ այս առտու զիս բարևեց , մեռեր է . . . »

Աս սոսկալի լուրը բոլոր աշխարհային գաղափարները դուրս վռնտեց Վալպուրկ խաթունին սրտէն , ու մայրենի սէրն արթընցած՝ անոր տեղը բռնեց . ձեռուրները մէկմէկու զարկաւ ու կանչեց .

— « Աստուած իմ , զաւկըներս : Շուտ , Պետրոս , հոս բեր զաւկըներս . կանչէ իրենց վերակեցուն և խուցիս աղախինը :

— Խաթուն , սպտասխան տուաւ ծառան Իււրի տխրութեամբ , տղաքդ պարտէզն են ու առողջ կը տեսնուին . երթամ տեսնամ : Բայց աղախիններդ՝ խոհակեր կնկանը լացերէն զարհուրած , տունէդ փախան . և փուճ բան է զիրենք փնտռելու երթալը » :

Դիւրին է Վալպուրկ խաթունին նեղութիւնն ու բարկութիւնը ըմբռնել տեսնել .

լով ինքզինքը զրկուած այն ծառայութիւններէն որոնց վարժած էր . բայց իմանալով որ զաւկըններն առողջ են, քաջալերուեցաւ :

Տղաքը ցատքըռտելով սրահը մտան՝ ամէնքն ալ խնտումերես մօրերնէն կանչուելնուն համար, և իրենց զգուանքներով մօրերնուն ճակտին տխրութիւնը փարատեցին : Սակայն դիտեց Վալպուրկ որ իր անդրանիկը ամենէն վերջն եկաւ և սովորականին պէս ալ զուարթ չէր : Այնպիսի ջերմ գորովով գրկեց վեց տղաքն ալ, որ մինչև ան ատեն ըրած չէր : Բայց կամոց կամաց անդրանկին երեսին վրայ տօգունութիւն մը կը պատէր : Ահեղ գուշակութիւն մը մօրը սիրտը տակնուվրայ ըրաւ, ու

— « Հիւանդ ես, սիրելի տղաս, հարցուց :

— Չէ, մայրիկ, պատասխանեց տղան . բայց տկանջներս կը խօսին . աչուրներու առջև ալ լոյսեր կը տեսնեմ : . . . Ա՛հ, հիմա բան մը ունիմ » :

Վալպուրկ խաթունը խենթի պէս վազեց, կանչեց ծառան, որ մէկէն ածապարեց եկաւ :

— « Պետրոս, ըսաւ, Եւզինէսը մաղձացաւէն բռնուեր է . . . Շո՛ւտ բժիշկ մը հասցուր, որն որ ալ դիմացդ ելլայ . քանի հատ ալ որ գտնաս հոս խրկէ . նայէ որ աւելի Պ . Շիրբէրսը գտնաս . ծառայող կը-

նիկ մ'ալ գտիր ինձի : Ո՛հ, Պետրոս, կ'աղա-
չեմ, վազէ , շուտ ըրէ , վարձքդ ինձմէ ։

Ծառան մէկէն թռաւ անհետացաւ , և
Վալպուրկ խաթունը տղոց քով դարձաւ .
բայց ի՛նչ ողորմ ձայն էր որ սրտէն ելաւ .
անդրանիկը գետնին վրայ տարածուած ,
անդամները կը պաղէին , ոտուրները սաս-
տիկ կը դողդըղային , աչուրներն ալ խորը
մտած , կենդանի դիակի մը կը նմանէր :

Ա՛հ , թէ որ տեսնէր մէկը այն մայրը իր
տղուն վրայ ինկած , ու խեղճ զաւկին
տփզոյն դէմքը իր արցունքներով թրջելը ,
թէ որ տեսնէր անոր՝ տղուն կապուտցած
չրթանցը տուած համբոյրները ու ջանքն իր
հոգւոյն մէկ մասը այն հիւանդ մարմնոյն
մէջ փոխադրելու , թէ որ տեսնէր անոր
յուսահատութենէն խելքը թռուցած ոտք
ելլալն ու վազելը հիւանդ զաւակը գիրկը
սրահին չորս կողմը , իբր ուզելով մա-
հուան ձեռքէն ազատել զայն , ու թէ որ
լսէր այն ողորմուկ և կատաղի ձայները
որոնք յարկը կը թնդացընէին , իրաւ որ
իր կեանքը կը դնէր այնպիսին այդ կնի-
կը իր մահացու վշտերէն փրկելու համար :
Բայց մահուան ճիրանացը դէմ զօրաւոր
վահան չէ մօր մը սէրը : Սառեցաւ տղան
մայրենի բազուկներուն մէջ որ խանդա-
ղատանօք գրկեր էին զինքը . թուովեցան ե-
րեսները իբրև թէ միսը մորթին տակ հա-
լած ըլլար . իր պզտի մատուրները խոր-
շովեցան , իբրև թէ յանկարծական կրակէ

մը այրած ըլլային . և ո՛հ , աչքերն ալ չոր-
ցան ու ցամքեցան : Սակայն տղան ոչ զգաց-
մունքը և ոչ խելքը կորուսեր էր , վասն
զի իր ցաւոցը մէջն ալ գգուանքներովը
մօրը սիրոյն կը պատասխանէր , և բիւրե-
ղի նման սուր ձայնով մը կը պոռար .

— « Զո՛ւր , Զո՛ւր . ծարաւի եմ » :

Թշուառ մայրը տղան առած խոհանոց
վազեց , և առջևն եկած Զուրը մէկէն խրմ-
ցուց անոր . վերջը սրահը դարձաւ , միշտ
սրտին ցաւերը սաստկանալով :

Իր խռովութեանը մէջ մէկալ տղոցը ցա-
ւագին ձայները չէր լսած . մանաւանդ թէ
երբ չորս կողմն առած զգեստներուն կը
պլլուէին՝ մէկդի կ'ընէր զանոնք . կը կար-
ծէր որ ոգի մը կը հալածէր զինքը ու կ'ու-
զէր մեռցընել իր զաւակը . իր տղոց գըպ-
չիւններն իսկ կը սարսափեցընէին զինքը :
Վերջապէս ուժէ ինկած , երկուքը մէկտեղ
գորգին վրայ ինկան փռուեցան : Այս
ատենս աղջիկներուն պզտիկներէն մէկը
մօրը քով գնաց և խեղճ ձայնով մը ըսաւ .

— « Ո՛հ , մայրիկ , իմ ականջներս ալ կը
թնդան . . . ես ալ հիւանդ եմ » :

Վալպուրկ խաթունը ցաւագին նայ-
ուածքով մը աղջկանը նայելով , զան ալ
մէկալ թևովը գրկեց . իսկ մէկալնոնք մօ-
րերնուն չորս կողմն առած կու լային կը
հառաչէին :

Մէյ մ'ալ սև հագած մարդ մը սրահին
դուռը երևցաւ , որ այնպիսի միջոց մա-

հուան դեսպանի կը նմանէր . բայց մարդը այս խեղճ տեսարանս տեսնելով, ծռեց գլուխը և աչքերէն վազած արցունքները սրբեց :

— « Թշուառութիւն », ըսաւ հառաչելով :

Այս ձայնէն կարծես թէ Վալպուրկ խաթունն արթնցաւ . ելաւ բռնկին վազեց, առջևն ինկաւ, աղաչաւոր ձեռուրները երկնցուց, և արցունքի հեղեղ մը թափելով կանչեց .

— « Ո՛հ, Պ . Շիրբէրս, գթա վրաս . Աստուծոյ սիրոյն համար ազատէ զաւկըներս մահուան ձեռքէն . տես, ոտքդ ինկած գետնին փոշին կը պագնեմ, գերիի մը պէս : Ա՛հ, ըսէ, պիտի փրկես տղաքս » :

Աճապարեց բծիշկը գինքը վերցընելու . ինքն իսկ կը յուզէր սաստիկ այլայլութեանէ և ինքիրմէ դուրս ելած էր, քիչ մը աւտեն Վալպուրկ խաթունին աչուրներուն մէջ լուսթեամբ նայելէն վերջը՝ կտրբճութիւնը ձեռք առած՝ հիւանդ տղոցը մօտեցաւ .

— « Խեղճ մայր, ըսաւ, երբ պէտք է ես անխռով ըլլամ՝ դու լոցս կը շարժես . հանդարտէ, թերևս երևակայածիդ չափ սաստիկ չէ հիւանդութիւննին . իրաւ որ վրտանգաւոր է մաղձացաւը, բայց ամէն անգամ մահացու չէ . և թէպէտ խիստ գէշ ալ ըլլայ տղոցդ վիճակը, սակայն միշտ յոյս մը ունիմ » :

Նոյն ատեն ծառան ուրիշ բծիշկ մ'ալ բերաւ : Ըսաւ իրեն Պ . Շիրբէրս .

— « Պետրոս, խաթունդ և իր չորս տղաքը ուրիշ խուց մը տար, որչափ կարելի է ասկէ հեռու: . . . Տիկին, պէտք է այս բանս ընես. մի բոլորովին ինքզինքդ տըխրութեան ձեռքը ձգեր. կրնայ այդ տըղոցդ վրայ վնասակար ազդեցութիւն մը ընել » :

Երբ ծառան բժշկին հրամանը կատարել ուզելով իմացուց խաթունին որ զինքը պիտի տանի, վազեց կնիկը իր հիւանդ տղոցը, պլլուեցաւ անոնց հառաչելով ու խեղճ ձայնով մը կանչեց .

— « Եւզինէ՞ոսս, Վիրգինիանս. աս վերջին բարևս է. Աստուած իմ, ալ պիտի չըտեսնեմ զիրենք » :

Քիչ մնաց որ դողդըղալէն նստարանին վրայ պիտի իյնար, եթէ չգրկէր ծառան ու հեռու խուց մը շտանէր. հոն՝ անշնչացածի պէս աթոռի մը վրայ ինկաւ, դէպ ՚ի կուրծքը ծռեց գլուխը և բնաւ շարժմունք չէր ընէր. միայն երբեմն երբեմն ձեռքը կը շարժէր ապահով ըլլալու համար թէ զաւկըները չորս կոճմն են թէ չէ :

Ծառան թողուց իր տիկինը և բժիշկներուն օգնելու գնաց. բայց անոնք նորէն զինքը մէկէն Վալպուրկ խաթունին քով խրկեցին : Կամացուկ մը տիկնոջը մօտեցաւ ու մէկգի առաւ անկէ անդրանիկ աղջիկն, որ հիւանդութեան նշաններ կուտար. գոզի պէս ոտքին մատուրներուն վրայ կը քալէր, որպէս զի մայրը չարթըն-

նայ . բայց պարապ տեղը . բացաւ մայրն
աչուրները , սիրտ կտրտող ձայն մը հանե-
լով ծառային առջևը նետուեցաւ ու յա-
փրջտակեց գրկէն իր զաւակը .

— « Կլողիլտ , պոռաց , աչուրները դար-
ձած՝ աղջկանը նայելով , սիրելի Կլողիլտս ,
անուշ դատրիկս . . . դու որ մօրդ անունն
ունիս պիտի մեռնիս . զքեզ մահուն ձեռ-
քը պիտի մատնեմ . . . »

Բայց իմանալով աղջկան տազնապողա-
կան շարժմունքները և տեսնալով որ ա-
չուրները խորն ընկղմեր են ,

— « Կլողիլտ , ըսաւ վերջին յուսահա-
տութեամբ , հեղ մըն ալ նայէ քու մօրդ ,
խեղճ զաւակս . — դուն ալ զիս կը թողուս ,
դու , աչքիս լոյսը : . . . Վայ ինձի . ուրեմն
պէ՛տք է . առ , Պետրոս , ահաւասիկ իմ
ամենէն ազնիւ գանձս . . . մնաս բարով ,
մնաս բարով » :

Դէպ ՚ի բազմոցը վազեց ու հեծեծալով
տարածուեցաւ վրան : Քիչ մը ատեն ան-
շարժ , աչքերը տնկած , թերևս մարած ,
կենալէն վերջը , կարծես թէ նոր կեանք
առաւ . և յայտնապէս ներքին սրտի տազ-
նապ մը շարժեց զինքը . յանկարծ վեր
ցատքեց և ձեռուրները երկինք վերցընե-
լով ծունկի եկաւ . իր շրթուքներէն ելած
ջերմեռանդ աղօթքը չէր հասկըցուէր . թո-
ղութիւն , շնորհք , ունայնութիւն , մեղք ,
բառերը միայն իր հառաչելու միջոցը կը
լսուէին : Այն միջոցին ապաշխարող Մա-

րիամ Մազդազնացւոյն կը նմանէր, և իր անցեալ կենացը մէջ ըրած յանցանքներուն համար արեան արցունքներ կը թափէր: Այս աղօթքը, այս խոստովանութիւնը զոր ուղղակի Աստուծոյ կ'ընէր, երկար քչեց. վերջապէս ոտք ելաւ միշտ նոյնպէս վշտագնեալ, բայց աւելի հանդարտած, ու բարձր ձայնով կանչեց ծառան, որ մէկէն եկաւ.

— « Պետրոս, ըսաւ, ինչպէս են Եւզինէոսը, Վիրգինիան ու Կլոդիլտը. ո՛հ, ըսէ, ճշմարտութիւնը մի ծածկեր »:

Ծառան լալ սկսաւ ու պատասխան չտուաւ:

— « Բաւական է, բաւական է, ըսաւ ցած ձայնով մը, հասկըցայ ցաւդ: Աստուած ասանկ կ'ուզէ. քիչ մը ատեն է որ սորվեցայ զիս իր ամենակարող կամացը հպատակել: Ո՛ւր էր թէ աս խոնարհութեամբս իր շնորհացն ու գթութեանն արժանի ըլլայի. բայց ափսո՛ս, կ'իմանամ որ փորձութիւնս դեռ լմնցած չէ: . . . Պետրոս, սիրելիս, գնա կ'աղաչեմ շուտով գործակալիս տունը. ըսէ որ Պ. Սէդֆէլտին պարտքը վճարէ, որ բանտն է. ան սա քսակն ալ, որուն մէջ քանի մը ոսկի կայ ու Սէդֆէլտ խաթունին, իմ տալիս, տար, որ աս առտու հոս եկաւ, և աղաչէ որ շուտ ընէ տունս գայ. պատմէ իրեն իմ թշուառութիւնս և վիշտերս. կարելի բան չէ որ չգայ. հիմա կը ճանչնամ զինքը »:

Մառան քսակն առաւ ու աներևոյթ եղաւ . Վալպուրկ խաթունն ալ զգալի կերպով աղօթքէն մխիթարուած, մնացած իրեք տղոցը քով զնաց ու մէկիկ մէկիկ աղէկ մը կը զննէր զանոնք . իրենց գծագրութեանը վրայ բնաւ փոփոխութիւն մը չտեսաւ , և այնպէս սկսաւ համբուրել զանոնք՝ որ կը մատնէր իր այլայլութիւնը . կարծես թէ առջի տխրութեանը չափազանց ուրախութիւն մը փոխանակեր էր : Բայց աս ուրախութիւնը քիչ պիտի քչէր . մինչգեռ արթոն վրայ նստած մայրենի գորովով մը իր զաւկընները կը դիտէր հալած աչքով , արդէն անգութ մաղձացաւ իրենց ներսը թափանցեր էր : Մէյ մ'ալ յանկարծ պզգտի Փրետերիկը կապարեայ զանգուածի մը պէս գետինն ինկաւ և սկսաւ խռկալ հանգերձ ահաւոր շարժմունքներով . ոտուրներովը կը զարնէր բազմոցին , և անգամները սաստիկ դողով մը իրարու կը զարնուէին :

Անկարելի բան է խօսքով նկարել թէ ինչ աստիճանի կտրտեցաւ մօրը սիրտը այս տեսարանէն . և դժուարաւ կը համոզուէինք թէ կնիկ մը այսչափ ցաւերու կարենայ համբերել , թէ որ չգիտնայինք թէ ետևէ ետև եղած ցնցմունքները ջղաց ըզգացմունքը կը տկարացընեն : Քանի մը վայրկեան Վալպուրկ խաթունը տղուն վրայ նայելէն , որ գետնին վրայ կը տապալտուէր և ըղունգներովը միսը կը քերէր ,

և անշարժ ու քար կտրածի պէս կեննայէն վերջը՝ ցատքեց յանկարծ, և տղան գրկելով բժիշկներուն կեցած սրահը վազեց :

Հոն միայն ճիշ մը բերնէն ելաւ և շունչը կտրած տղուն հետ մէկտեղ գորգին վրայ տարածուեցաւ : Խեղճ մայր . մէկ նայուածքով իր Եւգինէոսին ու Վիրգինիային դիակները տեսեր էր :

Երբ շատ ատենէ վերջը խելքը գլուխն եկաւ, ինքզինքը առջի սրահին մէջ բազմուցին վրայ նստած գտաւ . երիտասարդ կին մըն ալ իր ձեռքէն բռնած, որ փափուկ խընամբով կը ջանար դինքն 'ի կեանս դարձընելու : Վալպուրկ խաթունը պտըտցուց մէյ մը իր այլայլեալ աչքերը խուցին չորս կողմը, կարծես թէ իր անցեալները միտք բերելու համար, և քովը տեսնելով իր երկու տղաքը, ըսաւ երիտասարդ կնկանը բաւական կտրիճ ձայնով մը .

— « Կարողինա, յանցաւոր եմ քեզի՝ ըրած անգթութեամբս և անիրաւութեամբս . քու խօսքերդ մարգարէութիւն եղան . — կը տեսնես որ թշուառ եմ և լքեալ . վրէժխընդրութիւն ըրաւ ինձի Աստուած և պատժեց զիս՝ իմ սիրելիներէս զրկելով . սակայն կը յուսամ որ զիս մինակ չթողուր : Թերևս իր բարութեամբը պարգևէ ինձի իմ զաւակներէս մէկուն կեանքը . բայց ասոր համար քուններելուդ կարօտ եմ : Ո՛վ քոյր իմ, զիս կուրցընող առագաստը փառատեցաւ աչքերէս . ըսէ, պիտի ներնս քեզի դէմըրած յանցանացս » :

Երիտասարդ կնիկը սկսաւ լալ, և հա-
ռաչանօք ըսաւ .

— « Ո՛հ, տիկին, ես քեզի համար ազօ-
թեցի Աստուծոյ . շատոնցուրնէ ես քեզի
ներած եմ . կ'ըմբռնեմ ցաւդ և վիշտերդ .
վասն զի ես ալ մայր եմ, և եղբօրս զա-
ւակները իմիններուս պէս կը սիրեմ : Ո՛հ,
գրեզ չեմ թողուր ինչուան որ չխալըսենք
զանոնք որոնք կրնան խալըսիլ . մէկտեղ
կ'աղօթենք, և թերևս Ամենակալն իր ո-
ղորմութիւնն իջեցընէ մեր վրայ : Այո, կը
զգամ որ դեռ մայր պիտի ըլլաս, և որոնց
վրայ որ կը գողաս՝ անոնց ծիծաղը նորէն
տեսնալու երջանկութիւնը պիտի ունե-
նաս :

— Ո՛վ կարողինա, ո՛ր էր թէ աս խօսքդ
պէ անցեալ անգամուան պէս ճշմարտէր :
Չես տեսնար ինչպէս Թագուհի աղջիկս
տժգոյն է : Բայց մտիկ ըրէ ինձի առանց
խօսքս կտրելու . արգարութեամբ չվա-
րուեցայ ես քեզի հետ, կարողինա . իրաւ
որ հօրեղբօրդ ժառանգութիւնը յափըչ-
տակեցի . կը խօսատովանիմ որ ունայնա-
միտ, գոռոզ և անգութ կնիկ մը եզայ . . .
ամբարտաւանութիւնը կուրցուցեր էր զիս .
բայց թշուառութիւնն իր հզօր կարողու-
թեամբը կը փարատէ այն խաւարը որ պա-
տեր էր վրաս . առաջինը չեմ հիմա, և եր-
ջանկութիւն կը սեպէի այսօր ինձի՝ թէ որ
բարի սրտովդ յանձն առնէիր քոյր կան-
չել զիս : Կ'ըմբռնեմ հիմա Աստուծոյ կա-

և անշարժ ու քար կտրածի պէս կենալէն վերջը՝ ցատքեց յանկարծ, և տղան գրկելով բժիշկներուն կեցած սրահը վազեց :

Հոն միայն ճիչ մը բերնէն ելաւ և շունչը կտրած տղուն հետ մէկտեղ գորգին վրայ տարածուեցաւ : Խեղճ մայր . մէկ նայուածքով իր էլզգինէոսին ու Վիրգինիային դիակները տեսեր էր :

Երբ շատ ատենէ վերջը խելքը զլուխն եկաւ, ինքզինքը առջի սրահին մէջ բազմոցին վրայ նստած գտաւ . երիտասարդ կին մըն ալ իր ձեռքէն բռնած, որ փափուկ խընամբով կը ջանար զինքն՝ ի կեանս դարձը ներլու : Վալպուրկ խաթունը պառտոցուց մէջ մը իր այլայլեալ աչքերը խուցին չորս կողմը, կարծես թէ իր անցեալները միտք բերելու համար, և քովը տեսնելով իր երկու տղաքը, ըսաւ երիտասարդ կնկանը բաւական կտրիճ ձայնով մը .

— « Կարոյինա, յանցաւոր եմ քեզի՝ ըրած անգթութեամբս և անիրաւութեամբս . քու խօսքերդ մարգարէութիւն եղան . — կը տեսնես որ թշուառ եմ և լքեալ . վրէժխընդրութիւն ըրաւ ինձի Աստուած և պատժեց զիս՝ իմ սիրելիներէս գրկելով . սակայն կը յուսամ որ զիս մինակ չթողուր : Թերևս իր բարութեամբը պարգևէ ինձի իմ զաւակներէս մէկուն կեանքը . բայց ասոր համար քուներելուդ կարօտ եմ : Ո՛վ քոյր իմ, զիս կուրցընող առագաստը փարատեցաւ աչքերէս . ըսէ, պիտի ներես քեզի դէմըրած յանցանացս » :

Երիտասարդ կնիկը սկսաւ լալ, և հա-
ռաչանօք ըսաւ .

— « Ո՛հ, տիկին, ես քեզի համար ազօ-
թեցի Աստուծոյ . շատնցուընէ ես քեզի
ներած եմ . կ'ըմբռնեմ ցաւդ և վիշտերդ .
վասն զի ես ալ մայր եմ, և եղբօրս զա-
ւակները իմիններուս պէս կը սիրեմ : Ո՛հ,
զքեզ չեմ թողուր ինչուան որ չխալըսենք
զանոնք որոնք կրնան խալըսիլ . մէկտեղ
կ'աղօթենք, և թերևս Ամենակալն իր ո-
ղորմութիւնն իջեցընէ մեր վրայ : Այո, կը
զգամ որ դեռ մայր պիտի ըլլաս, և որոնց
վրայ որ կը գողաս՝ անոնց ծիծաղը նորէն
տեսնալու երջանկութիւնը պիտի ունե-
նաս :

— Ո՛վ կարողինա, ո՛ւր էր թէ աս խօսքդ
ալ անցեալ անգամուան պէս ճշմարտէր :
Չես տեսնար ինչպէս Թագուհի աղջիկս
տժգոյն է : Բայց մտիկ ըրէ ինձի առանց
խօսքս կտրելու . արգարութեամբ չվա-
րուեցայ ես քեզի հետ, կարողինա . իրաւ
որ հօրեղբօրդ ժառանգութիւնը յափըչ-
տակեցի . կը խօստովանիմ որ ունայնա-
միտ, գոռոզ և անգութ կնիկ մը եղայ . . .
ամբարտաւանութիւնը կուրցուցեր էր զիս .
բայց թշուառութիւնն իր հզօր կարողու-
թեամբը կը փարատէ այն խաւարը որ պա-
տեր էր վրաս . առաջինը չեմ հիմա, և եր-
ջանկութիւն կը սեպէի այսօր ինձի՝ թէ որ
բարի սրտովդ յանձն առնէիր քոյր կան-
չել զիս : Կ'ըմբռնեմ հիմա Աստուծոյ կա-

րողութիւնն ու աղօթքին մխիթարութիւնները . բայց այսչափս բաւական չէ զիս պատժողին հետ հաշտուելու : Չեմ կրնար քեզի դարձնել այն ստացուածքները զորոնք քեզմէ յափշտակեցի , որովհետեւ առ զոցս վրայ դարձուցած եմ . բայց ես կը խոթեմ անոնց միտքը թէ իրենք չեն անոնց հարազատ տէրը , և թէ կրօնական պարտք է իրենց նորէն այն հարստութիւնը դարձնելը քեզի . իսկ իմ եկամուտներուս կէսը քուկդ է ասկէ վերջը , գիտցած ըլլաս . . .

— Ո՛հ , չեմ ուզեր , կանչեց երիտասարդ կիներ :

— Ահա Աստուծոյ առջև կ'ըսեմ , վրայ բերաւ Վալպուրկ խաթունը , որ ալ ձեռք չեմ դպցըներ այն մասին զոր անիրաւութեամբ գրաւեցի . և կ'աղաչեմ , Կարողինա , քոյր իմ , մի դէմ կենար . կ'ուզեմ չընդունելովք ցաւերս դառնացընել . ա՛հ , թէ որ ծնկուըներուդ պլլուած չեմ պաղատիր , անկէ է որ ուժէ ինկած ու տկարացած եմ : Խօսէ , Կարողինա , խօսէ . չեմ պատասխաններ . քու վեհ սրտիդ ծանր կու գայ տուածս ընդունիլը . անանկ է նէ , պատասխան չեմ ուզեր , միայն թողութեան ու ներելու համբոյր մը տուր , և Աստուած վկայ ըլլայ » :

Երկու կնիկները գրկախառն պլլուեցան իրարու , և երկար կեցան այն քաղցր գրկախառնութեամբ : Վսեմութիւն մը կը

փայլէր այս տեսարանին մէջ . երկինք յերկիր խոնարհեալ կ'երևնար . . . :

.

Քանի մը օր ետքը երկու կնիկները ծանրաքայլ կօշկաց վաճառանոցէն կ'անցնէին . անոնցմէ մէկուն դէմքը խիստ տօգոյն էր , և սուգի զգեստ հագած . մէկալն աւելի երիտասարդ և քիչ վշտագնեալ կը տեսնուէր : Պզտի տղայ մը անոնց մէջէն կ'երթար ձեռքերնէն բռնած : Մայր եկեղեցին մտան և աւագ խորանին ետեւը Ս . Խաչի մատուռը գացին . հոն՝ տօգոյն դէմքով տիկինը խաչելութեան տակը չոքեցուց տղան ձեռնամած և տխուր ձայնով մը ըսաւ .

— « Աղօթէ , կուստաւ , աղօթէ եղբարցդ և քոյրերուդ հոգւոյն համար , և շնորհակալ եղիր որ գրեզ մօրդ քով թողուց » :

Մտիկ ըրաւ տղան մօրը խօսքին , ջերմեռանդաբար ու բարեպաշտութեամբ ծրուեց գլուխն ու քաղցր և սրտաճմլիկ ձայնով մը ըսաւ .

— Հայր մեր , որ յերկինս , սուրբ եղիցի անուն քո , եկեացե արքայութիւն քո , եղիցիև կամք քո որպէս յերկինս և յերկրի :

ՄԱՆՐԱՎԱՃԱԹԻՆ ԱՂՋԻԿԸ

1898

1898



ՄԱՆՐԱՎԱՃԱՌԻՆ ԱՂՋԻԿԸ



Ա.

Քանի մը տարի առաջ Անվերսա քաղաքը կանաչ ըստած հրապարակին մօտ փողոցի մը մէջ մանրավաճառի անուանի խանութ մը կար, որ իրեք հարիւր տարիէ 'ի վեր որդւոց որդի կը շարունակէր և չափաւոր գնով ծախելուն համար շատ բանուկ էր: Աս խանութին վերջին տէրն էր Յովհաննէս Ֆան Ռուզմաէլ, որ կարգուեր էր Սիւքա Բող անունով աղջկան մը հետ: Երկուքն ալ պզտիկուց 'ի վեր աշխատութեամբ անցուցեր էին իրենց կեանքը, կարգուելնէն վերջն ալ իրենց խանութին զբաղած ըլլալով ժամանակ չէին ունեցած նոր սովորութիւններու հետեիլ, որ հիմակուան երիտասարդաց ամենէն մեծ զբաղանքն է: Հաստատուն նիւթէ պարզ զգեստներ կը հագուէին, միշտ նոյն ձևով:

բայց հասարակ օրերու, կիրակիի, և զատկի համար ուրիշ ուրիշ հազուստներ ունէին : Աս զատկական ըսուած հազուստը՝ մեծ տօնի օրերը միայն կը հազուէին, երբոր հաղորդութեան սուրբ խորհրդոյն պիտի մերձենային, ինչպէս նաև երբոր կնքահայրութիւն կ'ընէին տղու մը, կամ բարեկամի մը ամուսնութեանը վկայ կ'ըլլային : Յայտնի է որ աս երկու ամուսնները նորութիւն սիրողներու առջև հին ժամանակի բորբոսած անձինք կը սեպուէին և կ'արհամարհուէին ալ անոնցմէ . բայց իրենց հոգը չէր ամենեւին, և հետեւեալ առական ըսելով կը մխիթարուէին . Սմեկ մարդ վիճակ մը ունի աս աշխարհիս մեջ . դուք հոյ ժողովե, մենք՝ ստակ : Խեղճերը չէին գիտէր որ իրեն պատիւը ճանչցող մարդ մը՝ չկրնար կէսօրը կերակուր ուտել, ու իրենց ռամիկ սովորութենէն ետ չկենալով՝ ժամը տասուերկու զարկածին պէս սեղան կը նստէին : Միանգամայն սեղանի վրայ ալ կարճ աղօթք մը կ'ընէին, թէ՛ առաջ և թէ՛ ետքը : Ուղողը կրնար դեռ ուրիշ շատ պակասութիւններ գտնալ վրանին, որոնցմէ մէկն ալ աս էր՝ որ գաղղիարէն բառ մը չէին գիտէր (որովհետև ամենեւին պէտք չէին ունեցած ան լեզուին) . ընդհակառակն՝ իրենք աստուածապաշտ էին, գործունեայ, պարզ, և բարքերնին խաղաղասէր : Իրենց ամենէն մեծ անխելքութիւնն ան էր՝ որ աւելի աղէկ կը սեպէին :

օրը քանի մը փող միայն մէկդի դնել արդարութեամբ, քան թէ հազարումէկ խաբէութեամբ ու խարդախ ճամբաներով երկու իրեք տարուան մէջ ան աստիճանի հարստութիւն ժողովել, որ մէկը մէկալը գուրցեն թէ Ռուսկից սա անդգամը այսչափ հարստութիւն դուրս հանեց: Միով բանիւ, բուն հին ժամանակի ազնիւ Փլամաններ էին ասոնք:

Ֆան Ռուզմաէլ տասներհինգ տարուան աղջիկ մը ունէր, մօրն անուետը Սիսքա կոչուած, բաւական բարձրահասակ, դէմքով վայելուչ, դեղին մազերով ու կապոյտ աչքերով: Ինչուան ան հասակը աղջրկանց դպրոց մը գացեր էր Սիսքա. հոն իր մօրենական լեզուն հիմամբ սորվեր էր, անկէ զատ՝ թուաբանութիւն և կար կարել ու բանիլ: Իր ծնողացը պէս պարզ աղջիկ մըն էր, բարեպաշտ, հնազանդ, անոյշ, առանց թեթեւոյիկ ըլլալու. անանկ որ մի միայն յարմար էր իր հարց խանութն առաջ տանելու ան երիտասարդին հետ՝ որ իր էրիկը պիտի ըլլար:

Ինչէն արդեօք սա իրեք հարիւր տարուան խանութն այսօրուան օրս գոցուած է: Ինչ դժբաղդութիւն պատճառ եղաւ որ Ֆան Ռուզմաէլի խանութին մէջն եղած տակառիկները, անօթներն ու շիշերը և ուրիշ վաճառքները Անվերսայի ուրբաթ օրերու վաճառանոցը տարուեցան ծախուելու: Ահա սա է պատմելուքնիս:

Բայց նախ գիտնալու է որ յիշեալ խա-
նութին մօտ կօչկակար մը կը կենար , որ
մեծ բարեկամ էր Ֆան Ռուզմաէլի , անոր
հետ ամէն կիրակի պտըտելու կ'երթար
Սդինէնպրուկ ըսուած ճեմելիքը , իրի-
կունները առոժա կոչուած թղթի խաղը կը
խաղար հետը , ու իբրև թէ եղբայրն ը-
լար , բանէ մը համ չէր առնէր թէ որ Սիս-
բայի հայրը մէկտեղ չըլար : Սակայն յան-
կարծակի աս ամէն բաներս տակնուվրայ
եղան արտաքոյ կարգի պատճառով մը :

Կօչկակարն , որ ինչուան ան ատեն բա-
ւական ապրուստ գտած էր , ու ըրած խը-
նայութիւններովն ալ կրցեր էր գնել ան
տունն ուր կը բնակէր , օր մը որ Ֆան
Ռուզմաէլ ջերմէ բռնուած՝ անկողին պառ-
կեր էր , փողոցին վրայ նայող երկու պա-
տուհանները վար առնել տուաւ ու անոնց
տեղ ապակիէ դուրս ցըցուած խանութի
ճակատ մը դրաւ , որուն վրայ գաղղիա-
րէն լեզուով ու կարմիր գունով խել մը
վերտառութիւններ կային . մէջտեղը այս-
պէս գրուած էր . Առանց կարի կօշիկներ .
Բարիգոռ կօշիկներու ու մոյկերու խաւոռք .
որ փառաւոր սուտ մըն էր , որովհետև
միտքը գրած էր որ կօշիկներն ալ մոյկերն
ալ ինքը շինէ : Քիչ մը աւելի վարով պատ-
կեր մը կար , որուն մէջ մարդ մը կը տես-
նուէր , զոր արևը կուրցուցեր էր՝ մօմո-
տած կօշիկ մը վրայէն անդրադարձուցած
ճառագայթներովը . և վերտառութիւն մը

գրուած էր ասոր վրան , որ կը զուրցէր թէ մոմոտելու նիւթին բաղադրութիւնը Անգղիայէն եկած է . որ ասիկայ ալ պոչաւոր սուտ մըն էր , որովհետեւ առջինին պէս՝ դարձեալ ինքը կը շինէր զան : Գնողները միշտ նոյն կօշիկները կը գնէին , միայն այսչափ էր տարբերութիւնը՝ որ կօշկակարը չորս անգամ առջինէն աւելի վճարել կու տար իր ծախած կօշիկները : Կողմնակի ապակիներուն վրայ ալ ասանկ գրուած էր . Գառչուէ կօշիկներ , Օձատի փոշի , Սեկե ներքաններ , և այլն :

Երբոր Ֆան Ռուզմաէլ հիւանդութենէն առողջացած՝ առաջին անգամն որ տնէն դուրս ելաւ ու կամաց կամաց կը քալէր փողոցին մէջ , յանկարծ աչքը զարկաւ կօշկակարին շինել տուած ապակիէ ճակատը : Մէկէն ի մէկ կանկ առաւ , աչուրները շփեց՝ որպէս զի չըլլայ որ երազ ըլլայ տեսածը , ու ապշած՝ մէկիկ մէկիկ աղէկ մը կը զննէր անոր քովի եղած տուները , նման ան օտարականին որ չգիտցած մէկ տեղւոյն մէջ կորսուած է :

— « Ի՞նչ բան է աս , սկսաւ ըսել ինքնիրեն : Ասիկայ Սքինաէլի՛ իմ բարեկամիս խանութը չէ . արդեօք ան ատենն որ ես հիւանդ էի՝ տունէն ելեր ուրիշ տեղ գացեր է : Անզգամին մէկը եկած պիտի ըլլայ հոս որ աղէկ մը կթէ միամիտներու ստակը , ու քսակը ինչպէս որ պէտք է նէ լեցընելէն վերջը՝ ելլայ փախչի : Ապահով կենայ որ զիս չկրնար խաբել » :

Երբոր ասանկ մտածութիւններ-կը որդ-
տըտցընէր մաքին մէջ Յան Ռուզմաէլ,
կօչկակարին խանութէն մէկն ակտաւ գուրդ
ելլել ու սեմոց վրայ կեցաւ . վերէն վար
մաքուր ու նոր ձևով լաթեր հագեց էր,
տափաար՝ յիբրայի գունով, բաճկոնոջ՝
ճերմակ, կուրծքին վրայ ալ սուտ ոսկիէ
չղթայ մը կար, որուն ծայրը չեմ գիտեց
թէ ժամացոյց մը՝ չէ նէ ակնոց մը կա-
խուած էր : Ծնօտը սև ու երկայն մօրու-
քով մը ծածկուած էր . մազերն անասնկ
խնամքով կոկուած ու ձևի առնուած էին,
որ կեղծամ՝ ծախողներուն խանութներուն
մէջ դրուած սուտ գլուխներուն կը նմա-
նէին :

— « Հա բռնեցինք անզգամը , զուրցեց
ինքիրեն Յան Ռուզմաէլ՝ աս մարդն որ
տեսաւ . մեզք , ասանկ մարդ մը աս կեր-
պով հագուեր է » :

Բայց դիմացինը շիտակ իր քովն եկաւ ,
և ուսն ընտանեբար ծեծելով

— « Հիւանդութենէդ ելեր ես , ըսաւ ,
բարեկամս » :

Յան Ռուզմաէլ Սրինաէլի ձայնը ճանչ-
ցաւ , բայց չէր կարծէր ամենևին որ ա-
սանկ կերպարանքի մէջ տեսնայ զանհկայ .
քիչ մը ետև քաշուեցաւ , ու վերէն վար
մէջ մը բարեկամը կշռելէն ետքն՝ ըսաւ .

— « Զրսնս աս ինչ աղուորցեր ես . վի-
ճակախամը (ՏՃ . Փիանգօ) մը վաստըկե-
ցար , չէ նէ ժառանգութիւն մը ձեռք ձգե-

ցիր : Ուրախակից եմ որ ատանկ բաղդի հանդիպեր ես : . . . Բայց ես ինչուան հիմա միտքս դրեր էի որ մազերդ բացագոյն էին » :

Սրինաէլ մէյ մը անոր երեսը նայեցաւ կարեկցելու կերպով մը , ետքը ըսաւ .

— « Բարեկամ , դուն ոչ երբէք հարբստանալիք ունիս : Գիտես այսօրուան օրս մարդ չկայ որ առանց որոգայթի կամ սոսինձի օրս ըլլայ . աչուընին սուտ անուննեքով խաբես պիտոր՝ որ ունեցածդ ծախես : Մեր աղգայիններուն բան ծախողները դատապարտուած են ինչուան ձերութիւն աւրիւն քրտինք մտած աշխատելու , ու անկէ ետքն ալ չեն կրնար զուրցել որ « Գոնէ այսչափ բան դիզեցի » : Մեր աղգին ձեռքը չատ դոց է , սիրելի . աւելի զուարճալին ի՛նչ է , աղէկ կաշի աղէկ բանուածք կ'ուզեն , և քիչ ստակով : Նայէ գաղղիացի երիտասարդներուն . անոնք կը գիրացընեն կը պարարտացընեն զմարդ . ամէն ամիս կը տեսնաս որ զոյգ մը նոր կօշիկ պիտի առնեն . դուն դիւրաւ կը շինես , անոնք աղէկ կը վճարեն . ասկէց աղուոր բան կայ աշխարհիս վրայ » :

Ֆան Ռուզմաէլ չէր գիտէր թէ արթո՞ւն ատենը կը լսէ աս խօսքերը չէ նէ քունի մէջ է . կարծէր որ ահանջին ձայն կու դար , ինչուան մտքէն աս ալ անցուց՝ որ չըլլայ թէ Սրինաէլ խելքը կորսնցուցած ըլլայ :

— Բայց ես լսեր եմ որ, ըստ դիմացինին բերնէն խօսքն առնելով, ան կապիկներն որ գաղղիացի նորեղուկ զգեստները կը հագնին՝ շատ անգամ վճարելու ժամանակը կու գայ նէ՝ յիշողութիւննին կը տկարանայ ։ Եւ այէ ես ալ ան բարակ մարգիկներուն մէկքանիէն ստակ ունիմ առնելիք, բայց դժբաղդարար վրանին բուրգչկայ որ խուզեմ ։ Ասալ զուրցեմ քեզի որ ալ աղէկ է մարգ մէկ ստակ մը ունենայ, բայց ապահով, ու խղճմտանքն ալ մարտդ պահէ ։

— Ասոնք հինցած խօսքեր են, նորն ունիս նէ՝ ան զուրցէ, պատասխանեց կըսկակարբ, թէ որ Աստուած ուզէ նէ՝ կու կու իրեք տարիէն հետդ կը խօսինք, ու ան ատեն կը տեսնանք որ երկուքնէս մի աւելի առաջ գացեր է ։ Հիմա իմ Յուլիոս տղաս Բարիզ է՝ իր արտեստը ստովելու համար, ես շատ յոյս ունիմ վրան ։

— Ո՛վ Բարիզ է բար, Յուլիոս, քանի տղայ ունիս որ, ես ինչուան ասորոք միտքս գրած էի որ մէկհատիկ մանչ զաւակ մը ունիս Յովհաննէս անուանով, որուն կնքուհայրն ես եղայ ։

— Իմ ըսածս ալ անոր վրայ է, Յովհաննեսին, բայց հիմա ան ուամիկ անունը ստիպած է ու Յուլիոս կ'ըսուի, վայելչաջ անուն աս է ։ Աղջիկս ալ, որ շարաթ մըն է երեկօթիք դպրոցէն ելաւ տուն դարձաւ, Հորդենսիա անուն ունի ։ Աս անոր հա-

մար կ'ըսեմ՝ որ չըլլայ թէ խանութս եկողներուն առջև Յովհաննէս ու Թերեզա կանչես զանոնք » :

Ֆան Ռուզմաէլ զլուխը մէյ մը շարժեց, նորէն աչքն ապակիներուն վրայ գրուածին ու Սբինաէլի զգեստներուն վրայ դարձուց, ետքը կէս մը ծաղրելու կերպով մը ըսաւ .

— « Չեմ կարծեր որ աս ոճով կարենաս առաջ երթալ, Սբինաէլ աղբար : Քանիներ տեսայ որ աս ճամբան բռներ էին ու վերջապէս աղքատութեան մէջ ինկան, անոնք որ առաջ հաստատուն քարի վրայ կոխած էին ոտուրնին : Բայց հանդերձ այսու ամէն մարդ տէր է իր բրածին . ինձի իյնալու բանը չէ ասիկայ, անոր համար մէյ մ'ալ չխօսինք վրան : . . . Միայն աս պիտի ըսէի որ Աստուածածնայ եղբայրութիւնն այսօր թափոր ունի . . . հետս չես դար :

— Աստուածածնայ եղբայրութիւնը, պոռաց Սբինաէլ նեղացած կերպով մը : Ա՛լ ասկէց վերջը ես անոր անդամ չեմ : Ինձի պէս մարդն որ մեծ թատրոնին համար կ'աշխատի՝ կը վայլէ որ թափորի մէջ մըտնամ՝ ձեռքս ջահ բռնած : Չէ, չէ . և ոչ մտքէ անցընելու բան է :

— Մնաս բարով ուրեմն », ըսաւ Ֆան Ռուզմաէլ տխուր ու ցած ձայնով մը, ու հոն սեմոց վրայ թողուց դաղըլիացի դարձած կօշկակալը :

Խել մը ատեն չերևնալէն վերջը , օր մը Սբինաէլ եկաւ մանրավաճառին խանութը . աղէկ մը ինքզինքը գոժեց ու իր նարատարութեանը վրայ երկայն բարտեք պարծեցաւ , ու կ'ըսէր թէ բաները անանկ վիճակի մէջ են՝ որ անկէց աղէկը չկրնար ըլլալ . խօսակցութեան ծայրը վերջապէս հոն լըմընցաւ՝ որ խաղախորդի (ՏՃ. Տեպպադ) մը քով իր ուզած կաշիէն խել մը բան կար , բայց ստակը մէկէն համրելու էր՝ առնելու համար : Աւար մըն է աս , կ'ըսէր , որ ձեռքէ փախցընելու բան չէ . աս կը զուրցէր ու Ֆան Ռուզմաէլի աչքը կը նայէր՝ որ արդեօք յոյս կայ բան մը փրցընելու : Երբոր այսչափը բանի չեկաւ , քաղաքավարական խօսքերը ձեռք առաւ , որ նոր սորվեր էր , ու այնչափ ըրաւ , որ վերջապէս խեղճ Ֆան Ռուզմաէլը իրենց հին բարեկամութիւնն յիշելով բարեսրտութեամբ հանեց հինգ հարիւր Փիորին փոխ տուաւ անոր , իրեք ամսուան մէջ վճարելու պայմանաւ : Ջուխտ մ'ալ նոր մոյկի չափն առնել տուաւ իր ոտքերուն համար : — Հաղնելէն վերջը ութը ինը օր չանցաւ՝ մոյկը սկսաւ պատրուտիլ , և մանրավաճառը փոխանակ իր հինգ հարիւր Փիորինը ձեռք ձգելու՝ աղուոր խօսքեր և ուզածիդ չափ խոստմունքներ լսեց :

Այս վերջի ըսած դիպուածս պատճառ եղաւ որ աս երկու դրացիները մէկմէկու վրայ թշնամութիւն զգալ սկսան սրտեր .

նէն . անկէց վերջը աչ չէին խօսեր իրա-
քու հետ : Բայց իրենց գաւազներն իրենց
օրինակին չնայեցան ու ամէն օր առջինին
պէս կը տեսնուէին :



Մահնաէլի աղջիկն երեկօթիւք գարուցէն դառնալէն վերջը , Պան Ռուզմաէլի աղջկանը՝ Սիւքայի վրայ առջի անմեղ բարեօրոտութիւնն ու ամօթխածութիւնը չմնաց : Շատ անգամ տեսեր էր Սիւքա որ կօչկակարին խանութը մտնող թեթևսուլիկ երիտասարդներն առանց անոր շողոքորթական խօսքեր ըսելու դուրս չէին ելլէր , անիկայ ալ անոնցմէ վար չէր մնար ու գաղղիարէն լեզուով քաղաքավարութիւններ կ'ընէր , երբեմն ալ նայուածքներ տալով : Դեռ անմեղ ըլլալով մանրավաճառին աղջիկը , չէր դիտէր թէ ան խօսքերէն ինչեր կրնային ծագել . անոր համար շատ ամբչցեր էր՝ երբոր ան անմիտ երիտասարդները քանի մը անգամ հետը գաղղիարէն խօսեր էին ու ինքը չէր կրցած պատասխանել մէկալ օրիորդին պէս : Տղոց միտքը բան մը որ մէյ մը մտնայ , ալ հանդարտ չեն ըլլար ինչուան որ

ձեռք ձգեն զանհկայ . ուստի տասիկայ ալ սկսաւ օրն 'ի բուն մօրն աղաչել որ ինքն ալ երեկօթիւք դպրոց երթայ : Մայրը , որ զանհկայ աչքի լուսին պէս կը սիրէր , իր առջի բնութենէն փոխուելով սկսաւ ինքն ալ նախանձիլ որ ամենուն աչքը Հորդենսիայի , կամ լաւ ևս ըսենք Քերեզայի վերայ էր , ու իր Սիսուս անոր աշխոյժ կերպին քովը ռամիկ կերպ մը ունէր : Ա՛րսէր ինքիրեն թէ վայելուչ բան չէր անանկ իր զաւակն երեսէ թողուլը , որ իրմէ վար աստիճանի ազջիկ մը իրմէ շատ վեր ըլլայ վարման մէջ : Իր աս մտածութիւնն ամիսներով իր էրկանն ականջը երգեց , և ըրաւ չքրաւ որոշեցին որ Սիսուս երեկօթիւք դպրոց խրկեն , բայց առաջ մէջ մը ծերունի Բէլքմանսին խորհուրդ հարցնեն այսպիսի մեծ խնդրոյ մը վրայ :

Աս Բէլքմանս ըսածնիս տանը բժիշկն էր , ինչպէս իր հայրն ալ աստնցմէ առջի Յան Ռուզմաէլներուն բժիշկն եղած էր : Շատ անգամ ծանր ու դժուարին պարագաներուն մէջ խելացի խորհուրդներ տուեր էր ծեր խանութպանին , բայց ասկէց ալ աւելի՛ անով իրենց սէրն ստացեր էր , որ երկու անգամ ծանր հիւանդութենէ խաղըսեր էր Սիսուս , և երրորդ անգամ մահուան դռնէն ազատեր էր՝ մաղձացաւին (ֆօլէրա) միջոցը : Ասով կարծես թէ կերպով մը իրաւունք ստացեր էր անոր կենացն ու ապագայ վի-

ճակին վրայ , անանկ որ առանց իրեն հար-
ցընելու բան մը չէին որոշէր Սիւքայի վը-
րայօք : Եւ խոհեմութիւնն ալ ասանկ կը
սորվեցընէր . որովհետեւ Բէլքմանս խոհա-
կան , խելացի ու փորձ մարդ էր և աչ-
խարհս աղէկ կը ճանչնար , և ամէն բանն
խորն ինչպէս որ պէտք է նէ կը մտնար ու
հետևանքները կը գուշակէր :

Որոշուած օրը՝ բժիշկը և էրիկ կնիկ խա-
նութին ներսի խուցը նստեր էին , և Յան
Ռուզմաէլ աղբարն ասանկ բացաւ խօսքը .

— « Ազնիւ սօգդօր , կնիկս զիս կը բըռ-
նադատէ որ գաղղիացի երեկօթիւք դպրոց
մը խրկենք Սիւքան : Ես երկար ատեն դէմ
կեցայ . բայց վերջապէս Սիւքայի լացե-
րէն սիրտս շարժած՝ հաւանութիւն տուի :

— Գաղղիացի դպրոց մը , զարմանքով
հարցուց բժիշկը . քաղքին մէջ ազէկ դը-
պրոց կը պակսի որ . և հոս ըլլալուն մէկ
աղէկութիւնն ալ աս չէ՞ որ միշտ կրնաս
հսկողութիւն ընել որ չըլլայ թէ ծուռ ճամբ
բու մը մէջ իյնայ :

— Հա հա ընելով խնտաց մայրը բար-
ձրածայն , ու արհամարհելով մը աւելցուց .
Ի՞նչ կը սորվեցընեն հոս դպրոցներուն
մէջ . քիչ մը օղակերպ հիւսել , կարել ,
ճերմակեղէններուն նշան դնել , շապիկ
կտրել ու Փլաման լեզուն խօսիլ . բոլոր
աշխարհք աս բաներս գիտէ : Նայէ սա
Աբինաէլի աղջիկը , հոստեղէն գնաց նէ
փայտի պէս բան մըն էր ու հիմա ազնուա :

կանի շնորհք մը կայ վրան . գաղղիարէն կը խօսի , բաւական մարդավար է ու ըրած ձեերը՝ վայելուչ , և բոլոր հարուստ երիտասարդներն իրեն վրայ սէր կը ցուցնեն : Զով որ կ'ուզէ նէ կրնայ ինքը իրեն էրիկ ընտրել » :

Բժիշկն ուները վեր թօթվեց ու գլուխը չարժեց . ու քիչ մը ատեն մտածելէն ետքը՝ ասանկ ըսաւ .

— « Գիտես տխրեցուցիր զիս , խաթուն : Ո՞ր չար սատանան եկեր աս մտածութիւնը միտքդ խոթեր է ու շփոթեր դքեզ : Ան հարուստ երիտասարդներն որ կ'ըսես , որը գերձակ է , որը խաղի գերասան , որը խանութպան . ինչպէս ճանձերը շաքարի վրայ կը ժողվըտին , ասանկ անոնք ալ կօշկակարին խանութը : Ես կը ճանչնամ Հորդենսիան , և այսչափ ձեզի զուրցեմ որ ես սիրով ունեցած ստացուածոցս կէսը կու տայի՝ որպէս զի կարենամ խափանել որ Սիսքան ալ անոր չնմանի : Ի՞նչ , կ'ուզէք որ կորսուի ան խեղճ աղջրկան գեղեցկութիւնը , պարզասրտութիւնն ու անմեղութիւնը . կ'ուզէք վերցընել իրեն վրայէն կրօնքը , բարի վարքն ու մեր ազգին յատուկ արդարասիրութիւնը , և անոր տեղը թեթեւ ու փցուն արարած մը ընել զինքը : Աղէկ նայեցէք . թէ որ իմ խորհուրդներս բանի չզան նէ , որ մը ըրածնուդ դառն պտուղները կը վայլէք , թէ որ Աստուած դեռ քիչ մը ատեն ալ կեանք տայ մեզի տեսնելու » :

Բժշկին ծանր խօսքերը տարբեր տը-
պաւորութիւն ըրին երկուքին վրայ . էրի-
կը սրաէն կ'ուրախանար յուսալով . որ
ասգոգօրին քսածը վերջապէս կը յաղթէ .
իսկ կնիկը նեղացաւ , ու տաքցած ըսաւ .

— « Տօգոգօր , մեծ մեծ կը ջարդես : Ես
գիտեմ արդէն որ դու գաղղիացիի ամէն
բանը կ'ատես . բայց մենք հին դարու
մարդ ենք . . . այսօրուան օրս ալ ան ոճով
վարուիլ չըլլար . . . » :

Բժիշկը խօսքը բերնէն առաւ .

— « Խաթուն , զուրցեց , խօսքս չես ու-
զեր հասկընալ : Իմ միտքս ան չէ որ օտար
լեզուներ սորվեցընելն արգիլեմ պատա-
նեաց . չէ նէ իմ Լուդովիկոս որգույս ալ
որ հիմա համալսարանն է , ինչպէս գաղ-
ղիարէն լեզուն սորվիլը կը թողուի : Բա-
ւական աղէկ գիտէ , և կարծեմ քիչ մը այն
անխելք երիտասարդներէն աւելի , որ
Հորդենսիայի խելքը գլխէն տարեր են ,
ու քու աչքդ ալ փուշ եղեր են : Ինչո՞ւ հա-
մար անանկ ծուռ աչքով կը նայիս ինձի .
անոնց տգէտ ըսելուս համար . կ'ըսեմ
այո . տգէտ չեն նէ ինչ են . քիչ մը գաղ-
ղիարէն գիտեն , փողոցներու մէջ խօ-
սուած տեսակէն , բայց եկուր նայէ որ ան
ալ կը ծռմբակեն . գոնէ իրենց մայրենի լե-
զուն գիտնային , իսկ օգտակար գիտու-
թիւններուն որ գաս նէ , անոնց անունն ալ
չեն ճանչնար : Իրենց բոլոր գիտութիւնն
ան է որ ասգիէն անգիէն՝ լրագիրներէ ու

վիպասանութիւններէ քանի մը բաւեր ,
քանի մը ոճեր կ'որսան ու ան գաղղիական
վեռնիճովն իրենք զիրենք բան մը կ'երեցը-
նեն . աս է իրենց բոլոր գիտութիւնը :
Բայց նիւթերնէս դուրս չելլանք , ու մէկ-
մէկու խօսքերն աղէկ հասկընանք : Իմ
դուրցածս աս է , ուշադրութիւն դիր ըտա-
ծիս , որ աղէկ դպրոցներ կը գտնուին ,
բայց մէկ աղէկին հարիւր գէշ կայ . ան
դպրոցներն աղէկ են՝ որոնք ազնիւ և ա-
ռաքինի մայրեր կը պատրաստեն , և ա-
մէն կերպով կը զգուշացընեն դաղղիակա-
նութենէ Ֆլաման անարատ աղջիկները ,
որովհետև գիտեն որ մեր ազգային բնա-
ւորութիւնն ընտիր ընտիր յատկութիւններ
ունի : . . Թէ որ ասանկ դպրոց մը պիտի
խրկէք Սիւքան , ըսելիք չունիմ . մանա-
ւանդ թէ ես ալ վրայ կու տամ : Չեր ըն-
տրութենէն կը կախուի ամէն բան : գաղ-
ղիացի երեկօթիւք դպրոցներէն մեծ մասը
ապականութեան մի միայն տեղուանք են .
բայց շիտակն ըսելով աղէկներ ալ կը
ճանչնամ . ինչպէս օրինակի համար Ք . . .
խաթունին դպրոցը . . .

— Ք . . . խաթունին դպրոցը , աղաղա-
կեց մայրը , ես գիտէի որ ան պիտի զուր-
ցես : Չէ , չէ . թէ որ հոն պիտի երթայ ,
կրնայ պատուական մեր տունն ալ կենալ
Սիւքա : կ'ուզես նէ քեզի օրինակ առ Սն-
նա Ֆան Սդրադըն օրիորդը . իրեք տարի
ան դպրոցը կենալէն ետքը , անանկ դար-

ձաւ ինչպէս որ գացեր էր : Իրաւ համեստ
ու ամբթխած է , և կը լսեմ թէ բաւական
գիտութիւն ալ ունի և տուն մը դարձընե-
լու համար հարկաւոր եղած ամէն բաներն
աղէկ գիտէ , բայց այսչափ բանը ո և իցէ
անդ չըկրնար սորվուիլ : Այնչափին հա-
մար հարկ չէ երեկօթիւք դպրոց երթալ :

— Հապա ինչ բանի համար երեկօթիւք
դպրոց խրկելու է , խաթուն : Հասկըցաչ
մկառք . գաղղիացի դառնալու համար , ա-
նանկ չէ՞ . խելքը միտքը զուարճութեան տա-
լու և իրեն չափին մէջ չկենալու համար՝
Հորդենսիայի պէտ . իր աստիճանէն վեր
դարգարանքներով հագուելու կապուելու
և մէկ ստակի աղջիկ մը ըլլալու համար :

— Բայց , թէ որ երեկօթիւք դպրոցնե-
րէն մեծ մասը աւրուելու տեղեր են , ինչ-
պէս կ'ըլլայ որ բոլոր հարուստներն , որ
անմիտ մարդիկներ չեն , իրենց աղջիկներն
հոն կը խրկեն :

— Միտքս աղէկ հասկըցէք , բարեկամ
ներս , պատասխանեց ծերն աւելի հան-
դարտ ձայնով . մարդկային ընկերութեան
մէջ ամէն վիճակի անձինք իրենց սեփա-
կան վայելչութիւնը պէտք է ունենան :
Ան բանն որ ազնուականի աղջրկան մը
համար աղէկ է , վայելուչ և օգտակար ,
չստ անգամ գէշ է , անվայելուչ և վտան-
գալի թանութպանի աղջրկան մը համար :
Ըսած դպրոցներուս մէջ գլխաւոր գէշու-
թիւնը կայ նէ աս է՝ որ կօչկակարի մը ,

երկաթ ծախողի մը աղջրկանը մտքին մէջ նոյն գաղափարները կը տպաւորեն՝ ինչ որ մեծատան մը զաւկին, և մի և նոյն դասախարակութիւնը կու տան անոր՝ որ իր ապրուստը ճակտին քրտինքովը պիտի վաստըկի և անոր որ իրեն միտքը պարապորդ կեանքը զուարճութեամբ անցընելու պիտի ծառայեցընէ : Աս կերպով ընկերութեան հիմունքը կը խախտեն . ամէն աղջիկ մեծամեծներու կը ջանան նմանիլ, և աս զեզխութեան սիրոյն բնական հետեւանքն է ծուլութիւնը, փուճումուճ և յիմարական ծախքերը, թեթեամիտ կենցաղավարութիւն մը և աւելի գէշ բաներ : Ո՛ր է ան մեր կտրիճ աշխատասէր Փլաւան կանայքը . և ոչ անանկ մէկ մը կ'ելլայ ան դպրոցներէն » :

Ֆան Ռուզմաէլ լուրջ կերպով մը ոտք ելաւ, ու ասանկ յայտնեց իր որոշմունքը .

— « Կը զարմանամ, տօգդօր, այսչափ համբերութեամբ ու բարեկամական սիրով երկայն բարակ աս նիւթին վրայ խօսելուդ : Ըսածներդ իրաւունքով են . կամ Ք . . . խաթունին դպրոցը կ'երթայ Սիսքա, կամ տունը կը կենայ . այսօրուան օրս տանը տէրը ես եմ : Քամի մըն է որ կնոջս միտքը փչեր է աս գաղղիարենի սէրը . կարծես թէ մեր մօրենական լեզուն խօսելնուս՝ բան մը կը պակսի մեզի ու օրէ օր ետև կ'երթանք : Ինձի համար ան բանն որ աղէկ է՝ աղէկ է, և ով որ աղէկը լաւագոյն

կ'ուզէ ընել՝ ես անիկայ ապուշ մարդո՛ւ տեղ կը դնեմ . . . : Համառօտ՝ զուրցեմ ; Սխաբա տունը կը մնայ » :

Բայց խեղճ մարդը մտքէն չէր անցուցած որ քովէն ներդաշնակ երաժշտութիւն մը պիտի լսէ՝ երգիոնին ձայնէն զօրաւոր : Կնոջը բերանը բացուեցաւ ու բառերն սկսան կլոր կլոր գլորաւկիլ :

— « Ի՞նչպէս շուտ առաջ կ'երթաս , պարոն , ինքիրենդ կը ցանես ինքիրենդ կը հնձես : Սըւոր նայեցէք մէջ մը , ես հոս ի՞նչ եմ , ինձի պէս կնիկ մը . նստէ նստէ տեղդ ու խօսքերս մտիկ ըրէ : Գու աչ , տօգդօր , ըսէ տեսնա՞նք ինչ մնաս կրնայ ըլլալ Սխաբային՝ ազնուականի աղջրկան մը պէս աղէկ դատարարակուելէն ու անոր պէս աղէկ գաղղիարէն գիտնալէն : Անիկայ իրեն աղէկութիւնը կը վերցընէ՛ :

Աս հարցմունքէն իմացաւ բժիշկը որ քարէ շինած գլխու մը պիտի յազթէ . ուստի կեքօք փոխեց ու աւելի ծանրութեամբ մը պատասխտան տուաւ .

— « Չէ , չվերցըներ , թէ որ ան դպրոցին մէջ՝ ուր կ'ուզես խրկել՝ ընտիր դատարարակութիւն մը և հարկաւոր տեղեկութիւններ միայն առնելու ըլլար . բայց դու որ մայր ես՝ չես գիտեր որ անանկ գարոցի մը մէջ ինչ կը սորվին օրիորդներն իրենց վարժապետուհիներէն , և մանաւանդ իրարմէ : Չէի ուզէր ըսել . բայց դու կը բռնադատես զիս զուրցելու . տխուր ճըշ-

մարտութիւններ լսէ : Գաղղիարէն կը սոր-
վուի հոն , իրաւ է . բայց գաղղիարէն լե-
զուին հետ գաղղիացւոյ մտահաճութիւն-
ներն ալ կ'առնուի . օրինակի համար՝ կը
վարժին թէ ինչ կերպով աչքերը շարժելու է
ըստ պարագային , ու նշաններ ընել . ինչ-
պէս ծնողքնին հարկաւոր եղած ատեն
խաբելու է՝ անոնց աչքէն ծածկելու համար
առանձին բարեկամութիւններ . ասկէց
զատ , գլուխնին անանկ չափէ դուրս գա-
ղափարներով կը լեցուի , որոնք հոգին ու
մարմինը կը մաշեցընեն . ամէն տեսակ ա-
նուշահոտ եղերն ու օձանելիքները բաներ-
նուն կը բերեն , կը սորվին թէ ինչպէս ըն-
տանեկան կերպ հագուելու է , ինչպէս քաղ-
քի կերպ , ու ինչպէս պարու կերպ . ինչպէս
ծռելու կօտորտուելու է դիմացինին աստի-
ճանին յարմար , այսինքն հարուստին խո-
րունկ մը ծռիլ , խիստ թեթեւ մը միջակ աս-
տիճանի մարդուն , և ամենեւին չծռիլ՝ սո-
վորական մարդու մը : Ար սորվին հոն գաղ-
ղիացի անվայել երգեր՝ ռօմանս ըսուածնե-
րը , որոնք ժամանակէ առաջ կիրքերը կը
զարթուցանեն ու տգէտ աղջրկան մը ա-
նանկ բաւեր ու անանկ բաներ կը սորվե-
ցընեն , որ ոչ երբէք պէտք էր գիտնար .
մէկ խօսքով՝ երգեր , որ դրսուանց ոսկե-
զօծ են ու ներքուստ թունալից աղբիւր մըն
են ապականութեան : Ասո՞նք են քրիս-
տոնէի ու բարի անձանց աղջրկան մը հար-
կաւոր եղած գիտութիւնները » :

Յետաւ բժիշկն որ խօսքերը սատարիկ տը-
պաւորութիւն կ'ընէին. իր երկու ունկըն-
գրացը վրայ . աչաւքնին Բէլքթմանսին՝ վը-
րայէն չէր շարժէր, և անանկ անշարժ կե-
ցեր էին՝ ինչպէս թէ ծերունի՝ ճարտարա-
նին հզօր ձայնը զիրենք քարացաւցած ըլ-
լար . Բէլքթմանս, որ կ'ուզէր բողոքովն
խաղթել կորստենէ ազդիկն որ արտանց կը
սիրէր, աւելի նշանաւոր կեղտոզով մը առաջ
տարաւ իր խօսքը .

— « Աս անյազ կրքերն անտանկ վըբոր-
բաքեն, անանկ կը բարձիցքնեն ազդիկանց
սիրտը, որ բնական զգացմունքներն աչ կը
չորնան ու կը մեռնին . աչ անկէ ետեւ ծը-
նողքնին ամէն փուռ քանի վրայ ձայն հա-
նող կը սեպեն ու մէկ ստակի վրայ մեռ-
նող : Երբկներնուն վրայ դանդաւ կ'ընեն՝
իրև թէ թող չեն տար իրենց զուարճու-
թիւն ընելու . և իրենց երևակայածնուն
նման՝ աչք առնող չգանալով դանակը, ոչ
երբէք ճշմարիտ սէր մը կը կապեն վրա-
նին . թողունք ուրիշ բաները : Եւ գիտէք
թէ ուսկից կու գան աս ամէն ազուր քա-
ները . Բարիզէն, որ անզգամութեան գոր-
ծարունն է . Բարիզէն, ուրտեղի բնակչաց
բռնած ճամբուն կ'ուզէք որ ձեր ազդիկն
հետևի : Թէ որ ըստմներուս օրինակ կ'ու-
զէք, Հորդենսիայի վրայ դարձապէք աչ-
քերնիդ . նայեցէք թէ ինչ դարձեր է . կի-
մակուցուրնէ որ անունն աւեր է, օր մը
ի՛նչ պիտի ըլլայ : Արդեօք մտքերնիդ գը-

բամ էք որ օր մը մեծութեան կը հասնի .
չէ , չէ , կը խաբուիք . կրակին քովը մօ-
տեցողը՝ կ'այրի : Օր պիտի դայ որ անիկայ
ամենուն երեսէն ձգուած ու արհամար-
հուած , ողբով լացով պիտի անցընէ իր օ-
րերը , ու իր պատիւը կորսնցընելուն վը-
րայ անօգուտ տեղը պիտի դղջայ : . . .
Ազնիւ բարեկամներս , ահաւասիկ աս վի-
ճակը կ'ուզէք ձգել ձեր մէկ հատիկ զաւա-
կը , ձեր լաւաբարոյ Սիւքան : Ի՞նչ երե-
սով պիտի ելլաք օր մը Աստուծոյ դատաս-
տանին առջև , ձեր զաւակին երջանկութիւնն
ու առաքինութիւնը վերցընելէն վերջը :
Այսչափ անգութ է սրտերնիդ որ ուզե-
նաք դատապարտել զինքը խռովայոյզ ու
տագնապեալ կեանք մը անցընելու : Ա՛հ ,
կ'աղաչեմ՝ չէ՛ ըսէք , որ սիրտս հանդար-
տի » :

Աս խօսքերուն Ֆան Ռուզմաէլի աչքե-
րէն սկսան յորդ արցունքներ վազել . ու-
զեց խօսիլ , բայց սկզբան չկրցաւ սիրտը
սաստիկ ճմլած ըլլալով լսած ահաւոր նը-
կարազրութիւններէն : Վերջը ոտք ելաւ ,
և բժշկին ձեռքը սխմելով՝ ըսաւ .

— « Եատ շնորհակալ եմ , բարեկամս ,
և տուած խորհրդիդ ապահով եղիր որ կը
հետեւիմ : Դու ալ , կնիկս , մտքէդ հանէ
աս մտածութիւնը . չէ՛ նէ գիտնաս որ յա-
մառութեանդ մտիկ չեմ ըներ » :

Ֆան Ռուզմաէլի կնիկն էրկանը ձայ-
նէն իմացաւ որ աս անգամ անոր միտքը

փոխելը Կարեղի բան չէր . ուստի պաշու-
թեամբ մը սլատասխտն տաւաւ :

— « Աղէկ աղէկ , ալ չխօսինք աւ բա-
նիս վրայ : Գղութնիս կայծակ չիջաւ . թող
Յիսքա տունը կենայ , բայց անոր գլխուն
հարը դու տես » :

Աս խօսքերէն վշտանալով բժիշկը , ո-
րովհետև տեսաւ որ ազջիւսն մտորը գնա իր
մտքին վրայ անշարժ կեցեր էր , ուրիշ նոր
պատճառներ ալ մէջ բերաւ . համարելու
համար . և վերջնայէս յառաջով որ յազ-
թեց , բաժնուեցաւ ամանցմէ՝ կէս մը ու-
րախ , կէս մը արտում :

Իրեք ամիս մը վերջը , որ մը բժիշկը
համբան ծան Ռուզմաէլի հանգիսեցաւ ,
որ գէպ 'ի իրեն կու գար : Խորին տիրու-
թիւն մը տպաւորուեր էր խեղճ մարդան
երեսին վրայ , և շատ ծանր կը քայէր՝
որ իրեն սովորութիւնը չէր . իրեն կերպը
նայելու ըլլայիր նէ՝ կարծէիր թէ ծանր հի-
ւանգութիւն մը պիտի գայ վրան : Երբոր
բժիշկը քովը հասաւ , երակը մէյ մը զննեց
ու հարցուց .

— « Յուսած որ հիւանգ չես , անանկ
չէ՞ : Բայց բան մը պիտի ունենաս . որով-
հետև երակդ շատ տկար կը նետէ : Ինչ
ունիս , բարեկամս » :

Ծան Ռուզմաէլ աշուրները վեր վերուց ,
որոնցմէ երկու արցունք վար կաթնցան ,
և հառաջանքով մը ըսաւ .

— « Միպրան երեկոթիւք գարոց գնաց :

— Աս գէշ բան մը չէ . բայց մը գարոցը գնաց :

— Հորդեմստի գարոցը : Մի նեղու- նար ինձի , սիրելի Բէլքաննա , յանցանքը իմն չէ : Երկու ամիս մայր ու ազ- ցիկ այնչափ հեաս կռուեցան , այնչափ պոռնացին կանչեցին նախատեցին , այնչափ լացին ու ողբացին , այնչափ տունը վեր 'ի վար ըրին , որ կը տեմնաս թէ ինչպէս նի- հարցեր եմ . ըրին չըրին՝ վերջապէս հա-ւանութիւնը բերնէս առին » :

Բժշկին սիրտը կտոր կտոր եղաւ . բայց իր բարեկամին վիճակին վրայ գլխաւով , ա-ստնկ ըսաւ անոր .

— « Յան Բուզմաէլ ազբար , հոսմի հին հեղինակները կարծեմ մարդու մը հրաշալի քաջութիւնները կը պատմեն , որուն ա-նունն է Հերակլէս : Աս մարդը անանկ բա- ներ ըրեր է . որ չկարծելու բաներ են . ժայռեր ճղքեր է , գետերու ճամբաները փոխեր է , կատաղի գազաններ սպաններ է , եօթը գլխով վիշապի մը վիզը ջախ- ջախեր է . բայց աս հեղինակներէն ոչ ոք գրած է թէ Հերակլէս բոլոր կենացը մէջ մէկ անգամ մը գոնէ՝ կնկան մը լզուխը ջախջախած ըլլայ : Ուրեմն Հերակլէսի չը-րած բանը՝ մենք ինչպէս կրնանք ընել : Միտոյ ամուր բռնէ . յուսանք որ բանե-րը ան աստիճանի գէշ չեն երթար՝ որչափ որ առաջ ձեզի ստորագրեր էի . ես ան ա-

տեն կամաւ ամէն բան սաստիկ նկարագրեցի, որովհետեւ կրնայ հանդիպիլ: Քողոր Սիսքան տարին երկու անգամ տուն պիտի դառնայ. ուստի թէ որ տեսնանք որ ուղիղ ճամբէն խոտորելու վրայ է, չարեացն առջևը կ'առնենք՝ քանի որ դեռ ժամանակն է »:

Հօրը դէմքը պարզեցաւ, զուարթութիւն եկաւ վրան ու մխիթարուեցաւ. և Բէլքմանսի ձեռքն երախտադիտութեամբ սխմելով, ճամբան առաջ տարաւ ու առջինէն աւելի շուտ կը քալէր:

Միսքա կոկ ու արարող զգեստներով երեկոթիւք դպրոց գացեր էր, ու մէկ սնտուկ մ'ալ նոր ճերմակեղէնով. բայց երթալէն ետքը քիչ մը անցաւ չանցաւ, ամենայն կերպ ամենայն անոյշ խօսքեր սկսաւ թափել ստակ ուղելու համար: Առաջին նամակն այս եղաւ.

« Ամենասիրելի մայր .

« Բոլոր երեկոթիւք աղջկանց մէջ ես ամենէն խեղճ հագածն եմ. ամէնն ալ վրաս կը խնտան ու զիս գեղացիի տեղ կը դնեն: Ես լալէն զատ ուրիշ բան չեմ ըներ, շատ տխուր եմ, և անշուշտ քիչ ատենէն կը հիւանդանամ՝ թէ որ քու խեղճ Միսքայիդ գթալու չըլլաս: Վարսաւիրային աղջիկն իսկ որ գհայրս ածիլելու կու գար՝ ան ալ այս դպրոցն է և ինչ գեղեցիկ կերպասէ ու մետաքսէ զգեստներ ունի ուրիշ-

ներուն պէս . ես միայն բամբակէ կարճ
զգեստով մը մնացեր եմ . ոչ գլխարկ աւ-
նիմ , ոչ լաթէ կօշիկ . ամբշնայէս գետին
կ'անցնիմ , և քանի որ ասանկ խեղճ զգես-
տով զիս կը տեսնամ , աչքերս գետին խո-
նարհած կը քալեմ : Պունաթափ ու նիհար
բան մը դարձեր եմ , և նորէն կը զուրցեմ
անշուշտ կը հիւանդանամ , սիրելի մայր ,
թէ որ ասկէ ետքը քիչ մը ատեն ալ անանկ
ամենէն արհամարհուելու ըլլամ : Տնեմար
կարդալու հետ եմ . և անանկ աղէկ կը
պարեմ , որ բոլոր աղջիկները վրաս կը
նախանձին :

Բարևներս հօրս սոյիր :

Մնամ , հաւատարիմ մինչև ցմահ :

Աղիկ

ԵՒԴՈՔՍԻԱ ՏԱՆ ՌՈՒՋՄԱՆԷ :

Մայրը չհամարձակեցաւ այս նամակն էր-
կանը ցուցնելու : Սկսաւ իմանալ ու տես-
նալ Բէլքմանսին գուշակածներուն ճշմա-
րիտ ելլալուն նշանները . քծնող ու թե-
թեւոյիկ կերպ մը բոլոր նամակը ծայրէ ՚ի
ծայր բռնած էր . իսկ վերջի տողը սիրոյ
նամակի դարձուածք էր : Շատ տրտմեցաւ
կնիկն ազըկան անունը փոխուած տեսնե-
լով , և շատ մտմտալէն ետքը՝ վերջապէս
միտքը դրաւ որ Եւզոբսիա անունը Ար-
քային գաղղիարէն թարգմանութիւնը պի-
տի ըլլայ : Աղջկանը վրայ ունեցած գու-

Թէն երկու անգամ ուզած ստակները խաւրեց : Բայց բանը այսչափով չլմընցաւ . Սիսրան անմեղ ըստած սուտեր հնարելու արուեստն ալ քիչ ատենուան մէջ ստացեր էր : Այս աստիճան շուտով փոփոխութիւնը շատ դարմանալի բան է իրաւցընէ . բայց իրեն օգնական չունէր . իրեն աչակերտակից աղջիկներուն ամէնն ալ մէյմէկ վարժապետ չէին և թէ իրենց խօսքերովն և թէ օրինակովը չէին սորվեցընէր իրեն ան պղտի սեպուած ախորժելի մեղքերը և ան մտահաճոյ իղձերը , որոնք հետեանք են քծնելներու , ունայնասիրութեան և անձնասիրութեան : Ո՛հ , այս տեսութեամբ , շէկէն իր դաղղիական դաստիարակութիւնն առաւ . առջի ամիսն ունեցաւ մետաքսէ զգեստ մը կուրծքին վրայ բամբակ հագուեցուցած . աս էր նորելուկ սովորութիւնը . երկրորդ ամիսը սնդուսէ (ՏՃ . Արշա) գլխարկ մը բոլոր ծաղկըներով զարդարած . երրորդը , հովանոց մը . չորրորդին , ուսին վրայ ձգելու զարդ մը . հինգերորդին , սկսաւ տեսակ տեսակ հոտաւէտ նիւթեր գործածել , և տփիկ մ'ալ առեր պահեր էր , որուն մէջ երբեմն երբեմն կը խօթէր մատն ու լրբութեամբ երեսները կը կարմըրցընէր , փորձելու համար թէ արգեօք կը յարմարի՞ իրեն : Այս էր ահաւասիկ հոնտեղ տրուած դաստիարակութիւնը , որով քաղաքացի աղջիկները պիտի կրթուէին :

Բայց նկուս նայէ որ վեցերորդ ամիսը մեծաքայլ կը մտանար ։ Կանգառեան օրերն ալ մէկտեղ ։ Ինչ պիտի չընէր բժիշկը երբոր տեսնար զՍիւսեան ըստ վերջին նորելուի ձևին ինչպէս որ պէտք է հազուած արգուած ։ զուխը հասեր որո՞ւն ։ Խօսուածքը դարձուածքներով ։ Երեւն ալ միշտ թեթեւ ծագիւմ մը ։ Պիտի չտեսնար աղջկան սրտին խորը ։ ու պիտի չտեսնար ապականութեան սերտերուն թաւանդը ։ Յնչուշտ առ այսպէս պիտի ըլլար ։ Բայց մայրը՝ աղջկան երթալու գտնելը ։ Թանուկ ըսեր էր իրեն . . .

— « Յղէկ նայէ ։ Սիւսեան որ խեղճով շարժիւմ ։ չորրայ թէ Կանգառեան արտն դառնալու ըլլաւ նէ՛ կամ ապուշ կամ սիրտ արհաւիր ըլլաւ ։ վասնզի թէ որ թեղքմանս բժիշկն առ պահասութեանն երկն մէկը մը բազ տեսնայ ։ հայրդ մէյ մ'ալ թող չտար որ նորէն երթաս ։ »

Այս խօսքերը Սիւսային մտքէն չէին ելած ։ Եւ շատ անգամ իր ընկերներովը ծագր ըրած էր զբժիշկն որ ամէն բանի մէջ կը խառնուէր ։ Եւ միտքան զանիկայ խարելու գիւտը գտեր էին ։

Վերջապէս օր մը ։ ճաշէն ետքը ։ Սիւսեան երեկօթիք գպրոցէն դարձաւ ։ Եկաւ խանութը՝ մօրը հետ մէկտեղ ։ որ իրեն ընդ առաջ գացեր էր ։ Արդեօք մեր ճանչցած Սիւսեան է ։ Անտարակոյս ուրիշ մը պիտի ըլլայ ։ պարզ ու անպանդճ զգեստ մը հա-

գած , մազերը հասարակ քօղի մը մէջ ամփոփած , առանց օղերու , առանց հոտաւէտ նիւթերու , առանց գլխարկի , գլուխը խոնարհած , աչքերն ալ վար առած : Աշխարհքիս ամենէն վախկոտ աղջիկը կըրնար կարծուիլ : Բժիշկը սկսաւ հարցմունքներ ընել իրեն . անանկ պարզութեամբ , անանկ շափաւորութեամբ պատասխան տուաւ Սիւքա , և անանկ քիչ կը խօսէր , որ խորատես ու սրամիտ մարդն ալ խաբուեցաւ . . . և Սիւքա կրցաւ նօրէն երեկօթիւք դպրոց դառնալ :

Մինչդեռ Փան Բուզմաէլ աղբարին աղջիկը գաղղիական դաստիարակութեան ամենայն քաղցրութեանց համը կ'առնէր , աղբար Սբինաէլի ոչ խանութին և ոչ ընտանեացը բաներն աղէկ կ'երթային : Գաղղիացի երիտասարդները շատ քիչ անգամ պարտքերնին կը վճարէին , և ամէն տարի թատրոնին դերասաններն իրենց ձեացմունքները լմընցընելէն ետքը քաղքէն երթալնուն ատենը՝ առած կօշիկնին ու մոյկերնին հագած , առանց ստակ մը վճարելու կ'առնէին կը քալէին : Իսկ Հորդենսիա մեծ գումար մը իրեն զարդերուն ու հագուելուն սգուելուն և խորտիկներու կը վատնէր . և երբեմն ինչուան ստակ ալ կաւ տար զինքը գովողներուն կարօտութեան ժամանակը : Կարճ ըսենք , Սբինաէլ աղբարն ոտքէն ինչուան գլուխը պարտքի մէջ կը խղզուէր , ու պարտքե-

րուն ալ շահը վճարելուն ծանրութեանը տակ կը հեծէր :

Այս խեղճ վիճակիս մէջ, կօշկակարն սկսաւ աչքերը բանալ. շատոնց 'ի վեր ցորեննոցը նետեր էր այն տախտակն՝ որուն վրայ փայլուն կօշիկ մը քաշուած էր որ անցնողներուն աչքը կը կուրցընէր. և ապակեաց վրայ այս պարզ գրուածքը կը կարդացուէր, Մոյկերու խառնը, ու տակը Ֆլաման լեզուով աս բառերուս թարգմանութիւնը: Բայց դժբաղդաբար եկուր նայէ որ Ֆլաման գնողները շատախօսին կրպակին ճամբան մուցեր էին. որովհետև մտքերնէն չէր ելած մոյկերուն մէկէն 'ի մէկ ճաթուտիլը: Խեղճ Սքինաէլ աղբարն իր լողիկովն ու յիգօլադի գոյն տաբատովը միայն մնացեր էր. բերանը օդուն բացեր՝ չէր գիտէր թէ ինչ ճար ընէ. գրեթէ գրեթէ բանտարգելի մը վիճակին պիտի նախանձէր:

Մոլութիւն ըսածդ չար բռնաւոր մըն է. երբոր մէյ մը մարդուս սրտին ճամբան կը սորվի ու ընէ չընէ ներս կը մտնայ, կ'ուզէ ինքը միայն տիրել անոր՝ մէջ, և անոր մէջի եղած ինքնաբոյս ու բնիկ առաքինութիւններն արմատէն կը խլէ կը հանէ: Մարդուս ներսի դին ամէն բան կ'աւրէ. պարտքի, արդարութեան ու լաւութեան զգացմունքները բոլորովին կը ջնջէ, և գերի կ'ընէ իրեն զմարդս: Սքինաէլ աղբարը փորձով տեսաւ աս ահաւոր ճշմարտութիւնը: Շատ ճախորդ վիճակի մէջ էին իր

գարձողութիւնները . պարտքով բեռնա-
ւորած , առանց ստրկի մը հոտն առնելու ,
ու սիրտը վիշտերէն կտոր կտոր եղած ,
գլուխը կը դարնէր կողբար իր անխոհե-
մութեանը վրայ . ու քիչ մը մխիթարուե-
լու համար , իր աղջկանը սիրովն ուզեց
սփոփուիլ . բայց անիկայ լիրբ յանդիմա-
նութիւններ տուաւ իրեն , և այնչափ ան-
զգամութեան հասեր էր՝ որ հօրը խեղճու-
թիւնը տեսնալէն ետքն ալ շարունակեց
առջինին պէս փուճ ու սնոտի ծախքեր ը-
նելով իր յիմարական ունայնասիրութիւ-
նը գոհ ընելու համար՝ պարտքեր շատցը-
նել : Քիչ ժամանակ վերջը , Սբինաէլի տը-
ղան Յովհաննէս , կամ թէ ըսենք՝ Յուլիոս ,
ինչպէս որ ինքզինքը կը կանչէր , եկաւ
Բարիզէն . բայց փոխանակ խանութը նըս-
տելու և իր դժբաղդ հօրն օգնելու , ուրիշ
բանի հոգ չէր ընէր՝ բայց եթէ մաքուր
հագուելու , անդադար սրճանոցներն եր-
թալու , սիկայ քաշելու , ու գաղղիացի ձե-
ւանալու : Ուստի եղբայր ու քոյր անողոր-
մութեամբ հօրերնուն դէմ ելան . բռնա-
դատեցին զանիկայ տունը ծախելու , ու
անոր աչքին առջև սկսան փճացընել ան
քիչ մը բանն որ պարտքերը վճարուելէն
ետքը մնաց : Կամաց կամաց Սբինաէլ ա-
նանկ աղքատութեան մէջ ինկաւ , որ հա-
գուստներէն ու դէմքէն ալ կ'իմացուէր .
վրան գլուխը պատրուտած , ինքն ալ աղտոտ
ու մազերը Գերմանիոյ անտառ մը գար-

ճած, որովհետեւ իր ազգատութիւնը ծաղկելու շափ անձնատիրութիւն աչ չէր մնացած քովը . բայց իր տղաքը դեռ ևս առաջըինն պէս հագուած էին, ու աներեւոյթ թեամբ զեղիս կեանք մը կ'անցընէին : Ամենեին տարակուսելու բան չկայ որ ստակ պահած էին՝ իրենց կրից քաղածն քնելու համար, և մաս մըն ալ չէին հանէր անկէց՝ իրենց հօրերնուն :

Կիրակի օր մը որ Աբինաէլ Կնոտի ու պատրուտած զգնատներուն վրայ ամբջնալէն գաւրս ելլելու չէր համարձակած, աւտան մէջ զլուխը ծուած և աչքերն արցունքով լեցուն՝ իր տառապանացն ու զուկրներուն չարասրտութեանը վրայ կը մըտմըտար, երիտասարդ մը ներս մտաւ և Յուլիան ու Հորդենսիան հարցուց : Գերձակ մըն էր աս մարդը՝ չէ նէ ազնուակաւն մը շիտակն ըսելով երեսէն բան մը չէր հասկըցուէր : Երիտասարդը տանը ծառան կարծեց խեղճ ծերունին, և կոտրառակ գաղղիարենով մը ըսաւ .

— « Ե՛՛՛ գնա իմաց տուր Պ . Յուլիանն ու Հորդենսիա օրիորդին որ կը սպասեն իրենց՝ ճամբայ ելլելու համար » :

Աբինաէլ ափշած լսածին վրայ՝ սկսաւ մարդուն վրայ նայիլ առանց տեղէն շարժելու . բայց անիկայ անոյշ քաղաքավարութեամբ մը տոռաց .

— « Դեռ տեղէդ չես շարժիր, անդգամ ծառայ » :

Սրինաէ վիճայնը նետեց ու սաստիկ դող մը եկաւ : վրանս . . . աշտարները կասկարմիր կարեցած ու բռնկած կը նայէր : Իսկ դիմացինը . . . ալ չհամբերելով վեր վերցուց դաշտարներն ու սպառնալից ձայնով մը դաշեց . . .

« Ծոյր թուղամորթ , ես հիմա ոսկորս նկոյր կատրանմ որ հասկընաս . . . »

Բայց դաւազանը դեռ չինջեցաւցած , Սրինաէ առիւծի պէս կատարովեհէն դառաւ : վեր ցատոյնց , և սքեռակ մը առնելը , մարգուն վրայ նետելն ու զանկիայ դռնէն դուրս վերնտեղը մէկ բրու , սոսանց խօսելու իսկ ժամանակ թողաւ անար : Ետքը գուռը գտնեց , ու դեռ բարկութենէն դողալով՝ ամառախէն վեր ելաւ որ երթայ իր գրասենեքը գտնայ : Երկար ատենէ 'ի վեր Սրինաէ վիրա չէր ըրած պզտի յանդիմանութիւն մըն ալ տալու անոնց . բայց հիմա անանկ առաջցած էր որ կը զգար սրտէն թէ կրնար ուղէկ մը երեւելին տալ իրենց բռնած անվայել ճամբան : Երբոր խօսքերնին մտաւ , տեսաւ որ անտեք ինչպէս որ պէտք էր նէ զարդարուած էին , մէկն իրեն հովանեակը ձեռքը , միւսն՝ իր դաւազանը , և կ'ըսէին թէ զուարեակի ընկերութեան մը հետ Պրիւսաէ կ'երթային ուրախանալու : Հայրերնին տաք ու արդարացի յանդիմանութիւններ տուաւ իրենց , բայց կարելի բան չէ ստորագրել թէ տղաքն ինչ աստիճանի արհամարհու

Թեամբ ընդունեցան դամոնք : Արշափ որ հօրը բարկութիւնք կը զայրանար, այնչափ ալ անոնց անամօթ աներեսութիւնը կ'աւելնար . և խել մը ծագր ընելէն ետքը զինքը, մնաս բարով ըսին ու ճամբաց ելան դուրս երթալու :

Հայրերնին այսչափ կարծրասիրտ վայրենութիւն տեսնալով, աչուրները դարձան, ինքիրմէն դուրս ելաւ, և դէպ ՚ի դուռը վազելով անոնց դուրս ելլելն արգելելու համար, յուսահատ ձայնով պոռաց .

— « Ս'ձ դաւակներ, բաւական չէր որ զիս մուրացկանութեան աստիճան հասուցիր, կ'ուզէք նաև ձեր ծագր ընելներովը սպաննել զիս : Բաւական չէր իմ քրտինքով վաստրկածս զեղխութեամբ փճացընելնիդ աւելորդ ու վնասակար բաներու, մինչդեռ ես հազիւ կրնամ վրաս ծածկել ու հազիւ ապրելու չափ ուտելիք կը գրտնամ . բաւական չէր որ լիրբ կոպիտ մարդուն մէկը զիս տղոցս ծառան սեպէ ու սպառնայ ձեռնելու զիս ծառայի մը պէս . բաւական չէ որ ես անօթի ծարաւ ու լեղի արցունքներ թափելով անցընեմ օրերս, մինչդեռ դուք նոր նոր զուարճութիւններ կ'ընէք ամէն օր . աս ամէն բանին վրայ կ'ուզէք որ շան մը պէս ալ մեռնիմ երթամ . ամենէն արհամարհուած, ձեզմէ անխժուած, և առանց մէկուն գթութիւնը շարժելու գերեզման իջնամ : Գիտնաք որ ալ չեմ համբերեր . անզգամութեանն ալ

չափը կայ : Արտեղէն դուրս պիտի չելլար .
և թէ որ հիմա աս վայրկենիս աս հանդի-
սի զգեստները չհանէք վրաներնէդ , ոտ-
քիս ասկ առած՝ երկուքնուդ ոսկրներն
ալ կը ջախջախեմ » :

Աս խօսքերուն բարձրաձայն սկսան խրն-
տալ երկու երիտասարդները , և հայրեր-
նին իմացաւ որ իր վայրենաբարոյ տը-
ղաքներն իրեն կամքն ալ հրամանն ալ
կ'արհամարհէին : Մանչ դաւակը յան-
դըղնաբար դէսլ 'ի դուռը քալեց ու բռն-
նութեամբ ուղեց բանալ զայն :

Անանկ ահաւոր տեսարան մը բացուե-
ցաւ հոն ան ատեն , որ գրիչնիս առաջ
չերթար ստորագրելու և աւելի աղէկ կը
սեպենք լռութեամբ անցնելու :

Քանի մը վայրկեան վերջը Յուլիոս և
Հորդենսիա գոնէն դուրս ելան . երեսնուն
կարմրութենէն ու զգեստնուն նըմբաթքե-
լէն կը տեսնուէր որ կռիւը սաստիկ եղեր
էր . բայց իրենք արհամարհողական ժպի-
տով մը ծիծաղելով ելան գացին իրենց
ընկերութիւնը գտնալու :

Ամիս մը վերջը՝ շաբաթ օր մը Յան Ռուզ-
մաէլ խանութին ներսի խուցը նստած ,
հաշիւները կը գրէր մեծ տետրակի մը մէջ ,
և կէս ժամէ մը 'ի վեր էր որ իրեք փողի վը-
րայ կ'աշխատէր կը յոգնէր ու ճակատը կը
չփէր , որովհետև հաշիւը ճիշդ չէր գար :

Մէյ մ'ալ ան միջոցին խուցին դուռը
բացուեցաւ , ու մարդ մը երկչոտութեամբ

ներս մտաւ . մանրամասնապէս զարմանալէն վեր ցատքեց ու ստատիկ աւշադրութեամբ մը նոր եկեղեցի վրայ կը նայէր . ստանդարտ մը արտաքերեղու : Ներս մանողին կերպուց ըսելով հիւժեակ ու նիհարցանալէր , գտնաթափ , մաղերը խառնակ , քրեզանները սրտատապառուն , կողիկները՝ մրմուռ . Գանձով , ահանկ որ կարծես թէ մութաշիւան մըն էր որ սղորմութիւն կը խնդրէ : Գանձուղ մատչել սկզբուն չճանչցաւ . ով ըզզուրն և կետապրորութեամբ կը կշռէր գունդիկայ . բայց դիմացինն այրայլեցաւ , և շարունակու մը շնորհու կաթիլ արցունք տակեցաւ :

Ան ատեն մանրամասնապէս

— « Արինաէլ աղբար , հարցունք պատշկերպով մը , ինչ կ'ուզես ինձմէ . թէ որ նորէն ստակ փոխ օտելու եկած ես : Այ , հանդարտ տեղդ դարձիր , սեպէ թէ ես հոս չեմ :

— Գանձուղ մատչել աղբար , պանասխանեց միւսն հառաչելով , ոչ ստակ փոխ օտելու և ոչ ալ ողորմութիւն խնդրելու համար եկեր եմ քեզի : Թէ որ դիմացիդ թէ ինչ աստիճանի թշուառ եմ , չէիր մերժեր զիս . բոլոր աշխարհք կ'արհամարհէ դիս , և ոչ իսկ ան մխիթարութիւնն ունիմ : որ կարենամ մէկու մը հետ խեղճութեանս վրայ խօսիլ : Խաբեցի դքեղ , Գանձուղ մատչել , բայց դու ատենդ բարեկամս էիր . տնոր յիշատակին համար ըլլայ գոնէ՝ մի քամահրերդ զիս » :

Մանրավաճառը հասկըցաւ որ իրաւըընէ խղճալի ու սրտաճմլիկ կարօտութեան մէջ ինկեր էր իր հին բարեկամը . մարեցաւ սրտէն անոր ըրած առջի խաբէութեան յիշատակը , աթոռ մը առջև քաշեց , Սբինաէլի ձեռքը բռնեց , ու ըսաւ .

— « Կը տեսնամ որ թշուառ ես , բարեկամս : Աս տեսարանը ամէն առջի բաները մոռցընել տուաւ ինձի : Նստէ կ'աղաչեմ և ըսէ ինձի թէ ինչ կրնամ ընել քեզի : Մի վախնար , ըսէ համարձակ . ինչ օգնութիւն որ պէտք է նէ կ'ընեմ , մէկ շապիկով մնամ ալ նէ :

— Խնդրելիքս աս է միայն քեզմէ՝ որ թող տաս ինձի սրտիս վշտերը թափելու առջևդ ու թշուառութեանցս պատմութեամբը քիչ մը զովանալու : Տարիներով հետդ չտեսնուեցայ , Քան Ռուզմաէլ ուրիշ բանի համար չէ , բայց եթէ յանցաւոր ըլլալուս համար : Իսկ այսօրուան օրս որովհետեւ ան վիճակն հասեր եմ՝ որ պէտք է հայրենիքէս հեռանամ ու թափառական մարդու մը պէս երթամ օտար երկիր մը բողոքովին քաշեմ գլուխս , անոր համար ուզեցի նախ մէյ մը քեզմէ թողութիւն առնել :

— Դժբաղդ ես , կը տեսնամ ես ալ , պատասխանեց մանրավաճառը սիրտն ելած , բայց անոր համար ինչ հարկ է որ հայրենիքդ թողուս հեռանաս : Այսչափ զիս ազահ կը կարծես . ես բարեկամիս վը-

րայ կեանքս կը դնեմ՝ թող թէ ստակս նորէն կը զուրցեմ՝ ըսէ ինծի ինչ որ պէտք է, որպէս զի բարեկամութեանս անկեղծութիւնն աս առթով կարենամ ցուցնել:

— Կ'օրհնեմ զԱստուած, զուրցեց Սբինաէլ երախտագէտ ձայնով մը, կ'օրհնեմ զԱստուած որ խրկեց զիս հոս՝ վերջին անգամ մխիթարութիւն մը գտնալու: Գիտնաս, ազնիւ բարեկամս, որ տարիէ մը 'ի վեր աս առաջին անգամն է որ ուրախութիւն կը զգամ. փանօք Աստուծոյ: Բայց մտիկ դիր ըսելուքներուս, և ան ատեն կը տեսնես որ բաց 'ի կարեկցութենէ անկարելի է ուրիշ օգնութիւն մը ինծի ընել: . . . Գիտես թէ ինչպէս անխելքութեամբ խելքըս փշեց դաղղիացիի նմանութիւն առնելու. խաբէութեամբ ու ստութեամբ ուղեցի հարսաանալ, և երկայն ատենուան աչխատութեամբ դիզածս կորսնցընելու վատնդին մէջ ձգեցի զիս: Բայց առակը ազէկ կ'ըսէ. աւելի ազէկ է ձեռքդ մէկ թըռչուն մը ունենաս, քան թէ եօթը հատ՝ օդուն մէջ: Եկուր նայէ որ ես գոհ չեղայ խարդախութեամբ արուեստս բանեցընելուս, հապա ուղեցի որ իմ զաւակներս ալ դաղղիական ըսուած քաղաքակրթութեան թոյնէն խմեն: Աս եղաւ ահաւաակ դր իմ թշուառութիւնս լրացուց. թէ որ ես թերեզա աղջիկս դաղղիացի երեկօթիք դպրոց մը խրկած չըլլայի, դեռ ինչուան այսօրուան օրս Սբինաէլ աղբար մնացած

կ'ըլլայի . . . բայց ինչ է , Ֆան Ռուզմակէ ,
գոյնդ կը նետէ , դողալ կը սկսիս :

— Բան չկայ , առաջ տար խօսքդ .
միտքս Սիւքային գնաց , որ նոյնպէս գաղ-
ղիացի երեկօթիւք դպրոց մը խրկած ենք :

— Հանէ կ'աղաչեմ , բարեկամս , հանէ .
որչափ կրնաս նէ շուտ կանչէ . գիտնաս
որ տուն գալու ըլլայ նէ՛ պիտի չճանչնաս
զինքը :

— Ես ալ կարծեմ թէ իրաւունք ունիս .
բայց հիմա խօսքդ առաջ տար :

— Երբոր տեսայ որ բաներս ձախորդ
կ'երթան , ուղեցի ճամբաս փոխել ու առ-
ջի ջուրը բռնել . բայց գաղղիական նորա-
ձև դաստիարակութիւն առնողներուն հա-
մար ոչ հայր կայ , ոչ զաւակ : Ես տը-
ղոցս ծառան եղայ , անոնք իմ տէրս .
կերան , խմեցին , խաղացին պարեցին
մինչև որ ամէն բան լմընցաւ . բայց ան-
կէց վերջն ալ իրենց չար ճամբովը գացին ,
պարտքեր ըրին և ունեցածս չունեցածս
ամէն բան ծախեցին , և երբոր անոյշ կեր-
պով մը կը խրատէի զիրենք՝ խենթ կամ ան-
խելք կը կանչէին զիս : Ասկէց ամիս մը ա-
ռաջ նայէ թէ ինչ ըրին ինծի . . . անանկ
ղարկին ձեծեցին զիս , որ երեսս բոլոր ա-
րիւնտեցաւ : Վէրքերէս անկողին ինկայ .
ասոնք ոչ հոգացին զիս և ոչ քովս եկան ,
կարծես թէ մահս կ'ուզէին » :

Յրինաէլի ձայնն ընդհատեցաւ , այն-
չափ սիրտը կը կտրրտէր պատմածներէն :

Երբոր քիչ մը հանդարտեցաւ, այսպէս առաւ խօսքին թելը .

— « Հիմա տունս անանկ մերկ է, որ իբրև թէ ոչ երբէք բնակուած ըլլար . ամէն բան առին տարին տունէս, ինչուան անհոգնիս վերմակն ալ, ու ելան գնացին՝ Թերեզյան Պրիւսսէլ, իսկ Յովհաննէսն ալ՝ Բարիզ : Իսկ ես՝ պէտք է որ հոստեղէն ելլամ . որովհետև ամէն դիմացս ելլողը պարտատէրս է ու զիս նենգաւոր խաբէքայ կը կանչէ : Աս բանս չեմ կրնար քաշել : Աս ալ մէկդի թողունք, ալ ասկէ ետքը հոս ինչ պիտի ընեմ . ոչ որ կ'աշխատեցնէ զիս . ուրիշ կօշկակարները չեն առնեք զիս իրենց խանութը . ոչ հաց ունիմ ուտելու, ոչ անկողին պառկելու, ոչ ըզգեստ հագուելու . տունս ուրիշին վարձքի տրուած է, ու վաղը չէ մէկալ օր պէտք է ելլամ անկէ : . . . կը տեսնաս, Պան Ռուզմաէլ, շատ բարձրէն թռչել ուղելու՝ շատ ցածը ինկայ . աստուս ինծի » :

Ո՛վ կրնայ ստորագրել մանրավաճառքին զգացած յոյզքն ու գորովը . երբոր լսեց ծայրէ՛ի ծայր այս աղէտալի անցքերը, նորէն բռնադատեց զՍթեփնաէլ որ պարտքերուն որչափ ըլլալն ըսէ, որ ճարն ընէ . բայց երբոր տեսաւ որ անիկայ կամաւ կը լռէ, կերպը փոխեց, ու միաբը փոխած ձեացընելով զինքը՝ ոտք ելաւ ու ըսաւ .

— « Ի՞նչ ընեմ, դու չես ուզեք, յանցանքը քուկդ է . բայց գոնէ ճամբորդու

Թեանդ յաջողութեանն համար գաւաթ մը
գինի խմենք . դեռ գինեաւանս մէջ տաս-
նըմէկ տարուան գինիէն քանի մը շիշ մնա-
ցած է : Եստէ նստէ , Սքինաէլ , ու սիրտ
տա , գիտնա սա մեր դիմացէն անցնող էս-
քայ գեաթն մէջէն որչափ ջուր կ'անցնի տա-
քուտն մը մէջ . գոչաղութիւնը շուտով
կու գայ մարդու գլուխը , բայց երբեմն
երջանկութիւնն ալ չկարծած ատենդ կու
գայ :

Աս ըսաւ ու գինետունը վաղեց , և քա-
նի մը վայրկենէն դարձաւ . երկու գաւաթ
դրաւ ստոլին վրայ , ինչուան բերանը լե-
ցուց , ու ըսաւ բարեկամին .

— « Սքինաէլ աղբար , ահա սա գա-
ւաթս ճամբու յաջողութեանդ ու առողջու-
թեանդ համար կը խմեմ : Ե՛ նայինք ինձմէ
բան մը չընդունեցար նէ , գոնէ ըսէ տես-
նամ թէ որչափի կ'ելլայ պարտք , ու ինչ
կերպով միտքդ դրեր ես վճարելու զանոնք .
պարզ աշխատանքով մարդ շատ բան չկր-
նար ձեռք ձգել , երբոր վաճառականու-
թիւն չընէ :

— Ես ալ գիտեմ աս բանս . բայց խղճե-
մաւնքիս հանգարտութեանն համար՝ բեր-
նիս հացք պիտի կտրեմ՝ որպէս զի քիչ
քիչ պարտքերս վճարեմ , և յուսամ յԱս-
տուած՝ որ թէ որ կեանքս դեռ երկընցը-
նելու ըլլայ , կարենամ վերջապէս բոլորս
վիճի սրբելու զանոնք . կարծեմ թէ քսան
տարուան մէջ վեց հարիւր Փիորին կրնայ
մէկդի դրուիլ :

— Հայանտայի՛ Փիորին :

— Չէ, Պրապանդի Փիորին : Աւելի էք պարտքս, բայց տունս ծախուեցաւ Ին՛ կտոր մը բան կրցայ վճարել :

— Մէյ մ'ալ խմենք, Սբինաէլ աղբար : Ինձի ալ կ'երևայ որ այսչափ ստակ կրնայ մարդ վաստըկիլ. անկէց վերջը յուսանք որ տղաքներդ ալ օր մը լաւնան ու օգնեն քեզի . որովհետեւ առակը կ'ըսէ թէ իմաստութիւնը տարիքէն առաջ չգար մարդուս : Բայց մենք գինիին հետ թափխելու բան մը չունինք . երթամ քիչ մը անուշեղէն բերեմ » :

Յան Ռուզմաէլ բառական ուշացաւ դառնալու, որչափ որ գացած քանին համար ժամանակ պէտք չէր : Երբոր դարձաւ ու անուշեղէնները սեղանին վրայ դրաւ, լաւը կերպով մը ըսաւ կօչկակարին . . .

— « Սբինաէլ աղբար, բարեկամ ըլլալը ցուցրնելու համար՝ կ'ուզեմ ազատի օգնութիւն մը ընել, քիչ մը փոխ ստակ տալ ճամբորդութեանդ համար . և որպէս զի ժամանակաւ շփոթութիւններ չեղան, ահա ես սա դրուածքը պատրաստեցի, անորազրէ՛ տակը՝ որ պարտքդ ճանչնաս . բայց որովհետեւ չեմ ուզեր որ եօթը ութը Փիորինով ճամբայ ելլաս ու նեղութիւն քաշես ստակի քիչութեան կողմանէ, առանց գլխուածքը կարդալու ստորագրէ, որպէս զի ստակին չափին վրայ դժուարութիւն չըհանես » :

Սրինաէլ երախտագիտութենէն ինքիր-
մէն գորս ելած՝ մանրավաճառին ձեռքը
սխմեց, ու առանց անդրադարձութիւն
ընելու ստորագրեց:

Փան Ռուզմաէլ մէկէն ձեռքէն առաւ
թուղթը, և գինիին դաւաթն օդուն մէջ
բարձրացընելով, զուարթ ձայնով աղա-
ղակեց.

— « Առջ ճամբորդութեանդ համար
դինի խմեցի, իսկ հիմա հոս մնալուդ ու
նոր խանութիդ աղէկ առաջ երթարուն
համար կը խմեմ: Խմէ՛ գուն ալ, ուրախա-
ցիր հետս: Հապա ի՞նչ կարծեցիր զիս.
Նայէ ինչպէս որոգայթիս մէջ ձգեցի զքեզ.
հիմա վրայդ կը խնտամ ալ:

— Չեմ հասկընար ըսածներդ, պա-
տասխան տուաւ Սրինաէլ ապշած: Անանկ
ախորժով կը խնտաս՝ որ իմն ալ կը շար-
ժես. բայց ի՞նչ բանի վրայ է նայինք:

— Ի՞նչ բանի վրայ: Նայէ մէյ մը հոս
թէ որչափ ստակի համար ստորագրութիւն
տուիր »:

Աս որ ըսաւ, հեռուէն թուղթը ցուցուց,
որուն մէկ ծայրը մեծ գրերով 1000 թիւը
գրուած էր:

— « Հազար Փիորին, աղաղակեց Սրի-
նաէլ՝ դէպ ՚ի մանրավաճառին վազելով ու
թուղթը ձեռքէն յափշտակել ուզելով.
հազար Փիորին:

— Հրամներես, հազար Փիորին, ըսաւ
խնտումով Փան Ռուզմաէլ. ու քանի մը

Թղթադրամ և պարկ մը դրամ ստոյին վը-
րայ դնելով Ահա աս է ստակը , միայ բե-
րաւ :

— Չէ , չեմ ուզեր . խնդրեմ մի ստիպեց
զիս առնելու . ես անոր համար չեկայ հոս ,
կը զուրցէր խեղճ մարդը՝ գետի պէս առ-
ցունք թափելով :

— Մտիկ ըրէ ինծի , խօսքէն դուրս մի
ելլար : Ես հարուստ եմ . Սիսրան մէկ հա-
տիկ աղջիկս է , և այնչափ բան կը մնայ
իրեն՝ որ ոչ երբէք կրնայ կարօտութիւն
քաշել , թէ որ չմսխէ նէ . խանութնիս ա-
մէն տարի քանի մը հազար Ֆիորին կը բե-
րէ . անկէ զատ՝ աղէկ տուներ ալ ունինք ,
և խել մըն ալ տտակ՝ ապահով տեղ շահու-
դրած : Ի՛նչ պիտի ըլլայ ուրեմն ինծի հա-
մար հազար Ֆիորինդ . բան մը չէ . քա-
նի մը ամսուան աշխատանքով կը վաստը-
կիմ այնչափ բան : Եւ կ'ուզես որ հազար
Ֆիորինի համար թողում որ բարեկամս
Թափառական պտըտի : Չէ , չէ . ան գա-
սա ստակը , ու խորհրդիս հետեւէ . որչափ
որ պարտատէր ունիս նէ՝ ամենաբն իրենց
առնելիքը կը վճարես , որով կը դառնան
նորէն բարեկամ կ'ըլլան քեզի . աս փո-
ղոցին ծայրը տուն մը ունիմ որ հիմկու հի-
մա պարապ է , կ'երթաս հոն կը բնակիս .
հոնտեղ նորէն խանութդ կը բանաս . կ'առ-
խատիս ընկերներով , ես ալ ինչուան որ
բաներդ կարգի մտնան՝ ամենայն կեդրպով
կ'օգնեմ , ու քեզի գնող ալ կը բերեմ . և

որովհետև պայման մը գրուած չէ աս ձեռքի թղթիս մէջ, քիչ քիչ կը դարձընես ինձի առած ստակդ . բայց դիտնաւ առջի խենթութիւններդ նորէն ձեռք պիտի չառնես : Տղաքդ ալ կը տեսնաս որ թշուառութեան մէջ կ'իյնան ու վերջապէս ինքիբեանուն կու գան քովդ ու թողութիւն կը խնդրեն :

— Սիրոս առաջ չերթար ասանկ մեծ առատաձեռնութիւն մը ընդունելու . բայց ինչ ընեմ, կը բռնադատես զիս, աղաղակեց Սբինաէլ :

— Եկուք սիրոյ համբոյր տանք իրարու, պատասխանեց Ֆան Ռուզմաէլ . այսօրուան ունեցած երջանկութիւնս տասը հազար Ֆիոթիներն աւելի կ'արժէ » :

Երկու բարեկամները սիրալիր խանգաղանօք գրկուեցան իրարու հետ, և ուրախութեան արցունքներ թափելով՝ քիչ մը ատեն լուռ կեցան : Ետքը մէյմէկ գաւաթ գինի ալ տնկեցին, նոյնպէս առանց խօսելու :

Յետոյ Ֆան Ռուզմաէլ ըսաւ բարեկամին .

— « Սբինաէլ աղբար, նայէ զգոյշ կեանաս կեոջս բան մը ըսելու այսօրուան եղածին վրայօք . կնիկները առատաձեռն են բնութեամբ, բայց քիչ կնիկ կայ որ իր էրկաճն առատաձեռնութիւնը ախորժի: Ուստի կ'ուզեմ որ տանը վարձքը ամէն ան-

գամ իրեն տանիս տաս , և բան չգիտցողի պէս ձեացուր գրեզ ։ :

Քանի մը օր վերջը Սբինաէլ Տան Ռուզմաէլի տան մէջ երկու մանչով իր արուեստին կ'աշխատէր : Եւ քանի մը ամսուան մէջ շատ առաջ գնաց , թէ աղէկ կօշիկներ ծախսելուն համար և թէ իր բարեկամին տարած խնամքովը : Ա՛լ ամէն կիրակի երկու բարեկամները Սդինէնպրուկ կ'երթային , և իրիկունն ալ իրենց սմաժախողը կը խաղային . և իրենց երջանկութեանն ուրիշ բան չէր պակասէր : բայց եթէ իրենց զակընդուն լաւութիւնը :

Հորդ են սխալին անվայել ընթացքն աս
 օգուտն ունեցաւ՝ որ Յան Ռուզմաէլ կըր-
 ցաւ անով համոզել իր կնիկն՝ աղջիկնին
 հանել տալու գաղղիական երեկօթիւք
 դարոցէն . ծերունի բժիշկն ալ շատ վրայ
 տուաւ այս բանիս : Ա երջապէս յետ իրեք
 տարի գաղղիական դաստիարակութիւնը
 վայելլու Սիսքան և վերջի տարին հան-
 դրստեան ամիսները իր ծնողաց տունը
 չգառնալու , մայրը հաւանեցաւ էրկանն
 ու բժշկին զուրյածին : Ուստի աղջը-
 կան վարժապետուհիներուն շնորհակալու-
 թեան թուղթ մը գրուեցաւ , և Սիսքային
 ալ իմաց տրուեցաւ որ ամսուն քսանին՝ ի-
 րիկուան չորսին մայրը շոգեկառքին կայա-
 նը կը գտնուի՝ զինքն ընդունելու :

Աս ըսած օրերնիս օգը բաց ու պայծառ
 էր : Ժամը իրեքուկէսին շոգեկառքին կայ-
 անը կը սպասէր մայրը , մաքուր բայց պարզ
 հագուած , և ապահովութեան համար՝ մեծ

հովանոց մը հետն առած : Խեղճին սիրտը վեր վեր կը նետէր , մտածելով որ իր օրերն ի Սիւքան պիտի գրկէր , որուն այնչափ կարօտացեր էր , և պիտի վայլէր անոր առած փառասոր դաստիարակութեան պտուղը , որուն համար որչափ վէճեր ըրեր էր էրկանը հետ , որչափ սիրտը մաշեցուցեր էր , որչափ դժուարութեանց յաղթեր էր . մեծ էր խեղճ կնկան ուրախութիւնը :

Վերջապէս շոգեկառքին տուլելու ճայնը լսուեցաւ . որոտման պէս եկաւ ահագին մարմինը , քանի մը վայրկեան կանկ առաւ որ ճանապարհորդները վար իջնան : ու ելաւ թուա : Մայրը կայանին դուռը կեցած անձկանօք կը սպասէր , ու ամէն ան ջլէէն անցնող կանանց վրայ չորս աչքով կը նայէր . բայց կառքերը ճամբորդներով լեցուած՝ սկսան գէպ ՚ի քաղաք վազել , համայնակառքերը (օմեհպուս) սկսան շարժիլ , ու ինքն իր ուղածը չէր տեսներ : Տեսարութենէն սիրաբ ճզմուեցաւ , ու խոր մը հառաչեց . աչքերն իր Սիւքան չէին գտած : Բայց դեռ տեղն անշարժ կեցաւ , և թերևս երկար ատեն ալ մտածութեանց մէջ ընկղմած անանկ կանկ կ'առնէր հոն , թէ որ յանկարծ հեռուանց վիժիլակոք քսուած վարձուոր կառքի մը քով երիտասարդ կին մը տեսած չըլլար , որ կարծես թէ մէկու մը կը սպասէր , որովհետեւ աչքը ասդիս անդին կը պտըտոցընէր :

Արդեօք Սիւքան էր կ'ըսես ասիկայ .

կարելի բան չէ : Հարուստ խաթուն մըն է աս տեսածնիս . մետաքսէ զգեստ հագած է , և հազիւ թէ ամենաթեթեւ տեսնող վզին և ուսերուն վրայ ձգած . պզտի շարժմունք մը ըրածին պէս՝ երկայն խոսքոսքոսքներ կը ծածանին երեսին վրայ . ազնիւ նիւթէ գլխարկին վրայ փափուկ փետուրներ կը շարժին . գոյնզգոյն հովանեակ մը բռնած է ձեռքը . առջևը գետինը տասնքէնք տուփ ու երկուք ալ պզտի արկղիկներ տարածուած են . . . չէ , Սիւքան չկրնար ըլլալ :

Ատանկ կը մտածէր Յան Ռուզմաէլի կնիկն ու երթալով աւելի կը տագնաուպէր : Մէյ մ'ալ յանկարծ աս ըսած երիտասարդ կնիկնիս նշան մը ըրաւ դէպ 'ի պառաւին , որով կ'խմացընէր թէ համբերութիւնն հատեր էր սպասելէն : Ի՞նչ կ'ըսես . իրաւընէ Սիւքան է եղեր : Մայրն այլայլած՝ երիտասարդի պէս զաւկին առջևը վազեց՝ աչքերը լնցուն . և մէկէն այլայլութիւնը ուրախութեան փոխուելով , թեւերը բացաւ ու ազազակեց .

« Սիւքան , սիրուն զաւակս » :

« Սիւքան անունէն աղջիկն ամբչցաւ ու կարմրեցաւ . բայց երկար չտևեց ասիկայ , ու երկու քայլ մը առաջ եկաւ դէպ 'ի մայրը . երբոր մայրը թեւերը բացած կ'ուզէր գրկուիլ հետը , անիկայ՝ իբրև թէ ուրիշներուն դիմաց ծաղրելի չըլլալու համար՝ մօրը ձեռքէն բռնեց ու թող չտուաւ որ սքաղտուի : Ետքը ըսաւ .

« Բարի տեսանք . ինչպէս ես , աղէկ եմ : Հայրս ինչպէս է : Զգուշութիւն ըրէ խնդրեմ , տուփերուս վրայ կը կոխես : — Գիտե՞ս կէս ժամ է որ կը սպաւակմ հոս քեզի » :

Աս խօսքերը դանակի հարուածի մը պէս վիրաւորեցին մայրենի սիրտը . տարի մը տնէն հեռու կենալէն ետքը ասոնք պետք էր ըլլային աղջկան մը սիրոյ առջի խօսքերը . ասանկ տեսնուիլ կ'ըլլար անոր հետ , որ իրեք տարի տարածայնութեամբ ապրեր էր իր ազնիւ էրկանը հետ . ինչ է Սիւքան գոհ ընելու համար : Անանկ վըտացեր էր մայրը , որ թաշկինակօլն սկըսաւ արցունքները սրբել , որոնք աւելի առատ էին քան ուրախութեան արտասուքները :

Սակայն Սիւքայի սրտէն բոլորովին ջրնջուած չէր զգացմունք ըսած բանդ . անանկ որ մօրը ցաւը տեսնելով , առջի Սիւքան դարձաւ ու սլլուեցաւ մօրը անանկ սքրտանց , որ խեղճը մոռցաւ առջի վիշտն ու մեծապէս մխիթարուեցաւ :

Բայց եկուր նայէ գծբաղդութիւնն , որ անդիէն մէկն սկսաւ խնտալ ծագր ընելու կերպով մը . Սիւքան աս տեսածին պէս առջինէն աւելի կարմրեցաւ , բաժնուեցաւ մօրը գրկէն ու առջինին պէս անտարբեր կերպարանք մը առաւ :

Աս միջոցին տուփերը վիժիլանդիս մէջ գրուած էին . և անանկ լեցուեր էր կառ-

քը , որ չէր կրնար երկու հոգի մէջը
առնել : Սիւքա վախնալով որ եթէ մէջը
նստելու ըլլան նէ՛ յանկարծ վրանին կը
կոխուի ու կ'աւրուին , ըսաւ կառավարին
որ բեռները տուն տանի , ու ինքը միտքը
գրաւ ոտքով երթալ քաղաքը : Աս որոշ-
ման մէկ պատճառն ալ ան էր , որ կ'ուզէր
երևցընել քաղաքացւոց իր հազուատը :

Բացաւ Սիւքա իր հովանեակը , համար-
ձակ քալուածքով մը սկսաւ առաջ երթալ ,
և ոչ իսկ մօրն երեսը նայելով : Ան ատեն
մայրն սկսաւ սրտէն իրաւունք տալ բժըշ-
կին ըսածներուն . և այսպիսի տխուր խոր-
հրդածութիւններով պաշարուած՝ իբրև
ազախին մը կը քալէր իր տիկնոջ ետեւէն :
Խել մը ատեն լռութեամբ առաջ երթալնէն
ետքը , երբոր քաղաք մտան՝ Սիւքա մէյ
մը գարձաւ մօրը վրայ աղէկ մը նայեցաւ
վերէն վար , ու ետքը ըսաւ .

— « Աս ի՞նչ կերպ հազուեր ես , մայր
իմ . աս ի՞նչ գլխարկ է , աս ի՞նչ թիկնոց
է , կարծես թէ ջրհեղեղին ժամանակէն
են . ես քու տեղդ կ'ամբչնամ : Գոցէ սա
տգեզ լայն հովանոցդ . չէ նէ գեղացի կը
կարծեն զմեզ :

— Սիւքա , ի՞նչ կ'ուզես զգեստէս , ը-
սաւ ծանրութեամբ մայրը : Իմ ողորմած
հոգի մայրս ճիշդ ասանկ կը հագնէր . ու
կ'ուզէս որ աս հասակիս զգեստս փոխեմ :
Ուշադրութիւն մի ըներ անցնող գացողնե-
րուն . ինչ որ կ'ուզեն նէ ըսեն . մեզի ի՞նչ
պէտք » :

Երբոր Տան Ռուզմաէլ խաթունը ասանկ
կը խօսէր , Սիսքա աշուճները առգիւտն
դին կը պարտոցընէր՝ տեսներու համար թէ
իրեն հաւնող կայ արդեօք , և ետքը անանկ
աչքով մը կը նայէր զգեափն վրայ , իբրև
թէ կը ցուցընէր օւրիշներուն որ իրենց
ալ նային :

Մայրը համարձակեցաւ հարցընելու աղ-
ջրկանը թէ չէր ձանձրացած արդեօք երև-
կօթիւք դպրոցին մէջ , և թէ աւելի աղէկ
չէր սեպէր իր ծնողացը քով կենալ , ու ա-
սոնց նման ուրիշ խել մը բաներ : բայց որ-
չափ ալ Չանաց որ աղջկան մտածութիւն-
ները առջի ջուրը փոխէ , չյաջողեցաւ :
Թեթևսոյիկ Սիսքան խելքը միտքը փա-
փուկ կերպով քալելու տուեր էր ու մօրը
խօսքերը հազիւ թէ օկանջէն կ'անցնէին :

Կաթի վանառանոցն որ հասան , երի-
տասարդ մը շիտակ քովն եկաւ , զուարթ
կերպարանքով և անանկ բնտանկբար , որ
մարդ իր եղբայրը կը կարծէր : Մայրն
աշուճները մեծ մը բացաւ ու աղէկ մը
նոր եկողին երեսը կը նայէր : Անկկայ աս-
մենեին հոգ չընելով մօրը նայելուն , դի-
մացը կեցաւ , ու գաղղիարէն ըսաւ Ան-
քային :

— « Բարնէ , Եւզոքսիա օրիորդ : Ի՞նչ ,
երեկօթիւք դպրոցէն ելեր ես . ուրեմն Ան-
վերսա քաղաքն ասանկ անձ մը ասկէց
վերջը պիտի վայլէ . ի՞նչ մեծ երջանկու-
թիւն » :

Սխաբա անոյշ աչքով մը նայեցաւ քան
զարթաւարու թիւն ընողին, ու վախկոտ
կերպով մը բռաւ :

— « Աս ինչ աւելորդ բաներ կը խօսիս,
պարտն Գէորդ . բայց Նլոդիւս քոյրդ ինչ-
պէս է :

— Աղէկ է, շատ աղէկ, պատասխա-
նեց երիտասարդը պազ կերպով մը » :

Ետքը ծաղրական ոճով մը հարցուց,
պառաւ կինը ցուցընելով .

— « Ասիկայ հրամանքիդ աղախինն է » :

Նորէն կարմրեցաւ Սխաբա ամօթէն . և
աս անգամ իր մօրը վրայ կ'ամբշնար :
Քանի մը վայրկեան լուռ կեցաւ, ետքը
հուսկ ուրեմն պատասխանեց .

— « Մայրս է :

— Իրաւ կ'ըսես . և դէպ ՚ի մօրը դառ-
նալով, բարե տուաւ ծռելով ու ըսաւ .
Տան Ռոզմալ տիկին, կրնամ իմ մեծա-
րանքս յայտնել քեզի : Ի՞նչ սակաւագիւտ
աղջիկ ունիս » :

Մայրն աս խօսքերէն բան մը չհասկը-
ցաւ . և թէպէտ ինքն ալ գլխով բարեն
առաւ, բայց իմացաւ որ դիմացինը ծայր
կ'ընէր զինքը : Երբոր երիտասարդն հե-
ռացաւ, ըսաւ աղջկանը .

— « Ամօթ չէ որ այնպիսի անխելք ու
փռեմ մարդուն պատասխան կու տաս :
Եւ ի՞նչ է ան Եդոքսիա անուան որ տուաւ
քեզի :

— Ի՞նչ, կարծեցիր որ իրեք տարի դադ-

զիացի երեկոթիւք դարաց անոր համար
կեցայ՝ որ առջինին պէս կուգիտ. աւանքս
դաքաւար մտամ: Աս երիտասարդք ծա-
նօթս է. իր կլոպիլա քոյրն իմ բարեկամս
էր, և զինքը շատ անգամ անոր քով դա-
տած եմ:

— Արդեօք Պետրոս Յանսէրդանկընը
սուամն է:

— Հրամանքե՛ս, պարոն Յանսէրդան-
կընն է:

— Չէ՛ս իրանիւ: Յիւքա՛, ան սնուլ-իւ-
րուելուդ ան մարդուն արդարն հետ՝ որ
զհայրդ կ'ածիրէ. այն անգործին հետ, որ
քաղբին մէջ պարտաւ պաշտոնիցն: Աւանդ
դացն ունեցածք չունեցածք մեխերին դատ
ուրիշ բան չգիտեր:

— Սափրիչ ըլլալէն ինչ կ'ըլլայ ինք
աղէկ դատարարակութիւն տուած է, և ինչ
րիզ ալ բնակած:

— Բան գործ չընելն ու ծնողաց վիշտը
լանն է աղէկ դատարարակութիւնը, պա-
տասխանեց մայրը: Գիտնա՛ս, Յիւքա,
չեմ ուզեր որ ասանկներու հետ բարեկա-
մութիւն ընես: Իսկ անունդ ալ, նոյն է
քուկդ՝ ինչ որ է իմինս, ուստի Յիւքա տի-
տի կոչուիս: Ուսկից ալ ելեր գետեր եւ այդ
Եւզոքսիա ծիծաղական ածուեց:

Յիւքան նեղացած՝ ասանկ պատասխան
սուաւ:

— « Ես ինչ յանցանք ունիմ որ իմ ըն-
կերակից օրիորդներս դալտոցին մէջ անունս

գիտակցին՝ շատ հասարակ է ըսելով. թող
որ շխտակն ըսելով աւելի կ'ուզեմ Եպոք-
սին ջրան Բուզմալ ըստիլ քան թէ ան Սիս-
քա ջրան Բուզմալէ գեղացի հնչմունքը լսել,
որ ախանջներս կը պատուէ ։

Իժբանդ մայր . աս վայրկենիս միայն
սկսաւ միտքը դալ Հորգենսիայի բռնած
ճամբան , և սրտին նեղութենէն բոլոր ան-
դամները գող ելան : Անտարակոյս զօրա-
ւոր յանդիմանութիւն մը կու տար ազը-
կանը աս վերջին խօսքին համար . բայց
նոյն միջոցին իրենց խանութը հատան :
Խանութին մէջ ուրիշ մարդ չկար՝ բաց 'ի
ջրան Բուզմալէն , որ խահուէ կ'ազար :
Միտքան համարձակ առանց վախի գրկուե-
ցաւ հօրը հետ , որովհետև մարդ չկար
տեսնող : Այս առջի տեսութեան հայրն
իբր որդեակը գորովովը լեցուած , անանկ
ուրախութիւն մը զգաց՝ որ ուրիշ բանի
ամենեւին չամբարտարձաւ : Բայց հայր
մայր քոր կարեցան՝ երբոր անմիջապէս
ետքը Միտքան դաղդիարէն լեղուով հար-
ցուց .

— « Ո՛րն է խուցս , մայր իմ : Երևտով
քակիբ խնդրեմ ուր պիտի կենամ . տու-
գիերս հոս գեախնը պիտի չթողում կար-
ծեմ : Կառավար , եկուր հոս օգնէ ինծի որ
վեր կրեմ սըւտնք » :

Ժամ մը վերջը Միտքա խուցը քաշուեր
առակերը կը բանար , դիտարկներն ու ան-
համար զգեստները դուրս կը հանէր , ա-

նուշահոտ իւղերն ու ոգիքը վարդաւ կը շահէր, և մատուրներովը միտկերայ խաւար պիքները կը շտկէր՝ որպէս զի աւելի դիւրաւ ծածանին: Միանդամայն գազդիտութեն անվայել երգ մ'ալ կ'երգէր, անանկ բարձր ճրագայն և ուժով, որ խանութին ակնքէն ձայնը կը լսուէր:

Տան Ռուզմանէլ արշած կեցեղէն, ակն ձեռքովը խահուէի աղարկիին կոխը բռննած անգործ, մէկալ ձեռքովն ալ ճահագար շիեղով. խոր և ցաւագին մտնած տխրուն մը առեր էր զինքը: Ռարիշ՝ բան չէր մտածիր ինքն ալ բայց եթէ Հորդենտիայի վարքը, և եղբունն երբեմն ցած ձայնով մը խնդիրեն կը խօսէր:

— «Նայէ՛ նայէ՛ սա իմ անխելքութեանս ու տկարութեանս: Ան ինչպէս անպըն գազուխ կնոջս խօսքին մտիկ րբի. աւելի աղէկ էր որ գլուխս քարին զարնէի: Տող դօր Բէլքմանսը չըսաւ որ գլուխս ձիւնաբտի գայ. բայց ինչ բանի կու տայ կիմս ողբալս »:

Մօրը տագնապն ու անձկութիւնը շատ աւելի էր. և միանդամայն խղճմտութեն ալ զարնելով, կը չարչարուէր ու հանգիտ չէր գտնար. խոհանոցին մէկ ձայնը նըրա տած, մերթ կը հառաչէր, մերթ կու լայ, և որչափ որ ձախորդ կերպով անպարտիկ վրայ կը մտածէր, այնչափ աւելի գազն արցունքներ կը թափէր:

Իժբաղզարար ոչ արցունք, ոչ յանդի-

մանութիւն օգուտ մը ըրին , և ոչ իսկ խրատն ու աղաչանքը . ամէն բան անօգուտ եղաւ . Միսրան իր կամքն ու իր յօժարութիւնը ՚ի դորձ գնելէն ետ չկեցաւ : Չարմանալին այն է՝ որ փոխանակ անիկայ փոխուելու , մայրը փոխուեցաւ կամաց կամաց , ու մայրենի սիրովը խաբուած՝ սկըսաւ արդարացընել իր աղջիկն հօրը առջև , ըսելով թէ իրաւ երբեմն մտահաճութիւններ և ուրիշ քանի մը պակասութիւններ ունի Միսրան , բայց մեծ բաներ չեն ասոնք , և սրտին մէջ չարութիւն չկայ : Առներողամտութենէն վերջը՝ աղջրկան իր վրայ սէրն աւելցաւ , և ինքն ալ ուրիշ գովեստ չկարենալով տալ վրան՝ ասանկ կ'ըսէր խանութն եկող բարեկամներուն .

« — « Երբ Միսրան աղէկ սորվեր է , գիտնա : Աւելի աղէկ գիտէ գաղղիարէնը՝ քան թէ իր Ֆլաման լեզուն : Նմանը չըզտնուիր բոլոր Անվերայի մէջ » :

Միսրային առած աս գեղեցիկ կրթութիւնը հետևեալն էր . ոչ թէ գաղղիարէն լեզուն կատարելապէս գիտէր , հապազարդարուելու և փցուն բառերն ու ոճերը սիրայն : Թուարանութեան ինչ բան ըլլալն իսկ չէր գիտէր . որովհետև ինչ կը վայէր իրեն պէս դաստիարակուած փափուկ օրհարգներուն որ անանկ խրթին գիտութեան խելք յոգնեցընեն : Աշխարհագրութենէն գիտցածը այսչափ միայն էր՝ որ Քարթղ աշխարհիս ամենէն աղուոր քա-

զաքն է , ուր միշտ կը խաղան միշտ : կը պարեն , ուր տասը անգամ աւելի թաւարոն կայ քան եկեղեցի , ուր կը հնարուին նորեղուկ զգեստները , և այլն : Ասկէ զատ՝ ծանօթ էին իրեն աւէն կանացի հագուստներու , աւէն կերպուաներու , աւէն տնաշահատ իւղերու և ոգիքներու , աւէն խմորեղէններու և շաքարեղէններու գաղղիական անուաները : Աս էր ահաւասիկ Ախաբայի առած կրթութիւնը : Գիտար հաւնէ ասանկ աղջկան մը :

Անանկ ազէկ ըմբռներ էր աս բաներս Յան Ռուզմաէլ , որ օր մը ասանկ կ'ըսէր Բէլքմանս բժշկին .

— « Թէ որ մենք քու խորհրդոյդ հետեւած ըլլայինք , տօգդօր , այսօրուան օրս մեր Սիւքան երջանիկ կ'ըլլար , չափաւոր և ամօթխած , և խանութնուս մէջ կ'աշխատէր . սրտանց զմեզ կը սիրէր , և մենք ալ ան ատեն աւելի սիրով կ'աշխատէինք՝ որպէս զի ժառանգութիւննիս աւելի մեծ ըլլայ և խանութնիս շատ մարդիկ յաճախեն . իսկ հիմա ընդ հակառակն ինչ է իրեն ըրածը : Մետաքսէ գողնոց մը կատած , գլուխը բաց և մազերը խոպոպիւններով հիւսուած , կը նստի խանութը . առաուրնէ ինչուան իրիկուն փուճ պարապ կը խօսի թեթևամիտ անմիտ երիտասարդներու հետ , որոնք սիկար գնելու պատճառանքով խանութս կը շեցուին , որով ուրիշ քաղաքացիները չեն գար հոս : Ար-

դէն սովորական գնողներուս կէտը պակ-
տեցաւ . գիտնաս , սիրելի Բէլքմանս , մա-
հուրնէս ետեւ հօրս խանութը պիտի փնա-
նայ : որովհետեւ Սիսթա ոչ երբէք պիտի
ուզենայ իր աստիճանի երիտասարդի մը
հետ հարգուիլ : Մեղք մեզի . ո՛ր էր թէ քիչ
մը աւելի ուժով շարժած ըլլայի կնոջս ու-
զածին դէմ : Բայց ինչ պիտի ընես . միշտ
ատանկ էր հանդիպի . փոսին մէջ իյնալէն
ետքը՝ կը սկսի մարդ մտածել թէ եղերքը
կոխելու չէր :

Միսքա ասուն դալուն առջի օրուքնէն սկսեալ՝ ամէն բան վար զարնել սկսեք էր՝ ծնողացն ամէն բրած բաները՝ իրեն աչքին առջև աամիկ ու դէշ կ'երևային . և հազար ումէկ վարպետութիւններով հօրն ու մօրը կամքն ուզածին պէս կը փախէր հաղած մեղրամամի պէս :

Խեղճ աղջիկը ժամը իրեքէն առաջ կերակուրը ստամոքսէն վար չէր երթար . սրովհետև դեղացիի ստամոքս չէր իրենը : Աս բանս հայրն որ լսեց , բարկացաւ , մօրն ալ սիրտը կտարեցաւ . երկուքն ալ իրենց բոլոր կենացը մէջ միշտ կէսօրը կերակուր կերած էին , և շատ ծանր բան էր ասիկայ իրենց գործողութեանցն համար , որոնց ժամերը բոլորովին պէտք էր փոխել : Բայց Միսքա տհաճեցաւ ու երեսը թթուեցուց . եկուր նայէ որ այսչափ օգուտ չբրաւ , թէպէտ աս անդամ մայրն ալ իրեն օգնութեան եկաւ՝ խղճալէն : Ան

ատեն մարելիք եկաւ Սիւքայի վրայ, և անանկ ջղերու ցնցումն ունեցաւ, որ կարծես թէ անգիի աշխարհք երթալու պատրաստութիւն կը տեսնէր: Չաղղիացի բժիշկ մը եկաւ հիւանդը տեսնելու, որ աղէկ դատարարակուած օրիորդներու հիւանդութիւններուն փորձ էր. աս մարդն անանկ վախնալու բաներ ըսաւ կանանց ջղերուն վրայ, որ Սիւքայի ծնողքը ահով գողով որոշեցին որ անկէ ետքը ժամը իրեքին կերակուր ուտեն: Բայց սրչափ անգամ անօթութիւն քաշեցին, իրենք որ առաւօտաք չորսին կամ հինգին կ'եղային անկողնէն և այնչափ ներկայն տատեն ծով պիտի կենային. իսկ ընդ հակառակն Սիւքա իր դիւրութիւնները կը նայէր ու ժամը իննէն առաջ խոսքէն վար չէր իջնար:

Հապա կերակուրն փնջպէս էր: Ան ինչ խեղճ բան. միշտ գետնախնձոր, միշտ կաղամբ, միշտ եզան խաշած կամ խորված միս. միշտ նոցնը. ուրիշ մէկ բանի մը երեսը չտեսնուիր: Սիւքան որ երբեմն տկար ու հիւժեակ վիճակի մը մէջ կը գտնուի, իրեն համար քիչ մը աղաւնիի ձագ կամ քանի մը պզտի թռչուն պէտք է. ասոնք իրեն ախորժակին յարմար բաներ են և աղէկ ալ կ'ընեն իրեն: Իր գրպանները միշտ անամուխէ ու կիտրոնէ անուշեղէններով լցուն են. առանց պատճառի չէ աս բանս, որովհետեւ ողորմելին հազարամէկ ցաւ ունի, ստամոքսի ցաւ, սրտի ցաւ,

զլխու ցաւ , ջղաց ցաւ , ամէն տեղը ցաւ .
ինչ խեղճ վիճակ :

Ալ չկրնար երթալ մօրը հետ առաւօ-
տեան ժամը վեցին պատարագին . ձմեռը
չատ ցուրտ կ'ընէ եկեղեցին , իսկ ամառը
գեղացի ու աամիկ մարդիկներու հետ
խաան չուզեր կենալ . յանկարծ հիւան-
գութիւն կու գայ անկէց վրան : Չայնա-
ւորն ամենեւին չկրնար մտիկ ընել , այն-
չափ երկայն ատեն հոն կենայ նէ՝ ոտուր-
ները կը սառին : Ահսօրուան պատարա-
գին կրնայ երթալ . — ինչու համար . — ե-
կուր ականջէ գաղտուկ մը զուրցեմ . ո-
րովհետև աղուոր զարգարանքներ կը տես-
նայ ու կրնայ անոնց նմանիլ . եկեղեցիէն
ելլալէն վերջն ալ կրնայ հրապարակին մէջ
քիչ մը ժուռ դալ իր հագուստները ցուցը-
նել բանէ հասկըցող երիտասարդներուն
(որոնք գերձականներ , սիկար ծախողներ և
ազնուականներու ծառաներ են) :

Նայեցէք մէյ մը մօրը վրայ . աղջիկն ա-
նոր գլուխը վերջապէս մետաքսէ գլխարկ
մը գնել տուեր է , ոտքն ալ կէս կօշիկ հա-
գուեցուցեր . ապա թէ ոչ միտքը դրած էր
որ անոր հետ դուրս չելլայ : Խեղճ մօրը
ձեռքերն անդադար ականջներուն վրայ
էին , որովհետև սխմուած էին . և իրեք
քայլ մը ըրածին պէս՝ կը կենար ոտքերը
կը շարժէր , ու պէտք էր որ միակերպ քա-
կուած կապերը կապէ : Դրացիները կը
խնտային վրան , իսկ ինքը ամօթէն կը

քրտընէր ու գետին կ'անցնէր : Բայց պէտք չէ մոռնալ՝ որ պարզ աղջրկանն համար կը կրէր աս ամէն բան , և անոր համար զարմանք չէ որ առանց ձայն հանելու կը համբերէր :

Իսկ հօրը գալով, քան զմայրն աւելի կը տանջուէր Սիսքայի մտահաճոյ իզձերէն . բոլոր կենացը մէջ միշտ տանը մեծն ու հրաման տուողը ինքն եղած էր և այնպիսի խոհեմութեամբ իր գործողութիւնները կատարած էր , որ և ոչ մէկ անգամ մը անոնք ետև մնացած էին : Կը մակարբերէր հիմա որ ամէն բան տակնուվրայ պիտի ըլլար . բայց գրեթէ գրեթէ իրաւունք չունէր խօսելու . որովհետև իր ամէն ըսածին՝ աղջիկը գէշ է կ'ըսէր . ինչուան երբեմն կը համարձակէր ալ ըսելու՝ թէ Խելքդ կարճ է : Ան ատենն ալ որ հայրը կը նեղանար , պատերազմական դաշտ մը կը դառնար տունը , Ֆան Ռուզմաէլ մէկ կողմէն պատերազմող , մէկալ կողմէն կնիկն ու Սիսքա : Հարկ չկայ ըսել որ կռիւ ընելու մէջ էրիկ մարդը կանանց չկրնար յաղթել . շատ շատ քիչ մը պոռայ , ձեռքովն ստուլին վրայ քանի մը զարնէ , քիչ մը ակռաները կրճտէ , բայց վերջապէս ինչ կ'ըլլայ . կնիկն առաջ կը տանի իր խօսքը :

Նոյն իսկ Բէլքմանս բժիշկն ալ անանկ վշտացեր , անանկ տաղտկացեր էր աս բաներէս , որ ալ Ֆան Ռուզմաէլի տունը գրեթէ բնաւ ոտք չէր կոխէր :

Ֆան Ռուզմաէլ իր հօրմէն ու մօրմէն կռիւ ու մէճ ընել չէր սորված . իրեն համար խաղաղութենէն և ընտանեաց սէրէն աւելի մեծ երջանկութիւն չկար աշխարհքիս վրայ . անոր համար վերջապէս շատ բաներու սկսաւ աչք գոցել , որպէս զի նոյն տեսարանները նորէն չնորոգուին : Ասով երկու չարիք եղաւ . մէյ մը որ հօրը ներողամտութեամբը տունը օրէ օր սկսաւ աւելի գէշ երթալ , և երկրորդ՝ որ ձերուներն սիրտը դնելով ամէն օրուան կրածները , որոնց ձայն չէր հանէր , միանգամայն սաստիկ ցաւ զգալով եղած գէշ փոփոխութիւններուն վրայ , անանկ տխրութիւն մը պատեց վրան , որ շատ անգամ բարեկամները բարև տուած ատեններն՝ կ'ըսէին իրեն .

— « Աս ինչ է , Ֆան Ռուզմաէլ , ան սրջափ նիհարցեր ես : Հիւանդացար , ինչ եղար » :

Ծերունին մինչև ան ատեն մէկ կտորին մէջ միայն տեղիք չէր տուած . այսինքն Սիսքային՝ խանութին վրայ ըրած մեղադրութիւններուն : Չէր կրնար Սիսքա դիւրաւ ըսել թէ Սա բանս պիտի փոխուի խանութին մէջ . հապա պէտք էր վարպետութեամբ ու խորագիտութեամբ շարժէր այս նիւթիս մէջ : Ի՞նչպէս կրնար Ֆան Ռուզմաէլ գիշանիլ աղջրկան ըսածներուն . իր խանութին մէջ ամենայն ինչ քաղցր . յիշատակներ միտքը կը բերէին . ան աթոռն որուն վրայ մայրն իրեն կաթ տուած էր՝

դեռ կեցած էր . իր մանկութեան ատեն՝
դեռ լեզուն չբացուած հոնտեղ գտուած
տակաւներուն ու սնտուկներուն հետ պը-
ւարճացեր էր . գանձանակին վրայ որ կը
նայէր , միտքը կու գար ան դեղեցիկ խը-
րատն ու յորդորն որ իր բարեյիշատակ
հայրը տուեր էր իրեն խնայողութեան վը-
րայ՝ կեանքը կնքելուն վերջընթեր օրը .
տակաւի մը վրայ դեռ մնացեր էին ան
սև բիծերն որ պղտիկուց քաշեր էր վրան
ան միջոցին՝ որ մայրն անկէջ երբեմն եր-
բեմն շաքարի կտոր մը կը հանէր կու տար
իրեն : Միով բանիւ , աս խանութն իրեն
հայրենիքն էր , իր տիեզերքը . և անոր
մէջ գտնուած ամենայն ինչ իր կենաց
մէյմէկ պարագաներն էին :

Հիմա որ գիտենք Պան Ռուզմաէլի իր
խանութին վրայ ունեցած սէրն , ալ մա-
կաբերելու է թէ որչափ արտասուաց հե-
ղեղներ թափեց Սիւքա , որչափ տկարու-
թիւններ ու ջղի ցնցմունքներ եկան վրան ,
հօրը կամքը ճկելու և թոյլտուութիւն առ-
նելու համար իրմէն՝ որ խանութը գաղ-
ղիական ոճի վերածուի՝ որ շնորհք առնէ :
Տարի մը ամբողջ աշխատեցաւ Սիւքա ա-
սոր . կռուի , հակաճառութեանց ու ցաւա-
գին տեսարաններու տասուերկու երկայն
ամիսներ անցան՝ մինչև որ Պան Ռուզ-
մաէլ ծերունին յաղթուած գինուորի մը
պէս գլուխը ծռեց , և աչքերն արցունքով
ուռած՝ ըսաւ .

— « Գացէք ըրէք ինչ որ կ'ուզէք նեւ . . .
Բայց կարծես թէ աս խօսքը սխալը ծա-
կեց' անանկ գուրս ելաւ . ան օրէն մար-
մինն սկսաւ հալիլ ու մաշիլ . երեսին գայնը
գնաց , նիհարութիւնն երթալով աւելցաւ .
օր օրուան վրայ ահարութիւնը դօրացաւ ,
և զգալի կերպով գէպ 'ի գերեզմանակը քա-
լէր . վշտաց որդը ազնիւ ձերուծապն կեն-
դանութեան արմատը կրծեր կերեր . էքս
Երբոր իր աչքերը մեղադրանքի նայուած
քով մը Միսրայի վրայ կը նայէին , եզեզի մը
պէս կը դողար աղջիկը . բայց հօրը չարաց
շրթունքներէն բառ մը դուրս չէր ելլեր . և
սեւեռեալ աչքերով կը նայէր . ան գործա-
ւորներուն վրայ' որ իր արեւելի փարսութե-
քանդելու հետ էին : Տե՛սաւ հետաքննողի
քաղցր յիշատակներուն : Քնջախը . . . և . . .
մէն մէկ նկարչի վրձինը և սատարձագործ
ծի քերչին շարժելը : Ետանկունն շո՛ւնջն ս-
ւելի կը կարնքնար ու կեանքը կը հասնէր .
Քիչ ատենէն խանութը փառաւեր շո՛ւն-
մարան մը դարձաւ . ամէն կողմ պոքինձը
կը փայլէր . հաշուեսեղանին վրայ պղտի
հրեշտակներ նկարուած էին' օրոնք խա-
հուէ կ'աղային , սիկար կը քաշէին , ծխա-
խոտ կը կշռէին . խանութին հակաթիւ առ-
պակիները մեծ հայլիներու շափ կացին և
ծայրէ 'ի ծայր գաղղիարէն վերաառութիւն-
ներով լեցուած էին : Առջով լուսու-
րուած էր խանութը . աղջիկ մը ու մանջ մը
հաշուեսեղանին առջև կեցած էին պատ .

րաստ ծառայելու, և Միսքա կամ թէ ըսեմք Եզդթոյա Յան Ռուզմալ օրիորդն ալ պատուհանին մէջ աթոռակի մը վրայ նըստած՝ գաղղիարէն վիպասանութիւն մը կը կարգար :

Երկար ատեն տունն ու խանութը առ աճով դարձան. և ան աստիճանի հաստա հօրը ժողճոտութիւնը, որ տղ ամէն բանի անտարբեր էր. նոյն իսկ իր Արինաէլ բարեկամին : Այս ըստած անձերնիս Յան Ռուզմալի խորհրդին մտիկ ընելով կաշտոյ վաճառականութիւն սկսեր էր ընել, և քիչ ատենուան մէջ շատ սաակ վաստղ կեր էր, անանկ որ Յան Ռուզմալէն գոթառած հազար Փիտրինը կրնար անոր դարձընել, թէ որ անիկայ մերժած չըլար բոլորովին. բայց դեռ իր որդւոց վիճակին վրայ տեղեկութիւն մը չէր առած :

Մինչդեռ ամէն բան խառնակնդոր առաջ կ'երթար խանութին մէջ և առակի գանձանակը սաստիկ կը պարպուէր, Յան Ռուզմալէ հիւանդացած անհողնին վրայ պառկեր էր. բայց որովհետեւ նշան մը չէր տար խօսքով թէ ծանր հիւանդութենէ մը բանտեր է, կը կարծէին որ սովորական թեթեւ տկարութիւն մըն էր և ան կերպով խնամք կը տանէին վրան :

Սակայն առաւօտ մը ծերունին ըսաւ որ Բէլքմանս բժիշկն ու Արինաէլը կանչեն :

Արինաէլ դժբաղդարար Գողոնիա քաղաքը գացեր էր՝ իր վաճառականութեան

գործոցն համար : Իսկ բժիշկը մէկէն 'ի մէկ եկաւ և երկայն բարակ հիւանդին խաչը կեցաւ : Ոչ որ գիտէ թէ ինչ խօսեցան իրարու հետ ու ինչ եղաւ ներսը : Ժամէ մը վերջը բժիշկը սանդուխտէն վար իջաւ ու խանութին մէջ երևցաւ : Մահադուշակ դեզնութիւն մը պատեր էր երեւին վրայ . աչուրները կրակ կը թափէին , և երեսը բոլոր կը ցնցուէր՝ ինչպէս որ կ'ըլլայ տառափկ բարկացած մարդիկներու : Ներս մը տածին պէս՝ մէկէն կայծակնացայտ աչքը թունալից նետի մը պէս Սիւքայի աչաքը վրայ տնկեր էր , ուրուականի մը պէս հաշուեսեղանին առջևէն անցաւ , և դէպ 'ի օրիորդը մօտեցաւ : Աղջիկն անձկութենէն ձեռքերը դէպ 'ի առջև երկնցուց՝ իբրև թէ կ'ուզէր աչքին առջևէն հեռացունել առ սարսափելի երևոյթը . բայց բժիշկը ձեռքը բացաւ , որ ինչուան ան ատեն քարի պէս գոց էր , աղջկան դաստակէն (ՏՃ . Պիլէք) ուժով բռնեց , և ահաւոր ձայնով մը պոռաց .

— « Անզգամ աղջիկ , հայրդ մեռնելու վրայ է : Ի՞նչն զինքը սպաննեցիր » :

Աղջիկն ինկաւ մէկէն մարեցաւ անկողնին վրայ . ան միջոցին բժիշկը տունէն դուրս ելաւ քահանայի համար , և քիչ տատենէն վերջին սուրբ թուակը բերուեցաւ հիւանդին :

Երբոր հիւանդը կրօնքի վերջին օգնութիւններն ընդունեցաւ , հառաչելով մը Եսաւ .

— « Տօղոր , կ'ուզեմ զաւակս , իմ Սիւքաս տեսնալ . . . բայց ներէ իրեն , ու սաստիկ ծանր խօսքերով մի վշտացրնէր զինքը :

— Ա'երթամ հիմա փնտրուելու զինքը . բայց պէտք է որ պատժուի . . . և ան ատեն միայն թերևս կարենաս երկնքէն ազը կանդ ապաշխարութեանը վրայ ուրախանալ » :

Աս որ ըսաւ բժիշկը , խուցին դուռը բացաւ ու խոհանոցը դնաց : Մայր ու աղջիկ ձեռքերով ճակատինն գոցած՝ լեզի արցունքներ գետի պէս կը վազցընէին . ան աստիճանի էր Սիւքային ցաւն , որ բար ըլլար դիմացինը՝ կը ճաթեցընէր . հեծութիւն , հառաչանք , աղաղակ ու ողբ ստէպ ստէպ սրտէն կ'ելլային ու օգը կը թնդացընէին : . . . Ո՛հ , աս անգամ՝ իր ցաւերը կեղծեալ չէին . այն ահագին խօսքերն որ բժշկին բերնէն ելեր էին՝ իբրև Աստուծոյ բարկութենէն տրուած անէծք մը իր ականջին հնչեր էին , և բռնի պատուեր մէկդի ըրեր էին այն սև քօղն որ զինքը կուրցուցեր էր : Հայրասպանութեան գաղափարն որ բոցէ գրերով գրուած՝ աչքին առջևը կ'ելլէր միշտ , դժօխքի կրակին պէս կ'էրէր զինքը : Բժշկին ծանր քալուածքը լսելով՝ յանկարծ սարսափով մը գլուխը վեր վերուց : Նորէն դիմացն ելաւ անիկայ , զորն որ Աստուծոյ վրէժխնդրութեանը պաշտօնեայ կը կարծէր . արիւնն

սկսաւ պաղիլ երակներուն մէջ և ուժը վրայէն կ'երթար . բայց վերջապէս սաստիկ բռնութիւն մը տալով իրեն՝ յաղթեց իր տկարութեանը , վազեց բժշկին , ծունկ չոքեցաւ առջևը , և թևերը գէպ 'ի երկինք վերցուցած՝ աղաղակեց :

— « Բարկութիւնդ արդար է . յանցաւոր և Աստուծոյ երեսէն ինկած արարած մըն եմ ես : . . . Բայց յանուն հոգևարք հօրս , ներումն . . . ներումն կը խնդրեմ » :

Բժշկին աչքերէն երկու արցունք սահեցան ինկան . գէմքին վրայէն բարկութեան հետքը ջնջուեցաւ և խորին տխրութիւն միայն նկարուած մնաց : Աղաչաւոր աղջկան ժտեցաւ , ձեռքէն բռնեց , և առանց գետնէն վեր վերցընելու՝ ըսաւ .

— « Սիւքա , թշուառ աղջիկ , ավենաւ մեծ մեղք ըրիր Աստուծոյ առջև , որովհետև և Աստուած պատուիրած է . Պատուեցի՞ր զհայր քու զմայր . գու ընդ հակառակն ինչ ըրիր : Չէ , չէ , մի վախճար , չեմ կրկներ նորէն ան զարհուրելի խօսքը : Յանցանքիդ հատուցմունքն ըրէ , Սիւքա . դեռ միջոց մը կայ Աստուծոյ և հօրդ հետ հաշտուելու : Գնա իրեն քովը , ինքը կը կանչէ զքեզ . — բայց աղէկ նայէ . թէ որ ինքը առանց համոզուելու թէ իրօք բոլոր սրտանց զգացներու ապաշխարներ ես՝ երթայ առ աշխարհքէս , թէ որ առանց մխիթարութեան , առանց խաղաղութեան և առանց բարի յոյս ունենալու վրադ հոգին աւանդէ , . . .

գիտնաս որ Աստուծոյ բարկութիւնն ինչուան հանդերձեալ կենաց մէջ ալ կը հալածէ զքեզ ։

Որչափ որ ալ սուր ու դառնակակիծ էին Սիւքային սրտին այս լսած խօսքերը , հանդերձ այսու անոնցմով խրախոյս առաւ . ջերմ համբոյրներով պագաւ բժշկին ձեռքը , կտորճուեցեամբ մը ոտքի վրայ ելաւ , և « Շնորհակալ եմ , շնորհակալ եմ » աղաղակելով հօրը խուցը վաղեց ։

. . . Հարկ է արդեօք նկարել հօրը մահուան տխուր վայրկեանը , և աղջրկան յուսահատութիւնը ։ Հարկ է արդեօք ցուցնենք Սիւքան , որ մազերը ցրցընքած , արցունքի մէջ թաթխած , գլուխը հօրը մահուան անկողնին կը զարնէր , և կը ջանար որ իր գեղեցկութիւնն աւրէ՛ ըզուենքերով երեսը ճանկրուտելով , և ոտքի տակ առնելով ու պատուելով ան ամէն բան՝ որ ինչուան ան ատեն իր ունայնասիրութեանը ծառայած էր ։ Ո՛հ , չէ . շատ սրտանակիկ , շատ ցաւագին ու կեղեքիչ տեսարան է ։

Նայեցէք մէյ մը անկողնոյն վրայ . հայրն ահաւատօրկ մահուան ձեռքը պիտի աւանդէ հողին , բայց անպատմելի երջանկութեան մը նշան կը փայլի հիմա գէմքին վրայ ու սուրբի մը կը նմանցընէ զինքը . և աչքերն , որ մարելու վրայ են , սիրով մը անկողնին մէկ կողմը կը նային ։ Սիւքա

ծունկ չորած՝ մայրը թևերուն մէջ գրկած կեցեր է, ձեռքերը կը համբուրէ և ներումն կը խնդրէ իրմէն . բժշկին սիրտն ելած՝ առնոց վրայ գորովալից աչքերը դարձուցած կը նայի : Հոգեւորքը կը տեսնայ աս անսարանը . իր թուլցած ձեռքը զաւկին գլխուն վրայ կ'իյնայ , և ան միջոցին որ հոգին թևերը բացած՝ դէպ 'ի երկինք պիտի թռչի , կ'ըսէ .

— « Օրհնեալ ըլլաս , օրհնեալ ըլլաս . . . ո՛վ Սիւքա . . . զաւակս » :

Յան Բուզմաէլի հարիւրամեան խառնութիւն այսօրուան օրս փակուած է : Մայրու աղջիկ առանձնութեան մէջ կ'անցընեն կեանքերնին՝ անդադար օղբալով անցելոյն չիշատակին վրայ . զարհուրելով կը մտածեն իրենց թշուառութեանց պատճառը և իրենց յիշանեայիս մէջ աս նշանաւոր ատոյն ալ կ'աւելցընեն . Գաղղիտիան անբարոյս կանոսքենէն ազատ՝ զմեզ , ջեր :

Սիրելի ընթերցող , թէ որ այս նշմարիտ պատմութիւնը սիրտդ շարժեց , անտարակոյս կ'ուզես տեսնալ Սիւքա Յան Բուզմաէլը : Թէ որ իրաւցընէ աս փափուզն ունիս , ուրբաթ օրը առաւօտեան ժամը վեցին կամ քիչ մը աւելի ուշ՝ Անկերասայի Գոմինիկեանց եկեղեցին գնա . աջ կողմի դուռը բաց և մտիւր ան ստորերկրեայ մատուան որ քաւարանի հոգւոց նուիրուած է : Հոն կը տեսնաս երիտասարդ կին մը

ծնկան վրայ եկած , բոլորովին ծածկուած սև կրկնոցով մը : Թէ որ ուշադրութեամբ մտիկ ընես , վարդարան դարձընելուն ձայնը կը լսես , և մերթ ընդ մերթ խորունկ հառաչանք մը ականջիդ կու գայ՝ իբրև թէ մաքրարանին հոգւոց մէկուն ցաւոց ձայնն ըլլար : Երիտասարդ կնիկն անշարժ կը կենայ . և ան աղօտ լուսով մարդ կըրնայ Աղօթից արձանը սեպել զանիկայ : Թէ որ վերջապէս անոր ոտքի վրայ ելլալը կը տեսնես՝ գետինը պագնելէն վերջը , և դանդաղ քայլերով անկէց հեռանալը՝ առանց կարծես թէ զքեզ տեսնալու , ըսէ ան ատեն դու քեզի համարձակ . Տեսայ Սիւքա Ֆան Ռուզմաէլը :

Իսկ Սբինաէլի ազջիկը չենք ուզեր ցուցրնել . որովհետև շատ պատիւ չընեն իրեն : Իր եղբօրը գալով , Գաղղիոյ մէջ բանտ չպակսիր գատարկասուն ու ստահակ մարդկանց համար :

Ա. Լ. ՊԵԱՆՑ ԽՐՃԻԹԸ



Ա. Լ. ՊԵՍՆՑ ԽՐՃԻԹԸ



Ա

Չուիցերիի մէկ կողմ մը քաշուած առանձնացած Պետրոս Լանկ անունով ազգատ երկրագործը, իր կնոջն ու Քէորգորդւոյն հետ մէկտեղ կը բնակէր փայտաշէն տնակի մը մէջ, որուն տանիքը շիտակ էր ու տափակ քարերով ծածկուած, ըստ այն երկրին սովորութեան: Նեղ ճորի մը բերանն էր այս հիւղը, քիչ հեռու լճակէ մը զոր անտառախիտ բարձր լեռներ կը շրջապատէին: Անտառին մէջերէն վիթխարի ժայռեր դուրս ցցուած էին, որոնք իրենց զանազան ձևերովը տեսարանները կը փոփոխէին. տեղ մը բնութիւնը կարծես թէ այն մեծամեծ զանգուածներէն բուրգեր ձևացուցած էր, ուրիշ տեղ վայելուչ ձևերու խոթած. ոմանք օդոյն մէջ կախուած, և նեղ ու բարակ կտորով մը միայն հո-

դուն հետ կգամ : Անթիւ զանազան թուփեր կը ծածկէին զանոնք իրենց տերևալից ճիւղերովը , որոնց գոյները առաւար ժայռերուն միակերպութիւնը դուրս կը ցատքեցընէին : Հեռուէն կ'երևային Աւպեանք, ամպերու մէջ թաղած իրենց յաւիտենական ձեամբ ճերմըկցած գլուխները : Պետրոսին հիւզը այս բարձր լերանց համեմատելով աներևոյթ կէտ մըն էր . բայց սահայն բոլոր այս էր աղքատ ու բարի մըշակին հարստութիւնը :

Այս խեղճ տնակիս գիմացը թանձր եղեիններու մէջէն կը փայլէր մատրան մը զանգակատան ոսկեղօծ խաչը , որուն մօտ առաքինի ճգնաւոր մը կը բնակէր , որն որ այն ամայի ժայռերուն մէջ փորած էր իր բնակարանը ու եօթանասուն տարուընէ ի վեր կը ճգնէր աշխարհիս խռովութիւններէն ու ընդունայնութիւններէն հեռացած : Շատ անգամ արշալոյսը ծագած չծագած , մենաւոր զանգակին արծաթի ձայնը կը հըրաւիրէր այն կողմերուն բնակիչները սըրբոյն Մենրատայ ընծայուած մատուռը , որ այն լեռնային նահանգներուն պաշտպան բռնած սուրբն էր . և միշտ երբօր սուրբ պատարազը կ'ըլլուէր , ոչ երբէք գատարկ տեսնուած էր մատուռը : Պետրոսն ալ գրեթէ ամէն օր ներկայ կ'ըլլար հոն իր կատարինէ մական և Գէորգ որդւոյն հետ մէկտեղ . իսկ եթէ օդը ձեռք չտար կամ հարկաւոր զբաղմունք մը ունենային , այն

ատեն տունը կ'ընէր իր ազօթքը , և կը խնդրէր Աստուծմէ որ օրհնէ իր գործքերն ու յաջողութիւն տայ անոնց :

Պետրոս իր գեղջուկ խցին վայելչագոյն հողմը՝ քանի մը տախտակներով պզտի խորան մը շինեց , որուն զլխաւոր զարդերն էին Աստուածածնայ արձան մը գիրկը Յիսուա , Պետրոս առաքելոյն , սրբուհւոյն Կատարինէի , սրբոյն Գէորգայ և սրբոյն Մենրատայ պատկերները , և երկու ալ փայտէ կոշտ փորած աշտանակներ : Անտառին առջի շուշանը , պարտիզին առաջին վարդը , գարնան դալար մամուռները՝ ջերմեռանդութեամբ խորանին վրայ կը դնէր . և ամէն շաբաթ օր Կատարինէ դրասանդ մը կը պատրաստէր և ուրախութեամբ կը կախէր փայտէ խորանին ճերմակ ծածկութիւն չորս կողմը . մանաւանդ պզտի Գէորգն իրեն մեծ զբաղմունքը բրած էր խորանը մաքրել , Ասիկայ իմ ժամս է ըսելով . օրը քսան անգամ խորանը կ'երթար , ծաղկընները կը շտկէր , փոշին կը սրբէր , և մեծ երջանկութիւն էր իրեն թէ որ իրիկունը բարեպաշտ ընտանեացը վարդարան ըսելու ժողվուած ատենը , ինքը ճրագները վառելու որ ըլլար :

Պետրոսն որ սաստիկ կը սիրէր իր զաւակը , իրեն պարտք կը սեպէր անոր վրայ մասնաւոր հոգ տանիլ և վրան երեւցած աղէկութեան բերմունքները զարգացընել : Չմեռուան երկայն իրիկունները , շատ ան-

զամ Գէորգին կրթութեանը վրայ կը խօսէր կնկանը, և թէ որչափ կը փափաքէր աստուածապաշտութեան մէջ և աշխարհիս վտանգներէն հեռու մեծցընել զանհկայ : Ասանկ կ'ըսէր օր մը Վատարինէին . — « Տեղաբը Աստուծոյ պարգև են, և սվ որ ամէն կերպով հոգ չընէր զանոնք անմեղութեան մէջ պահելու և երկիւղած մեծցընելու, մեծ պատասխան պիտի ապ իր անհոգութեանը համար : Անոր համար պէտք է մենք շատ մեծ հոգ ունենանք Գէորգին կրթութեանը, ու շնամանիք այն անհոգ և յանցաւոր ծնողաց : որոնք սաղափել բարկանալով կամ պատժելով իրենց ախաւաւոր և չար տղաքը, կարծեն թէ պարտքերնին ինչպէս որ պէտք է կատարան կ'ըրբան : Մեր ջանքը պէտք է ըլլայ մերինին սիրելի ընել տալ առաքինութիւնը, և բաւական չսեպենք Աստուծոյ և կրօնքի վրայ անոր առջև խօսելը միայն, այլ և բարեպաշտութեան օրինակ տանք իրեն՝ կատարելով առ կրօնս ունեցած պարտքերնիս » :

Երբոր բաւական մեծցաւ Գէորգ, քսկի գիւղաքաղաքին դպրոցը խրկեց զինքը հայրը . բայց որովհետև բաւական ճամբայ էր տնակէն ինչուան դպրոցը, Վատարինէ պզտի սապատ մը գնեց տղուն համար՝ որուն մէջ կը դնէր անոր ցորեկուան կերակուրը, որպէս զի սմբողջ օրը կարենայ դպրոցը կենալ : Իրիկուան երբոր ստան կը գառնար, կը հարցընէր իրեն հայրը այն

օրուան տորված դասը . նմանապէս կիրա-
կի օրերն . ալ երբոր քրիստոնէական վար-
դապետութիւն դաս առնելէն կը դառ-
նար , Պետրոս անոր լսածները կը հարցը-
նէր , և զինքն առաքինի ընելու համար՝
քովէն ալ խորհրդածութիւններ կ'աւել-
ցընէր :

— « Մեր կեանքը կարճ է , կ'ըսէր միշտ
անոր , քայց արքայութեան արժանի ըլլա-
լու համար երկայն է՝ թէ որ ճշմարիտ քրիս-
տոնէի պէս ապրինք : Յիշէ միշտ , որ-
դեակ , որ մեզի կը սպասէ յաւիտենակա-
նութիւնը . և օր մը հոն երջանիկ ըլլալու
համար պէտք է զանազան վշտերէ անց-
նինք , ու քաջութեամբ պատերազմինք մեր
չար յօժարութեանց և կրիցը դէմ . անոր
համար պէտք է առաջուց մեր գէշ բեր-
մանցն ու սովորութեանցը դէմն առնենք ,
և ամենևին ականջ չկախենք չար օրինակ-
ներու : Ո՛հ , որչափ գոհ է մարդ երբոր իր
երջանկութեանը ծածուկ թշնամիներուն
յաղթէ : Երանի՛ անոր որ կրնայ ըսել թէ՛
Ես Աստուծոյ և իր սուրբ օրինացը կը
հնազանդիմ » :

Այս իմաստուն խրատները՝ զորոնք ըս-
տէպ զը կրկնէր և բարի օրինակով ալ կը
հաստատէր , լաւ տպաւորուեցան Քէոր-
գին սրտին մէջ , և օրէ օր կ'աճէր շնորհք-
ներով . և քիչ ատենէն այն կողմի ազոց
օրինակ եղաւ , և իր ծնողացն ազ մխիթա-
րանք : Օր մը բարեպաշտ և առաքինի ար-

դայ ունենալու յուսով կը քաջալերուէր Պետրոս իր ծանր աշխատութեանցը մէջ . վասն զի այս բարի մարդս բաց 'ի իր դաշտը մշակելէն , նաև տեսակ տեսակ խոտեր ու այլ և այլ տնկոց արմատներ կը ժողվէր , և գաւառին գեղազործներուն ծախելով չափաւոր ապրուստ մը ստացեր էր առանց հարստութիւն գիղելու : Քէպէտ լեռններուն վրայ արմատները ժողվելու ատեն շատ կը չարչարուէր , բայց ամենեւին իր վիճակին վրայ չէր գանգատէր , և միշտ ուրախ զուարթ էր : Իր բարի խզմտանքը և ընտանեաց երջանկութիւնը՝ կը քաղցրացընէին իրեն մարդկային կենաց սովորական վշտերը . և գիտէր ալ թէ աշխատելու համար ծնած ենք , և մեր ճակատին քրտինքովը հացերնիս պիտի գտնենք , Աստուծոյ հրամանին չհնազանդելով պատժուելնուս համար :

Պետրոսին հագուատը գաւառին բնակչաց նման էր . ոտքը ճերմակ բրդէ գուրպայ մը կարմիր գծերով , սև կաշիէ տաբատ , և կարմիր կտառէ բաճկոն մը ոսկեզօծ կոճակներով չորս կողմը կանաչ մետաքսէ լայն երիզ բանած . վիզն ալ բարակ սև շղարշ մը , որ ինչուան կուրծքը կ'իջնար . գլուխը օրածայր կանաչ գլխարկ մը , վրան սիրամարգի փետուր անցուցած , և սսուեայ կապոյտ վերարկու մըն ալ կռնակը կ'առնէր : Այսպէս Պետրոս գաւառան մը ձեռքը և ձախ ուսը բան մը

զարկած իր օրական աշխատութիւնները կը սկսէր : Երբոր լեռը կ'ելլար , կը հանէր վերարկուն և ծառի մը ճիւղերէն կախելով կը սկսէր ուրախութեամբ աշխատիլ : Շատ անգամ դիմացի հովիտը արձագանգ կու տար իր քաղցրաձայն երգերուն , և զանգակներուն ձայներն ու կովերուն և այծերուն բառաչը , որ հոն դաշտերուն մէջ կ'արածէին , կը պատասխանէին իրեն :

Պետրոս գիւղաքաղաքին երաժիշտներէն մէկուն որդին էր , և ինքն ալ երիտասարդութեանն ատեն սորված էր քնար զարնել : Շատ կը սիրէր գերաժշտութիւնն , որ իր զուարթ բնաւորութեանը վրայ մեծ ազդեցութիւն ունէր : Այն սրտի հանգստութիւնն որ իր աշխատանաց մէջ կ'իմանար այս բարի մարդը , կը նորոգուէր դարձեալ երբ իրիկունը տուն կը դառնար , ուր իր կինն ու տղան անհամբեր կը սպասէին միշտ իրեն : Իր քրիստոնէական և հայրական պարագերը հաւատարմութեամբ կատարած ըլլալուն մտածութիւնը , կը թեթեւցնէր իր նեղութիւններն , որոնք ամէն մահկանացուի կը հանդիպին . աղէկ գիտէր որ այս կեանքս երկայն շարք մըն է վշտաց ու կարճատև ուրախութեանց հիւստեածք մը . անոր համար երկուքն ալ հաւասար սիրով կ'ընդունէր : Սովորութիւն ըրած էր օրուան մէջ ստէպ ստէպ կարճ և եռանդուն աղօթք մը ընելու . և ուրախութեամբ անտառին ձերացած ծառերուն

չուքին տակը չորեղով, կը նուիրէր իր օրտառ իր երկնաւոր հօրը, և շնորհակալ կ'ըլլար ընդունած բարիքներուն համար: Կը զմայլէր միշտ բնութեան սքանչելեաց վերայ, որոնք Չուիցերիի մէջ աւելի շատ են ու փառաւոր քան օտրիչ անդուանք. այն բարձր լեւաները, այն գեղեցիկ կանաչները, հողոյն մէջ ծածկուած գանձերը, այն սքանչելի անտարանները՝ կ'ափշտեցնէին զինքը և աչքերէն արցունք կը բերէին:

Կատարինէ գիտնարով թէ կոր իր էրիկը կը գառնայ աշխատանքէն, ամէն իրիկուն հիւղին գրանն առջև կը նստէր որ անոր հետուէն գալը տեսնէ. ազտի Գէորգն ալ միշտ քովն էր ու երբ կը տեսնէր հօրը գալը, անոր առջևը վազելով գիրկը կ'իյնար. և բահը ուսէն յատուակելով աուն կը տանէր, և օրուան մէջ իրեն պատահածները կը պատմէր անոր: Պետրոս Կատարիինէին բարև տալէն վերջը, գետին կը դնէր ւորմատներով և խտտերով լեցուցած տօպրակը, և փայտէ աթոռ մը վրայ նստելով, կ'ըսէր. « Փառք Աստուծոյ, որ այս օրս ալ հասուց զմեզ. թէպէտ ազքատ ենք, բայց թաղաւորէ ալ աւելի երջանիկ ու գոհ կեանք ունինք մեր խրճիթին մէջ. շնորհակալ ըլլանք իրեն մեզի այսչափ ըրած բարիքներուն համար »:

Քիչ մը ետքը Կատարիինէ ընթրիքը կը պատրաստէր. և ամէն անգամ սերտան սկսելուն ջերմեռանդ աղօթք մը կ'ըսէին:

Պետրոս սեղանին վրայ տանը պիտոյիցը
կը տեղեկանար կամ կրթական ու օգտա-
կար բաներու վրայ կը խօսէր : բնաւ չէր
ծիծաղէր այնպիսի բանի վրայ որ կրնար
վնաս բերել իր տղուն առարկինութեանը ,
կամ իր աղնիւ հարսին ականջը խայթել .
կամըչնար երկդիմի խօսքէ և քրիստոնէա-
կան սիրոյն մէջ պակասելէն կը վախնար :

— « Որպէս զի խաղաղութիւնն ու երջան-
կութիւնը տիրեն մեր հիւղը , կ'ըսէր միշտ ,
պէտք է անօգուտ և վնասակար խօսքերէ
փախչինք . քրիստոնէին բերանը զԱս-
տուած օրհնելու համար պիտի բացուի ,
չէ թէ հայհոյելու . թէ որ մտածենք որ օր
մը համար պիտի տանք մեր ամէն խօսքե-
րուն համար , կը զգուշանանք մեր գերա-
զոյն դատաւորին անհաճոյ եղած բանե-
րէն » :

Այսպէս շատ տարիներ անցուցին խա-
ղաղ և գոհ վիճակի մէջ , առանց ամենեին
գժբաղդութեան մը : Պզտի Գէորգը կը մեծ-
նար . և տղայութեան ցուցուցած աշխու-
ժէն կ'իմանային ծնողքը որ յոյսերնին պա-
րապ պիտի չեղար . և օգնել ալ սկսեր էր
հօրը մէկ քանի աշխատութեանցը , և միշտ
անոր հետ մէկտեղ լեռը խոտ փնտռելու
կ'երթար :

Երբ ցանկալի գարունը կու գար բնու-
թիւնը կենդանացընելու , կամ երբ ձիւնը
զձորը կը ծածկէր , կամ երբոր եղեամբ ա-
դամանդի պէս կը փալփրլէր եղեկններու

վրայ արևուն ճառագայթներէն , անդա-
դար Պետրոս կ'օրհնէր զԱստուած : Բայց
կը թռչէր իր երջանկութիւնն և կը մօտե-
նար այն ժամն յորում վշտերը ցանցի մը
պէս պիտի բռնէին զինքն՝ իր առաքինու-
թիւնը պայծառացընելու համար :



Բ

Երբոր ձմեռը կը հասնէր , Պետրոս ալ չկրնայով լեռը երթալ խոտ ժողվելու , ինքն իրեն զբաղմունքներ կը հնարէր որպէս զի քիչ մը բան շահի իր և ընտանեացն ապրուստը հոգայու համար : Առանց ամենևին բան մը սորված ըլլալու , կարծր փայտերէ զանազան ձեռագործներ կը շինէր , ղորոնք մօտ աւանները կը տանէր կը ծախէր . գիտէր նաև գետնէն հանած ներկերը հալեցընել և զանոնք ինչպէս որ պէտք է մէկմէկու խառնել , և շատ անգամ կ'երթար կարասիներ և ուրիշ բաներ նկարելու , որոնցմէ որ շահ մը կրնար հանել : Երաժշտութիւն գիտնալն ալ անօգուտ չեղաւ . վասն զի հարսանեաց կամ մկրտութեան համար զրացիները ժողվուելու որ ըլլային՝ քնար կը զարնէր . երբեմն ալ անոյճ ձայնը ձգած՝ սրբազան կամ օրուան պարագաներուն յարմար երգեր կ'երգէր . այսպէս ամենևին աշխատութե-

նէ չէր փախչէր, և իր զուարթ բնաւորութեամբն ու անխոնջ գործունէութեամբն ամենուն սիրելի էր :

Օր մը առաւօտը կանուխ իր հիւղէն բաւական հեռու տեղ մը կանչուեցաւ որ հարսանեաց մը խնջոյքին պատրաստութեանը օգնէ . նոյն օրն ալ նոյեմբերի օրերէն մէկն էր, օգը ցուրտ և հովն ալ սաստիկ : Պետրոս՝ բոլոր օրը աշխատեցաւ, և ուրախութեամբ կատարեց իրեն յանձնուած ծառայութիւնները : Իրիկունն ընթրիքը հոն բրաւ, ու ձեռքն տուած դաւազանը՝ ճամբայ ելաւ խրճիթը դառնալու : Արդէն գիշերը առաջ գացեր ու մութը կոխել էր . լուսինը ամպերդէն տակ ծածկուած, և ժամերով ալ առաջ հարաւային քամին ակրսեր էր փչել ու յորդահեղեղ անձրև մը կը սպառնար . գիշերային լուսթեան մէջ եկեղեցւոյն և ժամատան հողմացոյցները կը ճռնչէին երբոր Պետրոս հանդարտաբայլ կ'անցնէր գերեզմաննօցէն, ուր անտառի պէս սև սև խաչեր տնկուած էին գետինը : Մթութիւնը վայրկենէ վայրկեան կ'աճէր . Պետրոս երագեց քայլերը՝ յուսալով որ անձրևը չսկսած խրճիթը կը հասնի . բայց խարուեցաւ . հագիւ թէ կէս ճամբան ըրաւ՝ ահա փոթորկալից անձրև մը բռնեց զինքը . խեղճը ինչուան որ բնակարանը հասաւ, անձրևը ոսկրները թափանցեր էր : Բոլոր գիշերը հեղեղի պէս անձրևեց և հագիւ առաւօտեան գէմ քիչ մը մեղմացաւ :

Բայց Պետրոս յետ կատարինէի ու պրզ-
տի Գէորգին հետ պագտուելուն, պատ-
րաստուեցաւ այն գեղը գառնալ ուր հարս-
նիքը պիտի կատարուէր: Մեծ անհանգրս-
տութեան մէջ էր բոլոր գիշերը և գալիք
դժբաղդութեան մը նախագուշակութիւն
կը սեպէր զատիկայ. սարապ տեղը կա-
տարինէն կ'աշխատէր սիրտ տալ Պետրո-
սին, որ տրտմութեան մէջ ընկղմեր էր և
հազիւ հազ ու մեծ սրտցաւութեամբ կրցաւ
բաժնուիլ իր տնակէն. և դեռ գեղը չհա-
տած անձրևը նորէն սկսաւ: Բոլոր գեղին
բնակիչները ներկայ էին այս հանդիսին,
մաիկ չգնելով ամենեւին հեղեղի պէտ իջած
անձրևին: Պետրոս նախ սեղանին կե-
րակուրներուն ծառայելէն ետքը, առաւ
քնարն ու զօրուոր և քաղցր ձայնով սկը-
տաւ երգել այս հետազայ սաղմոսը, դաշ-
նակաւոր քնարին թելերն ալ մէկտեղ հըն-
չեցընելով.

Ո՛հ, զի բարի, զի վայելուչ,
Բնակել եղբարց ի միասին համաշունչ:
Որպէս ի գլուխն Ահարոնի
Եւ ի մորուսն իւզն որ ի վեալ զեղանի,
Եւ ի մորուսց անախ նորուն
Մէջ ի գրազանս անգր ի վանս ի զգետուն.
Կամ որպէս ցոյ քաղցրածաւալ
Ի Հեքմնէ ի Սիոն լեան ցողեալ:
Անդ պատրաստեաց Տեր զօրհնութիւն,
Ի նմա բոլորնս յաւե՛տ անմահ մընայուն:

Այս և ասոր նման ուրիշ մանր երգեր՝ անհզ զգացմամբ երգեց , որ ամենուն սիրտը շարժեց , և բոլոր սրահը երկայն ծափահարութեանց ձայներէն կը թնդար , ու ստիպեցին զՊետրոս որ անօնցմէ շատին տուները նորէն կրկնէ :

Բայց ժամերը շուտով կը սահէին և կէս գիշեր եղեր էր երբոր կոչնականները սկըսան տներնին քաշուիլ : Պետրոսն ալ քիչ մը ուտելիք հետն առած ընտանեաց համար , ու աշխատանացը վարձքն ալ երկու սկուտ , ճամբայ ինկաւ : Որչափ որ իր ձորը կը մօտենար որուն բերանը շինուած էր իր խրճիթը , ջրերու գոչիւն մը կը լսէր որ ընդարձակ դետի պէս քովի լեռներէն վար կը վազէին , և լճին ջրոցը հետ միանալով բոլոր ձորը կ'ողողէին : Այս տեսարանէն սաստիկ սիրտը նետեց , և որչափ որ առաջ կ'երթար , այնչափ սրտին տազնապն ալ կը սաստկանար :

Վերջապէս շատ մը շրջաններ ընելէն ետքը իր տանը ճակատը գտաւ , և ըոյս մը տեսաւ ցորեննոցին մէջ . այս լոյսը մթընշաղ պայծառութիւն մը կը ձգէր խռովեալ ջրոց վրայ , որ արդէն իր խրճիթին վարի յարկը ողողած էին . կը լսէր իր կնկանն ու որդւոյն օգնութիւն կանչելու ողորմ աղաղակները : Այս ձայները խառնուելով ժայռերու և ծառերու մէջ բռնի մտած ակիբներու շրջնկոցին հետ , թշուառ Պետրոսին սիրտը կտոր կտոր կ'ընէին : Իր սի-

րելիներէն զատ ուրիշ բան չէր մտածէր, և անոնց փրկութեանն համար ամէն վտանգ աչքին բան չէր երևնար. ուստի անվախ ալիքներուն մէջ մտաւ, բայց մէկէն ոտքերը զետնէն կտրեցան, ինքն ալ գաւազանը ձգեց ու լողալով խրճթին մօտեցաւ:

Կատարինէն և Քէորդը ցորեննօցին մէջ վայրկենէ վայրկեան մահուան կը սպասէին տանը փլատակներուն տակ: Զուրը երթալով կը բարձրանար. Պետրոս խրճթին դռուն հասաւ, բայց անկարելի ըլլալով ներս մտնելը՝ մեծաձայն աղաղակեց. « Վար իջիր, կատարինէ, Քէորդին հետ մէկտեղ. ես հոս եմ զձեզ փրկելու »: Խեղճ կինը զիրկն առաւ զտղան ու կտորճութեամբ ալիքներուն մէջ մտաւ. Պետրոս ուժով բազկովը բռնած զկինը և զորդին, նաւակի մը մէջ դրաւ, որ տանը շուք բնոյ մեծ ուռենւոյ մը կապած էր և որուն մէջ դեռ Զուր լեցուած չէր. ու արագութեամբ ուռենիէն ճիւղ մը կտրելով, սկըսաւ առաջ քշել մակոյկը զանոնք ցամաք ձգելու յուսով:

Բաւական ճամբայ ըրած էր մօտ բլուր մը հասնելու համար. բայց ափսոս իր ճգանցը. տկար նաւակը հեղեղներէն հրուելով հաստ ժայռի մը զարնուեցաւ ու կտոր կտոր եղաւ: Պետրոս յուսահատութեան ձայն մը հանեց. Քէորդ նաւակին մէկ տախտակը բռնած ինքզինքը ալիքներուն բռնութեանը թողուց, որ զինքը վեր-

ջառէս դիմացի ասիանց վրայ ձգեցին դի-
շերուան թանձր ու ահաւոր խաւարին մէջ :
Երկար ատեն կը լսէր հօրը ողորմ աղա-
ղակները և խեղճ մօրը հեծեծանքը . բայց
ալիքները իրենց կատաղի և որոտազոչ
մոնչմամբքը արգիլեցին անոնց ձայները :

Քէորզ երկար ատեն կը թափառէր խա-
ւարին մէջ առանց դիտնալու թէ ուր կե-
նայ . ատեն ատեն վախով մը կը նայէր այն
հանդարտ լճին վրայ՝ որ հիմա յատակէն
ինչուան երեսը խռովան էր . վերջապէս
բլրին վրայ ելաւ , որուն ստորտան ինկած
էր ինքը , և քարայր մը ապաւինեցաւ , որ
անցուց բոլոր գիշերը : Առաւօտեան դէմ
անձրեւը դադրեւ էր , ու արևն ալ երկնից
կազոյտ կամարէն իր փալիբլումն ճառա-
գայթնեցրը կ'արձրկէր : Ելաւ Քէորզ այրէն
և զատ 'ի վայր նեղ ճամբէ մը վար իջաւ .
զտաւ նամբան ու սկսաւ դէպ 'ի ծնողացը
խորճիթն երթալ , բայց մօտենալն անգամ
անկարեցի եղաւ , վասն զի ջուրը բաց 'ի
տանիքէն բոլոր բնակարանը ծածկել էր :
Տրտում և լռիկ նստեցաւ ժայռի մը վրայ ,
և անթարթ աչքը կը նայէր իր մանկու-
թեան տեղւոյն վրայ , և սաստիկ ախրու-
թենէն յորդ արցունքներ ծնօտէն կը վա-
զէին . ո՛հ , շէր գիտէր խեղճ օղան թէ
ինչուան ուր պիտի հասնի իր թշուառու-
թեան օտհմանը , վասն զի այն հասա-
կին մէջ շէր կրնայ մարդկանց պատահած
թշուառութեանց անգունդին խորը երևա-

կայել : Երջանի՛կ հասակ , որ միշտ յուսով
կ'ապրի ու չնչին բաներով կը խարուի . եր-
ջանիկ է ու պատճառը չգիտեր և կը զար-
մանայ թէ ինչու մարդիկ կ'անցնին կ'եր-
թան փայլակի արագութեամբ , և իրենց
ուրախութիւնը շուտով կը մարի գիւրաթա-
ռամ վարդի մը պէս :

Գէորգ արցունքնեղը աչքէն սրբելով ,
հայրն աւ մայրը սկսաւ կանչել . բայց 'ի
զուր . արձագանդը միայն իր ձայնին պա-
տասխան կու տար . լծին չորս կողմը պը-
տրտելով , իւրաքանչիւր քայլին՝ Պետրո՛ս,
Կատարինէ՛ , իրեն սիրելի անունները կը
կրկնէր . բայց ամէնը պարտապ , չկրցաւ ի-
մանալ կերպով մը փնոյցաց դացած ճամբան
որ ինքն ալ հոն վաղէր : Սրտին կսկիծը ա-
ւելի սաստկացաւ մանաւանդ տեսնելով որ
ջուրը դիակներ առած կը տանէր . ու հաս-
տատ միտքը դրաւ թէ հայրն ու մայրը ա-
լիքներուն մէջ խղղուած են : Ամենայն օգ-
նութենէ լքեալ և միայնակ , չղքեցաւ լծին
եղերքը և իր արտասուաթոր աչուրները
երկինք վերուցած , յանձնեց ինքզինքը որ-
բացելոց Հօրը . — « Աստուած իմ , ըսաւ հե-
կեկանօք , ահաւասիկ կը տեսնաս զիս թէ
ի՛նչ յետին թշուառութեան մէջ եմ . այլ
չունիմ ինձի խնամող մը երկրիս վրայ . իմ
ճնողքս անշուշտ այս զարհուրելի գիշե-
րուանս մէջ կորսնցուցին կեանքերնին .
օգնէ ինձի , Տէր , և զիս ձեռքէ մի թո-
ղուր » : Եւ վերջը ըսաւ եռանդազին Հայր

մերև ու Ողջոյն քեզ Մարտիրոսը և նստաւ
հանգչեցաւ : Ժամ մը տղան կը մտածէր իր
խեղճ վիճակին վրայ , բայց վերջապէս ա-
նօթութենէ նեղուած , ստք ելաւ ու սկը-
սաւ բլրին վրայ ասգիս . անգին պտրտիչ
մորենի կամ ուրիշ վայրի պտուղներ գրա-
նելու համար որոնք եղեամէն ու անձրևէն
ազատ կրնային ըլլալ : Իրաւ քիչ մը բան
գտաւ , բայց անոնք բաւական չէին իրեն
անօթութիւնը անցընելու : Բայց ամենևին
չյուսահատեցաւ ու անդադար կը փնտը-
ռէր . և ահա մարդու ոտնաձայն մը լսեց ,
որ նեղ ճամբէ մը առաջ կու գար . կանկ
առաւ ու մարդ մը տեսաւ որ ձեռքը սա-
պատ մը բռնած կու գար , ու բարև տուաւ :

Օտարականը զարմացաւ Քէորդք մինակ
տօգոյն ու հիւժեակ տեսնելուն . վրայ ու
հարցուց թէ ինչ կ'ընէ . պատասխանեց
տղան թէ « Մորենի և վայրի պտուղներ կը
փնտռեմ , վասն զի առտորնէ ինչուան հի-
մա բան կերած չեմ » . և սկսաւ պատմել
անոր իր ու ծնողացը դժխէն անցած խեղ-
ճութիւնը , և թէ ինչպէս վտանգէն ազա-
տելու ատեննին վտանգի մէջ ինկան : ու
հացի կտոր մը խնդրեց անոր գթութիւնը
պազատելով : — « Խեղճ տղայ , պատասխա-
նեց օտարականը , լսածներէն սիրտը սպա-
տիկ շարժած , չեմ կրնար ուզածդ տալ ,
վասն զի քովս ոչ հաց և ոչ ալ ուրիշ ու-
տելիք ունիմ . բայց քիչ մը համբերէ ,
հետս եկուր և ես զքեզ կը հոգամ » :

Գէորգ չէր գիտէր թէ ինչ ընէ . կ'ուզէր հոն կենալ որ մօտ գեղերը իր ծնողքը փնտռէ : Բայց օտարականն իր տարակոյսը փարատեց և ըսաւ . — « Ինձի կ'երևայ թէ աղէկ չես ըներ աս երեկուան հեղեղէն չարաչար խեղճըցած տեղս կենալովդ . շատ տուներ կործանեցան ու կենդանիներ ալ խղղուեցան , և անհամար մարդիկ ալ յանկարծակիի եկած՝ անողորմ ջրերուն մէջ խղղուեցան . հաւանական է որ քու հայրդ ու մայրդ ալ ասոնց մէջն ըլլան , վասն զի այս ձորակէս անդին լերան մէկալ զառ ՚ի վայրը գեղին շատ բնակիչները տեսայ որ խեղճերուն դժբաղդութեանը վրայ կու լային , որոնց բըզըքտած դիակուանքը դիզուած էին ջրին եզերքը : Հօրդ անունն ինչ էր :

— Պետրոս կամ Քնարահար . բայց բուն մականունն է Լանկ :

— Կարծեմ թէ այդ անունն ալ լսեցի , բայց ստոյգ բան մը չեմ կրնար ըսել : Ինչպէս որ շատ անգամ իմ քանի մը վաճառքս այն կողմերը կը տանէի ծախելու , ասղներ դործք , ժապաւէն , դերձան , բամբակ և ուրիշ ասոնց նման բաներ , այսպէս այս առաւօտ ալ գացի ու տեսայ որ բիւրաւոր մարդկանց դիակներ ջրէն կը հանէին , զորոնք ոչ ոք կրցաւ ճանչնալ . ես ալ նայելով որ այն հասարակաց թշուառութեան տտեն բան վաստըկելիք չունիմ , երկարատեն հոն չուչացայ : Մտիկ ըրէ , որդեակ ,

կարծեմ որ այսպիսի ժամանակ տղէկ կընես եթէ հետս գաս : Ես այս գիշեր հարուստ կալուածատիրոջ մը քով պիտի անցընեմ որ ամենևին տղայ չունի , և անտարակոյս եմ որ գրեզ ալ սիրով կ'ընդունի :

Բայց տղուն լսած գէշ լուրերուն վրայ սկսաւ յորդ արցունք թափել , և ալ ապա հով եղաւ իր ծնողաց մահուան վրայ . ու քիչ մը մտածելէն ետքը ձեռքը վաճառականին երկնցուց ու ըսաւ . — « Կու գամ հետդ . կը տեսնեմ որ աշխարհիս վրայ աչ ծնողքս գրկելու միտքարութիւնը պիտի չունենամ . ուստի հիմա ինձի ուրիշ բան չմնար ընել՝ բայց եթէ այդ կալուածատիրոջ քով մանել , թէ որ զիս ընդունելու ըլլայ . կը խոստանամ ազէկ ըլլալ և ձեռքէս եկած ծառայութիւնն ալ ընել » : Վաճառականը բռնեց տղուն ձեռքէն , և երկուքը մէկտեղ սկսան երթալ :

Վերջին անգամ մ'աւայն կողմերը մէյ մը աչուրները դարձընելով որ երբեմն օթեան էր երջանկութեան և նոյն ատեն կարծես թէ վրան անէծք իջեր էր , Գէորդ իր առաջնորդին հետ մէկտեղ սրբոյն Մենրա տոյ մատուռը մտաւ , ուր որ շատ անգամ իր ծնողաց հետ մէկտեղ կու գար աղօթելու , և իր ցաւերը Աստուծոյ առջին տարածեց : Այս պղտի մատուռը իրեն բարձր դրբին պատճառաւ և խիստ ամուր սոջինուած ըլլալովք , ջրերուն բռնութեանը

դէժ կուռերով կրցաւ յաղթել : Գէորգին սրաաշարժ տղօթելէն վաճառականին սէրն և գութը աւելի շարժեցաւ վրան ու խօսք տուաւ նորէն որ կաշուածատիրոջ կը յանձնէ զինքը : Աղօթքը լմննալէն ետքը , երկուքը մէկտեղ ճամբայ ինկան ու շուտով գեղ մը հասան , որ ան ալ մեծամեծ փնասներ կրած էր :

Անկէ արքունի ճամբէն սկսան երթալ որ ապառաժի մէջ փորած էր և լերանց խորտուքորտ տեղերէն կը տանէր : Առաջօր քարոժայռերն որ այն սալայատակ ճամբան կը շրջապատէին , ահուդող կը ձգէին ճանապարհորդին վրայ . ուր որ աչքը դարձընելու ըլլար մարդ , մթնադոյն կրանիտէ պատերուն վրայ արձանագրութիւններ կը տեսնէր , որոնք կը յիշեցընէին ձեանց հիւսերու տակ թաղուած ճանապարհորդներուն մահերը . թէպէտ ժամանակը գրեթէ մաշած էր անոնց յիշատակարանները , բայց իրենց տեսքը միայն դառն գաղափարներ միտք կը բերէին հոնտեղ : Այն մերկ քարաժայռերուն ծայրերը , տեղ տեղ խաչեր տնկուած էին մէկմէկէ քիչ հեռու , որոնք կարծես թէ կ'ըսէին ուզեորին որ այս կողմերը՝ ուր վրտանգը գլխընուն վրայ պատրաստ կեցած էր , պէտք էին իրենց յոյսը անոր վրայ միայն դնել , որ իրենց փրկութեանն համար խաչին վրայ կեանքը տուաւ : Հոնտեղի լուսթիւնը՝ ազուաններուն և որիններուն

կոիչներէն միայն կը խափանուէր, որոնք
ծառերուն վրայ գրած էին իրենց բայները,
և այս բազմավտանգ ու անչէն ճամբէն
անցնողներուն ընկերութիւն կ'ընէին :

Գէորգ և վաճառականն այս ճամբան ըմնցընելէն ետքը , զառ 'ի վերով մը գաշտի պէս տեղ մը եկան , որուն բարձրէն մարդուս աչքին առջև հիանալի տեսարաններ կը բացուէին . հոն սաստիկ ծանրաբեռնած սայլ մը տեսան զոր տասը յաղթանդամ ձիեր մեծ նեղութեամբ՝ առաջնորդներուն աղաղակներով և խարազաններուն շառաչմամբ՝ լերան գագաթը կը հանէին : Այս ահագին կառքը ճերմակ կտաւով ծածկուած էր , և մէջը գաղթականներուն համար անտուկներով ու տակառներով լեցուն պաշար կար : Չիերուն արիւն քրտինք մտնելն և անոնց չարաչար յոգնութիւնը տեսնելով , ըսաւ վաճառականը Գէորգին . — « Տես թէ ինչ նեղութիւն կը քաշեն խեղճ կենդանիները այդ բեռը քաշելու . մենք ալ ասոնց նման ենք . մեր կեանքն ալ աշխատութեամբ և վշտերով կ'անցնի , և այն արգելքներն որ միշտ մեր

ճամբուն վրայ գիւնացնիս կ'ելլեն , Աստուծոյ օգնութեամբը միայն կրնանք յաղթել : Այն խոչերը՝ այս շեռներուս կը նմանին , ուսկից որ հիմա ձիերը սաստիկ աշխատութեամբ վեր կ'ելլեն . պզտի արգելք մը կանկ առնել կու տայ իրենց կամ ետև կը մղէ . տես ուրեմն մեր կենաց պատկերը : Աստուծոյ աներևոյթ ձեռքն է որ կ'ուզղէ բոլոր մեր գլխին պատահածները , և կրօնքը՝ զօրաւոր խրատներով փափագ մը կը վառէ՝ ի մեզ ուրիշ նոր հայրենիք մը ձեռք ձգելու , ուր մեր առաքինութիւնն ալ պատերազմելու հարկաւորութիւն պիտի չունենայ : Մերթ ընդ մերթ երբ անհոգութեամբ քուն կ'ըլլանք ու բարւոյն ձայնը չենք լսեր , անցողական պատիժներով Աստուած զմեզ նորէն իրեն կը կանչէ . դուն արդէն գիտես որ այս ուղիարհիս վրայ ամէն բան մեր աւղածին յէս չորսարեւ Շատ անգամ կը փախչինք այն չարիքներէն որ կերպով մը մեր խաղաղութիւնը կրնան խռովել , ու ժամանակ անցնելէն ետքը կ'օրհնենք զՆախախնամութիւնն՝ որ խրկեց մեզի այն վիշտերը : Բազոր մեզի պատահածներն , որ մեր կենաց ընդարձակ պատկերին վրայ շուք մը կը ձգեն , մեծամեծ դէպքերու նման որ գրեւթիւնք տակնուվրայ կ'ընեն , վախճան մը ունին որ մեր կարծատես աշուրները շատ ուշ աւանց ինչ բանի համար ըլլալը կ'իմանան . վասն զի միշտ նոյն Աստուածն է , Աս-

տուած սիրոյ և ողորմութեան, և իրմէ կու
գան մեզի թէ շնորհք և թէ պատուհասք :

— Ուրեմն քու գլխէդ ալ անցեր են մե-
ծամեծ թշուառութիւններ, ըսաւ Գէորգ
խօսքը կտրելով : Խնդրեմ. ինչ է անունդ,
և ո՛ր ծնած կս :

— Պատմեմ քեզի, տղաս, իմ վարքս .
և տեսնաս թէ իմ բախտս ալ քու կիներդ ո՛ր-
չափ նման է : Ես վերին-Բաղադինա ծը-
նած եմ, և անուան ալ Յովհաննէս Տէնք
է . բայց սովորաբար Սուսպ կը բնակիմ :
Ես ալ քեզի պէս թշուառաբար չուտով
կորսնցուցի ծնողքս, երբ հազիւ դեռ զի-
րեւք ճանչնալ պիտի սկսէի : Եւ որով-
հետեւ բան մը չիմկառ ինծի անոնցմէ, օ-
տարներն առին խնամեցին զիս . և երբ
տասներկեց տարեկան եղայ, բրուսիացի
գնդի մը թմրկահար ըրին : Բայց ան ատեն
բարեբաղդաբար առաջին սուրբ հաղորդու-
թիւնս առած էի, և բոլոր կենացս մէջ պի-
տի յիշեմ այն օրն որ իմ գեղիս յարգոյ
աւագերէցը սրբազան խորհրդոյն զիս մեր-
ձեցուց :

» Քանի մը ամիս պարսպապատ քաղա-
քի մը մէջ կենալէն վերջը, հարկագրուե-
ցաւ մեր գունդը թշնամեաց դէմ երթա-
լու : Սրտոտ էի ես, յանդուգն չըսեմ . և
ամենեւին վտանգէ վախ չունէի ու անխո-
ցելի զիս կը կարծէի, վասն զի սրտիս մէջ
դեռ երխտասարգական աշխոյժը կը բոր-
բորէր : Օր մը երբոր իմ գնդիս հետ մէկ-

տեղ թշնամիները զննելու գացինք , ես ա-
նոնցմէ շատ առաջ անցնելով , ձախ ոտքիդ
գնտակ մը առի աւ մարած գետին փռուե-
ցայ . ընկերներս վերուցին դիւ և արթըն-
ցուցին . և որովհետեւ այն պղտի քաղցին
մէջ , ուր էր իմ գունդս , գինուարսկան
հիւանդանոց չկար , դիւ Մատթէոս Գլուկ
անունով բարի վաճառականի մը տունը
տարին , որն որ ձեռքէն եկած քրիստո-
նէական բարիքները ցուցուց ինձի , ինչ
պէս նաև իր Մարիանէ տուարինի ամու-
սինն և իրենց Միքայէլ տղան՝ ամէն հոգ
տարին վրաս :

» Բայց ցաւերս ալ , բժշկութիւնս ալ եր-
կայն քշեցին : Այն ատեն իմացայ թէ որ-
չափ հարկաւոր է մարդուս կրօնքը , վասն
զի անով միայն ցաւոցս կը համբերէի :
« Դեռ ասանկ երիտասարդ , կրտէի եր-
բեմն երբեմն ես ինձի , և հիմակուրնէ-
կա՛ղ ըլլամ : Այս անտանելի բան է » :
Բայց ան ատեն կը զօրացընէր զիս իմ
Փրկիչս որ խաչին վրայ մեռաւ , որուն
պատկերը աչքիս առջևը կախուած էր . և
ալ ամենեկին չտրտնջալով , զիս բոլորովին
Աստուծոյ կամացը յանձնեցի :

» Այս թշուառութիւնս ինձի շատ օգ-
տակար եղաւ . ճանչցայ մարդկային բնաւ-
թեան տկարութիւնը : Երիտասարդու-
թեան կտրին հասակը այնպիսի տարիք մըն
է՝ որ ամենեկին բանէ մը չվախեր , և ինք-
զինքը երկաթէ ու անմահ կը կարծէ : Ահ :

որչափ խորհրդածութիւններ միտքս կու՛
գային այն վեց ամսուան մէջ ցաւոց ան-
կողնոյս մէջ պառկած : Քրիստոնէական
վարդապետութեան դասերն ու խրատնե-
րը որ ատենով լսած էի , բոլոր մտքիս
մէջ կը նորոգուէին . կրօնական ունեցած
զգացմունքներս արթնցան , սրոնք , ափ-
սո՛ս , պատերազմի աղմուկներուն մէջ
խղղուած էին : Շատ անգամ տեղւոյն ա-
ւագերէցը ինծի տեսութեան կու գար , և
իրեն տուած մխիթարութիւններովը կը
քաջալերէի ինքզինքս :

» Ա՛ երջապէս գարնան օր մը կրցայ սու-
ջի անգամ խուցէս դուրս ելլալ , ու գա-
ւազանի մը կրթընած տանը քովի պար-
տէզն իջայ . Միքայէլ՝ որ ինծմէ քիչ մը ա-
ւելի տարիք ունէր , ինծի հետ եկաւ : Այն
տաժանելի հիւանդութենէն վերջը անզով
ու մաքուր օդը ծծելով , կարծէի թէ 'ի նոր
կեանս դարձեր եմ : « Առողջութենէն ա-
ւելի ի՛նչ աղէկ բան կայ » , կը կանչէի ե-
րախտագէտ խնդութեամբ : Դեռ կարծես
թէ աչքիս առջևը կու գան այն պտղալից
ծառերը իրենց կարմիր ու ճերմակ ծաղկը-
ներովը ծանրացած : Նստարանի մը վրայ
երկու խնձորենիներու տակ նստեցայ , ու
բնութեան վսեմ տեսարանին վրայ զմայլած
կը նայէի , որ ինծի պէս ան ալ կարծես թէ
հիւանդութենէ նոր ելած էր : Կը տեսնէի
կարգաւ ծաղկազարդ մարգեր , սերմանած
դաշտեր և բազմաթիւ թուփեր մատղաշ

տերեւներով ծածկուած . մէկալ կողմէն ալ
հիացած կը նայէի պզտի քաղաքին տնակ-
ներուն վրայ որ ժայռոտ բլրակի մը շարտ
կողմը ցրուած էին ամբիթէաստրոնի ձեւով
իր գոթաձեւ զանգակատանը որ գեղա՛խ վեր
բարձրացած կարծես թէ երկինքը կը ցու-
ցընէր, և այն գեղեցիկ ու զուարճալի ճե-
մելեացն ուր ամէն իրիկուն քաղաքին բնա-
կիչներն իրենց աշխատութիւններէն համ-
զիստ առնելու կ'երթային : Այն օրէն եւ-
քը՝ ոյժս վրաս դալ սկսաւ և կամոց կա-
մաց առանց դաւազանի կը քալէի : Բայց
որովհետեւ ձախ ուղքս աջէն աւելի կարճը-
ցեր էր, դիտ գինուորութենէ ազատ ըրին .
այս բանս մէկ կողմանէ միտթարեց դիտ ,
մէկալ կողմէն ալ արամեցաւ :

— « Ահաւասիկ բանս լինցաւ , կ'ըսէի ետ
ինձի , ինչ պիտի ընեմ հիմա . պզտիկու-
թենէս որք մնացած՝ արհեստ չեմ սորված .
ուրեմն հիմա ինչպէս պիտոյքս պիտի հո-
դամ : Ասդիս անդին իյնամ հաց մուրա-
լու . այս տարիքով ասանկ թշուառ բլրալ :

Այն օրն որ ալ գինուորութենէ ազատ ըլ-
լալու նամակն առի , սարսիկ անհանգրա-
տութեան մէջ ինկայ , անանկ որ նոյն գի-
չերն ամենեկին քունս շարտաւ « վերջապէս
առաւօտեան երեքին ատենները՝ աչքս քիչ
մը գոցեցի , ու երազ մը տեսայ : Վնասը
ձակ անտառի մը մէջ էի , որուն մեծաւ-
թենէն աշուրներս կը յոգնէին . և երբ
թանձրախիտ ծառերուն վրայ կը նայէի ,

որոնց մէջէն արևուն ճառագայթները
չէին գործք անցնիլ, ապիտակազգեստ ու
լուսափայլ մարդու երևոյթ մը տեսայ որ
գէտ ՚ի ինծի կու գար, ու ձեռք ալ կու տար
որ այն բաւզին մէջէն հանէ : Զուարհալի
հոսկիս մը գացինք ուր գոյնզգոյն ծաղկանց
անոյշ հատերը ամէն կողմ կը ծաւալէին :
Առաջնորդս ինծի նշան ըրաւ որ քանի մը
հատ ժողովեմ անոնցմէ . և երբոր ձեռքս
չարժեցի որ ժողովեմ, այն շարժմունքէն
արթնցայ :

• Այս երազն ինծի տնպատմելի ուրա-
խութիւն պատճառեց . և ինչպէս մարդ
այս աշխարհիս վրայ իր-փափազները ճըշ-
մարտ կը կարծէ, այսպէս ալ իմ այս տե-
սած քաղցր երազիս վրայ ես ալ քանի մը
բան աւելցրնելով, կարծէի թէ ալ անկէ
ետքը երջանիկ պիտի ըլլամ : Բայց այս
պատրանքը՝ երկար չտեւեց . վասն զի ժամ
մը ետքը նորէն տաղնապաներս վրաս հա-
սան : Անկողնէս ելայ տուաւուն ու ետան,
դադին աղօթեցի Աստուծոյ օր գթայ վը-
րան : Երայ դացի բարերարիս քովք, և ու-
րովհետեւ բոլորովին առողջացած էի, ան-
կեղծ ու բոլոր սրտանց շնորհակալութիւն,
ներաւրի անոր, բայց չկրցայ ծածկել իր-
մէ ազգայ կենացս խեղճութիւնը : Խան-
դազատանք նայեցաւ ինծի ու ըսաւ .
« Մի հոգար ամենեւին ապագայ կենացդ
վրայ . ես կը խնամեմ գքեզ : Արդէն ծե-
րացած եմ ես ու չեմ կրնար վաճառակա,

նութիւնս աղէկ առաջ տանիլ . անպատեհ ալ կարծեմ քիչ ատենէն պիտի հարկադրուի մեր գործքերուն համար ճամբորդութիւն ընել , և այն ատեն մարդու մը պէտք պիտի ունենանք խանութիւն մէջ . և զքեզ կ'ուզենք առնել . ինչ կ'ըսես , ինչպէս կ'ըրեայ քեզի այս առաջարկութիւնս :

» Արցունքներս իմ տեղս պատասխանեցին : Ան ատեն բարի վաճառականն ըսաւ . « Վաճառականութեան մէջ կ'ուզեմ դնել զքեզ . ասկէց ետքը ալ մեր քովը կեցիր , ինչպէս որ եկած օրէզ ինչուան հիմա . մեր սեղանէն կ'ուտես , ու վարձքդ ալ կրցածնուս չափ կու տանք :

» Երջանիկ էի ես անկէ վերջը , և քիչ ատենէն կրցայ ալ խանութիւն մէջ աշխատիլ սկսելու : Բայց , ո՛հ , ինչո՞ւ կարճ եղաւ երջանկութիւնս : Հազիւ թէ տարի մը անցաւ , մահը յափշտակեց ձեռքէս իմ տէրս : Խրեն յուղարկաւորութեան բողոք քաղաքացիք ներկայ էին . որովհետեւ ինքը ամենուն մեծարոյ ու սիրելի էր :

» Իր Մարիանէ բարեպաշտ կիներ , չգիմացաւ իր սիրելի ամուսնոյն կորստեանը . և վեց ամիս հաշելով մահելով , ինքն ալ զերեզման գնաց Մատթէոսին ետևէն : Միքայէլն ու ես մինակ մնացինք պառաւաղախնոյ մը հետ , որուն անունը Վառվառէ էր , և մենք խել մը տարի առաջ տարինք վաճառականութիւննիս , և բաներնիս անանկ աղէկ կը յաջողէր՝ որ Միքայ-

էլ զիս ընկեր առաւ իրեն , թէպէտ և ես
ամենևին ստակ չէի դրած : Ասանկ վեց
տարի անցընելէն ետքը , կիրակի օր մը
նամակ տոբ իրմէ որ կ'իմացընէր ինծի իր
ծանր հիւանդ ըլլալն , և կ'աղաչէր որ ա-
ռանց ուշանալու իր եղած քաղաքն եր-
թամ : Մէկէն կառքով ելայ դացի , և բաղ-
դաւոր գտնուեցայ որ դեռ գրարեկամս
ողջ անտայ . բայց անանկ տկարացած էր , որ
գրեթէ չէր կրնար խօսել : Ընդունած էր
վերջին խորհուրդները , ու կտակն ալ ըրած
էր և ունեցածին կէսն ինծի ձգած էր ,
կէսն ալ վաւառէին և մեր քաղքին աղ-
քատներուն : Երկրորդ օրը արդարոց քու-
նը ծնդացս վրայ քնացաւ Միքայէլ . ըստ
իր փափաքանացը՝ տանել տուի մարմինը
մեր գերեզմաննոցը և հօրն ու մօրը քով
թաղեցի :

» Տես ինծի հանդիպած բաղդը . ես այն
ատեն քսանըվեց տարեկան էի . քանի մը
ամիս վերջը առաքինի աղջկան մը հետ ա-
մուսնացայ , որ իմ երջանկութիւնս է իր
բարեպաշտութեամբն , իմաստութեամբ ու
բարելուութիւններովը : Չորս տղոց հայր
եմ , որոնք մեծ յոյս կու տան ինծի :

» Ահաւասիկ գլխէս անցածները , որ-
դեակ . կը տեսնես թէ ինչպէս Աստուած
գութ ունեցեր է իմ վրաս , և թէ ինչպէս
այս վէրքս ինծի երջանկութեան աղբիւր
եղեր է , ուսկից որ աւելի բանի չէի կրը-
նար սպասել : Իրաւցընէ ո՞վ կրնար կարծել

ան ատենն որ ես խնդն ու վիրաւոր Մատթէոս Վլուկին տունը դացի, որ օր մը իր տեղը պիտի անցնիմ և միջակ կարգի վաճառական մը պիտի ըլլամ: Ա՛հ, աստուածային նախախնամութիւնն ինչ զարմանալի ճամբաներ ունի. և ես թէպէտ շատ տարի ալ ապրիմ, բայց պիտի չկարենամ իմ երախտագիտութիւնս ինչպէս որ պէտք է յայտնել իրեն յ:

Այս խօսակցութեանս ատեն Գէորգն ու վանապահանք գեղեցիկ ծործոր մը հասան, և գեղի տանդոկ մը կանկ առին. և որովհետև երկուքն ալ անօթի էին, վաճառահանք բաները վար դրաւ ու կերակուր ուղեց. մէկէն ապուր բերին, պնակ մը միս ու բանջարեղէն. և որովհետև եղանակը ցուրտ էր ու շատ քալելէն ալ յոգնած էին, շիշ մըն ալ գինի խմեցին քիչ մը ոյժ առնելու համար. և ժամ մը հանգչելէն ետքը՝ նորէն ճամբայ ելան, որպէս զի գիշերը չկոխած կալուածատիրոջ տունն հասնին, որուն քով Գէորգ կը յուսար ապաստանարան մը գտնել:

Յովսէփ Յէնտոյ կալուածատէրը նստած էր մեծ կրակարանի մը կաւ և բնթրեաց ժամուն կը սպասէր, երբ այս երկու ճամբորդները մտան ու բարե տուին: Իր պառաւ Եղիսաբեթ աղախինը հոգէ կանթեղ մը բերաւ ու դրաւ սեղանապատախակին

վրայ իր տիրոջն առջին , որ վաճառակա-
նին ասանկ հասնելուն վրայ սաստիկ դար-
մացած մնացեր էր :

Քիչ մը օգուն և այն հանդիպած ազե-
տալի գէպքին վրայ , որ գշատերը թշուա-
ռութեան մէջ ձգեց , խօսելէն ետքը , վա-
ճառականը նարտար կերպով խօսքը Գէոր-
գին վրայ դարձուց , ու ըսաւ կալուածատի-
րոջ . — « Տես սա խեղճ որքը որուն հայրն
ու մայրը այս գիշեր հեղեղը յափշտակեց :
Թող ինքը քեզի պատմէ հանդիպածք . այս
չափս միայն հերիք ըլլայ ըսելէ , թէ հիմա
ոչ օգնական ունի և ոչ ալ գլուխը գնելու
տեղ մը : Կարծեմ թէ կրնաս քովդ առ-
նել դասիկայ . արդէն հարուստ ես և այս
տղան ջերմեռանդ աստուածապաշտ է և
խելացի , քու տանդ աղէկ օգտակար կըր-
նայ ըլլալ : Ասիկայ ալ ուրիշ բարի գործ-
քերէդ մէկը թող ըլլայ , կը վարձատրէ
գրեզ Աստուած » :

Կալուածատէրը թև թևի վրայ ծալած
գէպ 'ի Գէորգին ձուեցաւ ու վերէն վար
մէյ մը զննեց : Եւ քանի մը վայրկեան մը
տածելէն ետքը , ըսաւ . — « Այս տղան ես
սիրեցի . անկեղծ նայուածք մը ունի . ես
ալ անկեղծ տղայ կը սիրեմ . նմանապէս
կերպարանքն ալ խիստ նշանական է . կար-
ծեմ շատ տգէտ ալ պիտի չըլլայ : Աղէկ ,
աղէկ , զինքը նորէն զննելով ըսաւ կա-
լուածատէրը . փորձենք տեսնանք : Մտիկ
բրէ , որդեակ , որովհետև այս բարի վա-

ճառականը , զոր երկար ատենէ 'ի վեր կը ճանչնամ , գքեզ ինձի կը յանձնէ , ես ալ գքեզ իմ քովս կ'առնեմ . բայց այս պայմանաւ որ աշխատասէր ու հնազանդ պիտի ըլլաս և անպակաս եկեղեցի պիտի երթաս : Նայէ առաջուց կ'ըսեմ քեզի , տղայ մը որ Աստուծոյ ջերմեռանդ չէ և ոչ ալ իր քրիստոնէական պարտքերը ամենայն ջանքով կը կատարէ , երկայն ատեն չկըրնար քովս կենալ : Թէ որ դուն իրաւցընէ բարեպաշտ ես և վարքդ ալ աղէկ է , ես կը կրթեմ գքեզ այն բաներուն մէջ որ օր մը աշխարհիս վրայ քեզի հարկաւոր պիտի ըլլան : Թէ որ այս դաշինքս յանձն կ'առնես , ձեռք տուր նայիմ : Այս ըսելով ձեռքն անոր երհնցուց . Գէորգ ալ ուրախութեամբ մը սխմելով համբուրեց զայն : Նոյն վայրկենին ծառաներն ու աղախինները կերակուր ուտելու համար խուցը մտան . Գէորգ իրենց խօսակցութեան նիւթն եզաւ :

Ծառաները կերակուրնին ըմպընելէն ետքը , որ մարացորենէ ապուր ու մոխրի մէջ եփած գետնախնձոր էր , կալուածատիրոջ սեղանը պատրաստեցին . վաճառականը ու Գէորգն ալ մէկտեղ նստան ու կերան օխորժով համադամները , ոչխարն ու կարկանդակը . նոյնպէս ալ գինին . բայց Գէորգ ամենևին գինի չխմեց , և թէպէտ կալուածատէրը շատ ստիպեց որ խմէ , բայց յանձն չառաւ ըսելով թէ իմ

տարիքիս չվայրեր : Ծովաճառայն գողնց Թով
սէփ զաղան այս բանիս համար և գրկեց
զանիկայ : Երբոր կերակուրը ընցաւ :
Գէորգ եռանգեամբ ազօթքն ըրաւ և այն
խուցը գնաց ուր այն գիշերը Ծէնքին հետ
պիտի անցընէր : Դեռ չքնացած՝ երեկոյ
եան ազօթքն ըրաւ , ու վերջը ըսաւ իր ա.
ռաջնորդին . — « Ի՞նչպէս պիտի կարենամ
չնորհակալ ըլլալ քեզի , սիրելի բարե.
բար իմ , զիս հոս բերելուդ համար . ու
րիչ բան չեմ կրնար ընել , բայց եթէ ա.
զօթել առ Աստուած որ ինքը անդին քո
վարձքդ հատուցանէ առատաբէս . և ա.
պահով եմ որ կը հատուցանէ : — Ինչա.
ցի՞ բարեպաշտ և աշխատասէր , եզիր , ը.
սաւ անոր Ծէնք , և թէ որ պզտի բուն մըն
ալ ըրի նէ քեզի՞ ան ատեն տակօսեալ հա.
տուցած կ'ըլլաս ինձի : Այս կալուածա.
տէրը շատ ազնիւ մարդ է , և եթէ կարե.
նաս գինքը գոհ ընել , անիկայ քու ապա.
գայ վիճակդ կը հողայ : Ուրեմն որ մը եր.
ջանիկ ըլլալդ քեզմէ կը կախաւի . և թէ որ
գէշ վարքիդ համար քովէն վռնատ , թը
շուտա կ'ըլլաս » : Երկուքն ալ պատկեցան ,
և Գէորգ աղէկ քուն մը եղաւ :

Երկրորդ օրը Ծէնք կանուխ հրածարա.
կան ողջոյնը առաւ կալուածատէրօջ , ու
զԳէորգ գրկելով ըսաւ անոր . — « Ա՛ռ այս
սկուզը պզտի բաներ գնելու համար . քիչ
ատենէն նորէն կը դառնամ , և երբ իմա.
նամ թէ կարուածատէրը գոհ է քեզմէ՝ ըն .

ծայ մ'աչ կու տամ. միշտ միտքդ բեր երէկ իրիկուած տուած խրատներս : Քէորգ խոտաացաւ ու նախաճաշկէն վերջը իր բարերարին հետ մէկտեղ ինչուան եկեղեցւոյն հրապարակը գնաց . հոն նորէն պազտուելով, Յովսեփին քով գարձաւ :

Որովհետեւ եղանակը դաշտ աշխատելու յարմար չէր, կալուածատէրը դպրոց դրաւ զՔէորգ, ուր իր ջանքովն և բարի վարքովը այն առտիճան առաջ գնաց, որ քիչ ատենէն իր դասընկերներուն գլուխ եղաւ : Երբոր գարունն եկաւ, կալուածատէրը իրեն հետ դաշտտարաւ զՔէորգ ուր շատ սգտակար եղաւ իրեն . ինչ որ կրնար երևակայել թէ իր տիրոջը հաճելի է կ'ընէր, և ամենայն ուրախութեամբ՝ որպէս զի պարտական չմնայ, և անոր անհաճոյ եղած բաներէն կը զգուշանար : Ամենևին աշխատութենէ չէր փախչէր, ինչուան շատ անգամ կը հարկաւորէին չափաւորելանոր փոյթն, և այս կերպով ամենուն սիրելի եղաւ ու բարեկամ : Թէպէտ Քէորգ ամենայն հանգոտութեամբ կ'ազրէր կալուածատիրոջ քով, բայց չմոռցաւ երբէք իր ծնած ձորը և միշտ խելքը միտքը իր ծնողաց վրայ էր զօրոնք մեռած կը կարծէր : Շատ անգամ չոքած արցունք կը թափէր անոնց համար աղօթելով :

Յովսեփ շատ գոհ էր իր որդեգիր աղուն վրայ . պառաւ Եղիսաբեթն ալ, որուն Քէորգ պէտք եղած մեծարանքը կու տար

և կամքը ամենայն կերպով կը ջանար ընցրնել, շատ կ'ուրախանար կրթոր կը տեսնէր անոր կիրակի օրերը կարգոււրեւաչ հազած եկեղեցի երթալը, և միշտ կ'ըսէր Յովսէփին թէ շատ ազնիւ տղայ է Քէորզ և իր հասակի տղոց ամենեւին մէկ պակասութիւնն ալ չունի: Երբօր կաշուածատէրն ուրախ գուարթ ըլլար և կամ շահաւոր վաճառականութիւն մը բրած, Եղիսարեթ յարմար միջոց կը սեպէր զայն պրզտի որբոյն համար աղաչելու: — « Դու հարուստ ես, կ'ըսէր, մէկու մը պարտք չունիս. երկու հարիւր արտավալը երկիր ունիս, գեղեցիկ մարգագետիններ, պտղաբեր այգիներ, մեծ անտառ մը. ցորեննոց գառատութենէն կը գեղանի, արտունկը ձիերով եզներով կովերով ընցուն են. ուրեմն պէտք է ինծի քանի մը սկուռ տաս որ Քէորզին զգեստ գնեմ, և ինչ որ կ'ընես այս խեղճ որբոյն, օր մը երկիրնքը հարիւրապատիկը պիտի ընդունիս ատանց տեղը:

— Դու միշտ ինծի հարստութեանս վերայ կը խօսիս, կը պատասխանէր Յովսէփ խոժոռելով. բայց գիտես թէ տուն պահելու ծախքս որչափ է. բայց ինչ որ է ուր սա քանի մը սկուռը, կ'ըսէր և քանի մը սկուռ ձեռքը կը գնէր. իրացընէ արժանի է Քէորզ որ իրեն վրայ հոգ ունենանք »: Այն քիչ մը բանէն ալ սաստիկ կ'ուրախանար բարեսիրտ Եղի-

տարեթիւ, վասն զի Քէորզին համար էր, ու
գոհ ըլլալով իր առատասիրտ տէրը գովե-
լով կ'երթար :

Այսպէս երկու տարի անցաւ ու Յովսէփ
միշտ աղէկ աչք ունէր Քէորզին վրայ : Եւ
ինչպէս որ հասակով մեծցաւ, այսպէս իր
մտաւոր կարողութիւններն ալ երթալով
զարգացան : Շատ աղէկ կը կարդար ա-
մէն տեսակ ձեռագիր և տպագիր, աղէկ
ալ կը գրէր . թուարանութեան, աշխար-
հագրութեան ու պատմութեան վրայ ալ
բաւական ծանօթութիւն ունէր . և այն
տեղի տղոց բարի օրինակ էր իր բարի վար-
քովն ու բարեպաշտութեամբը : Կալուսա-
ծատիրոջ հաշիւն ինքը կը բռնէր . ծառա-
ներուն իրենց ձևադասք նամակները կը
գրէր : Գարոցին քահանան ու վարժա-
պետն ալ անոր վրայ գովեստ տալէն չէին
կշտանար :

Կալուածատէրն իր ձմեռուան պաշարը
հողալու համար, ամէն տարի սուրբ Մար-
տինոսի օրն իր քաղքին մօտ մեծ տօնա-
վաճառի մը կ'երթար : Այն տարին շատ օր
ուշացաւ հոն, և ՚ի գարձին զանազան բա-
ներ առաւ բերաւ, տնեցոց Մննդեան օ-
րուան ընծայ :

Մննդեան հսկման գիշերը իրիկուան
դէմ Յովսէփ իր խուցը տարաւ իր որդե-
գիր տղան, և ստոլին վրայ ցուցուց մէկիկ
մէկիկ անոր համար բերած գեղեցիկ ըզ-
գեստներն և գիրք մ'ալ (որ էր Յադագս

հմանոյ շինեոյ Յիստսի) զոր աւագերէցը տուած էր: Քէորդ զանոնք տեսնալուն ուրախութենէն ինքիրմէ գուրս ելաւ. սկըսաւ մէկէն զգետները զննել, ետքը Յովսեփին զիրկն իյնալով, պլլուեցաւ անոր ու ըսաւ. — « Ո՛վ իմ սիրելի տէրս, այս ինչ են ինձի ըրածներդ, այս ինչ ատատածեռնութիւն է, ես այս բաներուս արժանի չեմ. ինչպէս պիտի կարենամ այսչափ բարիքներուդ փոխարէնը հատուցանել:

— Քեզի չափէն աւելի բան չեմ ըրած, Քէորդ, վրայ բերաւ կարուածատէրը. քու վարքդ ամէն բանի տեղ կը բանէ. շատ զոհ եմ զքեզ իմ տունս աւանջուաւ: Ինչպէս որ ես հիմա՝ անանկ շարունակէ, նոյն երկիւղածութիւնը եկեղեցական պաշտամանց ներկայ գտնուելու, նոյն առջի փոյթդ ունեցիր իմ բաներուս, եւ ես տէրս անպակաս կ'ընեմ վրայէդ »:

Ե

Գլխորդին կատարելութիւնները կը յառաջէին քան զիր փոփուկ սրտին աճումը . իր ազնուութեանն առ առաքինութեանը թեթև փորձ էր այն անդորր ու երջանիկ կեանքը . երջանիկ էր , և մինչ իրեն կ'երևար թէ օրէ օր կ'աճէր իր երջանկութիւնը ինչպէս դարնան նոր ծլած ծաղկանց փունջերը , այն կը սլանար իրմէ թէպէտ առ երեսս , վասն զի առաքինին միշտ երջանիկ է քանի որ իր առաքինութիւններն ընկեր ունի իրեն և քանի որ անոնք են իր սիրոյն առարկաները . կը սլանար իրմէ առ վայր մը , և այն թռչիլը իր ապագայ երջանկութեան գրաւական պիտի ըլլար , պզտի կամուրջ մըն էր որ զինքը երջանկութեան սահմանը կը ձգէր թէ որ ինչպէս որ պէտք է արիանալու ըլլար : Գեռ մէկ թշուառութեան միայն փորձէն անցեր էր , կարծէր թէ հոն կը լմննայ անոր սահմանը . ո՛հ , չէր գիտէր ազնիւ տղան թէ թշուառութեան յաւտակը դեռ սուր աչք մը

նդած չէ որ տեսած ըլլայ . չէր գիտեր թէ թշուառութեան մէջ կը փորձուի մարդուս առաքինութիւնը , և անոր մէջ արիացողն է կատարեալ առաքինին :

Օր օրուան վրայ սիրով կը կապուէր իր բարերար տիրոջը հետ , որ իրեն երկրորդ հայր եղեր էր , տեսնալով անոր իր վրայ ցուցուցած խնամքն ու գորովը . բայց որչափ իր սիրոյ և երախտագիտութեան կապը կը զօրանար , այնչափ ալ մեծ պիտի երևնար իրեն այն կապը խզելը , զոր այնպէս կը պահանջէր երկնից սուրբ կամքը : Մրրկի պէս որ զհաստատուն մայրիները կը կոտորուէ , և անապուստներու աւազներն աշխարհքէ աշխարհք կը փոխէ , մահուան գերանդին հնձեց Յովսեփայ կեանքն ու իր պանդխտութեան աշխարհքէն իր յաւիտենական հայրենիքը փոխագրեց . յանկարծ հասաւ մահն ու ժամ չթողուց որ իր ստացուածքները անօրինէ և իր սիրական Գէորգին բարեբախտ կեանք մը սահմանէ . թուաւ գնաց ուրիշ բան չկրնալով թողուլ Գէորգին բայց կսկիծ գինքը կորսնցընելուն : Ան ատեն զգաց տղան իր որբութեան դառնութիւնը . ան ատեն նորոգուեցան իր սրտին ցաւոց թելերը զարնող մատերը . անհայր անմայր՝ չորս կողմի բնակիչներն ու քնակութիւններն իրեն անբեր առապարներ կ'երևային , ուր տեղ մը չէր կրնար հանգչեցընել իր խեղճութեան բեռը :

Յուզարկաւորութեան հանդիսին ներկայ եղողներուն մէջ Գէորգէն աւելի տըխուր մարդ մը չկար . ամենէն վերջը բաժնուեցաւ գերեզմաննոցէն և բոլոր օրը անձառակ կու լար դառնապէս :

Յովսէփին թաղմանէն երկու օր ետքը , աղգականներն անոր ունեցածն ու չունեցածը բաժնեցին մէջերնին . որուն մտքէն կ'անցնէր որ խեղճ Գէորգին ալ գոնէ պըզտի մաս մը հանեն . առին ամէնքն իրենց մասերնին , և Գէորգին և ոչ իրենց քովն առնելու մասն հանեց մէկը . մէջտեղը մնաց տղան և իրեն ուրիշ ապաւէն չէր . յուսար գտնալ , բաց անկէց որ զթռչունները կը կերակրէ և ինքն է հայր որբոց և այրեաց : Վերջին սղոյն մը տուաւ այն տանն ուր իր առաքինութիւններն իր հասակին հետ աճեր էին , ուր այնպիսի տէր մը գտեր էր՝ որուն յիշատակը միայն իրեն մեծ ժառանգութիւն կը սեպէր , և մէկէն եկեղեցին վազեց , և իր կրկին որբութիւնը Աստուծոյ դիմաց տարածելէն և իր խնամակալութիւնը պաղատելէն վերջը աւագերէցին զնաց ու յայտնեց անոր իր խեղճութիւնը : Այս առաքինի հովիւն երկայն բարակ հարցմունքներ ըրաւ անոր և անձամբ ալ իմացաւ Գէորգին առաքինական սկզբունքները . իմացուց իրեն Գէորգ թէ չկրնար կենալ այն գիւղաքաղաքին մէջ , ուր ամենայն ինչ ցաւագին յիշատակներ միտքը կը բերէին , և իրեն հայրական օգ-

նութիւնը խնդրեց : Խոստացաւ իրեն աւագերէցը ձեռքէն ամէն եկածն ընելու և ըսաւ որ — « Ծրանքհաւազէնի Ռակի-Արեւակ ըսուած պանդոկին իմ մեծ տէրն բարեկամս է , կը ջանամ գրեզ հոն դնել . և առանց ուշացընելու կը գրեմ իրեն և քու երկրորդ տէրդ առջինէն աւելի վար չմնար բարեպաշտութեան կողմանէ : Այս մարդս այն դաւառին ուրիշ պանդոկապետներուն չնմանիր . կիրակի և տօն օրեր սուրբ պատարագին ատեն իր պանդոկը մարդ չառներ որ գան ուտեն խմեն . երբ երեկոյեան զանգակը կը գարնէ , ճամբայ կը դնէ ամէն իրիկուն բոլոր իր պանդոկն եղողները , և չթողուր որ իր պանդոկին մէջ գինտփայ մէկը կամ գայթակղական խօսքեր ըսէ : Նմանապէս իր տունն ալ բարեպաշտութեան կողմանէ հռչակուած է . պարտքան են իր ծառաները երբեմն երբեմն սուրբ հաղորդութեան մերձենալու . ամէն ուրբաթ և շաբաթ իր տունը պար կը բռնէ , նոյնպէս Եկեղեցիէն սահմանուած մէկայ օրերը : Ամէնքը կը գովեն իր լաւութիւնները . և ես ալ կը կարծեմ որ ուրիշ Յովսէփ մը պիտի գտնաս : Հարկ չէ որ քեզի ապստրեմ աղէկ ըլլալու թէ որ իր պանդոկը գրեզ ընդունի . դու ալ գիտես որ Աստուծմէ ետեւ քու բարի վարքէդ զատ մէկը չունիս որ աշխարհիս մէջ քեզի օգնական ըլլայ » :

Գէորգ քանի մը օր աւագերիցուն տունը

կենալէն վերջը՝ պատասխանն եկաւ որ իրեն բարի վկայութեանը վստահացած կ'ընդունի զՔէորդ և իրեն գինետան պաշտօնը կու տայ : Այս լուրը մեծ ուրախութիւն պատճառեց Քէորդին , ու մէկէն ճամբու պատրաստութիւն սկսաւ տեսնել . առջի իրիկունը վերջի բարև տուաւ աւագերէցին ու լսանը մարդիկներուն , և գնաց կանուխ պառկեցաւ : Երկրորդ օրը արևուն ծագելուն՝ շալկեց իր պզտի կարասիքը , Ֆրանքհաւզէնի ճամբան բռնեց , ուր իրիկուան դէմ հասաւ : Մէկէն Ոսկի-Արևակ պանդոկը գնաց , ուր շատ աղէկ ընդունեցաւ գինքն իր նոր տէրը , որուն անունն էր Մարտինոս . կերակուր հանել տուաւ իրեն , և յոգնած ըլլալուն՝ հրաման տուաւ որ երթայ այն օրը պառկի առանց աչխատելու :

Մարտինոսին սիրտը շարժած Քէորդին գլխէն անցած դժբաղդ պատահարներուն վրայ , ըսաւ անոր որ թէ որ դո՛ւ ըլլայ անոր ըրած ծառայութեանը , իր հաւատարմութիւնը իրեք տմիս փորձելէն ետքը՝ տարին հարիւր Ֆրանդ կու տայ իրեն . վերջը աւելցուց . — « Հիմա միայն քեզմէ կը կախուի երջանիկ վիճակ մը հոս ունենալ . քու անզուոյդ աւագերէցը մեծ գովեստով խօսեցաւ ինձի վրադ . յուսամ որ սուտ չես հաներ զինքը » :

Քէորդ խոստացաւ Մարտինոսին ձեռքէն եկածն ընել զինքը գո՛հ ընելու հա-

մար , և խօսքը կատարեց : Իր աջողակութիւնն ու բարի վարքը մեծ ուրախութիւն պատճառեց պանդոկապետին : Երեք տարին անցաւ և յանդիմանութեան արժանի բան մը չգտնուեցաւ վրան . իր տիրոջն օգուտը կը նայէր անգաղար , որով մեծ վստահութիւն ունեցաւ վրան Մարտինոս : Ութուտասներորդ տարին սկսելու էր Քէորգ ու պզտի գումար մը գրամոց գիշած էր : Օր մը կանչեց զինքը Մարտինոս և իմացուց որ գոհ է իր հաւատարմութեանը , անոր համար կ'ուզէ աւելցընել իր վարձքը . շնորհակալ եղաւ Քէորգ և կրկնապատկեց իր գործունէութիւնը : Պանդոկին գործքերուն մէկ մասը և տանը կառավարութիւնն իրեն յանձնեց Մարտինոս , և ինքը մէկէն սկսաւ աւելորդ ծախքերը քիչցընել . ինքը կ'ընդունէր ճանապարհորդները , ձեռքին տակն ալ ուրիշ ծառաներ ունէր : Մարտինոսին վստահութիւնը երթալով այնչափ աւելցաւ վրան , որ քիչ ատենէն բոլոր պանդոկին անառնութիւնը իրեն յանձնեց : Ռսկի-Արեակին բաղձը սկսեր էր . օտարականք աւելի սկսան յաճախել հոն և կը գովէին Քէորգայ քաղաքավար կերպը . տանը մէջ եղած վայելուչ և կոկիկ կարգաւորութիւնը զամէնքը կ'ափշեցընէր : Քէորգ որ ամէն բանի ուշ կը դնէր , չորս տարին լմնցուց հոն մեծ բարեբաստութեամբ որուն ամենեւին յոյս չունէր :

Հոկտեմբերի առջի օրերուն մէջ ամէն տարի Զրանքհաւզէն մեծ տօնավաճառ կ'ըլլար, ու բոլոր գաւառներէն հոն կը վազէին ձմեռուան պաշարնին ճարելու: Մարտինոսին պանդոկը ծայրէ ծայր լեցուած էր օտարահաւններով. և ահա իրիկուն մը ծերունի մը ներս մտաւ ու խընդրեց Մարտինոսէն որ քնար զարնէ բազմաթիւ կոշնահաւններու ընթրեաց ատենը. և երբ հրաման տուաւ Մարտինոս, կարճ նախերգանքէ մը վերջը սկսաւ նուագել երաժիշտը:

Քանի տենչայ անձն իմ, Աստուած,

Արքայութեանդ անոյշ քոյին.

Աւ նա հեծէ սիրտ իմ ջաւած.

Տաղտուկ համայնքն ինձ երեւին.

Բաց յԱստուծոյդ շին այլ բերկրանք,

Նուաղիմ հալիմ ի սէր քո ցանդ:

Ի գերութեան միշտ եւ յաւէտ,

Մատնեալ յերկաթս հոգիս իմ հէք,

Ի յերկնաւոր հեռի տանէդ,

Քաղցըր տեսոյդ եմ անձկաբեկ.

Բաց յԱստուծոյդ շին այլ բերկրանք,

Նուաղիմ հալիմ ի սէր քո ցանդ:

Ծերունւոյն գեղեցիկ ձայնը քնարին թելերուն հետ մէկտեղ, ամենուն սրտին վրայ խոր տպաւորութիւն ըրաւ. բոլոր ձեռքերն իրեն ծափ կը զարնէին և կը ստիպէին զերաժիշտն որ դեռ ուրիշ երգեր ալ երգէ. ու միակերպ ալ ստակ կը նետէին

իրեն : Երբ պանգոկէն երթալ ուզեց , գա-
լաթ մը գինի տուաւ անոր Գէորգ ըսելով
մտքէն . « Այսպէս կ'երգէր երբեմն իմ
հայրս ալ » : Այս խորհրդածութենէն տը-
խրութիւնն առաւ գինքը , և իր ծնողաց
յիշատակը զորոնք կորուսած էր գժբախտ
կերպով , անհնարին ցաւ պատճառեց ի-
րեն : Քնարահարը խմեց Գէորգին տուած
գալաթն ու շնորհակալ ըլլալով անոր՝ սկը-
սաւ երթալ : Գէորգ ըսաւ որ ուրիշ օրեր
ալ նոյն ատենը կրնայ գալ երգելու , ո-
րովհետև օտարականներն ախորժեցան իր
երգերէն . ծերունին խոստացաւ ու գը-
նաց : Գէորգ շատերուն հարցուց թէ ո՞վ
էր արդեօք այն երաժիշտը . բայց ոչ ոք
գիտէր : Երկրորդ օրը եկաւ ծերունին պան-
դոկն ու սկսաւ քնարը զարնել . ուզեցին
որ երգէ ալ : Խոր լուռիւն մը տիրեց
սրահին մէջ , ուր մեծ սեղանի մը բոլորը
վաթսուն կոչնականներէ աւելի նստած
էին հիացած անոր երգերէն . այնչափ յա-
փրջտակուած էին , որ ուտելն իսկ մոռցան :
Գէորգ երկու քայլ հեռու էր երաժշտէն .
աչուրներն անոր վրայ տնկած բոլոր խօս-
քերուն ուշ կը դնէր . որչափ որ ծերու-
նուոյն վրայ կը մտածէր , այնչափ անհան-
գիստ կ'ըլլար ու չէր կրնար այն ատենուան
ունեցած զգացմունքը բացատրել . և երա-
ժշտին իւրաքանչիւր հանգիստ առնելու
միջոցը՝ կը պատրաստուէր երթալ հարցը-
նել իրեն թէ ինքն ո՞վ և ո՞ւրտեղացի է .

բայց կոչնականաց տրախութեանն արգելք
ըլլալէն վախնալով ետ կը քաշուէր: Երեք
քառորդէ 'ի վեր խեղճ ծերունին անգա-
դար կ'երգէր և քնար կը զարնէր. վերջա-
պէս խնդրեց որ քիչ մը հանգիստ առնէ .
գաւաթ մը գինի խմեց, լարեց քնարն ու
նորէն սկսաւ երգել.

Խօշութիւն է սեր աշխարհի.

Իւ մարդ հարեալ յայն կաթոգի

Ջերդ ազիկար շամբ տասանի,

Ու 'նդ իւր նեցկին տապալ գընի:

Այս խօսքերը զուիցերական անոյշ եղա-
նակով կ'երգէր երաժիշտն իր խաղուն ձայ-
նովն, և այնպէս ազգեցութիւն ըրին, որ ա-
մէնքը միաբերան « Արկնէ, կրկնէ » ազգա-
դակեցին, և ծափահարութեանց թնդմա-
նէն վերջը՝ լռութիւնը պատեց:

Երբ ծերունին սկսաւ երգը կրկնել, ա-
ջուրներն արցունքէն ուռած կ'ըսէր Քէորդ
մտքէն. — « Ո՛վ Աստուած իմ, ի՞նչ ըսեմ
այս եղածներուն. կը ճանչնամ այս եղա-
նակը. այս խօսքերը բիւր անգամ հօրս
բերանը լսած եմ. այս երգն ինքը շինած
է. այս ծերունին . . . ո՛վ Տէր. . . չէ, ան-
կարելի է. սակայն որո՞ւ սորվեցուց ար-
դեօք հայրս այս երգը »:

Երբոր երգը լմնցաւ, նորէն ծափերը
սկսան. բայց Քէորդ բան չէր լսէր ամե-
նեին. աներևոյթ ձեռքէ մը մղուած ե-

րաժշտին մօտեցաւ . — « Ո՛վ բարի ծերունի , ըսաւ սիրտն ելած , ո՛վ ես գու . ուսկից կու գաս » : Երաժիշտը պաղ մնալով այսպիսի յանկարծական հարցմունքէ մը , պատասխանեց վախով . — « Թշուառ մըն եմ ես . աշխարհիս վրայ ինծմէ զատ մէկը չունիմ որ ինծի օգնէ , և կ'աշխատիմ երգերովս օրուան հացս գտնալ . մի վունտեր գիս : — Անունդ ինչ է . ո՛ր ծնած ես , հարցուց Քէորդ անհամբերութեամբ : — Ինչո՞ւ անունս կ'ուզես , բարեկամ . մէկու մը չարիք ըրած չունիմ : — Կ'աղաչեմ ըսէ անունդ , շատ կը փափագիմ գիտնալ : — Անունս Պետրոս Լանկ է . հնչմունքէս օլ կ'իմանաս որ Զուկցերացի եմ : — Պետրոս Լանկ . երկինք . կնոջ անունը Կատարինէ չէ . իր երկիրը զինքը փոքրացան չէին կանչէր : — Շատ սարիէ 'ի վեր երկինքն է իմ ամուսինս . բայց գու ուսկից գիտես որ զինքը փոքրացան կը կոչէին : — Քէորդ անուամբ որդի մ'ալ չունիմ , զոր նոյնմբերի իրիկուն մը հեղեղի մը մէջ կորսնցուցիր երբ հարսնիքէ մը դարձար , ուր քնաբզարնելու գացեր էիր ինչպէս հոս : — Այն տղաս խղզուեցաւ ալիքներուն մէջ . երկինք առաւ զանիկայ . . . — Չէ , չէ , դեռ ողջ է այն տղադ . քու Քէորդդ , ո՛վ հայր իմ , ահաւասիկ բազկացդ մէջ է . և ինքիքմէ դուրս ելած ծերունւոյն գիրկը վազեց Քէորդ , որ այսպիսի անակնկալ ուրախութենէ մը զգացմունքը կորսնցուց :

Այս խօսակցութենէն ու դէպքէն կոչնականաց սիրտը շարժելով, սեղանէն ելլելով Քէորդին ու երաժշտին բոլորտիքն առին : Քէորդ հօրը մարիլը տեսնելով վախու ձայն մ'արձըկեց . այն բաղմաթիւ կոչնականաց մէջ բժիշկ մ'ալ կար, որ սկսաւ մէկէն խեղճ ծերունւոյն խելքը գլուխը բերելու ջանալ, որ շուտով եկաւ . բերանը բացաւ ու առաջին խօսքն եղաւ . « Քէորդ, գո՛ւն ես » . կարծէր թէ կ'երազէ և պազ ապշութեամբ իր չորս կողմն եղողներուն վրայ կը նայէր : Ախնալով բժիշկն որ այս յանկարծական դէպքը մնաս մը չբերէ իրեն, աղաչեց Մարտինոսի որ խուց մը տայ որ պառկեցընէ զինքը, և Քէորդ իր սենեակներէն մէկուն մէջ տարաւ զհայրը :

Շուտով վրայ եկաւ Պետրոս և խաղաղ իրիկուն մը անցուց : Քէորդ ապահով ըլլալով իր հօրը կենաց վրայ, կոչնականաց սրահն իջաւ և անոնց ըրած բարեմաղթութիւններն ընդունեցաւ : Հագիւ կրնար սանձել Քէորդ իր հայրը գըտնալուն ուրախութիւնը՝ զոր երկար ատեն մեռած կը կարծէր :

Երկրորդ օրը Գէորգ հօրը՝ խուցը տա-
րաւ զՄարտինոս , և անոր առողջութեա-
նը վրայ ապահով ըլլալով և թէ աղ վնասնք
չկար , աղաչեց որ պատմէ հեղեղէն վեր-
ջը հանգիպած դէպքերը : Պետրոս ա-
զելով զորդին գոհ ընել , այսպէս սկը-
սաւ պատմել . — « Նաւակնիս երբոր ջախ-
ջախեցաւ , ինչպէս գիտես , կատարինէն
ու ես կարծեցինք որ ալիքներուն մէջ
խղզուեցար դու : Մէկ ձեռքով կնիկս
բռնած , մէկալով կը լողայի որ ցամաք ել-
լինք . և երբ կը ջանայի եղերքը հասնիլ ,
գլխուս սաստիկ հարուած մը առի , թե-
րեւ ծառի կոճղէ մը զոր հեղեղը կը տա-
նէր : Վերջապէս հազիւ կրցայ ափունքն
ելլալ մօրդ հետ , որ գրեթէ կէս մեռած
էր . աւազին վրայ դրի զինքը , ձեռքս գըլ-
խուս տարի որ արիւնն աղբիւրի պէս կը
վազէր . առի թաշկինակս ու գլխուս պլե-
ցի որ արիւնը չվազէ . և սկսայ զմայրդ

հոգալ . բայց ինչ կրնայի ընել այն մութին մէջ : Զքեզ կորսնցընելուս մտածութիւնը կտոր կտոր կ'ընէր սիրտս և սկսայ ամէն կողմ վազելով զքեզ կանչել բարձրաձայն . իմ աղաղակներս լերան վրայի կալուածա-տէրերէն մէկ քանին լսեցին , որոնք արդէն օգնութեան կու գային , և պատասխանեցին որ քիչ մը սպասեմ . և քանի մը վայրկենէն վերջը , տեսայ որ խել մը արք և կանայք հետերնին առած լապտեր , կտաւէ զգեստ , ուտելիք և ուրիշ հարկաւոր բաներ՝ մեզի կու գային : Հարցուցին ուր տեղացի ըլլալս , ես ալ ըսի , ու խոստացան որ զիս հոգան : Անոնցմէ երկուքը շաւկելով զկատարինէն սկսան տանել . ես ալ հազիւ հազ դանդաղաբայլ ետենէն կ'երթայի : Զմեզ այն կալուածներէն մէկը իջուցին , ուր մեծ կրակ մը վառած էր , և այնպիսի հոգով խնամեցին զիս , որ երբէք մտքէս պիտի չելլայ : Շատ ուշ կատարինէի զգացմունքը վրան եկաւ . բացաւ աչուրները , ճանչցաւ զիս և խոր հառաչանքներ արձրկեց : Երկու շաբթու չափ այն տունը կենալէն վերջը , երբ բժիշկն ըսաւ որ անվտանգ կրնայինք ուրիշ տեղ երթալ , որոշեցինք որ բաժնուինք այն բարերար մարդիկներէն որոնք այնպէս գութցուցուցեր էին վրանիս : Բայց ո՛ր երթայինք . իմացանք որ խեղճ տնակնիս հիմնովին կործանած էր և ցանկն ալ այնպէս աւրուած , որ և ոչ տեղն իսկ կրնայինք

ճանչնալ : Բժիշկն որ մեր խեղճութիւնը կը տեսնէր , վրան առաւ մեր վիճակն ու զմեզ խոստացաւ յանձնել այն դեղագործին որուն շատ անգամ խոտ ու արմատ կը ծախէի . այն ատեն ըսինք որ դեռ քանի մը օր ալ սպասենք : Բժիշկին ըսածն յաջողեցաւ . դեղագործը քաղաքը տուն մը դնած էր , և առաւ զմեզ իր քովը՝ զիս ծառայի տեղ և կատարինէն ալ կտաւագործի . մէկէն իր տունը գացինք : Այս բարի մարդը շատ մարդասիրութեամբ վարուեցաւ հետերնիս , և մեր վիճակը մեզի քաղցրացընելու համար ձեռքէն եկածն ըրաւ . պզտի գաւթի մը ծայրը խուց մը տուաւ մեզի , և ամէն օր ապրելու համար պէտք եղածը կու տար : Ամառը լեռներու վրայ խոտ և արմատ փնտռելու կերթայի ես , իսկ ձմեռը դեղագործութիւն կ'ընէի . կատարինէ ալ տանը կտաւները կը գործէր . ասդիէն անդիէն եղած յանձնարարութիւնները կը կատարէր , և իր գործունէութեամբն ամենուն սիրելի կ'ըլլար որուն որ ծառայութիւն մը ընելու ըլլար :

» Ասանկով քիչ մը կարգի մտան բաներնիս , և թէպէտ երջանկութեամբ չէինք ապրէր , բայց գոհ էինք . այն գաւառին մէջ ասդիս անդին հարցուցինք քու վրադ , սակայն բան մը չկրցանք իմանալ , և զքեզ մեռած դրինք մտքերնիս : Քանի մը տարի քաղաքը կենալէն վերջը , մկանացաւութենէն բռնուեցայ , որ յաճախ սաստիկ

ցաւ կը պատճառէ ինծի . և որպէս զի թը-
շուառութիւններս կատարեալ ըլլան , կա-
տարինէ ալ անկողին ինկաւ , և տարի մը
նեղուեցաւ սաստիկ կուրծքի հիւանդու-
թեամբ , որ զինքը վերջապէս գերեզման ի-
ջեցուց : Այլ բեռն եղաւ ինծի այս կեան-
քը , կորսնցընելով աշխարհիս մէջ ունե-
ցած բոլոր սիրելիներս :

» Կատարինէին մահուանը վրայ հինգ
տարի անցաւ , և ես դեռ գեղազործու-
թիւն կ'ընէի : Դեղագործը ծերանալով
անգրանիկ տղուն թողուց իր արուեստը ,
որն որ երկայն ճամբորդութենէ դարձած
էր դիտութիւն սորվելու գացած ըլլալով :
Ան ատեն բաներս փոխուեցան . յիսու-
նըհինգ տարեկան էի , և հիւանդութեանս
պատճառաւ չէի կրնար լեռը խոտ փնտռե-
լու երթալ . չուզելով ծանրանալ այն ըն-
տանեաց , իմացուցի անհանգստութիւնս
իմ առջի տիրոջս , որ հասկընալով միտքս
ըսաւ որ գեղ երթամ , և տեղ ալ տուաւ
ինծի այն տանը մէջ ուր իր հին ծառանե-
րէն մէկը կը բնակէր : Այս տունը դեղա-
գործինն էր զոր այն ծառային տուած էր
թեթև վարձքով մը . և որովհետև շատ
խուցերը անոր պէտք չէին , անոնցմէ մէկը
ես առի : Դեղագործը գթալով վրաս , ա-
մէն ամիս պզտի գումար մը դրամոց կը
խրկէր . ես ալ վրան աւելցընելով առա-
ջուց ըրած խնայութիւններս , բաւական
աղէկ կ'ապրէի :

» Գեղին աւագերէցը շատ բարիք ըրաւ ինծի , և որովհետեւ քաջ երաժիշտ էր , երբեմն երբեմն իրեն կ'երթայի ժամ մը երաժշտութիւն սորվելու . ասանկով առջի արուեստս նորէն ձեռք առի : Մէյ մ' ալ օր մը այս առարինի հովիւը քնար մը ընծայեց ինծի , զոր ինծի համար գներ էր . ասանկով ապահովցաւ ապագայ վիճակս : Հաղիւ թշուառութիւններս սկսայ մտնալ , յանկարծ դեղագործին որդիէն նամակ մը եկաւ որով կ'իմացընէր թէ իր հայրը մեռաւ , և թէ ալ օգնութեան չսպասեմ : Աս գոյժը բոլոր յոյսս ինձացուց . ապրելու համար բաւական չէր ըրած պղտի խնայութիւններս , և ուրիշ ճար չգտայ բայց եթէ ասդիս անդին թափառիլ և տներուն առջև քնար զարնելով ու երգելով օպրուստս գտնել : Գեռ չորոշած այսպիսի աստանդական կեանք մը անցընելու , շատ տեսակ բաներ մտածեցի . բայց մէկն ալ չկրցայ ի գործ դնել : Սաստիկ նեղուած՝ եկեղեցի գացի և սուրբ սեղանոյն երկրպագելով , բացի ցաւերս Աստուծոյ առջին , որ իրեն ապաւինածներն երբէք չլքաներ . լալով աղաչեցի Բարձրելոյն որ խղճայ վրաս : Վերջապէս քիչ մը միօրթարուեցայ , և կարծես թէ ներքին ձայն մը կը քաջալերէր զիս ըսելով որ խեղճութիւններս ալ պիտի լիննային :

» Եկեղեցիէն ելլելով աւագերէցին տունը գացի յայտնելու իրեն միտքս . չկրցաւ

խորհուրդ մը տալ . կը վախէր որ տարիքս
և տկարութիւնս արգելք կ'ըլլային դիտ-
մանս . բայց տեսնելով որ հաստատուն էի
մտքիս վրայ , երկու սկուզ և ազօթագիրք
մը տուաւ ինծի և շատ բարեմաղթութիւն
ընելով ըսաւ . — « Քու տարուօրդ մարդն
իմացած է թէ խաբեբայ է աշխարհքիս
օգնութիւնը և թէ ճշմարիտ օգնութիւնը
երկնքէն կու գայ . անոր համար Աստուծոյ
վրայ դիր բոլոր յոյսդ և աստուածային
օգնութիւնը միշտ խնդրէ . ինքը մեզմէ ա-
զէկ գիտէ մեզի պէտք եղածները » :

» Երկրորդ օրը ճամբայ ելայ քնարս ու
ազօթագիրքս միայն հետս առած , և սկը-
սայ այն թափառական կեանքը ուսկից շատ
կը նեղուէի : Սակայն Աստուած անկէ ալ
մխիթարութիւններ հանեց ինծի որոնց
յոյս չունէի . ուր որ կ'երգէի , ամէնքը կը
վազէին մտիկ ընելու և ստակ կու տային .
և երբ գիշերը կը կոխէր , միշտ գլուխս
հանգչեցքնելու տեղ մը կը գտնէի :

» Իրիկուն մը տան մը առջև երգելու ա-
տենս , աղջիկ մը պատուհանէն ստակ նե-
տեց ինծի թղթի մէջ պլլած . առի զայն
չնորհակալ ըլլալով ու սկսայ ճամբաս ա-
ռաջ տանիլ . և ան օրը շատ երգելէս յօգ-
նած պանգոկս դարձայ : Պարպեցի քօակը
վաստրկածս համրելու համար . բացի ինծի
նետուած զանազան թղթերը , և մէյ մ' ալ
տեսնեմ որ այն տղուն նետածին մէջ տո-
գաղ մը կար . « Հոս սխալմունք մը եղած

պիտի ըլլայ , ըսի մտքէս . վասն զի ո՞վ լսած է տուգադ մը տալ մէկ երկու կտոր երգերու համար . թագաւորը միայն այսպէս բան կրնայ ընել . պէտք է տիրոջը դարձընել ասիկայ ։

» Մէկէն վազեցի այն տունն օւսկից առ զան նետած էր տուգազը . զարկի դուռն ու բացին . երբ ըսի գալուս պատճառը , գացին մէկէն կանչեցին զտանուտէրն որ արուեստով փաստաբան էր : — « Բարձր մարդ , աղաղակեց երբ տուգազը տաւի , այս գործքովդ յայտնեցիր սրտիդ ազնւուութիւնը . աղջկանս սխալմունքովը չես ուզեր վաստրկիլ , որ փողի տեղ տուգազ նետեր է : Մենք զքեզ շճանչնալով և միանգամայն թէ ինչպէս պիտի գտնէինք զքեզ այս մեծ քաղքիս մէջ , յուսահատեցանք տուգազին վրայ . և ահաւասիկ դու բարեսրտութեամբդ մեզի կը դարձընես : Որովհետև ասանկ հաւատարիմ մարդ ես , քեզի կը շնորհեմ տուգազը , որ յիշեցընէ քեզի այդ բարի գործքդ » : Սկզբան յանձն չառի , բայց չկրցայ դէմ դնել պատուական փաստաբանին , որ բռնի երեկոյեան կերակուրի ալ կը ստիպէր զիս կենալ :

» Այսչափ սիրոյ նշաններէն շփոթած , չէի գիտէր ընելիքս : Արդէն օրը մթննալ սկսեր էր և շատ ճամբայ պէտք էր ընէի պանդոկս հասնելու համար . վերջապէս որոշեցի որ կենամ . հարցուցին հայրենիքս և ընտանիքս , ես ալ ընթրելով կը պա-

տասխանէի հարցմունքներնուն : Ասկէ տփկինն առիթ առնելով ըսաւ որդւոցը թէ պէտք չէ զեղծանիլ աշխարհքիս բարիքներէն : Ընթրիքէս վերջը մնաք բարովս տուի այն ազնիւ ընտանեաց , որ դեռ շնորհքներ ալ ըրին ինծի , և երախտագիտութեամբ լցուած բաժնուեցայ իրենցմէ :

» Այսպէս շատ ամիս անցուցի Քերմանիոյ մէկ մասը և Զուկցերի պտըտելով . և թէպէտ միտքս հաստատ դրեր էի որ դու հեղեղին մէջ կորսուած ես , սակայն անդադար քու վրայօքդ ասդիս անդին կը հարցընէի : Վերջապէս եկայ այս քաղաքն ուր Աստուած վերջ տուաւ թշուառութեանցս , վասն զի դտայ նորէն իմ որդիս զոր միշտ կու լայի » :

Այս խօսքերուս Մարտինոս գրկեց զՊետրոս և ըսաւ որ ալ հոգ չընէ . վասն զի Քէորգին պանդոկին մէջ ըրած բարեկարգութեանց համար , պարտական էր զիկքը ընդունիլ . իսկ Պետրոս լալով շնորհակալ եղաւ պանդոկատէին : Քիչ ատենէն հիւանդութիւնն ալ բոլորովին անցաւ , ու սկսաւ քնար զարնել և երգել Ոսկի-Արևակ պանդոկն եկող օտարականներուն :

Այսպէս երջանիկ ծերունին հանգիստ կեանք մը անցուց որդւոյն քով , որուն աչքը միշտ հօրը վրան էր : Քէորգին խնամքներովը Մարտինոսի պանդոկը այնպէս հռչակուեցաւ , որ շատերը ինչուան Քէոր-

զին նամակ կը գրէին ու զինքը մեծամեծ քաղաքներ կը կանչէին իրենց քով . բայց Քէորզ շնորհակալ ըլլալով անոնց՝ յանձն չառաւ թողուլ զՄարտինոս . և սկսաւ կրկնապատիկ ջանքով անոր շահուն համար աշխատիլ :

Պետրոս դեռ շատ տարի ալ ապրեցաւ . և ստէպ երջանիկ ծերունին առնելով պատէն իր լռիկ քնարը , կը սկսէր երգել միատեղ .

Խօլութիւն է սէր աշխարհի .

Եւ մորդ հարեալ յոյն կաթողի

Ձերդ ապիկար շամբ աստանի ,

Ու 'նդ իւր նեցկին տապալ դընի :

Ոսկի-Արեակր զանազան աշխարհքէ ճամբորդներուն ժամադրութեան տեղն եղաւ . բայց ևս առաւել թշուառ աղքատաց ապաստանարան , որոնք հոն մեծ խնամոց կը հանդիպէին . և Քէորզ իր ողորմութիւններն աւելի շատցուց , ուզելով փոխարինել Աստուծոյ իրեն ըրած բարիքներուն , որ յետ այնչափ թշուառութեանց և զրկմանց , վերջապէս պարզեց իրեն անդորր կեանք , և քան զայն աւելի՛ իր հայրը , որ աղբիւրն էր իր երջանկութեանը :

Ց Ա Ն Կ

ՁԿՆՈՐՍԻՆ ՀԻԻՂԸ	4
ՈՐԴԵԿՈՏՈՐ ՄԱՅՐ ՄԸ	69
ՄԱՆՐԱՎԱՅԱՌԻՆ ԱՂՋԻԿԸ	99
ԱԼՊԵԱՆՑ ԻՐՃԻԹԸ	177



Ծ Ե Ր Պ Ի Ի Գ Մ Ա Ն Ը



ԾԵՐ ՊԻԳՄԱՆԸ


Ա

Աերպոչրկի Բերդը

Աշնանային գեղեցիկ իրիկուն մը երբ արևը իր փայլուն ճառագայթներովը կ'ոսկեզօծէր Օտէնվալտ և Մէլիպոզուս լեռանց ծայրերը, որոնք ծանօթ են այն ամէն վաճառականաց՝ որ Ֆրանգֆորդի տօնավաճառը կ'երթան Հռենոսի ճամբով: Վաճառաց ծանրաբեռն կառքերը՝ որոնք նոյն օրէ ինչուան Հիվընպէրկ պիտի երթային դանդաղութեամբ և անիւները ճոնչելով առաջ կ'երթային. իսկ ճանապարհորդները որպէս զի շուտով Տարմշդատ հասնին գիշերը հոն անցնելու համար, շտապաւ կ'անցնէին այն լեռները:


Ահաւաստիկ պատկեր ճշգրիտ մարդկային կենաց, ուր մէկը իր բեռը շալկած ծանրաֆայլ կը քալէ, մինչդեռ ուրիշ մը արագաֆայլ և զուարթութեամբ կը վազէ. կը մնայ գուշակել թէ՛ այս երկուքէն արդեօք ո՞րը պիտի հասնի ապահով իր նպատակին: Ծերունի մը կ'երթար այն կողմէն որ աւելի շուտ և կարճ ճամբով Աէրպախէն կը հանէր Աէրպուրկի աւերակները, որ կը կոչուի Սօտիւ — լիէվը, ծերուն դէպի գետին խոնարհած գլուխը՝ կ'իմացընէր իր մըտմտուքը, և կոչտ գաւազանի մը վրայ կը յենուր, որուն նմանը քիչ անգամ կը տեսնուին մեր կողմերը: Թէ որ ճամբուն վրայ իրեն տղայ մը հանդիպէր, որ ոչխարները արծելէն դարձնէր, կամ օրիորդ մը երկրորդ օրուան համար խուրճ մը ճիւղերու ժողուած տուն դառնար, երկչոտութեամբ մը կ'ողջունէին զծերունին, և քանի մը քայլ ընելէն ետքը անգամ մըն ալ կը դարձընէին զլուխնին, և աչք մը կը ձգէին անոր ետեւէն, վասն զի այս մարդս եզական կերպարանք մը ունէր և զգեստներուն ձևն ալ տեղացւոց սովորութենէն տարբեր: Վերջապէս իր վիճակական հին բերդին աւերակներուն հասաւ, ուր աշտարակ մը և քանի մը փըլփըլկած պատեր միայն մնացած էին. արևը հորիզոնէն վար խոնարհելու ատեն քարակուտի մը վրայ նստաւ, և աչքերը դիմացի շրջակայիցը վրայ դարձընելով, գորովալից սրտով մը այս խօսքերս ըսաւ.

ԶՐԾՍԱՐԱՆ ՄԱՆԿԱՆՑ



Զ


ԾԵՐ ՊԻԻԳՄԱՆԸ



ԶԱՏԿԱԿԱՆ ՀԱԻԿԻԹՆԵՐ


Ահաւաստիկ պատկեր ճշգրիտ մարդկային կենաց, ուր մէկը իր բեռը շալկած ծանրափայլ կը քալէ, մինչդեռ ուրիշ մը արագափայլ և զուարթութեամբ կը վազէ. կը մնայ գուշակել թէ՛ այս երկուքէն արդեօք ո՞րը պիտի հասնի ապահով իր նպատակին: Ծերունի մը կ'երթար այն կողմէն որ աւելի շուտ և կարճ ճամբով Աէրպախէն կը հանէր Աէրպուրկի աւերակները, որ կը կոչուի Սօտիւ — լիէվրը, ծերուն դէպի գետին խոնարհած գլուխը՝ կ'իմացընէր իր մտամտուքը, և կոշտ գաւազանի մը վրայ կը յենուր, որուն նմանը քիչ անգամ կը տեսնուին մեր կողմերը: Թէ որ ճամբուն վրայ իրեն տղայ մը հանդիպէր, որ ոչխարները արծելէն դարձնէր, կամ օրիորդ մը երկրորդ օրուան համար խուրճ մը ճիւղերու ժողուած տուն դառնար, երկչոտութեամբ մը կ'ողջունէին զծերունին, և քանի մը քայլ ընելէն ետքը անգամ մըն ալ կը դարձընէին գլուխնին, և աչք մը կը ձգէին անոր ետեւէն, վասն զի այս մարդս եզական կերպարանք մը ունէր և զգեստներուն ձևն ալ տեղացւոց սովորութենէն տարբեր: Վերջապէս իր վիճակական հին բերդին աւերակներուն հասաւ, ուր աշտարակ մը և քանի մը փըլփըլկած պատեր միայն մնացած էին. արևը հորիզոնէն վար խոնարհելու ատեն քարակուտի մը վրայ նստաւ, և աչքերը դիմացի շրջակայիցը վրայ դարձընելով, գորովալից սրտով մը այս խօսքերս ըսաւ.

ԶԲՕՍԱՐԱՆ ՄԱՆԿԱՆՑ



Զ

ԾԵՐ ՊԻԻԳՄԱՆԸ



ԶԱՏԿԱԿԱՆ ՀԱԻԿԻԹՆԵՐ

Մ Ե Ր

Պ Ի Ի Գ Մ Ա Ն Ը

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի Վ Ե Ն Ե Տ Ի Կ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1904

լիքներ ունէր իրենց . բայց պատմելու շատ պատրաստական չէր ցուցըներ ինքզինքը : Հիւրը չըջակայ գիւղերուն վրայ սկսաւ հարցմունքներ ընել ժողովրդապետին, և այն կողմերը գտնուած ընտանիքները ճանչնալու շատ հետաքրքիր կ'երևար :

Վերջապէս հարցուց թէ արդեօք ծեր Պիւզմանին ազգականներէն կը գտնուի՞ն դեռ, որ քառասուն տարի առաջ ժողովրդապետ էր այս կողմերս : — Չեմ ճանչցած զինքը, պատասխանեց ժողովրդապետը . միայն գիտեմ որ ինքը սրիկայ եղբօրորդի մը ունէր, և հիմա ուր գացած ըլլալը մարդ չգիտէր . երբէք իր վրայօք լուր մը լսուած չէ : Եւ միթէ կը ճանչնայի՞ք դուք այն ծեր Պիւզմանը : « Այո պատասխանեց նաև պետը . իմ հօրեղբայրս էր » :

Ժողովրդապետը դողալով մը կանչեց . « Կարելի՞ է որ դուք ըլլաք այն շարագործ Ֆրանձը, որուն վրայօք գեղին քանի մը ծերերը շատ բաներ կը պատմեն : Ո՛հ, թողութիւն ըրէք ինձի որ ես ձեր վրայօք մեկէն շարագործի մը պէս խօսեցայ . ի՞նչպէս կրնայի մտածել որ դուք ըլլաք այն յիմար Ֆրանձը . որ քաղցրաբարոյ և բարեպաշտ կը տեսնուիք հիմա » : Հրամբես, ես եմ, օրհնեալ ըլլայ Աստուած, ըսաւ նաևապետը, ցաւագին ձայնով մը . գթած Աստուած զիս ուղղեց խիստ փորձով և սոսկալի պատուհասներով : Բայց այսօր թողունք այս բաներս, ցաւալի է ինձի հիմա կենացս մանր դէպ-

քերուն իջնալը: Արդէն վշտացած եմ մտա-
ծելով որ ահա կ'ուտեմ և կը քնանամ այն
յարկին տակ ուր կը բնակէի ասկէ յիսուն
տարի առաջ, ուր իմ Հօրեղբայրս կնքեց
իր ցաւագին կեանքը»: Պէտք եղաւ որ
ժողովրդապետը իրեն մտիկ ընէ, թէպէտ
անհամբէր էր ուրիշ կողմանէ ալ լսելու
այս մարդու հետաքրքրական պատմութիւ-
նը. իր քոյրը և իրեն իրկու պատանի ա-
շակերտքը սաստիկ հետաքրքրութեամբ ուշ
կը դնէին այս օտարականին խօսքերուն.
բայց ընթրիքէն առաջ շատ չխօսեցաւ:

Երբոր ընթրիքը լմնցաւ, տղաքը ստիպեալ
էին անկողին երթալու, թէպէտ կը մտա-
ծէին ալ որ անշուշտ հիմա պիտի սկսի
պատմել, և իրենք կը փափաքէին մտիկ
ընել, բայց ըստ իրենց սովորական կա-
նոնին առանց դժուարութեան ելան գնա-
ցին:

Տղոց պառկելէն ետքը նաւապետը իմա-
ցուց ժողովրդապետին որ կը փափաքէր կե-
նացը մնացած օրերը իր ծննդեան երկիրը
անցնելու, և թէ արդէն իր ամեն կահկա-
րասիքը Աէրպախ փոխադրած էր ուստի կը
մնար տեղեկանալու թէ արդեօք իրեն հա-
մար վայելուչ բնակութիւն մը կը գտնուի՞
այն կողմերը զոր կարենայ վարձել կամ
գնել: Ժողովրդապետը շատ ուրախացաւ
այս բանիս վրայ և իմացուց իրեն թէ իր
ժողովրդապետական տանը քով ծախու տուն
մը կայ՝ որ անտառաց տեսչինն էր, և թէ-

պէտ պզտիկ և պարզ էր, բայց բարեվայել լուչ: Ասիկա յարմարեցաւ նաւապետին, և գիշերը առանց իմանալնուն առաջ գնաց, որովհետև տանը ծախուելուն պայմաններուն վրայ խօսելով զբաղեցան, ինչուան որ մատակարարը իմացուց որ ժամացոյցը բաւական ատենէ՝ ի վեր 10 զարկեր էր: Այն ատեն ելան անկողին գացին բայց ժողովրդապետը կը լսէր երկայն ատեն որ իր նոր սեղանակիցը սենեկին մէջ վեր վար կը քալէր որ իրենինին վրայ էր և բարձր ձայնով աղօթք կ'ընէր, ասով ինքն ալ գոհ եղած անուշ քուն մը եղաւ: Յաջորդ օրը երկու տղաքը առտուն կանուխ ելլալով, որոնք արդէն իսկ վարժած էին, վասն զի չորս տարեկան եղած ատենը լսած էր անգամ մը Օգոստինոս թէ « Ամօթ բան է թողուլ որ արևը կանխէ մեզմէ առաջ որն որ այնչափ ճամբայ պիտի ընէ օրուան մէջ »: Արթըննալնուն պէս, մեկէն իրենց առաւօտեան աղօթքը կ'ընէին և կ'երթային երեսնին և ձեռուրնին լուալու, և ետքը իրենց ուսուցչին հետ կ'ելլային շրջան մը ընելու մերձաւոր լեռանց վրայ կամ անտառներու մէջ, ուստի շատ տունկեր կը բերէին, զորոնք ժողովրդապետն աղէկ կը ճանչնար, և անոնց այլև այլ տեսակներուն վրայօք տեղեկութիւններ կուտար իրենց: Բայց այն օրը այն բաներէն և ոչ մէկը ըրին և ծերուն պատմութիւններէն զատ բան մը չէին մըտածեր. կրնայ մարդ երևակայել անոնց ու-

բախութիւնը երբոր իմացան ժողովրդապետին քրոջմէն որ գեղին մէջ պիտի կենար և հաւանականարար անտառապետին տունը պիտի բնակէր: Այսպիսի պզտի գիւղի մը մէջ, ուր նոր բան քիչ կը պատահի, հասարակաց ճամբէն հեռու ըլլալուն պատճառաւ, ամեն ճամբորդ իջեանին դիմացը որ հասնէր՝ իր ձին հանգչեցնելու համար, մասնաւոր դէպք մը կը համարուէր, և ամենուն հետաքրքրութեան նիւթ կըլլար, և թէ որ ըստ դիպաց մէկու մը հետ խօսէր, կամ պզտի ծանօթութիւն մը տար, երեք օր ամեն տան մէջ խօսելու նիւթ կ'ըլլար: Ուստի երբոր Հոլանտայէն եկած օտարական նաւապետին զալուստը հռչակուեցաւ, և թէ ժողովրդապետին քովը իջնալով այս գեղը բնակելու միտք ունէր, և թէ այս նաւապետը այն սրիկայ Ֆրանձն էր, կրնայ մակարեբուիլ թէ ինչ մեծ շարժմունք պատճառած ըլլայ այս լուրը բոլոր գեղին մէջ: Ամենքը իրենց աշխատութիւնները մոռցած և խմբովին ճամբուն վրայ խոնած կը ջանային այլ և այլ դէպքեր պատմել իրարու՝ թէպէտ և ոչ ոք ստոյգ տեղեկութիւն մը ունէր:

— » Ես տեսայ գեղին մէջ մտնալը երէկ իրիկուն բայց շատ մութ էր, ըսաւ պառաւ Աննան: — Կ'ըսեն թէ շատ հարուստ է, ըսաւ Քերոբէն, որպէս զի ինքն ալ բան մը ըսած ըլլայ. — Ուրիշ կերպով չի կրնար ըլլալ նաւապետ մը, պատասխա-

« Ահ, վերջապէս հեղ մըն ալ զիս հոս կը տեսնամ, քառասուն տարիէն ետքը, որուն ամենևին չէի յուսար, ողջոյն ձեզ, հին բարեկամք իմ՝ կանանչագարդ անտառներ, և դու պատկառելի Հոնոս. շատ անգամ յիշեր եմ զքեզ և ստէպ մտքովս զիս հոս երևակայեր եմ, ինչ բան է հայրենիքը, բայց սակայն չկայ ճշմարիտ հայրենիք մը, երկնքէն զատ: Բարէ, հոն են այսօրուան օրս բոլոր անոնք զոր կը սիրէի և որոնք զիս մինակ թողուցին. ինչպէս ամեն բան կը փոխուի այս աշխարհիս վրայ » : Նստաւ կոշտ քարի մը վրայ և պատին կռթնելով Անգղիական երգ մը երգեց այսպէս .

« Հովը կը ծածանէ այսօր ծաղիկները, վաղը շառաչմամբ կը տապալէ կաղնին, այսօր քամին օդը կը մաքրէ, վաղը մեզի ժանտախտ կը բերէ, երեկոյեան դէմ կը զովացընէ հոգնած ճամբորդը, և կէս գիշերուն բոլոր շրջակայքը փոթորիկ կը յարուցանէ :

« Առաւօտը արևուն քաղցր ճառագայթները կը փթթեցնեն հովտին գեղեցկագոյն ծաղկունքը. իրիկունը արևուն սաստկութիւնը կը խամրէ անոնց փայլուն գոյները: Հոս արևը կը տաքցընէ ծերուն ընդարմացեալ անդամները, անդ կը նեղէ զպանդուխտը իր ջերմութեամբն:

« Մայիս ամսոյն մէջ թեթև նաւակ մը զուարթութեամբ կը շարժի Ուլկիանոսի վը-

րայ, իսկ աշնան ալիքները՝ ցամամբ ուրիշ բան չեն բերեր իրենց ափունքը, բայց հիշ կոտրած սախտակներ, և դիակնացած նաւաստիներ ափունքը կը զարնէ՝ որոնց կանայքը կու լան վրանին ցաւագին հեծութեամբ:

« Երբոր յոյսը կը հասնի իր բարձրագոյն կէտին՝ անկէ ետքը կը սկսի նուաղիլ և ուրախութիւնը կը փարատի, անիկայ որ կ'ամբարհաւաճէր երէկ իբր Տէր աշխարհի, այսօր տխուր կերպով գերեզման կիջնայ, ըսել է, թէ կենաց բաժակը՝ թոյն միայն պաշտեր է իրեն:

« Ալիքները փոփոխական են. փոթորիկը կը մոնչէ, արևուն ճառագայթները կ'անջատուին եկեղեցւոյ խաչէն. ծովուն երեսը յուզեալ է, մեծամեծք կ'ոչնչանան երկրիս երեսէն. ինչպէս որ այնչափ փոշւոյ հատիկները՝ հովը կը ցրուէ: Բան մը միայն ազատ է յեղափոխմանէ որ է միտքը և անփոփոխ էակին սէրը »:

Մինչդեռ այսպէս կ'երգէր ծերը՝ դողդոջուն բայց յստակ ձայնով մը, յանկարծ երկու տղաք ելան աւերակաց մէջէն և մըտադրութեամբ անշարժ կեցան՝ իր ետևը:

Երբոր երգը լմնցաւ, տղաքը իրենք զիրեն յայտնել ուզելով, սկսան երկչոտութեամբ մը հազալ, փափաքելով անշուշտ որ ծերուն երեսը տեսնեն: Ծերը դարձաւ և տեսաւ այս երկու երիտասարդներն մաքուր հագուած որոնք մեկէն բարևեցին

գիւնքը շնորհալից կերպով մը. բայց ծերունին դեռ պատասխան չի տուած տեսաւ անոնց հօրեղբօր գալը՝ որ այն շրջակայքը խոտ հանելու զբաղած ըլլալով երգին վերջի տունը միայն լսած էր: Կը մտածէր որ երգողը Անգլիացի պիտի ըլլար, որովհետեւ երգածը Անգլիերէն եղանակ մըն էր՝ ուստի ծերուն մօտենալով ըսաւ իրեն անգլիերէն.

— Պարոն, դուք թէպէտ ինծի բոլորովին անծանօթ էք, բայց ձեր երգին վերջը, որ բոլորովին կը տեսնուէր թէ ձեր սրտին խորէն կը բղխէր, ինծի կասկած կուտայ թէ դուք պէտք է որ ճանչնաք մեր ամենուս երկնաւոր Հայրը: Ասիկայ բաւական է ինծի, ես սա մօտիկ գեղիս ժողովրդապետն եմ զոր լերանս ստորոտը կը տեսնաք: Թէ որ օտարական էք հոս և պարզութիւն կը սիրէք՝ կը հրաւիրեմ զձեզ բոլոր սրտովս մեր գիւղական բնակարանը»: Ծերը գերմաներէն պատասխանեց. « Շատ շնորհակալ եմ ձեր ազնիւ հրաւիրանացը և կ'ընդունիմ յօժարութեամբ: Հին նաւապետէ մը շատ քաղաքավարութիւն չի պահանջուիր »: Աս ըսելով սկսան երեկոյեան վերջալոյսին ժամանակ դէպ ի գիւղը երթալ, որուն զանգակատունը կեռասենւոյ անտառի մը մէջ շինուած էր. նաւապետը ճամբան երթալու ատեն պատմեց ժողովրդապետին, թէ այն օրը հասած էր Աէրպախի իջևանը, և իր առաջին գործը այն եղաւ որ Աէրպուրկի հին բերդին այցելութեան երթայ:

Բ

Ժողովրդապետին Տունը.

Քիչերը կոխած ատեն հասան գեղը, մինչ-
դեռ լուսինը լերանց ետևէն կը բարձրա-
նար: Ժողովրդապետին քոյրը առաջուց ի-
մացած ըլլալով տղայոցմէ թէ օտարական մը
կ'ընկերէր իրենց ուսուցչին, աճապարեց
գնաց մտերմութեամբ եկողներուն ընդ ա-
ռաջ: «Մի վախնաք նոր եկաւորի մը այցե-
լութենէն, ըսաւ իրեն նաւապետը, ձեզի
ծանրութիւն չեմ ուզեր ըլլալ»: Թէ որ
դուք գոհ էք մեր մարդասիրութենէն, պա-
տասխանեց ծողովրդապետին քոյրը, տարա-
կոյս մի ունենաք որ մեզի ծանրութիւն
կ'ըլլաք»: Այս խօսքը ըսելէն ետքը խուցը
մտաւ բարի մատակարարը, և գեղին գի-
նիէն շիշ մը բերաւ որ դիւրագնի էր այն
կողմերը, և սեղանի նստեցան. իսկ տղաքը
գացին անկիւն մը նստան, և անհամբե-
րութեամբ ծերուն պատմութիւններուն կ'ըս-
պասէին, որովհետև պատմական և հետա-
քրքրական բաներ շատ կը սիրէին, և կը
յուսային նաւապետէ մը տեսակ տեսակ
բաներ լսելու՝ մտածելով որ անտարակոյս
մեծամեծ ճամբորդութիւններ ըրած պիտի
ըլլայ: Եւ յերաւի այս մարդը շատ ըսե-

նեց Եղիսաբեթը, առանց միլիոններ ունենալու: — Ի՞նչ տեսակ մտածութիւն է այս, ըսաւ ծեր ոստիկանը, ապահով եղի՞ք որ մեծատուն մը չիգար այս ողորմելի գեղը բնակելու: — Թէ որ ինչուան հիմա չէ փոխուած՝ ըսաւ ծեր Նիկողոսը՝ մեծ խնայութիւն մը ըրած պիտի չըլլայ. վասն զի ես առաջին բարեկամութիւնս իրեն հետ ըրեր եմ, և երիտասարդութենէն ի վեր զինքը լաւ կը ճանչնամ, ձեռքէն դիւրաւ բան չեւար»: Արջապէս ամենքը միտքերնին դրին որ այս իրենց խօսակցութիւններէն լաւագոյն է նաւապետին սպասել և իրմէն լսելու գլխէն անցածները, որով և իւրաքանչիւր մարդ իր գործոյն գնաց: Ան միջոցին ժողովրդապետին տունը որոշեցին որ նաւապետին փայտէ և կաշիէ սնտուկները, Աէրպախի իջևանէն Տօրնհակէն բերել տան: Ինչպէս որ այս օտարականին տունը անտառներու հին տեսչինն էր՝ որ ան միջոցին ինքը Տօրնհակէնի ոստիկանն էր՝ նաւապետը կրցաւ մէկէն հոն փոխադրուիլ: Ժողովրդապետին քոյրն ալ փոխ տուաւ անոր հարկաւոր եղած կահկարասիքը: Արբոր սընտուկներով լեցուած կառքը Աէրպախէն հոն հասաւ, տղայոց և ծերերուն հետաքրքրութիւնը աւելցաւ: — « Ի՞նչ կրնայ ըլլալ այս սնտուկին մէջ կ'ըսէին, ասիկա անշուշտ ստակով լեցուն պիտի ըլլայ, վասն զի երկու հոգի չեն կրնար զայն տանելու և չկրնար ըլլալ որ մարդ մը զգեստներով

լեցուն վեց սնտուկ ունենայ: — « Ինչէ՞ն
կը հանես դու ուրեմն որ ինքը մինակ ըլ-
լայ, ըսաւ ուրիշ մը. թերևս իր ընտանիքն
ալ մէկտեղ պիտի գայ: — Հաւանական է,
բայց չեմ կարծեր»: Օգոստինոսը և իր
կարողոս եղբայրը կ'ուզէին գիտնալ թէ ինչ
գանձեր ունի արդեօք նաւապետը իր սըն-
տուկներու մէջ: Այս բանս ժողովրդապետին
հարցուցին բայց անիկայ պատասխանեց որ
ինքն ալ չէր գիտեր, ուստի պէտք եղաւ
անոնց բացուելուն սպասելու: Առաջին օրը
նաւապետը մէկէն բացաւ սնտուկները, բայց
ութը օր մարդու ալ չթողուց զինքը տեսն-
նալու, նաև իր պառաւ աղախնոյն ալ զոր
քովը առած էր, արգիլեց, մնտուկներուն
խուցը մտնալու: Եւ կերակուրն ալ ժողով-
րժողապետին տունը կ'ուտէր, որ քանի մը
քայլ հեռու էր կեցած տեղէն, շատ անգամ
նոյն իսկ պարտեղէն անդին կ'անցնէր. և
այս կերպը բռնելով ազատ եղաւ առանձին
խոհակերոց մը վարձելու:

Գ

Անտառապահին Տունը.

Ութ օրէն ետքը, վերջապէս նաւապետը
հրաւիրեց բոլոր ժողովրդապետին ընտա-
նիքը, գալ թէյ մը խմելու իր տունը, որ
շատ փառաւոր զարդարած էր, և հոն պա-
տին դիմացը սև գէրիներ կեցած էին, ու

րոնք թէյ և ծխախոտ կը հրամցնէին :
()գոստինոս և Աարոլոսը տեսնալով զանոնք՝
վախ մը զգացին սրտերնուն մէջ, բայց եր-
բոր մօտեցան անոնց, իմացան որ անոնք
օթոցներու վրայ սև նկարներ էին :

Շատ հաւնեցան, վասն զի այնպիսի գե-
ղեցիկ օթոցներ ամենեկին չէին տեսած :
Նաւապետը ազնիւ թէյը հրամցուց շինա-
ցի ամաններով, նաև գեղեցիկ նարինջներ
ընծայեց զորոնք Մալդայէն բերած էր : Մո-
լուգի կղզիներէն սնտուկ մը լեցուն շինու
թէյ և համեմներ ունէր հետը, և ուրիշ
արկղներու մէջ արևմտեան Հնդկաստանի
շաքար և սուրճ. և վիրգինեայ ծխախոտէն,
արևելքի մետաքսէ կերպասներ, և ուրիշ
տեսակ տեսակ բաներ որոնք ոմանց աւե-
լորդ կը համարուին և ուրիշներու կարևոր.
բայց ժողովրդապետին և իր աշակերտացը
սաստիկ հետաքրքրութիւնը շարժող ոչ այն-
չափ այս մեծագին բաներս էին, զորոնք իր
քոյրը կ'ախորժէր, որչափ բնութեան բեր-
քերու ճոխ հաւաքում մը զորոնք վերջի
ութը օրուան մէջ կարգի դրած էր :

Ունէր նաև Չինու քօք, ընկոյզ, Պրա-
զիլի թիթեռնիկներ, սև ծովու սաթ, կը-
րէնընտայի կտաւաքար, ծովեղերեայ գե-
ղեցիկ խոտեր, տեսակ տեսակ բուստեր,
ծովու ոզնիներ, խեցեմորթներ, ծովու մի-
ջատներ և ուրիշ գեղեցիկ ժրժմունքներ :
Ուրիշ պզտի արկղիկի մը մէջ ալ ունէր
գեղեցիկ հաւաքում մը Հնդկաստանի և

Պարսկաստանի աղուոր քարերու՝ որ մարդուս աչքը չէր կշտանար նայելով: Օգոստինոս կ'ուրախանար մտածելով որ պիտի կարենայ շատ անգամ հոն գալ այս բաներս գննելու և տեսնելու ուզածին պէս, որուն համար հրաման ալ ընդունեցաւ: Ամեն օր այս երկու տղաքը կ'երթային քանի մը ժամ նաւապետին տունը անցընելու: Երբեմն իրենց գեղեցիկ գիրք մը կու տար որ միատեղ կը կարդային տանը դիմաց եղած նստարանին վրայ, երբեմն իրենց կը սորուեցնէր Անգղիերէն և Քաղղիերէն, և երբոր ուշադրութեամբ և մտադրութեամբ մտիկ կ'ընէին՝ իրենց քանի մը շտեսած բաներէն ալ կը ցուցընէր, և կամ այնպիսի բաներ կու տար որ տղայոց հաճոյ կ'անցնէր. երբեմն ալ արմաւենի, թուզ, ժժմունք և ասոնց նման բաներ կու տար իրենց, և կամ Անգղիերէն գիրք մը կը կարդացընէր և զայն գերմաներէն կը թարգմանէր, իրենց հասկնալի ընելու չափ. նաև կը մեկնէր ինչ որ չէին ըմբռնէր, և աւելի պարզելու համար իր բեղմնաւոր մտքէն օրինակներ կը բերէր անոնց: Օր մըն ալ ճպոսն և մրջման առակը բերնուց սորվեցնելով իրենց՝ հարցուց թէ ճպուռը որուն կըրնանք նմանցընել», Տեսակ մը մարդու, պատասխանեց կարոլոսը. բայց ի՞նչ տեսակ մարդու: Ինծի կ'երևայ թէ, ըսաւ Օգոստինոսը, այն տեսակ մարդկանց՝ որոնք անհոգութեամբ և առանց բան մը սորվելու

կ'անցնեն ժամանակներն: Այնպիսիք չեն գիտեր որ քիչ մը ետքը պատիժներն կը գըտնան, վասն զի մարդ ալ չկրնար զիրենք բանի մը գործածել, այն ատեն պիտի ըսեն իրենց. Ինչո՞ւ համար դուք աւելի փութաջան չէք եղած ձեր պզտիկութեան ժամանակ»: — Տուած մեկնութիւնդ շատ աղէկ է, ըսաւ նաւապետը:

Դ

Սրիկայ Թրանճը.

Ամեն անգամ որ ժողովրդապետը այցելութեան կ'երթար նաւապետին, կը տեսնար որ անիկա ատեն ատեն տխուր կերպով մը կը նայէր դիմացը կախուած քողարկեալ պատկերի մը վրայ. և երբեմն այնչափ կ'զգացուէր որ աչքերէն արցունք կը թափէր: Առջի բերան ժողովրդապետը շհամարձակեցաւ հարցընել նաւապետին խորունկ հառաչանացը պատճառը, բայց վերջը մտածելով իրեն հետ ունեցած բարեկամութիւնը և իր պաշտօնը, որոնք զինքը կ'ստիպէին, գէթ փորձ մը ընելու խեղճին նեղութիւնները մեղմացնելու համար, որուն պատճառը թերևս մեծ բան մը հանդիպած կ'երևնար: Այս մտածութեամբ՝ օր մը երբ մինակ էր նաւապետին հետ՝ և դիրքն ալ յարմար, ըսաւ իրեն: « Բարեկամ ի՞նչ է պատճառը որ դու ստէպ կը նայիս այն

պատկերին վրայ, և անով շատ անգամ կը տխրիս: Ո՛հ սիրելի ժողովրդապետ, պատասխանեց նաւապետը, անիկա է որ իմ վշտացս աղբիւրը կ'ընդարձակէ և վիճակս կը թշուառացնէ: Ինչ երջանիկ կ'ըլլայի ես հոս՝ կենաց ամեն կարևոր միջոցները ունենալովս, եթէ այս մարդուն պատկերը որ կը տեսնաք հոս, զիս ամեն վայրկեան շիտուովէր: — Ուրեմն ի՞նչ պատկեր է այն, հարցուց ժողովրդապետը: — Ասիկա իմ հօրեղբօրս կենդանագիրն է, ըսաւ մէկալը, բայց բանը աղէկ հասկընալու համար պէտք է որ մանրամասնաբար պատմեմ ձեզի զխէս անցածները. բայց կանչել տուր մէկալնոնք ալ, որպէս զի գիտնան իրենք ալ թէ ինչ է եղեր իմ ճակատագիրս »:

Ժողովրդապետին քոյրը և երկու աշակերտները երբոր ներս եկան, նաւապետն ալ հանդարտ ձայնով մը սկսաւ պատմել ըսելով:

» Ես այս գեղս ծնած եմ, ինչպէս որ դուք ալ գիտէք 1754ին ե տղայբերքէն մայրս մեռաւ: Հայրս ալ քիչ ատենէն մեռնելով հօրեղբայրս զիս քովը առաւ որ գիւղիս ժողովրդապետն էր: Ասիկայ կրթեալ և երկիւղած մարդ մը ըլլալով շատ պատիժ կու տար իր եղբօրորդւոյն զինքը լաւ կրթելու համար առաքինութեան ճամբուն մէջ: Բայց իր վիճակին պարտքերը և առանձնական զբաղմունքը զինքը չէին թողուր մաս-

նաւորապէս ինծի ալ ուշ դնելու . և տանը մէջ ալ ծեր և խուլ հօրաքոյրէ մը զատ ուրիշ մարդ չունէր, որուն շատ դժուարին էր կրակոտ և աշխոյժ տղու մը ուշ դնել: Առիթները չէին պակսեր շտկելու իմ լրբութիւններս և յանդգնութիւններս: Սորուելու ալ շատ յաջող էի և թէպէտ հօրեղբայրս ինծի երկու ժամ ատեն կու տար դասերս պատրաստելու, բայց ես կէս ժամ կը զբաղէի անոնց . իսկ մնացած ատենս ընկերներուս հետ կ'անցնէի և անոնց հետ կ'ընէի իմ ամեն տեսակ խորամանկութիւններս և յիմարութիւններս: Երբոր հօրեղբայրս կ'իմանար այս բաներս, խստիւ կը պատժէր զիս, բայց ես դարձեալ միջոցներ կը գտնայի անկէց փախչելու: Հօրեղբայրս զիս եկեղեցական վիճակի մէջ դնել կ'ուզէր, բայց բոլորովին ուրիշ վիճակի էր սէրս և ամենէն աւելի ճանապարհորդութեան. թէպէտև չէի համարձակեր դէմ դնել հօրեղբօրս կամացը . ուստի 18 տարեկան եղած ատենս՝ ստիպուեցայ Գիւպէնկի համալսարանը մտնալ: Իբրև ուսանող հոն ունեցած ազատութիւնս ինծի շատ ախորժելի եկաւ և զիս այն խիստ տեսչութենէ ազատ տեսնելով՝ ուզեցի ըստ իմ հաճոյիցս կեանք մը անցնելու: Առջի բերան եռանդեամբ կը սորուէի, և որովհետև զիւրութեամբ միտք կ'առնէի դասերս, ասով ինծի բաւական ժամանակ ազատ կը մնար, որով ստիպանքս ուրիշ ուսանողաց հետ տղայա-

կան զբօսանքներով կ'անցնէի. կամաց կամաց միտքս այնպէս զբաղեցաւ այն բաներուն՝ որ ալ բնաւ չէի աշխատեր, գրեթէ բոլոր օրս սրճանոցներու մէջ և դաշտերը քալելով կ'անցնէի: Արդէն տունը իմ անունս Սրիկայ Տրանց դրած էին: Համասարանին մէջ ես կատարեալ արժանի եղայ այս անուան: Կրնաք երևակայել թէ ինչպէս հօրեղբայրս նեղացաւ երբոր այս տըխուր լուրը առաւ: Ինծի սրտաշարժ նամակներ գրեց որոնք մեծ սօզեցութիւն կ'ընէին իմ վրաս, բայց նոյն վայրկեանը միայն, և երբոր նորէն իմ ընկերներս կը տեսնէի, իրենց խեղկատակութիւնները բոլորովին կը ջնջէին սրտէս այն բարի խրատները, և կ'ամչնայի ըրածներուս վրայ զըզջալ ցուցընել անոնց դիմաց. որով և մէկէն կը սկսէի նոր նոր յանցանքներու մէջ իյնալ: Իմ վրաս կը ճշմարտէր Վաղղիացի մատենագրի մը այն առածը որ կ'ըսէ « արեաց վրայ ամչնալը ճամբայ մըն է մեծամեծ թշուառութեանց »: Հօրեղբայրս տեսելով որ ոչ իր խրատները, և ոչ իմ տուած խոստմունքներս կը կատարէի՝ ալ դադրեցուց ինծի ստակ խրկելը զիս խնայութեան և կանոնաւոր ընթացքի մը վարժեցնելու համար: Բայց այս հնարք ալ իմ վրաս երկայն ատեն սօզեցութիւն չբաւ, որով այլ և այլ պարտքեր ըրի: Երբոր ալ մէկն չուզեց ինծի փոխ ստակ տալ՝ ես ալ ծախեցի զրքերս, և անոնց նման ստակ ընող բաներս.

մէկէն կառք մը մտայ Ամսդերտամ երթալու ուսկից կ'ուզէի նաւ մտնալ. Այս ճամբորդութիւնը շատ ախորժելի երեցաւ ինծի, նաև կառքին մէջ ինծի յարմար ընկերութիւն մը գտայ, որով ժամանակս շատ ուրախութեամբ անցուցի, և շատ անգամ անմտութեամբ կը փափաքէի որ այն վիճակս կարենայի միշտ շարունակել:

Ե

Դաշը

‘Իհւպէնկէն մեկնելէս առաջ’ գրեցի հօրեղբորս միտքս իմացնելով իրեն և ինչուան յանդգնեցայ իրմէ ստակ ուզելու, ճամբորդութեան համար: Այս բանիս վրայ սաստիկ բարկացաւ ինծի և Ամսդերտամ հասնելէս ետքը խիստ նամակ մը ընդունեցայ իրմէ՝ որուն մէջ կը գրէր համառօտ և խիստ ոճով մը որ ինծի 50 տուգադ կը խաւրէ այն պայմանաւ որ իրեն քովը գամ, ըսելով որ եթէ մտիկ չընեմ իրեն խօսքին՝ և իմ անխելք մտածութեանցս ետևէն երթամ, ապահով գիտնամ որ իր անէծքը ամեն ժամանակ իմ վրաս պիտի ըլլայ: Այս նամակը սիրտս շատ կակղցուց և երկայն ատեն մտածեցի թէ ինչ ընեմ, արդեօք տուն դառնամ հօրեղբորս քով, թէ երթամ ճամբորդութիւն ընեմ, որուն կարգէ դուրս սէր և փափաք ունէի. միև կողմանէ ալ իրեն ինծի ըրած

սպառնալիքը բանի տեղ չդնելով չկրցայ ա-
դէկ որոշում ընել : Բայց շատ շանցաւ և
ահա հօրեղբորս սպառնալիքը լիովին կատա-
րուեցաւ վրաս , զի ծովու ճամբորդութիւն
ընելու փափաքով լցուած միտքս դրի նաւ մը
գտնալ որ շնդկաստանի և կամ հիւսիսային
Ամերիկոյ կողմերը երթայ , ուստի այս փա-
փաքով ունեցած ստակս հետս առած շիտակ
նաւահանգիստը գնացի , և հոն քանի մը հար-
կաւոր տեղեկութիւններ առնելէս ետքը՝ մտայ
պգտիկ նաւակի մը մէջ , ու դէպ ի Սիւրի-
նամ երթալու պատրաստուած երեքկայմեան
նաւու մը մօտեցայ որ անով ճամբայ ելլամ :
Խօսեցայ նաւապետին հետ , բայց չկարենա-
լով յարմացնել ստիպուեցայ նորէն ետ դառ-
նալու : Ի դարձին երբոր իջած պանդոկիս՝
քարէ սանդուխէն վեր կ'ելլայի , տեսայ դրան
առջև հագուած պարոն մը , որ կարծես թէ
ինծի կ'սպասէր , զիս շատ ազնուութեամբ
բարևելէն ետքը , ինծի մօտենալով՝ գերմա-
ներէն սկսաւ հետս խօսիլ ըսելով : « Կարծեմ
որ հրամանքդ օտարական ես՝ պարոն , ինչ-
պէս նաև ես ալ , բայց ուրախ եմ որ վեր-
ջապէս հայրենակից մը գտայ որ իմ լեզուս
կը հասկնայ » : Այս սիրելի խօսքերը ինծի
շատ հաճոյ անցան , ես ալ յայտնեցի իրեն՝
իրարու հանդիպելնուս վրայ զգացած ուրա-
խութիւնս : Երբոր ըսի թէ Ամերիկա երթա-
լու փափաք ունիմ , և թէ կ'ուզեմ նաև մը
գտնալ՝ շատ ուրախացաւ , և ըսաւ որ նա-
խընթաց օրը իրեն համար տեղ մը վարձեր

էր, Նիւեօրֆ քաղաքը երթալու նաւու մը մէջ, և թէ դեռ ուրիշ ճամբորդի համար ալ տեղ ունէր:

Բայց գիտես ի՞նչ, ըսաւ ինծի, բանը յաջողցնելու համար շուտ մը նաւապետին երթանք, որ շատ հեռու չէ ասկից, և քիչ մըն ալ առաջ երթալով կը տեսնանք իր նաւը, որ անմիջապէս ծովեզերաց մօք է:» Ես ալ ասոր կը սպասէի և քիչ մը ժամանակ դէպի ծովեզերք յառաջանալէն ետքը, ինծի ցուցուց երեքկայմեան նաւ մը բոլորովին սև ներկուած՝ Պէդրինլի անուամբ: Անկից ուղղակի նաւապետին տունը գացինք, որ նաւէն բաւականապէս հեռու էր. վերջապէս հասանք տուն մը որուն իմ քովի պարոնս շատ ծանօթ կերևար. մեկէն զիս առանձին խոց մը տարաւ, և ըսաւ որ քիչ մը համբերեմ մինչև որ երթայ նաւապետը կանչելու: Այս ըսաւ և դուռը կղպելով դուրս ելաւ խցէն: Այս բանս մեծ վախ մը և կասկած ձգեց սրտիս մէջ, ջանացի դուռը բանալու, բայց ՚ի զուր, վասն գի ամուր փակեր էր, պատուհաններն ալ երկաթէ վանդակներով զոցած էին, ուսկից դուրս ելլել անկարելի էր: Ան ատեն իմացայ որ մարդու մտաւաճառի մը ձեռք ընկեր եմ, կտտաղութենէս ոտքերս գետին կը զարնէի, կը պոռայի և կը կանչվուտէի՝ բայց փուճ տեղը, խցին ապակեայ փեղկերը զամուսած էին և մուրթ բակի մը վրայ կը նայէին, ուսկից մարդ չէր տեսնուեր, ապա թէ ոչ

Չարդուբուրդ կ'ընէի զանոնք՝ մարդ մը կանչելու համար: Ա' երջնապէս այսպիսի ասպնապով երկու ժամ անցնելէն ետքը, տեսայ որ երկու հոգի խուցս մտան ձեռքերնին մէյմէկ ատրճանակ, և ստիպեցին զիս զգեստներս իրենց տալու, և նաւավարի զգեստ մը հագնելու, զոր առաջուց ինծի համար պատրաստած էին: Իմ ըրած ողբերուս և առաջարկութեանցս բնաւ մտիկ չըրին և զիմացս քիչ մը բան բերին որ ուտեմ. գիշերատեն զիս նաւ մը տանելով խցի մը մէջ ուրիշ մարդկանց հետ փակեցին որոնց տխուր դէմքերնէն կ'երևար որ ինծի պէս դժբաղդ վիճակի մը մէջ էին: Մտածեցի որ դէմ դնելը պարապ բան է և միայն իմ վիճակս ծանրացնելու պատճառ պիտի ըլլայի, ուստի բոլորովին լռեցի: Խստիւ կը հսկէին մեր վրայ՝ ինչուան որ նաւը ծովուն խորը առաջ գնաց, և անկից ետև ստիպեցին զմեզ նաւաստուոյ պաշտօն կատարելու որ շատ անսովոր էր ոմանց համար, որոնք ինծի պէս՝ ՚ի մանկութենէ ծուլութեան վարժած էին, և ուսումը իրենց շատ դժուարին կ'երևար: Ասանկով հօրեղբօրս անէծքը սկսաւ կատարուիլ վրաս:

Զ

Թշուառութիւնք

« Եթէ ըսէի, թէ մարդս գիրք մըն է լեցուն սխալ տպագրութեամբ, կարծեմ շատ ստոյգ դատաստան մը ըրած կ'ըլլայի»: Արդէն նաւը մըտած ատենս շատ այլայլած էի, բայց ևս առաւել երբոր նաւաստեաց մէջ այնպիսի զարհուրելի բաներ տեսայ և լսեցի, որ կը դողայի և գլխուս մազերը տընկուեցան: Շատ կ'ուզէի ուրիշ բանի զբաղիլ որպէս զի այս ամբարիշտ մարդկանց հետ միշտ միատեղ չգտնուիմ որոնց մէջ ես պըզտիկ սուրբ մըն էի. բայց ափսոս որ անհոգ եղած էի այն գեղեցիկ պատեհ ժամանակը ինծի օգտակար ընելու երբ հօրեղբօրս տունը եղած ատենս առիթ ունէի հըմտանալու մասնաւորապէս Թուրքանական ուսմանց, որով չկրցայ նաւապետին ինծի յանձնել ուզած գործը ընդունել: Մեր նաւը Ճալա կղզւոյն Պաղավիա քաղաքը ուղղուած էր երթալու՝ որով բոլորովին յոյսս կտրեցի ազատելու իմ տառապեցուցիչ աշխատութենէս և ուրիշ վայելուչ գործ մը գտնելու: Բայց իմ վիճակս շատ աւելի դառնացաւ ինծի, երբոր իմացայ որ Պաղավիա հասնելուս պէս, Հոլանտացի դնդի մէջ պիտի դըրուիմ, որոհեաւ ամէն բանէն աւելի զինուորական վիճակը կ'ատէի. վասն զի ես

ազատութիւն և անկախութիւն կը սիրէի։ Բայց տես ինչ պատահեցաւ, երբոր ճամբան մուրրելով Սուրբ Հեղինէ կղզւոյն դիմացնէրը հասանք, յանկարծ հարաւային ուժով քանի մը սկսաւ զմեզ քովնտի մղել. և մինչգեռ կը ջանայինք նաւերնիս դէպ 'ի արեւմրտեան կողմը շրտկել, յանկարծ բուռն փոթորիկ մը ելաւ որով ստիպուեցանք ամեն ջանք թափելու մեր փրկութեանը համար։ Երկինքը սև ամպերով պատած էր՝ մենք ալ բոլոր օրը թանձր աղջամղջի մը մէջ ծածկուած էինք որ միայն փայլակներու լոյսը երբեմն կը տեսնայինք և որոտման սոսկալի հարուածները մեծ վախ կը պատճառէին մեզի։ Նաւը լեռնաձև ալիքներէն մրդուելով ասդիս անդին կը ծփէր, բոլոր նաւաստիք շուարած էին, ամենքնիս ջուր դարձած սաստիկ ալեկոծութենէն՝ անդադար կ'աշխատէինք ամփոփելու առազաստները զորոնք հովը մեր ձեռքէն կը խլէր, և երբեմն ջուր հանելու, որ նաւուն յատակը մեծ ծակէ մը կըլեցուէր։ Քառասուն տարուան մէջ շատ փոթորիկներու հանդիպեր էի բայց ասոր պէս ոչ։ Նաւը տկար ըլլալով, երկայն ատեն չկրցաւ դէմ դնել փոթորկին սաստկութեանը և մտքերնէս չանցած ժամանակը, նոր տեսարան մը բացուեցաւ դիմացնիս որով ամեն մարդ կրցածին շափ իր կեանքը, ազատելու կը ջանար, փասն զի նաւը ջրով լեցուելով ընկղմեցաւ բոլորովին։ Ան միջոցին ես ալ կոտորած կայմէ մը վրայ նետուե-

լով, ինքզինքս արեաց տուի. ուրիշ նաւաս-
տիներ ալ ազատելու կը ջանային կոտորած
բաներու ապաւինելով, բայց քիչ ատենէն,
ալ մարդ մը շտեսայ. զիս միայն կը կար-
ծէի բոլոր տիեզերաց մէջ: Փոթորիկը բոլոր
գիշերը տւեց, և ալ ոյժ չունէի զիս վեր
բռնելու՝ թրջած և սահուն գերանին վրայ:
Ահաւասիկ հօրեղբօրս անէծքը, կ'ըսէի միշտ
ես ինծի: Կուզէի աղօթել և այն առակը
միտքս կ'ուզար որ կ'ըսէ «Ծովու վրայ
խրկեցէք այն մարդը որ աղօթելու եռանդ
չզգար» Բայց հօրեղբօրս անէծքին յիշա-
տակը՝ ոյժս կը տկարացնէր՝ և գիտակցու-
թիւնս միշտ կ'ըսէր ինծի. Ինչո՞ւ համար
անառակ որդւոյն պէս չդարձար հօրեղբօրդ
տունը, մինչդեռ նա յօժարութեամբ կը փա-
փաքէր զքեզ ընդունելու: Այս երկայն գիշե-
րոյս վերջը հասաւ, և երբոր լուսնցաւ տե-
սայ մօտերը ժայռ մը որուն հասնելու բոլոր
ուժս թափեցի. բայց վերջապէս հասայ, զոր
ուժով մը բռնելով տեսայ հեռուէն նաւ մը
որ կրնար զիս փրկել, բայց ինչպէս կրնայի
զիս ժայռին ամուր բռնել և միանգամայն
նաւուն նշան մը տալ իմ փափաքանացս
հասնելու: Իսկ ժայռին գագաթը մեծ դը-
ժուարութիւն կար ելլելու, և ուրիշ կերպով
չկրցայ հոն հասնելու մինչև որ արեամբս
այն սուր քարերը ներկեցի, և որպէս զի
ինքզինքս հեռուն եղող նաւաստեաց յայտ-
նելու նշան մը տամ, շապիկս հանեցի և
սկսայ շարժել զայն դրօշակի մը պէս. բայց

ի զուր, վասն զի նաւը շատ հեռու էր: Իմ դիրքս երկիւղալի էր՝ բոլոր ժայռը 40 կամ 50 ոտք տարածութիւն ունէր ուր քիչ մը մամուէ և խոտէ զատ ուրիշ բան չկար, կարծես թէ ծովէն ազատեր էի՝ հոս անօթութենէ մեռնելու համար՝ որ դեռ աւելի սոսկալի էր: Նաւը կարծես թէ երթալով հեռանալու վրայ էր. բայց Աստուած հով մը հանեց յանկարծ որ նաւը ինծի մօտիկ մղեց, ան ատեն սկսայ նորէն շարժել իմ շապիկս, և ինչ ուրախութիւն էր զգացածս երբ իմացայ որ նաւէն տեսան զիս: Մէկէն նաւակ մը եկաւ զիս առնելու և կէս ժամէն զիս, Լուչիա ըստած նաւուն եզերքը գտայ, որ Անգղիացի վաճառականի մըն էր, որ Արևելեակ Հնդկաստանէն Անգղիա կը դառնար: Նաւաստիքը զիս շատ մարդասիրութեամբ հոգացին մէկէն չոր զգեստներ տալով զիս կերակրեցին և խմցուցին և ես ալ պատմեցի իրենց իմ դժբաղդութիւնս՝ որուն մտիկ կ'ընէին: Այսու ամենայնիւ հոս պէտք եղաւ որ ես նաւաստուոյ պաշտօն կատարեմ իմ ապրուստս գտնալու համար, և այնչափ յօգնեցայ ծովուն վրայի աշխատութենէն որ հաստատուն առաջադրութեամբ միտքս դրի՝ մէյմն ալ ոտքս նաւու մէջ չդնեմ հայրենիքս հասնելէն ետքը: Բայց ինչ մարդուս որոշմունքը ուրիշ բան չէ, բայց եթէ ունայնութիւն ունայնութեանց:

Է

Դժբաղդ լուրը

«Յաջող նաւարկութենէ մը ետքը, Բորդըս-
մըդ հասանք: Նաւապետը ինծի քանի մը
չի՛նկ տալէն ետքը, արձակեց զիս, բայց
բոլորովին օտարական ըլլալովս քաղաքին
մէջ ունեցած պզտի գումարս քիչ ատենէն
լմնցաւ, որով և ուրիշ հնարք չմնաց ինծի՝
բայց եթէ Հոլանտա գացող նաւու մը մէջ
մտնալու իրրև նաւաստի և անով շիտակ
հայրենիքս դառնալու: Վերջապէս ութ օրէն
ետքը հասանք Ռօդէրտամ, և այն օրը կի-
րակի ըլլալով մէկէն գացի եկեղեցին և Աս-
տուծոյ շնորհակալ եղայ զիս փրկելուն հա-
մար: Անտարակոյս հիմա պիտի կարծէք թէ
իմ դժբախտութիւնս զիս բոլորովին փոխած
ըլլայ. և թէ ես ալ երկիւղած մարդ մը
ըլլամ. իրաւ ծանրութիւն մը ստացած էի
և աւելի զգաստացած, բայց մտածութիւնս
դեռ նոյն էր: Ես զիս ուղղած կը կարծէի,
բայց թէ որ քարոզչին ըսածներուն մտիկ
ըրած ըլլայի, պէտք էր որ աւելի խստիւ
քննած ըլլայի զիս, և ապահովապէս աւելի
հիմնովին զիս կը ճանչնայի: Վասն զի քա-
րոզիչը ուրիշ բաներէ զատ այս ալ ըսաւ
թէ «Աստուած չքններ միայն ինչ որ մարդս
կը գործէ, այլ թէ որով եղանակաւ կը գոր-
ծէ, աւելի ներքինը կը քննէ քան թէ ար-

տաքինը. ներքինը հոգին է իսկ արտաքինը գործը: Աստուած կը յարգէ հասկը և ոչ ցօղունը, գանձը կը նայի և ոչ արկղը, սուրը և ոչ պատեանը: Ի՞նչ օգուտ երբոր պատեանը ոսկիէ ըլլայ և սուրը ժանգոտած, ինչ բանի կը ծառայէ եթէ սնտուկը հաստատուն ըլլայ, երբոր մէջը կեղծ ստակէ զատ բան չըլլայ, նոյնպէս ինչ օգուտ թէ որ ցօղունը ըլլայ բարձր և ուղիղ, երբ հասկը դատարկ է, ինչ յարգ կ'ունենայ եթէ կեղևը մաքուր ըլլայ և միջուկը որդերով լեցուն »:

Նոյն օրը գրեցի մէկէն հօրեղբօրս և իմացուցի իրեն իմ վիճակս, զինքը ապահովցնելով, որ ըրածներուս վրայ զղջացեր եմ, և դարձի եկած եմ, ուստի քիչ մը ստակ խնդրեցի իրմէն որպէս զի կարենամ քովը դառնալու: Պատասխանին սպասելու միջոցս քանի մը քովս մնացած դահեկաններով ապրեցայ զորոնք ուրբաթ իրիկունը լմնցուցի և ալ քովս ստակ չմնաց. ի վերայ այսր ամենայնի դեռ չորս օր պէտք էր թղթիս պատասխանը և միանգամայն ստակը ընդունելու: Ի՞նչպէս ապրէի, ո՞ւր քունը ըլլայի ան միջոցին, ես ալ չէի գիտեր բայց ճար չկար, պէտք էր պատասխանին սպասելու, մուրալու ալ կ'ամչնայի, թէպէտ ամեն մուրացկաններէն աւելի աղքատ էի: Սովորաբար ուր որ մարդս օգնականութեան մը ակնկալութիւն չունենայ, դժուարին կ'ըլլայ որ Աստուծոյ վրայ հաւատք ունենայ:

Ինքզինքս անօթի կենալու կը վարժեցնէի, շարաթ օրը ամենևին բան մը չկերայ և այնպիսի կէտի մը հասայ որ նեղութիւն կը զգայի, և ինքիրենս կ'ըսէի. Ահա հօրեղբորս անէծքը, որովհետև շատ անգամ անկարգացեր եմ, հիմա ալ պէտք է անոնց պատիժը քաշեմ. գիշերները նաւարանի մը մէջ ողնափայտի մը վրայ կը քնանայի: Ուզեցի նորէն երթալ պատարագ մը տեսնալ և քարոզ մը լսել, թերևս հոն կը քաջալերուիմ ըսելով, ինչպէս որ եղաւ ալ: Գացի եկեղեցին, քարոզին բնաբանը այն էր որ Աստուած կը խնամէ ամեն իր արարածները և իբրև հայր մը կը սիրէ զմարդիկ: Կարծես թէ այս քարոզը ինծի համար միայն շինուած էր, և ես խնամքով պահեցի մինչև հիմա այն թղթի կտորը որուն վրայ գրեցի քարոզին մէկ մասը՝ որուն բովանդակութիւնը այս էր:

« Մատթէոս Աւետարանին վեցերորդ գլխուն 26 երորդ համարին մէջ: Նայեցէք օդուն մէջի թռչունները անկէց կրնաք ձեզի աղէկ օրինակ մը առնուլ: Թռչնիկի մը կեանքէն աւելի ինչ նուազ յարգի բան կրնայ ըլլալ ինչպէս նաև ճընճղուկի մը կամ աղանուոյ մը, ով կը խնամէ զանոնք, թէպէտ գեղեցիկ արարածներ են ասոնք որոնք կը թռչին օդուն մէջ, և գեղեցիկ կերպով կ'երգեն իրենց քաղցր երգը, փետուրը գեղեցիկ և շնորհալի կենդանութիւն մը ունին, բնակութիւննին ծառերու ծայրն է, ընթացքնին

օգու մեջէն է որոնք աւելի երկնային կը համարուին քան երկրաւոր: Տեսէք իրենք ոչ կը սերմանեն և ոչ ալ կը հնձեն, ոչ կը ժողովեն, և ոչ կը մշակեն, և իրենց շտնկած բաները կը տեսնան որ կը բուսնի, և անկէ իրենց հարկաւոր եղածը կ'առնուն, առանց նայելու թէ ուսկից կու գայ իրենց: Բնաւ իրենց ապրուստին վրայ չեն հոգար, և առանց մտածութեան կը գտնան իրենց կերակուրը: Նայեցէք աշխարհիս ցած կենդանիներուն վրայ ալ, մրջուկները, խլուրդները և բոլոր հողին տակի բնակիչքը, ինչպէս կ'ամբարեն և Աստուած զանոնք ալ կը սնուցանէ հաւասարապէս. բայց ասոնցմէ աւելի երկնից թռչնոց վրայ Աստուած խնամք ունի:

« Իրենց կենացը էութիւնը, իրենց երգը և ցնծութիւնն է որով Աստուծոյ մեծվայելչութիւնը կը քարոզեն, իրենց գեղգեղանքը գովութեան, և առ Աստուած շնորհակալութեան երգեր են: Արդ ո՞վ կը սնուցանէ այս զուարթուն և անհոգ արարածը, եթէ ոչ ձեր երկնաւոր հայրը: Բայց միթէ ազուաներուն ալ հայրն է. ճնճղուկներուն ալ հայրն է. Ոչ, այլ անոնց արարիչն է, և անոնց վրայ ալ հոգ ունի. ուրեմն որչափ ևս առաւել ձեր վրայ խնամք ունի որ ձեր հայրն է: Գորովագութ հայր է, և կը սիրէ զամենքը որոնք կը լսեն հաւատքով իրեն սորվեցուցած վարդապետութեանցը: Հայրն է Յիսուսի Քրիստոսի տեառն մերոյ, և ինքն

է որ Քրիստոսի ձեռքով տուաւ ձեզի ամեն հոգևոր բարիքները, զորոնք մեր վրայ իջեցուց հոգին սուրբ: Նայեցէք երկնից թռչունները, որոնք կ'երգեն և կը զբօսնուն, և ահա այն է բովանդակ իրենց էութիւնը, քայց դուք միթէ անոնցմէ աւելի չէք մի: Որդիք Աստուծոյ ժառանգորդք երկնից, որ բոլորովին երկնից համար էք և պանդուխտ ու անցաւոր էք այս ժամանակաւոր երկրիս վրայ, սեղանակից Աստուծոյ և քաղաքակիցք սրբոց, ամենքս ալ որ այս աշխարհիս վրայ մեր հաւատքովը Յիսուսի Քրիստոսի հետ միացած ենք պիտի տեսնանք զԱստուած դէմ յանդիման իր ամեն փառաւորութեամբը, միթէ անոնցմէ աւելի չենք մի արժեք »:

Աս միջոցին Օգոստինոսը ընդմիջեց նաւապետին խօսքը, ըսելով. Ուրեմն ինչպէս կ'ըլլայ որ ճպուռը կը յանդիմանեն ձմեռուան համար բան չպատրաստելուն վրայ և այս բանս շատ կը պատահի թռչնոց մէջ. չեմ ընդունիր այս վճիռը:

Ժողովրդապետը պատասխանեց իրեն. Կենդանիք իրենց բնական ազդեցութեամբը կը գործեն զոր Աստուած իրենց բնութեանը մէջ դրած է որով մարդիկ պէտք չէ ոչ գովեն և ոչ ալ պարսաւեն զանոնք: Բայց այլ և այլ օրինակաւ անոնք մեկի կը ցուցնեն թէ ինչ է մարդս, և այս նկատմամբ կրնանք օգտակար բարոյական մը հետևեցնել անոնցմէ իւրաքանչիւրը պատկերելով ամեն

մարդ իր անձին վրայ. ինչպէս ծոյլը պէտք է մրջուկէն աշխատելու և հացը ճարելու օրինակ առնու. ագահը և անհաւատը պէտք է յաղթահարուի թռչնոց օրինակէն, որ մէկը կրնայ առանց նախապատրաստութեան՝ վշտերէ ազատ ըլլալ, քանի որ կը թագաւորէ երկինքը Աստուած մը. դարձեալ թէ պէտք չէ շատ հոգալ և անհանգիստ ըլլալ յաջորդ օրուան համար, և ոչ ալ շատ նախատես ըլլալ: Բայց ինդրեմ, սիրելի բարեկամ, թէ որ կարելի է շարունակես պատմութիւնդ: Նաւապետը շարունակելով ըսաւ դարձեալ:

« Այս քարոզը զիս քաջալերեց՝ ըսի ես ինքիրենս՝ դու թէպէտ օտարական մըն ես այս գեղիս մէջ, բայց նա որ յերկինս է զքեզ կը ճանչնայ և զքեզ կը տեսնայ, իրեն դիւրին պիտի ըլլայ քեզի հաց գտնալ: Վաճառանոցին մէջէն անցնելու ատենս երբոր Երազմի յիշատակարանին քովէն կ'անցնէի մարդ մը լատիններէն արձանագիր մը կարդալու զբողած էր: Ասոր դէմքը ինծի անծանօթ չէր երևար. բայց չէի կրնար իր անունը յիշել. դէպի ինծի դառնալուն պէս զիս տեսաւ, և ես աղաղակեցի. Գորպէզ, դ՞ու ես. Այո, ես եմ, պատասխանեց ինծի, բայց չեմ յիշեր երբեք որ զքեզ տեսած ըլլամ. ան ատեն իմացայ, որ իմ նաւաստւոյ հագուստս ու վատուժցած և արևէ այրած երեսս զիս անճանաչելի ըրած էին: Անունս ըսելուս պէս ճանչցաւ իր հա-

մալսարանի հին ընկերը: Կերպարանքէս իմացաւ տխրութեան մէջ ըլլալ, ուստի զիս տարաւ պանդոկ մը և ըստ ախորժակիս ինձի կերակուր հրամցուց զորոնք մեծ ախորժով կերայ, և գինւոյ շիշ մը պարպելով պատմեցի իմ գլխէս անցածները:

« Գթաց իմ վրաս և ըսաւ. կը ցաւիմ որ չեմ կրնար քեզի ասկէ աւելի օգտակար ըլլալ, ինչ ընեմ՝ պէտք է որ խնայողութեամբ գործածեմ ստակս, վասն զի վաղը Հոլանտացւոյ նաւ մը պիտի մտնամ իրրև բժիշկ, և դեռ հոս վճարելու բաներ ունիմ: Աս ըսելով ինձի երկու ոսկի տուաւ որոնք ընդունեցայ մեծաւ շնորհակալութեամբ և սիրով, կրնայի դեռ քանի մը օր անկողին մը գտնալ և քանի մը տեսակ տաք կերակուր ուտել: Այսպէս ահա Աստուած կը խնամէ երկնից թռչունները, հոգաց նաև զիս ալ. և զինքը դեռ աղէկ մը չի ճանչցած, ինքը ինձի հարկաւոր եղածը տուաւ, ինչո՞ւ ես երախտագէտ չէի եղած և այն վայրկեանները որ իրեն կարօտ չէի ըլլար՝ կը հեռանայի իրմէ: Վերջապէս չորեքշաբթի իրիկունը նամակ մը ընդունեցայ, բայց ոչ իմ ժողովրդապետ հօրեղբորմէս, այլ իր ուսիկան եղբորմէն որ կ'իմացնէր ինձի թէ զեզի հօրեղբայրս մեռած էր իմ նամակիս հասնելէն երկու օր առաջ, և թէ իր ժառանգութիւնը ճիշդ պիտի բաւէր իմ Գիւպէնկի մէջ ըրած պարտքերս վճարելու: Նամակիս մէջ հինգ ոսկի գտայ զոր ոստիկան

Հօրեղբայրս դրած էր. և չէի գիտեր թէ ինչ ընեմ, տօ՛ւն դառնամ, թէ առաջ տանիմ իմ ճամբորդութիւնս: Այ դուք մտածեցէք թէ ինչ կրնայի զգալ երբ կարդացի այս նամակը: Այս իմ հօրեղբօրս անէծքն է կ'ըսէի, ինքիրենս աթոռի մը վրայ իյնալով ինքզինքս կորսնցուցած, և շատ արցունք թափելով մխիթարուեցայ քիչ մը: Լացի բուր գիշերը և երբոր առաւօտ եղաւ ինքիրենս ինծի հանդարտեցուցիչ հարցմունքներ կ'ընէի, որոնք առանց պատասխանի մնացին: Ինչ ընեմ վերջապէս, ո՞ր կողմը երթամ: Ինչ որ ուզեմ ընել և ինչ բանի որ ձեռք զարնեմ հօրեղբօրս անէծքը ամեն ատեն դիմացս պիտի ելլէ:

« Ինքը ինծի առաջուց ըսած էր, զիս չէր խաբած, բայց հիմա մեռաւ, և ետ շառաւիր անէծքը. եթէ զինքը հիմա կենդանի գտնայի կ'իյնայի կը չօքէի իր առջևը ինչուան որ վերցնէր իր անէծքը վրայէս օրհնութեան փոխելով զայն. բայց աւա՛ղ որ շատ ուշ էր, իր անէծքը իմ վրաս ամեն ժամանակ պիտի ազդէ: Այսպէս խօսելով, գացի փնտռելու այն նաւը որ զիս բերած էր, և դեռ երկաթ նետած կ'սպասէր հոն՝ ուր նորէն ծառայութեան մտնալով նաւաստի եղայ: Այս անգամ աւելի նուազ աշխատելի գործոյ վրայ դրուեցայ. և նաւապետն ալ վրաս մասնաւոր խնամք ունենալով, ինծի նաւավարութեան արուեստը սորուեցուց: Մեր առաջին ճամբորդութիւնը Լոնտրայէն

դէպ ի արևելեան Հնդկաստան եղաւ. այս ճամբորդութեան ատեն երկրորդ նաւապետին տեղը անցայ, որ գինովութեամբ ծովը ինկեր էր, և անկէ ետքը երեք ճամբորդութիւն ընելէս ետև առաջին նաւապետ եղայ: Ամեն տեղ ճարտար նաւապետի անուն հանեցի, և քանի մը տարիէն ետքը, Վիվրուլի վաճառականի տունէ մը ինձի յանձնուեցաւ նաւ մը. որ Բերու պիտի երթար: Ճամբորդութիւնը շատ յաջողութեամբ ըրի և աղէկ շահաւոր ալ եղաւ, և այսպէս տասը տարիի չափ նոյն տանը ծառայութիւն ըրի իբրև նաւապետ՝ որով բաւական ստակ շահելէս ետքը՝ նաւ մը գնեցի ինձի, և անով սկսայ վաճառականութիւն ընել իմ առանձին շահուս համար: Անկէց ետքը ալ ժամանակ չունէի հօրեղբորս վրայ մտածելու, և ամենևին եռանդ մը չունէի աղօթելու, թէպէտ համեստ և լաւ մարդու մը պէս կ'ապրէի առանց ամենևին Աստուծոյ օգնականութեանը կարօտ ըլլալու:

Ը

Կենդանագիրք

« Նրեանքը հինգ տարուան եզած ատենս կարգուեցայ Վիվրբուլ քաղաքը, և այն վայրկեանէն ետքը, բարեբաղդութիւնս գնաց վրայէս: Հարսնիքէս առաջ ժողովրդապետին տունը երթալով խոստովանութեանս վկայագիրը առնելու համար, պատին վրայ հայլի մը տակ կախուած մեռած հօրեղբօրս կենդանագիրը տեսայ, և այնպէս սոստիկ դուրս սկսայ որ հարկ եղաւ ստուլի մը կռթնիմ: Ժողովրդապետը տեսնելով զիս այլայլած հարցուց թէ տկարութիւն մը ունի՞մ. Զէ ըսի իրեն, և աչքերս աւելի ևս մտադրութեամբ սկսայ պատկերին վրայ ձգել: Կարծես թէ դեռ կենդանի էր և աչքերը վրաս սեեռած բարձրաձայն կը գոչէր. « Անէծքս քու ետեւդ պիտի երթայ. Ո՛չ ոչ, պատասխանեցի վերջապէս բարձրաձայն ալ չի կարենալով բռնել զիս ներքին յուզմունքէս: Ժողովրդապետը յանկարծակիի գալով իմ այս ձայնէս, հարցուց ինձի պատճառը, ես ալ իրեն ըսի թէ այն ունեցած պատկերը իմ հօրեղբօրս կենդանագիրն է որ իմ վրաս յանկարծակի մեծ ազդեցութիւն մը ըրաւ:

« Ժողովրդապետը պատէն վար առնելով պատկերը ցըցուց ինձի անոր վարի ծայրը գրուած անունը, որ անիկայ հօրեղբօրս

դէմքը չէր, այլ շատոնց ի վեր մեռած անգղիացի ժողովրդապետի մըն էր, և թէ այս նմանութիւնը դիպուածական բան մը եղած է: Սյս դէպքին վրայ հարկ եղաւ որ իմ պատմութիւնս պատմեմ իրեն՝ որն որ շատ ջանաց քաջալերելու զիս ըսելով որ հօրեղբոր մը անէծքը չէր կրնար տեւել այն մարդուն վրայ որ իր սխալանացը վրայ զղջացեր է, և բարեպաշտութեան ճամբուն մէջ կը գտնուի. բայց իր խրախուսական խօսքերը բնաւ ազդեցութիւն մը չըրին վրաս, և ես վերստին իմ յուզմանցս մէջն էի: Նորէն ծովով ճամբորդութիւն մը ըրի, բայց բազդաչի բանեցաւ. փասն զի մրրիկներու պատահելով վաճառքներուս վաստակովը դառնալու տեղ՝ քանի մը հազար դալէր կորուստ ունեցայ. հօրեղբորս անէծքն է այս, կ'ըսէր ինծի խղճմտանքս: Երբոր տուն դարձայ, կինս ընդ առաջ ելաւ ինծի անդրանիկ աղջիկ զաւկին հետ՝ որ գիրկը բռնած էր, զոր տեսնալով անձկանօք առի ձեռքէն, և աչքերս դէպ ի երկինք դարձուցած, խնդրեցի Աստուծմէ ըսելով. Գոնէ այս անմեղ տղան, ով Տէր, վրաս եղած անէծքէն ազատ ըրէ:

« Անկէ ետքը դեռ երկու տղայ ալ ունեցայ, մէկը մանչ և միւսը աղջիկ: Երբոր ամենէն պզտի աղջիկս վեց ամսական էր, իրիկուն մը կինս երեք տղաքներովը տանը դրան դիմաց նստած ժամանակը, անկարող մարդուն մէկը որուն ոտքին մէկը փայտէ էր, մօտենալով իրենց՝ ողորմութիւն խնդրեց:

Յոնիկ մէկէն խնդրեց մօրմէն դրամ մը՝ աղքատին տալու համար. իսկ կինս դարձաւ ըսաւ աղքատին: « Անշուշտ անօթի պիտի ըլլաս՝ թէ որ կ'ուզես, քեզի ուտելու բան մը տամ, խեղճ մարդը շնորհակալութեամբ ընդունեցաւ, և հազիւ թէ կերակուրը լմնցուցած էր, մէյմն ալ ես ներս մտայ որ բարեկամներէս մէկուն այցելութենէ կը դառնայի. ողջունեցի այն աղքատը և աղաչեցի որ նստի և ինծի պատմէ իր գլխէն անցածները: Ամսդերտամի մէջ ծնած եմ ըսաւ ինծի, որով ես մէկէն ճանչցայ զինքը թէ այն գերեվաճառն էր՝ որ զիս կապկպեց և դրաւ այն նաւուն մէջ որով նաւաբեկութեան հանդիպեցայ. իրեն բան մը չիմացուցի և թողուցի որ պատմութիւնը առաջ տանի: Պատմեց ինծի թէ ինչ տեսակ դժբախտութիւններով ստիպուած էր Անգղիա ծառայութեան մտնալու, և թէ նաւական պատերազմի մը մէջ իր ձախ ոտքը կորսնցունելով՝ հիմա այն ողորմելի վիճակին մէջ կը գըտնուէր: Երբոր իր պատմութիւնը լմընցուց, ես լուռ կեցած վրան կը նայէի, բայց սիրտս այլ և այլ հակառակ զգացմունքներով յուզեցան իրեն դէմ: Աերջապէս հարցուցի իրեն թէ զիս կը ճանչնայ մի, որուն պատասխանեց թէ՛ ամենեին չէր ճանչնար: Այն ատեն ես ալ պատմեցի իմ գլխէս անցածները զոր երբ լսեց, երեսին գոյնը նետեց, և վախէն կարծես թէ արձան դարձաւ:

« Մի վախնար, ըսի ես իրեն, ահա Աստուած պատժեց զքեզ, և ալ պիտի չի կարենաս գերեզմանառութիւն ընել: Բայց չեմ ուզեր որ մէյմն ալ աչքիս առջևը երևնաս. ինչ կ'ըսէք, տղաքս, կը հաւնիք իմ ըրածիս:

Կարոյոս. — Այն կողմանէ որ իրեն չարիք մը չըրիր՝ աղէկ եղեր է:

Օգոստիկոս. — Այնպէս է, բայց Աստուած չըսաւ մի մեզի որ մեր թշնամիները պէտք ենք սիրել, որով պէտք չէր զինքը այսպէս անգթութեամբ վռնտել:

Նառապետր. — Իրաւունք ունիս, ըսաւ հայրը, բայց նոյն իսկ ճշմարիտ քրիստոնէաբար մտածելով, ես իրեն բարիք ըրի, վասն զի հետը այս կերպով վարուելով իրեն թերևս խրատ մը ըլլայ, և միանգամայն թերևս հնարք մը, արդարութեան ճամբան գտնալու, իրեն յանցանքը ճանչնալով: Բայց այս միջոցին ես զիս ամենևին չէի մտածեր և ոչ իսկ ըրած մեղքերս, և ընդ հակառակը կը կարծէի թէ աղէկ բան մը կ'ընեմ, վրէժխնդիր ըլլալով այն ողորմելոյն՝ ինծի դէմ ըրած ցածութեանցը և անգթութեանցը համար: Ես շատ տարիներ այս յամառեալ կարծեացս մէջ հպարտացած կ'ապրէի ինչուան որ Աստուած ինծի այնպիսի դժբաղդ և ցաւալի դէպքեր խաւրեց որոնք սորվեցուցին ինծի թէ ինչ է քրիստոնէական խոնարհութիւնը: Համառօտիւ մը կը պատմեմ հոս, յաջորդ եօթը ութը տարուան պատ-

մութիւնս՝ որոնց մէջ բաղդս ամենեին չի բանեցաւ, և ամեն բանս ձախորդ գնաց: Տղաքս օրէ օր կը մեծնային և կ'երջանկանային՝ բայց ես անհանգիստ կ'ըլլայի իրենց ապագան մտածելով. վասն զի ինքիբենս կ'ըսէի թէ ինչուան որ իմ գործերս լաւագոյն դիրք մը չառնուն չեմ կրնար ապահովցնել իրենց վիճակը: Բնաւ չէի կրնար գուշակել այն դառն դժբախտութիւնը որ գլխէս պիտի անցնէին: Երկու մեծ որդիքս՝ Թովմաս և Յովհաննէս, գնացին օր մը ծովեզերքը տեսակ տեսակ ժժմունք ժողուելու: Մինչդեռ ալիքներուն եզերքէն քաշուելու ժամանակ տղաքը կը վազէին անոնց հետքին վրայէն ծովու ժժմունքներ բնտռելու, յանկարծակիի գալով՝ մեծ ալիքէ մը բռնուեցան հոն, և շփոթած՝ ժամանակ չունեցան փախչելու: Ան միջոցին ուժով քամի մըն ալ ելելով՝ պարապ տեղ փորձեցին խեղճ տղաքը խալսելու, և վերջապէս ալիքները տարին քշեցին զիրենք ծովուն խորը: Թողէք զիս անցնելու շուտ այս աղիողորմ դէպքէս՝ վասն զի այս դառն յիշատակը բոլոր իմ ցաւերս կը նորոգէ: Երկու դիակները քիչ ատենէն ծովուն ափանցը վրայ ձգուեցան՝ զորոնք տեսնալով իրենց մայրը, այն աստիճանի սրտի ցաւ ունեցաւ որ իր կեանքն ալ վրտանգի մէջ ընկաւ: Ես այս միջոցս, ճանապարհորդութիւն կ'ընէի և այս թշուառ դէպքը ան ատեն իմացայ երբ ճամբորդութենէս դարձած ցամաք ելայ: Հօրեղբօրս անէծքն

է այս, ըսի մտքէս: Հազիւ ինքզինքս տուն կրցայ ձգել՝ ուր արցունքներս աղբիւրի պէս սկսան վազել աչքերէս, խեղճ կնիկս վիզս պլուելով ինքն ալ արցունք կը թափէր, նոյնպէս նաև մէկ հատիկ մնացած տղաս: Ահ չեմ կրնար պատմել այս աղիողորմ և տառապագին վիճակս: Իմ խեղճութիւններս որ երբեմն թէպէտ անհանգստութիւն կը պատճառէին ինձի իմ որդւոցս ապագան մտածելով, բայց ի վերայ այսր ամենայնի անոնք՝ մի միայն մխիթարութիւնս էին, տեսնալով անոնց յառաջադիմութիւնը յամենայնի, որով սրտիս մէջ ամբարտաւանութիւն մը կ'զգայի, և միանգամայն անոնց հանդերձեալ կենաց երջանկութեանը յոյս մը ունէի, բայց հիմա կը տեսնամ որ գեղեցիկ պալատին տիրոջ դէպքը բոլորովին ճշգրտեցաւ անոնց վրայ:

Օգոստինոս. — Ի՞նչ դէպք է այս մարդուն գլխէն անցածը:

Նաւապետը. — Հարուստ մարդուն մէկը գեղեցիկ պալատ մը շինել տուեր էր և շատ սիրուն ալ զարդարեր: Իր ունայնամտութեամբը գոհ կ'ըլլար ցուցընելով միայն իրեն պէս ունայնամիտներուն այս շէնքին ներքին կարգաւորութիւնը և գեղեցկութիւնը:

Ճանապարհորդին մէկը այս տանը գեղեցկութեանը վրայ զմայլած, ըսաւ որ մեծ պակասութիւն մը կը գտնար անոր վրայ: Տան տէրը վրայ հասնելով հարցուց թէ ի՞նչ է արդեօք այս պակասութիւնը, որուն պա-

տասխանեց ճանապարհորդը թէ « Դուռը պատով գոցելու մոռցեր են, ուսկից մահը կրնայ ներս մտնալ: » Բայց ահա կը շարունակեմ իմ պատմութիւնս:

Այս աղիողորմ դիպուածէն ետքը՝ փոխանակ ամենակարող Աստուծոյն կամացը յանձնելու զիս, տժգոհութիւն և տրտունջ ցրցուցի իրեն դէմ, իմ Աստուծոյս դէմ իրաւունք կ'ուզէի, ես թշուառ մեղաւորս և փոշիս՝ ուզեցի զինքը դատել: Ի՛նչ աստիճանի էր իմ յիմարութիւնս և ի՛նչ աստիճանի իր երկայնամտութիւնը իմ վրաս: Քանի կ'երթայի աւելի կը մաղձոտէի և կը տարակուսէի Աստուծոյ արդարութեանը վերայ: Կնիկս ինծմէ աւելի հնազանդ ըլլալով Աստուծոյ կամացը՝ զիս մխիթարել կուզէր, բայց ամեն բան ընդունայն էր և Աստուծոյ իմաստութիւնը ուզեց աւելի ևս զիս պատուհասել, իմ բարձրամտութիւնս բոլորովին ջախջախելու համար: Ասոր վրայ, քիչ ատենէն կիինս հիւանդացաւ և մեռաւ, ու քանի մը շաբաթէն ետքը երրորդ որդիս ալ մեռաւ տարափոխիկ հիւանդութենէ մը, ուսկից շատ մարդիկ ալ մեռան: Թերևս կարծէք զուք որ այս ամեն ձախորդութիւնները վրաս փոփոխութիւն մը կամ ազդեցութիւն մը ըրած ըլլան, այլ չէ ամենևին. և որ գէշն է՝ օրէ օր աւելի անզգայ կ'ըլլայի, կուզէի Աստուծոյս դէմ դառնալ, և իմ այն զառանցանացս ժամանակ, մոռցայ որ ես պարտականութիւն մը ունիմ ամենակարող Էակի մը:

Ահա տունք հօրեղբօրս անէծքն են, կ'ըսէի միշտ ես ինծի, բայց սիրաս երթալով կը խստանար և Աստուծոյ ճամբէն օրէ օր կը հեռանայի, և կ'ըսէի ինքիրենս. Ուրեմն թէ որ ես անիծուած եմ գէթ այս ճակատագրիս արժանի ըլլամ: Ո՛վ կրնայ կարծել, որ մարդս՝ փոքրիկ արարած մը, ու երկրիս վրայ որդ մը՝ կարենայ այնչափ ամբարտաւանիւ Աստուծոյ դէմ, թէ որ մէկը զայն անձամբ փորձած չըլլայ: Ինծմէ փարատելու և հեռացնելու համար այս նեղացուցիչ մտածութիւնները, որ զիս կը խռովէին իմ միայնութեանս մէջ, սկսայ իմ տոջի ախտերուս ձեռք զարնել, որոնց գէշ հետեանքը իմանալով, թողած էի. բոլոր օրերս թեթև ու անհամեստ մարդկանց ընկերութեամբը կ'անցընէի, և ականջներս կը գոցէի այն մարդկանց խրատներուն, որոնք իմ աղէկութիւնս կ'ուզէին: Իմ բարեկամներս որոնք իմ դժբաղդութեանս մասնակից եղան՝ գթացին վրաս և ամեն ջանք ըրին՝ զիս ես դարձնելու՝ բայց ես զանոնք մերժեցի և կը ծաղրէի իրենց բարի խրատները, և դէմ ալ կը խօսէի իրենց թախանձանացը ըսելով. Ի՞նչ բանի կը ծառայէ զիս ուղղելը, մինչդեռ ես անիծեալ եմ:

Ուրիշ բան չէր, բայց եթէ յուսահատութիւնը՝ որ ինծի այսպէս խօսել կու տար: Մյսպիսի կեանք մը չէր կրնար երկայն տևել՝ ևս առաւել որ վերջի տարիները շատ պարտք ալ ըրի: Տեսնելով որ անկարգ կեանք մը

կ'անցնեմ, և թէ իմ վիճակս երթալով կը գէշնար, պարտաատէրներս կը զայրանային վրաս և կ'ուզէին որ վճարեմ պարտքերս: Բայց իրենց շակէ շխտակ ըսի որ չեմ կրնար վճարել իրենց, անով զիս դատաստանի կտնչելով նաևս, ատենս, և ինչ բան որ ունէի ամենն ալ ծախեցին. բայց անոնք ալ բաւական չեղան իմ պարտքերս վճարելու. մարդ մը չի կրցայ գտնալ որ ինծի երաշխաւոր ըլլայ՝ որով և ստիպուեցայ բանտ մտնալ:

Թշուառութիւնս ալ կատարեալ եղաւ. հօրեկրօքս անէծքն է այս, ըսի ես ինծի, և որ և իցէ զբողմունքներով չէի կրնար հեռացնել զայն մտքէս:

Անկողնիս վրայ ընկայ, դառն և մթին ցնորքերով պաշարուած, և ժամ մը առաջ մեռնիլ կը փափաքէի: Եթէ իմ ուղղութեանս վրայ ինչուան ան սաւին փոյթ ունեցած ըլլայի, և յոյսս Աստուծոյ վրայ դրած, անչուշտ այս սեռակ դառն Թշուառութիւնք չէին պաշարեր զիս, և որ գէշն էր ամենեին չէի ուզեր Աստուծոյ առջևը խոնարհիլ, և միշտ կը հակառակէի յամառութեամբ ամենայն յորդորանաց՝ և չէի զղար: Նրբեմն կ'ուզէի աղօթել և զԱստուած ինծի օգնութեան կանչել, բայց իմ սիրտս խոնարհ չըլլալով կրնաք մտածել թէ իմ աղօթքս ալ ինչպէս կըլլար, որով և իմ գլուխս ալ Ղամեքայ որդւոցը գէպքը պատահեցաւ:

Ինչ բան, ըսաւ ժողովրդապետը:

— Ղամեքայ որդիքը, շեմ գիտեր սուրբ
գրոց որ գրքին մէջ կը յիշուի, Յորաղ և
Թովէլ, որոնցմէ մէկը երաժշտութեան ա-
րուեստը գտաւ, իսկ միւսը դարբնութեանը :
Երբոր այս երկու եղբայրները մէկտեղ կը
բնակէին, պէտք էր որ մեծ աղաղակ և շփո-
թութիւն ըլլար նոյն տանը մէջ, վասն զի
Յորաղ վերի դատիկոնը նստած կ'երգէր և
Թովէլ վարի յարկը՝ սալը կը դարնէր, վերը
երգեհոնին համար փուք մը ունէր, և վարը
ուրիշ մը դարբնոցին համար. հոն սրինգնե-
րու և եղեգներու ձայնը կը լսուէր, հոս ու-
րագներու հարուածները և խարտոցներու
շառաչը : Ահա այս բնակարանիս կը նմանի
անգեղջ մեղաւորն այ երբ աղօթք կ'ընէ :

Առաջին յարկին մէջ որ է ըսել իր բեր-
նէն Աստուծոյ գոհութիւն կը լսուի, ստորին
յարկին մէջ, որ է ըսել իր սրտին մէջ՝ մեղքը
կը ծփի իր անձկութիւններովը. վերը ամե-
նակարող Աստուածը կը պաշտեն, վարը Բե-
լիարայ կը գոհեն. լեզուն Մարիամայ հետ
կ'երգէ և սիրտը Հերովդիադայ հետ կը
կաքսուէ :

Օգոստիկոս. — Արեմն երգեհոնը երա-
ժշտութեան հետ մէկտեղ հնարուած է :

Ժողովրդապետը. — Այնպէս յայտնի չէ,
բայց անիկա վնաս մը չի ստար, վասն զի
նմանութիւնը դարձեալ կը յարմարի :

Կառապետը. — Չեմ գիտեր ինչ կ'ըլլայի
եթէ բանտին մէջ ես ինձի մնայի. մարդիկ
մոռցան զիս, բայց ոչ նոյնպէս և Աստուած,

ինչպէս որ չի մոռցաւ զՅովսէփ՝ որ անմե-
ղութեամբ բանա դրուած էր: Այն ժողովրդ-
գապետը որուն տունը իմ հօրեղբորս նման
պատկերը տեսած էի լսելով որ իմ վրայօքս
կը խօսուի, յիշեց մէկէն ինչ որ ես իրեն
պատմած էի. և ի գութ շարժելով իմ խա-
ւարային բանտիս մէջի քաշած նեղութիւն-
ներուս վրայ, ինծի տեսութեան եկաւ: Զար-
հուրեցայ զինքը տեսնալովս, և ըսի իրեն.
Կը տեսնաւ որ իրաւունք ունիմ, նայէ ո՛ւր
բերաւ զիս հօրեղբորս անէծքը: — Ոչ,
պատասխանեց ժողովրդապետը, ասիկայ հօ-
րեղբորդ անէծքը չէ, հապա քու մեղացդ
պատիժը. եթէ գու ճշմարտապէս Աստուծոյ
դարձած ըլլայիր՝ այն անէծքը անշուշտ քեզ-
մէ կը վերցուէր, և օրհնութեան կը փոխուէր.
Սակայն ես չի համոզուեցայ իրեն ըսածին,
և կը պնդէի որ Աստուած զիս զժրագդ ըլ-
լալու սահմանած էր, և ամենեին բան մը
զիս չէր կրնար ազատել ասկէ:

Զգուշացիր, կրկնեց ժողովրդապետը, ա-
ւելի չծանրացնելու քու վիճակդ. ինչուան
հիմա բաւական փորձեցիր որ անօգուտ է
Աստուծոյ կամացը հակառակիլ որուն ձեռքն
է ամենայն ինչ. ըսէ ինծի, արդեօք փորձած
ես սխալմունքներդ ճանչնալով աղաչել զԱս-
տուած որ քեզի ողորմի: Ոչ, ըսի, ամենեին
չեմ փորձած և երբէք պիտի չի փորձեմ՝
վասն զի այնպիսի անիրաւ անէծքի մը տակ
ընկած եմ որուն կէսին իսկ որժանի չեմ
եղած, մինչպէս կը տեսնամ որ ինծմէ աւելի

մեզաւոր և անհոգ մարգկանց շատին բանը
աւելի յաջող կ'երթայ: — Այս խնդրոյց
նկատմամբ կ'ուզեմ պատասխանել քեզի, ը-
սաւ ինծի ժողովրդապետը: Չէ՞ս մի լսած և
կարդացած որ մահացու մեղք մըն ալ բա-
ւական է զմարդ գժոխք տանելու, ի՞նչպէս
ուրեմն կրնաս ըսել որ քու դժբաղդութեանդ
կէսին անգամ արժանի կղած չըլլաս: Իսկ
այն մարդիկը որ այս աշխարհիս վրայ իրենց
մեղաց պատիժը չեն քաշեր, ամենեւին պատ-
ճառ մը չունինք զանոնք երջանիկ համարե-
լու, վասն զի այնպիսեաց պատիժը յաւի-
տենականութեան պահուած է, որով անոնք
աւելի ցաւակցութեան արժանի են. բայց
կը տեսնամ որ Աստուած քու վրաց առան-
ձին սէր ունենալով՝ չուզեր զքեզ թողուլ որ
կորսուիս, և ահա այն է պատճառը որ յան-
ցանքներուդ պատուհասը անմիջապէս մէկէն
կը խրկէ վրաց: Ուրեմն իր կողմանէ ամէն
միջոց գործածեր է զքեզ պղծումի և ուզողու-
թեան բիրելու: Բաժներուն ամենեւին չի
կրցայ հաւատասլ, սակայն այսու ամենայնիւ
չէի ալ գազրեր իրեն հետ վիճարանելու:
Ան ատեն խեղճը նոր կտակարան մը ձեռքս
տալով ազաչեց որ ուշադրութեամբ Հոով-
մայեցւոց թղթերը կարգամ մինչև որ քիչ
մը գործողութեան համար դուրս երթայ,
խաւք տալով որ քիչ ատենէն կը գառնայ:
Երբոր ինքը գնաց, սկսայ մտածել թէ ինչ
ընեմ այս դիրքը գոր շատ անգամ կարդա-
ցած էի վարժարանը, վասն զի կը տեսնայի

որ նոր փոփոխութիւն մը չի կայ մէջը . և յիրաւի յնաւ փոփոխութիւն չի կար վրան և առ էր անոր արժէքը որ անփոփոխ կը մնայ Աստուծոյ պէս: Բայց ես փոխուած էի, և շատ ծուլութեամբ անցուցեր էի աշակերտութեան ժամանակս և միտքս այնպէս զգայի փոխուած էր որ շատ անգամ ես ինծի կը հարցնէի, երբոր այս գիրքը ակամայ կամօք առի և սկսայ կարդալ Հոովմայեցւոց թղթերը, թէ ասիկայ արգեօք նոյն գիրքն էր, ինչ որ Գիւպէնկ եղած ատենս կարդացեր էի: Ինծի կերեար որ զայն առաջ տանելով ուրիշ տարբեր բան պիտի գտնամ: Երբ այն տեղը հասայ ուր որ կ'ըսէր թէ « Ամենայն բերանք խցցին և ամենայն աշխարհ պարտական լիցի Աստուծոյ » զարհուրեցայ, և 32—36 տուններն ալ կարդալով իմացայ Աստուծոյ մեծփայելութիւնը . միանգամայն նոյն միջոցին մխիթարական լոյս մը ծագեցաւ սրտիս մէջ և բարձրաձայն գոչելով ըսի . Ո՛վ աստուած իմ, եթէ ամենուն վրայ կը գթաս, գթա նաև իմ վրաս ալ: Կամաց կամաց այն շնորհաց լոյսը տարածուեցաւ վրաս և բոլոր սիրտս զբաւեց, և արցունքներս գետի պէս սկսան վազել ինչուան որ ժողովրդապետը տուն դարձաւ, որ ներս մտնալով . Օրհնեալ ըլլայ Աստուած, կանչից բարձրաձայն, տեսնալով զիս որ կուլամ գառնապէս . ահա վերջապէս Աստուած ողորմեցաւ քեզի: Դառն հեծեծանքներէս՝ արգիլուեցայ իրեն պատասխանելու, և ինծի

հետ գետին չողելով այնպիսի սրտաշարժ և
եռանդնալից կերպով աղօթեց, որ իմ սիրտս
ալ վառեց ջերմեռանդութեամբ, և բոլոր
սրտովս սկսայ պազատիլ առ Աստուած: Ա-
նօգուտ չեղաւ այս աղօթքս, որովհետեւ երկ-
նային անդորրութիւն մը գրաւեց սիրտս՝ և
անկէ ետքը հաւատացի որ փրկչին մահը առ
Աստուած մերձենալու ճամբան՝ ինծի համար
ալ դիւրացուցած էր և թէ ես ալ ուրիշ
մեղաւորներու պէս կրնամ Աստուծմէ օգնու-
թիւն գտնալու: Անկէ ետքը ամեն բանս
աղէկ գնաց, ճանչցայ խոնարհութեամբ որ
ես մեղաւոր էի և Աստուած արդար էր, և
զիս ինչուան այն օրը իր անհուն երկայ-
նամտութեամբը պահպանած էր առանց որոյ
չատոնց կորսուած կ'ըլլայի, և իր անսահման
սիրոյն յայտնի ցոյցերն էին այն ամենայն
չարիքները որ իմ գլխէս անցան՝ և թէ Աս-
տուած մեղաւորին մահը չուզեր՝ այլ անոր
դարձը: Ասկէ ետքը Աստուծոյ խօսքը ինծի
քաղցր սփոփանք մըն էր և բոլոր ժամա-
նակս այս պատուական գիրքը կարգալով
կ'անցնէի: Ժողովրդապետը ինծի ուզեց ու-
րիշ հոգևոր գրքեր ալ բերել, բայց ես շնոր-
հակալ եղայ, գիրք գրոցը միայն դեռ կը
պահեմ, այսինքն այն աւետարանը որ այն
աստուածարեալ մարդը ինծի տուաւ: Շատ
արցունք թափեցի այն գրքին վրայ, որոնք
ցօղի պէս կ'իջնային աչքերէս: Իմ հոգւոյս
փրկութեանը վրայ խնամք ունենալէն ետքը
ազնիւ ժողովրդապետը ուզեց նաև իմ ժա-

մանակաւոր գործերս կարգի դնել: Ես ալ շնորհակալ եղայ իր այսպիսի բարեարտութեանը, նոյնպէս նաև իր բազմաթիւ բարեկամացը՝ որ ազաաութիւնս նորէն կրցայ ձեռք ձգել, որով և վայելուչ գործ մը կը փնտռէի որով կարենամ լաւ ծառայել Աստուծոյ զոր չի գտայ ծովու վրայ, ինչուան որ զիս խաւարային բանտը տարաւ ուր որ սիրով նորէն հաշտուեցայ Աստուծոյ հետ:

Իրաւցնէ յաջողեցաւ բազդս բարի քրիստոնեայնեկրու միջնորդութեամբը, որոնք ինծի բաւականն ստակ փոխ տուին. ձկնորսի տնակ մը գնեցի ծովու մը եզերքը, ուր որ ամառք ձուկ որսալով, իսկ ձմեռը կտրովագործութեամբ ատենս կանցունէի: Փողովըրգապետին աղաչեցի որ ժողովրդապետ հօրեղբօրս կենդանագիրը ինծի շնորհէ՝ օրպէս զի միշտ յիշեցնէ ինծի ոչն բարեգործութիւնը՝ որ Աստուած ըլլաւ ինծի: Այս պատկերքը առնելով տնակիս մէջ կախեցի:

Թ

Նաւաստիկն

Աստուծոյ օրհնութիւնը կ'օգնէր ինծի այս նոր արուեստիս մէջ, վասն զի Պետրոս առաքելոյն պէս Աստուծոյ վստահանալով՝ ուռկաններս ծովը կը ձգէի, և միշտ լեցուն կը քաշէի՝ այնպէս որ քիչ ատենէն վճարեցի այն պարտքերս զոր այս ձկնորսի հիւզս գնելու համար փոխ առած էի: Այս մարդիկներէն մէկը որ այս տնակին տէրն էր՝ հարուստ վաճառական մըն էր՝ որ ծովու վրայ շատ նաւեր ունէր: Ինչպէս կ'ըլլայ իր նաւապետներէն մէկը կը մեռնի, և գիտնալով որ ես վարպետ նաւաստի մըն էի, իր նաւուն վերակացու դրաւ զիս: Իրաւ գթութեամբ ձգեցի իմ միայնութիւնս՝ որուն վարժեր էի սուրբ գրքեր կարդալով և բարեպաշտ մտածութիւններ ընելով, սուկայն շէի կրնար այս առաջարկութիւնը մերժել որ անկարծելի կերպով մը դիմացս ելաւ. մէկէն գացի ժողովրդապետը գտնալու որուն այնքան երաստագէտ էի, և որուն վրայ կարգէ դուքս վստահութիւն ունէի: Ինծի հարցուց թէ արգեօք սիրոս լաւ մը քննած եմ, և թէ այս առաջարկութիւնս, արգեօք սրտիս մէջ անմաքուր մտածութիւն մը չէ՞ մի ծնուցեր, և զինքը ապահովցուցի որ առ ժամս այնպիսի մտածութիւններէ ազատ կը

գտնայի ինքզինքս, և ոչ եթէ ես ինծի վստահացած, այլ Աստուծոյ շնորհացը ապաւինելով կը յուսայի, որ անով միջոց մը ունենամ պարտքերս վճարելու, որոնք դեռ չէի կրցած բոլորովին ջնջել:

Այս քու մտածութիւնդ պարսաւելի չէ, ըսաւ ժողովրդապետը, և շատ գոհ եմ քու այս դիտաւորութեանդ վրայ, և քեզմէ որ այս բանս լսեցի, կրնամ ես ալ քեզի ըսել հիմայ թէ այն վաճառականին ես առաջարկեցի զքեզ նաւապետ առնելու իր նաւուն, վստահ ըլլալով քու սրտիդ վրայ Աստուածային շնորհացը ըրած ազդեցութեանցը: Կարևոր հմտութիւն և յաջողութիւն ունիս այս բանիս, ուստի աղէկ է որ օգտակար ըլլաս անով ուրիշներուն ալ: Ես ալ բոլորովին ապահովցած այս խօսքերէս՝ իմ առաջին պատրաստութիւնքս եղան՝ երթալ և անգամ մըն ալ մօտենալ ապաշխարութեան և հաղորդութեան խորհրդոյն. սակէց ետքը իմ պզտի հիւզս աղքատ ձկնորսի մը վարձու տուած ըլլալով՝ հօրեղբօրս կենդանագիրը առնելով իմ բնակարանս կախեցի, և աստուծոյ շնորհքովը առաջաստներս բացած ճամբայ ելայ: Բայց պատմութիւնս լմնցնելէս առաջ կը փոփաքիմ որ ինծի երգէք, սիրելի տղաքս, ճշմարիտ սիրոյն երգը:

Այն ատեն տղաքը սկսան երգել այսպէս:

« Օր մը հաւ մը տեսայ, որ թևերուն տակ ձագերու խումբ մը ունէր, և ապաստանարան մը կը բնտուէր վտանգներու դէմ. ար-

դեօք ով է որ կ'ազդէ անոր այս մեծ գութը, ըսի ինքիբենս:

» Օր մը հաւալուաի մը պատմութիւնը լսեցի որ թոքերէն արիւն կը հանէր՝ իր ձագերը կերակրելու համար: Ամօթ չէ՞ մի ըսի այս բանս քրիստոնեայ ժողովրդեան մը:

» Օր մը աղջիկ մը տեսայ որ իր թևերուն վրայ գառնուկ մը առած ամեն խնամք կ'ընէր անոր, և գրկած մը տաքցնէր զանիկա, զարմացայ՝ տեսնալով այս աղջկան գութը:

» Տեսայ մայրական գութը, ինչպէս կնիկ մը իր որդիքը կը խնամէ և ինչպէս նաև մեռնելէն ետքը զայն կը գրկէ. խորհրդածեցի որ այն էր ճշմարտագոյն սէրը:

» Բայց երբոր միտքս անոր գնաց՝ որուն անուամբը մկրտուած եմ՝ որ երկնային աթոռէն՝ ի խաչն սուրբ խոնարհեցաւ և իր արեամբը զմեզ գնեց՝ իմ սիրտս և բերանս փառաւորեցին Քրիստոսի սէրը »:

Նաւապետը. Շատ աղէկ է տղաքս, շնորհակալ եմ ձեզի՝ և կ'ուզեմ նորէն շարունակել իմ պատմութիւնս: Այս անգամ դէպ ի միջերկրական ծովը ուղղեցի նաւս, ուր այլ և այլ նաւահանգիստներէ շատ մը վաճառք գնեցի և ծախեցի: Շատ մը վաճառականի նաւերու հետ Գորսիգա կղզիէն բաժնուեցանք, բայց իմ նաւս ամենէն աւելի առաջատուարուում ըլլալով անոնցմէ շատ առաջ անցաւ: Օղը շատ գեղեցիկ էր որով և շատ գործողութիւններ գլուխ հանե-

ցի ասողն աւ զուարթ: Նաւաստիներուն մէկը տեսաւ յանկարծ հեռուէն նաւ մը՝ զոր գիտելով, վերջապէս իմացանք որ ելուզակներու նաւ մըն է եզեր: Չէինք կրնար անոր գիմացէն փախչիլ և անանկով պետզ աւելի վտանգի մէջ կը ձգէինք, ուստի բոլոր նաւաստիք 17 հոգի և եօթն տը ճանապարհորդք յանձն առին ինչուան արեան վերջի կաթիլներն թափելու, քան թէ անոնց ձեռքը գեթ մատնուելու: Մեկէն սկսանք պատրաստուիլ ամեն կարևոր հնարքը ընելով, և թնդանօթները պատրաստեցինք նաւուն եզերքը: Երբոր ելուզակաց նաւը իմացաւ որ մենք պատրաստուած էինք իրենց գէմ դնելու, իրենք ալ իրենց յարձակման պատրաստութիւնները քրին՝ ես առաւել երբ տեսան որ մեր առագաստները վար կ'իջկցնենք: Մեր առաջին գնտակը թշնամեաց նաւապետին գլուխը շախմատեց՝ և որովհետև իր նաւաստիքը բազմաթիւ չէին, մեր յարձակմունքը այնպիսի շփոթութիւն մը ձգեց մէջերնին որ մինք գիւրութեամբ ժանիքներով իրենց նաւը բռնելով՝ նուաճեցինք իրենց նաւաստիքը՝ որանք 13 հոգի էին: Ասոնք նախընթաց գիշերը շառ մարգ զորանցուցեր էին Ամերիկացի նաւու մը հետ կռուելու ատեն, բայց բարեբաղդաբար անոր ձեռքէն կրցեր են փախչիլ: Ելուզակաց նաւուն մէջի եզած մարդիկը ձկնորսուար հանեցի որոնք հոն պատերազմական ատենի առջև քննուելով գատուպարտուեցան: Իսկ նաւը՝ որ ազէկ վի-

ճակի մէջ էր Անգղիա սարի որուն մէջը հարուստ գանձեր գտանք, գորոնք եղուզակները կոյուզատձ էին ասդիէն ադիէն, և քանի մը նաւաստիներ և ճամբորդներ գերի բռնած, նաւուն մէջը խորը ձգուած էին որոնց անձամբ իմացուցի թէ ոչ ազատ են: Ի՛նչպէս յանկարծակիի եկայ, երբ իրենց մէջ տեսայ իմ հին Գորպէզ բարեկամս, Հոլանտացի նաւուն բժիշկը, որն որ զիս մահուանէ ազատեր էր Ռոզէրտամի մէջ: Մեծ երբաւ իրաւցնէ իր ուրախութիւնն ալ և զարմանքը՝ երբոր իմացաւ որ նաւուն նաւուպետը իր այն բարեկամն էր՝ որուն համար կը կարծէր թէ բոլոր կեանքը սրիկայութեամբ պիտի անցնէր:

Միատեղ խցիկ մը նստելով բոլոր զխէճ անցածները պատմեցի իրեն. ինքն ալ փոխադարձ իրենինը ինծի պատմեց որ իմինկա հաւատար բազմավէպ էր, բայս ոչ ոյնպէս տաժանելի:

Տխրութեամբ իմացայ, թէ իմ բարեկամս, որ իր հօրը տունը քրիստոնէական կրթութիւն ւսուած էր և բարեպաշտ ազգականներ ունէր, աւելի սաստիկ ալէկոծութիւն մը ունեցեր էր քան ինչ որ եօ Ափրիկէի ծովափունքը, կ'ուզեմ ըսել հաւատոյ ալեկոծութիւն մը: Ափշեցուց զիս, երբ լտեցի որ ինքը և ոչ Աստուծոյ գոյութեանը կը հաւատայ, բայց կ'ըսէր նաեւ թէ հաւատաւ չկորենալուն համար ալ շատ կը նեղուէր, բայց թէ բնութեան վրայ ըրած տեսութիւնքը:

իրեն այնպէս մը կ'երեցնէին որ աշխարհս պարզ մեքենայ մըն էր և թէ չկայ Արարիչ մը: Ա՛հ սիրելի բարեկամ, ըսի ես իրեն, թէ որ բնութիւնը մանրամասնաբար քննած ըլլայիր ամեն տեղ գտած կ'ըլլայիր Աստուծոյ ամենակարողին հետքը, վասն զի երկիրս իր բարութեամբքը լեցուն է: — Ատեն մը ես ալ այնպէս կը մտածէի, ըսաւ Գորպէզ, բայց անոնք տղայութեանս գաղափարներն էին: Քանի որ աշխարհիս գործոց մէջ մտայ և իմ գաղափարներս և ակնկալութիւններս ընդարձակեցան և անդրադարձութիւնքս ալ բացուեցան, սկսայ աշխարհքս բալորովին ուրիշ երևութով մը տեսնալ: — Անտարակոյս սխալ երևոյթներով, ըսի ես իրեն. և ինչո՞ւ համար տղայութեանդ հաւատքը չունիս: Քրիստոս տէրն մեր ըսաւ: « Եթէ ոչ դարձչիք և լինիչիք իբրև զմանկտի, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից »: Ես ալ այս փրկական հաւատքը ատեն մը կորսնցուցած էի որոնց վրայ շատ արատաւաբ թափելէն ետքը նորէն ստացայ, բայց փառք Աստուծոյ որ հիմա հաստատուն եմ անոնց վրայ, և բնաւ պիտի չի թողում զանոնք: Գորպէզը ճամբորդութիւն մը ըրած ըլլալով Եգիպտոս, արարերէն կը հասկնար: Իր սղատութեան երկրորդ օրը նստած էինք մինակ իմ խցիկս, ես միշտ Աստուծոյ էութեանը վրայ կը խօսէի՝ զոր ինքը շարունակ կ'ուրանար, յանկարծ ձայն մը լսեցինք որ կ'սղաղակէր « Ալ-լահազպէր » որ ըսել է Աստուած մեծ է:

Գորպէզ զարհուրեցաւ այս ձայնէն, ինչպէս տղայ մը՝ որ գողութիւն ընելու ժամանակ կը բռնուի, կը կարծէր որ մարդ ալ չէր հասկընար արարերէն նաւուն մէջ, և թէ մենք մինակ էինք խցին մէջ, և քանի որ չորս դին կը նայէր թէ ուսկից կրնար այս ձայնը գալ: Գորպէզ տեսաւ որ թութակ մը վաճառակի մը մէջէն կ'ըսէր այս խօսքերս:

Այս թութակը կոտտանդնուպօլիս մէկէ մը գներ էի, որուն սորվեցուցած էին ըսելու այս խօսքերս: « Ալլահազպէր » . և որովհետև այն ծախողին քանի մը ծառայութիւններ ըրած էի, անոր համար ոչինչ գնով մը ինծի տուաւ զանիկա:

Տես բարեկամ, ըսի ես իրեն, որ բնութիւնն անգամ, որուն վրայ ըրած դիտողութիւններովդ Աստուծոյ էութիւնը կ'ուրանաս, անիկա ալ Աստուծոյ իմաստութիւնը կը քարոզէ: Ես հաւասարապէս իրեն ցտամանը և սիրոյն փորձը ունեցեր եմ: Մի անագաներ դու ալ իրեն մեծութիւնը ճանչնալու, գքեզ բարոյովին չէ թշուառացուցած: Այն խօսքերուս վրայ, այլայլած երկայնատեն, պատասխան չի կրցաւ տալ. իր երեսին վրայ նկարուած սոսկումը բարի նշան մը երևցաւ ինծի. իմացայ որ խղճմտանքը բոլորովին անզգայ չէ եղեր: Բոլոր գիշերը բրեն համար եռանդեամբ կ'աղօթէի, ինչուան որ փրկիչն յօժարեցաւ վառելու իր սրտին մէջ երիտասարդութեան ժամանակ

ունեցած քարի տպաւորութիւնքը, տալով
իրեն իր բարեացը բարձրագոյն շնորհքը:
Երկրորդ օրը նախաճաշի չեփաւ և երբոր
կերակուրի իջաւ, գոյնը նետած ու գէմքը
բոլորովին փոխուած էր. սեղանին վրայ ամե-
նեին չի խօսեցաւ: Իրիկուան ալ նոյնպէս
էր, իրեք օր այսպէս շարունակեց որով ես
ալ չուզեցի իր մատածութիւնքը շփոթել. վեր-
ջապէս չորրորդ օրը ինծմէ Աստուածաշունչ
գիրքը ուզեց: Բոլոր ճամբորդութեանը ժա-
մանակ այս աստուածեղէն գիրքը կարգալու-
զբաղեցաւ, և երբոր Անգղիա հասանք ինծի
աղաչեց որ գինքը ան քահանային տունը
տանիմ, որ իմ վրաս Սամարացոյն գութը
ունեցեր էր: Շատ մը տարակոյսներ ունէր
որոնց վրայ կը փափաքէր լուսաւորուիլ, այս
տարակոյսները շուտ մը ցըրուեցան, և կեր-
պարանքը մէկէն աստուածային շնորհքով
լեցուեցաւ՝ վասն զի կրկին գերութենէ մը
ազատած էր, վասն զի իրաւամբ կրնար մէ-
կը ըսել իրեն այն խօսքը, ինչ որ հին երգի
մը մէջ գտուած էեթէ ծովակէնք կը յափշտա-
կեն մարդկանց մարմինը, բուսական է որ
Քրիստոս գերեաց հոգիները ազատէ. հարկ
չիկայ ըսելու որ անկէ ետքը ես աւելի եր-
ջանիկ վիճակի մը մէջ գտնուելով, ինծի
Ռոզերտամ՝ ըրած բարեացը՝ հարիւրապա-
տիկ իրեն հատուցի: Անգղիայ մէջ հաստա-
տուեցաւ, և քանի մը տարիէն ետքը Աս-
տուծոյ շնորհացը մէջ մեռաւ՝ որուն յիշա-
տակը ինծի մեծապէս քաղցր է:

Ժ

Դարձը

Համբորդութեանս դէպքը, ինծի սերտ բարեկամութեան պատճառ եղաւ նաւուն տիրոջը հետ, նաև մեծ գումարի մը տէր ըլլալու, որով կրցայ վճարել առջի ըրած բոլոր պարտքերս ինչուան վերջի նաքարակիտը, որն որ ինծի մեծ մխիթարութեան պատճառ եղաւ. բայց որովհետև հանգիստ ապրելու համար բաւական ստակ չունէի, միտքս դրի որ նորէն ծովու վրայ համբորդութիւն մը ընեմ, թէպէտ և դժուարին ալ ըլլայ: Բանտին մէջ այն երկնային խոստմունքը ունենալէս ի վեր, որ Աստուած յանցանացս կը ներէ, ապահով էի յաւիտենական փրկութեանս վրայ և կը յուսայի որ Աստուած զիս իր պաշտպանութեանը տակ առած էր: Բայց դեռ չէի կրնար բոլորովին հեռացնել մտքէս հօրեղբօրս անիծից երկիւղը: Կը մըտածէի Աստուծոյ չորրորդ պատուիրանը, որուն կատարուելէն կը կախուին առ ժամանակեայ երջանկութիւնքը և թշուառութիւնքը: Ով որ կը պատուէ իր ծնողքը երջանիկ կ'ըլլայ՝ և երկայն կ'ապրի այս աշխարհիս վրայ: Բայց ասիկա չի բաւեր տակաւին ապահովելու իր հանդերձեալ երջանկութիւնը, վասն զի ով որ կ'ուզէ իր յաւիտենական փրկութիւնը, պէտք է որ պատուէ նաև

մանակաւոր գործերս կարգի դնել: Ես ալ շնորհակալ եղայ իր այսպիսի բարեարտութեանը, նոյնպէս նաև իր բազմաթիւ բարեկամացը՝ որ ազատութիւնս նորէն կրցայ ձեռք ձգել, որով և վայելուչ գործ մը կը փնտռէի որով կարենամ ըստ ծառայել Աստուծոյ զոր չի գտայ ծովու վրայ, ինչուան որ զիս խաւարային բանտը տարաւ ուր որ սիրով նորէն հաշտուեցայ Աստուծոյ հետ:

Իրաւցնէ յաջողեցաւ բազդս բարի քրիստոնեայններու միջնորդութեամբը, որոնք ինծի բաւական ստակ փոխ տուին. ձկնորսի տնակ մը գնեցի ծովու մը եզերքը, ուր որ ամառք ձուկ որսալով, իսկ ձմեռը կողովագործութեամբ ատենս կանցունէի: Փողովըրգապետին աղաչեցի որ ժողովրդապետ հօրեղբօրս կենդանագիրը ինծի շնորհէ՝ օրպէս զի միշտ յիշեցնէ ինծի այն բարեգործութիւնը՝ որ Աստուած ըրաւ ինծի: Այս պատկերը առնելով տնակիս մէջ կախեցի:



Նաւաստիւն

Աստուծոյ օրհնութիւնը կ'օգնէր ինծի այս նոր արուեստիս մէջ, վասն զի Պետրոս առաքելոյն պէս Աստուծոյ վաստահանալով՝ ուռականներս ծովը կը ձգէի, և միշտ լեցուն կը քաշէի՝ այնպէս որ քիչ ատենէն վճարեցի այն պարտքերս զոր այս ձկնորսի հիւզս գնելու համար փոխ առած էի: Այս մարդիկներէն մէկը որ այս տնակին տէրն էր՝ հարուստ վաճառական մըն էր՝ որ ծովու վրայ շատ նաւեր ունէր: Ինչպէս կ'ըլլայ իր նաւապետներէն մէկը կը մեռնի, և գիտնալով որ ես վարպետ նաւաստի մըն էի, իր նաւուն վերակացու դրաւ զիս: Իրաւ գթուարութեամբ ձգեցի իմ միայնութիւնս՝ որուն վարժեր էի սուրբ գրքեր կարդալով և բարեպաշտ մտածութիւններ ընելով, սակայն չէի կրնար այս առաջարկութիւնը մերժել որ անկարծելի կերպով մը դիմացս ելաւ. մէկէն գացի ժողովրդապետը գտնալու որուն այնքան երախտագէտ էի, և որուն վրայ կարգէ դուրս վաստահութիւն ունէի: Ինծի հարցուց թէ արգեօք սիրոս լաւ մը քննած եմ, և թէ այս առաջարկութիւնս, արգեօք արտիս մէջ անմաքուր մտածութիւն մը չ'է մի ծնուցեր, և զինքը ապահովցուցի որ առ ժամս այնպիսի մտածութիւններէ ազատ կը

գտնայի ինքզինքս, և ոչ եթէ ես ինծի վատահացած, այլ Աստուծոյ շնորհացը ապաւինելով կը յուսայի, որ անով միջոց մը ունենամ պարտքերս վճարելու, որոնք դեռ չէի կրցած բոլորովին ջնջել:

Այս քու մտածութիւնդ պարսաւելի չէ, ըսաւ ժողովրդապետը, և շատ գոհ եմ քու այս դիտաւորութեանդ վրայ, և քեզմէ որ այս բանս լսեցի, կրնամ ես ալ քեզի ըսել հիմայ թէ այն վաճառականին ես առաջարկեցի զքեզ նաւապետ առնելու իր նաւուն, վստահ ըլլալով քու սրտիդ վրայ Աստուածային շնորհացը ըրած ազդեցութեանցը: Կարևոր հմտութիւն և յաջողութիւն ունիս այս բանիս, ուստի աղէկ է որ օգտակար ըլլաս անով ուրիշներուն ալ: Ես ալ բոլորովին ապահովցած այս խօսքերէս՝ իմ առաջին պատրաստութիւնքս եղան՝ երթալ և սնդամ մըն ալ մօտենալ ապաշխարութեան և հաղորդութեան խորհրդոյն. ասկէց ետքը իմ պատի հիւզս աղքատ ձկնորսի մը վարձու տուած ըլլալով՝ հօրեղբօրս կենդանագիրը առնելով իմ բնակարանս կախեցի, և աստուծոյ շնորհքովը առագաստներս բացած ճամբայ ելայ: Բայց պատմութիւնս լմնցնելէս առաջ կը փոփաքիմ որ ինծի երգէք, սիրելի տղաքս, ճշմարիտ սիրոյն երգը:

Այն ատեն տղաքը սկսան երգել այսպէս:

« Օր մը հաւ մը տեսայ, որ թևերուն տակ ձագիբու խումբ մը ունէր, և ապաստանարան մը կը բնուէր վտանգներու դէմ. ար-

դեօք ով է որ կ'ազդէ անոր այս մեծ գութը,
ըսի ինքիրեննա :

» Օր մը հաւալուսի մը պատմութիւնը
լսեցի որ թոքերէն արիւն կը հանէր՝ իր
ձագերը կերակրելու համար : Ամօթ չէ՞ մի
ըսի այս բանս քրիստոնեայ ժողովրդեան մը :

» Օր մը աղջիկ մը տեսայ որ իր թևե-
րուն վրայ գառնուկ մը առած ամեն խնամք
կ'ընէր անոր, և գրկած մը տաքցնէր զանի-
կա, զարմացայ՝ տեսնալով այս աղջկան գու-
թը :

» Տեսայ մայրական գութը, ինչպէս կնիկ
մը իր որդիքը կը խնամէ և ինչպէս նաև
մեռնելէն ետքը զայն կը գրկէ . խորհրդա-
ծեցի որ այն էր ճշմարտագոյն սէրը :

» Բայց երբոր միտքս անոր գնաց՝ որուն
անուամբը մկրտուած եմ՝ որ երկնային ա-
թոռէն՝ ի խաչն սուրբ խոնարհեցաւ և իր
արեամբը զմեզ գնեց՝ իմ սիրտս և բերանս
փառաւորեցին Քրիստոսի սէրը » :

Նաւապետը . Շատ աղէկ է տղաքս, շնոր-
հակալ եմ ձեզի՝ և կ'ուզեմ նորէն շարու-
նակել իմ պատմութիւնս : Այս անգամ դէպ
ի միջերկրական ծովը ուղղեցի նաև, ուր
այլ և այլ նաւահանգիստներէ շատ մը վա-
ճառք : գնեցի և ծախեցի : Շատ մը վաճա-
ռականի նաւերու հետ Կորսիգա կղզիէն
բաժնուեցանք, բայց իմ նաւս ամենէն ա-
ւելի առաջատարուորուած ըլլալով անոնցմէ
շատ առաջ անցաւ : Օդը շատ գեղեցիկ էր
որով և շատ գործողութիւններ գլուխ հանե-

ցի արող սուղուարթ: Նաւաստիներուն մէկը տեսաւ յանկարծ հեռուէն նաւ մը՝ զոր գիտեցաւ, վերջապէս իմացանք որ երուզակներու նաւ մըն է եզեր: Չէինք կրնար անոր գիմացէն փախչիլ և անանկով պեղ լուսնի վտանգի մէջ կը ձգէինք, ուստի բոլոր նաւատիրք 17 հոգի և եօթն տը նանսպարհորդք յանձն առին ինչուան արեան վերջի կաթիլներն թափելու, քան թէ անոնց ձեռքը գեցի մատնուելու: Մեկէն սկսանք պատրաստուիլ ամեն կարևոր հնարքը ընելով, և թնդանօթները պատրաստեցինք նաւուն եզերքը: Երբոր երուզակաց նաւը իմացաւ որ մենք պատրաստուած էինք իրենց գէմ դնելու, իրենք ալ իրենց յարձակման պատրաստութիւնները ըրին՝ եւ առաւել կրք տեսան որ մեր առագաստները վար կ'իջեցնենք: Մեր առաջին գնտակը թշնամեաց նաւապետին գլուխը շախշախեց՝ և որովհետև իր նաւատիրքը բազմաթիւ չէին, մեր յարձակմանը այնպիսի շփոթութիւն մը ձգեց մէջերնին որ մենք գիւրութեամբ ժանիքներով իրենց նաւը բռնելով՝ նուաճեցինք իրենց նաւատիրքը՝ որանք 13 հոգի էին: Ասոնք նախընթաց գիշերը շատ մարգ կորսնցուցեր էին Ամերիկացի նաւու մը հետ կռուելու ատեն, բայց բարերարողաբար անոր ձեռքէն կրցեր են փախչիլ: Երուզակաց նաւուն մէջի եզած մարդիկը ճիպրտլզար հանեցի որոնք հոն պատերազմական ատենի առջև քննուելով զատուարտուեցան: Իսկ նաւը՝ որ ազէկ վի-

ճակի մէջ էր Անգղիա սարի որուն մէջը հարուստ գանձեր պատկառ, զորոնք ելուզանդաները կողոպտած էին ասդիէն ադիէն, և քանի մը նաւաստիներ և ճամբորդներ գերի բռնած, նաւուն մէջը խորը ձգուած էին որոնց անձամբ իմացուցի թէ ոչ ազատ են: Ի՛նչպէս յանկարծակիի եկայ, երբ իրենց մէջ տեսայ իմ հին Գորպէզ բարեկամս, Հոլանտացի նաւուն բժիշկը, որն որ զիս մահուանէ ազատեր էր Ռոզէրտամի մէջ: Մեծ երաւ իրաւցնէ իր ուրախութիւնն ալ և զարմանքը՝ երբոր իմացաւ որ նաւուն նաւուպետը իր այն բարեկամն էր՝ որուն համար կը կարծէր թէ բոլոր կեանքը սրի-կայութեամբ պիտի անցնէր:

Միտտեղ խցիկ մը նստելով բոլոր գլխէն անցածները պատմեցի իրեն. ինքն ալ փոխադարձ իրենինը ինծի պատմեց որ իմինիս հաւատար բազմավէպ էր, բայս ոչ ոչնպէս տատանելի:

Տխրութեամբ իմացայ, թէ իմ բարեկամս, որ իր հօրը տունը քրիստոնէական կրթութիւն առած էր և բարեպաշտ ազգականներ ունէր, աւելի սաստիկ ալէկոծութիւն մը ունեցեր էր քան ինչ որ ես Ափրիկէի ծովափունքը, կ'ուզեմ ըսել հաւատոյ ալեկոծութիւն մը: Ափշեցուց զիս, երբ լսեցի որ ինքը և ոչ Աստուծոյ գոյութեանը կը հաւատայ, բայց կ'ըսէր նաեւ թէ հաւատաւ չկարենալուն համար ալ շատ կը նեղուէր, բայց թէ բնութեան վրայ ըրած տեսութիւնքը

իրեն այնպէս մը կ'երեցնէին որ աշխարհս պարզ մեքենայ մըն էր և թէ չկայ Արարիչ մը: Ո՛հ սիրելի բարեկամ, ըսի ես իրեն, թէ որ բնութիւնը մանրամասնաբար քննած ըլլայիր ամեն տեղ գտած կ'ըլլայիր Աստուծոյ ամենակարողին հետքը, վասն զի երկիրս իր բարութեամբքը լեցուն է: — Ատեն մը ես ալ այնպէս կը մտածէի, ըսաւ Գորպէզ, բայց անոնք տղայութեանս գաղափարներն էին: Քանի որ աշխարհիս գործոց մէջ մտայ և իմ գաղափարներս և ակնկալութիւններս ընդարձակեցան և անդրադարձութիւնքս ալ բացուեցան, սկսայ աշխարհքս թողորովին ուրիշ երևութով մը տեսնալ: — Անտարակոյս սխալ երևոյթներով, ըսի ես իրեն. և ինչո՞ւ համար տղայութեանդ հաւատքը չունիս: Քրիստոս տէրն մեր ըսաւ: « Եթէ ոչ դարձլիք և լինիլիք իբրև զմանկտի, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից »: Ես ալ այս փրկական հաւատքը ատեն մը կորսնցուցած էի որոնց վրայ շատ արտասուք թափելէն ետքը նորէն ստացայ, բայց փառք Աստուծոյ որ հիմա հաստատուն եմ անոնց վրայ, և բնաւ պիտի չի թողում զանոնք: Գորպէզը ճամբորդութիւն մը ըրած ըլլալով Եգիպտոս, արարերէն կը հասկնար: Իր ազատութեան երկրորդ օրը նստած էինք մինակ իմ խցիկս, ես միշտ Աստուծոյ էութեանը վրայ կը խօսէի՝ զոր ինքը շարունակ կ'ուրանար, յանկարծ ձայն մը լսեցինք որ կ'աղաղակէր « Ալլահազպէր » որ ըսել է Աստուած մեծ է:

Գորպէզ գարհուրեցաւ այս ձայնէն, ինչպէս տղայ մը՝ որ գողութիւն ընելու ժամանակ կը բռնուի, կը կարծէր որ մարդ ալ չէր հասկընար արարերէն նաւուն մէջ, և թէ մենք մինակ էինք խցին մէջ, և քանի որ չորս դին կը նայէր թէ ուսկից կրնար այս ձայնը գալ: Գորպէզ տեսաւ որ թուփակ մը վանդակի մը մէջէն կ'ըսէր այս խօսքերս:

Այս թուփակը Կոստանդնուպօլիս մէկէ մը գներ էի, որուն սորվեցուցած էին ըսելու այս խօսքերս: « Ալահագպէր » . և որովհետև այն ծախողին քանի մը ծառայութիւններ ըրած էի, անոր համար ոչինչ գնով մը ինծի տուաւ զանիկա:

Տես բարեկամ, ըսի ես իրեն, որ բնութիւնն անգամ, որուն վրայ ըրած դիտողութիւններովդ Աստուծոյ էութիւնը կ'ուրանաս, անիկա ալ Աստուծոյ իմաստութիւնը կը քարոզէ: Ես հաւասարապէս իրեն ցամամանը և սիրոյն փորձը ունեցեր եմ: Մի անագաններ դու ալ իրեն մեծութիւնը ճանչնալու, զքեզ բալորովին չէ թշուառացուցած: Այն խօսքերուս վրայ, այլայլած երկայնատեն, պատասխան չի կրցաւ տալ. իր երեսին վրայ նկարուած սոսկումը բարի նշան մը երևցաւ ինծի. իմացայ որ խղճմտանքը բոլորովին անզգայ չէ եղեր: Բոլոր գիշերը յրեն համար եռանդեամբ կ'աղօթէի, ինչուան որ փրկիչն յօժարեցաւ վառելու իր սրտին մէջ երիտասարդութեան ժամանակ

ունեցած բարի տպաւորութիւնքը, տալով
իրեն իր բարեացը բարձրագոյն շնորհքը:
Երկրորդ օրը նախաճաշի շեկաւ և երբոր
հերակուրի իջաւ, գոյնը նետած ու զէմքը
բոլորովին փոխուած էր. սեղանին վրայ ամե-
նևին չի խօսեցաւ: Իրիկուան ալ նոյնպէս
էր, իրեք օր այսպէս շարունակեց որով ես
ալ չուզեցի իր մտածութիւնքը շփոթել. վեր-
ջապէս չորրորդ օրը ինծմէ Աստուածաշունչ
գիրքը ուզեց: Բոլոր ճամբորդութեանը ժա-
մանակ այս աստուածեղէն գիրքը կարդալու
գրադեցաւ, և երբոր Անգղիա հասանք ինծի
աղաչեց որ գինքը ան քահանային տունը
տանիմ, որ իմ վրաս Սամարացոյն գութը
ունեցեր էր: Շատ մը տարակոյսներ ունէր
որոնց վրայ կը փափաքէր լուսաւորուիլ, այս
տարակոյսները շուտ մը ցրուեցան, և կեր-
պարանքը մէկէն աստուածային շնորհքով
լեցուեցաւ՝ վասն զի կրկին գերութենէ մը
ազատած էր, վասն զի իրաւամբ կրնար մէ-
կը ըսել իրեն այն խօսքը, ինչ որ հին երգի
մը մէջ գտուած էեթէ ծովահէնք կը յափշտա-
կեն մարդկանց մարմինը, բուսական է որ
Քրիստոս գերեաց հոգիները ազատէ. հարկ
չիկայ ըսելու որ անկէ ետքը ես աւելի եր-
ջանիկ վիճակի մը մէջ գտնուելով, ինծի
Ռոզերտամ ըրած բարեացը՝ հարիւրապա-
տիկ իրեն հատուցի: Անգղիայ մէջ հաստա-
տուեցաւ, և քանի մը տարիէն ետքը Աս-
տուծոյ շնորհացը մէջ մեռաւ՝ որուն յիշա-
տակը ինծի մեծապէս քաղցր է:

Ժ

Դարձը

Ճամբորդութեանս դէպքը, ինձի սերտ բարեկամութեան պատճառ եղաւ նաւուն տիրոջը հետ, նաև մեծ գումարի մը տէր ըլլալու, որով կրցայ վճարել առջի ըրած բոլոր պարտքերս ինչուան վերջի նաքարակիտը, որն որ ինձի մեծ մխիթարութեան պատճառ եղաւ. բայց որովհետև հանդիստ ապրելու համար բաւական ստակ չունէի, միտքս դրի որ նորէն ծովու վրայ ճամբորդութիւն մը ընեմ, թէպէտ և դժուարին ալ ըլլայ: Բանտին մէջ այն երկնային խոստմունքը ունենալէս ի վեր, որ Աստուած յանցանացս կը ներէ, ապահով էի յաւիտենական փրկութեանս վրայ և կը յուսայի որ Աստուած զիս իր պաշտպանութեանը տակ առած էր: Բայց դեռ չէի կրնար բոլորովին հեռացնել մտքէս հօրեղբօրս անիծից երկիւղը: Կը մըտածէի Աստուծոյ չորրորդ պատուիրանը, որուն կատարուելէն կը կախուին առ ժամանակեայ երջանկութիւնքը և թշուառութիւնքը: Ով որ կը պատուէ իր ծնողքը երջանիկ կ'ըլլայ՝ և երկայն կ'ապրի այս աշխարհիս վրայ: Բայց ասիկա չի բաւեր տակաւին ապահովելու իր հանդերձեալ երջանկութիւնը, վասն զի օվ որ կ'ուզէ իր յաւիտենական փրկութիւնը, պէտք է որ պատուէ նաև

զԱստուած, և հնազանդի իրեն պատուիրա-
նացը, և ևս, պէտք է հաւատայ թէ Քրիս-
տոս որդի է Աստուծոյ, առանց որոյ անկա-
րելի է փրկութեան հասնիլ՝ թէ և շատ ա-
ռաքինութիւններ ալ ըրած ըլլայ երկրիս
վրայ: Անկա որ անհնազանդ եղած է իր
ծնողացը, չի կրնար երջանիկ ըլլալ յայսմ
աշխարհի, վասն զի իրենց անէծքը զինքը
կը հալածեն, իսկ եթէ իր յանցանքը ճանչ-
նայ, և զղջայ, Աստուած իրեն կը ներէ և
կրնայ փրկութեան հասնիլ: Որչափ ալ ապա-
հով ըլլայի որ Աստուած զիս սահմանած ըլ-
լայ յաւիտենական փրկութեան համար, հան-
դերձ այնու կը վախնայի որ հօրեղբօրս ա-
նէծքը չըլլայ թէ վրաս ստուգուի: Անոր
համար դողողալով ճամբորդութեան ձեռք
զարկի, վախնալով միշտ նորանոր դժբաղ-
դութիւններէ: Բայց հօրեղբօրս կենդանա-
գիրը այս վախը կը փարատէր սրտէս: Յա-
ջող դէպքերը ձախորդներուն պէս հաւասար
երկիւղ կը պատճառէին ինծի, որովհետև
չէի հաւատար բաղդին հաւատարմութեանը,
վասն զի աւելի ծանր է մարդուս կորսնցնել
ստացած բարիքը, քան թէ ձեռք չկարենալ
բերել սպազայ յուսացածը. սակայն պատ-
ճառ մը չունեցայ ցաւելու այս ճամբորդու-
թեան վրայ, որովհետև քան զառաջինները
աւելի բարեյաջող գնաց, և մեծ վաստակով
տուն դարձայ: Նորէն նաւարկութիւն մը
ըրի նոյն տանը հաշուին, այն ալ այնպէս
յաջողեցաւ որ կրցայ ինծի նաւ մը գնել և

վերջապէս իմ հաշուիս ճամբորդութիւն ընել։ Այս վերջի ճանապարհորդութիւնս շատ աղէկ յաջողեցաւ ինձի, որով և մեծ հարատուութեան տէր եղայ։ Վաթսուն տարեկան էի և ծովու վրայ ճամբայ ընելէն ալ ճանճրացած ըլլալով, կը փափաքէի մնացած օրերս հանգստեամբ անցնել փառաբանելով զԱստուած, և պատրաստել զիս յաւիտենական կենաց։ Իմ անցուցած կենացս ընթացքը մեծ գիրք մը կրնար ըլլալ եթէ իւրաքանչիւր օրուան դէպքերը գրել ուզենայի։ Ահա ստատուն միտքս դրի որ իմ հայրենիքս դառնամ, հրաժարականս տալով Անգղիա բարեկամներուս, նաև վաճառեցի, և բոլոր կահկարասիքս հետս առած՝ դարձայ Հոլանտա։ Ի՞նչ նեղութիւններ քաշեցի ես այս քառասուն տարուան մէջ, Հոլանտայէն բաժնուելէս ետքը ինչուան վերստին հայրենիքս դարձայ։ Չէի գիտեր ինչպէս շնորհակալ ըլլամ Աստուծոյ՝ որուն պարտական էի. գիշեր ու ցորեկ գոհութիւն տալէն չէի դադրեր իրեն, բայց այնու հանդերձ բոլոր նաւարկութեանս ատեն չէի կրնար հօրեղբօրս երկիւղը հանել սրտէս, վախնալով որ չըլլայ թէ իր անէծքը նորէն դժբաղդութիւն մը բերէ զլիսուս։ Երբեմն կ'անցնէր մտքէս՝ չըլլայ թէ զիս տանող նաւը ընկղմի այնպէս որ Ամսդերտամ հասնելէս նտքն ալ դեռ կը գողայի, չըլլայ որ ունեցած հարստութիւններս գողցուին։ Վերջապէս ողջ և առողջ հասայ իմ հայրենիքս իմ խաղաղութեան օթևանս։

Հանդերձ այսու՝ երբեմն դեռ անհանգրստութիւն մը կը զգայի, և շատ գիշեր կը տագնապէր սիրտս երեակայելով որ չըլլայ թէ տունը վրաս փլչի, որովհետև ծնողաց օրհնէնքը որդւոց տուն շինեց, և անոնց անէծքը զանոնք քանգեց. քանի որ կը նայէի այս կենդանագրոյն վրայ, իր սպառնալից երեսը զիս կը վախցնէր, և միայն եռանդնալից ազօթքներուն ուժովը կըրցայ վերստին հոգւոյս խաղաղութիւնը գտնալ: Այս եղաւ տհաւասիկ նաւապետին պատմութիւնը, զոր լսելով ունկնդիրք ցաւակցութեամբ զգացուեցան ամենքն ալ: Ժողովրդապետը շատ ջանաց համոզել զինքը որ այն ունեցած վախը ալ պարապ էր բոլորովին և անհիմն, բայց իր այս յորդորները չի կըրցան զինքը բոլորովին համոզել վասն զի նաւապետը՝ իր անձին փորձովը վկայ էր գլխէն անցածներուն:

ԺԱ

Մկրտաւրեան գիրքը

Տարի մը անցաւ որ ծեր Պիւզմանը ժողովրդապետին տունը կը նստէր մեծ բարեկամութեամբ, և իրենց այս մտերմութիւնը երթալով աւելի շատցաւ. աղաքը ամեն օր կը զուարճանային, երեկոյեան հանդէսները մաքերնին բերելով, որ սովորաբար նաւա-

պետին տունը կ'անցնէին: Հոն գրեթէ ամեն իրիկուն թէյ խմելով կը զուարճանային, և ծեր Պիլգմանն ալ իր գիտցած ու տեսածներէն այլևայլ զուարճալի և միանգամայն հրահանգիչ դէպքեր կը պատմէր իրենց: Ժողովրդապետը շատ կը ջանար բարեկամին սրտէն այն ունայն վախը փարատել, որ իրեն մերձաւոր թշուառութիւն մը կը գուշակէր անկէց, վասն զի թէ և համոզուէր ալ անոր իրաւացի ըսուածներուն, սակայն բոլորովին չէր կրնար հեռացնել իր մտքէն այն անհանգստութիւնը, որ շատ տարիներէ ի վեր տոգորուեր էր սրտին մէջ: Աստուծոյ գործքերը զարմանալի են:

Առաւօտ մը երբ ժողովրդապետը ձեռքը յունարէն գիրք մը առած խցին մէջ կը կարդար, յանկարծ մարդ մը ներս մտաւ զոր բնաւ տեսած չէր, որ և ըսաւ իրեն թէ ինքը Տորնհակէն քաղաքը ծնած ըլլալով կը փափաքէր իր մկրտութեան վկայութեան գիրը ունենալ:

Ժողովրդապետը. — Անունդ ի՞նչ է: Միւսը: — Մարտինոս Լօպէր:

Ժողովրդապետը. — Ո՛ւր կը բնակիս:

Լօպէր. — Երէկ իրիկուն հասայ հոս Անգղիայէն ուր նաւաստի մըն էի, և մեռած եղբորմէս ինծի ընկած պզտի ժառանգութիւն մը ունիմ ձեռք ձգելու. անոր համար ծննդեանս վկայութեանը կարօտութիւն ունիմ: Երբոր այս բանս յաջողի հոս պիտի հաստատուիմ և հոս պիտի ապրիմ իմ ունեցած քիչ մը ստացուածքովս:

Ժողովրդապետը. — Անգղիա Պիլզման անունով նաւաստիին հետ ճանչուորութիւն մը ունիս:

Լօպեր. — Անունը լսեր եմ, բայց զինքը չեմ տեսած և հոս իմացայ՝ որ հիմա Տօրն-հակէն կը բնակի, և թէ հին ժողովրդապետին եղբորորդին է եղբր Ֆրանց սրիկան՝ որուն հետ միատեղ դպրոց ալ կ'երթայի: Թէ որ Անգղիա իմացած ըլլայի այս բանս ամեն ջանք կ'ընէի իր նաւը մտնալու, բայց Տօրնհակէն քաղքէն մեկնելու ժամանակս ինքը դեռ համալսարանն էր, և երբոր նաւապետ եղաւ Անգղիա, չի կրցայ մտքէս անցնել որ այն սրիկայ Ֆրանցը այն պաշտօնին հասնի:

Ժողովրդապետը. — Անշուշտ շատ պիտի ուրախանայ ինքը թէ որ գձեզ վերստին տեսնելու ըլլայ, բայց հրամմէ նորէն քիչ մը, մինչև երթամ ձեր մկրտութեան վկայագիրը գտնեմ: — Ժողովրդապետը գնաց փնտռելու արձանագիրը, և հարցուց թէ երբ ծնած է:

Լօպեր. — 1754ին:

Ժողովրդապետը. — Ան ատեն պէտք է որ փնտռեմ ձեր մկրտութեան թուականը այն հին գիրքին մէջ, որ անմիջապէս Պիլզմանին հօրեղբորը մեռած տարին լեցուեցաւ: Մկրտութեան յիշատակարանաց արձանագիրը բերաւ, և թղթերը դարձնելով գտաւ Լօպէրին անունը, և նոյն երեսին վրայ նաև Ֆրանց Պիլզմանին եղբորորդւոյնն ալ. այն

տեղը առանձին թուղթ մըն ալ կար՝ զոր ժողովրդապետը բնաւ չէր տեսած, վասն զի գրքին այն մասին մէջ բան փնտռելու ամենեին առիթ մը չէր ունեցած։ Կարդաց զայն և զարմանալով մը գոչեց. ինչ զարմանալի դիպուած։ Մալլեց շտապաւ թուղթը և գրպանը դրաւ, իսկ Մարտինոս Լօպէրի մկրտութեան վկայականը օրինակեց, և ըսաւ. Վաղը կէսօր եկուր որ զքեզ նաւապետին տունը տանիմ։ Լօպէր հագիւ թէ գնաց, ժողովրդապետը շտապաւ պարտիզին կողմէն նաւապետին տունը հասաւ, ներս մտաւ անոնց դուռը զարնելու, և գոչեց. Բարեկամ, փառք տուր Աստուծոյ, վասն զի աւետիս մը բերի։ Նաւապետը՝ որ զբաղած էր հոգեւոր գիրք մը կարդալու, ոտք ելաւ յանկարծ, և հարցուց թէ ինչ կայ։ — Կարդայ, ըսաւ, այս թուղթը։

Նաւապետը կարդաց, և սկսաւ դողալ, շուարեցաւ, և ծունկ չոգելով սկսաւ գոչել։ Ո՛վ աստուած իմ, ազատիչ իմ, կը ճանչնամ քու սուրբ ճամբաներդ որոնք ինծի խաւարէն դէպ 'ի լոյս կ'առաջնորդեն։

Անշուշտ սիրելի ընթերցողք կը բաղձաք գիտնալու այս թղթիս մէջի գրուածը. ահաւասիկ ըսեմ ձեզի։ « Կ'աղաչեմ յանուն Աստուծոյ որուն ձեռքը որ իյնայ այս թուղթս, ապահով հասցնէ այն մարդուն ձեռքը որուն որ գրուած է. այսինքն իմ խեղճ Տրանց եղբորորդւոյս, եթէ դեռ ողջ ըլլայ։ Սաստիկ բարկացած ըլլալով իր անհնազանդութեան

և յամառութեան վրայ որ ինծի դէմ ցըցուց՝
անիծեցի զինքը, բայց ետքէն զղջալով ըրաւ-
ծիս վրայ, այս տողերովս յետս կը կոչեմ
ըրած անէծքս, վասն զի անդուլ աղօթք ը-
նելով ապահով եղայ որ Աստուծոյ անհուն
ողորմութեամբը իմ Յրանց եղբօրորդիս պի-
տի չդատապարտուի. բայց կը գուշակեմ
ալ՝ որ փրկութեան արժանի պիտի չըլլայ՝
մինչև որ ծանր և դժուարին գէպքեր և ալէ-
կոծութիւններ գլխէն շանցնելու ըլլան: Կը
փափաքիմ որ այս իմ գրուածքս իր ձեռքը
հասնի որպէս զի իր ամեն տառապանացը
վրայ չաւելնայ նաև հօրեղբօրը անիծից տագ-
նապը: Այս թուղթը մկրտութեանց արձա-
նագրին մէջ կը պահեմ, որովհետև կը գու-
շակեմ թէ ժամանակ պիտի գայ որ ալ թա-
փառական և դատարկապորտ պտըտելէն պի-
տի դադրի, և պիտի ընտրէ առանձին տեղ
մը իր կենաց մնացած օրերը անցնելու, ո-
րով և իր ծննդեան օրը փնտռելու ատեն ըն-
դունի թող միանգամայն իր հօրեղբօրը օրհ-
նութիւնը: Կատարեալ և լի հաւատով կ'ը-
սեմ այս խօսքերս, որովհետև գիտեմ որ
բարի հովիւը պիտի գտնայ նորէն այս մո-
լորեալ ոչխարը, որչափ ալ հեռու ըլլայ իր
կորսուած տեղը »:

14 Յունուար 1780.

Ծեր Պիւզմանը այս գիրը գրելէն երեք
օր վերջը յանկարծական մահուամբ վախ-
ճանեցաւ, որով և չի կրցաւ մարդու ալ

յանձնել իր եղբորորդւոյն թողութեան մուրհակը :

Նաւապետը տեղեկանալով թէ ինչպէս ժողովրդապետը գտած էր այս թուղթս շատ ուրախացաւ, որով երախտագիտութեամբ և միանգամայն ուրախութեամբ լեցուեցաւ խեղճին սիրտը. ալ ամենայն վշտերէ և տագնապներէ խալսեցաւ, և անցածը իրեն երկայն և ձանձրացուցիչ երազ մը կ'երևար, և քանի որ թղթին վրայ կը նայէր ուրախութեան արցունք թափելով կը թրջէր զայն, որով միայն կրնար միտքը համոզուիլ թէ գլխէն այնպիսի բաներ անցեր էին: Այս թուղթը պէտք էր ոսկի շրջանակի մէջ դնել ըսաւ ժողովրդապետին: — Այո՛, ըսաւ անիկա, վասն զի լի է ոսկով հաւատոյ և վստահութեան առ Աստուած. աշխարհիս գանձերը չեն կրնար անոր բովանդակածին տեղը բռնել: Նաւապետը խօսքը շարունակելով ըսաւ. Օր մը լրսեցի որ ժողովրդապետին մէկը կ'ըսէր. Մարդուս կեանքը առեղծուած մըն է և իր մահը անոր բանալին. կրնամ ճշմարտիւ ըսել թէ իմ կեանքս ալ առեղծուած մըն էր, և այս առեղծուածին բանալին այս թղթիս մէջն է եղեր:

Երկայն ատեն իրարու հետ հոգևորական նիւթոց վրայ խօսակցութիւն ըրին և երախտագէտ շնորհակալութեամբ օրհնեցին զԱստուած, ինչուան որ ճաշու ատենը եկաւ: Տանը մէջ եղող մեկալ անձինքն ալ իմացան որ այս եզական դէպքը, մեծ ուրախութիւն

և սրտի հանգստութիւն պատճառեց այն սիրելի և յարգելի ծեր նաւապետին:

Վերջ քանիս

Երկրորդ օրը Մարտինոս Լօպէր՝ ժողովրդապետին գալով, հետը մեկտեղ նաւապետին տունը եկաւ: — Բարեաւ եկիր Մարտինոս, ըսաւ իրեն նաւապետը, երեսը նայելով և ձեռքը երկնցնելով: Դու ալ ուրեմն նաւահանգիստը մտար, բայց ես կանխեցի քան զքեզ, պէտք է որ դու ալ ձգես հոս նաւուդ խարխիւր. և մնացածը թող տուր ուր որ է, վասն զի հոս հարկաւոր եղածէն աւելի վաճառք կայ:

Լօպէր. — Ինչ դրօշի տակ է քու նաւդ: Նաւապետը. — Յիսուսի թագաւորութեան դրօշին տակը, որ բոլոր ճերմակ է և մէջտեղը կարմիր խաչ մը կայ:

Լօպէր. — Շատ աղէկ, ըսաւ անոր, ես ալ քեզի կը հետեւիմ, վասն զի կը տեսնամ որ այդ դրօշով խիստ աղէկ և ապահով նաւարկութիւն կ'ըլլուի:

Նաւապետը վսեմ և ծանր կերպով մը կը խօսէր Լօպէրին հետ՝ մանաւանդ երբ իմացաւ որ Իսլանտացի քահանայ մը, զինքը ուղղափառ ըրեր էր, իր սխալմունքները ճանչցնելով իրեն, որուն նաւապետը շատ ուրախացաւ, ևս առաւել որ իրեն այնպիսի կարեւոր թղթի մը գտնուելուն պատճառը ինքն եղած էր:

Միւս կողմանէ կ'ուրախանար տեսնալով որ տղոց ընկերութեան մէջ էր. և իրեն կուզար որ ինքն ալ երիտասարդանար անոնց հետ: Ատեն ատեն կոչունք կ'ընէր ուր կը ժողուէին բոլոր դրացի տղաքը, որոնցմէ իւրաքանչիւրը իր դիմացը բերնուց հատուած մը պէտք էր որ ըսեր զոր ինքը սորվեցուցած էր անոնց. ետքը ամեն մէկին ըստ արդեանցը, մէյմէկ գիրք և քիչ մըն ալ ստակ ընծայ կու տար: Անկէց ետքը կը ձգէր զանոնք որ իր տանը դիմացի պարտիզին մէջ վազեն և խաղան ինչուան իրիկուն, ետքը իրենց անուշեղէն կը բաժնէր, ինչպէս նաեւ պտուղ և մրգօղի:

Իսկ ժողովրդապետութեան մէջի եղած ծերերը հոն կը ժողուէին այս միջոցիս և կը զուարճանային իրենք ալ տեսնելով իրենց տղայոց ուրախութիւնը: Երկու ամիս գեղին մէջ տղայոց վերջին կոչունքէն զատ՝ ուրիշ խօսակցութեան նիւթ չկար, և երկու ամիս ալ երկրորդ կոչունքին պատրաստութիւն: Մեծ մարդիկը տղոցմէ աւելի կարծես այս բանովս կը զբաղէին: Նոյնպիսի հանդիսի մը վրայօք նաւապետը իր յիշատակարանին մէջ գրեց անգղիարէն այս հետեւեալ հատուածը զոր թարգմանաբար դնենք հոս:

« Առաւօտը երբ արտոյտները կ'երգեն իրիկունը երբ սոււերները կը սկսին երկըննալ, թէ բարձրաւանդակ տեղերը, և թէ ծառոց տերեւներուն տակ, կը սիրեմ

լսել այն տղայական քաղցր ձայները: Մեր մըն եմ և մագերս ձերմկցած, բայց կ'ախորժիմ աչքովս զձեզ դիտել, սիրեցեալ մանկունք, ձեր կերպարանքը սիրտս քաղցր զգացմամբ մը կը լեցնին:

« Կ'ուզեմ ձեր խաղալը տեսնալ գարնանային գեղեցիկ դաշտի մը վրայ, և դալարուտ մարգագետիններու վրայ, բայց ձեզմէ աւելի՝ ապագայ տարիներուն ցաւոց և անձկութեանց վրայ կը մտածեմ, վասն զի ծեր մըն եմ, ծերութիւնը նախատես է: Բայց դուք երջանիկ արարածներ, դուք անտեղեակ էք տակաւին անձկութեանց, այսօր զուարթ էք և վաղուանը չէք մտածեր:

« Թող ըլլայ ինչ որ պիտի ըլլայ, դուք զուարթութեամբ խաղացէք, և երբ լմնցընէք ձեր խաղը, գացէք քնացէք և ծաղիկներ՝ շաղ և արև երազեցէք:

« Աստուած մը կայ որ ձեր վրայ կը հսկէ, և կը հրամայէ իր հրեշտակացը որ ձեր անկողնին քով գտնուին: Կարելի է արդեօք որ ծերու մը օրհնութիւնը ազդեցութիւն մը չունենայ: Երջանիկ եղէք, վասն զի ինծի ամենէն աւելի փափաքելի մաղթանքս այս է ձեզի »:

Հիւանդները և աղքատները անսպառ օգնականութիւն կը գտնային նաւապետէն, և իր ամեն բարեացը մասնակից կ'ըլլային: Ինչ կը կարծէք որ իր մահուընէն ետքը մնացած ըլլայ այն մեծ և անբաւ հարրստութենէն. հազիւ հինգ հարիւր ֆրանգ պա-

տրատտ ստակ : Ի խոր ծերութեան մեռաւ նախանձելի ու բարի մահուամբ մը, և գերեզմանին վրայ ուրիշ բան մը չկար բայց եթէ պարզ քար մը առանց արձանագրութեան, Տօրնհակէնի եկեղեցւոյն դրանը ետեւ : Ծերերը իրեն գերեզմանին քովէն անցնելու ստեն կ'ըսէին. Հոս կը հանգչի ծեր Պիւքմանը ոյ տղոց վրայ այնչափ սէր ունէր :

Վ Ե Ր Ջ

ԶԱՏԿԱԿԱՆ ՀԱԿԻԹՆԵՐ

ՉԱՏԿԱԿԱՆ ՀԱԻԿԻԹՆԵՐ

Ա

Դեռ հաւեր չկան հոս

Հարիւր տարիի մը չափ կայ, որ պզտիկ ձորի մը խորը, որուն շորս կողմը մեծամեծ անտառներով և ահաւոր ժայռերով պատած էր, աղքատին հիւղերու մէջ կը բնակէին աղքատ և ողորմելի ածխագործներ, որոնց հարստութիւնը ածուխ շինելէն զատ քանի մը պտղատու ծառերու վրայ կը կայանար: Երկրին մէկ անկիւնն ալ քիչ մը ցորեն, կանեփ և կտաւ կը բերէր, որով իրենց հարկաւոր եղած պիտոյքը կը լեցնէին. ունէին նաեւ քանի մը կով և նոյնչափ ալ այծ: Իրենց այս աղքատութեամբը հանդերձ երջանիկ էին, վասն զի ուրիշ մեծա-

մեծ բաներու չէին փափաքեր. ժուժկալ և շարքաշ կեանք կանցընէին, և հանապազօրեայ աշխատանքը առողջ և առոյգ վիճակի մէջ կը պահէր զիրենք, որով և այս աղքատին հիւզերուն մէջ՝ հարիւր տարեկանէն աւելի ապրողներ կային որ մեծամեծաց պալատներու մէջ չեն գտնուիր:

Օր մը այն եղանակին որ վարսակը հասնելու վրայ էր և արեւուն տաքութիւնը սաստիկ էր լերանց վրայ. այժարած օրիորդ մը վազելով եկաւ տուն, և զարմանալով մը իմացուց իր ազգականացը թէ իրենց ձորը այնպիսի օտարականներ եկած են՝ որոնց լեզուն և հագուստը բոլորովին օտար է իրեն: Չորս հոգի են, ըսաւ. վայելուչ կին մը երկու որդւովքը և հետը ծեր մարդ մը, որ թէպէտ մաքուր զգեստներ հագած է, բայց կարծեմ իրենց ծառան պիտի ըլլայ: Այս խեղճ ճամբորդները, կրկնեց աղջիկը, սաստիկ յօգնած և կարօտութեան մէջ կը տեսնուին, որոնց ես ալ դիպուածով պատահեցայ, երբոր հօտէն փախած այժ մը բնտուելու գացած էի և զիրենք հետս առած ցըցուցի մեր ձորին ճամբան: Երթանք հիմա քիչ մը կերակուր և ջուր տանինք խեղճերուն և նայինք թէ կրնան արդեօք այս գիշերս հոս և կամ մեր դրացեացը քով անցնել:

Ան ատեն օրիորդին ազգականները շուտով մը վարսակի հաց, քիչ մըն ալ կաթ և այժու պանիր հետերնին առած ճամբայ

ելան, այս նոր օտարականներուն տանելու, որոնք գեղեցիկ ծառի մը տակ նստած էին. որուն գագաթը ծաղիկներով զարդարուած էր: Խաթունը մամուռով ծածկուած աւերակի մը վրայ նստած՝ երեսը ճերմակ քողով մը ծածկեր էր, ծնկերուն վրայ ալ սիրուն պզտի աղջիկ մը կար: Իսկ այն պատուական ծերը, որ իրենց ծառան կերեւար՝ զբաղած էր ջորիին վրայէն բռները վար առնելու, որ հետերնին բերեր էին, իսկ միւս պզտի մանչ տղան աշխուժութեամբ մը ջորիին քիչ մը խոտ կուտար զոր խեղճ կենդանին շատ ախորժով կ'ուտէր:

Ածխագործը և իր կինը սկսան յարգութեամբ մը մօտենալ օտարական խաթունին որուն արտաքին երեւոյթը կը ցուցնէր որ բարձր կարգէ մէկն ըլլայ:

Նայէ, ըսաւ ցած ձայնով մը ածխագործին կինը իր էրկանը, սա խաթունին ըսքանչելի վզնոցը և բաճկոնին աղուոր թեւերը, որոնք հազիւ թէ մարմնոյն կէսը կը ծածկեն: Ո՛վ Աստուած աս ինչ գեղեցիկ ճերմակ կերպասէ ոտքի ամաններ են, ինչ սիրուն զարդարուած, արծրթէ բանած ծաղիկներով: — Դու զարդարանքէ զատ ուրիշ բան չես մտածեր, պատասխանեց էրիկը. այս խաթունը որ կը տեսնես այնպիսի փառաւոր զգեստներ հագած, ատոնք իր աստիճանին համեմատ են, բայց գիտնաս որ զգեստը չէ զմարդ երջանիկ ընողը, նոյն իսկ այս մեծուհին՝ իր փափուկ ոտքի ա-

մաններովը հանդերձ, ստիպուեր է տաժա-
նելի ճամբորդութիւն մը ընելու:

Երկուքն ալ իրենց բերած կաթը, հացը
և պանիրը տուին օտարական խաթունին,
գոր մեծ շնորհակալութեամբ ընդունելով,
մէկդի ըրաւ երեսին քօղը, ասոնք ալ իրեն
գէմքին փափուկ գծագրութիւնը և անու-
շութիւնը տեսնելով զմայլած մնացին. խըմ-
ցուց շաւտով մը հողէ ամանին մեջէն քիչ
մը կաթ պզտի աղջիկ տղուն, որ ծնկերուն
վրայ բռնած էր, և ցաւալից սրտով մը ա-
նոր երեսը նայելով, անձրեւի պէս ար-
ցունք կը թափէր. վերջապէս մանչ տղան
ալ քիչ մը կաթ խմելէն ետքը, խաթունը
հացը բաժնելով կերան ամենքը, ինքն ալ
կտոր մը հաց և մնացած կաթը խմեց. իսկ
ծերը միայն պանիր ուտելով դոհ եղաւ.
բայց տեսնալու բան էր աս իրենց ընթրիքը
վասն զի ան միջոցին ձորին բոլոր բնակիչքը
իրենց չորս կողմերնին ժողուած մեծ զար-
մացմամբ և հետաքրքրութեամբ մը ասոնց
վրայ կը նայէին:

Երբոր ծերը կերակուրը լմացուց, ազա-
չեց տեղացուց որ եթէ կարելի է քիչ մը
ատենուան համար իր տիկնոջը խուց մը
պատրաստեն, խոտտանալով որ ատենին ա-
ռատապէս կը վարձատրէ զիրենք: — Ո՛վ
մարդիկ, կանչեց ան ատեն խաթունը, գը-
թացէք խեղճ կնկան մը և այս երկու որ-
դուոցս որ թշուառ դիպուած մը ստիպեց
զմեզ մեր հայրենիքը թողու: Աս որ լսե-

ցին հոն եղած գեղացիները ժողուեցան մեկէն և այս բանիս դարման մը մտածեցին ընելու :

Չորին վերի կողմէն առուակ մը կը բըղխէր, որ փրփրալից ալիքներով ժայռերու մեջէն դուրս ցատկելով, պզտիկ ջաղացք մը կը դարձընէր: Այս առուակին եզերքը ջաղացպանը պզտի տնակ մը ունէր, որ թէպէտ ան կողմի ուրիշ տներուն պէս փայտէ էր, բայց արտաքին տեսքը և դիրքը շատ գեղեցիկ ու զուարճալի ըլլալով՝ չորս կողմը եղած կեռասի ծառերուն եւ պարտիզին պատճառաւն, կարծես թէ աս նոր հասած օտարական խաթունին համար շինուած էր: — Ամենայն սիրով, ըսաւ, ջաղացպանը խաթունին, սա դիմացի տնակը որ կը տեսնես՝ հրամանքիդ կու տամ, որուն մէջ դեռ մարդ չէ բնակեր, գոր թէպէտ ինծի համար շինեցի, որ եթէ սա ջաղացքը որդւոյս յանձնելու ըլլամ ես հոն քաշուիմ, բայց որովհետեւ բաղդը զհրամանքդ հոս ձգեց, հրամանքիդ կը յանձնեմ, գնա ու զածիդ շափ բնակէ մէջը:

Այս բարեկամական հրաւերքը շատ հաճոյ անցաւ օտարական խաթունին և շնորհակալութեամբ ընդունելով, քիչ մը ոյժ առնելէն ետքը սկսաւ դէպ ի նոր բնակարանը երթալ:

Պզտի աղջիկը գիրկը առած ինքը կը բերէր, ծերունին ալ միւս տղուն ձեռքէն բռնած կու գար, իսկ ջաղացպանը ջորիին

հետ կուգար: Վերջապէս հասնելով տեղը՝ մեծապէս ուրախացաւ այս բարի մարդս, որ խաթունը իր սրտին համեմատ գտաւ, տունը որ արդէն զարդարուած էր քանի մը անկողնով, սեղանատախտակով մը և քանի մը աթոռով. և որովհետև ճամբորդները իրենց հետ աղուոր օթոցներ և ծածկոցներ բերած էին, առանց նեղութեան կրցան հանգիստ կերպով քուն ըլլալ. բայց օտարական կինը դեռ չի պառկած Աստուծոյ շնորհակալ եղաւ իր երկու որդւովքը, որ յաջողեց իրենց ապաստանարան մը գրտնալու, այնչափ ատեն թափառելէն ետև: Ո՛վ կրնար կարծել, կ'ըսէր խաթունը, որ ես պալատներու մէջ մեծցած, հիմա երջանիկ համարիմ՝ զիս այսպիսի աղքատին տընակի մէջ բնակելու. ո՛հ որչափ ուրեմն գութ պէտք է ունենայ մեծատուն մը աղքատաց վրայ. վասն զի ո՛վ գիտէ թէ ինքն ալ օր մը այն վիճակին և խեղճութեանց չի հանդիպիր: Երկրորդ օրը խաթունը կանուխ ելլելով շրջակայքը պտըտելու ելաւ երկու տղոցը հետ: Ուշադրութեամբ մը կը դիտէր այս աքանչելի ձորը ուր տեղ ամխագործներուն հիւղերը կը բարձրանային, որոնց մեջէն կ'անցնէր ջաղացքին առուակը. միև կողմանէ կը զարմանար տեսնալով այն թուփերով լեցուն բնական ժայռերը, որոնց վրայ խումբ խումբ այծերը կ'արածէին, որով և տեղւոյն գիւղական երեւոյթը կ'աւելցընէին:

Երբ ծերուկ ջաղացպանը խաթունը տեսաւ, դէպ ի անոր մօտիկնալով ըսաւ. իրաւ չէ՞ մի խաթուն, որ շատ դժուարին է ասկէ աւելի գեղեցիկ տեղ մը գտնալ. վասն զի երբ արեւը կը ծագէ հոս, դեռ ձորին մէջ եղած տնակները շուքի մէջ են, հոս գրեթէ միշտ պարզ երկինք կը վայելենք, մինչդեռ ընդ հակառակը հովիտը մառախլով ծածկուած կ'ըլլայ:

Տղաքը մեծ հետաքրքրութեամբ ջաղացքին զմայլած, անւոյն դառնալը կը դիտէին. որուն անընդհատ ձայնը իրենց ալանջին շատ ախորժելի կու գար. իսկ պըզտիկ աղջիկը շատ կը զուարճանար, տեսնելով անւոյն վրայէն ցատկած ջրին կաթիլները որոնք արեւուն ճառագայթներէն ծիրանի գօտիի երեւոյթ կ'առնէին: Խաթունը գրեթէ բոլոր օրը տունը տեղաւորելով անցուց, տեղացիք ալ ձեռքերնէն եկած օգնութիւնը կը ջանային ընելու իրեն. որը կերակուր բերելով, որը փայտ, որը խոհակերոցի կազմածք և ասոնց նման հարկաւոր բաներ, իսկ պզտի Մարթան, որ ամենէն առաջ հովտին ճամբան ցըցուցեր էր՝ իրեն քովը կեցած՝ կրցածին չափ կ'օգնէր իրեն այս աշխատութեանցը:

Երբոր խաթունը կերակուր եփելու պատրաստուեցաւ, խնդրեց Մարթայէն որ իրեն քանի մը հաւկիթ բերէ: — Ի՞նչ ընելու, հարցուց Մարթան. — Եփելու համար, պատասխանեց խաթունը, շուտ ըրէ գտիր

ինծի քանի մը հատ: — Հաւկիթը եփելու համար, ըսաւ աղջիկը զարմացմամբ. թռչունները այս եղանակին չունին հաւկիթ, բայց թէ և ունենային ալ սակայն ափսոս կըլար հարիւրաւոր սարեկի և կամ կարմը-րագլխի հաւկիթներ զոհ ընել մէկ սեղանի մը համար: — Ի՛նչ կըսես, ըսաւ մէկէն խաթունը, քեզմէ թռչնոյ հաւկիթ չեմ ուզեր, այլ հաւու: — Թողութիւն կ'ընես խաթուն այդ թռչունները ինծի անծանօթ են, ըսաւ Մարթա, գլուխը շարժելով: — Ի՛նչ դժբախտութիւն, պատասխանեց խաթունը, դեռ ձեր երկիրը հաւ չկայ մի:

Հաւերը ի սկզբան արեւելքեն բերուած ըլլալով, շատ սակաւագիւտ էին և շատ տեղ չէին գտնուեր. ինչպէս որ են հիմա սիրամարգնները: Եւ որովհետեւ հաւկիթներէն զատ, մսի ալ կարօտութիւն ունէր որ նոյնպէս չունէր, չէր գիտեր թէ ինչ կերպով կերակուր պատրաստէ: — Չեմ յիշեր որ բոլոր կենացս մէջ այս օրուան պէս հաւկիթի մը յարգը ճանչցած ըլլամ, կ'ըսէր ինքն կրեն, բայց հիմա կը տեսնամ, ինչպէս նաեւ տխուր ճամբորդութեանս մէջ փորձեր եմ որ կարօտութիւնը կը սորուեցնէ մարդուս, պատուել Աստուծոյ այն պարգեւները, որոնց ուրիշ անգամ անտարբեր կերպով նայեր ենք:

Այս ձորին ազնիւ բնակիչքը թէպէտ որչափ ալ կը ջանային օտարական խաթունին ամեն ուզածը ընելու, բայց այնու հանդերձ

չատ բանէ զուրկ էր: Երբ ջազացականը քանի մը ձուկ կ'որսար և կամ ածխագործ մը քանի մը սարեակ կը բռնէր, մեկէն իրեն կը բերէին: Հետը եկած ծեր ծառան ալ ամենայն սիրով կը ծառայէր իրեն, ու երբ խաթունը ստկի կարօտութենէն կ'ուռնանար, իրեն հետ բերած աղուոր զարդերէն և ազնիւ գոհարեղէններէն և կամ մատնի մը կու տար ծառային ձեռքը որ տանի ու ծախէ. անիկայ ալ կ'երթար և հազիւ քանի մը շաբթէն կը դառնար, տանը համար հարկաւոր եղած բաները բերելով: Տեղացիք մասնաւոր դիտեր էին, որ ծառային տուն դառնալու ատենը խաթունը սաստիկ տխուր կերեւար, և աչքերն ալ շատ արցունքէ կարմրցած՝ որով և կարգէ դուրս հետաքրքրութեան մէջ ինկան և կ'ուզէին իրեն ո՛վ ըլլալը՝ գիտնալ. և թէ միանգամայն ուսկից կուգար, բայց մեջերնէն մէկն ալ չէր համարձակեր այս բանս հարցնելու: Երբ ծեր ծառային կը հարցընէին, այնպիսի անուն մը կ'ըսէր իրենց, որ հազիւ կրնային արտաբերել, և քանի մը վայրկենէն ետե՛ս ան ալ կը մոռնային: Վերջապէս խաթունին տղուն երթալով, զուրցէ մեզի կ'ըսէին ինչ է մօրդ անունը՝ մի վախնար մարդու ալ չենք զուրցեր. անիկայ ալ իրենց ծածուկ կերպով յայր կ'ըսուի ըսաւ. նոյն բանը աղջիկ տղուն ալ հարցուցին, անիկայ ալ մի և նոյն պատասխանը տուաւ որով և այն բարեսիրտ մարդիկները որոշ բան մը

չիմանալով դարձեալ կը սպասէին հետա-
քրքրութեամբ թէ այս խորհրդաւոր բանե-
րը ինչ վերջ պիտի ունենան:

Բ

Փառք Աստուծոյ, վերջապէս հաւեր ունեցանք

Օր մը ծեր ծառան, որ կիրակոս կը կո-
չուէր, իր սովորական ճամբորդութենէն
դառնալով հետը վանգակ մը բերաւ, որուն
մէջ ազաղաղ մը և քանի մը հաւեր կային:
Երբ հովտին տղաքը զինքը տեսան շուտով
ընդ առաջ վազեցին, որովհետև ամեն ան-
գամ երբ տուն կը դառնար իրենց խաղա-
լիքներ և կամ անուշեղէններ կը բերէր:

Այս անգամ չորս կողմը ժողուած հե-
տաքրքրութեամբ մը վանդակին վրայ կը
նայէին որ բարակ լաթով մը ծածկեր էր.
որով և մէջի եղածները չէին տեսնուեր:
Ինչուան խաթունին դրանը առջևը տղաքը
հետը մէկտեղ գացին, անիկայ ալ իր եր-
կու որդւովքը դիմացը ելաւ զինքը բարևե-
լու: Փառք Աստուծոյ կանչեց պզտիկ աղ-
ջիկը ձեռքերը իրարու զարնելով, ահա վեր-
ջապէս հաւեր կը տեսնեմ: Ան ատեն կի-
րակոսը վանդակը գետին դնելով դուռը
բացաւ և մեջէն գեղեցիկ ազաղաղ մը
դուրս ելաւ, զոր տղաքը տեսնելով շատ
զարմացան: — Ո՛վ ինչ գեղեցիկ թռչուն է,

պողացին ամենքը մէկտեղ. ամենեւին ասոր նմանը չէինք տեսած, ինչ աղուոր կարմիր պսակ ունի գլխուն վրայ. ինչպէս կը փայլին փետուրները, աս ինչ աղուոր պոչ ունի: Նոյնպէս նաեւ հաւերն ալ շատ սիրեցին և կ'ուրախանային՝ տեսնելով որ խաթունին տուած ցորենը կըտցելով կը ժողուեն:

Երբ բոլոր ցորենը կերան, ագաղաղը յանկարծ շտկուեցաւ և թեւերը ուժով մը թռթուելով երգեց: Ասոր վրայ տղաքը շատ զուարճացան և ամենը մէկ բերան նոյնը սկսան կրկնել՝ ըսելով *Կոչկոչիկոչ*. և ինչուան որ տներնին հասան բոլոր ճամբան իրենց խօսակցութիւնը *Կիրակոսին բերած գեղեցիկ թռչուններուն* վրայ էր, կրկնելով միշտ *Կուկուլիկու*: Երբ տներնին եկան իրենց ծնողացը պատմեցին տեսածնին, այնպէս որ անոնց ալ փափաքը շարժեցաւ գալու և տեսնելու այս թռչունները, որոնց վրայ իրենց որդիքներէն աւելի զարմացան:

Քիչ ատենէն, հաւ մը սկսաւ թխսել, որուն Սարթան ամեն օր կերակուր կուտար: Սր մը խաթունը հովտին տղաքը իր քովը ժողուած ցըցուց անոնց այն հաւուն բոյնը, որոնք զարմացած մնացին տեսնելով ածած հաւկիթներուն բազմութիւնը: — Տասնըհինգ հաւկիթ, կանչեցին բազմութեամբ, սարեկները քանի մը հաւկիթէ աւելին չեն ածեր, մէկալ թռչուններն ալ հնգէն աւելի: Ի՞նչպէս պիտի կարենայ այս հաւը այնչափ ձագերը մեծցնել:

Երբ ձագերը սկսան հաւկիթներէն գուրս
ելլել, խաթունը ուզելով օտարական տղաքը
գուարճացնել կանչեց զիրենք քովը, և ան
օրը տօն ըլլալով իրենց հետ շատ մըն ալ
հետաքրքիր մարդիկ եկան: Յըցուց անոնց
հաւկիթ մը, որ մէջի եղած ձագը դեռ նոր
սկսեր էր կեղևը կոտրել և կը ջանար մեջէն
դուրս ելլելու զոր տեսնալով, կարգէ գուրս
կը գուարճանային. միւս կողմանէ խաթունն
ալ կ'օգնէր ձագին, որ խեղճը շուտով կա-
րենայ ազատիլ: Բայց տղոց զարմանքը շատ-
ցաւ երբ տեսան որ այն պզտի ձագերը
հաւկիթէն ելլելու ատեն բալորովին ծած-
կուած էին փետուրով և աշխուժութեամբ
ասդին անդին կը վազէին, որովհետիւ ին-
չուան այն ատենը թռչուն մը չէին տեսած
որ ծնած ատենը փետուր ունենայ և քալէ,
այլ ընդհակառակը միշտ կոյր տեսած էին
և անկարող իրենց կերակուրը գտնելու:
Բայց տեսնալու բան էր տղոց ուրախու-
թիւնը երբոր այն փայլուն փետուրներով
գեղեցիկ հաւը, իր տասնըհինգ ձագերովը
սկսաւ դաշտը երթալ, ալ խնտումով լցուած
սկսան ուրախութեան ձայներ հանելու: Ան
միջոցին տղոցմէ մէկը ուզելով մօտէն զըն-
նել աս ձագերը, բռնեց անոնցմէ մէկը՝
բայց դիտելու ժամանակ չունեցաւ վասն զի
ձագը բռնուելու ժամանակ սուր ձայն մը
հանելով, մայրը վրայ հասաւ և թեւերը
բացած կատաղութեամբ տղուն գլխուն վը-
րայ յարձակեցաւ և անշուշտ տղուն աչքը

հանած կ'ըլար թէ որ շուտով մը ձագը ձեռքէն չի ձգեր: Աս որ տեսաւ տղուն հայրը յանդիմանեց անոր անխոհեմութիւնը: Իսկ մայրը զարմանալով մը, ըսաւ: Ինչպիսի կարգէ դուրս խնամք է որ ունի այս կենդանին իր ձագերուն վրայ. իրաւցնէ բոլոր մարդկութեան գեղեցիկ օրինակ կըրնայ ըլլալ:

Երբ հաւը կակուղ կեր մը կը գտնար մեկէն ձայն հանելով իր ձագերը չորս կողմը կը ժողուէր, և կտուցովը կտոր կտոր ընելով գտածը, ձագերուն կու տար որ ուտեն: Ամենը կը զարմանային տեսնելով այս պզտի կենդանիները, որոնք դեռ հազիւ օրուան մը ըլլալով ոչ միայն աշխուժութեամբ ասդին անդին կը վազէին այլ և իրենք իրենց կերակուրը կը հոգային:

Արևը մտնալէն ետքը հաւուն ձագերը գիշերուան զովութենէ պատսպարելու համար, իրենց մօրը թևերուն տակ մտան, որ ներկայ եղողները շատ զարմացուց, որոնց համար այս ամեն բանը բոլորովին նոր երևոյթ մըն էր:

Ջաղացպանը, որ ածխագործներէն իր խելքով աւելի քան թէ զգեստուցը գունով կը զանազանուէր, ըսաւ ներկայ եղողներուն. Այս օտարական թռչունը որ կը տեսնաք, իրաւցնէ հիանալի բան մըն է, բայց ասոր նման բնութեան մէջ եղած հրաշալիքները Աստուծոյ իմաստութիւնը և կարողութիւնը կը յայտնեն մեզի: Մտածեցէք

Թէ որչափ հարկաւոր է որ այս ձագերը անմիջապէս իրենց ծնանելէն ետքը, մեկէն սկսին քալել և իրենց կերակուրը ճարել, վասն զի անկարելի էր որ իրենց մայրը կարենար այնչափ բազմութեան կերակուր հասցնել: Նոյնպէս նաև ամենահարկաւոր էր իրենց մօրը ձայնին հնազանդիլնին, վասն զի առանց անոր կը ցրուէին և կը կորսուէին: Բայց ես ուրիշ բանի այնչափ չեմ զարմանար որչափ այս հաւուն իր ձագերը պաշտպանելու քաջարտութեանը վրայ, մինչդեռ ձագ չունեցած ժամանակը զինքը կը մեղադրէի իրեն վախկոտութեանը համար, տեսնելով որ քովը մօտեցածիս պէս մեկէն հեռուն կը փախչէր թէ և ամենեւին վնաս մը ընելու միտք չունենայի իրեն. բայց հիմա իր մայրական գութը, իրեն երկչոտութիւնը արիութեան փոխեց: Մոռցաւ նաեւ իր որկորստութիւնը որ հատ մը գարիի համար՝ ուրիշ անգամ մեծամեծ կռիւներ կ'ընէր որպէս զի ինքը ուտէ. իսկ հիմա ընդհակառակը թէ որ բան մը գրտնալու ըլլայ կը կանչէ մեկէն իր ձագերը և տեղէն չի շարժիր ինչուան որ ամենքն ալ չի կշտանան: Եւ ո՞վ է ուրեմն որ այս կարգէ դուրս խնամքը դրեր է անոր բնութեանը մէջ, եթէ ոչ Աստուած: Ուրեմն թէ որ այս ողորմելի կենդանեաց վրայ այնչափ գութ ունի Աստուած, ի՞նչպէս կրնանք մենք յուսահատիլ և տարակուսիլ մեր կենացը վրայ, միթէ մեր վրայ ալ ինքը չի՞

հսկեր: Յուսանք ուրեմն առ Աստուած, սիրելի բարեկամք իմ, վասն զի ինչ որ կ'ընէ բոլորն ալ աղէկ է, և թէպէտ բոլոր իր արարածոցը վրայ՝ բայց ևս առաւել մարդկանց վրայ մասնաւոր գութ և խնամք ունի որոնք իրեն ամենագեղեցիկ արարածներն են :

Գ

Հիւսա սաւառոչքեաւք հաւկիթ ունիկք

Ստարական խաթունը՝ ձորին բնակիչքը վարձատրելու համար, որոնք իրեն այնչափ սէր և խնամք ցըցուցին, միտքը դրաւ անոնց փոխարէն ընծայ մը ընելու, որով և կը յուսար քիչ մը լաւցնել վիճակնին: Ինչպէս որ ան ատենը շատ հաւեր և հաւկիթ ունէր, որ մը խաւրեց Մարթան որ ան տեղւոյն ընտանեաց մայրերը, երկրորդ օրը, որ կիրակի էր՝ իրեն կանչէ, որոնք շատ սիրով յանձն առին խաթունին հրաւէրքը: Յաջորդ օրը ամենքը տօնի օրուան զգեստները հագած եկան: Ծեր կիրակոսը, պարտիզին մէջտեղը սեղան մը և չորս կողմը քանի մը նստարանները պատրաստեց: Ամենքը ժողովելէն ետքը նստան, և Մարթան սեղանի վրայ հաւկիթով լեցուն կողով մը դրաւ: Բոլոր հաւկիթները ձեան պէս ձեւմակ էին ու մէջերնէն մէկն ալ չիկար որ բիծ ունենար. հրաւիրեալ կանայք առջի

անգամ տեսնելով այնչափ հաւկիթ մէկտեղ զարմացած մնացին: Օրհնեալ է Աստուած, ըսաւ ան ատեն խաթունը, հիմա առատութեամբ հաւկիթ ունենալով ցուցնեմ ձեզի թէ ինչ օգտակար են անոնք մեզի, որոնցմով տեսակ տեսակ կերակուրներ կը շինուին, աժան և միանգամայն առողջարար. Աս ըսելէն ետքը հաւկիթները առաւ և անոնցմով զանազան ուտելիքներ շինեց գիմացնին: Իսկ կիրակոս՝ ուզելով անոնց զարմանքը շատցնել, խաշած հաւկիթները ներս բերելու ատենը անոնցմէ շատերը գետին ձգեց, զոր տեսնալով օտարականները սաստիկ ձայն մը ձգեցին կարծելով որ բոլոր հաւկիթները փճացան, ան միջոցին ազնուական խաթունը անտարբերութեամբ մը ժողուեց զանոնք գետնէն և կեղեւը ստրկելով ցրցուց անոնց որ մէջի եղածները ամբողջ և անմնաս մնացեր են:

Երբ այս ամեն կերակուրները պատրաստուեցան, ամենքն ալ շատ ախորժով կերան, խօսելով միշտ անոնց աղէկ համին վրայ: Կերակուրէն ետեւ, խաթունը իրենց քանի մը ազաղաղ և շատ մըն ալ հաւ ընծայ ըրաւ, զոր մեծ շնորհակալութեամբ ընդունեցան:

Բաւական ատեն այս հաւկիթները իրենց խօսակցութեանց նիւթ եղան վասն զի միշտ նոր բան մը կը գտնային վրանին դիտելու:

Ածխագործները շատ կը սիրէին ազազաղին ձայնը, որովհետեւ կ'իմացնէր իրենց առաւօտեան գալը, և թէ աշխատութեան ժամանակը հասած է: Կանայք մասնաւորապէս շատ կ'ախորժէին երբ հաւը կամացուկ ձայնով մը կ'իմացնէր իր հաւկիթածելը, ամեն անգամուն որ կը լսէին իրենց հաւուն այն ձայնը՝ մեծ ուրախութիւն կ'ըլլար բոլոր տնեցւոց: Ստէպ կը խօսէին մէջերնին, ըսելով թէ իրաւցնէ այս թռչունները մասնաւոր մեր պիտոյիցը համար ստեղծեց Աստուած. քիչ անգամ կը հեռանան տնէն և ամեն մէկ կանչելուն կու գան, և իրիկունները իրենք իրենցմէ հաւնոցը կը մտնեն: Ուրիշ օգտակարութենէ դուրս գրեթէ ոչ ինչ բանով կը կերակրուին, և միշտ ալ առատութեամբ հաւկիթ կ'ածեն: Իրաւցնէ հաւը Աստուծմէ պարգև է աղքատաց :

Օտարական խաթունին երկու տղաքը որոնք սաստիկ տրտմած էին այնչափ ժամանակ հաւկիթէն զրկուած ըլլալնուն համար, մեծ ուրախութեան մէջ էին որ հիմա առատութեամբ ունեցան, որուն համար չէին գիտեր թէ ինչ կերպով Աստուծոյ շնորհակալ ըլլան :

Դ

Չատկական հաշկիթներուն հանդեսը

Վերջապէս աշունն ալ անցնելով ձմեռը եկաւ, որ այս կողմերս միշտ սոսկալի կ'ըլլայ: Հովտին տնակները ամիսներով ձեան մէջ ծածկուեցան, ուրիշ բան չէր տեսնուեր, բայց միայն հիւղերուն ծխաններէն ելած մուխը: Բլուրներն ալ իրենց գեղեցիկ երեւոյթը չունէին. ջաղացքն ալ չէր դառնար, և ամառը այնչափ ձայն հանող և սրընթաց ջուրը՝ հիմա թանձր սառի մը տակ հանդարտած էր, որով և այս ցուրտ կողմերուն բնակիչքը օր մը առաջ կ'սպասէին գարնան գեղեցիկ օրերուն: Ինչ և իցէ, ձմեռը անցնելով գարնան սկիզբները այս ձորին տղաքը՝ հովտին առաջին մանուշակները և անպտուղ ելակներուն ծաղիկները ժողուելով խաթունին երկու որդւոցը Էտմոնտին և Պլանչին ընծայ բերին, որոնցմով գեղեցիկ պսակներ շինելով, իրենց մօրը շատ հաճոյ անցաւ, և ուրախութեամբ մը ըսաւ. Չեմ գիտեր ինչպէս վարձատրեմ ես այս ազնիւ տղաքը, որոնք այնչափ սէր և գութ ունին իմիներուս վրայ, պէտք է որ զատկին օրը իրենց հանդէս մը ընեմ, որովհետև գիտեմ որ տղաքը զուարճութիւն կը սիրեն, ընկոյզ և խնձոր տալ իրենց. բայց զատկին օրը, ամենեւին հասած պը-

տուզ չի գտնուիր և հաւկթէն զատ ուրիշ բան չիկայ, որովհետև ասոնք են բնութեան առաջին ընծայները:

— Խաթուն, ըսաւ անդիէն Մարթան, թէ որ հաւկիթները զանազան գոյներով ըլլան կարծեմ թէ աւելի գեղեցիկ կը տեսնուին:

— Աղէկ միտքս ձգեցիր, ըսաւ խաթունը, հաւկիթները կը պնդացնեմ և այլ և այլ գունով ներկել կուտամ, յուսամ թէ տղոց շատ հաճոյ պիտի անցնի:

Այս խորհրդով հաւկիթները զանազան կերպով ներկեց, ոմանք կապուտակ գունով, ուրիշները ոսկեգոյն դեղին, ուրիշներն ալ փայլուն կարմիր: Ոմանց վրայ տերեւներ շինել տուաւ, և ուրիշներուն վրայ ալ համառօտ գրուածք մը:

— Գունաւոր հաւկիթներ, պոռաց ջաղացպանը զարմանալով մը, երբ տեսաւ զանոնք. իրաւցնէ կարծես թէ բնութեան զարթնուլը կ'ուզեն ասոնք իմացնել մեզի, որ իր ճերմակ զգեստը հանելով, աւելի ազուր գոյներով հագնելու կը պատրաստուին: Ինչպէս որ Աստուած չէ թէ միայն համով, այլ նաև զանազան գոյներով պտուղներ կուտայ մեզի, որպէս զի մեր տեսութիւնն ալ զմայլեցնէ: Կեռասը կարմիր, սալորը կապուտակ, իսկ տանձը դեղին. ահաւասիկ այս բարի խաթունն ալ տեսակ տեսակ գոյներ տուաւ հաւկիթներուն:

Այն տարին զատիկը շատ գեղեցիկ օր ըրաւ, արեգակը փայլունք և տաք էր եր-

կինքը պայծառ առանց մէկ ամպի մը, այնպէս որ ամեն մարդ կը կարծէր թէ նորէն կը ծնանի, վերէն ի վար դաշտերը կանաչ խոտով ծածկուած էին, հազարումէկ ծաղիկներով զարդարուած:

Արեգակը ծագելէն շատ առաջ, օտարական խաթունը՝ և իր հաւատարիմ Աիրակոսը ճամբայ ելան եկեղեցին երթալու, որ իրենց բնակութենէն գրեթէ երկու փարսախ հեռու էր. հովտին բնակիչքն ալ իրենց հետ մէկտեղ գացին: Աեսօրուան մօտ խաթունը շորիին վրայ հեծած տուն դարձաւ, իսկ գեղացիք հետեւակ ըլլալով շատ ուշացան տուն հասնելու: Խաթունին տուն դառնալէն քիչ ետքը, հովտին տղաքը, որոնք իրենց պզտիկութեանը համար իրենց ծնողացը հետ չկրցան ժամ երթալու՝ և որոնք Էտմոնտին և Պլանչին հասակակից էին, ուրախութեամբ մը խաթունին տունը եկան, որ արդէն այն օրուան հրաւիրեր էր զիրենք: Անիկայ ալ մեծ սիրով պարտէզը տարաւ զիրենք և ձուածև սեղանի մը դիմաց, որ խոտով շինուած նստարաններով պատած էր, մէկիկ մէկիկ նստեցուց. իրենց հետ նստան նաեւ Էտմոնտ և Պլանչ: Ամենուն երեսին վրայ ուրախութիւնը կը փայլէր և անհամբերութեամբ կ'սպասէին իրենց համար պատրաստուած բաներուն:

Ան ատեն խաթունը սկսաւ մէկիկ մէկիկ պատմել իրենց թէ զատիկը ինչ է և թէ

ինչո՞ւ համար մարդիկ այնպէս հանդիսաւոր կը տօնեն: Խօսքը լմնցնելէն ետքը, մեծ պնակ մը լեցուն կաթով ու հաւկթով խառն կերակուր մը բերել տուաւ սեղանին վրայ, ուսկից ամենքը ախորժով ուտելէն ետքը, տարաւ զիրենք պարտիզին մօտ եղած եղեւին ծառերու անտառ մը. բոլոր այս ծառերուն ոտքը թանձր մամուռով պատած ըլլալով խաթունը ըսաւ իրենց որ ամենքը մէյմէկ բոյն շինեն անոնցմով. սիրով յանձն առին տղաքը և սկսան ամենքը շինել, անոնցմէ ճարտարները օգնելով տկարներուն: Այս գործողութենէն ետքը, տղաքը նորէն պարտէզ մտնելով տեսան սեղանի վրայ հաւկթով շինուած պսակաձեւ անուշեղէն մը, ուսկից ամենքն ալ կտրելով կերան: Ան միջոցին Մարթան ծածուկ կերպով կողով մը գունաւոր հաւկիթ առած՝ շիտակ անտառը վազեց և հոն տղոցը շինած բոյներուն մէջ դրաւ անոնցմէ: Երբ տղաքը իրենց անուշեղէնը լմնցուցին, ըսաւ իրենց խաթունը. Երթանք հիմա նորէն անտառը ձեր շինած բոյները տեսնելու: Ամեն մէկ բոյնին մէջ հինգ հինգ հաւկիթ կար՝ մի և նոյն գունով և անոնցմէ մէկուն վրայ համառօտ բարոյական գրուած մը կար: Անկարելի է պատմել տղոց ունեցած ուրախութիւնը ու խնտումը տեսնալով այն գունաւոր հաւկիթները: — Կարմիր հաւկիթներ աղաղակեց մէկը. — Ահա կապտագոյն հաւկիթները կանչեց ուրիշ մը. — Իմին-

ներս դեղին են ըսաւ երրորդ մը. — Ո՛հ չեմ կարծեր, ըսաւ Մարթային պզտի քոյրը Աննան՝ որ այս գեղեցիկ հաւկիթները հաւերը ածած ըլլան, անշուշտ նապաստակի մը ձագը ածեր է զասոնք վասն զի երբ ես իմ բոյնս կը շինէի, տեսայ որ նապաստակ մը քովս եղած թուփերուն մէջէն ցատկելով փախաւ: Աննային այս միամըտութեանը վրայ մեկալ տղաքը սկսան խընտալ:

Քիչ ատենէն տղաքը յայտնեցին խաթունին որ այն հաւկիթներէն զատ զատ դոյներով կը փափաքին ունենալով, անիկա ալ ըսաւ որ եթէ ուզենան իրենք իրենց մէջ փոփոխութիւն ընեն, միայն ուշ դնեն որ այն հաւկիթները ամեն մէկը պահէ որոնց վրայ գրուած բան կայ, անոնք ալ ըսածին համեմատ ըրին: — Տղաքս, ըսաւ ան ատեն խաթունը, Աստուած ալ իրեն պարգևները այսպէս բաժնեց մարդիկներուն, որպէս զի մէկ մէկու հետ փոփոխութիւններ ընելով, իրարու վրայ սէր և գութ ունենան. միանգամայն և բարեկամութեան կապը հաստատուի մէջերնին:

Պզտիկ էտմոնտը իր հաւկիթին վրայի գրուածը սկսաւ կարդալ, զոր տեսնալով գեղացւոց տղաքներէն մէկը շատ զարմացաւ՝ որովհետեւ նոյն ատենները դպրոցները քիչ էին և այսօրուան պէս կարդալու և գրելու արուեստը յառաջացած չէր, ուստի աղաչեց որ իրեն հաւկիթին վրայի գրուածն

ալ կարդացուի: Ան ատեն խաթունը ձեռքը առնելով, ըսաւ իրեն, քուկինիդ վրայի գրուածը շատ գերազանց բան է, այսինքն Շնորհակալ եղիր Աստուծոյ ամեն օրոշան կերածիդ համար: Կարդալէն վերջը հարցուց տղոց թէ արդեօք այս կարգացածը կը կատարեն մի, որոնք երբ պատասխանեցին թէ չէ, հասկցուց իրենց թէ անհրատեչտ պէտք է Աստուծոյ շնորհակալ ըլլալ իր տուած պարգեւացը համար: Բոլոր տղաքը ուզելով իրենց հաւկթին վրայի գրուածը գիտնալ, օտարական խաթունին չորս կողմը ժողուեցան և թախանձանօք կ'աղաչէին որ ամենուն հաւկթին վրայի գրուածը կարդայ և բացատրէ իրենց, անիկայ ալ զիրենք հանդարտեցընելէն ետքը՝ առաւ իւրաքանչիւրին հաւկիթը և սկսաւ կարդալ, որոնց վրայ այս յաջորդ գրուածքը կար:

1. Սիրել զԱստուած, տղաս, իր առաջին օրէնքը և պատուիրանն է.
2. Փախիր մեղքէ, որովհետև Աստուած կը տեսնէ զքեզ.
3. Շնորհակալ եղիր Աստուծոյ իր ամենօրեայ պարգեւացը համար.
4. Երախտագէտ սիրաւը երկնքի կը մօտեցընէ զքեզ.
5. Յուսա՛ առ Աստուած, եթէ կ'ուզես որ կարօտութեանդ ատեն օգնէ քեզի.
6. Կ'ժբախտ է անիկա, ուսկից Աստուած իր օգնութիւնը կը հեռացընէ.

7. Ով որ զՅիսուս կը սիրէ, իր պարտքը կատարած կ'ըլլայ.
8. Ազօթքը և աշխատութիւնը զմարդ իմաստուն և բարի կ'ընեն.
9. Գթութիւնը, հեզութիւնը և բարեգործութիւնը իրեք ամենահարկաւոր առաքինութիւններ են.
10. Յամառութեամբ մարդ բան չի վաստակիր.
11. Հլու տղան առանց ընդդիմութեան կը հնազանդի.
12. Մաքուր սիրտը շատ տեսակ վշտեր կը նուազեցընէ.
13. Որդեակ, երբ կ'ամչնաս, ըսել է թէ Աստուած ազդեցութիւն մը կ'ընէ քեզի.
14. Մեղքէ հեռու կեցող տղան վարդի պէս կը փայլի.
15. Համեստութիւն սիրողը յարգելի կ'ընէ իր անձը.
16. Ստախօսին ըսածներուն մարդ չի հաւատար.
17. Կեղծաւորութիւնը ատելի ախտ մըն է.
18. Համեստութեամբ ստացուած բանը կ'ուրախացընէ զմարդ.
19. Յաւը անկարգութեանց հետեւանքն է.
20. Ազահութիւնը մարդուս սիրտը կը պընդացընէ.
21. Առաքինի մարդը միշտ արգահատող է.
22. Բարկութիւնը, ատելութիւնը նախանձը՝ անկարգ սէր կը պատճառեն մարդուս.

23. Անուշութիւնը և բարեգործութիւնը դո՛ւ վասանաց արժանի են.
24. Անիկա որ երկայնմտութեամբ կը համբերէ վշտաց՝ երկնից արքայութեան արժանի է.
25. Ոսկին չէ որ զմարդ մեծարելի կ'ընէ, այլ առաքինութիւնը.
26. Մաքուր խղճմտանքը մեծ հանգստութիւն կը պատճառէ.
27. Ով որ աղէկութիւն մը կ'ընէ՝ մեծ ուրախութիւն սրտի կ'զգայ.
28. Միշտ պատարաստ եղիր Աստուծոյ առջև ելլելու.
29. Զուարճութիւնը շուտով կ'անցնի, առաքինութիւնն է միայն որ հաստատ կը մնայ.
30. Ընտրելոց երջանկութիւնը առաքինի մարդու կը սպասէ:

Տղաքը ամենայն կարելի եղած ջանքը քրին՝ իրենց հաւկիթներուն վրայ գրուածները սորուելու համար և որպէս զի չի մոռնան ստէպ կը կրկնէին զայն:

Խաթունը կարգաւ ըսել տուաւ ամենուն իրենց մասը ինքն ալ քիչ մը օգնելով իրենց, քիչ ատենէն չէ թէ միայն ամեն մէկը իրենին վրայի գրուածքը սկսաւ կարդալ այլ և իրենց պատիկ ընկերներունն ալ. և կը զարմանային որ կեանքերնուն մէջ այնպէս դիւրութեամբ և ախորժով բան չէին սորուած:

Այս իրենց ուրախութեան ձայնը ան աստիճանի բարձրացաւ որ աղաղակը մինչեւ ձորը կը լսուէր, որով և տղոց ծնողքը բազմութեամբ խաթունին քովը եկան հարցնելու թէ ինչ կայ. ու երբ իմացան իրենց տղայոց ուրախութեան պատճառը՝ զարմացած կ'ըսէին թէ հոս կէս ժամուան մէջ աւելի սորուեցան քան թէ քովերնիս վեց ամսուան մէջ. ասկէ ուրեմն յայտնի կը տեսնուի որ երբ մէկը սրտանց կ'աշխատի, որ և իցէ գոնարութեան կը յաղթէ և ամեն բան կը դիւրիննայ իրեն: Հրամբ ես, ըսաւ անդիէն ջաղացպանը իր չորս կողմը եղողներուն, բայց աշխատանքը իրենց դիւրեցնելն է վարպետութիւնը:

Երբոր տղաքը տուն երթալու կը պատրաստուէին, խաթունը ըսաւ իրենց որ գունաւոր հաւկիթները ուտեն. իսկ որոնց վըրայ գրուած կայ զգուշութեամբ պահեն: Կը պահենք, աղաղակիցին ամենքը մէկ բերան, որովհետեւ այն գրուածքը բոլոր հաւկիթներէն աւելի կ'արժեն:

Խաթունը պատուիրեց նաեւ իրենց ծնողացը որ ստէպ կրկնել տան անոնց սորվածնին՝ որպէս զի մտքերնուն մէջ աղէկ մը տպաւորուելով չըլլայ թէ մոռնան խաթունին յանձնածը. տղոց ծնողքը անվրէպ կատարելով՝ այնպիսի աղէկ սկզբունքներով մեծցան որ անոնց պէս շատ քիչ կրնար գտնուիլ այն կողմերը:

Անդադար կ'ըսէին որ այն օրուան պէս դեռ ուրախութիւն մը չեն ունեցած որով և բարեսիրտ խաթունն ալ խոստացաւ, որ եթէ աղէկ ըլլան ամեն տարի իրենց այն պիսի հանդէս մը ընէ:

Ե

Երկու հաշկիք՝ որունք թէ և ոսկի ըլլային
աւելի չէին արժեք

Այն բազմութեան մէջ որունք տղոց հանդիսին ներկայ էին, խաթունը օտարական մը տեսաւ որուն երեսին տրամութիւնը կարծես թէ այն հասարակաց զուարթութեան չէր յարմարեր: Ասիկայ մօտ 16 տարեկան երիտասարդ մըն էր որուն զգեստները կ'իմացընէին իր վիճակին խեղճութիւնը, բայց միւս կողմանէ երեսին վրայ այնպիսի ազնուութիւն մը կար որ ամենուն նայուածքը իրեն կը ձգէր: Այս տղան ձեռքը ճամբորդի գաւազան մը ունէր: Տղոց երթալէն ետքը՝ խաթունը ասոր մօտեցաւ, և արգահատելով մը հարցուց իրեն տխրութեան պատճառը, որուն խեղճ տղան արտասուելով մը պատասխանեց. « Հայրս որ քարակոփ մըն էր, խեղճը երեք շաբաթ է որ մեռաւ, որով և մայրս՝ մեծ թշուառութեան մէջ թողուց երկու պզտի տղոցմով՝ որոց մէկը աղջիկ և միւսը մանչ է: Մօրեղբայրս խոստացաւ ինձի որ զիս իմ հօրս արուեստին

մէջ դնէ, որ նաեւ իրեն արուեստն էր, որպէս զի կարենամ ես ալ իմ ընտանիքս պահել, ուստի հիմա շիտակ իրեն քով կ'երթամ: Մինչեւ հիմա քսան փարսախ տեղ քալեր եմ և դեռ նոյնչափ մըն ալ ընելիք ունիմ, որովհետեւ այս կողմի լեռներուն ամենէն հեռուն կը բնակի »:

Խեղճ որբոյն պատմութիւնը՝ որ քիչ շատ նմանութիւն մը ունէր իրեն գլխուն եկածներուն, կարգէ դուրս սիրտը շարժեց, ուստի մէկէն կերակուր տուաւ իրեն և քիչ մըն ալ ստակ դժբաղդ մօրը համար: Իր երկու տղաքն ալ էտմոնտ և Պլանշ մէյմէկ գունաւոր հաւկիթ առին իրեն որ տանի մէկը քրոջը և միւսն ալ պզտիկ եղբօրը: Մայրերնին ժպտեցաւ որդւոցը ըրածին վըրայ, գնաց ինքն ալ հաւկիթ մը բերաւ և ձեռք տալով ըսաւ, այն բանը որ գրուած է այս հաւկիթին վրայ կարծեմ ամենէն լաւագոյն մխիթարութիւն է « Յոռսա առ Աստուած եթէ կ'ոչգես որ կարօտութեանդ ատեն օգնէ քեզի »:

Տրիտուլէն երիտասարդը (այս էր ճանապարհորդին անունը) շնորհակալ եղաւ խաթունին: Այն գիշերը ջաղացպանին քովը անցուց և երկրորդ օրը առաւօտը կանուխ ճամբայ ելաւ, իր բարերարէն քիչ մը վարսակի հաց և այծու պանիր առնելէն ետեւ:

Երրորդ օրը երեկոյեան դէմ, որ քեռիին տունը հասնելու դեռ երկու փարսախ մնա-

ցեր էր, մեծ գահաւանդի մը խորը ձի մը տեսաւ իր դեղեցիկ թամբովը և ճոխ զարդերովը: Կենդանին զինքը տեսնելուն պէս գլուխը վեր վերցուց և սկսաւ խրինջալ ուրախութեամբ: Ինչպէս կ'ըլլայ, ըսաւ ինքն իրեն, որ այս ձին առանց իր տիրոջը հոս գտնուի. քիչ մը առաջ երթանք, նայինք արդեօք դժբաղդութիւն մը չէ՞ մի պատահած: Այս ըսելով սկսաւ այն անդունդնեւրուն մէջ վեր վար իջնալով դէպ ի ձիուն մօտենալ, բայց ան աստիճանի դժուարին և վտանգաւոր տեղերէ պէտք էր անցնիլ, որ անշուշտ ետ դարձած կ'ըլլար թէ որ հեղեղներուն վազած տեղէն ճամբայ մը չի գտնար առաջ երթալու: Այս դտած ճամբայէն երթալով յանկարծ ժայռի մը վրայ ազնուական դէմքով մարդ մը տեսաւ, որ փայլուն զրահներ հագած գետինը տարածուեր էր, նիզակը և գլխուն սաղաւարտը քովը դրուած: Այս անծանօթ մարդուն երեսին գոյնը ան աստիճանի նետած էր որ երիտասարդ Ֆրիտուէնը չի կրցաւ ճանչնալ որ ո՞ղջ է արդեօք չէնէ մեռած. ուստի քովը մօտենալով, բարեկամաբար ձեռքը բռնեց հարցնելով իրեն. Պարոն, ի՞նչ ունիս: Աս խօսքին վրայ օտարականը աչքերը բանալով սկսաւ երիտասարդին վրայ նայիլ, խօսիլ կ'ուզէր հետը, բայց բառ մը ըսելու կարողութիւն չունէր. վերջապէս ձեռքը դէպ ի բերանը տարաւ և ետքը ցըցուց սաղաւարտը որ քովն էր: Ֆրիտուէն, հասկցաւ որ

Ղուր կ'ուզէր, ուստի շուտ մը սաղաւարտը առած Ղուր բերելու գնաց, որ իրենցմէ քիչ մը անդին կը վազէր: Օտարականը Ղուրը խմելէն ետեւ երիտասարդին դառնալով. Ա՛հ օրհնեալ է Աստուած, ըսաւ իրեն. շնորհակալ եմ քու խնամոցդ, ո՛վ բարի երիտասարդ, Աստուած անշուշտ խաւրեց զքեզ հոս որ զիս մահուընէ ազատես. բայց կտոր մը հաց ունիս ինձի տալու, վասն զի անօթութենէս կը մեռնիմ: — Ա՛հ սիրելի բարեկամ շատ կը ցաւիմ որ ունեցածս լմընցաւ, բայց քովս երեք հաւկիթ ունիմ ահա զանոնք քեզի կ'ուտամ. այս ըսելով հաւկիթները իրեն տուաւ, որ մեծ ախորժով մը անոնցմէ երկուքը կերաւ: Երբ Յրիտուղէն միւս հաւկիթն ալ մաքրել կ'ուզէր. Բաւական է ըսաւ օտարականը, որովհետեւ շատոնց կերակուր շուտելով կը վախնամ չըլլայ որ յանկարծ վնասուիմ. ո՛հ ի՛նչ փառք պէտք է տամ ես Աստուծոյ որ զքեզ հոս խրկեց, որովհետեւ ես առանց քեզի՝ այս գիշեր մեռած կ'ըլլայի:

Պատմէ ուրեմն ինձի ո՛վ ազնուական, ըսաւ իրեն երիտասարդը. ինչպէս եղաւ որ դուն այս կողմերը ընկեր ես: Ես զինուոր մըն եմ, ըսաւ օտարականը, և շատոնցուընէ ի վեր տիրոջս հրամանովը ասդին անդին կը պտըտիմ, մէյմըն ալ, այս լեռներուս վրայ եղած ժամանակս գիշերը վրայ հասնելով, դժբաղդաբար այս գահավէժս ինկայ. ձիս ողջ առողջ ելաւ ասկէ, բայց իմ ոտքս

վիրաւորուելով, և վէրքս պատելէն ետեւ սաստիկ ջերմ մը վրաս գալով չկրցայ ասկէ դուրս ելլել, և գուցէ մեռած կ'ըլլայի թէ որ դուն, ո՞վ բարի երիտասարդ, եկած չըլլայիր խալըսելու զիս. բայց ըսէ կ'աղաչեմ, ինչ դէպք զքեզ հոս ձգեց: Տրիտուէն ալ իր գլխէն անցածները, մանրամասնաբար պատմեց անոր, նաեւ ան ալ ըսաւ որ գիշեր մը ամբողջ ջաղացպանին քովը անցուց: — Տուր ինձի, կաղաչեմ, մէկալ հաւկիթն ալ, նայիմ ինչ գրուած կայ վրան:

Օտարականը կարդալով վրայի գրուածը, աղաղակեց եռանդուն սրտով մը. յիրաւի ով որ կը յուսայ առ Աստուած կ'ազատի նեղութենէն: Շատ անգամ խնդրեր եմ իւրեն օգնութիւնը, և ահաւասիկ ինքը խաւրեց զքեզ զիս ազատելու համար: Օրհնեալ ըլլան այն տղաքը՝ որ տուին քեզի այս հաւկիթները. արդեօք անցե՞ր էր մտքերնէն որ ասոնք մարդու մը կեանքը պիտի ազատեն: Օրհնեալ ըլլայ այն խաթունն ալ որ ասոր վրայ այս մխիթարական խօսքերը գրեց: Տուր ինձի այս հաւկիթը, ըսաւ օտարականը, որպէս զի պահեմ միշտ յիշատակի համար և աւանդեմ իմ տղոցս, որպէս զի իրենք ալ սորուեցընեն ուրիշներուն թէ ինչպէս երկու հաւկիթ մարդու մը կեանքը ազատեցին: Աերած երկու հաւկիթներուս համար, մէյմէկ ոսկի կուտամ քեզի, իսկ ուրուն վրայ գրուածքը կայ երկու ոսկի: Տրիտուէն հաւկիթը չէր ուզեր տալ բայց շատ

աղաչելուն համար վերջապէս տուաւ : Ահա-
ւասիկ գիշերը կը մօտենայ, ըսաւ զօրա-
կանը, պիտք է որ փութանք այս տեղէս
դուրս ելլելու, ես ձիուն վրայ կը հեծ-
նամ :

Տրիտուլէն օգնեց անոր՝ և ձիուն սանձէն
բռնելով, բարեբախտաբար այն վտանգաւոր
տեղէն դուրս ելան :

Օտարականը շատ ուրախացաւ՝ տեսնելով
դարձեալ արևը, անտառները ու լեռները,
զորոնք արևը իր վերջին ճառագայթներովը
կը զարդարէր : Երթանք քեռիս տունը,
ըսաւ Տրիտուլէն, գիտեմ որ ուրախութեամբ
պիտի ընդունի զքեզ, և իրեն քով կը կե-
նաս ինչուան որ բոլորովին առողջանաս :

Այն գիշերը հասան բարի քարակոփին
տունը որ շատ ուրախացաւ և գովեց իր
եղբորորդին, օտարականին ըրած բարեգոր-
ծութեանը համար : Տրիտուլէն կը ցաւէր որ
չի կրցաւ խաւրել իր մօրը, հովտին խա-
թունին տուած հաւկիթը : Պէտք չէ որ ցա-
ւիս անոնց վրայ, պատասխանեց իրէն քե-
ռին, որովհետև մարդու մը կեանքը ազա-
տեցին : Հիմա ալ ինծի կ'իյնայ ղիկքը հո-
գալ որուն համար ամենեւին փոխարէն մը
չեմ ուզեր. օտարականին քեզի տուած ոս-
կինները մօրդ աւելի ախորժելի կ'անցնին
քան թէ այն հաւկիթները : Իսկ վրայի գը-
րուածքը, իրաւցընէ թէպէտեւ անգին է
բայց անիկա առանց հաւկիթին ալ կրնայ
պահուիլ՝ և դու ալ պէտք չէ մոռնաս զա-
նիկա բոլոր կենացդ մէջ :

Այս Օտարականը Ֆրիտուլէնի քեռիին քովը կեցաւ, ինչուան որ բոլորովին առողջացաւ և անկէց երթալէն առաջ այն տանը ճոխ ընծաներ տուաւ :

Զ

Խրաւցընէ ոսկիէ և մարգարտէ ձաւկիթ մը

Ամբողջ գարունը և ամառը անցաւ, առանց մասնաւոր դէպք մը պատահելու հովտին մէջ : Աժխագործները իրենց դաշտը կը մշակէին, և ստէպ անտառը կ'երթային ածուխ շինելու . իրենց կանայքն ալ տնական բաներու զբաղած էին, և մասնաւոր փոյթ մը ունէին հաւեր մեծցընելու . իրենց տըղաքն ալ ստէպ կը հարցնէին թէ « Զատիկը ե՞րբ պիտի գայ » :

Օտարական խաթունը շատ տխուր էր, որովհետև իր ծեր և հաւատարիմ ծառան, որ իրեն ընկեր էր, և իրենց հոն հասնելուն սկիզբները ստէպ ճամբորդութիւններ կ'ընէր, հիւանդացաւ և ալ հովիտը չէր կրնար թողուլ : Աշունը եկած էր, և հազիւ կրնար խեղճ ծերը ինչուան տանը դրան առջեւը երթալ արևէն տաքնալու համար . թշուառ խաթունը ստէպ արցունք կը թափէր վախնալով որ չըլլայ թէ իր միայնակ նեցուկը կորսնցընէ . և իր տրտմութիւնը աւելի կը

սաստկանար իր հայրենիքէն լուր մը շառնելուն համար:

Այս միջոցս նոր դիպուած մըն ալ պատահելով իր վախը աւելի սաստկացուց, վասն զի ածխագործները օր մը անտառէն դառնալով պատմեցին որ նախընթաց գիշերը չորս զինեալ տեսեր են, որոնք ըսին թէ Սքրոֆընէզ կոմսին մարդիկներն են, իմացընելով նաև որ իրենցմէ ետքը շատ մը գինեալ բազմութիւն ունին, և թէ գիւղին վրայօք իրենցմէ տեղեկութիւն ուզեր են: Չաղացպանը փութաց իմացնելու խաթունին այս բանս որ Կիրակոսին անկողնոյն քովը նստած էր: Երբ Չաղացպանը Սքրոֆընէզ անունը ըսաւ, խաթունը՝ գոյնը նետելով աղաղակեց. Ամենակալ Աստուած իմ, ամենէն մեծ թշնամիս ետեւէս ընկած զիս մեռցընել կ'ուզէ, արդեօք ածխագործները իմ նստած տեղս իմացուցեր են: Չաղացպանը զինքը ապահովցուց թէ բան մը չեն ըսած, և թէ այն մարդիկը այս գիշեր կրակի քով անցուցեր են և թէ առաւօտը կանուխ հեռացեր գացեր են անկէ, բայց յայտնի է որ դեռ լեռներու մէջ կը թափառին:

Սիրելիդ իմ Օսվալտ, ըսաւ խաթունը Չաղացպանին, զիս քու տունդ ընդունելէն ի վեր ճանչցեր եմ զքեզ որ համեստ և ջերմհոռանդ մարդ մըն ես. կ'ուզեմ հիմա տեղնիտեղ իմացնել քեզի իմ թշուառութեանս պատմութիւնը:

Ես Ռոզալիա կ'ըսուիմ, Պուրկոյնի դքսին աղջիկներէն մէկը: Երկու դքսեր կը փափաքէին փեսայանալ ինծի, մէկը Հաննօ տը-Սքրոֆընէզ, և միւսը Արնօ-տը-Ղենտամպուրկ: Հաննօն հարուստ էր և զօրաւոր, որ և ընդարձակ բերդեր ունէր և բազմութիւն զինուորականաց, բայց ոչ ազնուականութիւն և ոչ աղէկութիւն մը ունէր: Իսկ Արնօն քաջ էր, և քաղաքին ասպետաց մէջ ամենէն ազնուական, բայց ոչ այնչափ հարուստ ինչպէս Հաննօն, որովհետև հօրմէն մինակ փլած բերդ մը ժառանգեր էր և ամենեին ետևէ չէր եղած բռնութեամբ ուրիշ մըն ալ ձեռք ձգելու: Հօրս կամացը համեմատ՝ իրեն հետ կարգուեցայ հանդերձ շատ մը բերդեր և ընդարձակ երկիրներ օժիտ ունենալով, որով շատ երջանիկ կեանք կ'անցընէինք մէկտեղ:

Հաննօն սաստիկ ոխ պահեց ինծի և երկանս դէմ և մեր սոսկալի թշնամին եղաւ, թէպէտ արտաքուստ ամենեւին չէր ցուցըներ: Այս ատեններս էրիկս մասնակից պիտի ըլլար այն պատերազմին որ կայսրը Տաճկաց դէմ պիտի ընէր: Հաննօն ալ այս պատերազմին մէջ պիտի մտնէր, բայց շատ դանդաղ շարժեցաւ իր պատրաստութեամբը և խոստացաւ որ իր բանակն ալ հոն հասցընէ երբ բոլոր զօրքը հոն ժողուին: Մինչդեռ իմ էրիկս կը պատերազմէր Տաճկաց դէմ, մատնիչ Հաննօն յարմար առիթ գտնելով սկսաւ մեր հպատակներուն և մեր

կալուածներուն վրայ յարձակիլ, կրցածը այրեց և շատ ալ մարդ սպաննեց, անկէց ետքը սկսաւ նաեւ մեր բերդերուն վրայ յարձկիլ զորոնք առաւ մէկմէկու ետև: Ես ալ աս բաները տեսնելով՝ սիրելի տղաքս հետս առած փախայ տունէն: Բարի Կիրակոսը այս տագնապողական փախուստիս մէջ մեր պահապան հրեշտակն եղաւ որ զիս երկու որդւովքս այս լեռներս բերաւ, ուր որ ինչուան այս օրս դժբախդ կեանք մը կ'անցընեմ:

Ա՛ռզէի հոս կենալ ինչուան որ իմ էրիկս պատերազմէն դառնալով՝ կարենայ նորէն մեր ստացուածքը թշնամւոյն ձեռքէն ետ առնուլ: Կիրակոսը երբեմն երբեմն կ'երթար լուր մը բերելու, բայց խեղճը միշտ տխուր էր: Չար Հաննօն օր աւուր կը ջանար տարածել իր իշխանութիւնը մեր երկրին և մեր հպատակացը վրայ, և անընդհատ պատերազմելով կը ջանար բոլորովին ջնջել զմեզ: Տարիէ մը ի վեր որ իմ խեղճ Կիրակոսս հիւանդ պառկած է, ալ հայրենիքէս և էրկանէս ամենևին լուր մը չունիմ: Չեմ գիտեր արդեօք խեղճ էրիկս ո՞րք է մի չենէ մեռած թշնամեաց անգութ հարուածներէն, արդեօք անգութ Հաննօն ետևէս չէ՞ ընկեր զիս փնտռելու որ սպաննէ. ինչ պիտի ըլլամ ես չեմ գիտեր, լաւ էր որ ես ալ մեռած ըլլայի: Սիրելիդ իմ Օսվալտ, ըսէ ածխագործներուն որ չի մատնեն զիս: Մատնել զքեզ, Տիկին աղա-

ղակեց ջաղացպանը, ապահով եղիր, որ Սքրոֆընէգ ինչուան որ հոս հասնի, առաջ պէտք է որ զմեզ սպաննէ:

Ջաղացպանը խաթունին վախը ածխազործներուն պատմելով ամենքը նոյն լեզուն բանեցուցին: Թող գայ այն անօրէնը, ըսին ամենքը մէկ բերան, քանի որ ունինք մենք այս կացինները, որոնցմով գիտենք մենք ալ պաշտպանել զմեզ և մեզի ապաւինողները: Թէպէտեւ ձորին բնակիչքը խաթունը ամենայն կերպով կ'ապահովցնէին, բայց օտարական խաթունը իր օրերը տըխրութեամբ կ'անցընէր: Երբեք չէր ուզեր տնէն դուրս ելլել և իր տղոց ալ չէր թողուր դրանը առջև խաղալու: Իսկ երբ խաղաղութիւնը տիրեց լերան վրայ և այն գինեալ մարդկանց վրայ խօսակցութիւն մը չէր լսուեր, ուզեց պզտիկ շրջան մը ընել դաշտը, ուստի աշնան գեղեցիկ օր մը տնէն դուրս ելաւ և գնաց իր հիւղէն քիչ մը հեռու, ուր որ գիւղական մատուռիկ մը կար եղևինի մը կոճղին վրայ շինուած: Հոն դրուած էր Կիրակոսին ճամբորդութեանց ժամանակ բերած պատկերը որ սուրբ ընտանեաց եգիպտոս փախչիլը կը ներկայացընէր: Մատուռը բարձր ժայռի մը վրայ էր, և մուտքը քանի մը նոճեօք ծածկուած էր: Այս տեղերուս խորունկ լուութիւնը զմարդ աղօթքի և մտածութեան կը հրաւիրէր: Ռոզալիան իր շրջանը ընելէն ետքը չոքեցաւ եռանդեամբ մը խորանին առջեւ և լալով

Աստուածածնայ շերմեռանդ աղօթք մը ըրաւ. այն միջոցին տղաքը ծաղիկ ժողուելու զբաղելով անկէ քիչ մը հեռացան:

Երբ խաթունը մինակ մնաց՝ յանկարծ պանդխտի զգեստով մարդ մը ելաւ ժայռերուն մէջէն և իրեն մօտեցաւ: Երկայն սեւ զգեստ մը ձգած էր վրան և կարճ մեկնոց մը հագած. գլխարկը խեցեմորթով զարդարուած և ձեռքը երկայն գաւազան մը կար: Թէպէտ մօրուքը և մազերը ձեան պէս ճերմակ էին, սակայն երեսներուն գոյնը երիտասարդի մը գաղափար կու տար: Ռոզալիան յանկարծակիի գալով վախցաւ: Օտարականը յարգանօք ողջունեց խաթունը և սկսան խօսիլ. բայց որովհետև օտարականը անախորժ կերպ մը կը ցուցընէր, խաթունն ալ անոր համեմատ ցուրտ կերպով մը խօսեցաւ հետը, վերջապէս ըսաւ օտարականը. Ազնիւ խաթուն մի վախնար, վասն զի այնչափ անծանօթ չես ինծի որչափ որ կը կարծես: Դու Ռոզալիա — տը — Պուրկոյն ես, գետեմ թէ ինչ արկածներ ստիպեցին զքեզ այս լեռներուս վրայ քեզի ապաստան մը գտնալու. կը ճանչնամ ես էրիկդ, յորմէ երեք տարիէ ի վեր բաժնուած ես. թէ որ Արնօ — տը Լիտէնպուրկ քեզի դեռ սիրելի է, կրնամ իրեն վրայօք ճիշդ տեղեկութիւններ տալ քեզի: Գիտնաս որ խաղաղութիւն եղաւ, և քրիստոնեայ բանակը յաղթական դափնիով դարձաւ: Էրիկդ ետ առաւ այն բերդերը որոնց մէջ իր թըը-

Նամին ապաւինած էր: Չար Հաննօն այս լեռներս փախաւ, ուսկից ստիպուեցաւ աւելի հեռու փախչիլ: Քու էրկանդ ամենէն մեծ փափաքը ան է որ սիրելի ամուսինը նորէն տեսնայ: Ի՞նչ ուրախութիւն ազաղակեց, Ռոզալիան ծունկ չոքելով: Շնորհակալ եմ քեզի, Աստուած իմ, որ վերջապէս տեսար իմ արտասուքներս և լսեցիր աղօթիցս. Ի՞նչ ուրախութեամբ պիտոր տեսնամ զքեզ սիրելիդ իմ Արնօ, ահ ինչ ուրախութիւն քեզի համար ալ երբ զքեզ հազիւ ճանչցող տղաքդ տեսնելու ըլլաս:

Ով պանդուխտ, կարծեմ թէ կը տարակուսիս դու, ըսաւ դարձեալ խաթունը, որ ես իմ սիրելի էրիկս մոռցած ըլլամ և կամ իրեն սէրը բոլորովին պաղած ըլլայ սրտիս մէջ. մօտեցէք տղաքս, ըսաւ էտմոնտին և Պլանչին, որոնք մատրան դրանը առջև կեցած, կէս մը վախով և զարմացմամբ օտարականը կը դիտէին: Երկու տղաքը մեկէն վազեցին իրենց մօրը ձայնին: Սիրելի էտմոնտ, ըսաւ մայրը զինքը գրկելով, ըսէ առանց վախնալու այս ծեր պանդխտին առջև այն համառօտ աղօթքը որ կ'ընենք ամեն առաւօտ քու հօրդ համար: Տղան ձեռքերը միացուց և աչքը երկինք վերցնելով ըսաւ այս հետեւեալ աղօթքը:

« Ով Աստուած, որ երկինքն ես, դարձուր աչքդ երկու դժբաղդ որդիքներուս վրայ: Հայրերնիս պատերազմի է, մի թողուր զինքը որ թշնամեաց ձեռքը մեռնի. կը

խոստանանք քեզի միշտ ջերմեռանդ ըլլալու, որպէս զի մեր հայրը զմեզ տեսնելով ուրախանայ: Ով տէր, ընդունէ այս մեր ազօթքը »:

Դու ալ, Պլանշ, ըսաւ աղջկանը, ըսէ այն աղօթքը որ ամեն իրիկուն կ'ընենք հօրդ համար:

Աղջիկը ձեռքերը միացնելով ըսաւ հետեալ աղօթքը: « Ամենակալ Աստուած, դեռ չի քնացած ընդունէ մեր հօրը համար ըրած աղօթքնիս: Տուր իրեն որ հանգիստ գտնայ թշնամեացմէ՝ և հրեշտակներէդ մէկը խաւրէ, որ միշտ հսկէ վրան: Մեր սիրելի մօրը հանգիստ քուն մը պարգևէ, որ մոռնայ գիշերը իր տխրութիւնը: Տուր որ մեր հօրմէն բաժանման վերջի գիշերը ըլլայ այս՝ և ծագէ շուտ մը այն օրը որ իրարու հետ նորէն միացնէ զմեզ »:

Ամէն ամէն, ըսաւ մայրենին՝ արտասուալից աչօք:

Ան միջոցին պանդխտին աչքերէն հեղեղի պէս արցունք կը վազէր, և ալ չկարենալով դիմանալ, վրան առած սև զգեստը, ձերմակ մօրուքը և մազերը մէկդի նետելով, երևցաւ իրենց իր ասպետական զգեստովը որ տակէն հագած էր, և թևերը բանալով, կանչեց ուրախութեամբ:

Սիրելիդ իմ Ռոզալիա, ա՛հ որդեակք իմ անձկալիք, եկէք որ համբուրեմ զձեզ, մօտեցէք ձեր հօրը:

Ռոզալիան և տղաքը գիրկը վազեցին, որոնք ուրախութեան արցունքներով թրջեցին իրենց հայրը, և ան աստիճան խնտուամի մէջ էին այն երկու ժամը, երբ մատրան դիմացը անցուցին՝ որ իրենց վայրկեանի մը պէս երեւցաւ։ Արնօն պատմեց իր կնոջը որ թէպէտ բազմութեամբ եկեր է զինքը փրնտուելու, բայց ճամբուն դժուարութեանը և վտանգներուն համար դեռ լեռները չի մըտած զանոնք հոն թողուցեր և ինքը միայն առաջ եկեր է. և թէ պանդխտի զգեստով ծածկուած ըլլալուն պատճառը, ուրիշ բանի համար չէր, բայց որպէս զի դիւրաւ կարենայ իրենց քով հասնիլ և դեռ չիճանչցուած ապահով ըլլայ զիրենք գտնալուն վրայ։ Ռոզալիան հարցուց իրեն թէ ինչպէս գտեր է իրեն այս դժուարին բնակարանը։ Սիրելիդ, իմ ըսաւ Արնօն, մեր զիրար գտնելը քու ըրած բարեգործութեանդ պատուին է, զոր ըրիր աղքատաց և մասնաւորապէս այս ձորիս տղոցը, վասն զի առանց անոր թերևս երկայն ատեն զիրար չէինք կրնար տեսնել, և ով գիտէ թերևս ցյաւիտեան ալ, որովհետև դու ամեն կողմանէ պաշարուած էիր թշնամեացմէ, և չար Հաննօն իր յաղթուելէն ետև, այս լեռներս եկաւ ապաւինելու։ Կը ճանչնաս ասիկա, ըսաւ Արնօ իր կնկանը հաւկիթ մը ցուցընելով իրեն, որուն վրայ գրուած էր « Յուսա առ Աստուած եթէ կ'ուզես որ կարօտութեանդ ատեն օգնէ քեզի »։ Այս հաւ-

կիթն է ահաւասիկ որ զմեզ Աստուծոյ մասնաւոր նախախնամութեամբը նորէն միացուց գտնելով զքեզ որ այնչափ ատենէ ի վեր փնտուել տուեր եմ, ետևէդ մարդիկ խրկելով: Վերջապէս օր մը տեսայ էզբէտ անունով զինուորներէս մէկը զոր շատ ատենէ ի վեր չի տեսնալուս համար մեռած կարծեցի, անիկա պատմեց ինծի որ զքեզ փնտուելու ժամանակը դժբաղդութեամբ անդունդներու մէջ իյնալով քիչ մնաց որ կը մեռնէր անօթութենէ՝ եթէ չի հասնէր երիտասարդ մը, որ երկու հաւկթով զինքը մահուընէ ազատեց, երրորդ հաւկիթ մըն ալ տուեր է իրեն ի յիշատակ այս իր բարերարութեանը: Էզբէտ ցըցուց ինծի այս հաւկիթը և արիւնքայ մնացի երբ քու գիրդ տեսայ վրան: Մէկէն ձի հեծանք և շիտակ էզբէտին բարերարին տունը գացինք, որ սիրով ցուցուց ինծի այս ձորին ճամբան:

Կը տեսնամ ուրեմն սիրելիդ իմ Ռոզալիա, որ եթէ այս ձորին տղոց զատկական հաւկիթներուն հանդէսը ըրած չըլլայիր, և կամ էտմոնտը և Պլանշը երիտասարդ օտարականին ողորմութիւն չընէին, այս օրս մեզի դեռ տխրութեան և ցաւոց օր մը պիտի ըլլար: Աստուած կը վարձատրէ մեր ոչինչ բարերարութիւնն ալ, բաւական է որ փառասիրութեան և ցուցամուտութեան համար չըլլայ ըրածնիս: Մեր բարեգործութիւնը հատ մը ցորենի կը նմանի որ ճոխ հասկ մը կը բերէ: Սիրելի տղաքս, բոլոր

կեանքերնուդ մէջ երբեք մի մոռնանք մեր կրօնից սկզբունքը, ողորմեցէք աղքատաց, թեթևեցուցէք անոնց խեղճութիւնները և օգնեցէք իրենց, թէ որ կ'ուզէք դուք ալ օգնութիւն գտնել. գութ ունեցէք վրանին, և ապահով եղիք որ դուք ալ ձեր կարօտութեանը ժամանակ նոյնը կը գտնաք մարդկանցմէ: Հաստատուն յոյս ունեցէք Աստուծոյ վրայ, և կը տեսնէք որ այս հաւկըթին կեղևին վրայի գրուածը կը կատարուի վրանիդ: Ագուցանեմ պիտի այն հաւկիթը բոլոր մարգարտով զարգարուած ոսկիէ ամանի մը մէջ՝ և մեր դղեկին մատրան խորանին վրայ պիտի դնեմ, մեր նորէն զիրար գտնալնուս յիշատակին համար:

Այս խօսակցութեանց ժամանակ իրիկունը վրայ հասնելով, Արնօ կոմսը կնկանը ձեռքէն բռնած ջաղացպանին տունը դարձան, երկու տղաքն ալ իրենց ետեէն կու գային: Հոն ուրիշ ուրախութեան մը հանդիպեցան, վասն զի կոմսին զինակիրը Լգրէտ և Ֆրիտուէնը հասած ըլլալով՝ Աիրակոսին հետ կը խօսէին, որն որ քիչ մը աւելի աղեկցեր էր տիրոջը գալուստը լսելով. բարի Ֆրիտուէնը դէպ ի խաթունը մօտենալով բարեկեց զինքը, նոյնպէս նաև անոր երկու տղաքը: Լգրէտ ալ մօտեցաւ խաթունին և ուզեց ձեռքը պագնել, որուն պարտական էր իր կեանքը:

Կոմսը պաքաւ զԱիրակոս, իսկ ջաղացպանին ձեռքը սխմեց բարեկամաբար, որ

իր ամենէն փառաւոր զգեստները հագած էր, և ամենը մէկտեղ նոյն իրիկունը ուրախութեամբ կերան ընթրիքնին:

Երկրորդ օրը տարածուելով գեղին մէջ անծանօթ խաթունին էրկանը գալստեան լուրը՝ զամենը շփոթութեան մէջ ձգեց: Բուր գեղացիները վազեցին զինքը տեսնելու, որով և հիւղին չորս կողմը լեցուեցաւ ամեն տեսակ մարդիկներով:

Կոմսը իր կնոջը և երկու տղոցը հետ դուրս ելլալով, բարևեց բարեկամաբար այս բարի մարդիկը և իրենց շնորհակալ եղաւ իր ընտանեաց վրայ ցըցուցած սիրոյն համար: Տէր, պատասխանեցին անոնք, ոչ մենք, այլ ինքն է մանաւանդ մեր բարբարը: Կոմսը երկայն բարակ իրենց հետ խօսակցելով մեծ ուրախութիւն պատճառեց անոնց իր ազնիւ կերպովը:

Այս միջոցիս, կոմսին մարդիկներէն ու մանք քանի մը ածխագործներու օգնութեամբը ձորին ճամբան գտած ըլլալով հոն հասան: Ուրիշ շատ մեծամեծներ ալ՝ ինչպէս նաեւ զինուորներ ո՛րը ձիաւոր և ո՛րը փողերու ձայներով գեղը մտան որոց սաղաւարտները և աղեղները փայլակի պէս կը ցոլային: Ան աստիճանի ուրախութեան ձայներ արձակեցին տեսնելով իրենց տիրուհին՝ որ չորս կողմի ժայռերը իրենց ձայնէն կը հնչէր:

Կոմսը դեռ քանի մը օր ալ ձորը կենալէն ետքը, անոնցմէ բաժնուելու նախըն-

Թաց օրը փառաւոր սեղան մը տուաւ բոլոր գեղին ածխագործաց, որոնց հետ սեղանի նստան նաև կոմսը բոլոր իր մարդիկներովը: Սեղանէն ետքը առատ ընծայներ տուաւ բոլոր սեղանակիցներուն, և մասնաւորապէս ջաղացպանին. իսկ զՄարթան իր կնկանը ծառայութեան առաւ: Նոյնպէս մասնաւոր խնամք ունեցաւ նաև Ֆրիտովէնի մօրը, եղբարցը և քոյրերուն վրայ: Իսկ ածխագործներու տղոցը ըսաւ. Իմ կնկանս ձեր քով բնակելուն յիշատակին համար կ'ուզեմ որ ամեն տարի, զատկին օրը, այս ձորիս տղոց ամեն տեսակ գունաւոր հաւկիթ բաժնուի: Ես ալ, ըսաւ կոմսուհին, կ'ուզեմ հաստատել այս հանդէսը բոլոր կոմսութեանս մէջ: Այս հաւկիթները Չատկական հաւկիթ կոչուեցան, և այս սովորութիւնը կամաց կամաց ամեն կողմ տարածուեցաւ:

Վ Ե Ր Ջ

book should be returned to
library on or before the last date
indicated below.

A fine is incurred by retaining it
beyond the specified time.
Please return promptly.

